Foreign Language Teaching and Research Press (Beijing)

Գրքի հրատարակությունն իրականացվել է
«Օտար լեզուների ուսուցման եւ հետազոտությունների
հրատարակչության» (Պեկին, Չինաստան) աջակցությամբ:

Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

听盐生长的声音：80后作家短篇小说集

The Sound of Salt Forming:

Short Stories by the Post-80s Generation in China

/Armenian version/

Translation into Armenian by Khoren Gasparyan

Stepanakert 2018

ԱՂԻ ՁԱՅՆԸ

20-րդ դարի հետութսունական թվականների սերնդի չին գրողների պատմվածքներ

Թարգմանությունը՝
ԽՈՐԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

Ստեփանակերտ 2018

ՀՏԴ 821.581-32
ԳՄԴ 84(5Չ)-44
Ա 486

«Գեղարm» հանդեսի մատենաշար

Ա 486 **ԱՂԻ ՁԱՅՆԸ: 20-րդ դարի հետուբսունական թվականների սերնդի չին գրողների պատմվածքներ**/ Թարգմ. անգլերենից՝ Խ. Գասպարյան: Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2018, 352 էջ:

Գրքում ներկայացված են անցյալ դարի 80-ական թվականներին ծնված չին տասնվեց արձակագիրների պատմվածքները: Նրանց գործերը մեծամասամբ հիմնված են սեփական կենսափորձի վրա, եւ դրանցում հաճախ առկա են, այսպես կոչված՝ «օրագրային գրականության», ֆանտասմագորիայի տարրեր: Երիտասարդ արձակագիրներն արծարծում են սոցիալական ու կենցաղային, բարոյական բնույթի, կին-տղամարդ, հայրեր-որդիներ, գրող-իրականություն-գրականություն, մարդիկ-պետություններ, սեռային-սեռական հարաբերություններին առնչվող և իրենց սերնդին հուզող տարաբնույթ այլ հարցեր: Հետուբսունական թվականների գրականությանը հատուկ է նաև պատմական նիհիլիզմի, պատմական բեռից ազատ և նպատակազուրկ լինելու շեշտված միտումը:

ISBN 978-9939-1-0880-3

ՀՏԴ 821.581-32
ԳՄԴ 84(5Չ)-44

Copyright:

The Sound of Salt Forming: Short Stories by the Post-80s Generation in China
Edited by Song Geng and Yang Qingxiang
Original edition published by Foreign Language Teaching and Research Publishing Co., Ltd. (FLTRP), 2016

Armenian Translation© Foreign Language Teaching and Research Publishing Co., Ltd. (FLTRP)
All rights reserved.

© «Ոգի-Նաիրի»/թարգմանության համար/, 2018

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետութսունականներ *(80 հոու).* սա մի բնորոշում է, որ լայնորեն շրջանառվում է չինական լրատվամիջոցներում: Այդպես են անվանում 1980 թվականից հետո ծնված սերնդին, որի ներկայացուցիչները չափահաս տարիքի են հասել Չինաստանում «բարեփոխումների եւ բացախոսության» դարաշրջանում: Որոշակի առումով դա նույնիմաստ է Արեւմուտքում շրջանառվող «Y սերնդի» հետ: Այս սերնդի գրողները գրական ասպարեզում հայտնվել են հետսոցիալիստական դարաշրջանում Չինաստանի ՁԼՄ-ների եւ մշակութային հաստատությունների արագ առեւտրայնացման՝ կոմերցիալիզացիայի հետ մեկտեղ: Սակայն, մի քանի անուններից բացի, երիտասարդ այս գրողներն Արեւմուտքում հիմնականում անհայտ են:

Ավելի ճշգրիտ լինելու համար՝ հարկավոր է տարբերակում մտցնել «հետութսունականների գրականություն» հասկացության նեղ եւ լայն իմաստների միջեւ: Նեղ իմաստով՝ «հետութսունականների գրականություն» ասելով նկատի ունեն մոտավորապես 2000 թվականին հանրային գիտակցության մեջ հայտնված երիտասարդ գրողների մի խումբ: Նրանց կարելի է բաժանել նաեւ երկու ենթախմբի: Գեղարվեստական արձակի հեղինակները հիմնականում այն խմբավորումից էին, որ կոչվում էր «Նոր կոնցեպտի՝ հայեցակարգի գրողներ», այսինքն՝ Ճանհայի «Մենյա» գրական հանդեսի կազմակերպած «Նոր կոնցեպտուալ գրականություն» մրցույթի հաղթող գրողները, այդ թվում Գո Ցզինմինը եւ Չժան Յուեժանը: Մեկ այլ խմբավորում էին կազմում երիտասարդ բանաստեղծները, որոնք ակտիվորեն հանդես էին գալիս պոեզիայի ամսագրերում եւ առցանց ֆորումներում: Մոտավորապես 2004 թվականին հանրային լրատվամիջոցներն սկսեցին տարփողել «հետութսունականներ» հասկացությունը: Այդ նույն թվականին «Time Magazine Asia Weekly» հանդեսի փետրվարյան համարի կազմին հայտնվեցին Չուն Ճուի եւ Հան Հանի լուսանկարները: Հավանա-

բար իր ընտրողական բնույթի եւ սահմանափակ քանակի ընթերցողներ ունենալու պատճառով՝ պոեզիան լրատվամիջոցներում հիմնականում անտեսվում էր, եւ ավելի շատ ներկայացվում էր գեղարվեստական արձակը: Այսպիսով, նեղ իմաստով «հետութսունականների գրականություն» ասելով՝ գլխավորապես նկատի էին ունենում գեղարվեստական արձակ ստեղծող հեղինակների խմբավորումը, որի միջուկը կազմում էին «Նոր կոնցեպտի՝ հայեցակարգի գրողները»: Դրանք գրողների երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ էին, որոնք շեղվում էին գրականության արտադրության՝ առկա սոցիալիստական կարգից եւ անմիջականորեն հաշվի առնում շուկան ու նրա պահանջարկները: Ձեւավորվում էին նոր գաղափարախոսություններ, որոնք մարտահրավեր էին նետում իշխանություններին, եւ դրանք կրողները դրսեւորում էին ազատ ինքնարտահայտման կամք ու ցանկություն:

Երիտասարդական գրականությունը միայն այդ խմբավորման գրողների եւ նրանց ընթերցողների տարիքի հետ չէր կապված: Գրելն ի սկզբանե ընկալվում էր որպես եկամուտ ստանալու միջոց: Շեշտադրում կատարելով երեւակայության վրա՝ գրողներն ապստամբում էին ռեալիզմի ավանդական ուսմունքի դեմ: Հորինվածքի հանդեպ պաշտամունքը հանդես էր գալիս գրվածքի անհատականությունն ու ինքնատիպ հայեցակարգը պաշտպանելու եւ երեւակայության դերն առավելագույնի հասցնելու դիրքերից: Հետութսունականների սերնդի գրողների գործերն, այսպիսով, եզակի հնարավորություն են ընձեռում՝ ուսումնասիրել շուկայի եւ մշակույթի միջեւ դինամիկ փոխներգործությունն այսօրվա Չինաստանում: Որպես գրական արտադրության հին համակարգից անկախ գրողների առաջին սերնդի ներկայացուցիչներ՝ «հետութսունականների» գրողներն իրենց ստեղծագործություններում ցուցաբերում են տնտեսական եւ մշակութային կապիտալի միջեւ եղած փոխներգործության խոր ըմբռնում: Նրանք խորապես կարեւորում են անհատի ուսումնասիրությունը՝ լարված, պարադոքսներով ներթափանցված եւ խիստ անկանխատեսելի սոցիալական համատեքստում: Այս իմաստով՝ «հետութսունականների գրականությունն» ի սկզբանե եղել է խորապես քաղաքականացված: Դա անցումային դարաշրջանի արդյունք է եւ համահունչ է դարասկզբին չինական հասարա-

կության մեջ տեղի ունեցող կապիտալիստական բուռն վերափոխմանը:

Լայն իմաստով «հետութսունականների գրականություն» ասելով, սակայն, ավելի «օբյեկտիվ» վերաբերմունք է ցուցաբերվում հետութսունականների սերնդի գրողների բոլոր գործերի նկատմամբ: Այս խորագրի ներքո գոյակցում են ե՛ւ վերը հիշատակված՝ դեպի շուկան կողմնորոշված երիտասարդական գրականությունը, ե՛ւ ավելի «ավանդական» գրողների ու նրանց ստեղծագործությունների ամբողջությունը, ինչպես, օրինակ, հեղինակավոր ամսագրերում ներկայացված գրողները, որոնց խրախուսում են պաշտոնապես հաստատված քննադատները, կամ մրցույթներում աչքի ընկած գրողները եւ այլն: Ներկայումս երկու ճամբարների միջեւ մրցակցությունը դեռ բնորոշում է հետութսունականների գրական պատկերը:

Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, երկու ճամբարներն էլ իրենց ստեղծագործություններում ցուցաբերում են գեղագիտական որոշակի ընդհանուր առանձնահատկություններ: Նախ՝ գերազանցապես գրում են քաղաքի եւ քաղաքային կյանքի մասին՝ ի տարբերություն հետհիսունական եւ հետվաթսունական սերունդների գրողների: Նրանք հետազոտում են սեփական եսը քաղաքի կենսատարածքում: Թեեւ որոշ գործերում ներկայացվում է գյուղական միջավայրը նաեւ, բայց այն դրվում է քաղաքի հսկայական հայելու դիմաց: Քաղաքի ժամանակակից կյանքի եւ նոր ապրելակերպի պատկերումը բնորոշ են գործերի մեծամասնությանը: Ըստ էության, ինչպես այս գրքում ներկայացված շատ գործերում է պատկերված, «հետութսունականներ» հասկացությունը նշանակում է նաեւ քաղաքային Չինաստանում ձեւավորված՝ այս նոր սերնդի կենսակերպ: Այդ կենսակերպին բնորոշ են սպառողական հոգեբանությունը, հեդոնիզմը, կոսմոպոլիտիզմի ձգտումը՝ գլոբալիզացիայի դարաշրջանում:

Երկրորդ՝ ստեղծագործություններն աննախադեպորեն հիմնված են անձնական փորձի վրա: Պատումը հաճախ ներկայացվում է առաջին դեմքի կողմից: Երիտասարդ շատ գրողների համար գրական ստեղծագործությունն անհատի մենությունն արտահայտելու ամենալավ միջոցն է: Եվ շատ դեպքերում՝ աշխարհին չհարմարվելու ու այդտեղ իր տեղը չգտնելու զգացողությունը միախառնվում է դեռահասների հուզական ընկճվածության ու հուսալքության հետ: Քննադատները նշել են, որ հետութսունա-

կանների որոշ գործերում առկա է «մեծանալուց հրաժարվելու» միտումը:

Վերջապես՝ հետութսունական թվականների գրականությանը հատուկ է նաեւ պատմական նիհիլիզմի, պատմական բեռից ազատ եւ նպատակազուրկ լինելու ուժեղ միտումը: Պոստմոդեռնիստական այդ գործերից մի քանիսում առկա են այսպես կոչված «օրագրային գրականության», ֆանտասմագորիայի տարրեր: Կերպարները կարող են հայտնվել մի պահի, ապա հաջորդ պահին անհետանալ: Ե՛վ անցյալը, ե՛ւ ապագան սեղմված են ներկայի մեջ, որը ոչ այլ ինչ է, քան պարզապես նյութական տափակ ու ծանծրալի մի աշխարհ:

ՅԱՆ ՑԻՆՍՅԱՆ

ՉԺԱՆ ՅՈՒԵԺԱՆ

ՏՈՒՆԸ

1. Ցյու Լո

Մեկնելուց մեկ օր առաջ Ցյու Լոն բավականին վաղ արթնացավ: Բայց որպեսզի չխախտի արդեն ընդունված կարգը, երկար ժամանակ պառկած մնաց անկողնում: Երբ արդեն ժամն էր, գիշերանոցը հագը գցեց, գնաց հյուրասենյակ, միացրեց երաժշտությունը, մոտեցավ լուսամուտին, սեղմեց կոճակը, որպեսզի էլեկտրական շերտավարագույրները դանդաղ բացվեն: Աչքերը կկոցած նայեց արեւին, որի կարմրությունից մաշկը փշաքաղվեց: Ապա ցնցուղ ընդունեց, ֆենով չորացրեց մազերը, սուրճ եփեց, հաց բովեց, օրվա թերթը վերցնելու համար իջավ ցած, հետո այն թողեց սեղանին:

Այդ ամենն անելուց հետո նայեց պատի ժամացույցին. Ցզին Յույին արթնացնելու ժամանակն էր: Բայց երբ մոտեցավ նրա ննջասենյակին, տեսավ, որ Ցզին Յույն արդեն արթնացել է, նստել է անկողնում եւ զարմացած տեսք ունի:

Այդ առավոտ Ցզին Յույը շատ դանդաղաշարժ էր: Արդեն ժամն անցել էր, երբ սովորաբար դուրս էր ելնում, բայց նա դեռ սեղանի մոտ նստած թերթ էր կարդում՝ սուրճի կիսախմած բաժակը ձեռքին: Ընկերությունը երեկ պաշտոնապես հայտարարել էր նրա առաջքաշման մասին լուրը, այնպես որ՝ գուցե վերջապես հասկանալով, որ իր ներդրած ջանքերի գնով հասել է նպատակին, հանկարծ այդպես ընդարմացած տեսք ուներ:

Ցյու Լոն երկար էր սպասել այս օրվան: Մի քանի անգամ շտապեցրեց, մինչեւ որ Ցզին Յույը վերջապես վեր կացավ: Նախքան դռանը հասնելը նա Ցյու Լոյին խնդրեց հետը գնալ այդ երեկո իր համար գործընկերների կազմակերպած տոնական միջոցառմանը: Վերջինս հրաժարվեց, բայց անմիջապես էլ զղջաց: Ցզին Յույի դեմքն ուրախություն եւ գոհունակություն արտահայտեր թե ոչ՝ Ցյու Լոն միշտ անհանգստության նույն զգացումն էր ունենում:

Ցզին Յույին ճանապարհ դնելուց հետո նա դուռը ներսից փակեց,

դուրս քաշեց կաշվե դատարկ ճամպրուկը եւ սկսեց իրերը դասավորել: Միայն մի քանի հիմնական, իր սիրած շորերից էր դրել, բայց արդեն տեղ չկար: Ցյու Լոն մեկ առ մեկ հանեց շորերը եւ նորից դրեց զգեստապահարանի մեջ՝ ինքն իրեն հիշեցնելով, որ ուզում է բոլորովին նոր կյանք սկսել, եւ ուրեմն այդ հին շորերը հետը վերցնելու անհրաժեշտությունը չկա: Ֆենը, գանգրացուցիչը, հարդարանքի պարագաները, խտասկավառակները, գրքերը, այն ամենն, ինչ պետք կգար ճանապարհին, խնամքով ընտրեց եւ մեկ առ մեկ տեղավորեց, ապա կրկին հանեց՝ հանկարծ որոշելով, որ դրանցից ոչ մեկն էլ պետք չէ եւ որեւէ արժեք չունի իր համար: Ճամպրուկը լրիվ դատարկվեց: Այդ պահին կատուն, որ ամբողջ ժամանակ կողքին նստած նայում էր, ցատկեց ճամպրուկի մեջ, նստեց հենց մեջտեղում եւ չէր ուզում դուրս գալ: Ցյու Լոն վստահ չէր՝ արդյո՞ք դա նշանակում էր, որ կատուն իր գնալը չի ուզում, թե՞ կատուն էլ էր ուզում իր հետ գնալ:

Մեծ ջանքերի գնով միայն հաջողվեց բռնել կատվին ու փակել աշխատասենյակում: Եվ երբ ետ եկավ, արդեն կորցրել էր համբերությունը: Վերցնելով այսուայնտեղ ընկած հագուստը, հարդարանքի պարագաները՝ դրանք բոլորը, էլեկտրական մի քանի անհրաժեշտ սարքավորումների ու դեղորայքի հետ, խցկեց ճամպրուկի մեջ եւ անմիջապես փակեց ճամպրուկը՝ այլեւս չուզելով հայացք գցել դրա կողմը: Նա շատ անփորձ էր, երբ բանը հասնում էր իրերը դասավորելուն, թերեւս այն պատճառով, որ հազվադեպ էր տնից հեռու ճամփորդության մեկնում: Նախկինում երբեք չէր սիրել ճամփորդել: Դա լի էր անհարմարություններով եւ իրավիճակի հետ կապված սահմանափակումներով: Այժմ, սակայն, նրա վերաբերմունքը որոշ չափով փոխվել էր: Ավելի հակված էր դա անվանել «չափավոր կենսակերպ»: Ծանրումեծ ճամպրուկը նորից պատշգամբ քարշ տվեց եւ կոշիկի փոշեպատ տուփը նորից դրեց վրան: Բացի աշխատասենյակում նվաստող կատվից, ոչ ոք չգիտեր, որ ճամպրուկում պահված էին այն իրերը, որոնք անհրաժեշտ էին ուր որ է սկսվող՝ իր «չափավոր կենսակերպի» համար:

Մի կես ժամ կար մինչեւ սուպերմարկետի բացվելը: Նա նստեց թախտին եւ ավարտեց արդեն կեսը կարդացած վեպը, ապա մյուս գրքերի մեջ դրեց: Հիմար ավարտ: Վերջին էջերը գրելիս հեղինակն ինքը երեւի հասկացել էր, թե ինչ կեղծ, սարքովի պատմություն է եւ կորցրել էր դրա հանդեպ հետաքրքրությունն ու վստահությունը, այդ պատճառով էլ հապճեպ ավարտել էր: Վաղուց Ցյու Լոյին չէր գոհացնում իր կարդացած գրքերի ավարտը: Շատ վեպեր սկզբում որոշ հուզիչ մասեր ունեին, բայց դրանք

միայն փոքրիկ ձեռքբերումներ էին, որ շուտով կորչում էին: Գիտեր, որ չափազանց խիստ ու դաժան է այդ հեղինակների հանդեպ, բայց նույնն էր պահանջում նաեւ ինքն իրենից: Ահա թե ինչու երբեք գրող չդարձավ: Պատանեկության տարիքում միշտ երազել էր գրելու մասին, բայց պարզվում է՝ միայն նրա համար, որպեսզի այդ երազանքները սեփական խստապահանջ անգթությամբ կործանի:

Ժամը 10-ին գնաց սուպերմարկետ: Սեւ տոպրակներ աղբի համար (50 սմ լայնությամբ, 60 սմ երկարությամբ), մարմինը մաքրող հեղուկ՝ տղամարդու համար, շամպուն մազերի թեփոտման դեմ, չինական օշինդրի օճառ, մաքրող փոշի՝ օձիքի կեղտը հեռացնելու համար, ձեռքի հեղուկ օճառ, երեք տուփ թղթե անձեռոցիկ, համակցված վիտամիններ տղամարդկանց համար, վաթսուն վատտանոց էներգախնայող լամպեր, A4 չափի տպագրական թուղթ, պնդուկի միջուկով թխվածք: Վճարելուց առաջ չորս տուփ AA մարտկոցներ վերցրեց եւ գցեց գնումների սայլակի մեջ:

Ժամը 12 - չոր քիմմաքրման կետ՝ վերցնելու Ցզին Յույի կոստյումը եւ երեք վերնաշապիկը:

12:30 - խոզի կոճիկից պատրաստված մի թաս ապուր կերավ մենակ՝ նախքան կենդանիների խանութ շտապելը, որպեսզի հինգ կիլոգրամանոց տոպրակով եւ տասը փաթեթ կեր գնի կատվի համար: Խանութի վաճառողից այցեքարտ խնդրեց. վրան գրված էր հասցեն եւ առաքումների պատվեր տալու հեռախոսահամարը: Մոտակա բանկից մի քիչ գումար հանեց եւ վերալիցքավորեց էլեկտրականության ու գազի կանխավճարային քարտերը:

Կեսօրից հետո ժամը մեկին գնաց սրճարան: Մեկ գավաթ էսպրեսոյից հետո դեռ հոգնածություն զգալով՝ գլուխը դրեց սեղանին ու քնեց:

2-ին մոտ էր, երբ Յուան Յուանը եկավ: Իհարկե, դստերն էլ հետն էր բերել: Դուրս ելան արեւի տակ տաքանալու եւ երկար չզրուցեցին, քանի որ երեխան սկսեց լաց լինել: Երբ Յուան Յուանը վերցրեց նրան, փոքրիկ դեմքը մոտեցրեց իր ճակատին եւ մեղմ փաղաքշեց, Ցյու Լոյի գլխով հանկարծ տարօրինակ մի միտք անցավ. գիտե՞ արդյոք այս փոքրիկ աղջնակը, որ իր մոր կոպի ծալքը վիրաբուժական միջամտությամբ է բացվել: Իհարկե, չգիտե, ինչպես որ չգիտե, թե մարմնի որ մասն են կոպերը: Ցյու Լոն մտածեց, որ այս աշխարհն ի սկզբանե սուտ է: Նույնիսկ մորդ աչքերը, որ խելահեղ ժպտում են քեզ, կարող են բոլորովին արհեստական լինել:

Երեքն անց կես նրանք դուրս եկան սրճարանից: Ճանապարհին Ցյու

Լոն մեքենան լվաց եւ բենզին լցրեց՝ մտածելով, որ չի կարող իրենից հետո կյանքում այդքան շատ դատարկ բան թողնել Ցզին Յույի համար: Երբ տուն հասավ, տնային աշխատողը՝ Սյաո Ցզյույն, արդեն այնտեղ էր եւ հատակն էր լվանում:

- Այսօր պետք է մի լավ մաքրություն անենք»,- ասաց Ցյու Լոն՝ հենց որ ներս մտավ:

- Հյուրե՞ր են գալու,- հարցրեց Սյաո Ցզյույը:

- Մի՞թե չենք կարող գարնանային մաքրություն անել, եթե հյուրեր չեն գալիս, - առարկեց Ցյու Լոն: Սյաո Ցզյույը ոչինչ չասաց: Առաջին անգամն էր, որ Ցյու Լոն տնային գործով էր զբաղվում Սյաո Ցզյույի հետ: Հանեցին եւ լվացին վարագույրները, փոխեցին սավանները: Սառնարանի ժամկետանց ու համը կորցրած ուտելիքի համարյա կեսը դեն գցեցեին, տեղափոխեցին զգեստներից չորսը եւ երեք զույգ կոշիկ, որ արդեն չէին հագնելու, սանրեցին ու խուզելով հարդարեցին կատվի երկար, խճճված բուրդը եւ պատշգամբում կարգի բերեցին ամսագրերի կույտը: Որքան շատ էր մաքրում, այնքան անելու շատ բան էր ի հայտ գալիս, եւ միայն հիմա տեսավ, թե ինչ խառն ու կեղտոտ էր տունը: Սյաո Ցզյույն ամեն օր կեսօրից հետո գալիս էր ու մի երկու ժամ մաքրություն անում, եւ ինչպես հիմա պարզվեց՝ այդ ամենը ձեւի համար էր միայն: Ցյու Լոն հանկարծ վատ զգաց՝ հասկանալով, որ մայրը նախկինում փողի համար էր նախազգուշացնում: Ինքը չափազանց ներողամիտ էր եղել Սյաո Ցզյույի հանդեպ եւ երես էր տվել՝ դարձնելով ծույլ ու անբան:

Ժամը յոթին մոտ էր, երբ մաքրման աշխատանքներն ավարտեցին: Սյաո Ցզյույը դժգոհ էր՝ առանց պատճառի մի քանի ժամ ավել աշխատելու համար: Ցյու Լոն մտածեց՝ քանի որ վերջին օրն էր, չարժեր նեղացնել նրան: Հին շորերն ու կոշիկները տվեց Սյաո Ցզյույին: Գիտեր, որ հագուստի սիրահար է եւ միշտ սիրում է լավ հագնվել: Բնականաբար, Սյաո Ցզյույի դեմքը կրկին պայծառացավ, եւ նա, տեսնելով, որ Ցյու Լոն սկսել է մակարոն պատրաստել, մոտեցավ օգնելու: Կողքից անցնելիս Ցյու Լոն մեկ անգամ էլ զգաց նրա վրայից եկող թեթեւ հոտը: Երբ Սյաո Ցզյույն առաջին անգամ եկավ, ինքը պարզապես չէր կարող տանել այդ հոտը: Մի տեսակ խոտի հոտ էր դա՝ չոր, կոշտ ու կոպիտ, որի պատճառը լավ չուտելն ու բավարար սնունդ չստանալն է: Դրանից է աղքատության այդ հոտը: Հետագայում, երբ նա բնակություն հաստատեց քաղաքում, հոտն աստիճանաբար վերացավ: Այն, ինչ ինքն զգաց հիմա, դրա վերջին ծվեններն էին, որ ակնթարթորեն ցնդելով կորան յուղի ու մակարոնի բուրմունքի մեջ:

Սյաո Ցզյույը հաճախ էր նայում, թե ինչպես է ինքը մակարոն պատրաստում, եւ արդեն սովորել էր մի քիչ գետնանուշի յուղ լցնել ամանի մեջ, որպեսզի մակարոնն իրար չկպչի: Նա իրենից սովորել էր նաեւ պիցցա, շոռակարկանդակ եւ բլիթներ պատրաստել, ինչպես նաեւ սուրճ եփել եւ կարմիր գինու շիշը բացել: Ցյու Լոն համոզված չէր, թե Սյաո Ցզյույը երբեւէ կկիրառի իրենից սովորած այդ հմտությունները:

Սկզբնապես նախատեսել էր, որ Սյաո Ցզյույը մնա եւ ճաշի իր հետ, բայց վերջինս ստիպված էր շտապել՝ մեկ այլ ընտանիքում աշխատելու, եւ ասաց, որ արդեն ուշանում է: Ցյու Լոն մակարոնը մենակ կերավ: Քանի որ մնացած ամբողջ մսի սոուսն արդեն օգտագործել էր, մակարոնն աղի էր ու հաստ, եւ ինքը դրա մի փոքր մասը միայն կերավ:

Միայնակ նստած՝ հանկարծ մտաբերեց, որ մոռացել էր կեսօրին Յուան Յուանին պատմել երկու շաբաթ առաջ իր տեսած ֆիլմի մասին, որ կոչվում էր «Ո՞վ է վախենում Վիրջինիա Վուլֆից»: Յուան Յուանը շատ վաղուց էր այդ մասին ասել: Ասել էր, որ պարզապես հասկանալի չէ, թե «ո՞վ է վախենում Վիրջինիա Վուլֆից» տողը, որ անընդհատ կրկնվում էր ֆիլմում, ինչ-որ խոր իմաստ ունի՞ արդյոք: Ֆիլմը դիտելուց հետո Ցյու Լոն փնտրեց համացանցում եւ ի վերջո պարզեց, որ այդ տողը «Ո՞վ է վախենում մեծ չար գայլից» հայտնի ժողովրդական երգի նմանաձայնական հարմարեցումն է *(Wolf - անգլերեն «գայլ» բառը եւ Woolf ազգանունը նույն կերպ են հնչում - Ծ. Թ.):* Հետո Վուլֆի ստեղծագործությունների ժողովածուներից մի քանիսը գտավ, որպեսզի կարդա, եւ նույնիսկ որոշ ժամանակ մանրամասն ուսումնասիրեց հեղինակի նկարը տիտղոսաթերթի էջին: Այդ երկարավուն դեմքին, որն արդարեւ չէր կարող գեղեցիկ համարվել, երկու սրաթափանց աչքեր էին: Դրանց նայելիս սիրտդ կտոր-կտոր էր լինում՝ այժմ ապրածդ կեղծ գոյությունը խոստովանելու անհաղթահարելի գիտակցումից: Շատ էր ուզում դա քննարկել Յուան Յուանի հետ, այնքան, որ հենց այդ պահին մտածեց հավաքել նրա համարն ու զանգել: Բայց Յուան Յուանը երեւի դստեր հետ խաղում էր խորանարդիկներով, կամ հանդիմանում էր նոր եկած չորրորդ դայակին, կամ էլ սկեսրոջ հետ շարունակում էր բուռն քննարկել՝ երեխային հանրայի՞ն մանկապարտեզ տանել, թե՞ մասնավոր: Այնպես որ, եթե անգամ հիշեր էլ, որ այդ կեսօրին էին հանդիպել, Վուլֆը զրույցի թեմա չէր դառնա եւ երբեք էլ չի դառնա: Յուան Յուանն այդ պահին վախենում էր միայն մեծ չար գայլից, ոչ թե Վիրջինիա Վուլֆից:

Կատուն ցատկեց սեղանին, հոտոտեց մակարոնը, մի քանի քայլ ետ գնաց, նստեց եւ նրան նայեց կասկածով լի հայացքով, կարծես ասելիս լի-

ներ՝ «Եթե գնաս, ես ի՞նչ եմ անելու»: Ցյու Լոն ինքն էր միշտ պնդել, որ կատու ունենան. Ցզին Յույը կատու չէր սիրում: Կատվի պատճառով Ցզին Յույն ամեն առավոտ հինգ րոպե էր կորցնում, որպեսզի կոստյումի վրայից հեռացնի մազերը: Հիմա, երբ Ցյու Լոն պատրաստվում էր հեռանալ, կատուն, բնականաբար, անհանգստանալու էր սեփական ճակատագրի համար: Բայց, փոքր-ինչ ավելի լավատեսորեն մտածելու դեպքում, եթե ամենուր որոնելով այնպիսի մի ընտանիք, որին կուզենար հանձնել կատվին, Ցզին Յույը սիրային նոր հարաբերությունների մեջ մտներ, եւ այնպես լիներ, որ տան հաջորդ կինը կատուներ շատ սիրեր ու դեմ չլիներ, որ սա իր մարմնի վրա կրեր անցյալի հետքերը, ապա կատուն էլ կարող էր շատ հանգիստ ներգրավվել նոր կյանքի մեջ:

Նա ընկավ Ցզին Յույի նոր կյանքի մասին երեւակայության գիրկը՝ թե ինչքան ժամանակ կփնտրի իրեն, ինչքան ժամանակ կսգա իր կորուստը, ինչքան ժամանակում կհաղթահարի ցավը, եւ որքան ժամանակ կպահանջվի, որպեսզի գտնի հաջորդ աղջկան, որին կսիրի: Ինչքա՞ն ժամանակ կհանդիպի այդ աղջկա հետ, նախքան միասին կքնեն, ինչքա՞ն ժամանակ կքնեն միասին, մինչեւ որ կսկսեն ապրել իրար հետ: Իհարկե այս քայլերից մի քանիսը կարող են միաժամանակ արվել կամ ընդհանրապես չարվել. դա համապատասխանում էր արդյունավետությունն ընդգծելու նրա գործելաոճին: Ավելին, դա իսկապես նրա անձին բնորոշ շատ վճռական կողմերից մեկն էր: Սաստիկ վատ զգաց, ասես Ցզին Յույն իրեն խորապես վիրավորել էր, եւ իր հեռանալն էլ՝ դրան ի պատասխան ինքնապաշտպանության մի տեսակ էր:

Ցյու Լոն բորբոքված վիճակում էր: Նայելով ժամացույցին եւ տեսնելով, որ արդեն ժամը տասն է, չկարողացավ զսպել Ցզին Յույին զանգելու ցանկությունը: Խոպոտ մի խառնամբոխ էր հավաքվել այնտեղ, ուտելուց հետո շատերը գնում էին Լաո Հոյի մոտ՝ մի քիչ խմելու: Ցզին Յույի ձայնը շատ ուրախ էր եւ աշխույժ, թվաց՝ նա էլ էր խմում:

- Կգամ եւ քեզ կվերցնեմ:

Վախենալով, որ Ցզին Յույը կմերժի առաջարկը, Ցյու Լոն անմիջապես կախեց խոսափողը:

Լաո Հոն Ցզին Յույի վերադասն էր: Նրա տունը ծայրամասում էր: Ցյու Լոն մի քանի անգամ եղել էր այդտեղ: Ամեն անգամ, երբ մտնում էր այդ հսկա համալիրը, ճանապարհը կորցնում էր, չնայած, բարեբախտաբար, պահակն արդեն դարպասի մոտ էր հասած լինում իր հեծանվով եւ առջեւից գնալով ցույց էր տալիս ճանապարհը: Առաջին անգամ, երբ եկավ

այդտեղ, իրեն շատ դուր եկավ: Հնարավոր չէր չսիրել եվրոպական ոճի այդ կառույցները՝ այդպիսի ընդարձակ մասնավոր այգիներով, գիշերային անդորրը, որ գրեթե այլաշխարհային էր թվում, եւ տունը, որ լի էր հնաոճ կահույքով՝ ամեն մեկն իր սեփական պատմությամբ: Մարդ զգուշանում էր քայլել մեր տատերի տարիքից ավելի տարիք ունեցող նախշանկար գորգի վրայով: Մրգամանում մրգերն այնքան գեղեցիկ տեսք ունեին, ասես ուղղակի Վերմեերի յուղաներկ կտավներից էին դուրս ելել: Սպասքն ամբողջովին շողարձակում էր, եւ երբ ձեռքը վերցրեց գինու բաժակը, մտածեց՝ երբեք այսպիսի խաղացկուն, շողարձակող գինի չեմ խմել: Ամենայն սիրալիրությամբ տանտիրուհին ինքնաթիռով նոր բերված ծովախեցգետին հյուրասիրեց եւ նոր մորթած կովի փափկամիս: Իսկ ճաշից հետո դուրս հանեց նեֆրիտի իր հավաքածուն, որպեսզի հիացնի հյուրերին: Տանտիրուհին հին աշխարհի կահույքի նման ծանրումեծ էր, ասես հարմարեցված էր տանը: Հատակից վեր խոյացող լամպից ընկած լույսի շերտը, տիրոջը հաճոյանալ իմացող շան պես, տանտիրուհուն լուսաշող աստվածուհու տեսք էր հաղորդում: Միայն ավելի ուշ նրան սրճարանում տեսնելուց հետո Ցյու Լոն թեթեւացած շունչ քաշեց, երբ պարզվեց, որ նրա դեմքին շպարն այնքան հարթ ու հավասարաչափ չի քսված եւ չի կարող ամբողջովին քողարկել ժամանակի դրոշմած դարչնագույն բծերը:

Ցյու Լոն փորձում էր ամեն կերպ թաքցնել իր չհարմարվող եսը՝ ներկայանալով ամենահամապատասխան ձեւով: Գիտեր, որ Ցզին Յույը նույն բանն է զգում, եւ անգամ ավելին, քանի որ գյուղում էր մեծացել, եւ անկախ նրանից, թե հետագայում ինչպիսի փորձառություն էր ձեռք բերել, սրտի խորքում դեռ կորստյան զգացողություն կար: Առաջին անգամ, երբ դուրս եկան Լաո Հոյի տնից, ինքը Ցզին Յույին հարցրեց, թե արդյոք իրենք է՞լ կարող են ապրել մի այսպիսի տան մեջ, երբ նա ապագայում Լաո Հոյի պես բարձր պաշտոնի հասնի: Չգիտեր, թե ինչու բերանից թռցրեց այդ հարցը: Գուցե պարզապես իրենց եւ տան միջեւ ընկած հեռավորությունը հաղթահարելու համար, բայց հենց որ հարցը հնչեցրեց, ինքն էլ նույնիսկ սրտի խորքում բուռն ցանկություն զգաց: Ցզին Յույն այո ասաց: Սակայն անվճռական էր ոչ թե սեփական հեռանկարների, այլ այդպիսի տուն ունենալու անհնարինության հետ կապված: Բայց որպես նպատակ, որին պետք է ձգտել, այս տունն այդուհանդերձ իրական մի բան էր:

Հետագայում Ցյու Լոն վախենում էր Լաո Հոյի տուն գալ: Ամբողջ երեկոն անցկացնելով սեղանին դրված՝ Մին գահատոհմի ժամանակների հինավուրց սկահակի մասին քննարկման մեջ՝ հանկարծ խելահեղորեն դաժան

մի ցանկություն էր ունենում՝ արագ ոտքի կանգնել եւ գետնին շպրտել սկահակը՝ այդպիսով ապացուցելով, որ ինքն ունի այն երեխայի քաջությունը, որը բացահայտել է կայսեր նոր զգեստի գաղտնիքը: Բայց դա չէր անում: Միակ բանը, որ անում էր, իրեն այդքան անհարմարություն պատճառող այդ չար մտքերը թաքցնելն էր, եւ շատ մեծ դժվարությամբ էր ստիպում իրեն նստած մնալ: Ամեն անգամ, երբ այս վիճակում էր հայտնվում, ցավագին մի հայացք էր գցում Ցզին Յույի կողմը, բայց վերջինս ոչ մի անգամ չէր նկատում այդ հայացքը:

Զզվանք էր զգում այդպիսի ապրելակերպից, որին ծգտում էր: Ամենավատն այն էր, որ խանդոտ չէր: Շատ արագ հրաժարվեց այս ամենը Ցզին Յույին պատմելու ամեն մի մտքից. նա պետք է բոլոր ուժերը կենտրոնացներ նպատակին հասնելու համար եւ շարունակեր տքնաջան աշխատել: Նպատակը վերափոխելու ամեն մի փորձ նույնը կլիներ, ինչ շանը ոսկորից զրկելը: Հետեւանքները պետք է կանխատեսել: Այսպիսով, ինքը լռում էր, բայց շատ շուտով սկսեց գիտակցել, որ իրենք տարբեր իդեալներ ունեն: Համեմատած բաժանվելու, առանձին ապրելու կամ ունեցվածքը կիսելու հետ՝ նրանց իդեալների տարբերությունն ընդամենը թեթեւ մի քամի էր:

Ցյու Լոն մոտեցավ Լաո Հոյի տանը, ներսից եկող ծիծաղի ձայնը լսեց, եւ միտքն ու մարմինը լարվեցին. չէր ուզում մտնել մի սենյակ, ուր բոլոր աչքերը սեւեռուն վրադ են նայում: Մտածեց, որ կարելի է պարզապես մի քիչ կանգնել լռության մեջ: Նայեց այդտեղ կանգնեցրած երեք սեւ մեքենաներին: Հանկարծ չկարողացավ տարբերել, թե դրանցից որն է Ցզին Յույինը: Միայն երբ ետեւի կողմից մոտեցավ, որպեսզի համարը տեսնի, հասկացավ, թե որ մեկն է: Դրանք բոլորն այնքան նման էին:

Հեռվից մի աղջիկ էր քայլելով մոտենում: Լաո Հոյի դուստրն էր, որն ընդամենը տասնչորս տարեկան էր, բայց արդեն շատ լիքը կազմվածք ուներ: Տատանվեց՝ մտածելով, թե արդյո՞ք պետք է բարեւի, բայց ի վերջո արագ կախեց գլուխը, հանեց հեռախոսը եւ ձեւացրեց, թե զանգ է տալիս: Աղջիկը մոտեցավ, նայեց նրան եւ հարցրեց.

- Ինչո՞ւ ներս չեք գնում:

Ձայնը հնչեց փոքր-ինչ սառն ու պաշտոնական, ասես սադրանքի երանգ պարունակեր, խիստ զայրացնելով Ցյու Լոյին: Եվ նա, ի պատասխան, քիչ էր մնում նետի՝ ինչո՞ւ պիտի ներս գնամ: Բայց զսպեց իրեն՝ ոչինչ չասելով եւ շարունակելով գլուխը կախ սեղմել հեռախոսի ստեղները:

Աղջիկը ներս մտավ եւ դուռը փակեց: Ցյու Լոն գիտեր, որ այժմ ստիպված է ներս մտնել: Հենց որ պատրաստվում էր սեղմել դռան զանգի կոճա-

կը, դուռը բացվեց: Հյուրերը դուրս եկան, եւ Լաո Հոյի կինը ձեռքի ափով մեղմորեն դիպավ իր ուսին:

- Եկել եք: Ներս գայիք եւ նստեիք մի փոքր:

Ցյու Լոն ժպտաց եւ գլուխը բացասաբար շարժեց: Տեսնելով նրան՝ բոլորը հերթով ողջունեցին: Ցզին Յույը դռան մոտ էր: Կոշիկները հագնելուց հետո նա դուրս եկավ եւ Ցյու Լոյին մեկնեց մեքենայի բանալիները:

Նրանց դեպի մեքենան ճանապարհելիս Լաո Հոյի կինը մատներով շոշափեց Ցյու Լոյի բարակ վերնաշապիկը:

- Չե՞ք մրսում. Այդքան թեթեւ եք հագել:

- Ձեզ նայելով՝ մրսում եմ,- Ցյու Լոն ուրախ ծիծաղեց՝ ձեռքով ցույց տալով Լաո Հոյի կնոջ՝ ջրաքիսի մորթուց գործած շալը:

Ցզին Յույը մեքենայում քնեց: Ցյու Լոն միացրեց երաժշտությունը: Թախծոտ մի տղամարդ էր երգում: Նախկինում չէր լսել այդ երգը. այդ ալբոմը չէր գնել: Ցզին Յույն ինքնիրեն արթնացավ հենց որ մեքենան կանգ առավ, բացեց դուռը եւ ուղիղ քայլեց դեպի ավտոտնակի վերելակի դուռը՝ կոստյումը ձեռքին: Նայելով նրա ետեւից՝ այնպիսի զգացողություն ունեցավ, ասես Ցզին Յույն արդեն ապրում էր Ցյու Լոյից հետո եկող աշխարհում:

Նրանցից ոչ ոք չէր պատրաստվում այդ գիշերն ավելի երկար դարձնել, դրա համար էլ սիրով չզբաղվեցին: Դեռ հաջորդ օրը չէր եկել (երբ ճամպրուկը քաշելով դռնից դուրս ելավ), որ զղջման զգացողություն ունեցավ՝ ասես ուղեբեռից ինչ-որ մի մաս էր թողել:

Ցյու Լոն միշտ կանխազգացել էր, որ վերջին գիշերն անքնություն կունենա: Այդպես չեղավ սակայն: Նախքան քուն կմտներ՝ շրջվեց եւ մի պահ նայեց Ցզին Յույին: Վերջին անգամն էր, բայց ոչ մի տխրություն էլ չզգաց: Այս երեկոյից առաջ էլ գիշերները հաճախակի էր այդպես նայում նրան՝ յուրովի նախապատրաստվելով իրենց բաժանմանը: Այնքան շատ էր նախապատրաստվել՝ ամեն անգամ ավելի քիչ ցավ զգալով, որ ի վերջո չէր կարողանում նույնիսկ սկսել: Ով իմանար, որ իր հեռանալու պատճառը պարզապես այն էր, որ ինքն այդքան շատ ժամանակ էր պատկերացրել դա, հետեւաբար դա ուղղակի պետք է լիներ, այլապես կյանքը կեղծիք կլիներ:

2. Սյաո Ցզյույ

Երկրորդ օրն առավոտյան Սյաո Ցզյույը շատ աշխատանք չուներ անելու: Օրվա երկրորդ կեսին պետք է վազեր փոստային բաժանմունք, հետեւաբար բավականին շուտ էր եկել: Երբ մտավ բնակելի շենք, դեմառդեմ հանդիպեց Ցյու Լոյին, որը ճամպրուկն էր քարշ տալիս: Երբ տեսավ նրան, Ցյու Լոյի դեմքին մի պահ վախեցած արտահայտություն հայտնվեց:

-Գործուղմա՞ն եք մեկնում,- հարցրեց Սյաո Ցզյույը:

-Այո:

Ցյու Լոն մի պահ կանգ առավ, ապա շարունակեց ճանապարհը:

Սյաո Ցզյույը մտածեց, որ Ցյու Լոն կարող է որոշ հանձնարարություններ տալ իրեն, դրա համար էլ մարմնով մի փոքր թեքվեց եւ նայեց նրան: Բայց Ցյու Լոն ավելի ու ավելի արագ քայլեց՝ ձեռքով անելով հենց նոր ուղեւորից ազատված տաքսուն: Սյաո Ցզյույը տարօրինակ մի զգացողություն ունեցավ, որ Ցյու Լոն հավանաբար ետ չի գալու:

Սյաո Ցզյույը բացեց դուռը, կոշիկները հանեց եւ սկսեց տան գործը: Խոհանոցում սուրճի գավաթներն էր լվանում, բայց մտքում դեռ Ցյու Լոյի հեռանալն էր: Վար դրեց սուրճի կիսալվացած գավաթները, ձեռքերը սրբեց եւ շրջեց ննջարանում ու աշխատասենյակում: Նամակ կամ որեւէ գրություն չգտավ: Դա իմաստ ուներ՝ մտածեց: Եթե նա գիտեր, որ տան աշխատակցուհին կարող է գործ անելիս դա տեսնել, էլ ինչո՞ւ պետք է նամակ կամ գրություն թողներ, որպեսզի այն գտնեին: Բացի այդ, գուցե տան տղամարդը գիտեր նրա մեկնելու մասին: Այդուհանդերձ, ինքն էլ չիմանալով, թե ինչու, Սյաո Ցզյույը դեռ հակված էր կարծելու, որ տղամարդ տանտերը տեղյակ չէ: Ապա նայեց պատի պահարանում եւ դիմահարդարման պարագաների մեջ: Պահարանը լի էր հագուստով, առաջին հայացքից թվում էր պակաս ոչինչ չկա: Դիմահարդարման ոչ մի պարագա ըստ էության չէր պակասում: Սանյակները, ականջօղերն ու մատանիները բոլորը զարդատուփի մեջ էին: Նա մի փոքր հոգնեց զննելուց եւ ի վերջո մտածեց, որ դա պարզապես սովորական աշխատանքային գործուղում է մի քանի օրով:

Ցյու Լոյի տնից դուրս գալով՝ Սյաո Ցզյույը նստեց փոստային բաժանմունք գնացող ավտոբուսը: Ճանապարհին Դե Մինը երեք անգամ զանգ տվեց, եւ ամեն անգամ ինքն անջատեց հեռախոսը: Պարզապես չէր ուզում ավտոբուսի մեջ գոռալ ու ճչալ նրա վրա: Երբ հասավ փոստային բաժանմունքի մոտ, ձեռքի հեռախոսը մեկ անգամ էլ զանգեց: Միացրեց հեռախոսը:

-Ինձ մի՛ շտապեցնի: Արդեն փոստային բաժանմունքի առջեւ եմ:

Հուզված ու զայրացած՝ անջատեց հեռախոսը, որը վերջապես լռեց:

Փոստային բաժանմունքում շատ մարդ կար հավաքված: Ամենաերկար հերթը դրամական փոխանցումների համար կանգնածներինն էր: Իր դիմաց կանգնած աղջիկը՝ փնջած մազերով, որոնք չէին կարող ավելի կարճ լինել, շորե փոքրիկ մի փաթեթ էր պահել ձեռքին, որ ամենեւին դրամապանակի նման չէր: Հեշտ էր ասել, որ նա նաեւ դայակ է: Երբ առաջ նայեց, զգաց, որ առնվազն երկու հոգի էլ կային, որոնք նույնպես դայակ էին: Հետաքրքիր էր, թե ինչու են բոլոր այս կանայք այստեղ եկել փող փոխանցելու, եւ արդյոք տանը նրանց ամուսիններն է՞լ էին Դե Սինի նման:

Անցյալ տարվա աշնանից Դե Սինը դադարել էր աշխատել: Սկզբում պատճառն այն էր, որ տունը պետք է կառուցվեր, բայց երբ տունը կառուցվեց, նա դեռեւս մտադիր չէր աշխատանք փնտրել: Սյաո Ցզյույն ըստ էության միտք չուներ, որ նա Պեկին գա: Նրանց դուստրն աշնանը պետք է տարրական դպրոց գնար, եւ եթե իրենցից մեկը տանն ավելի մոտ լիներ, ապա կկարողանային հոգ տանել երեխայի մասին: Դե Սինն ինքն էլ չէր ուզում Պեկին գալ: Անցյալ տարի նա մի վեց ամսի չափ եկավ, եւ հենց որ շինարարական բրիգադը բաժանվեց, թողեց աշխատանքը: Սյաո Ցզյույը միայն հույս ուներ, որ նա կգնա Սյանյան: Դա ընդամենը մեկ ժամվա ճանապարհ էր, այնպես որ՝ կարող էր ամեն օր տուն վերադառնալ: Գարնանային փառատոնից անմիջապես հետո Դե Սինը մի կես ամիս էլ գնաց Սյանյան: Հետո մի քանի օր շարունակ անձրեւ էր եկել, աշխատանքը հետաձգվեց, եւ նա այլեւս ետ չգնաց: Նա մի քանի ընկեր հավաքեց, որ ամեն օր թղթախաղով զբաղվեն, եւ, իհարկե, զբաղվում էին նաեւ մոլեխաղերով՝ դրամ էին շահում ու տանուլ տալիս, այլապես խաղն իրենց չէր հետաքրքրում: Ամեն անգամ, երբ Սյաո Ցզյույը զանգ էր տալիս տուն, Դե Սինը միշտ ասում էր.

-Վեր կացա եւ տեսա՝ երկինքն իսկապես ամպամած է, դրա համար էլ վախեցա, որ անձրեւ կգա...

-Ի՞նչ է, բոլոր ամպերն եկել հավաքվել են Սիչուանում քո գլխավերեւու՞մ,- զայրացած նրա վրա էր հարձակվում Սյաո Ցզյույը:

Սակայն նա միշտ էլ պատճառներ ուներ՝ ասելով, որ եղանակն այս տարի անկանոն է եւ ինչ-որ աղետ է կանխանշում: Ով իմանա, հնարավոր է ուժգին ամպրոպ լինի կամ սողանքներ առաջանան: Սյաո Ցզյույը ծաղրանքով հավելում էր.

-Ի՞նչ, ուրեմն, հիմա էլ կարող ես աստղագիտության նշաններ կարդալ, հա՞:

Եվ այսպես վիճում էին սարսափելի բորբոքված, մինչեւ որ երկուսն էլ գոռում էին ամուսնալուծվելու մասին: Ապա, մեկ շաբաթվա բաժանումից հետո, երբ Սյաո Ցզյույի զայրույթն անցնում էր, եւ նա զանգ էր տալիս տուն, եղանակը Սիչուանում դարձյալ վատ էր լինում, եւ նրանք նորից սկսում էին կռվել: Այս շրջափուլը շարունակվում էր, եւ Սյաո Ցզյույն ամեն ամիս դեռ փող էր ուղարկում տուն, բայց արդեն երկու ամիս էր, ինչ սկսել էր իր աշխատած փողից որոշակի լրացուցիչ գումար պահել իրեն: Այս անգամ դա մեկ ամիս չէր, եւ Դե Սինն արդեն անհանգստացնում էր, որ փող ուղարկի: Սյաո Ցզյույն այնքան հարցուփորձ արեց, մինչեւ Դե Սինը խոստովանեց, որ գումարն ուղարկել է իր զարմիկին, որպեսզի տուն կառուցի: Սկսեցին նորից վիճաբանել: Սյաո Ցզյույը սաստիկ հանդիմանեց նրան հեռախոսով, բայց դարձյալ եկել էր փոստային բաժանմունք:

Այդ մասին մտածելիս Սյաո Ցզյույը խիստ զայրանում էր: Ինքնուրույն աշխատանքի դուրս գալն իր համար ըստ էության դժվարություն չէր ներկայացնում, ի տարբերություն որոշ մարդկանց, որոնք դեռ կարոտում էին տանը, անկախ նրանից, թե ինչքան ժամանակ էին այստեղ, եւ սրտակեղեք էին լինում իրենց երեխայի մասին մտածելիս: Նա շատ արագ հարմարվեց դրան՝ զգալով, որ Պեկինում լինելն իր առավելություններն ունի: Նույնիսկ մի հին հեռուստացույց գնեց, այնպես որ՝ կարող էր կորեական դրամաներ դիտել, երբ գիշերը վերադառնում էր իր բնակատեղին, երբեմն էլ գնում էր շուկա՝ ուտելու համար ձուկ եւ մանր ծովախեցգետիններ գնելու: Չէր մոռանում դստերը, բայց շատ չէր կարոտում, քանի որ զանգում էր երբեմն եւ չէր անհանգստանում: Գուցե հենց այդպես էր, որովհետեւ կարողանում էր այստեղ շատ լավ հարմարվել, ինչից էլ ավելի էր կասկածում, թե ինչ օգուտ կա այդպիսի անարժեք տղամարդուց, որն իր կյանքը չի կարողանում անգամ փոքր-ինչ բարելավել:

Այդ օրը Սյաո Ցզյույը դրամապանակը ձեռքին մի քանի դայակների հետ կանգնել էր հերթում՝ դրամական փոխանցում կատարելու համար: Դանդաղ առաջ շարժվելով՝ հանկարծ խոր ցավ ու տխրություն զգաց: Ծատ էր ուզում ազատվել այս հերթից, որը միայն կապանքներ էր խոստանում, եւ ազատություն ձեռք բերել: Ազատություն: Այդ բառի մասին մտածելիս՝ աչքերի առջեւ անմիջապես պատկերվեց թիկունքով դեպի իրեն շրջված Ցյու Լոն՝ կաշվե ճամպրուկը քարշ տալիս: Խորապես հավատում էր, որ այդ ուրվանկարը գնում է դեպի ազատություն:

Հաջորդ օրը Սյաո Ցզյույը եկավ Ցյու Լոյի տուն: Տանը ոչ ոք չկար: Բայց

տարօրինակն այն էր, որ սենյակները չափազանց մաքուր էին, ճիշտ նույն վիճակում, ինչպիսին թողել էր: Ամեն բան իր տեղում, կարծես ոչնչի ձեռք չէին տվել: Թվում էր՝ տան տղամարդն էլ ետ չի եկել: Կատվի կերակրամանը լրիվ դատարկ էր: Սյաո Ցզյույը մի քիչ ուտելիք դրեց, կատուն ագահաբար խժռեց այն: Նրան նայելիս թվում էր, թե նախորդ օրն էլ չէին կերակրել: Թեեւ տունը մաքուր էր, բայց Սյաո Ցզյույը չէր կարող իրեն թույլ տալ՝ անգործ մնալ, դրա համար էլ նորից սրբեց հատակն ու գրապահարանը: Գործ անելիս մտածում էր, թե ինչ է այստեղ կատարվում: Երկու հավանական բացատրություն կար: Մեկն այն էր, որ երկուսն էլ գործուղման էին գնացել կամ արձակուրդ էին: Մյուսն էլ՝ որ Ցյու Լոն իրոք հեռացել էր տնից, եւ այդ մասին իմանալով՝ տղամարդ տանտերը գնացել էր նրան փնտրելու: Ծատ արագ բացառեց առաջին տարբերակի հնարավորությունը, քանի որ եթե երկուսն էլ գնացած լինեին, Ցյու Լոն պետք է որ այդ մասին ասեր իրեն, երբ հանդիպեցին, կամ էլ տանը մի գրություն թողներ: Բայց երկրորդ տարբերակը նույնպես այնքան էլ խելքի մոտ բան չէր: Որոշ ժամանակ կպահանջվեր, մինչեւ տղամարդը տուն գալուց հետո նկատեր Ցյու Լոյի բացակայությունը: Սպասելու ընթացքում նա ինչ-որ բան պետք է կերած կամ խմած լիներ, մինչդեռ ոչ մի գավաթ անգամ տեղից չէր շարժվել: Հեռանալիս Սյաո Ցզյույը նորից դռան վրա փակցրեց գովազդային թերթիկը, որ հանել էր ներս մտնելիս:

Երկրորդ օրը, երբ վերադարձավ, տեսավ, որ գովազդային թերթիկը դեռ դռան վրա է: Տան ներսում դարձյալ նույն մաքրությունն էր, եւ հենց որ կատուն տեսավ նրան, մոտ ցատկեց՝ շուրջը պտտվելով ու մլավելով: Ոչ մեկը տուն չէր վերադարձել: Արագ մաքրեց տունը, ապա նստեց բազմոցին եւ սկսեց թերթել սեղանին դրված նորաձեւության ամսագրերը: Կեսօրվա արեւը ողողեց սենյակը, ամսագրերը թերթելիս կոպերը ծանրացան, եւ նա մի քիչ քնեց՝ պառկելով բազմոցին: Երբ արթնացավ, կատուն քսմսվեց ոտքերին՝ տաքացնելով դրանք: Հագավ վերարկուն եւ կոշիկները, վերցրեց բանալիներն ու դուրս եկավ: Տնից հեռանալիս հանկարծ ցավի ու ափսոսանքի թեթեւ մի զգացում ունեցավ:

Հինգերորդ օրն ի վերջո այլեւս չկարողացավ իրեն զսպել եւ հեռախոսով զանգ տվեց Ցյու Լոյին: Բայց Ցյու Լոյի հեռախոսն անջատված էր: Կեսօրից մինչեւ երեկո զանգում էր ու զանգում, բայց հեռախոսն անջատված էր: Ամենից շատ նրան անհանգստացնում էր այն, որ տղամարդը կարող էր ինչ-որ դժբախտ պատահարի ենթարկված լինել, բայց Ցյու Լոն հեռացել էր տնից եւ դեռ տեղյակ չէր այդ մասին: Նախքան քնելը՝ անկողնում պառկած

հիշեց, թե ինչպես էր տղամարդն առաջին անգամ զանգել զբաղվածության գործակալություն եւ խնդրել, որ ինքն աշխատելու գա: Գուցե զբաղվածության գործակալությունը դեռ պահպանո՞ւմ էր նրա համարը: Որոշեց վաղը գնալ եւ հարցնել նրանց:

Բայց դա այնքան էլ հեշտ չէր: Ինքը վաղուց էր կապերը խզել գործակալության հետ՝ շատ հասարակ մի պատճառով. որոշ մշտական գործատուներ գտնելուց հետո թողել էր զբաղվածության գործակալությունը՝ անմիջականորեն կապվելով եւ նրանց հետ վերահաշվարկելով իր վարձատրության չափը: Այս կերպ նրա գործատուները կարող էին մի քիչ ավելի պակաս վճարել, իսկ ինքն էլ առնվազն կրկնակի չափով ավել գումար կարող էր վաստակել: Տնային շատ աշխատողներ էին այսպես վարվում, թեեւ լինում էին նաեւ ծախողված շատ փորձեր, լինում էին մի քանի ամիս անց նաեւ հլու-հնազանդ վերադարձողներ, որ գործակալությանը խեղճացած խնդրում էին ետ ընդունել իրենց: Երբ Սյաո Ցզյույը տեսել էր, որ այդպես են անում, քաջություն էր հավաքել: Ոչ մի վերադարձ չէր լինելու, եթե հեռանար:

Կարող էր միայն խնդրանքով դիմել Քույր Սյային: Երբ ինքը հեռանում էր կազմակերպությունից, Քույր Սյային խնդրեց գնալ իր հետ, բայց Քույր Սյայի վիճակն էլ հուսալի չէր, եւ նա վախենում էր գործակալության հետ կապերը խզել: Բայց ամեն մեկն ինքն է որոշում: Սյաո Ցզյույը չէր ուզում որեւէ բան պարտադրել: Նրանք գիշերը պարբերաբար հանդիպում էին եւ զրուցում:

Սյաո Ցզյույը չէր պատմել Քույր Սյային ճշմարտությունը: Միայն ասաց, որ տանտերն ու տանտիրուհին վիճել են, եւ տղամարդը մի քանի օր տուն չի եկել: Տանտիրուհին տանն է, զայրույթից հիվանդացել է եւ ոչ ուտում է, ոչ խմում: Քույր Սյան ծաղրեց նրան.

-Իրոք որ շատ բաների մասին ես հոգ տանում: Հո չե՞ս ծգտում դառնալ նրանց գլխավոր տնտեսուհին, հը՞:

Բայց հետո ասաց, որ, ցավոք, չի կարող օգնել. ուղղակի հարցնելն անկասկած հնարավոր չէր, իսկ փակ դարակում պահված հեռախոսագիրքը չէր կարող թաքուն նայել: Սյաո Ցզյույը թախանձագին խնդրեց, մինչեւ որ ի վերջո նա կարողացավ համաձայնել, բայց ամեն ինչ հանգամանքներից էր կախված:

Սակայն հաջորդ օրը շտապ առաքում ստանալով՝ Սյաո Ցզյույն իսպառ հրաժարվեց տղամարդ տանտիրոջը զանգելու մտքից: Դատարկ տանն էր, կատվի մորթին էր սանրում, երբ փոստային շտապ առաքման աշխատողը

դուռը թակեց: Նա պարզապես մոտակայքում էր եղել եւ եկել էր բախտը փորձելու:

-Մի քանի օր զանգել եմ: Հեռախոսները միշտ անջատված են եղել,- բացատրեց շտապ առաքման աշխատակիցը:

Սյաո Ցզյույը ծրարը ստացավ ՝ այն ընդունողի անվան դիմաց գրելով Ցյու Լոյի անունը:

Առանց անգամ մտածելու՝ բացեց ծրարը: Ընտապ առաքման ընկերությունների այսպիսի մեծ ծրարներ ամենուր կարելի էր տեսնել. անհրաժեշտության դեպքում դժվար չէր լինի վերականգնել այն: Ներսում բարակ թղթի վրա գրված նամակ էր: Նայեց եւ տեսավ, որ Ցզին Ցույից է:

Երբ նամակն աչքի անցկացրեց, դանդաղ քայլեց դեպի բազմոցն ու նստեց: Ապա մեկ անգամ էլ կարդաց:

«Լո Լո,

Այն օրը, երբ ստացա պաշտոնիս բարձրացման մասին լուրը, ամբողջ իմ էությամբ այնպես զգացի, ասես դատարկվել էի: Նստեցի գրասենյակում եւ ոչինչ չէի ուզում անել: Չէի ուզում նաեւ տուն գնալ: Ինձ զգում էի ինչպես հոլը, որ անընդհատ ավելի ու ավելի արագ է պտտվել, այնքա՛ն արագ, բայց հանկարծ մեկ էլ կանգ է առել:

Նույնիսկ չէի կարողանում կանգնել:

Գիտեմ, որ պետք է գոհ լինեմ մեր կյանքից: Այն իսկապես կայուն, հարմարավետ կյանք է եւ, բացի այդ, երաշխիքներ կան, որ էլ ավելի է բարելավվելու: Բայց ես չեմ կարող պատկերացնել, թե ինչ է իրականում այդ «ավելի լավ կյանքը»: Ամեն անգամ երբ մտածում եմ այդ մասին, անմիջապես զգում եմ, որ այդ «ավելի լավ կյանքն» անիմաստ է:

Երբ առաջին անգամ հանդիպեցինք, դեռ անմեղ էինք: Դու դեռ գրում էիր: Հիշում եմ՝ ինձ ասացիր որ վեպ ես ուզում գրել: Հիմա երբ մտածում եմ այդ մասին, տեսնում եմ, որ դա շատ վաղուց էր: Գիտես նաեւ, որ միշտ ասել եմ՝ կարեւոր չէ՝ աշխատում ես թե ոչ: Արա ինչ ուզում ես, քանի դեռ երջանիկ ես: Բայց եթե որեւէ բուռն ցանկություն ունենայի, դա կլիներ այն, որ դու ինձ ոգեւորություն ներարկեիր, պարզապես մի քիչ իդեալիստական բան: Ես այնքան եմ վախենում, որ գործընկերներիս նման անհամ ու անբովանդակ կդառնամ, բոլորովին անճաշակ: Ինձ սխալ չհասկանաս: Քեզ դատապարտելու համար չեմ ասում սա:

Երբեմն, երբ առավոտյան արթնանում եմ, մտածում եմ կյանքիս մնացած մեծ կեսի մասին, ուր ոչ մի ակնկալիք չկա, եւ ինձ շվարած եմ զգում:

Գիտեմ, որ այս կերպ հեռանալը կնշանակի շատ բան կորցնել: Բայց պարզապես ոչ մի կերպ չեմ կարող ինքս ինձ համոզել այստեղ մնալ ու շարունակել ապրել մի կյանքով, որից ոչ մի ակնկալիք չկա: Ինչ վերաբերում է ուր գնալուն եւ ինչ անելուն, իրականում ոչ մի ծրագիր չունեմ:

Հիշում եմ՝ երբ այս տարի Ամանորին ծնողներդ մեզ հետ քննարկում էին մեր ամուսնության հարցը, հույս հայտնում, որ կամուսնանանք: Եթե մտածենք այդ մասին, ապա վեց տարի է՝ միասին ենք: Բայց հիմա չենք կարող իրականացնել նրանց երազանքը, եւ ես այնքան զղջում ու ցավ եմ զգում: Բայց իմ հեռանալու պատճառն իրականում ամուսնությունից խուսափելը չէ: Այն, ինչից խուսափում եմ, գուցե ավելին է, քան ամուսնությունը:

Հիմա, երբ գրում եմ այս նամակը, գրասենյակում եմ, ու երեւի այստեղի մթնոլորտից է, բայց դրանից գրածս շատ լուրջ է դառնում, եւ ես չեմ կարող հուզական թեմաները խորությամբ քննարկել քեզ հետ: Դրանք կարելի է թողնել հետագայում, ավելի ուշ քննարկելու, եւ թերեւս այն ժամանակ մի քիչ ավելի պարզ կլինի:

Տունը եւ մեքենան կարող են քեզ մնալ: Մի օր, երբ վերադառնամ, կօգնեմ քեզ փաստաթղթերի հարցում:

Ցզին Յույ»:

Սյաո Ցզյույը, խիստ ապշած, ցած դրեց նամակը: Այդ երկուսն էլ, փաստորեն, տնից հեռացել են միեւնույն օրը, եւ նույնիսկ ամուսնացած էլ չեն եղել այս ամբողջ ժամանակ, թեեւ ներկայացել են որպես տարիներ առաջ ամուսնացած զույգ: Սյաո Ցզյույն ինքը մեկ տարով ավելի երիտասարդ էր Ցյու Լոյից, բայց իր դուստրն արդեն վեց տարեկան էր: Քաղաքում կանայք երկար են աղջկական կյանքով ապրում:

Այդ երեկո Սյաո Ցզյույի բնակության վայրում էլեկտրականությունն անջատվեց: Նա նստել էր մթության մեջ եւ մտածում էր շատ բաների մասին: Մտածում էր, որ մարդիկ քաղաքում ապրում են այդպես հաշվենկատ ու չմահավան. հենց զգում են, որ ինչ-որ խնդիր կա, անհրաժեշտ են համարում անմիջապես ամեն ինչ փոխել: Իր նման գավառից եկածի համար պարտադիր չէր կյանքը փոխելու քաջություն ունենալը, ասես իր ապրած օրերն անցել էին մշուշի մեջ, եւ երբ կյանքում խնդիր էր ունեցել, չէր կարողացել տեսնել այն: Բայց այս կերպ ապրելն էլ պետք չէր. ինքն իրոք կարող էր նկատել, թե ինչ խնդիրներ կան: Եվ այդ խնդիրը Դե Մինն էր: Ըստ

էության նա էր բոլոր հոգսերի աղբյուրը: Ուրեմն ինքը փաստորեն միշտ իմացել է, թե որտեղից է այդ խնդիրը: Եվ չէր վախենում կրել այն հետեւանքները, որ կառաջանային, եթե փոխեր իր կյանքը: Պարզապես երբեք մտքին չի դրել այդ խնդիրը լուծել:

Սյաո Ցզյույը մտորում էր ամուսնալուծության վերաբերյալ: Եթե դա աներ, ապա հաստատ չէր վերադառնա Սիչուան: Եվ կհրաժարվեր իրենց երեխայից: Նա մտածում էր Պեկինում մնալու մասին, ինչպես հիմա, որն ամենեւին չէր վախեցնում իրեն: Ինչ վերաբերում է տղամարդկանց, ապա կարծում էր, որ ի վերջո մեկին կճարի: Եթե այդպես չլինի, դրան էլ կհամաձայնի: Ցյու Լոն մի անգամ ասաց իրեն, որ կենդանակերպով Կույս է: Սյաո Ցզյույը կարծում էր, որ Կույսերի մասին բոլոր նկարագրություններն իրեն համապատասխանում են: Նա իր սեփական սկզբունքներն ու չափանիշներն ուներ, որոնցից չէր ցանկանում հրաժարվել, եւ համարվում էր այնպիսի անձնավորություն, որը չափավոր կյանքն ու խնայողությունը գերադասում է ճոխ շվայտությունից:

Այդ մասին մտածելիս Սյաո Ցզյույն իրեն փոքր-ինչ ճնշված զգաց եւ որոշեց դուրս գալ զբոսանքի: Երբ փողոց ելավ, երեւացին ճանապարհի երկու կողմերում կարմիր, առկայծող վառ լուսանշաններով փոքր ռեստորանները: Մարդիկ հավաքվել էին կլոր սեղանների շուրջ, ախորժահամ կերակուր էին ուտում եւ խմում փրփրուն գարեջուր: Ծիծաղով եւ խոսքուզրույցով լի զվարթ մթնոլորտ էր տիրում: Քայլելիս նայեց նրանց կողմը եւ զգաց, որ ջերմությամբ ու եռանդով է լցվում: Հանեց բջջային հեռախոսը, որպեսզի Դե Մինին հաղորդագրություն ուղարկի:

«Նշել էի բաժանման մասին: Բայց զայրույթի ազդեցության տակ չէի: Իրոք մտածում եմ՝ այսպես ապրելը նշանակություն չունի»,- գրեց նա: Երբ ավարտեց, մեկ անգամ էլ կարդաց եւ «նշանակություն» բառի փոխարեն գրեց «իմաստ»:

Տեքստն ուղարկելուց հետո իրեն ավելի անկեղծ զգաց: Գլուխը բարձրացրեց եւ հասկացավ, որ անգիտակցաբար շարժվում է դեպի Ցյու Լոյի բնակարանի կողմը: Մի պահ տատանվեց նախքան վեր բարձրանալը կարճ ժամանակով: Կարող էր այդտեղ տաք ցնցուղ ընդունել:

Սյաո Ցզյույը բանալիով բացեց դուռը: Լսելով տան ներսից եկող խուլ մի ձայն՝ մի փոքր նյարդայնացավ՝ անհանգստանալով, որ զույգը տուն է վերադարձել: Բայց նաեւ հետաքրքիր էր, դրա համար էլ որոշեց առաջ գնալ: Հենց որ ներս մտավ, միանգամից շուրջը մթնեց: Չէր երեւում, թե տանը մարդ կա: Երբ լույսը վառեց, միակ բանը, որ կարող էր տեսնել, կո-

շիկի պահարանից ետ ցատկել փորձող կատուն էր: Նա միշտ սիրում էր խաղալ կոշիկի քուղերով: Այս ու այնտեղ միշտ իրար խճճված քուղեր էին: Ինչպես կենդանի արարածի՝ կատուն հաճախ զզզզում էր ու դեսուդեն նետում դրանք: Բայց այս անգամ այնպես էր արել, որ չորս թաթերով խճճվել էր քուղի մեջ, իսկ կոշիկը լռվել էր պահարանի տակ եւ տեղից չէր շարժվում: Եվ որքան էլ կատուն ջանում էր իրեն թափ տալով ազատվել, չէր կարողանում՝ կապված մնալով պահարանի տակ լռված կոշիկին:

Սյաո Ցզյույը կապը քանդեց: Կատուն արդեն ուժասպառ էր եղել: Նա իրեն գցեց դեպի ջրամանը եւ ագահաբար սկսեց լակել: Սյաո Ցզյույը երբեք կատու չէր սիրել, բայց հիմա մի փոքր կարեկցանք զգաց: Եթե այս երեկո այստեղ չգար, հավանաբար չէր գա մինչեւ վաղը կեսօր, եւ կատուն հավանաբար ամբողջ այդ ժամանակ այստեղ կչարչարվեր ու արդեն անհույս վիճակում կլիներ:

Կատվի դեպքը Սյաո Ցզյույի համար պատրվակ եղավ. դրանից հետո ամեն երեկո այստեղ կգա: Լոգանք կընդունի, հեռուստացույց կդիտի: Երբեմն նաեւ տեսասկավառակներ կդիտի. Ցյու Լոյի տանը մի քանի տուփ տեսասկավառակ կա: Պարզապես ցնցուղ ընդունելը բավարար էր, որպեսզի իրեն շատ ավելի վստահ զգա կյանքում: Ջրի հոսքն այնքան հոծ էր եւ ուժեղ, անվերջ կարելի էր օգտվել տաք ջրից, եւ ինքը կարող էր նույնիսկ նստել լոգարանում՝ ցավոտ ոտքերն ու ոտնաթաթերը ջրի մեջ պահելով: Ցյու Լոն նաեւ շատ գրքեր ուներ: Սյաո Ցզյույը միշտ էլ սիրում էր կարդալ: Առաջ, երբ Ցյու Լոն այստեղ էր, հաճախ իրեն հին ամսագրեր էր տալիս: Սակայն Ցյու Լոյի տան գրքերը բոլորն էլ չափազանց բարդ էին: Շատ գրքեր կային, որ ինքը չէր կարող հասկանալ: Այն գրքերը, որոնք Ցյու Լոն ընթերցել էր նախքան հեռանալը, դեռ գրասեղանին էին եւ դարակին չէին դրված: Դրանց մեջ շատ էին Վուլֆ անունով արտասահմանցի կին գրողի գրածները: Սյաո Ցզյույը վերցրեց դրանք՝ մեկ առ մեկ թերթելով, բայց չէր կարող հասկանալ, թե ինչ է գրել: Ինչ էլ որ գրել էր, բառերի երկար շարք էր, որ մարդու տարակուսանքի մեջ էր գցում, եւ այդպես էլ պարզ չէր, թե ինչ է տեղի ունեցել: Դրանց մեջ, սակայն, կար մեկը, «Սեփական սենյակը» վերնագրով, որ ասում էր, թե կանայք պետք է սեփական սենյակ ունենան: Կարդալով դա՝ Սյաո Ցզյույն իրեն ցնցված զգաց: Այն Սյաո Ցզյույը, որն այժմ, այս պահին այս տունն ուներ, զգաց, որ կյանքը հիմա բոլորովին այլ էր:

Բայց նա հազվադեպ էր մնում այնտեղ, բացառությամբ՝ երբ երկու անգամ վախենում էր սարսափի ֆիլմեր դիտելուց հետո գիշերը տուն գնալ: Անկողինների հարցում մի քիչ բծախնդիր էր ու չէր ցանկանում, որ ուրիշ-

ները քնեն իր անկողնում, եւ կարծում էր, որ Ցյու Լոն էլ հավանաբար պետք է նույն զգացողությունն ունենա: Ինչ վերաբերում է Դե Մինին, ապա մեկ օր առաջ նա այսպես էր պատասխանել. «Արա ինչպես կուզես»: Սյաո Ցզյույը մտածեց, որ իրոք գործելու է իր սեփական մղումներով: Նախատեսում էր ժամանակ գտնել, որպեսզի տուն գնա եւ ինչպես հարկն է Դե Մինի հետ խոսի բաժանվելու մասին:

Այնուհետեւ, կես ամիս անց, մի շատ լուրջ խնդրի առջեւ կանգնեց: Ո՛չ Ցյու Լոն, ո՛չ տղամարդ տանտերն այլեւս այդտեղ չէին: Ոչ ոք չկար, որպեսզի վճարեր իր աշխատավարձը,- իսկ ամսական 600 յուանը նրա ամբողջ աշխատած գումարի մեծ մասն էր կազմում: Բացի Ցյու Լոյի ընտանիքից, մի քանի այլ ընտանիքներ, որ պարբերաբար պատվերներ էին տալիս իրեն, միայն շաբաթը մեկ էին իր կարիքը զգում: Կային նաեւ ոչ մշտական աշխատանքներ, որոնք կատարում էր, եթե կանչում էին: Եթե չէին զանգում ու կանչում, ապա պարապ էր մնում: Հիմա, առանց 600 յուանի, ժամանակի կեսից ավելին պարապ էր: Այն ամենն, ինչ կարող էր անել, պնդերեսի պես իր որոշ պատվիրատուներին խնդրելն էր, որ զանգ տան ու տեսնեն, թե արդյոք իրենց ընկերներից մեկնումեկն աշխատողի կարիք չի՞ զգում: Աշխատանք փնտրելու համար պահանջվում է համբերություն: Ստիպված էր պատրաստ լինել: Առաջիկա ամիսներին մի քանի գործ էր լինելու: Ծայրաստիճան հակասական վիճակների մեջ էր, երբեմն ցանկություն էր ունենում, որ Ցյու Լոն եւ Ցզին Յույը շուտ ետ գային եւ վճարեին իրեն: Բայց եթե ետ գային, այլեւս չէր կարող օգտագործել բնակարանը: Այս բնակարանն իր համար նշանակում էր ազատություն, բայց իր վիճակն այնպիսին էր, որ փող ունենալով կկորցներ այդ ազատությունը: Եվ ազատության դիմաց փող ընտրելու իրավունքն իր ձեռքերում չէր: Սյաո Ցզյույը դա կարող էր թողնել միայն ճակատագրին:

Այնուամենայնիվ, երկինքն ու ճակատագիրը ավելի բարձր ծրագրեր էին նախատեսել: Այդ շատախոս ճղճղան Դե Մինն իսկապես ճիշտ էր գուշակել: Թեեւ երկրի ոչ բոլոր ամպերն էին քշվել դեպի Սիչուանը ծածկող երկինք, երկրակեղեւի տակ եղած ամբողջ էներգիան դուրս էր ժայթքել Սիչուանում: Երկրաշարժի օրը Սյաո Ցզյույն աշխատում էր պատվիրատուներից մեկի մոտ, եւ Քույր Սյան էր, որ զանգեց ու տեղյակ պահեց իրեն: Ինքը փորձում էր զանգ տալ Դե Մինին եւ իր մոր տուն, բայց չէր կարողանում կապ հաստատել: Միայն երեկոյան լուրերը դիտելուց հետո Սյաո Ցզյույը գիտակցեց իրավիճակի լրջությունը: Նա կարող էր միայն ինքն իրեն հանգստացնել, որ որոշակի հեռավորություն կա լուրերով ներկայացված

աղետի գոտու շրջանների եւ իրենց բնակավայրի միջեւ:

Նստած էր բազմոցին, Ցյու Լոյի տանը, հեռուստացույցի առջեւ, հեռախոսը ծեռքում սեղմած, շարունակաբար սեղմում էր զանգի կոճակը: Քույր Սյան նորից զանգ տվեց՝ հարցնելով իրավիճակի մասին, ապա հուզախռով հառաչեց եւ ասաց.

-Այսպիսի ահավոր բան է պատահել, բայց դու լավ էլ հանգիստ ես դա տանում, հը՞:

-Իսկ ուրիշ ի՞նչ անեմ,- պատասխանեց Սյաո Ցզյույը:

Նա արդեն տեսել էր տարերային աղետի դաժանությունը: Մայրը մահացել էր 98 թվականի ջրհեղեղի ժամանակ՝ սյանը բախվելով ու ամբողջովին ճզմվելով: Դեռ հիշում էր, որ այդ ժամանակ հիվանդանոցի միջանցքում էր՝ կրտսեր եղբորը սեղմված, երկուսն էլ գոռալով լաց էին լինում: Նրա այսպես կոչված քաջությունը ծնվել էր այդ արցունքների ամռանը: Սյաո Ցզյույն ամբողջ ժամանակ նստած էր հեռուստացույցի մոտ եւ սպասում էր վերջին լուրերին Սիչուանից: Շատ էր քաղցած եւ Ցյու Լոյի սառնարանից կնճռոտված մի խնձոր գտավ: Չիմանալով էլ, թե որտեղից իրեն այդքան քաջություն, մի շիշ կարմիր գինի բացեց եւ խմեց: Քիչ անց հեռախոսը միացավ: Մյուս կողմում Դե Մինն էր բղավելով խոսում: Նույնիսկ մտածեց, թե ոգելից խմիչքի ազդեցության տակ է: Մի քանի րոպե սարսափած էր, վախենում էր պատասխանել: Դե Մինը եւ իրենց դուստրը լավ էին, երկուսն էլ տանն էին դեռ, բայց նոր կառուցված տունն ամբողջովին ավերվել էր: Նրանք ժամանակավորապես պետք է տեղափոխվեին երկրաշարժից տուժածների ապաստարան:

Հաջորդ շաբաթվա ընթացքում լուրերն անընդհատ հաղորդում էին արտակարգ փրկարարական գործողությունների եւ օգնությունների ցուցաբերման մասին: Բացի աշխատանքային ժամերից՝ Սյաո Ցզյույը մշտապես հեռուստացույցի առջեւ էր: Իրենց գյուղին մոտ գտնվող գյուղը նույնպես շատ զոհեր էր ունեցել: Դե Մինը հաճախ զանգում էր եւ իրեն ասում, որ ամեն ինչ լավ է, եւ անընդհատ հայտնում էր նոր մահացած այս կամ այն ազգականի մասին:

Երբեմն Սյաո Ցզյույը ցած էր դնում հեռախոսը, անջատում հեռուստացույցը եւ մի տեսակ հափշտակվածի նման նայում ուղիղ իր դիմաց: Կատուն պառկել էր թիկնաթոռին՝ կատարյալ անտարբեր, քամին մեղմորեն խաղում էր թափանցիկ վարագույրների հետ՝ ծածանելով դրանք, լուսամուտագոգի գարդենիայի ծաղիկներն արդեն լրիվ բացվել էին, իսկ պատի ժամացույցի վրա վայրկենացույց սլաք կամ թվեր չկային, եւ միշտ կարելի

էր կարծել, թե ժամացույցը կանգ է առել: Չէր կարող ասել՝ ամեն ինչ չափազանց հանգի՞ստ էր, թե՞ չափազանց սառն ու քարացած:

Քույր Սյան հարցրեց, թե ինքն ինչու է դեռ այստեղ եւ չի վերադարձել Սիչուան: Սյաո Ցզյույն ասաց, որ իրենց տունը փլուզվել է, իսկ նորը կառուցելու համար փող է պետք: Եթե ետ գնա, ինչպե՞ս կարող է փող աշխատել: Քույր Սյան կարծում էր, որ ճիշտ է: Սակայն Սյաո Ցզյույն ինքն էլ շվարած էր: Վերջերս, Պեկինում նա շատ գումար չէր վաստակել: Եթե Քույր Սյայի հարցը չլիներ, ինքը փաստորեն մոռացած կլիներ, որ Պեկին է եկել փող աշխատելու համար: Եվ հենց հիմա էր փողն անհրաժեշտ: Դե Սինն անգամ փող էր տվել իր ավագ զարմիկին՝ տուն կառուցելու համար, եւ հիմա այդ տունն էլ է փլուզվել, այնպես որ՝ այն փողը, որ պարտք էին վերցրել, հավանաբար երբեք չէին կարող ետ վճարել: Սյաո Ցզյույը զայրացավ՝ մտածելով այս մասին:

Մի քանի օր էլ անցավ: Դե Սինի ավագ քույրը, որ Սյանյանում էր ապրում, ծնողներին տարավ իր մոտ: Այսպիսով, տանը մնացին միայն Դե Սինը եւ իրենց դուստրը: Դե Սինը փոքր-ինչ անպատրաստ էր, դրա համար էլ զանգեց Սյաո Ցզյույին՝ նրա կարծիքը հարցնելու:

-Մի՞թե չեք կարող դուք էլ քրոջդ գտնել Սյանյանում,- սառն առաջարկեց Սյաո Ցզյույը:

-Այնքան շատ մարդ է այնտեղ գնում, ո՞վ նյարդեր ունի: Հիմա Սյանյանում էլ խառնաշփոթ է: Դու ուղղակի չես կարողանում աշխատանք գտնել,- եղավ Դե Սինի պատասխանը:

-Ուրեմն ի՞նչ ես մտադիր անել:

-Ուզում եմ Լան Լանին թողնել նրանց տանը, քանի որ դպրոցում հիմա, մեկ է, դասեր չկան: Եվ ծնողներս կկարողանան նրա մասին հոգ տանել:

-Իսկ դո՞ւ:

-Կարծում եմ՝ ես էլ կարող եմ գալ քեզ գտնել Պեկինում,- ասաց Դե Սինը՝ ոչ այնքան համոզված: - Այստեղ այլեւս ոչինչ չկա,- հավելեց առավել թույլ ձայնով:

Սյաո Ցզյույը երկար ժամանակ լուռ էր, հետո պատասխանեց.

-Թող մտածեմ այդ մասին:

Հեռախոսն անջատեց եւ հանկարծ զգաց, որ միայն այսպես կարող էր լինել: Ըստ էության, էլ մտածելու ոչինչ չկար: Բայցեւայնպես, կարծես ուրախության մի շող փայլեց, անբացատրելի մի համոզմունք, որ Դե Սինը փոխվել է դեպի լավը, թեկուզ մի փոքր:

Այն օրը, երբ Դե Սինը գնացք նստեց Պեկին գալու համար, տան տղա-

մարդը նամակ էր ուղարկել՝ «Հանձնել Ցյու Լոյին»: Երբ Սյաո Ցզյույը տեսավ ծանոթ անունը, ներքուստ փոքր-ինչ մտահոգվեց:

«Լո Լո,

Այս նամակը գրում եմ Սյանյանում: Տնից հեռանալուց հետո թափառեցի այս ու այնտեղ, բայց այդպես էլ մնալու տեղ չկարողացա գտնել: Սկզբում պատրաստվում էի գնալ եւ հյուսիսարեւմտյան գյուղերից մեկում ուսուցիչ աշխատել: Հետո, երբ երկրաշարժի մասին լուրն իմացա, մտածեցի, որ կարող եմ գնալ Սիչուան: Մի քանի օր առաջ գնացի մարդկանց օգնություն ցուցաբերելու մի քաղաքում, որը սոսկալի տուժել էր աղետից: Ամենատարածված բառերը, որ լսում էի ամեն օր, «Կյանքի նշաններ» բառերն էին: Այդ բառերը միշտ հուզում են ինձ, ասես կյանքի իմաստն են կրում իրենց մեջ: Ծիծաղելի է, իրոք, խոսել այս մասին, որովհետեւ փաստորեն, չէի կարող շատ օգնություն ցուցաբերել: Այնուամենայնիվ, այստեղ գտնվելով, ամեն օր վազքի մեջ, միշտ ջանալով օգտակար լինել, ուղղակի այնպես էի զգում, կարծես ամբողջ մարմինս լիցքավորվում էր:

Գյուղի ուսուցիչ դառնալու եւ այստեղ գալով կամավոր աշխատող լինելու մասին գրածս կարդալով՝ կարող ես ծիծաղել ինձ վրա: Մենք այն տաքարյուն մարդկանցից չենք, ոչ էլ կարեկցանքով լի սիրտ ունենք: Սկզբում ինքս էլ դա չէի հասկանում: Հետո հիշեցի կարդացածս գրքերից մեկը: Այն նկարագրում է որոշ մոլեռանդ նվիրյալների հոգեկան վիճակը: Նրանք անձնվիրաբար տրվում են գթասրտությանն ու հասարակական բարեգործական ծառայություններին, որովհետեւ կատարելապես պարտվածներ եւ անդառնալի ծախողակներ են իրենց կյանքում: Այդ մարդիկ դա անում են, որպեսզի խուսափեն պարտության մշտական զգացումից: Ուրիշներին օգնություն ցուցաբերելը գոհ եւ բավարարված լինելու զգացում է պարգեւում նրանց, եւ դա միակ աշխատանքն է, որ քննադատություն ու անհավանություն չի հարուցում: Սրտի բարությունը դառնում է նրանց վերջին ապաստանը: Այստեղ կամավորները նման են մորեխների, եւ ես չգիտեմ՝ արդյո՞ք նրանք էլ ինձ նման այստեղ են եկել իրենք իրենց օգնելու համար:

Քիչ հետո մեկ այլ շրջան պետք է մեկնեմ, դրա համար էլ չեմ կարող երկար գրել: Հա՛, հենց նոր հիշեցի, որ մեր տանն աշխատող Սյաո Ցզյույը Սիչուանից է: Վստահ չեմ, թե իր ընտանիքը չի տուժել: Խնդրում եմ փոխանցել նրան իմ բարեմաղթանքները:

Ցզին Յույ»:

Վերջին տողերը կարդալիս Սյաո Ցզյույի արցունքներն սկսեցին հոսել,

թեեւ դեռ չէր հասկացել, թե ինչու է Ցզին Յույը գնացել Սիչուան: Նա միացրեց հեռուստացույցը եւ հետեւում էր աղետի գոտու վերականգնման պատկերներին՝ հույս ունենալով գտնել Ցզին Յույին մարդկանց ծովի մեջ:

Նայեց ամբողջ մի հավերժություն, բայց Ցզին Յույին չտեսավ: Սակայն, անսպասելիորեն, կամավորներից բաղկացած բժշկական փրկարարական թիմի կազմում հանկարծ տեսավ մեկին, որ շատ նման էր Ցյու Լոյին: Սյաո Ցզյույը մտածեց, որ ինքը պետք է պատկերացրած լիներ դա, քանի որ մոռացել էր, թե Ցզին Յույն ինչպիսի տեսք ուներ, եւ հետեւաբար իր փնտրած մարդը Ցյու Լոյի տեսքն ստացավ: Բայց երբ կինն անհետացավ էկրանից, ինքը հստակ թիկունքի կողմից տեսավ նրան, տեսավ ճամպրուկը քարշ տալով հեռանալու այն նույն պատկերը: Դրանից հետո Սյաո Ցզյույը հաճախ էր մտածում տարօրինակ տեսարանի մասին, որ այդ օրը տեսել էր հեռուստացույցով: Ավելի ու ավելի էր համոզվում, որ դա Ցյու Լոն էր: Ինքն իրեն ասում էր՝ եթե նրանք կարող էին տնից հեռանալ միեւնույն օրը, ուրեմն ինչո՞ւ հնարավոր չէր, որ երկուսն էլ գնային եւ կամավոր դառնային Սիչուանում:

Այդ ընթացքում, շատ հորդորելուց հետո, Դե Սինն իրենց առավել արժեքավոր ունեցվածքը դրեց հյուսածո պլաստիկ մի պայուսակի մեջ եւ շտապեց դեպի երկաթուղային կայարան: Հեռուստացույցը երբեք չէր ցուցադրել իրենց գյուղի պատկերը, բայց Սյաո Ցզյույը կարծես կարողանում էր տեսնել այն. Դե Սինը դուրս է ելնում աղյուսե պատի եւ տանիքի կղմինդրի ավերակների միջով, ապա գլուխը շրջում եւ դժկամությամբ ետ նայում:

Դե Սինի՝ Պեկին ժամանելուց մի քանի օր առաջ Սյաո Ցզյույը տատանվում էր, թե արդյոք նրան պատմի՞ դատարկ տան մասին: Բայց այն ժամանակ, երբ Դե Սինը պիտի գար, նա ինքնաբերաբար ննջարանում փոխեց անկողինների սավանները: Նոր լվացված սավաններից լվացքի փոշու թույլ կիտրոնաբույր էր գալիս: Սյաո Ցզյույը բացեց տուփը եւ լվացքի փոշին սփռեց բնակարանով մեկ, ասես բարեպաշտորեն դիմագրավում էր նոր կյանքին: Այդ պահին հասկացավ, թե որքան է սպասում Դե Սինի արագ ժամանմանը, թեեւ այդ սպասումը լի էր ամոթով ու անվճռականությամբ, ասես պատրաստվում էր չափազանց համարձակ մի բան անել: Ուրախությունից իրեն կորցրել էր եւ այն զգացողությունը չուներ, թե օտար սենյակում սպասում է իր սեփական տղամարդուն, այլ կարծես իր սեփական տանը սպասում էր, որ անծանոթ մեկը կսեղմի դռան զանգի կոճակը:

ԴԻ ԱՆ

ՍԵՆ ԳԵՏԸ ՉԻ ՍԱՌՉՈՒՄ

Մեր տուրիստական գործակալության հետ աշխատող չինական ռեստորանը, որ զբոսաշրջիկների մեր խմբերի հետ պայմանագրեր է կնքում ընթրիքի համար, կոչվում է «Դրախտ՝ Դրախտից անդին»: Հանրահայտ «Գալերի Լաֆայետ» հանրախանութից ընդամենը մի քանի քայլ հեռավորության վրա՝ միայն «Սիչուան» ռեստորանն ունի որոշ հատուկ ուտեստներ, որ Յունանի ֆիրմային ուտեստներ են: Երկուսից երեք օրվա շրջագայությունների ծրագիրը սովորաբար այսպիսին է՝ Աստվածամոր տաճար, Պանթեոն, Լուվր եւ նավարկություն Սեն գետով, ապա հաջորդում են Էյֆելյան աշտարակը, Ելիսեյան դաշտերը եւ Հաղթական կամարը, իսկ հետո Մոնմարտրը եւ նրա Սակրե կյոր (Սուրբ սրտի) բազիլիկ եկեղեցին: Հանգամանքներից է կախված՝ կտեսնեն Մուլեն Ռուժը թե ոչ, եւ իհարկե վերջին օրը բոլորին տանում ենք գնումներ կատարելու Փարիզի 9-րդ շրջանում: Երբ խումբը տեսնում է «Գալերի Լաֆայետի» ցուցանակը, միշտ հիացական բացականչություններ են լսվում ամբողջ ավտոբուսով մեկ, եւ այդ ձայնը փոքր ալիքներով բարձրանում ու իջնում է, ասես նկատած լինեն վաղուց կորցրած մի բարեկամի:

Սովորաբար երբ խումբն ամբողջովին բեռնավորված վերադարձել է «Դրախտ՝ Դրախտից անդին» գոհ եւ ուրախ, ես կարողանում եմ թեթեւացած շունչ քաշել, քանի որ աշխատանքս գրեթե ավարտված է լինում: Հաջորդ առավոտյան նրանք կուղեւորվեն նախատեսված հաջորդ վայր եւ ո՛ր երկիր էլ ժամանեն հետո, ինձ նման մի ուղեվար կլինի, որը նրանց կուղեկցի ամենուր:

Կառավարիչը լուռ ըմբռնումով նայեց ինձ եւ մատուցողներին պատվիրեց բերել խմբի համար նախատեսված ուտեստները: Մեր խմբի՝ ռեստորան բերած աղմուկ-աղաղակից մատուցողներն ավելի եռանդուն դարձան: Նեղ սեղանների տակ, ճաշարանային աթոռների կողքին, ամենուր, որտեղ կարելի էր ինչ-որ բան տեղադրել, կիտված էին պայուսակներ ու իրեր հնչեղ անուններով՝ «Գուչչի», «Քրիստիան Դիոր», «Պրադա», «Շանել», «LV» եւ այլն: Անկյունում մի քանի այլ հաճախորդներ կային եւ դրանք

կարծես զույգերի երկու խումբ էին, հավանաբար քսանհինգից ոչ ավելի: Նրանք նույնպես եկել էին ուտելու բան պատվիրելու եւ այդքան շատ մարդու հանկարծակի հայտնվելուց կարծես թե սրտնեղած՝ սառն ու արհամարհական հայացքներ էին նետում մեր կողմը: Նրանցից մեկը՝ մի աղջիկ, խոսում էր բարձր ձայնով՝ առանց անհանգստանալու, որ իրեն կարող էին լսել:

-Այս մարդիկ... դրանք այն կոռումպացված տարրերի՞ց են, որ, ինչպես լսում ենք, կան Չինաստանում:

Ծիծաղելով եւ միաժամանակ փորձելով աղջկան լռեցնել՝ նրա երեք ուղեկիցներն ասացին.

-Պետք չէ այդքան բարձր, օրիորդ Հայ Հեթ: Սրանք օտարերկրացիներ չեն: Ձեր ասածը հասկանում են:

Ես տեսա, որ նրանք չինաստանցի ուսանողներ են: Տեսա նաեւ, որ այդ պահին փոքր-ինչ գինովցած եւ ուրախ են: Թեթեւակի ժպտացի աղջկան, որն այդքան աննրբանկատ էր խոսել: Ապա արագ անցա խմբիս հուզող հարցերին, որն այժմ նստած էր: Երկու սեղան պետք է միացվեին: «Գուչչի» գնումների պայուսակներն ինչ-որ մեկին պետք կգային: Խմբի միակ երեխան հենց նոր շրջել էր թեյի իր գավաթը: Պարոն, որտեղ է զուգարանը... Երբ այս բոլոր հարցերը լուծվեցին, նստեցի: Դեմքիս անտարբեր արտահայտություն տալով՝ ընտրեցի այդ երիտասարդներին ամենամոտ սեղաններից մեկը: Ինձ դուր էին գալիս երիտասարդները, եւ ես սիրում էի լսել, թե ինչի մասին են նրանք խոսում: Դա իմ սովորությունն էր: Նկատի ունեմ այն, որ երբ տուրիստական մի խումբ եմ բերում չինական ռեստորան, իմ սովորությունն է նայել շուրջս եւ տեսնել, թե արդյո՞ք Չինաստանից ուսանողներ չկան, եւ եթե կան, նրանց մոտիկ նստելու մի միջոց գտնում եմ:

Դա նրանից էր, որ այդ երիտասարդների խոսակցությունն ինձ միշտ ստիպում էր մտածել իմ անցած կյանքի մասին: Առաջ ես ճիշտ նրանց նման էի: Ես նույնպես Չինաստանից Փարիզ եկա՝ որպես ուսանող: Հանգստյան օրերին երեկոյան ընկերներիս հետ գնում էի մի բան ուտելու, գարեջուր խմելու եւ մի լավ զրուցելու: Դա իմ մեծագույն երջանկությունն էր հանդարտ եւ ինքնապարփակ կյանքում: Հիմա, սակայն, ուսանողական այդ կյանքը, որ ձանձրացնում էր, զզվեցնում, անգամ հոգնեցնում էր ինձ, դարձել է մի բան, որ կուզեի վերհիշել, ըստ էության, հիշում էի կարոտով: Դա նրանից էր, մտածում էի ես, որ ծերացել եմ:

Դա ճիշտ էր: Մեկ շաբաթ հետո քսանվեցս կլրանար: Ես ծերացել էի: Չինաստանից հեռացել էի, երբ տասնինը տարեկան էի, սովորել էի մի քա-

նի տարի, հետո դարձել տուրիստական ուղեվար: Ասում են, որ Չինաստանից դուրս ապրողները մեկ տարում երեք տարով են ծերանում: Ուրեմն ես, քանի որ յոթ տարի էր անցել, իսկ յոթ անգամ երեք՝ քսանմեկ էր անում... Դե, արդեն ամեն մարդ կարող էր հաշվելով պարզել իմ «իսկական տարիքը»:

Իմ ետեւում նստած երկու զույգերն, ինչպես երեւում էր, դեռ չէին ծերացել: Այդուհանդերձ, դժվար էր ասել. ոչ ոք իրականում չի իմանա երիտասարդի սրտի տարիքը՝ նրա կենսունակությանը կամ նորածեւ արտաքինին նայելով: Լսեցի երկու աղջիկների շաղակրատանքը օծանելիքների մասին. Փարիզն իսկապես սրբազան հող է այդ թեմայի համար: Երկու երիտասարդ տղաները խոսում էին մեքենա պահելու դժվարությունների մասին՝ նավթամթերքի գների բարձրացման պայմաններում: Որպես արտասահմանում սովորող ուսանողներ՝ նրանք պետք է որ բավականին ապահովված լինեին: Դժվար չէր նկատել, որ դեռ վիատված չեն չափից դուրս շատ հոգս ու խնդիրների առկայությունից:

Նրանց զրույցը, բնականաբար, իրենց ծանոթ մարդկանց մասին էր: Հենց որ խաշած ձուկը բերեցին, իմ ետեւում նստած տղաներից մեկն ասաց.

-Լսե՞լ եք. չինացի մի աղջիկ իրեն Սենն է նետել:

Երիտասարդ աղջիկը, որն այնքան կոպիտ ու աննրբանկատ էր խոսել, ասաց.

-Օ՜, այո: Դա այն աղջիկը չէ՞ր, որ մատուցողուհի էր աշխատում 18-րդ շրջանի իռլանդական պանդոկում: Ընկերոջս ընկերներից մեկը գիտեր նրա նախկին ընկերոջը: Լսել եմ, որ երբ նրան ջրից հանել են, ստամոքսը փուչիկի պես ուռած է եղել:

Մյուս աղջիկը, որը, ձայնից դատելով, ավելի հավասարակշռված էր թվում, ասաց.

-Արդյոք նրա նախկին ընկերը «Հեւի մեթըլը» չէ՞: «Հեւի մեթըլն» այժմ այնքան հանրահայտ է Բի-Բի-Սի-ով:

Այլեւս չէի կարող լսել եւ շրջվեցի ու հարցրի նրանց.

-Ներեցեք, այն աղջիկը, որի մասին խոսում էիք, որը ջուրն է նետվել... նրա անունը Սու Մեյյա՞ն է:

Չորսն էլ մեկ մարդու պես նայեցին ինձ:

-Ես պարզապես լսեցի, թե ինչ եք խոսում:

Չգիտեի՝ կարիք կա՞ր արդյոք բացատրելու, բայց այնուամենայնիվ շարունակեցի բացատրել.

-Ես գիտեի այդ «Հեւի մեթըլին», որի մասին խոսում եք: Նաեւ Սու Մեյյանին էի ճանաչում, դրա համար էլ ինձ վատ զգացի...

-Ճիշտն ասած, աղջկա անունը չգիտեմ,- անկրբանկատ աղջիկն անմեղ հայացքով ինձ նայեց:

Նրա կողքի ուսանող տղան կասկածոտ հայացքով ոտքից գլուխ չափեց ինձ.

-Սու Մեյյան... Կարծես ինչ-որ տեղ լսել եմ այդ անունը, բայց չգիտեմ, թե...

-Չէ, դա հաստատ Սու Մեյյանն էր,- հավելեց մյուս աղջիկը:- Ես էլ էի ճանաչում նրան, բայց վերջին երկու տարիներին այլեւս կապ չունեինք, դրա համար էլ չգիտեմ, թե ինչ է եղել նրա հետ վերջերս:

Երիտասարդ տղա ուսանողը, որ մինչեւ հիմա լուռ էր, ապշած հայացքով նայեց նրան.

-Դուք ապրում էիք նույն փողոցում... Ուզում ես ասել, որ երկու կամ երեք տարվա մեջ մեկ անգամ էլ չես հանդիպել նրան:

Այլեւս չլսեցի, թե ինչ էին նրանք խոսում: Ինձ այլեւս չէր հետաքրքրում: Հիմա համոզված էի՝ Սեն գետի այն աղջիկը պետք է որ իմ ճանաչած Սու Մեյյանը լիներ: Չգիտեմ ինչու, բայց երբ լսեցի նրանց խոսակցությունը Սենա նետված աղջկա մասին, անմիջապես մտածեցի, որ դա հավանաբար Սու Մեյյանն է:

Այդ երեկո, ավելի ուշ, ես խմբի հետ վերադարձա հյուրանոց եւ ասացի, թե առավոտյան ե՛րբ կհանդիպենք կրկին: Հետո ավտոբուսը նրանց Բելգիա էր տանելու, ինչպես ապրանքներն են բարեհաջող տեղ հասցնում: Այս խմբի հետ կապված իմ պարտականությունները հիմնականում ավարտված էին: Հաջորդ խումբը միայն չորեքշաբթի էր ժամանելու Ճառլ դը Գոլ օդանավակայան: Ինձ հնգօրյա հանգիստ էր սպասվում: Որոշեցի գնալ խմելու: Եթե նույնիսկ տուն գնայի, օրվա այդ ժամին Լան Ինը տանը չէր լինի:

Լան Ինն իմ ընկերուհին էր: Մենք միասին ապրում էինք յոթ տարի եւ սառը պատերազմի թունդ շրջանում էինք:

Հուլիսը Փարիզում դռեւս ամառ չէր: Միշտ այնպիսի տպավորություն եմ ունեցել, թե Փարիզը տարվա մեջ վեց ամիս ձմեռ ունի, բայց դժվար էր որեւէ բան ասել մնացած վեց ամսվա մասին: Մի շաբաթ կարող է վաղ գարնան նման լինել, մեկ այլ շաբաթ՝ ուշ աշնան պես, իսկապես աննորմալ մի բան: Երբ առաջին անգամ եկա Փարիզ, այս կլիման ինձ ամենամեծ անախորժությունն էր պատճառում, քանի որ ամբողջ ժամանակ պետք է

ունենայի բոլոր չորս եղանակների հագուստները: Այդ օրերին Լան Ինն ու ես մի սենյակ էինք վարձել, որ ընդամենը 15 քառակուսի մետր տարածք էր զբաղեցնում, եւ ստիպված էինք մեր շորերը կախել ամեն մի անկյունում: Մենք հանդիպել էինք Փարիզ եկած մեր առաջին տարում եւ անմիջապես էլ սկսել էինք միասին ապրել: Արտասահմանում սովորող ուսանողների շրջանում սա անսովոր մի բան չէր: Այդ ժամանակ 19 տարեկան էի, ինչպես արդեն ասել եմ կարծեմ: Լան Ինը 18 տարեկան էր: Նրան արտասահման էր ուղարկել ընտանիքը՝ դպրոցում ունեցած ինչ-որ սիրային պատմության պատճառով, որ ավելի խոշոր մի բանի էր վերածվել: Եթե Լան Ինն ու ես հանդիպած լինեինք եւ, ասենք, ինչ-որ առնչություն ունեցած այնտեղ՝ Չինաստանի քաղաքներից մեկում, դա թերեւս հեռուստատեսային անճաշակ դրամայի նման մի բանի կվերածվեր, եւ, ինչպես այդպիսի դրամաներում է լինում, որոշակի վեճեր ու հաշտություններ ունեցած կլինեինք: Բայց փոխարենը՝ ճակատագիրը մեզ երկուսիս նետել էր բեմ, եւ մենք, սխալ կապերով կապված, առանց սցենարի ու դեպքերի մասին գիտելիքների, կարող էինք միայն հանպատրաստից մի ներկայացում խաղալ՝ ըստ մեր ունակությունների: Վերջնական արդյունքն արտառոց լինելու աստիճան անշնորհք մի բան էր, բացառությամբ այն փաստի, որ սա, ըստ էության, մեր պատմությունն էր, մեր կյանքը:

Երբ Լան Ինը Փարիզ էր եկել, իր գործակալությունը նրան հատկացրել էր 18-րդ դարի քարե խարխուլ ու կիսավեր մի հին շենք: Այդտեղ խավար էր, ցուրտ ու խոնավ, իսկ վառարանից աղմուկ էր լսվում, որ կասկածելիորեն հնչում էր մկան ձայնի նման: Դժբախտաբար, նրա սենյակակիցները արտասահմանցի մի քանի ուսանող էին Բանգլադեշից եւ Պակիստանից, որոնք, նրա նման, ֆրանսերեն ընդհանրապես չգիտեին: Պարզ չէ, թե ինչ էր տեղի ունեցել սկզբում, բայց դա ավարտվել էր այն բանով, որ այդ ուսանողները միավորվել էին եւ նրան թույլ չէին տալիս խոհանոցում օգտվել միկրոալիքային վառարանից, իր անունը գրել նախասենյակի փոստարկղի վրա եւ էլի նման բաներ: Մի օր, ինքնագլուխ, առանց ձայն իսկ հանելու, նա կապել էր իր երկու մեծ ճամպրուկները եւ մետրոյի մի քանի կայարան փոխելուց հետո կանգնել իր զարմուհու դռան շեմին: Այդ ժամանակ մենք երեքով՝ ես, նրա զարմուհին եւ զարմուհու ընկերը, որ հայտնի էր Հեւի մեթըլ մականունով, վարձով ապրում էինք մի բնակարանում: Ահա այսպես անհավանականորեն՝ մի ուշ գիշեր Լան Ինն ու ես հանդիպեցինք իրար:

Մի օր զարմուհին եւ Հեւի մեթըլն ամբողջ գիշեր տուն չեկան: Այդ ան-

գամ Լան Ինը քնեց իմ սենյակում: Գիշերվա կեսին, հուզմունքից վառվող դեմքերով եւ արագ բաբախող սրտերով, երկուսս էլ, մեզնից յուրաքանչյուրը, ճաշակեցինք մեր առաջին գիշերը: Ժամը երկուսին մոտ արդեն քննարկում էինք, ինչպես երկարամյա մի զույգ, թե ինչպիսի բնակարան կարող էինք գտնել, եթե զարմուհու բնակարանից տեղափոխվեինք, ուր կարող էինք գնալ, ինչքան վարձ կարող էինք մուծել: Զգում էի, որ վերածվել ենք հին հեքիաթների այն մարդկանց, ովքեր առաջին անգամ ճաշակել են ամուսնական երանության գիշերն ու ծաղկազարդ մոմեր են վառել եւ ապա կամաց եկել են հարգելու միմյանց՝ որպես հյուրերի: Հաջորդ օրը վաղ առավոտյան երկուսս էլ քայլեցինք դեպի Սեն գետի ափը: Քաղաքում ամեն ինչ սովորականի պես էր: Ոչ ոք հետաքրքրությամբ լի հայացքով մեզ չէր նայում: Գուցե նրանց համար այդ քաղաքում ձեռք ձեռքի քայլող, երիտասարդության ծաղկուն հասակում գտնվող դեղնամորթ, սեւաչյա ասիացիների զույգը, ըստ էության, հետաքրքրող ոչինչ չուներ: Բայց ես որոշակիորեն զգացի, որ ինչ-որ բան է մարել իմ տասնիննամյա էության մեջ: Եվ լուռ համաձայնեցի դրան ու սկսեցի ծերանալ:

Յոթ տարի անց Լան Ինն ու ես կարծես թե բաժանվելու հիմնավոր պատճառ չունեինք: Մենք անցել էինք բոլոր փորձությունները, որ աշխարհը դնում է տղամարդու եւ կնոջ առօրյա կյանքում՝ համատեղ կենցաղի օրըստօրե ավելացող տաղտուկը, վառելիքի, բրնձի, յուղի, աղի հարցերի շուրջ առաջացող խոսքակռիվը, վաղանցիկ անհավատարմությունը, որին հետո հաջորդում են առավոտյան հորդաբուխ արցունքները: Ընդհանուր առմամբ, ամեն բան ճաշակել էինք, բացառությամբ խորն ու սրտաբուխ սիրո, որ կրակի պես կիզիչ է եւ սառույցի պես սառցահարող: Այսօրվա Լան Ինն այլեւս այն խեղճ երիտասարդ աղջիկը չէր, որին վախեցնում էին բենգալացիները: Հիմա նա հարդարուն գեղեցիկ վարսեր ուներ, շուրթերին Lancome շրթներկ էր քսում, նրա ամեն մի ժեստն ու շարժումը խոսում էր մի մարդու մասին, որը բավականին փորձառու է: Մաքսից ազատված խանութում, որտեղ նա աշխատում էր, որը պատկանում էր Վենչժոուից եկած մի զույգի, նոր եկած բոլոր երիտասարդ աղջիկները նրան անվանում էին «Ավագ քույր Լան Ին»: Նա հեռախոսազանգերին պատասխանում էր ջերմ, սիրալիր, հանդարտ ձայնով եւ պատասխաններ էր գտնում բոլոր խնդիրների համար՝ մշտական բնակության հետ կապված ներգաղթի ընթացակարգերից մինչեւ ցածր տոկոսադրույք ունեցող բանկերն ու աբորտ անելու համար բժիշկ փնտրելը: Ոմանց աչքերում նա արդեն դարձել էր փարիզուհի:

Միակ բանը, որ նա այլեւս չէր գործածում, ինձ հետ խոսելու այդ ջերմ տոնն էր: Շատ լավ գիտեի, որ նա աստիճանաբար սկսել էր արհամարհանքով նայել ինձ: Ես յոթ տարի Փարիզում էի եւ շատ հաճախ էի փոխել ուսման վայրս՝ երբեք չկարողանալով դասընթացներիցս ետ չմնալ, քանի որ երբեք սովորող չեմ եղել: Ի վերջո, մեծ դժվարությամբ կարողացա բակալավրի աստիճան ձեռք բերել մասնավոր մի հաստատությունում: Դա այնպիսի հաստատություն չէր, որի անունը կցանկանայի նշել, քանի որ այդ դեպքում ծիծաղի ու կատակի տեղիք կտայի: Իմ ծերուկը Չինաստանում տուրիստական գործակալություն էր ղեկավարում, դրա համար էլ ուսումս ավարտելուց հետո իմ գործը շրջագայությունների եվրոպական, հատկապես ֆրանսիական վերջնակետի աշխատանքները համակարգելը դարձավ: Վերջին երկու տարիներին, այդ գործի հետ կապված, եղել էի ավելի քան քսան երկրներում: Եվ, հավանաբար, հետագա շատ տարիներ էլ անցկացնելու էի մեկ հանրահայտ վայրից մյուսը ճամփորդելով՝ բոլորովին առանց ակնկալիքի: Մի խոսքով, հավանաբար, ամբողջ իմ կյանքում այնպիսի մեկն էի լինելու, որն ապրուստը հոգալու համար ապավինելու էր իր ծերուկին: Լան Ինն այդպիսին չէր: Նա կարող էր, բացառապես սեփական ընդունակությունների շնորհիվ, հիացմունք պատճառել բոլոր նրանց, ում հանդիպում էր: Գրեթե յուրաքանչյուր ֆրանսիացի տղամարդ առաջին իսկ հանդիպման ժամանակ գովաբանում էր ֆրանսերենը, որ հնչում էր նրա շուրթերից: Շատ շուտով նա մագիստրոսի կոչում կստանար հայտնի ուսումնական հաստատությունում: Նրա խորհրդատուն, ոչ չինացի մի անձնավորություն, ուզում էր, որ նա ուսումն ավարտելուց հետո մնա եւ ժամանակավորապես աշխատի լաբորատորիայում՝ իրենց օգնելով, եւ ասել էր, որ եթե նա նոր աշխատանք սկսի փնտրել, ինքը նրա համար փայլուն բնութագիր կգրի: Նույնիսկ կոսմետիկայի խանութի ղեկավարը, որտեղ Լան Ինն աշխատում էր գրպանի առօրյա ծախսերի փողի համար, սիրում էր նրան եւ միշտ նրան էր մատնացույց անում դժվարահաճ հաճախորդների մոտ՝ ասելով. «Նա մեր խանութի կառավարիչն է: Եթե որեւէ խնդիր ունեք, դիմեք իրեն: Դա նույնն է, թե ինձ եք դիմել»:

Այդ ամենից հետո նույնիսկ ես զգում էի, որ Լան Ինն ավելի քան հիմնավոր պատճառներ ունի ինձնից հեռանալու համար: Գիտեի՝ բաժանման մասին դեռ չէր խոսում միայն այն պատճառով, որ նրա սրտում դեռեւս ինչ-որ բան կար, եւ դա թույլ չէր տալիս այդպես անել: Գուցե չգիտեր, որ իմ սրտում էլ ինչ-որ բան կա, որը թույլ չի տալիս բաժանվել: Միշտ հիշում էի, թե ինչպես էր այն տարին, երբ ընդամենը տասնութ տարեկան էր, այն կիսա-

մութ սենյակում, վերմակի մեջ փաթաթված, ինձ հետ հաշվում տան վարձի, էլեկտրականության արժեքը: Տասնութ տարեկանում նա արդեն տեսել էր աղքատության եւ զրկանքի մեջ ապրող զույգի հարյուրավոր հոգս ու մտահոգություն: Տասնիհնում արդեն հասկանում էր, թե ինչպես են ծանծաղուտում թպրտացող ձկները մեկը մյուսին թրջում՝ փրփուր անելով: Եվ արդեն քսան տարեկանում այլեւս չուներ ոչ մի երազանք: Հիմա նա քսանհինգ տարեկան էր, կենսասեր, ուժեղ, զգայունակ: Եվ անկախ՝ ֆինանսների ու դիրքի առումով: Քանի որ կազմ ու պատրաստ դիմակայեց աշխարհին՝ լինելով փորձառու եւ դիտողունակ: Միայն ես գիտեի, որ նա երբեք չի վայելել երիտասարդությունը, եւ հենց այդ պատճառով էլ իմ սրտում միշտ քնքուշ զգացմունքներ էի տածում նրա հանդեպ:

Մետրոյում նստած մտածում էի այս ամենի մասին: Մի քանի անգամ մտածեցի բջջային հեռախոսս հանելու եւ նրան զանգ տալու մասին, բայց հետո մտածեցի, որ իմաստ չունի: Երբ նորից տեղեկացա, թե որտեղ եմ՝ դեպի հյուսիս տանող 2-րդ գծի վրա, որոշեցի դուրս գալ 18-րդ շրջանում եւ մի տեղ խմել: Այդպես ճիշտ էր. կարող էի գնալ իռլանդական բար, որտեղ աշխատել էր վերջերս կյանքից հեռացած Սու Մեյյանը:

Փարիզում մեր ապրելու երրորդ տարին էր, երբ Լան Ինն ու ես ծանոթացանք Սու Մեյյանի հետ: Մինչ այդ մեր կյանքում շատ փոփոխություններ էին եղել: Երկուսս էլ բավականին լավ աշխատանք էինք գտել՝ քանի դեռ սովորում էինք, այնպես որ՝ բավականաչափ փող ունեինք ուտելու, խմելու եւ հանգստյան օրերին ընկերների հետ զվարճանալու համար: Փարիզը մի քաղաք էր, որ չափազանց լավ էր համապատասխանում հարբած մշուշի մեջ ապրելուն: Հիշում եմ՝ երբ Լան Ինի զարմուհին նշանվեց օտարերկրացու հետ, եւ Հեւի մեթըլը, որ միայնակ էր մնացել, սկսեց հետաքրքրվել սիրո նոր օբյեկտով. դա Սու Մեյյանն էր: Մենք չորսով, էլի ուրիշ մի քանի հոգու հետ, խրախճանողների մի խումբ ստեղծեցինք, եւ հաճախ զվարճանում էինք մինչեւ լուսաբաց: Եթե կեսգիշերին դեռ սթափ էինք լինում, ապա խմբով խենթի պես վազում էինք փողոցն ի վար՝ որպեսզի մետրոյի վերջին գնացքով տուն հասնեինք: Իսկ եթե արդեն սթափ չէինք, ամբողջ գիշեր խմում էինք ու թափառում: Եվ հետո, երբ տեսնում էինք, որ առավոտյան լույսն աստիճանաբար ճերմակ գույնով է ներկում երկինքը, մեծ զարմանքով պարզում էինք, որ Փարիզի լուսաբացը նման է մեր հայրենի քաղաքի լուսաբացին՝ ճնշող, միայնակ, անփայլ ու անշուք: Այդ ժամանակ էր հենց, այդ օրերին, երբ հաճախ ամբողջ գիշեր մինչեւ լուսաբաց խմում էի ու թափառում, որ վերջապես զգացի՝ ժամանակն ինքնին

շատ երկար էր, եւ ավելին՝ Փարիզի այդ ժամանակն էր երկար:

Իռլանդական բարը երկար, նեղ մի նրբանցքում էր: 18-րդ շրջանի շատ վայրեր դեռեւս պահպանում էին հին Փարիզի տեսքը: Հյուգոյի վեպերում պատկերված՝ 1848 թվականի հեղափոխության փողոցի կռիվները պետք է որ այսպիսի նեղ նրբանցքներում տեղի ունեցած լինեին: Ճանապարհներից մի քանիսը սալարկված էին իրար ագուցված շատ փոքր կլոր քարերով: Այդ ճանապարհները պետք է որ պատիժ լինեին բարձր կրունկներով կոշիկ հագած կանանց համար, բայց հիշում եմ, որ Մեյյանը միշտ հագնում էր 7 սմ բարձրությամբ կրունկներ ունեցող կոշիկներ եւ քայլելիս ասես ճախրում էր: Ապշեցուցիչ հմտություն: Այդ տարիներին մեզնից մի քանիսը ետ էին մնում եւ հետեւում, թե ինչպես է նրա նրբագեղ կազմվածքը բոլորիցս առաջ անցնում: Եվ այդ գեղանի տեսքով աղջիկը, առաջ սլանալով, ծուլվում էր հինավուրց ճանապարհներին: Եվ մեկ էլ շրջվում էր ու ասում. «Ծտապեք, երեխեք, ես աշխատանքից ուշանում եմ»:

Մեյյանն այնքան էլ գեղեցիկ չէր: Նրան, օրինակ, չէիր համեմատի Լան Ինի հետ: Բայց դեմքին այնպիսի մի բան կար, որ մեկ անգամ տեսնելուց հետո, դժվար էր նրան մոռանալ: Պահ էր լինում, այն օրերին, երբ խմում էինք (երբ որ խմելու բան էր լինում), հաճախ փորձում էի հասկանալ, թե այդ ինչից էր, որ նա մարդկանց վրա այդպիսի տեւական տպավորություն էր թողնում: Երբեք համոզիչ եզրահանգման չէի գալիս, միայն կարողանում էի ինքս ինձնից դժգոհ դա բնորոշել որպես «ոճ»: Հիմա ես թափառում էի այն նախկին վայրերում, ուր քայլում էինք, գնալով այն բարը, ուր առաջ էինք այցելում, բայց Մեյյանն ինքն արդեն անհետացել էր, եւ ես նույնիսկ ստիպված էի նրա մահվան մասին իմանալ բոլորովին օտար մարդկանց շուրթերից: Ես չգիտեի՝ երբ նա այդքան հեշտուհանգիստ իրեն հանձնել էր Սեն գետին, այդ ժամանակ հիշե՞լ էր արդյոք մեզ, մտածե՞լ էր արդյոք մեզ զանգ տալու մասին, չնայած այս երկու տարվա ընթացքում այնքան քիչ էինք իրար տեսել, որ կարելի էր ասել, թե մենք նույն մարդիկ էինք բոլորովին տարբեր ճանապարհների վրա: Բայց եթե հիշում եք, թե ինչ էինք մենք կիսում, երբ բոլորս մի մարդու պես մեզ զգում էինք մետրոյի վերջին գնացքը, եթե հիշում եք դա, ապա անշուշտ պետք է որ հրաժեշտ էլ լիներ:

Համոզված էի, սակայն, որ Մեյյանը մակերեսային հույզերին տրվող անձնավորություն չէր: Ավելի ճիշտ, ես միշտ զգում էի, որ մեր խմբում նա ամենախոր զգացմունքներն ունեցող մարդն էր: Բայց հիմա նա մահացած էր: Եվ հեռացել էր մեզնից առանց մի խոսքի:

Ժամը տասին բարը նոր միայն սկսեց լցվել հաճախորդներով, ծխախոտի ծխի մշուշով եւ մռայլ մթնոլորտով: Բայց այս մռայլությունը ստիպում էր, որ մարդ հարմարավետ զգա, որովհետեւ չէր ուղեկցվում մգլահոտերով: Սեղմվելով ճամփա հարթեցի դեպի բարի առջեւի մասը եւ բարմենին մի փոքրիկ բաժակ շոտլանդական վիսկի պատվիրեցի: Երկմտեցի՝ արդյո՞ք պետք է մի շնչով խմեմ՝ ի պատիվ Մեյյանի, թե՞ պետք է խմեմ դանդաղ, քիչ-քիչ՝ ի հիշատակ նրա: Գիտեի, որ երկուսն էլ անիմաստ են, բայց այլ ծեւ չունեի՝ արտահայտելու հետեւյալ միտքս. «Մեյյան, թեեւ չգիտեմ ինչու, բայց գիտեմ, որ դու մահացած ես: Ես քեզ կկարոտեմ: Չեմ կարող ասել, թե հաճախ կկարոտեմ քեզ, բայց անպայման կկարոտեմ ժամանակ առ ժամանակ: Չգիտեմ, թե ինչ էին զգում մեր խմբի մյուս անդամները, բայց ինչ վերաբերում է ինձ, ապա ես միշտ մտածել եմ, որ դու սովորական աղջիկ չէիր, թեեւ հիմա այլեւս հնարավորություն չունես աշխարհին ցույց տալու, որ դա այդպես է»:

Մի տարի մենք չորսով կիրակի մի առավոտ բանտ գնացինք: Չեմ հիշում, թե՝ ինչու: Ավելի ճիշտ, դա թանգարան էր, որ նախկինում բանտ էր եղել: Մենք չորսով՝ Մեյյանը, Հեւի մեթըլը, Լան Ինն ու ես, գնացինք հենց այնպես, առանց հատուկ նպատակի: Միայն հետո, երբ մտանք այդ բանտը, իմացանք, որ դա կարելի է աշխարհահռչակ բանտ համարել, որ այդտեղ են բանտարկված եղել Մարի Անտուանետը, ինչպես նաեւ Ռոբեսպիերը կամ գուցե Դանտոնը, չեմ հիշում, ամեն դեպքում՝ այս երկու խիստ հանրահայտ մարդկանցից մեկն էր: Անհոգ շրջում էինք՝ զննելով վանդակներից յուրաքանչյուրը եւ դրանցից յուրաքանչյուրում ցուցադրված մոմե կերպարանքները՝ հնարավորությունը բաց չթողնելով ոչ այնքան նրբանկատ կատակներ անելու այն ամենի առիթով, ինչի շուրջ կարող էինք սրամտել: Ոչինչ չարտահայտող դեմքով՝ Հեւի մեթըլը հարցրեց.

-Կարո՞ղ էին Մարի Անտուանետի ստինքներն իրականում այդքան մեծ լինել, ինչքան այս մոմե կերպարանքինը:

Հետո պատահաբար հասանք ետնաբակին: Դա մի փոքրիկ ներքնաբակ էր՝ չինական ներքնաբակի նման: Գետինն ամբողջովին մամռապատ էր: Անկյունում քարի մեջ փորված մի ջրավազան էր, որի մեջ հին ու ժանգոտած ծորակից անընդհատ ջուր էր կաթում: Զբոսաշրջիկներից մեկն անփութորեն մոտեցավ, բացեց ծորակը եւ լցրեց հանքային ջրի իր շիշը: Մենք չորսս, թեեւ չգիտեինք՝ ինչու, երբ տեսանք, որ այդ մարդն այդպես մոտեցավ եւ այդպես անփութորեն բացեց ծորակը, լռեցինք: Ապա Լան Ինն անվճռականորեն առաջ մեկնեց ձեռքը՝ զգալու ծորակից կաթող ջրի

կաթիլները եւ ասես ձեռքն այրելով՝ զարմացած արտաբերեց.

-Ինչ սառն է: Ուղիղ ոսկորներիդ է հասնում:

Եվ այդ պահին հանկարծ պատկերացրի, որ գուցե Մարի Անտուանետն էլ, երբ տանում էին մահապատժի ենթարկելու, այդ զբոսաշրջիկի նման խմել է այս ծորակի ջրից: Մի քանի ժամ անց, քայլելով դեպի գիլյոտինը եւ պատահաբար ոտքը դնելով դահճի ոտքին, այդ հպարտ, արտասովոր, էքստրավագանտ կինն ամենաբարեկիրթ ձեւով ասել է նրան. «Հայցում եմ Ձեր ներողամտությունը»:

Միայն երբ պատրաստ էինք հեռանալ, հանկարծ նկատեցինք, որ Մեյյանն անհետացել է: Գնացինք փնտրելու: Երբ նորից տեսա Մարի Անտուանետի մոմե կերպարանքը, շատ ցանկացա իմ ծանր, չինացու առոգանությամբ ֆրանսերենով հարցնել նրան՝ Ձերդ Մեծությունը նկատե՞լ է մեր ընկերուհուն: Պարզվեց, որ Մեյյանը մնացել էր այն փոքրիկ ներքնաբակում: Երբ տեսանք նրան, մինչեւ գոտկատեղը խոնարհվելով ձգվել էր, ճերմակ ձեռքը մեկնել էր դեպի այն ծորակը, լիովին հանգիստ, բոլորովին չէր շարժվում, ասես արդեն սառել էր մոմե կերպարանքի մեջ:

Այն ջուրը, որ ոսկորները թափանցող սառնություն ուներ Լան Ինի բերանում, այժմ դանդաղ, կաթիլ առ կաթիլ հավաքվում էր նրա գավաթաձեւ ձեռքի մեջ: Եվ այդ պահին այդ ձեռքն անկասկած սառցե մի քանդակի էր վերածվել:

Լսելով, որ իրեն կանչում են, նա շրջվեց եւ ժպտաց հրեշտակային ժպիտով: Ինչ-որ շատ հզոր մի բան հայտնվեց նրա աչքերում, ապա անցավ: Բոլորս փոքր-ինչ վախեցած էինք այդ պայծառ ժպիտից, որ ոչ մի պատճառ չուներ: Նա ասաց.

-Ես հենց նոր տեսա Մարի Անտուանետին: Դա, իրոք, Մարի Անտուանետն էր:

-Դու խենթ ես,- կշտամբեց նրան Լան Ինը, ապա բոլորս սկսեցինք ծիծաղել ու կատակել:

Մեյյանն ամենեւին չառարկեց եւ միայն գլուխը շփոթված տարուբերեց: Բայց ես զգացի, որ թերեւս Լան Ինի ասածը ճշմարիտ էր: Այդ պահին էր, որ հանկարծ, չգիտեմ ինչու, մտքովս անցավ, թե Մեյյանն այնպիսի անծնավորություն չէ, որ երկար կապրի: Անմիջապես ծաղրանքով ինձնից վանեցի այդ խելացնոր ու սնահավատ միտքը: Բայց դա հաստատ այն դեպքն էր, որ պահի ազդեցությամբ, անորոշ մի ձեւով, ես հասկացա, թե ինչն էր պատճառը, որ ստիպում էր այդքան դժվարությամբ մոռանալ նրան: Նա այնքան երիտասարդ էր, բայց դեմքին ու ճակատին այլաշխարհային, իս-

կապես լքված ու մենավոր մի ոգի կար, հատկապես երբ ժպտաց այդ շլացուցիչ ժպիտով:

Երբ վիսկիս խմեցի վերջացրի, մեծ գավաթով գարեջուր խնդրեցի: Միայն սառը գարեջուրը կարող էր զգացնել տալ, որ ամառ է: Եվ հենց այդ ժամանակ էլ, երբ ամեն ինչից հոգնած՝ գարեջուրը ձեռքիս դուրս էի ելնում բարից, իմ ետեւից, բազմաժխոր ձայների միջից, հստակ եւ աշխույժ մի ձայն լսեցի չինարեն.

-Չժեն Տաո, իրոք որ դու ես: Վաղուց չեմ տեսել քեզ:

Սու Մեյյանը, ձեռքին գարեջրի գավաթ՝ ճիշտ եւ ճիշտ իմ գավաթի նման, կանգնած էր հենց իմ ետեւում եւ ժպտում էր:

Այդ պահին ինձ կատարյալ ապուշի պես զգացի: Ընդամենը մեկ րոպե առաջ հանդիսավոր կերպով փորձում էի ճշտել, թե որը կլիներ իմ առջեւ դրված վիսկին խմելու ամենապատշաճ ձեւը, որպեսզի արտահայտեի հիշատակի հանդեպ իմ հարգանքը, եւ ահա այս գեղեցիկ մեռած մարդը ժպտադեմ կանգնած է իմ դիմաց: Թվում էր, թե երկինքը վերջնականապես ուժեղ ապտակ է հասցրել ինձ: Ինչպե՞ս կարող էի այդքան հիմար լինել, որ հավատայի ռեստորանում ինչ-որ անծանոթների դատարկ բամբասանքին:

Անշնորհք ժպտացի.

-Ա՛, Մեյյա՛ն, իսկապես դու ես... Երկար ժամանակ չեմ տեսել քեզ:

-Արդեն երկուսուկես տարի է,- ճշտեց Մեյյանը:- Միշտ մտածում եմ, թե այս շաբաթվա վերջին պետք է զանգեմ Չժեն Տաոյին ու Լան Ինին: Բայց երբ շաբաթն ավարտվում է, ինքս ինձ ասում եմ՝ ավելի լավ է սպասեմ մինչեւ մյուս շաբաթ-կիրակի:

Նա թեթեւակի ժպտաց՝ դեմքին այն նույն արտահայտությունը, ինչպես նախկինում:

-Հաստատ այդպես է,- գլխով արեցի:- Մենք էլ՝ նույն կերպ:

-Կարծում եմ,- ասաց նա՝ արագ մի կում անելով գարեջրից,- մենք բոլորս ենք ծույլ դարձել այս անորակ երկրում: Ծարունակ մտածում ենք, որ ժամանակը շատ երկար է, որ պետք չէ շտապել որեւէ բան անելիս, կարծես օրը քառասունութ ժամ ունի:

-Ճիշտ է, -դառն ծիծաղեցի ես:- Դու լա՞վ ես:

-Ինչպես միշտ: Անցյալ տարվա վերջին պայմանագիր կնքեցի պատկերասրահի հետ: Եվ ժամանակ առ ժամանակ նրանց համար մի քանի բան եմ նկարում: Այստեղ՝ բարում աշխատանքս թողել եմ երկու ամիս առաջ: Իսկ դո՞ւ:

Ուշադիր նայեցի նրան: Թվաց՝ մի փոքր փոխվել է: Նրա ջինսը եւ ծոպավոր, սեւ վերնազգեստը փայլուն ուլունքահատիկներով էին պատված: Ծուրթերն ու մաշկը նույնպես փայլում էին մարգարտյա պայծառությամբ: Նա երբեք այսպես ցուցադրական չէր հագնվում, բայց չէի կարող ժխտել, որ նրան շատ էր սազում, եւ դա նրա անձին ամբողջովին համապատասխան նպատակասլաց տեսք էր տալիս: Ժպտացի.

-Ես այլեւս ուսանող չեմ: Տուրիստական գործակալության ուղեվար եմ: Ըստ էության աշխատում եմ հորս համար: Այսպիսին է կյանքը: Հակառակվելու ոչինչ չունեմ: Նույնիսկ այն, որ Լան Ինն ինձ ավելի ու ավելի անտանելի է համարում, դա էլ ինձ շատ չի անհանգստացնում: Ես զգում եմ, որ ապրում եմ մեկ այլ աշխարհում:

-Իսկապես հետաքրքիր է: Զարմանալի է, թե ինչպես եք դու եւ Լան Ինը միասին ապրել այդքան տարի, - նա հին ընկերոջ նման սկսեց խոսել՝ ինձ հանգստացնելու համար:- Նայիր Հեւի մեթըլին եւ ինձ: Մենք կարծում էինք, թե երբեք չենք բաժանվի, բայց ի վերջո երկու տարի էլ չձգեցինք: Այնպես որ՝ ձեր՝ յոթ տարի միասին լինելն իրոք անսովոր մի բան է: Լավ կանեիք շտկում մտցնեիք, եթե կարող եք:

-Իսկ քո մասի՞ն ինչ կասես,- արագ փոխեցի թեման:- Այս անցած երկու տարվա մեջ ընկեր ունեցե՞լ ես:

-Ախխխ, այդ ընկեր կոչվածը,- նա խաղացկուն կատակով ձգեց բառերը:- Դե, միշտ մեկը կա, ավել կամ պակաս...

Երկուսս էլ միաժամանակ ուրախ ծիծաղեցինք եւ բարձրացրինք մեր գավաթներն ու իրար զարկեցինք դրանք:

-Կենացդ, Մեյյան,- ասացի ամենայն անկեղծությամբ:- Նշենք մեր վերստին հանդիպումը:

-Ճիշտ է: Նշենք մեր վերստին հանդիպումն այսքան տարիներ հետո:

Նա աչքերն ինձ հառեց, եւ դրանց մեջ մութ-ջրային մի հայացք ծփաց, մի արտահայտություն, որն ամբողջովին փոխանցվում էր ինձ:

Դրանից հետո ամեն բան փոքր-ինչ մշուշոտ դարձավ, թեեւ ըստ էության անխուսափելիորեն, անողոք կերպով զարգացավ սպասելիքների համաձայն: Մենք շարունակեցինք իրար զարկել գավաթները, շարունակեցինք նշել մեր հանդիպումը: Որքան խմում ու բարեհոգի էինք դառնում, այնքան փոխըմբռնման ու փոխհամաձայնության զգացումն ուժեղանում էր: Չեմ հիշում, թե ինչքան խմեցինք այդ օրը: Չեմ հիշում նույնիսկ, թե ով հաշիվը փակեց: Ի վերջո, մշուշոտ գլխով, օրորվելով, իսկապես հարբած, նույնքան հարբած Մեյյանին քարշ տվեցի դեպի մետրո: Հետո, վերջապես,

երբ հանկարծ սթափվեցի, արդեն կանգնած էի այն շենքի մուտքի մոտ, որտեղ Մեյյանի բնակարանն էր:

-Միայն այս տարվա հունվարին եմ այստեղ տեղափոխվել:

Մեյյանի ձեռքին հնաոճ մի բանալի էր, եւ նա, ժպտալով, բացեց դուռը:

Ես ավագ դպրոցի աշակերտ չէի: Իհարկե, գիտեի, թե ինչ է լինելու հետո: Հիմա, երբ հասել էինք այս աստիճանին, լավագույնն այն կլիներ, որ թողնեինք՝ ամեն բան իր ընթացքով գնա: Ձեւական հրաժեշտ տալն այդ պահին, ակներեւաբար, խելամիտ քայլ չէր լինի: Մեյյանը մտավ լոգարան: Լսեցի ցնցուղի ձայնը: Որոշ ժամանակ պառկեցի բազմոցին: Սենյակը պտտվում էր շուրջս: Հանկարծ սոսկալի մի զգացում ինձ համակեց: Առանց պահ իսկ մտածելու ինձ գցեցի լոգարան, գրկեցի զուգարանակոնքը եւ փսխեցի: Ականջներիս մեջ հնչում, արձագանք էր տալիս ցնցուղի եւ ջրատաքացուցիչի ձայնը, որն ասես թրջում էր ուղեղս:

Երբ փսխելն ավարտեցի, ջուրը քաշեցի, մաքրեցի զուգարանակոնքը եւ ինձ լավ զգացի: Ծորակը բացելով՝ լվացի դեմքս եւ բերանս ողողեցի: Եվ այդ պահին հիշեցի, որ պետք է ներողություն խնդրեմ ցնցուղ ընդունող աղջկանից: Ուստի, առանց մտածելու, գլուխս բարձրացրի եւ զարմանքով նկատեցի, որ ինչ-որ պահի Մեյյանն արդեն մի կողմ էր քաշել զուգարանակոնքն ու ցնցուղն առանձնացնող վարագույրը:

Նայեցի նրա մարմնին եւ քիչ էր մնում ասեի. «Ինչքա՜ն գեղեցիկ դաջվածք է»: Բայց երբ բառերը շուրթերիս հասան, հասկացա, որ դրանք ամենեւին էլ դաջվածքներ չեն: Նրա ոտքերին, մեջքին եւ գոտկատեղին՝ կապույտ, փայլատակող թեփուկների արծաթե մի նրբամաշկ էր: Դա արտառոց արծաթ էր, որ եւ՛ փայլատակում էր, եւ՛ անշարժ էր: Ավելի մոտիկից զննելիս նկատելի էր, որ նրա ոտքերի մատների արանքում արդեն նույն արծաթավուն գույնի մաշկաթաղանթ էր աճում: Իմ առջեւ կանգնած՝ նա մի հայացքով տեսավ ամեն բան եւ տխուր ինձ նայեց: Թերեւս դա լիներ գաղտագողի հանդիպող տղամարդու եւ կնոջ ամենասովորական մի գիշեր այդ քաղաքում, եթե նա չբացեր իր ամենից նվիրական, թաքուն ու գերանձնական գաղտնիքը:

Միայն հիմա հասկացա, թե որքան է նա վստահում ինձ:

-Չժեն Տաո,- սաստիկ տխուր ասաց նա,- պետք է որ սարսափելի տեսք ունենամ հիմա:

Ես գլուխս տարուբերեցի եւ կամացուկ ասացի.

-Մեյյան, Սեն գետի ջուրը պետք է որ շատ սառը լինի:

-Դու գիտե՞ս ամեն բան,- վախեցած հարցրեց նա՝ աչքերը լայն բացելով:

-Միայն այսօր իմացա:

Ձեռքերս պարզեցի եւ ամուր գրկեցի նրան: Նրա մարմինն իսկապես սառն էր, ասես սառույց լիներ: Սառն էր, ինչպես այն բանտի մամուռը, որտեղ շատ տարիներ առաջ բանտարկված էր Մարի Անտուանետը:

-Ջժեն Տաո, դու վախենո՞ւմ ես ինձնից, ես հիմա ուրվական եմ,- հանգիստ հարցրեց նա՝ արցունքները զսպելով:

-Չեմ վախենում,- պատասխանեցի:- Բայց չեմ հասկանում, Մեյյան, թե ինչու ես դա արել:

Նա գլուխը տարուբերեց:

-Չգիտեմ, Ջժեն Տաո: Ես այնքա՛ն մենակ էի: Եվ երբ հասկացա, որ նույնիսկ մահը չի կարող ջնջել իմ մենությունը, թեփուկներն արդեն կամաց հայտնվում էին: Երբեմն դուրս էի փախչում եւ շրջում այն վայրերում, ուր գնում էի սովորաբար: Բարեբախտաբար, Սեն գետը չի սառչում, այնպես որ՝ ես երբեք չեմ փակվի՝ սառույցի տակ զմռսվելով: Եվ անկախ նրանից, թե երբ կլինի, եթե ուզեմ, կարող եմ դուրս գալ ու շրջել: Ես իսկապես երջանիկ եմ, որ այսօր քեզ հանդիպեցի:

Անշտապ համբուրեցի նրա թեփուկները, եւ մենք տանջալից գալարվելով փաթաթվեցինք մեկս մյուսիս: Այդ գիշերն ասես մի վերք էր ժամանակի մեջ, որից մարդու բոլոր հույսերն ու զգացմունքները թարմ արյան պես անդադար դուրս էին հորդում իրենց ակունքից:

-Օ՜, Աստված իմ, Ջժեն Տաո,- հառաչեց նա՝ ապակե, երազուն հայացքով:- Ես իսկապես նախանձում եմ Լան Ինին:

Ես նրա գլուխը պահեցի ձեռքերիս մեջ եւ խոսեցի լրջորեն.

-Հիշիր, ես տուրիստական խմբերի մարդկանց հաճախ կտանեմ Սենի վրա նավակով զբոսանքի: Եթե ուզում ես տեսնել ինձ, վստահաբար ինձ ազդանշան տալու մի ձեւ գտիր: Հասկանո՞ւմ ես: Դու հաճախ պետք է ինձ ազդանշան տաս, այլապես ես քեզ կկարոտեմ:

-Շատ լավ,- նա գլխով արեց քաղցր ժպիտով:- Սա մեր երկուսի միջեւ գաղտնիք կլինի:

ՅԱՆ ԳԵ

ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ԹԱՏՐՈՆԸ

- Ողբերգություն ներկայացնող թատրոնները ողբերգական վախճան կունենան:

Այսպես ասաց ինձ վիպասանուհին, երբ դեռ բավականին երիտասարդ էինք, եւ ես դեռ ապրում էի Վանֆու փողոցում: Ինչպես մեր մյուս մերձավոր ազգականներին, այնպես էլ նրան իմ բնակության վայրից հասնելու համար ես ընդամենը պետք է քայլեի կես թաղամաս: Դա մորաքույր Լյուի սրճարան-ճաշարանից եւ թափոնների կայանից ներքեւ էր: Կոչվում էր Թիվ 7 բակ, եւ այդտեղ էլ ապրել էր վիպասանուհին մորաքրոջս եւ նրա ամուսնու հետ:

Նա շատ վաղ տարիքից վայրենի երեխա էր: Դասերից հետո տուն չէր գնում: Միշտ ինձ հետ նստում էր մեր տանը եւ կարդում այն գրքերը, որ հայրս էր գնել ինձ համար: Իմ սենյակը փողոցին էր նայում, իսկ նա սիրում էր նստել պատուհանագոգին եւ ոտքերը դնել հին ու ժանգոտ ծաղկամանի վրա: Կարդում էր եւ նայում հեռուն: Ինձ համար պարզ չէր՝ նա անցորդների՞ն էր զննում, թե՞ թույլ էր տալիս, որ անցորդներն իրեն զննեն: Ամեն դեպքում, վերջիվերջո մայրս աշխատանքից տուն էր գալիս եւ փողոցից տեսնում էր նրան ու կտրուկ դիտողություն անում.

-Ժունժուն, ցա՛ծ իջիր: Ցա՛ծ իջիր: Ի՞նչ ենք անելու, եթե ընկնես:

Երբ դա տեղի էր ունենում, վիպասանուհին գիտեր, որ մեր ժամանակն սպառվել է, եւ անմիջապես, կապկի նման՝ պատուհանից սահելով ցած էր իջնում, նստում իմ կողքին՝ գրասեղանիս մոտ, պայուսակից հանում իր աշխատանքային տետրը եւ ձեւացնում, թե կենտրոնացել է տնային աշխատանքի վրա:

Մայրս վեր էր բարձրանում՝ ճանապարհին հարեւաններին ողջունելով: Նրա ոտնաձայներն ավելի ու ավելի էին մոտենում: Վերջապես ներս էր մտնում, ցած դնում պայուսակները եւ բացում բոլոր դռներն ու պատուհանները՝ որքան հնարավոր է արագ: Մեկ վայրկյանում մեր սեփական փոքրիկ աշխարհը բացվում էր, ամբողջովին ի ցույց դրվում: Այն դառնում էր հսկայական մի սպունգ, որ կլանում էր Վանֆու փողոցից եկող ամեն մի ձայն:

Մորս դա չէր հուզում: Նա արդեն խոհանոցում բանջարեղեն էր պատրաստում՝ քթի տակ ուրախ դնդնալով: Բայց ներս հորդող այդ բոլոր ձայները գրեթե գրնգում էին ականջներիս մեջ: Ամենաբարձր ձայները մորաքույր Լյուի ճաշարանից էին գալիս: Իր գործն իմացող մատուցողուհին՝ Սյաո Լյուն, կանգնում էր դռների մեջ եւ կանչում.

- Բարի գալուստ: Ներս եկեք:

Եվ բլբլալով մեկ առ մեկ ներկայացնում էր գլխավոր խոհարարի բոլոր հատուկ կերակրատեսակները՝ սկսելով Գինկգո հավի ռագուից մինչեւ Գուն Բաո տապակած հավի միսը: Միայն լսելիս բերանիդ ջուրը գնում էր: Սակայն, ցավոք, շուտով գալիս էր աղբատարը, եւ օրեր շարունակ կուտակված աղբ ու թափոնը աղմուկ-շրխկոցով դատարկվում էր աղբի տեսակավորման կայանում, որպեսզի սպասեր էլ ավելի մեծ աղբատար մեքենայի ժամանմանը, որը հավաքելու էր այն եւ տանելու մի փոքր ավելի հեռվում գտնվող վերամշակող գործարան: Եվ դատարկվող աղբ ու թափոնի հնչյուններն արագ վերջ էին տալիս համեղ ուտելիքի մասին ցանկացած երազանքի:

Բացի այդ, ձայներ կային, որ չէիք կարող ամեն օր չլսել՝ մարդկանց բարեկամական ողջույնները փողոցում, ցածրաձայն կարճ զրույցներն ու ծանոթ անունների հիշատակմամբ փոխանցվող գաղտնիքները: Թեեւ այդ ամենօրյա հնչյունները համատարած էին, մեր փողոցում մեծացող բոլոր երեխաներս այնքան էինք սովորել դրանց, որ դրանք անհետանում էին այն պահից, երբ գլուխներս թաղում էինք մեր դասագրքերի մեջ:

Բայց վիպասանուհին ուրիշ էր: Կասկածում եմ, որ նա ավելի շատ հետաքրքրվում էր Վանֆու փողոցում հնչած զրույցներով ու ասեկոսեներով: Կտքներ կիրառական մաթեմատիկայի հարցերի սեւագրությունների վրա, բայց ոչնչի չէր հասնի: Նրա ականջներում մշտապես ուրիշ ձայներ էին: Մանրուքներն ու աննկարագրելի բաները նրա համար միշտ շատ ավելի հետաքրքիր էին, քան մաթեմատիկական չորուցամաք բանաձեւերը: Նա մի պահ լսում էր, ապա հանկարծ ասում էր ինձ.

-Քույրի՛կ, լսեցի՞ր այդ ձայնը:

Նայում էր ինձ լայն բացված պայծառ աչքերով՝ սպասելով պատասխանի:

Ես շունչս պահում էի եւ փորձում զանազանել յուրահատուկ ձայնը, որ փողոցային աղմուկի միջից լսել էր նա եւ որի մասին ասում էր:

-Այդ մեկը,- ասում էր՝ կարծես դիվահար եղած:

-Ես ոչինչ չեմ լսում,- պատասխանում էի:

- Տարօրինակ է, - ասում էր նա:- Ես լսեցի դա, զանգի պես պարզ:

Նայում էինք միմյանց՝ ամեն մեկս մնալով իր սեփական կարծիքին, մինչեւ որ նրա աչքերն սկսում էին կորցնել իրենց փայլը:

Այն, ինչ նա չէր սպասում, հեռվից եկող երաժշտություն լսելն էր: Պետք է որ ինչ-որ մեկը պարապելիս լիներ: Դա այնքան անպատեհ էր հնչում Վանֆու փողոցի աններդաշնակ խառնաժխորի մեջ, եւ ես զարմանում էի, որ վիպասանուհին կարողանում է նույնիսկ որսալ հնչյունը: Բայց պնդում էի, թե չեմ լսում, եւ համոզված էի, որ եթե ես, որպես երկու ներկաներից մեկը, ասում եմ, թե չեմ լսում, ապա նա ի վերջո կկասկածի իր սեփական զգացողությանը եւ ստիպված կլինի ընդունել, որ երեւի պարզապես պատկերացրել է այդ ամենը: Եվ նա անում էր հենց այն, ինչ ես հույս ունեի, բայց չէի սպասում, որ ժամանակն անցնելու հետ ես նույնպես ի վերջո մոռանում էի հնչյունների մասին՝ իմ իսկ ժխտողական վերաբերմունքի պատճառով:

Ձայնն այնքան թույլ էր, որ կուլ էր գնում երեխաներին հանդիմանող հարեւաններիս աղմուկ-աղաղակի մեջ: Բայց շարունակվում էր որոշ ժամանակ՝ միայն ճաշից առաջ դադարելով:

Այդ ժամանակ վիպասանուհին եւ ես անցած էինք լինում մեկ այլ թեմայի: Միշտ ավելի հետաքրքիր ու հուզիչ մի բան էր լինում, որ գրավում էր նրա ուշադրությունը: Քանի որ մեր ներկա իրավիճակն այդքան անտանելի էր, մեր զրույցը հիմնականում վերաբերում էր ապագային: Երազում էինք մեր ապագա աշխատանքի, մեր արտաքինի մասին, այն մասին, թե որտեղ կարող էինք ապրել, մեր ապագա կողակիցների եւ նույնիսկ երեխաների մասին: Վիպասանուհին հենց ուզում էր վիպասանուհի լինել: Ասում էր, որ հույս ունի, թե մի օր կկարողանա իսկական գիրք հրատարակել՝ սիրուն, շքեղ, կապույտ կազմով: Եվ ինձ ապացուցելու համար, որ կարող է դա անել, կարմրելով, ցույց տվեց իր առաջին վեպը, որը հենց նոր էր սկսել:

Վեպի անունն էր «Հնչյունների նվագախումբը»:

«Երբ մենք բոլորս դեռ երիտասարդ էինք, Յունան քաղաքում բոլորը կարող էին լսել գազանների մռնչոցը»: Ահա թե ինչպես էր սկսվում վեպը՝ բավականին պատշաճ եւ փորձառու գրչով:

Վեպը գրված էր ձեռագիր՝ կապույտ թանաքով, կանաչ կազմով նոթատետրի մեջ: Մի հրեշի մասին էր այն, որն ամբողջ օրը մռնչում էր թափոնների վերամշակման գործարանում, որ գտնվում էր քաղաքից դեպի հյուսիս: Ձեռագիրը շատ մաքուր էր ու կոկիկ, եւ բոլոր սխալները խնամքով ծածկված էին սպիտակեցնող նյութով: Ես ամբողջ սրտով կլանված կար-

դում էի նրա առաջին վեպը, իսկ նա ամենայն ուշադրությամբ ինձ էր նայում: Չկարողացա, սակայն, ավարտել, բայց ո՛չ նրա համար, որ կարծում էի, թե վատ է գրված եւ անհաջող: Տասնչորս տարեկան աղջկա դեպքում դա ըստ էության միանգամայն գրագետ եւ ավարտուն ստեղծագործություն էր: Ավելի շուտ պատճառն այն էր, որ նա այդքան բացահայտորեն ամեն բան ընդգրկել էր վեպում: Հրեշի մռնչոցն ակներեւաբար կապված էր մի քանի փողոց հեռվից լսվող զանգի ձայնի հետ, եւ փողոցը, որտեղ ապրում էինք, նկարագրված էր ամենայն մանրամասներով՝ մորաքրոջս ամուսինն ու մորաքույրս, փողոցում եղած ամեն բան ամեն մեկի մասին: Բոլոր ցնցող բամբասանքներն ու ակնարկ-զրպարտությունները, որ նա եզրակացրել էր իր ամեն օրվա լսածներից: Նա նայում էր ինձ՝ ճիշտ ինչպես այն ժամանակ, երբ հարցնում էր, թե արդյոք լսե՞լ եմ այդ ձայնը, լայն բացված աչքերով զննելով դեմքս, հուսալով, որ իրեն արժանահավատ պատասխան կտամ:

«Հնչյունների նվագախումբը» զբաղեցնում էր նոթատետրի առաջին տասնմեկ էջերը, եւ անավարտ էր:

-Ինչ ես մտածում սրա մասին, քույրիկ,- հարցրեց նա:

-Լավ է գրված:

Փակեցի նոթատետրը եւ ժպտացի նրան:

Ես նրան պատասխան էի տվել եւ հույս ունեի, որ այս անգամ էլ կհամոզվի: Իմ հաճոյախոսությունը շփոթեցրեց նրան:

-Ես միայն մի փոքր բան եմ գրել,- ասաց:- Երկար ժամանակ կպահանջվի, մինչեւ ավարտեմ:

-Ուրեմն լավ կանես՝ շարունակես գրելը:

Նոթատետրը դրեցի մեր գրասեղանի վրա, կարծես այն այրում էր ձեռքերս:

-Հա:- Վիպասանը վերցրեց նոթատետրը, ասես այն գանձ լիներ, եւ սեղմեց կրծքին:- Բայց ես դա հորինել եմ: Ես փայլուն ավարտ եմ գտել: Այս քանի օրը հանկարծ մտածեցի այդ մասին: Այսպես եմ ավարտելու՝ «Ողբերգություն ներկայացնող թատրոնները ողբերգական վախճան կունենան»: Ի՞նչ ես կարծում: Լավ չէ՞: «Ողբերգություն ներկայացնող թատրոնները ողբերգական վախճան կունենան»:

Գրասեղանի մյուս կողմից նա կրկին շեշտեց նախադասությունը: Ակնհայտ էր, որ շատ հպարտ է իր այդ արտահայտությամբ: Նա կզակը դրեց գրասեղանին եւ աչքերը վեր հառելով նայեց ինձ՝ վախենալով, որ կարող եմ մոռանալ իր ասածը:

Բայց դա շատ վաղուց էր, եւ դրանից հետո շատ բան է պատահել. ամառային արձակուրդներից հետո մայրս որոշեց, որ մեր ընտանիքը տեղափոխվի Վանֆու փողոցից, այնպես որ՝ վիպասանուհին եւ ես հեռացանք իրարից: Վանֆու փողոցի աղմուկն ու իրարանցումը ծածկեցին բոլոր դեպքերն ու իրադարձությունները, մանրամասները, նույնիսկ այն, թե ինչպիսի տեսք ուներ նա, ճիշտ այնպես, ինչպես խլացրել-խեղդել էին այն մեղեդային էտյուդը:

Այդպես էր դեռ տասն օր առաջ:

Տասն օր առաջ վիպասանուհին ընկավ Յունան քաղաքի Երրորդ սիմֆոնիկ նվագախմբի երաժշտական դահլիճի օթյակի պատշգամբից: Ներկայացվում էր Չայկովսկու «Պաթետիկ» սիմֆոնիան, որը ղեկավարում էր եվրոպացի մի խմբավար: Դահլիճը լեփ-լեցուն էր, եւ երբ մարդիկ արդեն հեռանում էին, նա հանկարծ ընկավ՝ ապշեցնելով բոլորին: Պարզ չէր՝ հավասարակշռությո՞ւնն էր կորցրել, թե՞ ինչ-որ մեկը հրել էր: Ոչ մի փաստ կամ ապացույց չկար: Պատշգամբը գետնից շատ բարձր չէր: Նա ընկավ անցումներից մեկի վրա, եւ նրան անմիջապես տեղափոխեցին շտապ օգնության կենտրոնակայան: Տասն օր կոմայի մեջ էր, ապա դադարեց շնչել:

Միայն ամբողջ մի հավերժություն թվացող այս ամենից հետո ես վերջապես նորից կարդացի այն տողը՝ «Ողբերգություն ներկայացնող թատրոնները ողբերգական վախճան կունենան»:

Վիպասանուհին մեկնվել էր աշխատասեղանին եւ կզակով սեղմել էր նոթատետրը, դեմքը ողողված էր լուսամուտից ներթափանցող լույսով, երբ քրքջում էր.

-Դա իմ պատմության վերջին տողն է: Վատ չէ, հը՞:

Իսկապես վատ չէ:

Վիպասանուհու մահը Յունան խաղաղ քաղաքի խոսակցության թեման դարձավ: Հաջորդ օրը դա բոլոր թերթերի գլխավոր նյութն էր: Մի գիշերվա մեջ նա մայրաքաղաքային օրաթերթի աննշան թղթակցից վերածվեց ազգային մեծ արվեստագետի: «Յունան դեյլի» թերթն ամենայն մանրամասնությամբ ներկայացրել էր ողբերգությունը՝ տպագրելով նաեւ վիպասանուհու լուսանկարը: Լուսանկարում նրա մազերը դեռ երկար էին, եւ հագին գորշ-ճերմակավուն վերնաշապիկ էր: Նա անսովոր նրբագեղ տեսք ուներ: Միտումնավոր ներկայացված այդ գեղեցկությունն, անկասկած, կարժանանար օտարների համակրանքին ու կարեկցանքին:

Յունանի 6-րդ հեռուստալիքը նաեւ հարցազրույց վարեց վիպասա-

նուհու մոր՝ իմ մորաքրոջ հետ: Նա կանգնած էր՝ վշտից խորտակված, մազերն այնպես գզգզված, որ սարսափելի էր նայելը, իսկ դեմքն Է՛լ ավելի էր բշտիկներով պատվել: Վանֆու քաղաքի բոլոր բնակիչները խմբվել էին նրա ետեւում եւ իրենց բարոյական աջակցությունն էին հայտնում դժբախտության այդ ժամին: Մորաքրոջս եւ մեր հարեւանների խոսքերով՝ վիպասանուհին դարձել էր ամենասիրելի դուստրը, եւ մայրն ու դուստրն իրար համար ամեն ինչ էին, միմյանց հանդեպ հարգալից եւ սիրող. դա սաստիկ հուզեց հեռուստալրագրողին: Հոյակապ հնարավորություն էր ներկայանում՝ վերահրատարակել վիպասանուհու մի քանի հետաքրքիր գեղարվեստական ստեղծագործություններ, որ նախկինում երբեք 10 000 օրինակից ավելի չէին տպագրվել: Նրա անավարտ վեպը՝ «Հնչյունների նվագախումբը», շարունակաբար սկսեց տպագրվել մայրաքաղաքի օրաթերթում եւ այն աստիճան դարձավ քննարկումների կիզակետ, որ ամեն ինչով հետաքրքրվող որոշ մարդիկ նույնիսկ փորձեցին այդտեղ նրա մահվան հետ կապված գաղտնի, դավադիր տարրեր փնտրել:

Ասում են, թե վեպի ստեղծումը կապված էր Յունան քաղաքի Երրորդ սիմֆոնիկ նվագախմբի հետ, ինչի առիթով նվագախմբի խեղճ ղեկավարը մռայլ ու վշտալից դեմքով հանդես եկավ հեռուստատեսությամբ՝ խորը ցավ եւ ափսոսանք հայտնելով իրադարձությունների այս անսպասելի շրջադարձի համար եւ հեռուստադիտողներին հավաստիացնելով, որ Համերգասրահը մտադիր է ուժեղացնել իր անվտանգության նախազգուշական միջոցները՝ հետագայում ցանկացած ողբերգությունից խուսափելու համար: Վիպասանուհու մահով վերջնականապես իրականություն դարձավ ամբողջ կյանքում ունեցած նրա ցանկությունը՝ նա դարձել էր այն անձը, որ միշտ երազել էր դառնալ:

«Ողբերգություն ներկայացնող թատրոնները ողբերգական վախճան կունենան»:

Ճիշտն ասած, նրա մահը չէր, որ ինձ ստիպեց մտածել այդ նախադասության մասին: Չորեքշաբթի մի օր էր, մոտ վեց ամիս առաջ: Ինչպես միշտ, աշխատանքի գնալիս տեղական թերթի մի օրինակ գնեցի՝ ավտոբուսով քառասուն րոպե ճանապարհ անցնելու ժամանակ ինչ-որ բան կարդալու համար: Եվ թերթի հավելվածում աչքովս ընկավ վիպասանուհու՝ շարունակաբար տպագրվող նոր վեպը՝ «Հնչյունների նվագախումբը» վերնագրով:

«Հնչյունների նվագախումբը»
Հեղինակ՝ Լյու Ժունժուն

Գլուխ 1
Փողհարը, որ վերականգնում է հիշողությունը

-Ամեն անգամ, երբ լսում եմ շեփորի ձայնը, չեմ մտածում, թե դա ես եմ նվագում: Այնպես է հնչում, ասես ձայնը գալիս է հեռավոր մշուշներից:

Փողհարը, որ վերականգնում է հիշողությունը, կկոցեց աչքերը, բայց ոչ ոքի չտեսավ, ապա ասաց.

- Կարո՞ղ եք պատկերացնել: Ձայնն ասես ելնում է իմ ետեւում գտնվող խոր մի հովտից՝ մառախուղի պես տարածվելով, կլանելով ամբողջ բեմահարթակը:- Նա ընդգրկող մի շարժում արեց ձեռքերով:

Ահա ինչպես էր սկսվում այն:

Ես ապշած էի: Հենց միայն անունը տեսնելով՝ ականջներիս մեջ նորից հնչեցին Վանֆու փողոցի բոլոր ձայները: Այն ամենն, ինչ այդտեղ եղել էր տեղափոխվելուցս առաջ, բոլոր հիշողությունները, քաղաքի տեսքը, թե ինչպես ենք ես եւ Լյու Ժունժունը դպրոցից տուն վերադառնում, տանտիրուհիների եփած ճաշի բույրը, այն ամենն, ինչ նա ասում էր ինձ՝ փորի վրա պառկած, նոր հորինած տողերը, որ հպարտորեն ներկայացնում էր ինձ, հեռավորությունից դուրս լողալով՝ երեւութացան աչքերիս առջեւ:

Հիշեցի այն տողը, որ միշտ ինձ հետ էր: Եվ անմիջապես հայտնվեց, հենց որ արմունկով թեթեւ հրեցի: Ասես երբեք չէի էլ մոռացել:

Նախքան ընդմիջման գնալը հաղորդագրություն ուղարկեցի նրան՝ հուսալով, որ չի փոխել իր բջջային հեռախոսի համարը: Այսպես գրեցի. «Տեսա նոր վեպդ»:

Բայց նա չպատասխանեց:

Այդ օրը տավարի մսով ու տոմատով բրինձ կերա, հետո, նախքան նորից վեր բարձրանալը, վերուվար արեցի այն նրբանցքով, որ ձգվում էր հրատարակչատան կողքով: Երբ վերելակում էի, հեռախոսս հանկարծ զանգեց: Նա էր: Ոչինչ չկարողացա լսել: Արագ սեղմեցի կոճակը, որպեսզի կանգ առնեմ հաջորդ հարկում, եւ դուրս ցատկեցի վերելակից՝ մի քանի անգամ բղավելով՝ «Ողջո՛ւյն»: Վերջապես լսեցի նրա ձայնը՝ «Քույրի՛կ, քույրի՛կ»:

-Հե՛յ, ողջո՛ւյն,- պատասխանեցի:

- Հե՛յ, որտե՞ղ ես: Կապն ինչո՞ւ է այսքան վատ,- Լյու Ժունժունը խոսում

էր մտերմիկ տոնով, չնայած ամիսներ շարունակ չէինք խոսել:

-Աշխատանքի վայրում,- ասացի:

-Գո՞րծ ես ճարել,- ականջներին չէր հավատում:

-Ըհը՛: Անցյալ տարի ավարտեցի:

-Ինչ լա՛վ է: Վերջապես ավարտեցի՛ր: Ինձ թվում էր՝ դեռ սովորում ես,- նա խոսեց շեշտված, ձայնը խզվեց, եւ սկսեց հազալ:

-Դու լա՞վ ես: Հո չե՞ս մրսել,- հարցրի:

-Չէ՛, չէ՛:

Զգացի, որ մի կում ջուր խմեց: Կոկորդը մաքրեց եւ ասաց.

-Նոր եմ արթնացել: Կոկորդս մի քիչ համը հանեց:

-Պարզ է: Գրածս տեսա՞ր,- հարցս խնամքով ձեւակերպեցի:

-Հա: Ստացա:

Նրա պատասխանն անսպասելիորեն պարզ էր ու անկեղծ:

-Վերջերս ի՞նչ ես արել,- հարցրի:

-Առանձնապես ոչինչ,- պատասխանեց ուրախ ձայնով:

Չգիտեմ, թե երբ սկսվեց դա, բայց թվում էր, թե Լյու Ժունժունը յուրացրել էր նրբազգաց լինելու արվեստը: Գուցե դա սովորել էր իմ չափազանց հիստերիկ մորաքրոջ բացասական օրինակից: Ամեն օր դասերից հետո մեր տուն էր շտապում կամ երկար նամակներ էր գրում ինձ, բայց այդ օրերը վաղուց էին անցել:

-Ըմմմ,- մի պահ չիմացա ինչ ասել:

-Հա՛: Ասում էիր՝ վեպս կարդացի՞ր,- նա ինքը բացեց թեման:

-Կարդացի ու մի քիչ անհանգստացա քեզ համար,- ասացի:

-Ինձ համար մի՛ անհանգստանա: Ոչ մի վատ բան չկա: Ես սիրահարված եմ, եւ այնքան երջանիկ եմ: Վերջում կհասկանաս:

Նա սկսեց ծիծաղել:

Հենց այդպես էլ ասաց՝ «Վերջում կհասկանաս»: Խոսակցությունն ավարտեցինք, եւ ես չորս հարկ ոտքով բարձրացա դեպի իմ գրասենյակ: Նստեցի գրասեղանիս մոտ եւ ավարտեցի թերթում տպագրված առաջին գլուխը: Այդ առաջին գլխում գլխավոր կերպարները երեքն էին՝ «ես», խմբավարը եւ փողհարը: Որպեսզի պարզ լինի, ասեմ այսպես. խմբավարն ու «ես» սիմֆոնիկ նվագախումբ «էինք» ստեղծել, իսկ փողհարը մեր թեկնածուներից մեկն էր:

Իհարկե, դա բոլորը չէ: Հաճախակի հիշատակվում էր հրեշի մասին, որը շարունակում էր մռնչալ քաղաքի հյուսիսում գտնվող աղբակույտերի մեջ: Նա արդեն հայտնվել էր «Հնչյունների նվագախմբի» առաջին դրվա-

գում եւ ինձ վրա խորը տպավորություն էր գործել, բայց այս անգամ նա ձայնը կտրել էր հենց պատմության սկզբից:

«Գազանի ձայնը մարել էր, եւ նա ոչ միայն անձայն էր, այլեւ անվնաս»,- գրում էր Լյու Ժունժունը:

Դրանից հետո, անհայտ պատճառներով, դասական շատ երաժիշտներ քաղաքում կորցնում են իրենց աշխատանքը, իսկ սրճարաններում երաժշտությունը դադարում է հնչել: Հետո հայտնվում է խմբավարը եւ հայտարարում, որ եթե ինքը նվագախումբ հիմնի, եւ նվագեն Մալերի թիվ 2 սիմֆոնիան, ապա հրեշը նորից կմռնչա:

«Ես» հավատում «եմ» խմբավարի անհեթեթ պնդմանը եւ օգնում նրան երաժիշտներ հավաքագրելու: Քաղաքում հրեշի մասին տարբեր հիշողություններ են պտտվում, բայց ինչ վերաբերում է «ինձ», «իմ» հիշողությունն այսպիսին է. «Հրեշի մռնչոցը կտրվելուց շատ ժամանակ չէր անցել, երբ հայրս մահացավ: Աշխատանքից տուն վերադառնալիս նրան հարվածել էր բեռնատար մեքենան: Ուժեղ հարվածը նրան թռցրել էր օդի միջով՝ նետելով 17- 18 մետր հեռու: Դա ուղիղ յոթն անց քսան րոպեին էր»:

Համեմատած մեր փոքր ժամանակվա հետ՝ բացի նրանից, որ գրածը շատ ավելի կոկիկ ու մշակված էր, եւ որ նա վերջապես շոշափել էր սիրո ու մեկ գիշերվա հանդիպման թեման, Լյու Ժունժունն ըստ էության շատ չէր փոխվել: Նրա պատմություններում ես էլի կարող էի հստակ զանազանել իր կյանքի դեպքերը, եւ նա մշտապես անդրադառնում էր Դելֆին Բարին:

Դելֆին Բարն այն վայրն էր, որտեղ խմբավարը հարցազրույց է անցկացնում բոլոր նոր երաժիշտների հետ, եւ «Ես» ի վերջո քնում «եմ» փողհարի հետ: Ակնապիշ նայում էի թերթին, ասես դա ինձ օգնելու էր հասկանալ, թե ինչու է նա այդպես գրել: Կամ ավելի ճիշտ, ոչ թե նրա համար, որ չգիտեի պատճառը, այլ՝ որ պարզապես չէի ուզում մտածել այդ մասին: Բայց Լյու Ժունժունը ծանուցում էր՝ «Փողհարը, որ վերականգնում է հիշողությունը»: Նա այնքան լավն էր: Այդ օրը երեք անգամ կարդացի գրածը: Պատմությունը, հավանաբար, պարզապես այլոց մասին էր: Պարզապես մեկ այլ արտառոց պատմության սկիզբ: Բայց ինձ համար այն հուսահատ մի ազդանշան էր Լյու Ժունժունից: Ինչն էր պատճառ դարձել, որ նա ամենեւին չմտածի զգուշության ու շրջահայեցության մասին: Ասես փորձում էր ազատվել սեփական մարմնից:

Բայց նա չէր արդարացնում ընթերցողի ենթադրությունները:

Առաջ, երբ Լյու Ժունժունը մեկ կամ երկու գիրք էր հրատարակել, հարցրի նրան.

-Ինչո՞ւ ես միշտ քո պատմություններում ընդգրկում Դելֆին Բարը:

Այդ ժամանակ այցելել էր իմ հանրակացարան եւ մահճակալիս եզրին նստած, հայելին ձեռքին՝ իր նոր շրթներկն էր փորձում: Նա հայելին ցած դրեց եւ ձեւացնելով, թե զարմացած է, պատասխանեց այնպես, ասես օպերայում երգում է.

-Մարդ ինչպե՞ս կապրի առանց Դելֆին Բարի:

Սա նրա մշտական արտահայտությունն էր այդ ժամանակ: Դա այն տարին էր, երբ նա վերջնականապես տեղափոխվեց մորաքրոջս մոտից եւ բնակարան վարձեց՝ իր հեղինակային հոնորարների հաշվին: Թեեւ դա փոքր-ինչ սպարտայական վիճակ էր, եւ նրա հարեւանները բոլորն էլ ինձ համար կասկածելի տեսք ունեին, նա իրեն դեռ յոթներորդ երկնքում էր զգում եւ շարունակում էր ասել. «Ինչպե՞ս կարելի է ապրել առանց շրթներկի: Ինչպե՞ս կարելի է ապրել առանց վանիլային պաղպաղակի: Ինչպե՞ս կարելի է ապրել առանց Ցյանմեյ Մոլի»: Մի օր նույնիսկ ասաց. «Քույրիկ, ինչպե՞ս կարող եմ ապրել առանց քեզ»:

Նրա համար հաճելի էր նման բաներ ասել, կարծես թե մեր զգացմունքներն ամբողջովին կվերանային, եթե չասեր: Երբեմն զանգում էր ինձ ինչպես ծարավից մեռնող մեկը, որպեսզի պարզապես հայտարարի. «Քույրի՛կ, ես կարոտում եմ քեզ, կարոտում եմ քեզ, կարոտո՛ւմ եմ»: Եվ երբ հասնում էր գերագույն հուզմունքի աստիճանի, ավելացնում էր. «Քույրիկ, ինչպե՞ս կարող եմ ապրել առանց քեզ»: Իհարկե, իրականությունը բոլորովին այլ էր: Մենք բավականին կատաղի վիճեցինք եւ հեռացանք իրարից: Բայց Լյու Ժունժունը չէր նեղացել: Նա կարող էր պարզապես կրկնել բերանից դուրս եկած առաջին արտահայտությունը:

Մորս հեռախոսազանգից կարողացա զգալ, որ Լյու Ժունժունի մահը մեկ այլ մահացու հարված էր մորաքրոջս համար: Նա լաց էր եղել ամբողջ օրը՝ պատմելով բոլորին, ովքեր եկել էին իրեն տեսնելու, իր ծանր աշխատանքի եւ տառապանքի ու թշվառության տարիների մասին: Այդպես պատմում էր անգամ նրանց, ում չէր էլ ճանաչում:

-Բոլորը շատ հոգնել էին նրա պատմածներից,- մեղադրող տոնով ասաց մայրս:

Մայրս ասաց, որ մարդիկ ձանձրացած ու զայրացած էին նրա տրտունջներից, եւ եթե հարազատներն էին այդպես արձագանքում, էլ ի՞նչ երաշխիք, թե ուրիշները ցավ կապրեին Յունան մեծ քաղաքում: Լյու Ժունժունի այդ հանրահայտ անկումը կարող էր միայն զավեշտական արձա-

գանք առաջացնել թերթի տեղական լրատվության բաժնում: Ես խաղում էի ձեռքիս բռնած թերթի հետ՝ նորից ու նորից կարդալով նրա մասին գրված լրատվությունը, փորձելով հասկանալ, թե ինչ կզգա օտարը, երբ կարդա դա:

Հրապարակումներում հանգուցյալ վիպասանուհին իր շնորհները շռայլորեն փոխանցում էր մյուսներին. այն մեկնաբանները, որոնք բարձր էին գնահատում նրա վեպերը՝ համարելով բացառիկ, եւ նշում, որ նա չափազանց համեստ էր ու աշխատասեր, հիշատակում էին քաղաքային թերթի խմբագրին, ինչպես նաեւ մորաքրոջս ու իր փողոցի բոլոր հարեւաններին: Դրանց թվում էր նաեւ տնօրեն Ինը՝ խմբագրության կառավարիչը: Թերթերում Լյու Ժունժունի մահվան մասին լուրերի հրապարակման հաջորդ օրը տնօրեն Ինը, ինչպես միշտ, հարգանքով անցավ իմ գրասեղանի մոտով, բայց կանգ առավ եւ հանգիստ ասաց.

-Օրիորդ Յան, «Հնչյունների նվագախումբը» գործը հավանության է արժանացել: Դուք հիմա պետք է հետեւեք դրան:

Ես զարմանքից պապանձվել էի: Հազիվ կես ամիս առաջ այս գրասեղանի մոտ տնօրեն Ինը մերժեց իմ առաջարկությունը եւ ամենակտրուկ ձեւով ինձ խորհուրդ տվեց.

- Օրիորդ Յան, մենք այստեղ աջակցում ենք ինտելեկտուալ բարձր արժեք ունեցող գրականությանը: Ինչպե՞ս կարող էիք այդպիսի աղբ առաջարկել: Լսել եմ՝ հեղինակը ձեր ազգակա՞նն է: Այդուհանդերձ, չենք կարող այդ տեսակ աղբը տպագրել:

Հավանաբար նկատելով իմ տարակուսանքը՝ տնօրեն Ինը շարունակեց.

-Նախագահ Չժոուն նույնպես բարձր է գնահատում այս ստեղծագործությունը, օրիորդ Յան: Պետք է ջանաք, որ ամեն բան լավ լինի: Վստահեք ինձ: Իսկապես շատ լավ գիրք է լինելու:

-Բայց...,- փորձում էի բառեր գտնել:- Իսկ հեղինակային իրավո՞ւնքը...

-Աստվա՛ծ իմ,- տնօրեն Ինը սարսափած ինձ նայեց:- Ինչո՞ւ դեռ չեք սկսել հեղինակային իրավունքի հարցերով զբաղվել: Անհարմար կլինի: Առաջարկում եմ հնարավորինս արագ կապ հաստատել: Ի վերջո, հեղինակը ձեր զարմուհին էր: Մի՞թե հեշտ չէ խոսել հարազատների հետ: Մենք սովորականից ավելի լավ պայմաններ կարող ենք առաջարկել, բայց լավ կլիներ՝ հնարավորինս ցածր լիներ...

Նա սկսեց պատվերներ տալ՝ նախքան կկարողանայի պատասխանել.

-Կարծում եմ հենց այսօր էլ պետք է գնաք եւ ամեն բան կարգավորեք:

Երկաթը տաք-տաք են ծեծում: Մենք ուզում ենք, որ այս գիրքը ժամանակին տպագրվի՝ ամռան արձակուրդների շրջանում:

Հինգ րոպե հետո տնօրեն Ինը դուրս կանչեց ինձ եւ պահանջեց, որ այդ երեկո զանգեմ իրեն՝ պատրաստի պատասխանով: Դեմքի արտահայտությունից այն տպավորությունն ստացա, թե գլուխգործոցի մասին ենք խոսում:

Քանի որ Լյու Ժունժունն այլեւս չկար, ես պետք է գնայի եւ խոսեի նրա միակ՝ ապրող հարազատի հետ:

Ամբողջ ճանապարհին մտքիս մեջ միայն կրկնում էի, թե ինչպես եմ քննարկելու այդ թեման: Լյու Ժունժունի մարմինը դեռ չէր սառել, իսկ հեռուստատեսությամբ մորաքրոջս խայտառակ ցուցադրումը դեռեւս թարմ էր իմ մտքում: Ականջներիս մեջ հնչում էր նաեւ մորս տրտունջը: Ինձ մնում էր միայն փորձել խոր շունչ քաշել:

Սկսեցի նրանից, որ զանգ տվեցի մորաքրոջս:

Հեռախոսը մի քանի անգամ զանգեց, մինչեւ որ նա վերցրեց լսափողը:

-Ալո,- ձայնը մի քիչ խռպոտ էր:

-Մորաքույր,- մի պահ լռեցի,- ես եմ:

-Ո՞վ է,- հարցրեց անվճռական, երբ փորձում էի հիշել, թե որքան ժամանակ է անցել վերջին անգամ նրան զանգելուցս հետո:

-Յան Ֆանն է,- ասացի:

-Ա՜խ, Ֆանֆան, կներես: Ես այնքան խառնված էի: Դու այսօր գալո՞ւ ես,- սպասողական արձագանքեց մորաքույրս:

-Անպայման: Ժամանակ ունեմ: Հենց հիմա կգամ:

Շնորհակալ եղա իմ բախտավոր աստղերին եւ շարժվեցի հոսանքին համընթաց:

-Օ՜, սիրելիս, դու այնքան զբաղված ես աշխատավայրում: Ինչպե՞ս կարող ես գալ եւ տեսնել ծեր մորաքրոջդ: Մոռացի՛ր այդ բանը: Մոռացի՛ր, - ասաց նա:

-Ամենեւին: Արդեն ճանապարհին եմ,- պատասխանեցի:

-Լավ, ուրեմն: Կսպասեմ քեզ: Այնքան ուշադիր ես, Ֆանֆան:

Մորաքրոջս ձայնը հանկարծ փոխվեց, եւ ես զգացի, որ ուր որ է կհեկեկա:

-Մի վայրկյանում այդտեղ կլինեմ: Շուտով կտեսնվենք:

Հեռախոսն անջատեցի, նախքան կհասցներ բան ասել:

Մինչ Յունան քաղաքը շարունակաբար փոխվում էր, Վանֆու փողոցը թվում էր՝ միշտ նույնն է մնում: Սակայն այսօր այլ էր: Երբ հասա մորաք-

ոջս տանը, նկատեցի, որ ներքնաբակի մուտքի մոտ կանգնած հովանոցածեւ ծառն անհետացել է: Երբ ներս մտա, այդտեղ Լյու Ժունժունի սգո սրահն էր, ամեն բան դասավորված էր ներքնաբակում: Ամենուր հուղարկավորության գունավոր ծաղկեպսակներ ու ծաղկաշղթաներ էին, եւ չինական այրվող թղթե կուռքի ծուխն աչքերս արցունքներով լցրեց:

Մորաքույրս նստած էր սգո սրահում: Կեսօրից հետո շատ այցելուներ չկային: Նա գլուխը կախել էր, ասես քնած լիներ:

Ես մոտեցա նրան եւ ձայն տվեցի.

-Մորաքույր:

Նա ուղիղ նստեց, ասես հենց նոր էր արթնացել տեսած երազից, եւ հանկարծ բռնեց ինձ ու քաշեց դեպի իրեն՝ բարձր կանչելով.

-Ժունժո՛ւն, Ժունժո՛ւն:

- Մորաքո՛ւյր,- ասացի կրկին:

Միայն այդ ժամանակ հասկացավ, որ ես եմ, եւ, ետ ընկնելով աթոռին, մրմնջաց.

-Ֆանֆան:

Ցած դրեցի ձեռքիս պայուսակը եւ խնկի ծողիկ վառեցի Լյու Ժունժունի համար: Սգո դիմանկարում նա ինձ այնքան անծանոթ ու անսովոր թվաց, չնայած հանդիպել էինք ոչ այնքան վաղուց: Երկու օր առաջ հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունքում ես անօգնական նայում էի, երբ նա վերջին շնչում էր: Բայց համեմատած ամենայն բծախնդրությամբ արված լուսանկարի հետ՝ նրա դեմքը դեռ մահից առաջ բոլորովին այլ կնոջ դեմք էր:

Ծնկի իջա՝ ձեռքերս իրար սեղմելով: Միտքս դատարկ էր, իսկ իմ ետեւում մորաքույրս թաշկինակով քիթն էր մաքրում:

Երբ ոտքի կանգնեցի, տագնապեցի՝ տեսնելով, որ նրա սգո դիմանակարը նստած էր այն գրասեղանին, որի վրա շատ տարիներ առաջ մեր տնային աշխատանքներն էինք կատարում: Կամ գուցե այն գրասեղանը չէր: Հնարավոր է՝ պարզապես պատահական մի գրասեղան էր, բայց քանի որ Լյու Ժունժունի դեմքն այդտեղ էր երեւում, ուղղակի դարձավ տարիներ առաջվա մեր գրասեղանը:

Ես սարսափած էի եւ ետ-ետ գնացի: Մորաքույրս արագ մոտեցավ եւ բռնեց ինձ:

-Ֆանֆան, լա՞վ ես:

Ընդամենը մի քանի օր էր անցել, ինչ տեսել էի նրան, բայց մորաքրոջս մաշկը հանկարծակի թուլացել, թոշնել էր, իսկ դեմքին նոր դարչնագույն

բիծ էր հայտնվել: Նա կորցրել էր քաշը, իսկ ճակատը ծածկված էր քրտինքի մանր կաթիլներով: Նախկինում նա միշտ մեղադրել էր Լյու Ժունժունին եւ իր ամուսնուն՝ իր մարող գեղեցկության համար:

-Դուք երկուսով կյանքս խորտակել եք,- ամենայն կրքոտությամբ կշտամբում էր նրանց:

Բայց հիմա նույնիսկ այդ եռանդն էր լքել նրան: Նա գրկել էր ինձ եւ շշնջում էր.

-Հենց նոր երազում Լյու Ժունժունին տեսա: Այնքան պստլիկ էր, եւ հագին սվիտեր էր, որի վրա պղպջակներ փչող երեխա էր:

Մեր զրույցն այսպես շարունակվեց՝ սկսած սվիտերից, որի մասին վաղուց մոռացել էի, եւ վերջացրած մեր տարբեր հարազատների հետ կապված բոլոր մանր գործերով: Նա խոսեց իմ տատի ու պապի մասին, որոնց երբեք չէի տեսել, հորս մասին, եւ նույնիսկ չմոռացավ հիշել մորս: Նախկինում շատ քիչ թեմաների շուրջ կարող էինք զրուցել, եւ դարձյալ այն մասին էինք խոսում, ինչ տեղի էր ունեցել մինչեւ Վանֆու փողոցից մեր հեռանալը: Չնայած դրան՝ մորաքույրս կարողացավ անթիվ թեմաներ ի հայտ բերել: Նա անընդհատ խոսում էր ու խոսում, եւ ես չէի կարողանում բառ իսկ խոսել:

Երբ վերջապես խոսելու հնարավորություն ստացա, խոսակցությունը տարա իմ ուզած ուղղությամբ: Ամեն ինչ լավ ստացվեց, եւ մորաքույրս համաձայնեց իմ բոլոր խնդրանքներին: Նա նույնիսկ ինձ տվեց Լյու Ժունժունի բնակարանի բանալին եւ ասաց, որ կարող եմ գնալ ու վերցնել ինչ ուզում եմ:

Մենք շարունակեցինք փոքրիկ խոսակցությունը մի քիչ ավելի երկար, մինչեւ 5:15:

Մեկ էլ մորաքույրս ոտքի կանգնեց, ասես զարթուցիչ լիներ, եւ ասաց.

-Հիմա պետք է գնամ դեղս խմեմ:

Երկար տարիներ մորաքրոջս արյան մեջ շաքարի մակարդակը բարձր էր, եւ նա ամեն օր պարտաճանաչ կերպով խմում էր իր դեղը:

-Վախենում է, որ կմեռնի, եթե հանկարծ մեկ րոպե անգամ ուշացնի,- ծիծաղելով ասում էր ինձ Լյու Ժունժունը:

-Ես հիմա գնում եմ, - ասացի մորաքրոջս:

-Լավ: Չմոռանաս յոթերորդ օրը գալ:

Մորաքույրս շրջվեց կրունկների վրա ու ձեռքով ինձ հրաժեշտի նշան արեց՝ վերադառնալով ներս եւ շուտով անհետանալով ստվերում:

Չնայած հարյուր անգամ փորձել էի, թե ինչպես համոզեմ մորաքրոջս,

փաստորեն, դա շատ պարզ ու հասարակ բան էր: Ես միայն ասացի.

-Ժունժունը մեր ընկերության հետ պայմանագիր է կնքել իր վերջին վեպը հրատարակելու համար: Վեպն ավարտված չէ: Կուզեի գնալ ստուգել, թե արդյոք էլի ինչ-որ բան չի՞ գրել, որ դեռ լույս չի տեսել:

Ճիշտ ինչպես տնօրեն Ինը, մի պատմություն հորինեցի: Բայց, ի տարբերություն նրա, իմ պատմությունն ամբողջովին սուտ չէր: Այն ժամանակ, երբ վեպի կեսն արդեն շարունակաբար լույս էր տեսնում, ես իսկապես կապվեցի Լյու Ժունժունի հետ եւ նրան ասացի, որ կուզեի հրատարակել «Հնչյունների նվագախումբը»:

Նա միանգամից համաձայնեց: Երբեք այնպիսին չէր, որ մեծամտանար: Նույնիսկ ասաց.

-Քույրիկ, լիովին վստահում եմ քեզ:

Երբ հեռախոսով զրուցում էինք, պայմանավորվեցինք, որ մեկ ուրիշ անգամ, երբ առաջարկը հավանության արժանանա, կխոսենք մանրամասների մասին: Սակայն, ճիշտ այնպես, ինչպես նախորդ դեպքերում, դա երբեք տեղի չունեցավ:

Երբ Վանֆու փողոցից դուրս եկա, արդեն բավականին ուշ էր: Գիշերվա այդ ժամին Յունան քաղաքի հյուսիսային մասը միշտ ամայի տեսք ուներ: Շատ վաղուց այստեղ էին հավաքվում եւ թափառում բոլոր քաղաք եկածներն ու արվարձանների բնակիչները: Վերջապես հիմա տարածքը վերափոխվել էր, բայց վերակառուցման պատճառով փողոցներում խառնաշփոթ էր, եւ շինարարական կապույտ վրանները ծգվում էին ուր աչքդ կտրեր, իսկ դա Է՛լ ավելի էր նմանվում աշխարհի վերջին:

Երբ հասա խաչմերուկին, ուղղությունս կորցրի, դրա համար էլ ինձ գցեցի տաքսու մեջ, շրխկոցով փակեցի դուռը եւ վեր բարձրացրի պատուհանները, ասես փախչում էի սարսափելի մի թունաքիմիկատի թափոններից: Փողոցը, որտեղ ես հասակ էի առել, ծերացել էր: Եվ չկարողացավ հետեւել տաքսու արագությանն ու մի ակնթարթում մնաց ետեւում:

Այն պահին, երբ թիկունքս հպվեց նստարանի թիկնակին, ինձ թվաց կերպափոխվել եմ՝ դառնալով Ժունժունը: Ի վերջո, երբ մենք ապրում էինք այս փողոցում, անբաժան էինք: Ես նա էի, իսկ նա՝ ես: Մեր հիշողությունն էր՝ թե ինչպես էինք դպրոց գնում եւ տուն գալիս, ինչպես էինք մեր գրպանի մանրադրամը հանում եւ պաստեղ գնում, ինչպես էինք պպզում ճանապարհին եւ դիտում Յունան քաղաքի ամենաառաջին կարմիր տաքսիների հայտնվելը, ինչպես էինք նախանձում հարուստ մարդկանց եւ ինչքան

էինք անհամբեր, որ դժվարին վիճակից դուրս գանք: Հիշողություններից գլուխս պտտվեց, եւ ես չէի կարողանում պարզել, թե որոնք են նրա ապրածները, իսկ որոնք՝ իմը: Նույնիսկ չէի գիտակցում, որ տաքսու վարորդին Ժունժունի հասցեն էի ասել, քանի դեռ չէինք թեքվել դեպի Սինֆու պողոտա:

Դա ըստ էության կարեւոր էլ չէր, քանի որ իսկապես չգիտեի, թե ուր եմ գնում:

Լյու Ժունժունն ապրում էր Ամպահայաց Առանձնատների 17-րդ հարկում: Մի անգամ արդեն մորաքրոջս հետ եղել էի այնտեղ, երբ Լյու Ժունժունը հիվանդանոցում էր, որպեսզի նրա համար մի քանի զգեստ վերցնեի:

Ես միայն հասկացա, թե շենքը եւ նրա անունը որքան անհամատեղելի էին, երբ կարողացա մոտիկից դիտել: Շենքի միջանցքները ծածկված էին ցեխի խորհրդավոր կեղտոտ շերտով, իսկ վթարային ելքերը գրեթե արգելափակված էին կուտակված աղբի զանգվածով: Երբ սպասում էի վերելակին, ոչ քաղաքաբնակ դրսեկ տղամարդուց փչող գարշահոտից ողնաշարովս սարսուռ անցավ:

Բարեբախտաբար, տղամարդն ինձ հետ նույն վերելակը չմտավ: Վահանակի վրա արագ սեղմեցի 17-րդ հարկի կոճակը, ապա առանձնության մեջ սկսեցի խորհել այդ հաստատության մասին: Մի քանի օր առաջվա շտապ այցը ինձ վրա մեծ տպավորություն չէր թողել, միայն հիշում էի, որ սենյակը բավականին կեղտոտ էր ու թափթփված, իսկ պատուհանները լայն բացված էին: Հենց դուռը բացում էիր, քամին ուղիղ խփում էր դեմքիդ:

Ի վերջո, մարտ ամիսն էր, դրա համար էլ քամու հարձակումից պաշտպանվելով՝ բացեցի դուռը: Եվ ի՞նչ: Պարզվեց, որ սենյակը մաքուր է եւ տաք: Ամեն ինչ խնամքով դասավորված էր: Կարծես նախորդ աղետի գոտին այն ժամանակվա իմ զգացողությունների հորինվածքն էր եղել: Ննջասենյակում լույս կար, եւ մարդկային թույլ ձայներ էին լսվում, ասես ինչ-որ մեկը լալիս էր:

Սա համապատասխանում էր շենքի սարսափազդու միջավայրին, եւ ես ակամա ցնցվեցի: Ներսում գտնվող մարդը նույնպես վախեցավ: Լսեցի, թե ինչպես մեկը վեր կացավ ու հարցրեց.

-Ո՞վ է:

Երիտասարդ մարդու ձայն էր, զորեղ, բայց մի փոքր խռպոտ:

Նա հարցրեց ով եմ ես, բայց հարցն ինձ շփոթեցրեց: Ինձ կորցրի՝ չիմանալով ինչ ասել: Պարզապես ասացի.

-Ես եմ:

Այդպիսի համառ սովորություն միայն Ժունժունն ուներ: Երկար ժամանակ, անկախ նրանից՝ հեռախոսով խոսելի՞ս լիներ, թե՞ դուռը թակելիս, ծանո՞թ մարդ լիներ, թե՞ անծանոթ, երբ մեկը հարցնում էր նրան՝ ո՞վ է, պատասխանում էր. «Ես եմ»: Եվ եթե հարցը կրկնում էիր, պատասխանը միշտ նույնն էր լինում: Ֆորու պես համառ էր ու իրասածի: Փորձում էի գլխին քարոզ կարդալ.

-Ինչպե՞ս կարող են ուրիշներն իմանալ, թե ով ես դու:

Բայց, եւ դա սպասելի էր, ինչպես ցանկացած այլ լուրջ հարցի դեպքում, նա անհոգ եւ անփույթ պատասխանում էր.

- Բարձրաձայն աղաղակելու համար ես պարզապես ես եմ:

Իրականում այս ամենը գլխովս անցավ մեկ վայրկյանի ընթացքում, երբ կանգնած էի դռան մոտ, եւ այդ ժամանակ սենյակի բնակիչը դուրս նետվեց: Ձեռքս բռնելով՝ նա դիմեց ինձ.

-Ժունժո՛ւն:

Ճիշտ ինչպես մորաքույրս, նա ի վերջո հասկացավ, որ ես Լյու Ժունժունը չեմ, ապա արագ բաց թողեց ձեռքս եւ ապշահար ու տարակուսած նայեց ինձ:

-Ո՞վ եք Դուք,- հարցրեց:

Իհարկե, չէի կարող պատասխանել այնպես, ինչպես Ժունժունը, եւ ասել՝ «Ես պարզապես ես եմ», դրա համար էլ ասացի.

-Ես նրա քույրն եմ:

Նա ոտքից գլուխ զննեց ինձ, ապա լիովին թեթեւացած ասաց.

-Ա՜խ, հա՛, Ժունժունն ասել է Ձեր մասին: Ողջույն, ես նրա ընկերն եմ:

Ես լուռ մնացի, մինչեւ նա հասկացավ, որ լրիվ չի ներկայացել, այդ պատճառով էլ հավելեց.

-Ես Չժոու Յունտաոն եմ:

-Ողջույն,- վերջապես պատասխանեցի՝ թաքուն կրկնելով նրա անունը:- Չժոու Յունտաո:

-Ողջույն, - ասաց նա, - ես... այստեղ եմ... որ մի երկու բան վերցնեմ:

-Հա, իհարկե,- պատասխանեցի:- Ես նույնպես այստեղ եմ, որ մի երկու բան վերցնեմ:

-Լավ: Դե, ուրեմն, Ձեզ մենակ կթողնեմ: Ես հիմա դուրս կգամ:

Նա իսկապես բարձրահասակ տղա էր, ամրակազմ, եւ, իհարկե, Լյու Ժունժունի տիպի: Բայց նա տանջված տեսք ուներ, աչքերը կարմրած էին: Դրանից ես ինձ անկոչ հյուրի պես զգացի, այդ պատճառով էլ շտապեցի ասել.

-Խնդիր չկա, շտապելու ոչինչ չունեմ: Դուք մնացեք, իսկ ես կգնամ:

Ծրջվեցի, որ գնամ, բայց նա կանգնեցրեց ինձ.

- Ամեն ինչ կարգին է: Այստեղ ինձ տխուր եմ զգում: Ինչո՞ւ չեք նստում:

Նրա դեմքի արտահայտությունն այնքան սրտաճմլիկ էր, որ նստեցի, իսկ նա գնաց խոհանոց ինձ համար ջուր բերելու, ասես տանտերն ինքն էր:

Չժոու Յունտաոն մի բաժակ նարնջի հյութ բերեց ինձ, մեկն էլ իրեն, ապա նստեց մյուս մեկտեղանոց բազմոցին եւ մի կում արեց՝ ոչինչ չխոսելով:

Լռությունը խզելու համար փորձեցի զրույց սկսել: Սովորաբար, երբ մարդ առաջին անգամ հանդիպում է իր զարմուհու ընկերոջը, խոսելու շատ բան է լինում, ինչպես, օրինակ, «Որքա՞ն ժամանակ եք ճանաչում միմյանց», կամ՝ «Ինչպե՞ս եք ծանոթացել»: Եվ լինում է նաեւ մտերիմ բարեկամից պարտադիր հորդոր. «Նա բռնկուն բնավորություն ունի, այնպես որ՝ ավելի լավ է զգույշ լինեք»: Բայց հիմա այս բոլոր հարցերն անտեղի էին թվում, եւ ես հուզված ու շփոթված՝ ընտրեցի պատահական մի հարց.

- Եվ այսպես, ինչո՞վ եք զբաղված:

Նա մի պահ ցրված էր, մինչեւ որ հասկացավ, թե ինչ եմ հարցնում իրեն, ապա պատասխանեց.

-Աշխատում եմ Մայրաքաղաքային Երրորդ սիմֆոնիկ նվագախմբում:

Ականջներս սկսեցին զնգալ, ճիշտ այնպես, ինչպես այն ժամանակ, երբ տեսա Լյու Ժունժունի շարունակաբար տպագրվող նոր ստեղծագործությունը թերթում:

-Ես շեփոր եմ նվագում,- շարունակեց նա:

Ես միանգամից ծիծաղեցի:

Իմ ծիծաղը զարմացրեց նրան, եւ նա հարցրեց.

-Ի՞նչ է պատահել:

-Ոչինչ, ոչինչ,- գլուխս տարուբերեցի եւ տիրապետեցի ինձ, երբ դեմքիս էր նայում:

Նա ոչ մի կերպ չէր հասկանա, թե ինչու եմ ծիծաղում: Գուցե կարող էր մտածել, որ դա իմ վշտից է: Բայց այդպես չէր: Ես ծիծաղեցի, որովհետեւ Լյու Ժունժունը նման էր հիմար գերմանամական: Նա իրական կյանքում եղած ամեն ինչ ընդգրկում էր իր ստեղծագործության մեջ: Եվ ես վերջապես որոշակի սփոփանք գտա «Փողհարը, որ վերականգնում է հիշողությունը» վերնագրով հատվածի մեջ: Փողհարը, որին պատկերել էր, այն փողհարը, որի հետ «եսը» մեկ գիշերվա հանդիպում էր ունեցել, այն մեկը,

որ փնտրում էր իր նախկին սիրեցյալին, որը նման էր «ինձ», իմ առջեւ կանգնած մարդն էր:

-Դուք երկար մազե՞ր եք ունեցել,- հարցրի նրան:

-Այո: Ինչպե՞ս իմացաք:

Զարմացած՝ հանկարծակիի եկավ:

Նորից ծիծաղեցի: Գուցե չէր կարդացել Լյու Ժունժունի պատմությունը: Գուցե կարդալ չէր սիրում կամ գուցե ժամանակ չուներ, դրա համար էլ հնարավորությունը բաց էր թողել ականատես լինելու, որ Ժունժունն իր մասին ամեն բան այդքան կոպիտ ու անմիջական, բայց եւ այդքան ճշգրիտ ներկայացրել է թերթում: Իր արտաքինի, մասնագիտության, անձի մասին, այն ամենի մասին, որ կարող էր տեղի ունենալ կամ իրականում տեղի էր ունեցել նրանց երկուսի միջեւ: Ամեն մի վառ մանրամասն: Ես վերհիշեցի փողհարի նկարագրությունը վեպում եւ հասկացա, որ դա իսկապես նույնն անձնավորությունն է:

Չէի կարողանում ծիծաղս դադարեցնել: Ասես իմ ծիծաղն իր սեփական տրամադրությունն ուներ: Այն փախչում էր իմ թույլ ու դյուրաբեկ մարմնից եւ լցնում ամբողջ սենյակը:

-Ծիծաղելի ի՞նչ կա,- հարցրեց Չժոու Յունտաոն՝ մի տեսակ դժգոհ ձայնով:

Ես զսպեցի ինձ՝ վերականգնելով ինքնատիրապետումս.

-Ոչինչ: Պարզապես մտածում էի որոշ բաների մասին, որ Ժունժունն ու ես անում էինք, երբ փոքր էինք:

-Հա՞: Ինչպիսի՞ բաների:

Ինձ հաջողվել էր շեղել նրա ուշադրությունը: Դրա համար էլ ստիպված էի որոշ պատմություններ մտածել Ժունժունի մասին, երբ նա փոքր էր, որպեսզի պատմեի Չժոու Յունտաոյին: Խելահեղորեն ուղեղս լարեցի՝ համապատասխան մի դեպք հիշելու, քիչ առաջ ինքնատիրապետումս կորցնելը բացատրելու համար:

Ես նրան պատմեցի քննության մասին պատմությունը: Լյու Ժունժունը ժամանակ չուներ մեզ հանձնարարված թեմայով շարադրություն գրելու, այդ պատճառով մի հաճոյացող շարադրություն գրեց՝ «Ես սիրում եմ Ձեզ, օրիորդ Չժան» վերնագրով: Նա գովելով երկինք հանեց իր նորավարտ ուսուցչուհուն, եւ դա վերջինիս այնքան խորապես էր հուզել, որ կարդաց ամբողջ դասարանի առջեւ: Դա ոչ միայն փրկեց Ժունժունին, այլեւ նա հայտնի դարձավ որպես «լավ գրող»:

Այս պատմությունը մի քանի անգամ պատմել էի նախկինում: Երբ նա

նոր-նոր սկսել էր մի քանի գործ տպագրել, ես դրանք ցույց էի տալիս բոլոր իմ ծանոթներին եւ նրանց պատմում էի այս պատմությունն ու ասում, որ Ժունժունը ծնվել է հորինող լինելու համար: Այնքան շատ էի պատմել, որ հատ-հատ գիտեի ամեն մի մանրամասնը: Եվ այնքան լավ ներկայացրի, որ Չժոու Յունտաոն ծիծաղեց:

Մենք որոշ ժամանակ միասին ծիծաղում էինք, մինչեւ որ հյուրասենյակում կրկին լռություն տիրեց, եւ նա ասաց.

-Ժունժունն իրոք որ եզակի տեսակ էր:

Էլի մի քանի բան ասաց: Քանի որ մահացել էր, իմ բուռն ու կրակոտ, փոփոխական, անկայուն զարմուհին այդպիսի չափազանցված գովասանքի արժանացավ:

Քանի որ մահացել էր, շատերս ստիպված էինք կարոտելու նրան եւ հաշտվելու մեր հիշողությունների հետ, կամ ձեւացնելու՝ թե կարոտել ենք եւ ինքներս մեզ հավատացնելու, որ այդքան չենք հեռացել նրանից: Ինչքա՛ն կատաղի վիճեցինք մեր վերջին հանդիպման ժամանակ: Ինչքա՛ն դառն ու խայթող խոսքեր ասացինք իրար եւ ինչպե՛ս երդվեցինք այլեւս երբեք իրար չտեսնել:

Բայց բոլոր այդ բաներն անհետացան, դարձան հիշողություն՝ կորցնելով իրենց գույներն ու հույզերը: Մահը նման է մաղի, որ իրեն է պահում ամեն վատ բան եւ միայն լավն է թողնում, ասես դա այն ամենն է, ինչից երբեւէ ստեղծվել ենք նախեւառաջ:

«Դա մի հնչյուն է, որ անցյալը լսելի է դարձնում»:- Ահա թե ինչպես էր այն նկարագրում խմբավարը՝ «Հնչյունների նվագախումբը» գործի առաջին գլխում:

Մենք հաճույքով զրուցեցինք, եւ, բնականաբար, զրույցը Լյու Ժունժունի մասին էր: Դրանք բոլորը ուրախ հիշողություններ էին: Չժոու Յունտաոն ժամանակ առ ժամանակ ծիծաղում էր, եւ ես նկատեցի, որ ծիծաղելիս այնքան անկեղծ է ու վարակիչ: Մենք խմեցինք մեր նարնջի հյութը, եւ նա խոհանոցից շոկոլադե թխվածք բերեց: Հետո, երբ ինձ սկսեց հետաքրքրել զրույցի ավարտը, նրա հեռախոսը զանգ տվեց:

Կարող էի ասել, որ դա կնոջ ձայն էր: Չժոու Յունտաոն վեր կացավ եւ խոսեց խոհանոցում: Նա սկսեց խոսել ցածրաձայն, բայց ես լսում էի ինչ է պատասխանում, հետո ասաց. «Ես անմիջապես կվերադառնամ»:

Երբ վերադարձավ, մի վայրկյան ասես լրիվ անծանոթ մարդ լիներ:

Ինքնատիրապետումը վերականգնելով՝ ասաց.

-Դե լավ, քույրիկ, ես հիմա դուրս եմ գալու: Ձեզ այստեղ մենակ կթողնեմ:

Ես ճանապարհեցի նրան, եւ սենյակում հանկարծ մեռյալ լռություն տիրեց: Մի որոշ ժամանակ նստել ու ապշահար հայացքով շուրջս էի նայում, ապա սեղմեցի խտասալիկային ձայնասկավառակի նվագարկչի կոճակը: Դա փոքրիկ նվագարկիչ էր: Մայրս գնել էր Լյու Ժունժունի համար, երբ նա արդեն ավագ դպրոցում էր, եւ ես մորս ասացի, որ Ժունժունը միշտ ցանկացել է նվագարկիչ ունենալ: Լյու Ժունժունն այնքան ուրախ էր, որ գրկեց եւ համբուրեց մորս, բայց մորաքույրս խոժոռվեց եւ դուրս եկավ՝ դուռը ետեւից շրխկացնելով: Մենք կանգնած էինք այնտեղ՝ նրանց հին տան պատերի մեջ, եւ իրար էինք նայում: Մայրս մի քիչ անհարմար վիճակում էր եւ չգիտեր ինչ ասեր:

Ո՞ւմ մտքով կանցներ, որ Լյու Ժունժունը ուրախ ժպիտը դեմքին այսպես կարծագանքեր՝ դիմելով մորս.

-Մորաքո՛ւյր: Վերջապե՛ս: Ես ազա՛տ եմ: Նա գնացե՛լ է:

Ճանապարհին, տուն գնալիս, մայրս ու ես խառն զգացումներով էինք լի՝ Լյու Ժունժունի ասածի հետ կապված, դրա համար էլ չէի կարող մտքիցս հանել: Եվ նա այս ամբողջ ժամանակ պահել էր նվագարկիչը:

Սկավառակն սկսեց պտտվել, եւ ես զարմացա՝ լսելով հուզախռով, դիվային տաղանդով օժտված մի հատված, որն ինձ նորից ամբողջովին շանթահար արեց: Անջատեցի նվագարկիչը, դուրս հանեցի սկավառակն ու տեսա, որ դա Մալերի թիվ 2 սիմֆոնիան էր: Լյու Ժունժունն այս հատվածի մասին հիշատակել էր իր վեպում: Խմբավարը մտադիր էր այն օգտագործել, որպեսզի հրեշին արթնացնի, Մալերի թիվ 2 սիմֆոնիան, որ կոչվում էր «Հարություն»:

Վեպում խմբավարը հավատում էր, որ ինքը պետք է միայն ղեկավարի այս հատվածի կատարումը, եւ հրեշը կսկսի նորից մռնչալ: Վեպի աշխարհում նման անտրամաբանական, չհիմնավորված ենթադրությունը բնականաբար կարող էր բանականության կողմից ընդունելի եւ բացատրելի լինել: Պատմությունը պարզապես պատմություն է, ուստի վիպասանուհին կարող էր անել ինչ ուզում էր: Նա ասում էր.

- Հրեշը կսկսի նորից մռնչալ, երբ Մալերի Երկրորդ սիմֆոնիան հնչի:

Եվ դա կատարվեց:

Բայց ակնհայտ է, որ իրական աշխարհում ամեն ինչ այդպես չէ: Լյու Ժունժունի մահից հետո չնայած իր սենյակում այս հուզախռով երաժշտությունը միացրի, բայց հրեշը հրաժարվեց նորից մռնչալ: Ցունան քաղաքի կորցրած ոչ մի բան այլեւս ետ չէր գա երբեք:

Ավելի թեթեւ՝ փոփ երաժշտության մի սկավառակ դրեցի եւ սկսեցի աննպատակ զննել նրա սենյակի իրերը: Երբ մարդիկ մահանում են, կորցնում են իրենց անձնական կյանքի գաղտնիության իրավունքը: Լյու Ժունժունը մահացել էր մերկ, վերակենդանացման բաժանմունքում: Բուժքույրերը, ովքեր նախապատրաստում էին նրա մարմինը հուղարկավորության համար, պարզապես անտեսեցին նրան կրծկալ հագցնելու իմ խնդրանքը:

Երբ զննում էի նրան պատկանող իրերը, չէի կարող չմեղադրել Ժունժունին իր տարօրինակ սովորությունների համար: Այս բոլոր տարիների ընթացքում նա դեռ հրաժարվում էր նորմալ մարդու պես իր վեպերը համակարգչով հավաքել ու տպագրել: Այդպես շատ ավելի հեշտ կլիներ խմբագրել եւ պահպանել: Բայց նա համակված էր թղթի վրա գրելու նախասիրությամբ: Նա իր գործերն սկսում էր նոթատետրում, ապա անցնում էր թղթի կտորների վրա գրելուն, մինչեւ որ դրանք ամեն տեղ գրված էին լինում եւ կարող էին լինել ամենուր: Ծատ է պատահել, երբ գրիչը ցած դնելով ուղիղ անկողին էր մտնում եւ երբ արթնանում էր, չէր կարողանում գտնել թղթի այն կտորը, որի վրա գրել էր գիշերը: Եվ արտասվախառն աչքերով զանգում էր ինձ ու լացակումած խնդրում արագ գնալ եւ օգնել, որ կորցրածը գտնի: Ամեն անգամ նա խորապես զղջում էր եւ խոստանում.

-Քույրիկ, վաղը կգնամ եւ համակարգիչ կգնեմ: Վաղն անպայմա՛ն կգնամ:

Բայց, իր շատ ուրիշ պարտավորությունների նման, ասվածը շատ շուտով մոռացվում էր: Մեկի համար, ով լեզուն օգտագործում էր այդքան հաճախակի եւ այդքան կրքոտ, այդքան բացականչական նշաններով, դադարներով ու հարցականներով լի, այդ խոստումները կորած բան էին: Դրանք նման էին հոսող ջրի. սահուն ու հպանցիկ անցնում էին նրա մարմնի վրայով՝ առանց հետք թողնելու:

Ինձ զգում էի ինչպես հինավուրց գերեզմանախույզ, որ նախնիների հանդեպ ունեցած վախից ազատվում է աստվածանարգ, անպարկեշտ խոսքեր արտաբերելով:

Բայց ինձ չհաջողվեց «Հնչյունների նվագախմբին» վերաբերող որեւէ ձեռագիր գտնել:

Փոխարենը՝ սուրճի սեղանի տակի զզրոցում հայտնաբերեցի կես տուփ ծխախոտ, որ նա չէր հասցրել ծխել, հինգ վառիչ եւ ստամոքսի դեղորայքի յոթ կիսադատարկ շիշ: Ի վերջո, որոնումներս ընդհատվեցին ձեռքիս պայուսակի միջից հնչող բջջային հեռախոսի հանկարծակի զանգով:

Զանգի ձայնն անծանոթ էր: Որոշ ժամանակ անցավ, մինչեւ հասկացա, որ դա փաստորեն Լյու Ժունժունի հեռախոսն էր: Վերակենդանացման բաժանմունքի բժիշկներն էին տվել ինձ, երբ մեկ շաբաթ առաջ հիվանդանոց էի գնացել: Նրա հեռախոսահամարների ցուցակի բոլոր խառնիխուռն մականունների, ծածկանունների, գաղտնի պայմանանիշերի թվում միայն իմն էր ընտանիքի անդամի հեռախոսահամար: Լյու Ժունժունն այն պահպանել էր պարզապես «Քույրիկ» անվամբ:

Ինչպես միշտ, զանգող հեռախոսն ասես անհանգիստ ոգի լիներ, որ թրթռում էր ձեռքիս մեջ: Զանգահարողի անունը «Գուստավ» էր: Գաղափար չունեի, թե ով է «Գուստավը»: Հավանաբար պատահական ծանոթներից մեկը, որին Լյու Ժունժունը հանդիպել էր բարում: Մարդիկ երբեք չեն հայտնում իրենց իսկական անունները: Նրանք սիրում են իրենց ամեն տեսակի շփոթեցնող մականուններով կոչել: Կարծում եմ, որ Լյու Ժունժունը նույնպես այդպիսի մի ծածկանուն ուներ: Հիմա Ժունժունը միակն էր, որը կարող էր վերծանել պայմանանիշերը, բայց քանի որ նա այլեւս չկար, չէր կարող պատասխանել որեւէ հարցի, ոչ էլ կարող էր պատասխանել իր հեռախոսին:

Հեռախոսը, հավանաբար, նույնն էր զգում, ուստի մի քանի զանգից հետո դադարեց զանգահարել:

Նորից նստեցի՝ հենվելով աթոռի թիկնակին եւ տեսա, որ ամբողջովին սառը քրտինքով եմ պատված: Նրա բջջային հեռախոսն իմ ձեռքին էր: Սեւ գույնի էր: Նա այս հեռախոսն օգտագործում էր այն ժամանակվանից, ինչ մոտ էինք: Թվերը սեւ-սպիտակ էին, լույսը՝ կանաչ: Նվազագույն գործառույթներ ուներ, եւ ամենավատն այն էր, որ միայն 50 տեքստային հաղորդագրություն էր պահպանում: Ես արդեն մի քանի անգամ աչքի էի անցկացրել դրանք, եւ նա դրանցից շատերը ջնջել էր: Եվ քանի որ անունները մեծ կարեւորություն չունեին, հաղորդագրություններն ըստ էության անիմաստ էին:

Եվ հանկարծ, անսպասելիորեն, տեքստերից մեկը գրավեց իմ ուշադրությունը: Ճիշտն ասած, դա առաջ էլ էի նկատել: Հաղորդագրությունն ուղարկողը «ՉՅՏ»-ն էր: Գրված էր՝ «Չե՞մ կարող հավատալ, որ այդպիսին ես: Ատո՛ւմ եմ քեզ»: Ծուրջ մեկ ամիս առաջվա թվագրություն ուներ, դրա համար էլ մտածեցի, որ Ժունժունը մտադրված է պահպանել այն:

Այդ ժամանակ երկու բացականչական նշանները գրավեցին ուշադրությունս: Ինձ չզարմացրեց, որ ինչ-որ մեկն ատելություն է հայտնել Լյու Ժունժունի հանդեպ: Ճիշտ ինչպես մորաքույրս՝ նա իրեն շրջապատողնե-

րին նյարդայնացնելու տաղանդ ուներ: Նա մշտապես խոսքից ետ էր կանգնում, երբեք խոստումները չէր կատարում եւ ամեն ինչում կարողանում էր արդարանալ: Բայց մեզ վերջնականապես բաժանեց այն, որ ես հոգուս խորքում պարզեցի, թե որքան սառը, որքան անտարբեր էր նա ամենքի եւ ամեն ինչի հանդեպ, որքան օտար էր եւ ատելությամբ լի: Գուցե իր սիրեցյալը նույնպես պարզել էր նրա գաղտնիքը:

Նա Վանֆու փողոցի ամենահայտնի աղջիկն էր, միշտ նստում էր լուսամուտագոգին եւ ցած կախում իր գեղեցիկ սպիտակ ոտքերը: Բայց վերածվել էր մի հրեշի, որը խիստ սարսափեցնում էր ինձ, դրա համար էլ մենք դադարեցինք հանդիպել մեկս մյուսիս, բացառությամբ պատահական հանդիպումների, մինչեւ հիմա, երբ նա վերջնականապես ընդմիշտ հեռացավ իմ կյանքից:

Ես սովորաբար չէի զարմանում, երբ տեսնում էի, որ նա այսպիսի հաղորդագրություններ է ստանում, բայց այս մեկը կրկին գրավել էր իմ ուշադրությունը՝ տեքստն ուղարկողի պատճառով: ՉՅՏ, Չժոու Յունտաո... Այն երիտասարդը, որ քիչ առաջ, այդքան ջերմ ու կրքոտ, Լյու Ժունժունի մասին իր հիշողություններն էր կիսել ինձ հետ:

-Ժունժունն իրոք որ եզակի տեսակ էր,- ասել էր նա:

Վանֆու փողոցի բնակիչները մի ասացվածք ունեն այն մասին, որ դուք կարող եք օրը միայն մեկ գաղտնիք բացահայտել: Երբ ասում էին դա, խոսում էին հանգիստ ու լուրջ, քանի որ չափազանց շատ գաղտնիքներ կան, եւ շատ ժամանակ կա դրանք հայտնաբերելու համար: Բայց երբ դա ասացի, հանկարծ ինձ մի քիչ հոգնած զգացի: Լյու Ժունժունի ընկնելու պահից մինչեւ նրա մահը՝ միայն հիմա ինձ հաջողվեց միայնակ նստել լռության մեջ առանց ազգականի կամ հարեւանի կամ գործընկերոջ, էլ չեմ ասում անծանոթի մասին: Միայն ես եւ նա էինք: Նստած էինք դեմդիմաց եւ իրար էինք նայում, ճիշտ այնպես, ինչպես անում էինք փոքր ժամանակ՝ տնային աշխատանքը կատարելիս: Բայց Վանֆու փողոցի աղմուկներն ընդմիշտ հեռացել էին: Մենք երկուսս էլ լքել էինք փողոցը, թեեւ տարբեր ուղիներով, բայց այդ տարբեր ուղիները մեզ առաջնորդել էին դեպի նախասահմանված միեւնույն վայրը:

-Ի՞նչ հիշողություն ես փորձում վերականգնել այդ փողհարի հետ,- հարցրի նրան:

Նա ժպտաց ամբողջովին խաբուսիկ-հրապուրիչ ժպիտով, բայց ոչ մի բառ չասաց, քանի որ այլեւս չէր կարող պատասխանել իր հեռախոսին կամ ձայն հանել:

ՖՈՒ ՅՈՒԵՀՈՒՅ

ՀՍԿԱ ՓԻՂԸ

1

Հսկա փղերն առաջ էին շարժվում արեւադարձային անտառի միջով՝ անցնելիս հարթելով, գետնին հավասարեցնելով բուսականությունը: Լի Շենը զգաց, որ հողն իր ոտքերի տակ տագնապով ցնցվում է, եւ հովհարածեւ փոշու պտտահողմեր են գոյանում, կարծես ընկել էին զարկվող թմբուկի վրա: Խոտե հյուղակը նրա ետեւում նույնպես դողում էր, մգլած տանիքի ծղոտե ծածկն ասես ցնցուղվում էր՝ անձրեւի սլաքների պես այսուայնտեղ գետնին թափվելով: Լի Շենը դեմառդեմ կանգնել էր փղերի առջեւ եւ բերանը լայն բացած՝ մտացիր նայում էր, ասես նողկանք էր զգում: Երկու ձեռքերը խուճապահար դեսուդեն էր շարժում՝ չկարողանալով կառչելու որեւէ բան գտնել: Նա տեսածից ամբողջովին շվարել, կաթվածահար էր եղել, զրկվել էր անգամ փախչելու մասին մտքից: Ի՞նչ վիթխարի էին: Ճքեղ անտառը միայն նրանց ծնկներին էր հասնում, ասես խառնիխուռն թփուտ լիներ: Փղերի հայացքը հանգիստ էր, երբ իջնում էին զառիթափը: Երբ անցնում էին, դարավոր ծառերը սաստիկ ճռճվում էին՝ միանգամից տապալվելով, տների չափ մեծության արմատները դուրս էին ցցվում հողից: Ամեն տեսակի թռչուններ էին վեր խոյանում՝ ջղագրգիռ թռիչքով պտտվելով կենդանիների շուրջբոլորը: Թռչունների վառ գունավորված փետուրները փայլփլում էին երեկոյան սառն ու մածուցիկ լույսի տակ, իսկ նրանց ճիչերը խլանում էին կապարե ծանր ոտնաձայներից: Թռչել չհասցրած թռչունների փետուրները քշվում էին ընկնող ծառերից եւ կախվում օդի մեջ, ինչպես բազմագույն մշուշ:

Լի Շենը կարկամել էր, կմկմում էր՝ մեկ նախադասություն իսկ չկարողանալով արտաբերել: Երբ փղերը մոտեցան, պարզ լսեց նրանց շեփորաձայնը, տեսավ նրանց խոր ընկած աչքերը, որ նման էին հսկա դռների բացվածքի, եւ կոշտուկոպիտ, ամուր մաշկից կախված վիթխարի կանաչ ցողակաթիլները: Առաջնորդող փիղը վզին կրում էր փոքրիկ կարմիր մի կապոց, ինչպես ժայռին ամրացված նիհարիկ մի կակաչ: Երբ փիղը մոտե-

ցավ, եւ նրա շունչը փոքր տորնադոյի պես զարկեց իր դեմքին, Լի Ծենը տեսավ, որ դա կապոց չէր, այլ կարմիր անջրանցիկ թիկնոցով աղջիկ: Նա աղջկա դեմքը չէր տեսնում, բայց կռահում էր նրա երկար, ուսերին թափված մազերից եւ նրբագեղ կազմվածքից:

Երբ տեսավ, որ փղի վրա նստած մարդ կա, արդեն թաքնվելու համար շատ ուշ էր: Փիղն արագացրեց քայլերը եւ հանկարծ հարվածեց կիսավեր, խարխուլ շինությանը՝ ահաբեկելով եւ խուճապահար թռցնելով հյուղակի թռչուններին, հեծաններն ու գերանները ճռռացին ու տնքոց արձակեցին: Լի Ծենը տեսավ, թե ինչպես են փղի ոտքերը կեսգիշերի պես ճնշելով իջնում, եւ նրա կոկորդը սեղմվեց ու քարացավ, մինչեւ որ վերջապես մի ձայն արձակեց՝ կարճ ու սուր հեւալով արտաբերելով. «Ա՛հ...»:

Լի Ծենը մի կողմ նետեց մահճակալի բարակ ծածկոցները, որ ներծծված էին քրտինքով եւ քրտինքի հոտ էին արձակում: Նա երկու անգամ խորը շունչ քաշեց, փակեց աչքերը, ապա նորից բացեց եւ ապշած, անհաղորդ հայացքով նայեց մոծակների ցանցի վերնամասին: Արդեն երկրորդ անգամն էր տեսնում այդ երազը:

Մանկությունից ի վեր նույն բանն էր. որոշ երազներ պարզապես կրկնվում էին: Երբ փղի մասին երկրորդ անգամ երազ տեսնելուց հետո արթնացավ, խոր անհանգստություն էր զգում: Զգում էր, որ իր ուղղությամբ գրոհող փիղը ինչ-որ սպասվող իրադարձության նախանշան էր: Փիղ կամ էլ աղջիկ: Նա համոզված էր, որ դա աղջկա հետ ինչ-որ կապ ունի:

Լուսամուտից դուրս լսվում էր թռչունների խռպոտ ճռվողյունը: Եվ այդ ձայնը հոծ էր, ինչպես իր հայրենի քաղաքի գիշերային երկնքի խիտ աստղերը: Ուշ էր: Նա մի պահ փակեց աչքերը, ապա վեր կացավ եւ լվաց դեմքը: Դուրս էր ելել, երբ հիշեց, որ մոռացել է սափրվել, եւ նորից ետ եկավ: Սափրվելուց հետո հայելուն նայելով դեմքը ծամածռեց՝ խոժոռվելով ու ատամները բաց ժպտալով: Բնազդաբար լայն բացեց աչքերը, եւ ճակատն ակոսեցին անհարթ կնճիռների գծերը: Դա զարմացրեց նրան: Գիտեր, որ դեռ բավականին երիտասարդ է: Դեռ երկու օր առաջ էր նշել ծննդյան քսանիններորդ տարեդարձը: Աշխատավայրում բոլորը նրան նայում էին որպես քսանամյա երիտասարդի, եւ ինքը սիրում էր ուշադրության կենտրոնում լինել: Բայց, մյուս կողմից, երեսունից ընդամենը մի մազաչափ էր պակաս: Հիսուսին խաչին գամեցին, երբ երեսուներեք տարեկան էր: Որտե՞ղ կգամի կյանքն իրեն, երբ երեսուներեք տարեկան լինի: Նա թուլացավ, եւ ճակատը նորից դարձավ հարթ ու փայլուն: Թեեւ ամբողջ տասը տարով մեծ էր աղջկանից, բայց համոզված էր, որ նա իրեն որպես ծեր չի տեսնի:

2

Մինչ այդ միայն երկու անգամ էր տեսել աղջկան, եւ դա իրենց առաջին իսկական հանդիպումն էր: Առաջին անգամ նրան տեսել էր գնացքում: Ուսապարկը մեջքին եւ ճամպրուկը քաշելով՝ աղջիկը հեւասպառ եկավ նստեց իր դիմաց: Գիտեր, որ նա նոր սովորող է: Այդ ժամանակ ինքն արդեն չորս տարի էր, ինչ դպրոցից դուրս էր եկել: Եվ մտածում էր, որ բոլոր աշակերտները պարզ ու միամիտ տեսք ունեն, բայց միաժամանակ կարոտով նրանց կողմն էր մղվում: Նաեւ անհիմն կերպով կարծում էր, թե ինքն արդեն ծեր է: Հպարտանում էր, որ չափահաս է, բայց դեռ սիրում էր խառնվել աշակերտներին, եւ շատ կարճ ժամանակում իրեն բարձր էր զգում նրանցից: Բայց այս անգամ երբ գնացքում աղջկան հանդիպեց, սովորականի պես չփորձեց զրույցի բռնվել: Նա բոլորովին գրավիչ չէր: Թուխ դեմք ուներ եւ կճատ քիթ, եւ պարզապես նման էր գյուղից եկած՝ ավագ դպրոցի ցածր խմբի աշակերտի: Այդ ամբողջ՝ երեսուն ժամ տեւած ուղեւորության ընթացքում լուռ, փայտի նման նստել էին դեմդիմաց: Միայն, երբ ուղեւորությունն ավարտին էր մոտենում, աղջիկը երկչոտ խնդրել էր նրան, թե չի՞ զանգի արդյոք իր փոխարեն: Հեռախոսը ձեռքին ամաչկոտ շուռումուռ տալով, թուխ դեմքը շփոթմունքից կարմրատակած՝ ասաց, որ իր հեռախոսի մարտկոցի լիցքավորումը սպառվել է, իսկ հարազատներն իրեն դիմավորելու էին գալու: Նա հստակ հիշեց նաեւ, որ աղջիկը խոսելիս քիչ էր մնում լաց լինի: Թեեւ փոքր-ինչ զայրացած՝ անտարբեր զանգ տվեց եւ մեծ գոհունակություն ստացավ նրա շնորհակալական ջերմ խոսքերից: Ինքը ցույց տվեց, որ քաղաքը լավ գիտի, երբ մեծահոգաբար ուղեկցեց աղջկան խառն ու դժվարանցանելի կայարանի միջով ու հանձնեց նրա հարազատներին: Ապա շրջվեց եւ անմիջապես հեռացավ՝ չսպասելով անգամ նրանց շնորհակալական խոսքերին: Հետագայում մտածում էր, որ գուցե հենց դա էր այդքան լավ տպավորություն գործել աղջկա վրա:

Երբ աղջիկն իրեն հաղորդագրություն ուղարկեց, ինքն արդեն լրիվ մոռացել էր նրա մասին: Հաղորդագրության բնույթից կարող էր եզրակացնել, որ ուղարկողը երիտասարդ կին է, բայց վերջինս չէր ասում, թե ով է: Ուզում էր, որ ինքը գուշակի: «Գուշակեք: Մենք հանդիպել ենք ոչ այնքան վաղուց»: Զգացվում էր նրա սեթեւեթանքը:

Այդ ժամանակ նստած էր գրասեղանի մոտ, բայց սիրտը մի պահ արագ զարկեց: Աշխատանքի բնույթի պատճառով շատ հնարավորություններ չուներ կանանց հանդիպելու, հատկապես գեղեցիկ կանանց: Շատ կուզեր

իմանալ, թե ինչպիսի գեղեցիկ դեմք կարող է լինել անծանոթ թվերի այդ շարքի ետեւում, երբ երկդիմի պատասխանում էր. «Այնքան շատ աղջիկների գիտեմ: Ինչպե՞ս իմանամ ով եք»: Չէր համարձակվում իրական որեւէ հույս փայփայել, բայց չէր էլ կարող դիմակայել երազելու իր ցանկությանը: «Ուրեմն, իսկապես գրավում եք կանանց»: Երբ այս պատասխանը տեսավ, էլ ավելի հուզվեց: Մի պահ մտածեց՝ իրո՞ք գրավում է կանանց: Գուցե ոչ, բայց իրեն դուր եկավ, որ նա այդպես է ասում: Տեքստում առկա թաքուն խանդը բավական հաճելի էր: Բայց երբ նա ասաց, որ այն աղջիկն է, որին ինքն օգնել էր երկաթուղային կայարանում, ինքը մի պահ սառեց: Այդ մասին մտածելիս հուզմունքն արագ անցավ: Ատեց իրեն, բայց մի քիչ զայրացավ նաեւ աղջկա վրա: Ինչո՞ւ ուղղակի չէր ասում: Չկարողացավ հիշել, թե նա ինչպիսի տեսք ուներ, բայց հստակ հիշեց, որ այնքան էլ գրավիչ չէր: Անտարբեր մի պատասխան գրեց՝ ասելով, որ աշխատանքի է, եւ սկսեց շարունակաբար անտեսել նրան:

Դրանից հետո աղջիկն իրեն պարբերաբար մի քանի տեքստային հաղորդագրություններ էր ուղարկում՝ որոշ հարցեր տալով իր ուսման հետ կապված: Այն թեթեւ հուզմունքը նորից չառաջացավ, բայց ինքը դեռ պատասխանում էր նրան: Նույնիսկ նրան հանդիմանեց, որ պետք է հատկապես զգույշ լինի տղաների հետ, որպեսզի հանկարծ չխաբվի: Աղջիկն ասաց, որ ինքը շատ բարի է եւ որ իր նման շատ կենսափորձ ու շատ բան իմացող անձնավորությունը չէր կարող մարդկանց հիացմունք չպատճառել: Դա ստիպեց բնազդաբար մտածել իր ընկերուհու մասին: Վերջինիս աչքում ինքն ավելի ու ավելի թույլ ու կամազուրկ էր դառնում:

Ընկերուհին տեղացի քաղաքաբնակ մի աղջիկ էր: Միասին հանդիպում էին դեռ համալսարանական օրերից: Անցած չորս տարիների ընթացքում ինքը մի քանի անգամ առաջարկել էր, որ օրինականացնեն իրենց հարաբերությունները: Առաջին անգամ ընկերուհին իր հեծանվի ետեւում էր նստած, երբ սլանում էին սոսիների ստվերի տակ: Ընկերուհին ձեռքերով գրկել էր իր գոտկատեղը, եւ երբ ինքը ետ նայեց, տեսավ, որ նրա դեմքը կարմրատակել է: Վերջին անգամ, երբ այդ մասին ակնարկել էր, նա զայրույթով էր նայել իրեն:

-Ամուսնությո՞ւն: Ինչպե՞ս կարող ենք ամուսնանալ: Գետնախորշո՞ւմ ենք քնելու, ինչ է:

Ինքը խուսափեց հարցից եւ առաջարկեց, որ գուցե կարողանան ապրել իր մոտ:

-Ամուսնանալ եւ ապրել վարձակալած բնակարանո՞ւմ: Դու խե՛նթ ես,- անփութորեն նետեց նա:

Խիստ ազդվեց այդ անփույթ վերաբերմունքից, բայց հանդուգն քմծիծաղեց եւ ասաց, որ եթե ամուսնության մասին խոսք չի կարող լինել, թող այդպես լինի: Սակայն սրտի խորքում խոր զղջում ապրեց:

Մի անգամ էլ վիճեցին փողի պատճառով, եւ ինքն իջավ սուպերմարկետ ու երկու շիշ գարեջուր գնեց, հետո տուն վերադարձավ ու խմեց ամբողջը: Խիստ հուզված էր, երբ նորից ու նորից բջջային հեռախոսի անուններն ու համարներն էր դեսուդեն անում՝ փնտրելով, թե ում հետ խոսի: Մատները կանգ առան աղջկա անվան վրա, եւ մի հաղորդագրություն ուղարկեց. «Դու ինձ դուր ես գալիս»: Երկար լռությունից հետո նրանից պատասխան եկավ. «Խմա՞ծ եք»: Ծփոթվեց, բայց մարտահրավեր նետող տոնով պատասխանեց. «Ոչ: Ես ազնիվ եմ եղել»: Այս անգամ պատասխանն անմիջապես հետեւեց. «Իրոք խմած եք: Գիտեք, որ մենք անհամատեղելի ենք: Դուք այդքան լավ դպրոց եք ավարտել եւ աշխատանք ունեք, իսկ ես ոչինչ չունեմ»: Երբ հաղորդագրությունը կարդաց, պատասխանեց՝ խառը զգացմունքներով լի. «Այդ բաները կարեւո՞ր են: Սերը շատ պարզ է: Նա դրանց կարիքը չունի: Ես պարզապես սիրում եմ քեզ, մաքուր եւ պարզ»: Տեքստն ուղարկելուց հետո զգաց, որ ստամոքսում մի հանգույց է պրկվել: Իսկապես հիվանդանում էր: Լուռ կշտամբեց ինքն իրեն: Թվաց՝ մի հավերժություն անցավ, իսկ նա դեռ չէր պատասխանել: Ասես սիրտը խաշվել էր եռացրած ջրով, եւ գլուխը գոլորշու ամպ էր: Քայլեց դեպի պատշգամբ եւ շնչեց գիշերային օդը: Նայելով քաղաքի հեռավոր լույսերին՝ վերականգնեց ինքնատիրապետումը եւ մեկ այլ հաղորդագրություն ուղարկեց. «Եթե համաձայն չես, ապա մոռացիր: Պարզապես ասա, որ հարբած եմ»: Հանկարծակի թեթեւացում զգաց, բայց նաեւ չէր կարող զսպել փոքր-ինչ հիասթափվածությունը: Որոշ ժամանակ անց պատասխան եկավ. «Դուք իրո՛ք վերջն եք: Փոփոխական, ինչպես քամին»: Կրծքավանդակում ջուրը կրկին թեթեւակի ծփաց: Դրանից հետո մի քանի անգամ նա հաղորդագրություն ուղարկեց իրեն՝ հարցնելով, թե ինչու այդ գիշեր ինքն այդպես ասաց, բայց ինքը պարզապես շարունակում էր ծուլորեն անտեսել: Երբ մտածում էր նրա տեսքի մասին, սկսում էր զղջալ: Այդ գիշեր ինքն իրոք սարսափելի վիճակում էր:

Եթե ընկերուհու տուն ընթրիքի գնացած չլիներ, համոզված էր, որ դրանով հարցը փակված կլիներ:

Երբ ընկերուհու հետ նորից հաշտվել էր, նա իրեն հրավիրեց տուն ընթ-

ոիքի: Գիտեր, որ նրա հորը դուր չի գալիս՝ որպես դրսեկ, բայց այդուհանդերձ բավականին հարգանք ցուցաբերեց Ծերուկի հանդեպ եւ շարունակում էր վերջինիս կենացն առաջարկել՝ մի քանի անգամ խմելու մարտահրավեր նետելով, մինչեւ որ Ծերուկը երեք բաժակ գցելուց հետո փլվեց ընկերուհու տան բազմոցին եւ քուն մտավ: Երբ անվստահ հրաժեշտ էր տալիս, ընկերուհին դեմքը ծամածռեց եւ ասաց, որ ինքն իրոք չափն անցավ: Մտածեց, որ այս անգամ խաղն իսկապես ավարտված է: Մի՞թե չէր կարող շատ խմել, բայց մարդավարի: Սովորաբար ինքը կարող էր մեկ շիշ թունդ ոգելից խմիչք խմել, ասենք՝ օղի, անհանգստանալու բան չկար, ուրեմն ինչպե՞ս կարող էր այդքան հարբել այսօր մի քանի շիշ գարեջրով եւ խերեսով: Տան ճանապարհին մեկ այլ հաղորդագրություն ուղարկեց աղջկան, ասելով, որ ինչ-որ գործով դուրս է եկել եւ որ անցել է նրա դպրոցի մոտով ու կուզեր իմանալ՝ ժամանակ ունի՞ արդյոք: Պատասխանն արագ հետեւեց. աղջիկը հարցնում էր, թե որտեղ է:

Երբ մետրոյից դուրս եկավ, բավականին ուշ էր: Մետրոյի կայարանի դիմաց մի փոքրիկ զբոսայգի կար, իսկ զբոսայգում եվրոպական ոճի շատրվան էր՝ շրջանակված կապույտ լույսի լուսապսակով: Լույսը շողում էր շատրվանի կենտրոնում գտնվող մերկ կնոջ արձանի վրա, որի կապույտ դեմքը թունոտ չարությամբ էր լի: Քայլեց փոքրիկ զբոսայգու շուրջը, բայց նա չհայտնվեց: Միգուցե ինչ-որ բա՞ն էր պատահել: Նորից մտածեց ընկերուհու մասին: Պե՞տք է, արդյոք, տուն գնա: Իրոք որ՝ ընկերուհու հետ չպետք է դա աներ: Երկմտում էր՝ շատրվանի շուրջը վերուվար անելով: Գուցե շատրվանի մեջ գտնվող աղջիկը ինչ-որ բան էր ակնարկում իրեն: Հանկարծ անորոշ կերպով գիտակցեց, որ եթե այդպես շարունակի, ապա ինչ-որ բան տեղի կունենա, եւ դա կլինի հանցագործություն: Սիրտն արագ զարկեց, եւ ուժեղ, բայց աննկատ մի ալիք անցավ մարմնով մեկ: Վերջին գնացքը պատրաստվում էր մեկնել մետրոյի կայարանից: Ամուր սեղմեց հեռախոսը, եւ շատրվանից ընկնող բարակ մշուշը ծածկեց իր դեմքը: Ամբողջ մարմինը թուլացավ լիակատար թեթեւության զգացումից: Մի բան անելու է վերջապես: Գնա՛ գրողի ծոցը,- մտածեց:

Հենց որ աղջիկը հայտնվեց, բռնեց նրա ձեռքն ու գրկեց՝ շուրթերը հպելով նրա շուրթերին: Աղջիկը շուրթերը պրկելով ետ քաշեց՝ աքցանի պես ամուր սեղմելով իրար: Ինքը փութեռանդորեն առաջ մղեց լեզուն՝ ճեղքելով վահանը, բայց միայն խոչընդոտող հսկա բարիկադի հանդիպեց: Իր սպասած հաճույքին չէր հասել, բայց չէր նահանջի, երբե՛ք: Ուղղակի շարունակում էր լեզուն առաջ ու ետ տանելով շոշափել, տնտղել նրա

ատամները: Բայց աղջիկը, կլոր աչքերը լայն բացած, չէր պատասխանում, որքան էլ որ ինքը համառ էր ու անզիջում: Ի վերջո հոգնեց այդ խաղից եւ բաց թողեց նրան:

-Դա համբույր ընդունելու ձեւ չէ,- ասաց փոքր-ինչ ընկճված:

-Դուք պետք է խոսե՛ք: Իմ առաջին համբույրը եւ այսպես... Եվ դուք այդքան շատ եք խմել:

Աղջիկը քիչ էր մնում արտասվի:

Ուշադիր նայեց նրան: Դեմքը թուխ էր, քիթը կճատ: Բոլորովին գրավիչ չէր: Եվ նրանից տարօրինակ մի հոտ էր գալիս, որ առաջ չէր զգացել: Դա նման էր օգտագործած վառոդի տհաճ հոտի: Խղճաց նրան, բայց ավելի շատ ատեց իրեն:

Ինքը կրկին ու կրկին պնդում էր, որ անհրաժեշտություն չկա ամբողջ ճանապարհն անցնել, քանի որ հենց նոր սենյակ է պատվիրել: Նա չէր խոսում, բայց երբ բացեց բերանը, միայն հարցրեց՝ ամբողջ ճանապա՞րհը: Նայեց նրան: Չէր կարողանում հասկանալ՝ արդյոք անմե՞ղ է ձեւանում, թե՞ իրոք այդպես է: Ինքը հանկարծ կարմրատակեց, երբ ասաց՝ սիրիր ինձ: Լսեց նրա հազիվ լսելի շշունջը՝ դու խե՛նթ ես: Պարզ բառերը կատաղեցրին իրեն, երբ ի պատասխան բղավեց՝ ի՞նչ խենթ: Սա բնական բան է: Վախենո՞ւմ ես: Ի՞նչ ես կոտրատվում: Աղջիկը թաքուն շուրջը նայեց՝ աղաչելով իրեն, որ ձայնը չբարձրացնի: Ամուր բռնեց նրան՝ հյուրանոց մտնելու մտադրությամբ, բայց նա գալարվելով մի կողմ փախավ, ինչպես ուժեղ երիտասարդ հորթ: Լավ, այդ դեպքում մոռացիր,- ասաց ինքը: Ես կգնամ: Եվ անմիջապես ետ քաշեց նրան դեպի մետրոյի կայարան: Մետրոյի գնացքները վաղուց դադարեցրել էին երթեւեկը: Ինչպե՞ս էին վերադառնալու: Ստիպված էին լինելու տաքսի կանչել: Իր բնակարան վերադառնալու համար մոտ հարյուր յուան էին վճարելու: Երբ աղջիկը լսեց այդ թիվը, կասեցրեց իրեն: Իսկ ի՞նչ կլինի, եթե մենք... աղջիկը վարանեց: Եկ ետ չգնանք: Եթե ետ չգնանք, ո՞ւր ենք գնալու: Սեւեռուն նայեց աղջկան: Չե՞նք կարող պարզապես թափառել այստեղ՝ հրապարակում: Փողոցի լապտերների լույսն առկայծում էր աղջկա աչքերում: Հետեւելով նրա հայացքին՝ աչքը գցեց փոքրիկ ամայի գբոսայգու կողմը, որտեղ մի քանի անորոշ, ստվերոտ կերպարանքներ էին շարժվում: Ինչպե՞ս կարող ենք դա անել: Կեսգիշերին շատ ցուրտ կլինի, էլ չասած՝ մոծակների մասին, ու նաեւ այնտեղ... այդ մարդիկ:

Մեկ սենյականոց էր պատվիրել: Երբ հեռուստացույցը միացրեց, այն ամբողջ ուժով գոռաց: Գիտեր, թե ինչ պետք է անի, եւ հեռուստացույցի

ձայնը երկար ճանապարհ էր անցնելու՝ իր վախկոտությունը խլացնելու համար: Բայց ինչ էլ ասում կամ ինչքան էլ պնդում էր, աղջիկն անդրդվելի էր եւ հերոսուհու պես կանգնել էր անգիջում: Համարձակության այն փոքրիկ նշույլը, որ այդպես վճռականորեն քաջալերել էր իրեն, աննկատորեն չքացավ: Ինչպե՞ս կարող էիր այդքան պահպանողական լինել: Ինձ հետ ներս եկար, էլ ինչո՞ւ չես թողնում: Եթե չէիր ուզում, ինչո՞ւ հետս ներս մտար: Իր ասածն այնքան համոզիչ էր: Աղջիկը ծնկներն ամուր սեղմեց իրար եւ երկու ձեռքերով ծածկեց կրծքերը: Աչքերում արցունքներ էին լճացել:

Իսկապե՞ս սիրում ես ինձ: Թե՞ պարզապես ուզում ես հետս ժամանակ անցկացնել: Ինքն սկսում էր կորցնել համբերությունը: Ես իրոք սիրում եմ քեզ: Արհամարհանքը զսպելով սեղմեց ատամները: Եթե քեզ չսիրեի, ինչպե՞ս կարող էի այսպիսի բան մտածել: Տեսավ, թե նա ինչպես է շրթունքը կծում եւ վարանում: Ինձ մի քիչ ժամանակ տուր, լա՞վ: Այս պահին... Ես դրան սովոր չեմ... Պարզապես խմած էիր, եւ ես վախենում եմ, որ կարող ես մի փոքր չափն անցնել: Երբ լսեց «դուր ես գալիս» բառերը, վիատված բաց թողեց նրան: Այդ պահին հաղորդագրություն եկավ: Իր ընկերուհին էր, հարցնում էր՝ տա՞նն է արդեն, թե՞ ոչ: Հեռախոսն անջատեց եւ այտը դրեց աղջկա այտին: Շունչը ետ բերեց. գինու եւ փսխուքի այդ հոտն իսկապես զզվելի էր: Ստամոքսը կրկին տակնուվրա եղավ:

-Կարծում եմ, լավ կլինի տուն գնաս, - ասաց հանգիստ:

-Չե՞մ կարող մնալ: Դու քնիր: Ես ուղղակի կնստեմ կողքիդ եւ հեռուստացույց կնայեմ:

-Չէ: Եթե մնաս, չեմ կարողանա ինձ զսպել, եւ քեզ համար լավ չի լինի:

Վճռական էր: Վերականգնել էր պատշաճ քաղաքավարությունը: Ինքն իրոք վատ երիտասարդ չէր: Նույնիսկ տեւական վախի զգացում ուներ: Որքա՜ն վտանգավոր էր եղել հիմա: Քիչ էր մնում շատ մեծ սխալ գործեր:

-Սաստիկ հուզված էիր,- ասաց աղջիկը՝ զննելով իր դեմքը, երբ ինքը տաքսու մոտ ճանապարհում էր նրան:

-Ե՞ս, վախեցա՞ծ: Ի՞նչ կար վախենալու: Քո մասին էի մտածում: Եթե իսկապես մի բան անեի, ապա քեզ համար լավ չէր լինի:

Խուսափեց աղջկա հայացքից եւ նորից ամբողջովին կարմրատակեց:

Վերադարձավ հյուրանոց: Թվաց՝ ամբողջ մի հավերժություն անցավ, մինչեւ որ ջուրն իր ուզած ջերմաստիճանն ստացավ: Ցնցուղն ուղղեց դեպի շուրթերը: Ջրի ուժեղ շիթը զարկեց փայտացած քիմքին, երբ նրբորեն ճաշակում էր շփումն ու ցավը: Ինքն ու ընկերուհին այդպես էին անում

հյուրանոցում միմյանց համար: Դա լավ խաղ էր: Բայց հիմա միայն մտադիր էր շուրթերի վրայի այդ զզվելի հոտը հեռացնել: Երկար ժամանակ անց լեզուն թմրեց ու անզգայացավ, եւ այդքան երկար զսպված արցունքները դուրս հորդեցին: Կուչ եկավ մահճակալի վրա: Ի՜նչ տարօրինակ էին այս գիշերվա դեպքերը: Ի՜նչ խորհրդավոր էր, որ ինքը մնում էր այս հյուրանոցում: Անհանգիստ շուռումուռ գալով քուն մտավ եւ անորոշաբար, մշուշի մեջ սկսեց հսկա փղի ձեւ ընդունել: Փիղն աջուձախ ամեն ինչ խորտակելով ճանապարհ էր հարթում անտառի միջով՝ ոտնատակ տալով ու գետնին հավասարեցնելով տերեւները: Իրեն թվում էր, թե ողջ գետինը ցնցվում է իր ոտքերի տակ, եւ ինքն ամեն րոպե կարող է ընկնել: Թվում էր՝ ուր որ է կճզմվի այդ արարածի սմբակների տակ: Գոռալով արթնացավ: Լուսնի լույսը փայլում էր կիսաբաց լուսամուտից, վարագույրները մեղմ քսվում էին հատակին: Ի՜նչ ապշեցուցիչ նմանություն ուներ մեծ ստվերը փղի ամրակազմ մարմնին:

Շատ հստակ հիշում էր, որ դա առաջին անգամն էր, երբ երազում տեսավ փղին, բայց նրա վրա կարմիր անջրանցիկ թիկնոցով աղջիկ չկար:

3

Ժողովրդական զբոսայգին շրջապատող բարձրահարկ շենքերը նույնպես նման էին հսկա փղերի: Մի պահ Լի Շենը պատկերացրեց, որ դրանք գրոհում էին իր վրա: Բայց մի էական տարբերություն կար. ի տարբերություն երազի՝ լիովին ապահով էր զգում: Նա սիրում էր վտանգը պատկերացնել ապահով հեռավորությունից, հուզագրգիռ մի զգացողություն, որ ստանում էր վտանգից այդպես ապահովված լինելով: Ծուտ էր տեղ հասել եւ բավական շատ ժամանակ ուներ մտածելու անցյալ ամսվա կամ էլ ավելի առաջվա իրադարձությունների մասին եւ կանխատեսելու, թե ինչ կարող էր տեղի ունենալ այս երեկո: Այսօր գիշերը... չէր կարող փոքր-ինչ չհուզվել: Անցած անգամվանից տարբեր կլինի: Անկասկած: Ինչ էլ որ անի, ընկերուհուն կրկին հուսախաբ չի անի: Այն բանից հետո, երբ ընկերուհին ասել էր, որ նոր ընկեր ունի, ետուառաջ էր արել իր սենյակում, ինչպես վանդակված մի կենդանի: Կապ չունի՝ ո՛ր ուղղությամբ էր գնում-գալիս, հինգ քայլից ավել չէր կարող անել, որովհետեւ դեմ կառներ պատին: Իրոք ուզում էր գոռալ, սակայն, կանգնած նեղ պատշգամբում, որտեղ իրար գլխի ամեն տեսակ հնոտիք էր կիտված, մեկ այլ բնակելի շենքից ընդամե-

նը 10 մետր կամ մի քիչ ավելի հեռավորության վրա, լայն բացեց բերանը, բայց ձայն չկար: Մարդիկ կկարծեին, թե խելագար է: Հանեց բջջային հեռախոսը եւ սկսեց նորից դեսուդեն անելով նայել համարները: Մատները հերթով անցնում էին անունների վրայով: Բոլոր անուններն իրենց կյանքն ունեին: Նրանք ոչ մի կապ չունեին իր հետ: Եվ այնժամ նորից կանգ առավ աղջկա անվան վրա: Այն գիշերից հետո կապի մեջ շատ չէին եղել: Ի՞նչ կարող էր ասել: Հասկացավ, որ նա միակն է, որի հետ կարող էր խոսել: Այնքան շատ ընկերներ ուներ, բայց նա... անկեղծ ասած՝ նա միակ մարդն էր, որի հետ կարող էր խոսել, եւ նա դեռ չէր կարող ընկեր համարվել: Երբեմն, իսկապես, ամեն բան այնքան տարօրինակ է:

Քանիցս նրան խնդրեց մտածել այն մասին, թե իրենց ինչպես կզգային, եթե այն գիշեր իրոք միասին լինեին, բայց ամեն անգամ աղջիկը ճարպկորեն փոխում էր թեման: Ինքը նիզակով որսորդ էր, իսկ նա փոքրիկ սարսափած եղնիկ: Որսի ընթացքում իր սիրտը, որ կողոպտված էր ընկերուհու կորստից հետո, այժմ լի էր անխոհեմության զգացումով: Դա էլ ավելի մեծ վիշտ էր հարուցում: Իր սրտում ընկերուհին աննկատորեն վերածվել էր քաղաքի խորհրդանիշի. երբ նրա հետ էր, զգում էր, որ ինքն իսկապես քաղաքի մի մասն է: Եվ նրա մեկնումով ինքնաբերաբար զգաց, որ չի կարողացել մտնել քաղաք: Դառնորեն մտածում էր, որ ինքը մնացել է «գեղջուկ»: Մինչդեռ աղջիկն, ինչպես ինքը, օտարական էր, եւ ինքն օգտվել էր քաղաք շուտ մուտք գործած լինելու իր առավելությունից, որպեսզի հեշտությամբ պահանջի նրան: Որոշակի չափով նա կարող էր փոխհատուցել իր կորուստը, եւ ինքը մեկ անգամ էլ խղճաց ու ատեց իրեն: Մի՞թե ես իսկապես արժանապատիվ մարդ եմ: Երբեմն հարցնում էր ինքն իրեն: Այո: Այս օրերին եւ այս տարիքում դա իսկապես ոչինչ էր, բայց պահպանողականությունը դեռ իշխում էր: Եվ ինքը նրա՛ն էր ասում, թե շատ պահպանողական է: Բայց այս անգամ գիտեր, որ այդպիսի արդարացումն իսկապես չէր կարող իր ներքին տագնապը փարատել: Միակ ընտրությունը ինքնին հարցից խուսափելն էր: Պետք է կանգ առնի, քանի դեռ շատ հեռուն չի գնացել: Փառք Աստծո, անցած անգամ ոչինչ չպատահեց: Բայց հետո նորից չէր կարողանում զսպել իրեն: Անհամբեր էր եւ ձգտում էր խախտել սահմանները:

Ծուրջը նայեց: Զբոսայգին շրջապատված էր բարձրահարկ շենքերով, եւ երկինքը վերեւում փակվում էր: Երեւի շուտով անձրեւ էր գալու: Որքա՛ն տարբեր էր այս հեղձուցիչ եղանակը իր հայրենի քաղաքի եղանակից: Նույնիսկ գրեթե տասը տարի անց էլ՝ դեռ չի կարողացել սովորել այս եղա-

նակին: Սիրահարները շարունակում էին կրքոտ գրկախառնվել մոտակա նստարաններին: Ինքը դա չէր կարողանում տանել: Հենվելով քափուրի ծառին՝ աչքերը փակեց: Երկու մուգ կարմիր տերեւ իջան կրծքին:

Ինչ եկել էր այս քաղաք, միայն տեսել էր այս տարօրինակ ծառերը, որ գարնանն են տերեւները թափում: Վերցրեց տերեւները եւ տրորեց ափի մեջ, ապա թողեց, որ ընկնեն գետնին: Իսկապես խղճում էր աղջկան: Նախկինում դա եղել էր, ուստի նա պետք է պատրաստ լիներ այս անգամ: Ինքը չէր կարող պատասխանատվություն կրել որոշման համար:

Աղջիկը գրեթե մեկ ժամ ուշ եկավ: Մեղադրական հայացքով նայեց նրան ու հարցրեց, թե ինչքան է վճարել: Նրա դեմքը դարձավ վառ կարմիր, եւ ասաց, որ սխալ ուղղությամբ մեկնող գնացք էր նստել եւ գլխի չէր ընկել, մինչեւ որ վերջին կայարանին էր մոտեցել: Մոռացել էր, որ ինքն էլ է նույն բանն արել, երբ նոր էր քաղաք եկել, եւ ասաց՝ ինչպե՞ս կարող էիր այդքան հիմար լինել, որ լրիվ այլ ուղղությամբ գնայիր: Կատաղած էր, երբ մի քանի անգամ կրկնեց «հիմար» բառը: Նա գլուխը կախեց՝ ընդունելով իր նախատինքների տարափը եւ պնդելով, որ դա այլեւս չի կրկնվի: Կրկնվի՞: Փոթկացրեց: Ո՞վ գիտի ո՛ւր կգնաս հաջորդ անգամ, մինչեւ արթնանաս:

Բայց լռեց, երբ տեսավ, որ նրա աչքերը սկսում են թրջվել:

Առաջ քայլեց զբոսայգու նեղ արահետով, եւ աղջիկը ձգտում էր հասնել իր ետեւից: Սովոր էր միայնակ զբոսնել քաղաքում արագ քայլերով, եւ աղջիկն ստիպված էր գրեթե վազել, որպեսզի ետ չմնար: Շրջեց դեմքը եւ քայլեց աննպատակ՝ նայելով միմյանց ձեռք բռնած սիրահարներին, իրենց երեխաների հետ զբոսնող միջին տարիքի տղամարդկանց կամ անվասայլակներին նստած ծերերին: Արեւի լույսը խայտաբղետ շողում էր մարդկանց դեմքերի վրա: Կրկին մտածեց այն փղերի մասին. ինչպես էր արեւն իր հզոր ճառագայթներով ընկել նրանց ցողածածկ կոպիտ մաշկի վրա եւ շողում էր՝ ջրի մեջ շարժվող ոսկե ծածանի նման: Ուզում էր փախչել, բայց ինչ-որ բան բռնել էր ձեռքը: Մի ակնթարթում սթափվեց ցնորքներից եւ ետ նայեց ու տեսավ, որ շնչակտուր աղջիկը բռնել է իր ձեռքը:

-Ի՞նչ ես այդպես արագ վազում: Չես էլ սպասում ինձ:

-Սովոր եմ այդպես մենակ քայլելու,- ժպտաց անտարբեր:

Շարունակեցին դանդաղ քայլել զբոսայգում՝ ձեռք-ձեռքի:

Նրանց տեսնող ցանկացած մեկը համոզված կլիներ, որ սիրահարների զույգ են:

Հանկարծ իր մտքով անցավ, որ գուցե աղջկա աչքում իրենք իսկապես

զույգ են: Մի տեսակ անհանգստացավ՝ վախենալով, որ ծանոթներից մեկնումեկը կարող է տեսնել իրենց, իսկ միգուցե իր ընկերուհի՞ն: Գիտեր, որ ծիծաղելի բան է մտածում, բայց չէր կարողանում այդ միտքն իրենից վանել: Երբ մոտեցան փոքրիկ լճին, ձեռքը ետ քաշեց եւ ցանկապատող ճաղաշարին հենվելով՝ նայեց պղտոր ջրին: Այսուայնտեղ ռետինե մի քանի նավակ էին ճոճվում, իսկ լճի մակերեւույթից վեր՝ բադի կտուցների նմանվող ծորակներից պարբերաբար ջրի շիթերի բարձր շատրվաններ էին արտամղվում: Նավակներում գտնվող աղջիկները ժամանակ առ ժամանակ վախեցած ճիչեր էին արձակում՝ սեղմվելով իրենց կողքին նստած տղաներին: Շիթերն անմիջապես ծուլորեն ցած էին թափվում ջրի մակերեւույթին, իսկ կաթիլներից մի քանիսն ընկնում էին նրանց դեմքերին՝ թույլ ծկնահոտ արձակելով: Ուզո՞ւմ ես փորձել: Աշխույժ նայեց աղջկան: Բայց նա լճին չէր նայում: Նրա դեմքը մռայլ էր, երբ նայում էր անցնող մարդկանց: Ուզո՞ւմ ես փորձել: Նորից հարցրեց: Չէ՝ եղավ կտրուկ պատասխանը: Մի պահ զարմանքով նայեց նրան եւ ասաց՝ մոռացիր: Բայց երբ քայլեցին լճի մյուս կողմը, որտեղ վարձու նավակներն էին, աղջիկը կանգ առավ: Եկ թիանավակ նստենք: Թախանձող հայացքով նայեց իրեն: Չասացի՞ր, որ չես ուզում: Պատասխանեց ծուլորեն: Ուզում եմ թիավարել, չեմ ուզում այդպես խաղալ, - ասաց աղջիկը: Նա իրեն ասաց, որ ապրում էր մեծ գետի կողքին: Լայնարձակ գետ էր, եւ ջուրը հոսում էր հարթ ու սահուն: Նա սիրում էր նավակով մի ափից մյուսն անցնել:

Լի Շենը թիանավակ չվարձեց, ինչպես աղջիկն էր առաջարկել: Փոխարենը վարձեց դանդաղընթաց մի էլեկտրանավակ: Երբ երիտասարդ էր, ապրում էր լեռնային շրջանում, եւ առաջին անգամ նավակ նստել էր քաղաք գալուց հետո: Նավակ նստելիս դեռ հուզվում էր: Նստեց ղեկավարման մասի նստարանին եւ սկսեց ղեկալծակով կարգավորել նավակի ընթացքը: Նավակի քիթը շարունակում էր զարկվել կամրջի հենարաններին եւ ջրափնյա գծին: Շուտով հոգնեց դրանից: Նավակը շատ դանդաղ էր շարժվում, եւ շատ հեշտ էր այն կառավարել: Տեղը փոխեց աղջկա հետ եւ տեսավ, թե ինչպես է նա հուզված բռնում ղեկալծակը: Աղջկա դեմքն ամբողջովին կարմրատակել էր, մեկ ճչում էր, մեկ աղաղակում: Նա խանդավառ կերպով պատմում էր երեխա ժամանակ գետի վրա նավարկելիս ունեցած իր փորձի մասին: Ինքը ծուլորեն պատկերացրեց նրան ափին խաղալիս: Աղջիկը, ինչպես միշտ, գրավիչ չէր, բայց հայացքի մեջ որոշակի նուրբ փոփոխություն կար: Մինչդեռ ինքը շուտով սկսեց հոգնածություն զգալ: Միշտ էր հոգնածություն զգում: Ձախ ձեռքով նավեզրից բռնած՝ նա-

յեց հեռվում լճի մակերեսին արտացոլվող երկնքին, եւ թուլացած կոպերը խոնարհվեցին:

Նավեզրից բռնած ձեռքը սահեց, եւ Լի Ճենն անմիջապես բացեց աչքերը: Աղջիկը թեթեւ ժպիտով նայում էր իրեն: Դեմքը կարմրեց: Քնած ժամանակ այնքան գվարճալի տեսք ունեիր: Նա մեղմ կչկչում էր, իսկ դեմքը ողողված էր արեւի լույսով: Ինքը նույնպես ժպտաց եւ ուղղեց մեջքը՝ շորերը կարգի բերելով: Աղջիկը շարունակում էր քրքջալով նայել իրեն: Ինքը հոնքերը կիտեց եւ մի հայացք գցեց նրա կողմը: Ինչի՞ վրա ես ծիծաղում: Նա զսպեց ծիծաղը: Որոշ ժամանակ անց ամպերը ցրվեցին, եւ ջուրը ողողվեց մթնշաղի լույսով: Լույսն ասես արտացոլվում էր արույրե հայելու մեջ: Փոքրիկ նավակը կանգ առավ լճի մեջտեղում՝ լրիվ մենակ: Գլխացավ զգաց՝ ասես ուժեղ ճառագայթից հանկարծ կուրացած:

-Երբեւէ փիղ տեսած կա՞ս,- հարցրեց անսպասելիորեն:

-Երբեք: Որտեղի՞ց: Քո նախկին բնակավայրում փի՞ղ ունես:

- Ես փղեր տեսել եմ միայն կենդանաբանական այգում,- անփութորեն ասաց Լի Ճենը՝ հայացքը հանգիստ հառած ջրի մակերեւույթին խաղացող լույսին:

Երբ ավելի մթնեց, նրանք հեռացան զբոսայգուց: Լի Ճենը շարունակում էր քայլել մի փոքր առջեւից, իսկ աղջիկը վազում էր, որպեսզի ետ չմնա, երբեմն իր թեւքից քաշելով: Նրանք անշտապ ընթրեցին փոքրիկ, դատարկ ռեստորանում՝ երբեմն զրուցելով: Մեծադիր ապակե լուսամուտից անդին կամաց իջնում էր գիշերը: Սպասեց մինչեւ աղջիկն ուտի վերջացնի ապուրը: Նա փոքր գդալով իրար ետեւից կում-կում կուլ էր տալիս ապուրը, ասես այն շատ համեղ էր: Ինքը նայում էր նրա թեթեւակի դողացող մատներին, սոխարմատի նման ճերմակ՝ երկար, նեղ եղունգներին: Գիտեր, թե հետո ինչ է լինելու, եւ վստահ էր, որ նա էլ գիտե: Նա չպետք է հավատա իր այսպես ասած հավաստիացումներին:

Ճիշտ այն առաջին գիշերվա նման՝ աղջիկը ձեռքերը խաչեց, որպեսզի պաշտպանի կրծքերը, եւ ամուր պրկեց ոտքերը: Ինքն ուժեղ ճնշում գործադրեց: Չէի՞ր ասում, թե ուզում ես օգնել ինձ՝ նշելու ծննդյանս օրը: Սա՞ ես համարում ինձ տրված ծննդյան օրվա նվեր,- հարցրեց: Աղջիկը պետք է որ ապշած լիներ իր սպառնագին պահվածքից: Արցունքներ խաղացին նրա աչքերում, ասես աղերսում էր՝ ինչո՞ւ ո՛չ հաջորդ անգամ: Հաջորդ անգամ համաձայն կլինեմ: Գուցե այս մեղմ, քնքուշ մերժումը պատճառ դարձավ, որ ինքը վերջ տա եւ պառկի նրա կողքին՝ աչքերն առաստաղին հառելով եւ ծանր շնչելով: Շփոթված էր ու վրդովված:

Աղջիկը շտկեց զգեստը եւ նայեց Լի Ճենին՝ կրկին քրքջալով: Հայացքն ուղղեց աղջկա կողմը: Հիմա՞ ինչու ես ծիծաղում: Ծրջվելով՝ նա սեղմեց շուրթերը եւ սեւեռուն իրեն նայեց: Այլ տեսք ունես, քան վերջին անգամ քեզ տեսածս ժամանակ:

Ինչպե՞ս թե՝ այլ,- հարցրեց: Նա ծիծաղեց եւ տատանվեց, ապա շարունակեց: Հիմա շատ ես ծերացել: Այս խոսքի վրա նորից սեղմեց նրան: Տրամադրված էր խախտել ամեն սահման, որպեսզի վրեժ լուծի: Միայն մեկ վայրկենական կասկած ունեցավ. աղջիկը տարբեր էր իր նախկին ընկերուհուց: Այս քաղաքում իրենք նույնն էին: Երկուսն էլ թափառական էին, անհանգրվան:

Աղջկա համար սա առաջին անգամն էր: Խոչընդոտը, որին ինքը հանդիպեց, եւ ցավը, որն աղջիկը ցուցաբերեց, իր սպասածից շատ ավելի մեծ էին: Զննեց նրա կծկված, ցնցվող դեմքը եւ մի կարճ պահ վարանեց, ապա շարունակեց՝ էլ ավելի վճռական: Աղջիկը շրթունքը կծեց եւ հայացքը մի կողմ շրջեց: Լի Ճենը մտածեց, որ նա ուր որ է կարտասվի, բայց աղջիկը պարզապես հայացքն ինչ-որ բանի էր հառել: Նախկինում իր հետ դա երբեք այդքան երկար չէր տեւել, եւ այդ ամբողջ տեւական գործընթացի ժամանակ աղջիկը շարունակում էր հայացքը մի կողմ շրջել եւ իրեն չնայել: Դիմեց նրան՝ անունը տալով՝ Սյաո Յան, Սյաո Յան, բայց նա չէր պատասխանում: Մի պահ հիշեց նախկին ընկերուհուն, եւ սիրտը սեղմվեց: Չգիտեր, թե աղջիկն ինչի մասին է մտածում: Դեմքը հպեց նրա պարանոցին եւ զգաց վառոդի այն թույլ հոտը: Ի վերջո աղջիկը դեմքով շրջվեց իր կողմը եւ հարցրեց՝ ձայնի մեջ ձանձրույթի երանգ՝ դեռ չե՞ս ավարտել: Նրա հայացքի տակ ինքը թուլացավ եւ սաստիկ կարմրեց:

Լի Ճենը չտեսավ այն, ինչ սպասում էր տեսնել Սյաո Յանի տակ ընկած սրբիչի վրա: Փոխարենը հանգստացավ ու ծիծաղեց եւ ասաց, որ ոչինչ չկա, ամեն ինչ լավ է: Ուղեկցեց աղջկան մինչեւ լոգարան եւ արագ նկատեց մի մեծ կարմիր բիծ նրա ոտքերի տակ: Կանգնած էր աղջկա կողքին, իսկ կարմիրը դանդաղ հոսում էր նրա ոտքերի վրայով: Այն շարունակում էր հոսել ինչ-որ գաղտնի, վախեցնող տեղից: Ինքը հետո մտածում էր, թե ինչպես պետք է հիմարի պես վախենար այն ժամանակ: Հիշեց, որ առաջին անգամ նախկին ընկերուհու հետ լրիվ մթության մեջ էր: Թվում էր, թե ընկերուհին շատ ավելին գիտեր, քան ինքը, եւ չէր արնահոսել: Ինչից է, որ այդքան շատ է, այդքան շատ է, կրկնում էր անընդհատ: Աղջիկը նրան նայեց վշտալի դեմքով: Ես ի՞նչ իմանամ: Ինքն շտապեց ասել, որ բան չկա, ոչինչ էլ չի լինի: Կարծես նրան էր վստահեցնում, բայց միաժամանակ

վստահեցնում էր ինքն իրեն: Սիրո՞ւմ ես ինձ: Տխուր հարցրեց աղջիկը: Ինքը մի պահ տատանվեց, ապա ասաց՝ իհարկե: Աղջիկն էլ ավելի վշտացավ: Ասա դա: Ուզում եմ ասես դա: Չեմ ուզում պարզապես պատասխանես: Իսկ ինքն ուղղակի ասաց՝ մի՞թե կասկած կա: Գրկեց նրան եւ թեթեւ ծիծաղեց՝ մտածելով՝ այսուհետ ես այլեւս լավ մարդ չեմ:

Առավոտյան երբ արթնացան, աղջիկն ասաց, որ գիշերն ինքը կրճտացնում էր ատամները: Կրճտոցի ձայնը բավականին բարձր էր, ու նաեւ գոռում էր եւ ճչում: Հարցրեց՝ արդյո՞ք մղձավանջ էր տեսնում: Առաջին անգամ իմացավ, որ քնած ժամանակ ատամներն է կրճտացնում: Նախկին ընկերուհին երբեք իրեն չէր ասել այդ մասին: Միշտ ինքն էր արթնանում գիշերվա կեսին եւ անտարբեր նայում հանգիստ քնած ընկերուհուն: Մի պահ մտածեց: Ընկերուհու հետ երբեք չէր խոսել փղերի մասին: Եվ կասկածանքով հարցրեց աղջկան՝ իրո՞ք:

Ծնունդյան օրվա առթիվ աղջիկն իրեն սեւ շարֆ նվիրեց: Ասաց, որ երկու շաբաթում է գործել դա: Ինքը շնորհակալություն հայտնեց նրան, եւ մինչ նա լոգարանում էր, շարֆը խցկեց հյուրանոցի կոշիկի պահարանի մութ խորքերը:

4

Դրանից հետո փղերը երբեք ամբողջ երազը չէին գրավում: Փոխարենը՝ հայտնվում էին մի շարք տարբեր երազներում: Երազ տեսավ՝ իբր գործընկերոջ հետ աստիճաններով վեր էր բարձրանում, ու երբ հասան վերին հարկին, գործընկերը դեմքով դարձավ դեպի իրեն, եւ նրա գլուխը հանկարծ պայթեց: Դա հսկա փղի վիթխարի գլուխ էր: Ինքն այնքան վախեցավ, որ շրջվեց ու փախավ, բայց տեսավ, որ ոչ մի ուղղությամբ ճանապարհ չկա: Հետո մեկ ուրիշ անգամ էլ երազ տեսավ, երբ նոր էր քուն մտել: Մշուշի մեջ հսկայական մի լեռ էր բարձրանում, որ խաղողի վազերով էր պատված եւ չափազանց զառիվայր էր: Ուժասպառ հասավ գագաթին եւ զգաց, որ ոտքերի տակ գետինն սկսեց ցնցվել: Ծուրջը նայեց եւ տեսավ, որ բարձրացել է վիթխարի փղի ուսերին: Այսպիսի երազներից մշտապես արթնանում էր սառը քրտինքի մեջ կորած: Սակայն Սյաո Յանի հետ այն գիշերից հետո պարզեց, որ փղի վրա նստած՝ կարմիր անջրանցիկ թիկնոցով աղջիկն այլեւս երբեք չի հայտնվում: Ուրախ էր, բայց նաեւ փոքր-ինչ հուսախաբ:

Ամեն օր, երբ երազ տեսնելուց հետո արթնանում էր, դեռ մինչեւ աշխատանքի գնալը որոշ ժամանակ էր ունենում: Պառկում էր անկողնում, լրիվ սթափվում եւ պարզապես նայում: Ահավոր տեսք էր ունենում: Սկսեց մաքրող լոսյոն օգտագործել, դեմքը խնամքով լվանալու համար: Դեմքը լվալուց հետո խնամքով սափրվում էր: Լուռ նայում էր հայելուն ամբողջ մի հավերժություն՝ իսկական ծաղրածուի նման ծամածռվելով ու ատամները բացելով, եւ հայելու միջի դեմքն արձագանքում էր նույն կերպ: Հետո հանկարծ հանգիստ ու անխռով տեսք էր ընդունում, եւ հայելու միջի մարդն էլ էր հանդարտվում: Իսկապես հետաքրքիր էր: Անկախ նրանից, թե ովքեր են, մարդիկ երբեք նույնը չեն հասարակության մեջ եւ առանձին: Միայն ինքն է տեսել իր ծամածռվող դեմքը:

Աշխատանքի գնալու ճանապարհին երբեմն հայացք էր գցում այս կամ այն գեղեցիկ աղջկա կողմը: Այս քաղաքում գեղեցիկ աղջիկներն անպակաս էին: Մի օր ճամփեզրին սպասում էր համալսարանի իր հին դասընկերոջը՝ Ցզյանին: Հեռվից նկատեց կարճաթեւ ճերմակ վերնաշապիկով, սեւ, կարճ շրջազգեստով նուրբ ու սիրունիկ՝ քայլող մի աղջկա: Աչքերն այնքան թարմ ու մաքուր էին, որ նա ուղղակի հմայիչ էր: Չկարողացավ զսպել իրեն եւ մի փոքր ավելի մոտեցավ, որ ավելի լավ տեսնի: Աղջիկը մոտեցավ եւ դիմեց իրեն, ինչպես եղբորը կդիմեն, ասելով, թե ավելի քան գոհ կմնա իր ծառայությունից: Ապշած նայեց նրան եւ հարցրեց՝ ծառայությունի՞ց: Աղջիկն արագ արձագանքեց մի շարք արտահայտություններով՝ «Փոթորիկ անապատում», «Բյուրեղյա սեր» եւ այլն: Երբ ավարտել էր, հանդիսավորությամբ ավելացրեց՝ երաշխավորում եմ, որ կբավարարվես: Ինքը հասկացավ, թե նա ինչ նկատի ունի, եւ սաստիկ կարմրեց, բայց պահպանեց ինքնատիրապետումն ու հարցրեց՝ ինչքա՞ն: Երեք հարյուր՝ լրիվ ծառայության համար կամ հինգ հարյուր՝ երկու հանդիպման համար: Եթե ուզում ես ամբողջ գիշերը, ապա յոթ հարյուր: Այս ասելով՝ ակնկալիքով նայեց իրեն: Ինքն իսկապես գայթակղվեց: Իր ծանոթ աղջիկներից եւ ոչ մեկն այս աղջկա չափ գեղեցիկ չէր: Գլուխը կախեց, ասես խղճի հետ կռիվ էր տալիս: Աղջիկը նկատեց իր տատանվելը եւ ասաց, որ ապրում է հարեւանությամբ, որ անվտանգության խնդիր չի լինի, որ սովորաբար ծառայություններ չի առաջարկում բացեիբաց եւ որ սովորաբար իր հաճախորդներին գտնում է առցանց: Այսօր մի փոքր ծանծրույթ էր զգում, դրա համար էլ դուրս էր եկել զբոսանքի եւ հանդիպել էր իրեն: Եվ կարող էր իրեն ասել, որ կարգին տղա է: Մի պահ վերից վար նայեց աղջկան: Դեմքը նուրբ էր, կոպերին թեթեւ ստվերաներկ էր նշմարվում, որն ըստ էության անմեղու-

թյան տպավորություն էր հաղորդում: Բայց այդուհանդերձ նա այդ գործն էր անում: Ինքը չգիտեր, թե ինչն ստիպեց իրեն դա անել: Ես ազնիվ տղայի տե՞նք ունեմ,- հարցրեց ծաղրանքով: Աղջիկն աչքով արեց եւ սեղմեց իրեն՝ գալի՞ս ես, թե՞ չէ:

Չասաց, թե կընդունի նրա առաջարկությունը, ոչ էլ մերժեց այն: Կարմրատակած դեմքով հարցրեց, թե արդյո՞ք նա շատ հաճախորդներ ունի եւ ինչպե՞ս է նրա առողջությունը: Կակազելով, ճակատը քրտինքի կաթիլներով պատված, ձեւացրեց, թե մազերն է ուղղում, եւ առիթից օգտվելով՝ ճակատը սրբեց: Ձեռքից սառը քրտինք էր կաթում: Մտածեց, թե աղջիկը կզայրանա, բայց նա չզայրացավ: Դրա փոխարեն քմծիծաղեց՝ ի ցույց դնելով կանոնավոր, փայլուն սպիտակ ատամնաշարը: Ծալվարդ հագդ պահիր, եղբայր: Սա իմ մասնագիտությունը չէ: Ընդամենը կողմնակի աշխատանք է: Եթե քո բանը չէ, մի՛ զբաղվիր դրանով: Ինքը նորից ու նորից ներողություն խնդրեց՝ ասելով, որ դա չի եղել իր մտադրությունը: Իսկապես փոքր-ինչ հուզված էր, բայց անհանգստացած էր գնից եւ, ավելի շատ, վախենում էր, որ անախորժ մի բան կպատահի: Շատ պատմություններ էր լսել փորձանքի եկած մարդկանց մասին: Շուրջը նայեց: Իսկ եթե քեզ մոտ չգնա՞նք,- առաջարկեց,- արի սենյակ վերցնենք: Աղջիկը նայեց իրեն ու վճռական պատասխանեց՝ չէ, դա չեղավ: Ինչո՞ւ ոչ՝ հարցրեց լկտիաբար: Աղջիկը նայեց հեռուն եւ պատասխանեց՝ ասել է ոչ, ուրեմն նշանակում է՝ ոչ: Երբեք կանչով չեմ գնում: Նա ակնհայտորեն անհամբեր դարձավ, երբ դիտավորյալ դոփեց մայթին բարձր կրունկներով եւ սառն աչքերով փնտրեց իր դեմքը: Գալի՞ս ես, թե՞ չէ: Նորից զգաց, որ ճակատը քրտնում է, երբ պատասխանեց, թե ընկերոջն է սպասում: Նկատեց, թե ինչպես աղջկա դեմքը հանկարծ պաղ սառույցի վերածվեց, երբ ցածր ձայնով հայհոյեց իրեն՝ գնա՛, ես քո... Իզուր ժամանակ վատնեցի, պետք է շուտ գլխի ընկնեի: Ասաց ու հեռացավ: Ինքն իրոք անհարմար էր զգում: Իր մի մասն ուզում էր հետեւել նրան, մյուսը վճռել էր տեղում կանգնած մնալ: Նայում էր աղջկա ուրվագծին, մինչ վերջինս հեռանում էր, եւ ուզում էր, որ նա ետ նայի: Եթե նայեր ետ, ինքը հաստատ կգնար նրա ետեւից: Բայց աղջիկը պարզապես շարունակում էր քայլել:

Հենց աղջիկը հեռացավ, ընկերը՝ Ցզյանը, եկավ: Սիրտն սկսեց արագ խփել: Փառք Աստծո, աղջիկն արդեն գնացել էր, թե չէ ինքը դժվարին կացության մեջ կընկներ, եթե Ցզյանը տեսներ իրենց: Իսկ եթե Ցզյանը նրա հետ գնար, էլ ավելի վատ կլիներ: Բայց սրտի խորքում, այնուամենայնիվ, փոքր-ինչ հուսախաբ էր:

Ամբողջ միջադեպը կատակով կապեց Ցզյանի հետ: Ցզյանը ծիծաղեց, բայց կատակը նրան բռնում էր, եւ ասաց, որ Լի Ծենը դատարկ բանից անհանգստանում է: Երբ գնացին Ցզյանի մոտ, Ցզյանը խորամանկ մի հայացք գցեց իր վրա եւ ծիծաղեց: Ապա մտավ սոցիալական ցանցի կայքը եւ բացեց մատչելի կանանց ցուցակը: Ոմանք առանց լուսանկարի էին, մյուսները լուսանկարով էին ներկայանում: Ովքեր լուսանկարով էին, բոլորն էլ հիանալի տեսք ունեին: Գեղեցիկ են, չէ՞,- սրամտեց Ցզյանը: Քեզ ասում եմ՝ ոչ մի սահմանափակում չկա, թե ինչ կարող ես անել լուսանկարները ցուցադրողների հետ: Դրանց մեծ մասը գործի մեջ է: Նույնիսկ հատուկ հագնվում են, դա կոչվում է «սպիտակ օձիքով գիշերային աշխատանք»: Նկատեց այն սյունակը, որտեղ աղջիկները նշում էին իրենց հայրենի քաղաքը: Բոլորի հասցեներն էլ քաղաքից դուրս էին, բայց, հետաքրքրվելով, հարցրեց՝ ի՞նչ կասես: Ցզյանը ժպտաց եւ խնդրեց ընտրել մեկին: Ավելացրեց աղջկա տվյալները եւ կարճ հաղորդագրություն ուղարկեց՝ «Ողջույն»: Պատասխանը չուշացավ. 300՝ լրիվ ծառայության համար եւ 800՝ ամբողջ գիշերվա համար: Եկեք բարձր տրամադրությամբ, հեռացեք լիովին բավարարված: Ցզյանը բզեց իրեն եւ ինքնագոհ ծիծաղեց: Նա նորից բացեց աղջկա տվյալների լուսամուտը, որտեղ տասից ավելի լուսանկար կար, բոլորն էլ վառ եւ պատկերավոր: Նաեւ մի համացանցային էջ կար, որ հիանալի պաթոսով լի լեզվով խոսում էր դժբախտ մենության եւ սեր գտնելու վճռականության մասին: Մեկ նախադասությամբ ասվում էր ամեն ինչ. «Ամեն բան սկզբնավորվում ու ընդունվում է հոգով եւ ի կատար է ածվում մարմնով. սերը հասցված է երրորդ աստիճանի ֆիլմի կարգավիճակի»: Էջի վերնագրերը չորս պատահական արտահայտություններ էին՝ «Աշխարհը խավար է», «Պոռնիկներն առատ են», «Ցղամարդիկ իմաստուններ չեն», «Ո՞վ չի սիրում փող»: Ցզյանը հռհռաց, երբ կարդաց դա: Քա՛ք է: Եվ էդ աղջիկը սկսնակ բանաստե՛ղծ է: Մեր օրերում անհնար է ասել, թե ով է կարգին ընտանիքի կին եւ ով է քիթն ամեն տեղ խոթող պոռնիկ:

Հավանաբար այն պատճառով, որ շատ դասական վեպեր էր կարդացել մարմնավաճառների սիրային սխրանքների մասին, Լի Ծենը ոչ միայն հրաժարվեց նրանց վրա նայել, այլ նաեւ որոշակիորեն խղճաց նրանց: Բայց դեռ մի տեսակ վատ էր զգում: Դրանից հետո երբ մի գեղեցիկ աղջիկ էր տեսնում, չէր կարողանում չհետաքրքրվել՝ արդյո՞ք նրանցից մեկը չէ: Ապա մտքով վերադառնում էր այն միջադեպին: Բավական է, ես դրան վերջ եմ տվել,- մտածում էր: Իսկապես տականքի մեկն եմ: Բայց դա չէր

խանգարում, որ երբեմն մտնի այդ օրը Ցզյանի այցելած կայքէջը: Եվ երբ նմանատիպ կայք էր գտնում, նայում էր աղջիկների լուսանկարներին ու ձեռնաշարժությամբ զբաղվում: Երբ ավարտում էր, մի հայացք էր գցում իր ծանրաբեռնված գրադարակներին: Որոշ ժամանակ անց խոր շունչ էր քաշում եւ մտածում, թե ինչքան է անցել վերջին անգամ հարաբերություն ունենալուց հետո:

Գրեթե մեկ ամիս էր, ինչ Լի Ծենը չէր կապվել Սյաո Ցանի հետ, ոչ էլ նա իր հետ: Դա մի տեսակ տարօրինակ էր թվում: Սկզբում մտածում էր, թե աղջիկը, ձեռք բերելով առաջին զուգընկերոջը, էլ երբեք տեսադաշտից բաց չի թողնի, դրա համար էլ փոքր-ինչ մտահոգ էր: Բայց նա չէր պտտվում իր շուրջբոլորը, եւ ինքը չէր կարող իրեն մի քիչ հիասթափված չզգալ: Սակայն այս անգամ, փաստորեն, նախկին ընկերուհին կապվեց իր հետ: Նա մի կարճ հաղորդագրություն ուղարկեց իրեն եւ ասում էր, որ բաժանվել է: Չգիտեր՝ ուրա՞խ պետք է լինի, թե՞ ոչ, բայց հայտնեց իր ցավակցությունը: Նա դժգոհում էր, որ այն մյուս տղան լքել է հեռավորության պատճառով: Մտածեց, որ դա շատ զվարճալի է: Իսկ մի՞թե աղջիկը մոռացել է, թե ինչպես էր իրեն պահում: Բայց այդուհանդերձ ցույց տվեց, որ չի խառնվում, եւ իր կարեկցանքը հայտնեց:

Մի քանի օր անց նախկին ընկերուհին կրկին զանգ տվեց եւ հարցրեց՝ կարո՞ղ է օգնել, որ ուրիշ աշխատանք գտնի: Ինքն արդեն աղջկան ասել էր, որ Ցզյանն իրեն խնդրել է առաջադրել մեկին, որը կարող է աշխատել նրա ստեղծած ընկերությունում:

Կապվեց Ցզյանի հետ եւ երկար-բարակ խոսեց նախկին ընկերուհու մասին: Ցզյանը համաձայնեց թույլ տալ, որ նա փորձի: Այդ գործը դասավորելով՝ մի փոքր հուզմունք ապրեց: Ոչ միայն այն բանի համար, որ կարոտել էր միասին անցկացրած օրերը: Չէր կարող մոռանալ նաեւ սեքսը: Նա միշտ գրգռում էր իրեն: Մի օր չդիմացավ եւ մի գրություն ուղարկեց նրան. «Կարո՞ղ ենք նորից միասին սեր անել»: Մի քանի րոպե անց եկավ պատասխանը. «Եթե պատրաստ ես վճարել, հնարավոր է»: Մի պահ մտքով անցան այն աղջիկները: Ծփոթված, ցնցված էր, թե նա ինչպես կարող էր այդ կերպ պատասխանել: Քիչ մնաց խեղդվեր, ասես հենց նոր ճանճ էր կուլ տվել: «Հա՞: Եվ ինչքա՞ն»:

Լի Ծենն սկսեց ուշադրություն դարձնել նախկին ընկերուհու մասին ամեն նորության: Գտավ նրա նոր բլոգը եւ պարզեց, որ նա իրականում չի «բաժանվել»: Հենց այդ նույն օրը նրա էջում երկուսի՝ շատ սիրով լի մի լուսանկար կար: Դա իրեն խիստ զայրացրեց: Կասկածեց, որ նա իրեն ասել

է, թե բաժանվել է, միայն իր համակրանքը շահելու եւ իր միջոցով աշխատանք գտնելու համար: Զայրույթի պոռթկման պահին մի հաղորդագրություն ուղարկեց նրան՝ հարցուփորձ անելով այդ մասին: Ի պատասխան՝ աղջիկն ասաց, որ երբեք չի հիշատակել բաժանման մասին: Զայրույթից կուրացած՝ ջնջեց նրա հետ կապող բոլոր տվյալները, բայց նրա հեռախոսահամարը վաղուց էր դաջվել իր ուղեղում, եւ չէր կարողանում ջնջել, որքան էլ որ փորձում էր:

Կյանքը հանկարծ դատարկ էր դարձել:

Լի Ճենը միշտ կախվում էր պատշգամբից եւ նայում քաղաքին. ինչպես կյանքը, քաղաքն էլ ծգվում էր այնքան հեռուն, որքան աչքդ կարող էր տեսնել:

Երբեմն Լի Ճենը մտածում էր Սյաո Յանի մասին, եւ երբ մտաբերում էր այդ յուրահատուկ ոչ գրավիչ դեմքը, սրտի զարկերն արագանում էին: Նա ասել էր, որ ինքը լավ մարդ է: Իր կամքից անկախ՝ դառը ծիծաղեց: Չէր կապվել նրա հետ: Նա նույնպես օտարական էր, եւ ինքը գրեթե կասկածում էր, թե իրենց միջեւ երբեւէ ինչ-որ բան է եղել: Մի օր երկինքը հանկարծակի մթնեց, եւ կայծակի վառ սպիտակ փայլատակումները պար բռնեցին բարձրահարկ, դժգույն շենքերի միջեւ: Ամպրոպի թնդյունից իր գրասենյակի դիմաց գտնվող քափուրի ծառի տակ գետինը ծածկվեց տերեւներով: Բջջային հեռախոսը զանգ տվեց: Տեսավ, որ դա Սյաո Յանն է: Վազեց մինչեւ միջանցքի ամենածայրը, ապա պատասխանեց զանգին: Աղջիկն ասաց, որ երկու դասընկերների հետ դուրս էր եկել զբոսնելու այդ տարածքում, եւ դասընկերները տուն էին գնացել: Այնքան հանկարծակի էր սկսել անձրեւ գալ, որ խնդրում էր՝ եթե կարող է, գա վերցնի իրեն: Ինքը ղեկավարից թույլտվություն խնդրեց եւ տաքսի նստեց ու գնաց աղջկա ասած տեղը, որտեղ կարող էր հանդիպել նրան: Չկարողացավ գտնել նրան, եւ կասկածները վերականգնվեցին: Հնարավոր է, որ նա իր հետ խաղե՞ր է խաղում, կամ գուցե նույնիսկ ավելի մեծ ծրագի՞ր ունի: Իսկ գուցե գտել է մեկին, որն եկել է հատուցելո՞ւ իրեն: Անհանգստացած էր, բայց հենց այդ պահին աղջիկը հաղորդագրություն ուղարկեց: Տեսել էր իրեն: Ինքն սպասեց մի րոպե, եւ աղջիկը հայտնվեց. գլխին մի գեղեցիկ սպիտակ պայուսակ էր պահել եւ ցատկելով ու շտապելով առաջ էր վազում անձրեւի սպիտակ, փայլփլուն քողի միջով:

Լի Ճենը բացեց հովանոցը, եւ Սյաո Յանը կուչ եկավ դրա տակ՝ սեղմելով իր ձեռքը: Նրանք շրջանցեցին զբոսայգու պատը: Զբոսայգու ցանկապատի պողպատե ճաղաշարի վերեւում քափուրի վիթխարի ծառեր էին

վեր խոյանում, դրանց մուգ կարմիր տերեւների եւ նուրբ ծաղիկների գորգը ծածկել էր ներքեւում գտնվող մայթը: Ինքը մեկ անգամ էլ հիշեցրեց աղջկան, որ զգույշ լինի, ոտքը չդնի ջրափոսի մեջ, ինչին ի պատասխան աղջիկն ասաց՝ մի քիչ դանդաղ քայլիր, հա՞: Փորձեց ավելի դանդաղ քայլել: Ծուտով ամբողջովին մթնեց, եւ նրանք ամբողջ աշխարհի աչքում սիրահարների զույգի էին նման, որ գիշերի գրկում քայլում էին թեւ-թեւի: Լի Շենի սիրտը մի քիչ ջերմացավ: Այդ ժամանակ հասան հյուրանոց, որտեղ մնացել էին անցած անգամ: Նրանց շորերի կեսը, որ հովանոցով չէր պաշտպանվել, լրիվ թաց էր: Հովանոցը ծածկված էր սպիտակ ծաղկաթերթերով, եւ Լի Շենը տեսավ, թե ինչպես Սյաո Յանը մեկ առ մեկ խնամքով վերցրեց դրանք, գցեց լվացարանի մեջ ու ջուրը բացելով քշեց: Ապա զգուշորեն փակեց հովանոցը: Ինքը նստեց աթոռին եւ դիտում էր նրա ամեն մի շարժումը: Տարօրինակ թվաց հովանոցն այդպես զգուշորեն փակելը: Ինքը միշտ հովանոցն օգտագործելուց հետո փակում էր այն՝ ինչպես պատահի ու մի կողմ էր դնում:

Երբ նրանց մարմիններն իրարից առանձնացան, ամեն մեկը վերմակը քաշեց իր վրա: Հիշեց Սյաո Յանի աղճատված դեմքը եւ սրտի ցավ զգաց: Սյաո Յան,- շշնջաց,- Սյաո Յա՛ն: Աղջիկը նայեց առաստաղին եւ հանգիստ պատասխանեց՝ գիտե՞ս ինչ... Ես դեռ կրում եմ այն ցավը: Եվ Լի Շենն ասաց, որ գիտե: Սյաո Յանը շարունակեց.

-Ծնողներս միշտ մեզ՝ երեխաներիս ասում էին՝ պետք է մաքուր եւ ազնիվ լինեք: Երբեք չպետք է սեռական հարաբերություն ունենաք ամուսնությունից առաջ:

-Գիտեմ,-ասաց Լի Շենը,- բայց քո ծնողները պահպանողական են, հետադիմական: Տես, թե որ դարում ենք ապրում...

Բայց Սայո Յանն ընդհատեց: Գիտես, որ նրանց նման եմ մտածում: Եվ փոխվեցի միայն հանուն քեզ: Երբեմն, երբ մտածում եմ այդ մասին, խելքս թռցնում եմ: Ինչպե՞ս կարող էի նման բան անել: Ես միշտ եղել եմ իմ ծնողների սիրելի փոքրիկ աղջիկը: Եթե միայն իմանային՝ ինչ եմ արել, չգիտեմ, թե ինչ կմտածեին: Երկար դադարից հետո Լի Շենն ավելացրեց՝ գիտեմ: Դու սիրո՞ւմ ես ինձ,- հարցրեց Սյաո Յանը,- ինձ պետք է, որ դու դա ասես: Այս անգամ Լի Շենը չասաց՝ «գիտեմ»: Փոխարենը, հիասթափված, մտածեց՝ ինչքա՛ն միամիտ է: Ինքն ու ընկերուհին այդ չորս բառն իրար ասել էին անհաշիվ անգամներ, բայց ի՞նչ կապ ուներ, թե քանի անգամ էին ասել, երբ այդ ամենի գումարն այդուհանդերձ զրոյի էր հավասար:

Լի Շենը հատուկ պատվիրել էր այն սենյակը, որտեղ եղել էին վերջին

անգամ: Թաքուն նայել էր կոշիկի պահարանի մեջ, բայց ով գիտե՝ ուր էր կորել այն սեւ շարֆը:

Որոշ ժամանակ ձեռքերով շփել էր չորս դատարկ պատերը, մինչեւ որ սկսել էր ծիծաղել ինքն իր վրա: Ինչ ապո՛ւշն ես դու:

5

Դրանից հետո նրանք ամեն երկու կամ երեք շաբաթը մեկ գիշերը միասին էին անցկացնում: Լի Ճենն աշխատանքով էր զբաղված, ու չնայած Սյաո Յանը գրանցված էր այսպես կոչված ցածրորակ դպրոցում, այնուամենայնիվ, կարգապահությունը խիստ էր, եւ ոչ մի կերպ չէր կարող դաս բաց թողնել: Դրա համար էլ ամեն անգամ հանդիպում էին աշխատանքից կամ դասերից հետո: Նրանք միասին ճաշում էին, զրուցում որոշ ժամանակ, իսկ եթե շուտ էր լինում, գնում էին զբոսայգի եւ զբոսնում:

Կամ էլ կտրում անցնում էին երկար, ամայի ծառուղին եւ անմիջապես մեկնում էին հյուրանոց ու սենյակ պատվիրում: Այդ ամենից հետո հայտնվում էին իրար գրկում եւ խոսելու թեմաներ մտածում... ըստ էության խոսելու շատ բան չունեին: Հիմնականում ինքը խոսում էր, իսկ աղջիկը լսում:

Սյաո Լինը հենվում էր բարձին, դեմքը խոնարհում եւ ժպտում իրեն: Լսելով, թե ինքն ինչպես է պատմում իր հայրենի քաղաքի տեսարժան վայրերի, ձայն ու հնչյունների մասին կամ իր մանկությունից ինչ-որ զվարճալի մի անեկդոտ, երբեմն Սյաո Լինն էլ պատմում էր ի՛ր հայրենի քաղաքի մասին: Որոշ ժամանակ զրուցելուց հետո ժամերով լուռ նայում էին առաստաղին՝ ամեն մեկն իր հեռավոր մեկուսի մտքերով տարված: Հետո ինքը կրկին պատմում էր նրան, թե որքան լավ էր իր ավագ դպրոցում՝ ծաղրելով ավագ դպրոցում ուսում անցկացնելու աղջկա ձգտումը, որը նրան բերել էր այսպիսի երկրորդ կարգի դպրոց: Չէր երեւում, թե աղջիկը դրանից վիրավորվում է, իսկ եթե ինքը չափազանց շատ էր խոսում, նա պարզապես ասում էր՝ իմ մասին խոսելիս իսկական հաճույք ես ստանում, այնպես չէ՞: Միայն այդ ժամանակ էր ինքը գիտակցում, որ իր հերոսական անցյալը հիշելով՝ նվաստացնում է նրան, եւ դա իրեն գոհունակության դաժան մի զգացում էր պարգեւում: Հետո նա ամենից շատ խոսում էր, թե ինչպես է չորս տարի չինական դասական գեղարվեստական գրականություն սովորել համալսարանում: Ի վերջո հասնում էր «Մարմնեղեն աղոթախսիրը», «Գարնանային ներքնասենյակի գաղտնի պատմությունը» եւ «Ձրագի

պատրույգի վանականի հեքիաթը» գործերի թեմաներին: Երբ Լի Ծենն սկզբում սկսեց քննարկել դրանք, բավականին համեստ էր, եւ երբ հասավ ավելի վիճահարույց մասերին, միշտ ծիծաղում էր ու ասում՝ նրանք անում էին «գիտես, թե ինչ»: Բայց որոշ ժամանակ անց ավելի ուղիղ էր ամեն ինչ ասում եւ վառ ու ազդեցիկ շատ բայեր էր գործածում: Բավականին ոգեւորվում էր, բայց աղջիկը շատ բուռն չէր արձագանքում: Փոխարենը՝ հետաքրքրվում էր կերպարների ճակատագրով: Ինքը ցանկանում էր առիթն օգտագործել՝ գրգռելու աղջկա սեռական ցանկությունները եւ չէր սպասում, որ իր պոռնկագրական ֆիլմը նրա ականջներին կինչի ռոմանտիկ վեպի նման:

Մի անգամ այդպիսի մի հանդիպման վերջում հոգնած եւ ուժասպառ աղջիկը տրտնջաց՝ դու այնքա՛ն փորձառու ես: Ես դա արել եմ նրա հետ՝ դուրս թռավ իր բերանից: Աղջիկը լռեց: Ինքը նրան պատմել էր նախկին ընկերուհու մասին, բայց երբեք այդ մասին չէին խոսել հյուրանոցի այս սենյակում: Հյուրանոցի սենյակը մնացել էր իրենց հատուկ գաղտնի գոտին: Արդեն աղջկա հետ անխոս համաձայնության էր եկել: Ինքն էլ լռեց: Մեկ ակնթարթում նրանց միջեւ հսկայական մի ճեղք էր բացվել, չնայած որ իրարից քիչ առաջ առանձնացած մարմինները դեռ փոխադարձաբար կրում էին մեկը մյուսի ջերմությունը: Աղջիկը վեր նայեց եւ հայացքը սեւեռեց դատարկ առաստաղին: Ցերեկային լույսի կլոր լամպը գունատ ճերմակ լույս էր արձակում, կրաքարի գույնի սառը, ծանր լույս: Աղջիկը մեկ անգամ էլ երկար, խոր շունչ քաշեց եւ խնդրեց այլեւս ընկերուհու մասին չհիշատակել: Սա իմ միակ խնդրանքն է: Ի վերջո, ոչինչ չեմ կարող փոխել անցյալում:

Սյաո Յանն իսկապես տարբերվում էր Լի Ծենի նախկին ընկերուհուց: Նրա պահանջները շատ ավելի քիչ էին: Նա իրեն խնդրել էր, որ զանգ տա, ոչ թե շարունակի հաղորդագրություններ ուղարկել. միշտ թվում էր, թե այդ հաղորդագրություններն ինչ-որ կապ ունեն սեքսի հետ: Եվ ինքն իսկապես մի քանի անգամ զանգ տվեց: Ասաց, որ իրեն դուր չի գալիս, երբ նա հեռախոսով ամբողջ ժամանակ նյարդային պոռթկումներ է ունենում: Խիստ կշտամբեց նրան, եւ աղջիկը դադարեց զանգ տալ եւ այդ մասին էլ չհիշեցրեց: Սյաո Յանն ըստ էության արդեն ասել էր իրեն, որ ինքը չպետք է անհանգստանա, որ նա առանց սկզբունքի չէ: Ինքն ասել էր, որ իրենց համար ապագա չկա, եւ նա համաձայնել էր: Երբեք էլ աղջիկը կեղծ հույսեր չէր փայփայել: Եթե մի օր ինքն ուզենար հեռանալ, նա արգելք չէր հանդիսանա: Լի Ծենն այդ առումով որոշակիորեն հանգիստ էր, բայց նաեւ ցավ

էր ապրում: Մի պահ հիշեց քաղաքից դուրս ապրող այն աղջիկներին, որ եկել էին քաղաք իրենց արհեստի համար:

Երբ Սյաո Յանը տրամադրություն չէր ունենում, նրա փոքրիկ դեմքն ավելի պակաս գրավիչ էր դառնում: Ինքն ինչ-որ չափով վախեցած էր նրա համար եւ ամբողջ երեկո շատ զգույշ մնաց: Հաջորդ օրը, երբ մոտեցան մետրոյի կայարանին, աղջկա դեմքը դեռ լարված էր: Լի Ծենը պոռթկաց՝ միայն այդ մի բանն ասացի: Ի՞նչ է եղել, որ... Սյաո Յանը չուզեց նայել իր կողմը, եւ ինքը նորից իրեն մեղավոր զգաց: Այլեւս նրա մասին չեմ հիշատակի: Ատում եմ նրան: Մի՞թե սա բավական չէ: Սյաո Յանը շարունակում էր անտեսել իրեն: Կայարանում մի գնացք կանգնեց, եւ ուղեւորների բազմությունը ցած իջավ, բայց աղջիկը պարզապես կանգնած էր կառամատույցին, սառն ու անշարժ: Ստի՛ր գնացք,- գայրացած գոչեց Լի Ծենը: Աղջիկը գլուխը շրջեց եւ նայեց անհետացող երկաթուղու կողմը: Անձրեւ էր գալիս, բայց եղանակն արդեն սկսել էր պարզվել, եւ երկաթգծերը փայլում էին: Սյաո Յանը երկար ժամանակ չէր խոսում: Ես չեմ զայրանում, որ հիշում ես նրան: Պարզապես ինձ թվում է, թե հյուրանոցից դուրս գալուց հետո մենք օտարականների ենք նման:

Հաջորդ անգամ, երբ հանդիպեցին, սովորականից մեկ կամ երկու ժամ շուտ էր: Զբոսայգի մտնելիս փորձեց բռնել աղջկա ձեռքը: Եվ անշնորհք կերպով բռնեց նրա մատի ծայրը: Աչքի ծայրով տեսավ, թե նա ինչպես է կծում ստորին շրթունքը եւ խորամանկ ժպտում իրեն: Անցած երկու տարիների ընթացքում նրանք արդեն ծանոթ էին զբոսայգու յուրաքանչյուր լճակի, յուրաքանչյուր մարգագետնի, ամեն մի արահետի, արահետները եզերող ամեն թուփ ու ծաղկի: Ինքնաբերաբար հատեցին անցան ամբողջ զբոսայգին, ասես ուզում էին ինչ-որ բան ձեռնարկել եւ այդուհանդերձ ասես ուզում էին ինչ-որ բանի համար սգալ: Տրորեցին անցան քափուրի ծառից թափված կարմիր տերեւները, բաց կապույտ մի նստարան գտան եւ նստեցին: Մթնշաղն իջնում էր, եւ նրանց դիմաց գտնվող լիճն այնքան ամայի էր, որ ցավալի էր: Մի քանի միայնակ ջրային թռչուններ սրընթաց լիճը նետվեցին, եւ մութ եղեգների մի մեծ հատված աղոտ նշմարվեց լճի հատակին՝ ասես ջնջելով նրա մակերեսին խաղացող ոսկե մայրամուտը: Նրանք հանգիստ նայում էին ջրին, ասես ինչ-որ բան էին զննում, կողքկողքի, ձեռք-ձեռքի տված:

-Դու հիմա ընկերուհի ունես,- անտարբեր ձայնով ասաց Սյաո Յանը:

-Ուրեմն հիմա կարող ես պարզապես կոչվել իմ ընկերուհի՞ն:

Լի Ծենը ցնցված էր, բայց խոսելիս հռհռաց:

-Նկատի ունեմ, որ հանդիպել ես ինչ-որ մեկին, որն իսկապես քեզ դուր է գալիս: Եվ այդ մեկը ես չեմ:

Սյաո Յանը նայում էր լճի մեջ ինչ-որ բանի: Մայր մտնող արեւը լճի վրա նման էր խոր գիշերի մեջ քաղաքի լուսամուտներին արտացոլվող՝ մեկ առ մեկ անհետացող լույսերին:

Լի Ծենը լուռ էր: Գլուխը բզզում էր: Ինչպե՞ս կարող էր նա իմանալ: Ճիշտ էր, որ վերջին մի քանի ամիսների ընթացքում ինքը մտերմացել էր համալսարանական նախկին դասընկերուհու հետ: Նրա հետ հանդիպել էր դեռ համակուրսեցի ընկերների հավաքի ժամանակ՝ նշելու իրենց ավարտական վեցերորդ տարեդարձը: Սովորելու տարիներին իրենք մոտ չէին եղել: Ո՞վ կարող էր մտածել, որ այն գիշեր, երբ հանդիպել էին, մի քանի երգ երգել եւ մի քանի գավաթ գինի խմել, այդպես կիրապուրվեին իրարով: Իրենց փոխհարաբերություններն արդեն հայտնի էին իր ընկերների շրջանում: Նա տեղացի աղջիկ էր եւ արդեն իր բնակարանն ուներ: Տարիներ շարունակ նա փորձեր էր արել եւ շատ անգամ համոզել էր իրեն՝ այդ կապը դարձնել օրինական: Ինքը խուսափում էր այդ թեմայից՝ չիմանալով, թե ինչից է վախենում կամ ինչի է սպասում: Վերջին ժամանակներս սկսել էր անհանգստանալ՝ չիմանալով, թե ինչպես այդ մասին հայտնի Սյաո Յանին:

-Դու ասացիր, որ մենք ապագա չունենք: Ես էլ եմ այդպես կարծում: Ես չեմ կարող այս քաղաքում ինքնուրույն գոյատեւել: Միայն ուզում եմ ասես, որ սիրում ես ինձ:

Այս խոսքերի հետ՝ վերջալույսը Սյաո Յանի աչքերում սպառնում էր մարել՝ վերածվելով գիշերվա խավարի:

- Դրանով ի՞նչ ես ուզում ասել: Կարծում եմ պետք է հանդիպես մեկին, որին կսիրես:

Լի Ծենն ինքն անցավ հակահարձակման:

Սյաո Յանի տրամադրությունն ընկավ, եւ նա դեմքը թաղեց ձեռքերի մեջ ու լուռ արտասվեց:

-Հա, մեկն ինձնով հետաքրքրվել է, բայց ես դեռ չեմ ընդունել նրան: Ասում է, որ ավարտելուց հետո ուզում է ինձ հարավ տանել:

Նրա նիհարիկ ուսերը դողում էին: Լի Ծենի գլխում բզզոցն ավելի ուժգնացավ: Հանկարծ քնքշություն ու խղճի սուր խայթ զգաց եւ չէր ուզում թողնել գնալ: Նաեւ խանդի բռնկում զգաց, երբ մտածում էր, թե ինչպիսի շուն շան որդի կարող է լինել այդ տղան: Ուզեց ձեռքը դնել աղջկա ուսին եւ քաշել նրան իր կողմը, բայց փոխարենը պարզապես բռունցքները սեղմեց: Ինչպե՞ս պետք է մխիթարեր նրան: Իրենց համատեղ կյանքի երկու

տարվա մեջ երբեք չէր ասել, որ սիրում է նրան: Ի՞նչ իմաստ կունենար հիմա դա ասելը: Ոչինչ չէր կարող անել: Այն ամենն, ինչ կարող էր անել, թողնելն էր, որ աղջիկը լաց լինի, մինչեւ նրա արցունքներն աստիճանաբար կհագեցնեին վերջալույսի թարմ օդը:

Վերջալույս էր այդ մեծ, միջազգային մայրաքաղաքում, մարող վերջալույս, եւ գարուն, որ նույնպես հեռանում էր:

6

Երկու ամիս անց Լի Շենը եւ իր նախկին դասընկերուհին ստացան իրենց ամուսնության վկայականը, իսկ արարողությունը նախատեսված էր մայիսի 1-ին: Վկայականն ստանալու երկրորդ գիշերը Լի Շենը կանգնած էր իր նեղլիկ պատշգամբում եւ դուրս էր նայում: Այնքան էլ ուրախ չէր: Հաջորդ ամիս պետք է տեղափոխվեր: Սեփական տուն ուներ այս քաղաքում: Քաղաքն իսկապես ընդունել էր իրեն, ուրեմն պետք է որ իրոք երջանիկ լիներ: Մի պահ նայեց քաղաքի գիշերային երկնքին, խավարի եւ լույսի այդ խառնուրդին: Ներս գալով՝ սկսեց ետուառաջ քայլել: Զգեստապահարանում տեսավ կապույտ շարֆը, որ ընկերուհին էր իրեն տվել, եւ դա հանկարծ հիշեցրեց, թե ինչ էր մտադիր անել: Սյաո Յանի հետ իրենց վերջին բաժանումից ի վեր կապի մեջ չէին եղել: Մտածեց այն կնոջ մասին, որն այժմ իր օրինական կինն էր: Պե՞տք է կապ հաստատեմ: Պե՞տք է կապ հաստատեմ: Հանկարծակի բուռն ցանկություն զգաց: Ինչպե՜ս էր ուզում մեկ անգամ էլ զգալ նրա մարմնից եկող վառոդի եւ քրտնքի հոտը եւ համբուրել այդ կճատ քիթը: Երբեք չէր կարողացել պայքարել իրեն համակող այդ անխոհեմ տենչանքի դեմ: Եվ հանկարծ հաղորդագրությամբ նրան ուղարկեց այն չորս բառը, որոնք նա այդքան փափագել էր լսել: Մոտ 15 րոպե անց աղջիկն արձագանքեց՝ նույն ժամանակ, նույն տեղում:

Զղջման սուր ցավ զգաց, երբ այդ պահին մտածեց կնոջ գեղեցիկ ծիծաղի մասին: Եթե գնար, արդյո՞ք դա ազնիվ կլիներ: Հանկարծ շրջվեց ու նայեց լուսամուտին եւ, նայելով քաղաքի շքեղ լույսերին, ջնջեց դրանցից մեկը: Մի չար մտադրություն ունեցավ. պետք է բռնաբարի քաղաքը, ճիշտ այնպես, ինչպես քաղաքն է բռնաբարել իրեն: Դողում էր, եւ համակվեց ուժասպառ հոգնության մի ալիքով: Արյունը սառեց երակներում: Գնաց լոգարան եւ դեմքին սառը ջուր շփեց, ասես արյունն Է՛լ ավելի սառեցնելու համար: Իրեն նայեց հայելու մեջ եւ անմիջապես թվաց, թե գորշաճերմակ

երանգ նշմարեց քունքերին: Ավելի մոտիկից նայելով՝ հասկացավ, որ դա փողոցի լույսերի անդրադարձն է: Հայելու առջեւ դեմքը ծամածռեց, ինչպես հաճախ էր արել, ապա հանկարծ մտածեց ինչ-որ բանի մասին: Երբ երիտասարդ ենք, հաճախ ենք հայելու դիմաց ծամածռություններ անում, բայց երբ ծեր ենք, հայելին դա ետ է վերադարձնում մեզ: Վլու-հնազանդ քմծիծաղ տվեց: Դեմքը սառը ջրով լվանալուց հետո միտքը փոխեց: Չէր կարող այդպիսի բան անել կնոջ հանդեպ: Բայց անմիջապես հաղորդագրություն չուղարկեց՝ հաջորդ օրվա հանդիպումը չեղյալ անելու:

Լի Ծենը ձգվեց մահճակալին եւ մտածեց իր երեսուն տարիների անցուդարձի մասին մի տեսակ թախծոտ պաթոսով: Ի՞նչ դժվարին տարիներ էին դրանք: Իսկապես ուզում էր լաց լինել, բայց չէր կարողանում: Հանկարծ լուսամուտից մի սոսկալի ուժգին, դղրդացող ձայն լսվեց, եւ սենյակն սկսեց ցնցվել: Համոզված էր՝ երկրաշարժ է: Անմիջապես շրջվեց եւ երերուն քայլերով գնաց դեպի դուռը: Ու մեկ էլ՝ լուսամուտից այն կողմ ինչ-որ բան նշմարեց եւ չկարողացավ շարժվել: Քաղաքի գիշերային դատարկ օդի մեջ փղերի երամակը, հաստատուն ու համաչափ դոփյունով, մթին աչքերով, սլանում էր դեպի իր սենյակ, իսկ առաջնորդող փղի ուսերին մի աղջիկ էր նստած՝ կարմիր անջրանցիկ թիկնոցով: Գոռաց ամբողջ ուժով, բայց ձայն չկար: Սարսափած էր, բայց ոչ մի մկան չէր կարողանում շարժել: Ահաբեկված ու խելակորույս՝ զգաց, որ ամբողջ քաղաքում մնացել էր միայն այս մի շենքը, որտեղ ինքն էր, եւ որ ինքը սենյակում մենակ է: Գիտեր, որ դատապարտված է: Ենչահեղձ էր լինում եւ այն ամենն, ինչ կարող էր մտածել, հետեւյալն էր՝ «Իմ տունը...»... մարմինն սկսեց լողալ եւ բախվեց բետոնի թռչող բեկորներին: Ինքը վայրէջք կատարեց փղի ճակատի վրա եւ փիղն իրեն զգուշորեն բարձրացրեց, ապա նորից ցած դրեց: Նկատեց, թե ինչպես կարմիր անջրանցիկ թիկնոցով աղջիկը շրջվեց: Բայց ցնցվեց, երբ տեսավ, որ դա աղջիկ չէ, այլ երկար բռնակով հայելի, եւ հայելու ձվածեւ մակերեսը խնամքով ծածկված էր կնոջ թիկնոցով: Կարողացավ տեսնել իրեն հայելու մեջ՝ դեմքը ծամածռած, էլ ավելի ծռմռած, քան երբեւէ ինքն անում էր:

Լի Ծենն արթնացավ իր իսկ գոռոցից: Ամբողջ մարմինը քրտինքի մեջ էր: Նայեց սենյակի մեջ շուրջբոլորը, ապա լուսամուտից դուրս: Ամեն ինչ լիովին հանգիստ էր:

Նայեց ձեռքի ժամացույցին: Միայն մեկ ժամ էր քնել: Երկար ու խորը շունչ քաշեց: Երկար ժամանակ էր՝ փղերին երազում չէր տեսել: Երազում չէր տեսել կարմիր անջրանցիկ թիկնոցով այդ անձնավորությանը: Ըստ

էության, գրեթե լրիվ մոռացել էր նրանց: Ինչպե՞ս եղավ, որ նորից այս գիշեր տեսավ նրանց: Այդ անծնավորությունը փաստորեն հայելի է, եւ դա ի՞նքն է՝ այդ հայելու մեջ: Հետո հիշեց վաղվա իրենց հանդիպումը եւ ինքն իրեն ասաց, որ այդ երկուսի միջեւ պետք է ինչ-որ կապ լինի: Իրոք խորապես ցավում էր, եւ իրեն համակած սարսափն ամբողջովին փարատել էր կիրքը:

Ճանկեց հեռախոսն ու մի հաղորդագրություն ուղարկեց՝ ասելով, որ հենց նոր իրենց գրասենյակից հայտնել են, որ ինքը վաղն ինչ-որ գործ պետք է անի, այնպես որ ստիպված են լինելու չեղյալ հայտարարել իրենց ժամադրությունը: Նույնիսկ մի քիչ խղճահարություն զգաց աղջկա հանդեպ, բայց վերագտավ ինքնատիրապետումը: Կկարողանար հանգիստ քնել: Բայց ո՞ւմ մտքով կանցներ, որ կարթնանա հեռախոսի անսպասելի զանգից: Սյաո Յանի համարն էր: Գուցե զայրացե՞լ էր իր վրա: Հեռախոսը երեք անգամ զանգեց, եւ ինքն ի վերջո պատասխանեց, բայց այն, ինչ լսեց, օտար մարդու խռպոտ ու տխուր ձայն էր:

-Դու Լի Շե՞նն ես:

-Այո, ես եմ...

-Ես Սյաո Յանի եղբայրն եմ: Դո՛ւ, սրիկա՛: Դու սպանեցի՛ր Սյաո Յանին:

Լի Շենի գլուխը քիչ էր մնում պայթի: Ընդամենը մի քանի ժամ էր անցել: Ինչպե՞ս կարող էր Սյաո Յանը... Հավատը չէր գալիս:

-Սյաո Յանը... ինչպե՞ս է մահացել:

Սյաո Յանի եղբայրը մի կողմ նետեց ամեն կեղծ ինքնատիրապետում եւ սկսեց ցածր ձայնով հայհոյել. նա լաց եղավ այնպես, ինչպես Սյաո Յանն էր լալիս:

-Կախվել է: Իր գործած սեւ շարֆով:

Այդ սեւ շարֆը, հսկայական սեւ օձի նման, հանկարծ սահեց Լի Շենի հայացքի դիմաց:

-Նա արդեն համարյա երկու տարի է՝մահացել է: Ես չէի կարող թողնել նրան, որ գնա: Ես պահպանել եմ նրա հեռախոսահամարները: Մահից առաջ ինձ ասաց, որ սպասում է մի կարեւոր բանի, որ ինչ-որ մեկը պատրաստվում է ասել իրեն: Ասաց, որ այլեւս չի կարող սպասել: Գիտե՞ս ինչ: Այդ մեկը դու էիր:

Հեռախոսագծի մյուս ծայրում այդ մարդը ճիչ արձակեց, ճիչ, որի նմանն անցած երկու տարում չէր արձակել:

-Այդ մեկը դու ես,- կրկնեց մարդը՝ վշտից կոտրված:

Լի Շենի մարմինն սկսեց դողալ: Հեռախոսը բռնած ձեռքը սահեց պա-

տի վրայով, եւ Լի Շենն անզուսպ կերպով սկսեց ցնցվել: Հեռախոսը պատին բախվելով ցած ընկավ, ընկնելիս հեծկլտոցի ձայն լսվեց այնտեղից: Հետո հանկարծ Լի Շենը հասկացավ, որ դա ամենեւին էլ Սյաո Յանի եղբայրը չէր: Դա ինքը՝ Սյաո Յանն էր: Սյաո Յանը նստել էր լճի կողքի նստարանին եւ գլուխը ձեռքերի մեջ թաղած՝ լուռ լաց էր լինում: Նրա ստվերն ընկել էր լճի հանդարտ ու լայնարձակ մակերեսին: Լճի ջրերը ողողող երեկոյան արեւն արագ մարում էր: Լի Շենն, իրեն կորցրած, չէր կարողանում խոսել:

Շրխկոցով ցած նետեց հեռախոսը, մի քանի անգամ բռունցքով հարվածեց պատին, ապա ուժեղ զարկեց գլխին՝ ականջներից վեր: Սա իսկապես երազ չէր: Սա պաղ, ծանր ու դաժան իրականություն էր: Այդ պահին մեկ անգամ էլ լսեց Սյաո Յանի լացի ձայնը մի կողմ նետված հեռախոսից: Նրա մեղմ հեծկլտոցը մշուշի պես տարածվեց ամբողջ սենյակում: Լի Շենը լայն բացեց վախեցած աչքերը եւ դուրս նայեց լուսամուտից: Քաղաքի լույսերն, ինչպես միշտ, վառ շողում էին: Մտորեց «նույն ժամանակ, նույն տեղում» բառերի շուրջ, երբ օրորվելով քայլում էր դեպի պատշգամբ: Ինքն իսկապես ծեր է,- մտածեց: Ունա՞կ է, արդյոք, կյանքում այդ եզակի, այդ վերջին թռիչքը կատարել:

Անսպասելիորեն՝ Լի Շենը ցատկեց պատշգամբից եւ, գոռալով, վայրէջք կատարեց մահճակալին: Ապշահար՝ բացեց աչքերը եւ տեսավ, որ այն ամենն, ինչ քիչ առաջ տեղի էր ունեցել իր հետ, երազ էր: Ճփեց սառը ճակատը, եւ ձեռքի ափը քրտինքով պատվեց: Հազիվ էր շունչը ետ բերել, երբ բարձի մոտ նկատեց հեռախոսը: Մի վայրկյան նայեց հեռախոսին, ապա արագ շարժումով հափշտակեց այն: Հաստատ, ժամադրությունը չպետք է կայանա,- մտածեց: Այդպիսի տառապալից գիշերից հետո հաստատ չէր ուզում, որ ժամադրությունը կայանա: Դիվահարի նման մի հաղորդագրություն հավաքեց՝ հետեւելով իր երազի թեմային, մի պահ վարանեց եւ ապա ուղարկեց այն: Մարմինը ցնցվում էր, եւ ինքը հանկարծակի վախից ասես կաթվածահար էր: Հանգիստ սպասում էր: Վերջապես, սպասո՛ւմ էր: Ի վերջո հեռախոսը զանգեց: Սյաո Յանի համարն էր: Զանգը հնչեց մեկ, երկու... երեք անգամ:

ՉԺՈՈՒ ՑՋՅԱՆԻՆ

ՊԱՐՈՆ ՊԱՈԼՈՆ

Լուլուին ասացի.

- Ուղարկելուց առաջ թքիր բաժակի մեջ:

Լուլուն այնպես ուժեղ գնդով թքեց, որ մտածեցի՝ այրող սուրճը կցայտի նրա նոր քսած կարմիր շրթներկին, ապա իր պիրկ սրնքամսերը պտտելով՝ բաժակը դրեց պարոն Պաոլոյի սեղանին: Պարոն Պաոլոն: Պարոն Միայնակը: Պարոն Անիծվածը:

Ոչ ոք չէր սիրում պարոն Պաոլոյին: Ես հենց այն մարդկանցից մեկն էի, որոնք նրան չէին սիրում եւ որոնց շարքերն էի այդպես անհոգ խցկվում՝ Լուլուին դրդելով թքել նրա էսպրեսոյի մեջ: Լուլուն նույնպես արհամարհում էր նրան, թեեւ դա չէր խանգարում, որ նրա առջեւ ցանկասիրաբար իրեն ցուցադրի: Լուլուն բոլորի հետ էր սիրախաղ անում՝ շիկնելով, աչքով անելով եւ այնպես հագնվելով, ասես հավերժ տասնութ տարեկան էր, դույզն իսկ չամաչելով իր տափակ կրծքավանդակից՝ երկու մնացուկ-բալերի կենտրոններով: Կասկածում եմ, թե նույնիսկ պարոն Պաոլոն կգայթակղվեր եւ երկրորդ անգամ հայացք կգցեր նրա կողմը: Օգտվելով առիթից՝ Լուլուն միտումնավոր սայթաքեց սամբուկա խմող մի իսպանացու կողքին: Երբ վերջինս չշտապեց օգնել, նա ոտքով դոփեց տեղում, շարունակեց քայլել առաջ եւ սուրճը շրխկոցով դրեց պարոն Պաոլոյի սեղանին: Ես կանգնած՝ նրա ծեքծեքուն շարժումներին էի հետեւում սուրճի ջարդված մեքենայի ետեւից, որն անընդհատ գոլորշի էր արձակում:

Դեռ նույնիսկ ժամը 10-ը չկար, իսկ Լուլուն ուզում էր տուն գնալ: Բարերում կանանց գիշեր էր, դրա համար էլ նա ուզում էր անվճար մարգարիտա խմել եւ օտարերկրացիների հետ անգլերեն խոսել: Նրան դուր էին գալիս օտարերկրացիները, եւ կապ չուներ, թե քանի տարեկան էին, կամ որքան մազոտ էր նրանց կրծքավանդակը: Մի անգամ նրան հարցրի.

-Իրո՞ք հաստ են նրանց՝ գիտես ինչերը:

Պատասխանելուց առաջ լրջորեն մտածեց.

-Մոտավորապես ձեռքիս հաստության:

Հետո երկար, անդադար հռհռացինք:

Դիմացի կինոթատրոնը երկուշաբթի օրերը ֆիլմեր չէր ցուցադրում, դրա համար էլ սրճարանն այդ գիշեր հանգիստ էր: Լուլուի գնալուց հետո մի քանի հաճախորդ միայն մնացին, եւ ես արմունկներս հենեցի վաճառասեղանին, իսկ բարձրախոսները շարունակում էին երաժշտություն ճռռացնել: Պարոն Պաոլոն նստած էր իր սովորական տեղում՝ անկյունում, սուրճի բաժակով: Նա վաղուց խմել վերջացրել էր, բայց չէր երեւում, թե էլի ինչոր բան կպատվիրի: Սակայն հանեց կոշտ, չորացրած ծխախոտի մի փաթեթ, փորձառու հմտությամբ փաթաթեց այն բարակ թղթի մեջ եւ գլանակը կպցրեց թքով: Ապա թիկնեց գնացքի ոճ ունեցող խցիկի նստարանին՝գլուխը հենելով գլխակալին եւ մտմտալով իր հոգսերի մասին: Մի քանի ժամ նստեց այդտեղ, մինչեւ մոտեցա եւ ասացի, որ սրճարանը փակում ենք:

Նա վեր կացավ եւ վճարեց՝ խիստ նրբագեղ շարժուձեւով:

Զզվելի է, բայց չէի կարող մեղադրել նրան, եւ նա չփնթփնթաց:

Նույնիսկ ինձ ասաց.

-Ցեյն, բարի գիշեր:

Մի՞թե սուրճը խմելիս չէր զգացել թքի համը

Պարոն Պաոլոն ասում էր, որ ինքն իտալացի է, բայց բոլորս գիտեինք, որ իրականում հնդկական ծագում ունի: Տարիներ շարունակ նա լռվել էր երկու թաղամաս այն կողմ գտնվող մի սրճարանում: Ես տեսել էի նրան այնտեղ՝ էսպրեսոն ձեռքին, անվճար համացանցով համակարգչի դիմաց էլեկտրոնային մեծաքանակ փոստեր ուղարկելիս, կամ վաճառասեղանի մոտ սրճարանի տիրոջ հետ շախմատ խաղալիս: Նա չէր կարողանում միշտ վճարել սուրճի համար, դրա համար էլ հաշիվ ուներ բացված, եւ երբեմն սրճարանատիրոջից պարտքով փող էր խնդրում: Շատ չէր վերցնում, ասենք՝ մի 100 կամ 200 յուան, եւ դրանից հետո ուրախությամբ տապակած խոզապուխտի սենդվիչ էր գնում, ապա ուղիղ դուրս էր ելնում ու տաքսի կանչում, որ իրեն տուն տանի: Սկզբում բոլորը համբերատար էին նրա հանդեպ: Օտար երկրում նա ունեզուրկ հեղինակ էր: Բայց շախմատ խաղալիս անազնիվ էր, իսկ հենց որ չեկ էր ստանում, գոռում էր սրճարանում բոլորի վրա եւ սառը գարեջուր ուզում: Բայց հետագայում սկսեց ավելի ու ավելի շատ գումար պարտք մնալ եւ կախման մեջ ընկավ մարիխուանայից: Երբ սրճարանի տերը հրաժարվեց նրան պարտքով 1000 յուան տալ, էլ երբեք չվերադարձավ այդտեղ: Նա մտածում էր, թե բոլորն իր բարեկամներն են, բայց նրանց աչքում ինքը պարզապես զվարճալի ծաղրածու էր:

Ահա թե երբ նա տեղափոխվեց մեր սրճարան: Երկու սրճարանների

սեփականատերերը ընկերներ էին. նրանք օգտագործում էին միեւնույն՝ «կատվի կղանք» աուրճի հատիկները: Առաջին օրը, երբ պարոն Պաուլոն եկավ, մեր սրճարանատերը Լուլուին եւ ինձ մի կողմ տարավ եւ ասաց.

-Չթողնեք, որ նա հաշիվ բացի եւ չթողնեք սրճարանում մարիխուանա ծխի:

Տարվա չորս եղանակին նա միայն երկու ձեռք հագուստ էր հագնում: Ձմռանը դա մուգ, ծովայինի զգեստի ոճի վերարկու էր: Գարնանն ու աշնանը՝ ավանդական չինական սպիտակ կոճակներով վերնաշապիկ, որը, կարծում եմ, գնել էր առաջին անգամ Չինաստան եկած ժամանակ: Ամռանը նա պարզապես ծալում էր այդ նույն վերնաշապիկի թեւքերը: Ամեն անգամ, երբ Լուլուն տեսնում էր նրան փողոցն անցնելիս, մի ավելորդ անգամ գոչում էր՝ «Ահա գալիս է պարոն Պաուլոն», որից հետո ես լիքը լցնում էի սուրճը եւ սկսում էսպրեսոն պատրաստել: Ուրիշ ոչինչ երբեք չէր լինում, ոչ մի հաճելի անակնկալ:

Պարոն Պաուլոյին ճանապարհելուց հետո ես ճամփա ընկա դեպի տուն: Կեսգիշերից անմիջապես հետո հանկարծ սկսեց ուժեղ անձրեւ գալ, եւ ազատ տաքսիները մեծ ջրացայտեր էին գոյացնում, երբ անցնում էին իմ եւ հեծանվիս կողքով:

Ավտոմայրուղիների վերնակամուրջների տակ ջուրը շատ խորն էր, եւ երբ ես հեծանվով անցնում էի դրա միջով, լողացող տանկի պես էի ինձ զգում: Մի պահ մտածեցի պարոն Պաուլոյի մասին եւ այն մասին, որ գուցե նա հովանոց չուներ, եւ երբ դա մտածեցի, ինքս ինձնից զզվեցի: Ես պետք է նման լինեի ֆիլմերի ռոբոտ-մարտիկներին՝ անտարբեր եւ անողոք:

Գիշերը երկար էր: Տաք ցնցուղ ընդունելուց հետո նստեցի համակարգչի դիմաց՝ գրելու իմ մշտապես անավարտ վեպը: Չգիտեմ, թե որն է խնդիրը,- լեզուն, ռիթմը, մարմնական ցանկությունները կամ ուրիշ մի բան,- բայց պարզապես չեմ կարողանում ավարտել այդ գիրքը: Տասը տարի է՝ աշխատում եմ դրա վրա, բայց հավանաբար ամբողջ մի հարյուրամյակ կպահանջվի, որպեսզի ավարտեմ, եւ այդ ժամանակ ես կլինեմ միայնակ, ճերմակահեր մի ծեր վհուկ: Լուլուն զանգեց ինձ: Խմած էր:

-Ցեյն, դու պետք է ինձ մի լավ շշպոռես, ուղղակի հայհոյիր ինձ, երբ տուն գամ: Ես չեմ ուզում արթնանալ օտարի անկողնում:

Ես հեռախոսով մի քանի հայհոյանք նետեցի՝ իմանալով, որ նա հաստատ կարթնանա օտարի անկողնում: Լուլուն համառեց.

-Ի՞նչ ես անում:

Ասացի, որ հեռուստադրամաներ եմ նայում, ապա հեռախոսն անջա-

տեցի: Եթե երկար շարունակեինք խոսել, նա էլի կսկսեր հեկեկալ: Միշտ լաց էր լինում, երբ հարբած էր:

Պատուհանից դուրս հորդ անձրեւ էր եւ ամպրոպ: Ես ուղղակի մտածում էի, թե խոհանոցի տանիքը կկաթի, եւ թե ինչպես պետք է այդտեղ տաշտ դնեմ կաթող ջրի տակ: Հետո քնեցի: Ամեն օր այսպես է՝ տխուր ու հուսալքող:

Բնականաբար, հաջորդ օրը Լուլուի պարանոցի վրա բուռն սիրո հետքեր կային: Արհեստական գործվածքից շարֆ էր գցել՝ վրան գանգի պատկեր, թարթիչներին հատուկ մուգ ծարիր էր քսել եւ մռայլ նստած էր լուսամուտագոգին: Ես հեռավորություն պահպանեցի՝ ձեւացնելով, թե թյուննոսից սենդվիչներ եմ պատրաստում, բայց նա կողքանց մոտեցավ:

-Ինչո՞ւ նա ինձ հաղորդագրություն չի ուղարկում: Երեւի հարբած՝ սխալ համա՞ր եմ տվել:

Այդ աղջկա ուղեղը շարքից դո՞ւրս էր եկել խմելուց: Ինչո՞ւ չէր հասկանում, որ այդ սիրալիր ու պատրաստակամ օտարերկրացի սիրեցյալները միգուցե իրականում երբեք էլ չեն սիրել իրեն:

Երկուսս էլ ճնշված էինք: Այդպիսի դեպքերում մենք լռում ենք, կտրում ենք լոլիկը, թյուննոսի թիթեղյա տուփերում խառնում ենք սալաթի սոուսը եւ շոգեխաշող ջարդված կաթսայով կաթի ցածրորակ փրփուր պատրաստում: Մեկ տարի երեք ամիս ես սեռական կյանք չէի ունեցել: Սկզբում հաշվում էի օրերը, բայց հետո դրանք դարձան անզանազանելի, միանման: Հիշում եմ միայն, որ վերջին անգամ սիրով զբաղվեցի մի լուսանկարչի բնակարանում, նախքան թատերական ակադեմիան ավարտելս: Ամբողջ սրտով ուզում էի ապրել Սագանի կենսակերպով, ողջ օրը խմեի ճամփեզրի բարերում նստած արվեստագետների հետ, սիրով զբաղվեի, խոսեի գրքերի մասին եւ հաճույքներ որոնեի: Հետո հասկացա, որ գտնվում եմ ոչ համապատասխան տեղում՝ ոչ համապատասխան ժամանակ: Հիմա ոչ մի հետաքրքրություն չունեմ սիրո հանդեպ, եւ ոչ ոք չի հայտնվել, որ սիրի ինձ: Հնարավոր է՝ մի քանի տարի հետո ես էլ կլինեմ այդ անհայտ ու չճանաչված, լռակյաց գրողներից մեկը:

Այդ օրը պարոն Պաոլոն չերեւաց: Մտածեցի՝ միգուցե մրսել է՝ անձրեւից թրջվելով: Եվ այդ գիշեր տարօրինակ մի զգացողություն ունեցա, երբ ցած էի քաշում գլանավարագույրը:

Պարոն Պաոլոն երբեք ինձ չէր վիրավորել. ընդհակառակը, նա ինձ լավ էր վերաբերվում: Գիտեմ, որ հաճախ էր ինձ նայում, երբ հեռվում էի վաճառասեղանին: Դա լրիվ տարբեր էր Լուլուին նայելու ձեւից: Նրա հայացքի

մեջ մի տեսակ հարազատ բան կար, բայց դա հենց այն հայացքն էր, որ նյարդայնացնում էր ինձ:

Հիշեցի, թե ինչպես անցած ձմռան մի ուշ գիշեր, չկարողանալով վեպս գրել, բեյսբոլի գլխարկը դրած եւ մինչեւ ոտնակոճերս հասնող մեծ, փափուկ վերարկուն հագիս՝ ամբողջ ճանապարհին ոտքով քայլեցի մինչեւ թատերական ակադեմիայի դարպասները, որպեսզի խորովածի համար շամփուր ճարեի: Աստիճանների վրա ցածր կուրսի մի քանի ուսանող էին նստած, գարեջուր էին խմում եւ սպասում իրենց քյաբաբին: Վախեցա, որ կճանաչեն ինձ՝ մի ժամանակ լավագույն ուսանողուհուս, որ պոեզիայի ընթերցանության միջոցառումներին կանգնում եւ Ռիլկե էի արտասանում: Մեկը, որ գիշերվա կեսին հայտնվել էր մեքենաներով, ջիպերով ու մոտոցիկլետներով շրջապատված հանրակացարանի մոտ: Այդ օրերի հիշողությունն ինձ ստիպեց կարմրել:

Ուսանողներից խուսափելու համար մտա հարեւան ինքնասպասարկման խանութը եւ չորս լիտրանոց մեծ շշով Նունֆու լեռան աղբյուրի ջուր գնեցի: Երբ կանգնած էի մուտքի մոտ՝ մեծ անոթը բռնած, լսեցի, որ ետեւիցս ինչ-որ մեկը ձայն է տալիս՝ «Ցեյն»: Ցեյնն իմ անգլիական անունն է, որով ինձ դիմում են սրճարանում: Սրճարանի բոլոր աղջիկները անգլիական դիպուկ անուններ ունեն, հիշելու համար հեշտ, բայց առանձին իրար ասելու համար՝ դժվար:

Դա պարոն Պաոլոն էր: Հագին իր ծովայինի վերարկուն էր, մի ձեռքում ծխախոտի տուփ էր, մյուսում՝ չոր թխվածքաբլիթների: Նա ինձ ասաց.

-Եկել էի այս դիմացի հիվանդանոցը՝ աղալուծույթի կաթիլներ ընդունելու... ստամոքսի համար:

Չափազանց սահուն հյուսիսչինական՝ մանդարինի լեզուն, որով խոսում էր, միայն ավելի ցայտուն էր դարձնում նրա միայնակ լինելու զգացումը:

Հանկարծակի մի մղումով ջուրը թաքցրի իմ ետեւում: Նա աչքերն ինձ էր հառել, եւ ես ոսկորներիս մեջ սարսափ զգացի: Հետո նայեցի նրան իմ բեյսբոլի գլխարկի տակից, նայեցի նրա աջ ձեռքի կպչուն սպեղանուն՝ արյան բիծը վրան: Մենք կանգնած էինք այդպես՝ ուշադիր, հոտոտելով մեկս մյուսիս, փորձելով պարզել, թե արդյո՞ք նույն տեսակից ենք: Ի՞նչ տեսակից: Այն տեսակից, որ ստիպված է գիշերվա կեսին մենակ դուրս գալ՝ կաթիլային ներարկում ընդունելու համար, որ ստիպված է չոր թխվածքաբլիթներ գնել ինքնասպասարկման խանութից՝ քաղցը հաղթահարելու համար, որ ստիպված է, չորս լիտրանոց շիշը ձեռքին, ձմռանը կեսգիշերին

կանգնել փողոցում: Այդ տեսակից: Մեր մարմիններն այնպիսի հոտ ունեին, որ միայն նույն տեսակի մարմինները կարող են արձակել: Պարոն Պաոլոյի դեմքի արտահայտությունն արագ մեղմացավ: Նա այլեւս ոգեւորված չէր, բայց թվում էր՝ խոնավ մի գոլորշի է լողում նրա շուրջը:

Հակակրանքի մի ալիք զգացի եւ մատնացույց արեցի քյաբաբի վաճառասեղանի մոտ դանդաղ խմող երիտասարդների խմբի կողմը:

-Ընկերներս այնտեղ ինձ են սպասում,- ասացի կանխամտածված: Ապա, ջրի մեծ շիշը բռնած, վազեցի աղմուկի, ծիծաղի ու տապակած մսի բույրի կողմը:

Այդ գիշերվանից հետո սկսեցի Լուլուին ստիպել, որ թքի պարոն Պաոլոյի սուրճի մեջ: Չցանկանալով դա անել՝ համոզված էի, որ բոլորը գիտեն, որ ատում եմ պարոն Պաոլոյին նույնիսկ ավելի, քան այն սարսափելի տղամարդկանց, ովքեր կեղտոտ խոսքեր են սկսում ասել եւ ձեռ են գցում աղջիկներին, հենց որ խմում են: Բոլորն արդեն ատում էին նրան, որովհետեւ նա այդքան ժլատ էր: Երբեք թեյավճար չէր տալիս եւ երբեք 20 յուանից ավելի արժողության ոչինչ չէր պատվիրում: Եվ երբ սրճարանը շրջապատված էր լինում դրսում հավաքված հաճախորդներով, նա շարունակում էր զբաղեցնել ամբողջ մի սեղան, որի վրա դրված էր իր դատարկ բաժակը: Կարծես ապրում էր այլ մոլորակի վրա:

Մի քանի անգամ, երբ սրճարանում սոխ չէր լինում, ես իջնում էի բանջարեղենի շուկա, որ մեկ թաղամաս այն կողմում էր, եւ տեսնում էի, որ պարոն Պաոլոն երեկոյան մենակ քայլում է իր համար: Սովորաբար մտազբաղ տեսք էր ունենում եւ չափազանց դանդաղ էր քայլում: Իր սեփական աշխարհում խորասուզված՝ թվում էր փողոցում չի տեսնում ո՛չ ինձ, ո՛չ ուրիշ որեւէ մեկի: Ես ենթադրում էի, որ նրա առօրյան հետեւյալ շարանի նման մի բան էր՝ արթնանալ, գրել, հասնել գրողների միավորում, թափառել, քայլել, գուցե ճամփեզրի ճաշարանում փնթի մի ճաշ ուտել, ապա ուղեւորվել մեր սրճարան: Նա սրճարանում երբեք որեւէ բան չէր անում, միայն խմում էր իր էսպրեսոն եւ մի քանի նշում էր կատարում նոթատետրում իր հինավուրց Փարքեր գրիչով: Նստում էր այդտեղ մինչեւ սրճարանի փակվելու ժամը՝ այդպիսով մեկ օր էլ անցկացնելով: Ոչ ոք երբեք չէր հարցնում նրան, թե ինչու է եկել Չինաստան: Ոչ ոքի պետքն էլ չէր: Նրա շուրջբոլորը գտնվող հաճախորդները վիսկի, ջին եւ սամբուկա էին խմում, բայց նա հեռու էր այդ ամենից եւ այդ եռուզեռի հետ կապ չուներ:

Հենց որ նա մոտ էր լինում, ես Լուլուի հետ բարձրաձայն զրուցում էի: Թեեւ իմ հանկարծակի հետաքրքրությունը Լուլուի տարակուսանքն էր հա-

ռուցում, բայց նա երբեք չէր հոգնում իր սիրելի պարոնների, նրանց չափերի, դիրքերի ու մազոտ կրծքավանդակների մասին խոսելուց: Երբ լսում էի, քունս ասես տանում էր, որովհետեւ ավելի շուտ կգերադասեի նստել անկյունում ու նայել տարածության մեջ, կամ սենդվիչներ պատրաստել, կամ պիցցայի խմոր հունցել: Բայց երբեմն նկատում էի, թե ինչպես է պարոն Պաոլոն ինձ նայում: Նրա հայացքը կասկածանքով լի էր, զայրացած, շփոթված եւ խանդոտ. ակներեւաբար՝ չէր կարողանում հասկանալ, թե ինչու է այս անձնավորությունը, որ իր նման այդքան ակնհայտորեն հանդարտ ու միայնակ է, այդպես խռպոտ ձայնով կատակներ անում ու ծաղրուծանակով խոսում էժանագին վարձու աղջկա նման:

Հաճախ երեկոներ էին լինում, երբ շատ գործ չկար, եւ Լուլուն հրավիրում էր իր խուլիգան ընկերների խառնախմբին՝ պատշգամբում ծխելու եւ գարեջուր խմելու: Նախկինում նրանցից հեռու էի մնում, բայց հիմա ներքին մի մղում ինձ ստիպեց գնալ ու նստել հենց նրանց մեջ: Նորաթուխ ջահելների նման կոշիկներս հանեցի պատշգամբի աստիճանների վրա եւ նստեցի՝ սառը «Հայնեկենը» ոտքերիս մոտ: Նույնիսկ, հարյուր տարվա մեջ առաջին անգամ, ծխախոտ ծխեցի: Նրանք խոսում էին կոպիտ, վիրավորական տոնով, հռհռում էին եւ վիճաբանում: Տղաներից մեկը շոյում էր իր գրկին նստած Լուլուի բացված կրծկալի ուսակապը:

Հենց այդ ժամանակ էլ պարոն Պաոլոն ներս մտավ: Ինչպես միշտ՝ նրա հագին այն սպիտակ կոճակներով վերնաշապիկն էր՝ ամռան համար վեր քշտած թեւքերով: Նա մոտենում էր պատշգամբին՝ հայացքն իմ դեմքից չկտրելով: Անթարթ ինձ էր նայում, այնքան, մինչեւ որ սրտումս զայրույթ բռնկվեց, եւ ես ծխախոտիս մնացուկը նետեցի ուղիղ նրա վրա: Ուզում էի, որ ծխախոտի մնացուկը դիպչի ուղիղ նրա վերնաշապիկին, բայց թույլ էի նետել, եւ այն ընկավ գետնին՝ նրա տաբատի փողքի մոտ: Այդուհանդերձ, պարոն Պաոլոն ակնհայտորեն ցնցված էր: Նա կանգ առավ, բայց չզայրացավ: Պարզապես իրեն ստիպեց ժպտալ բերանի անկյունով: Այնքան անօգնական տեսք ուներ, այնքան վշտահար, եւ այնքան շփոթված: Մտածեցի, որ պարզապես կշրջվի ու արագ խույս կտա:

Ծուրջս գտնվող հորմոնառատ, բայց խելապակաս տղաները բոլորը հարայհրոց, ճիչ ու քրքիջ դրեցին, ինչպես եւ Լուլուն, որի նիհարիկ ուսերը ցնցվում էին ծիծաղից:

Ես այնպես արեցի, իբր չէի տեսել պարոն Պաոլոյին, եւ մի մեծ կում թունդ գարեջուր խմեցի:

Նա երեք օր չէր երեւացել, երբ Լուլուն, որ երբեք որեւէ մեկի համար ան-

հանգստություն չէր ցուցաբերում, սկսեց հարցեր տալ:

-Հնարավո՞ր է պարոն Պաոլոն տուն է գնացել: Իհարկե ոչ, մի՞թե իսկապես կարող է իրեն թույլ տալ ինքնաթիռի տոմս գնել: Այ-այ, արդյո՞ք նա իսկապես կարող է իրեն թույլ տալ ինքնաթիռի տոմս գնել՝ տուն գնալու համար: Դա չափազանց ողբերգական կլիներ:

-Ծնունդյան տոներ չեն, ինչո՞ւ պիտի տուն գնար:

-Բան չի կարող պատահած լինել, չէ՞:

-Իր նման ապրելու դեպքում մարմինը կսկսի փտել, մինչեւ որ կհայտնաբերեն:

Ես մտածում էի, որ մի քիչ կհանգստանայի առանց պարոն Պաոլոյի, լուռ կնստեի սուրճի մեքենայի ետեւում, ինչպես միշտ էի անում, անտարբեր հայացքով կնայեի քաղցր պղպեղներին եւ սալաթի տերեւներին՝ լվացարանի մեջ՝ մտածելով այն վեպի մասին, որ երբեք չէր ավարտվելու եւ այն երազանքների, որ երբեք չէին իրականանալու: Բայց հիմա այստեղ անգիտակցաբար դուրս էի նայում պատուհանից՝վատ զգալով այն կնոջ նման, որ սպասում է, թե իր սիրելին ե՛րբ տուն կգա: Պարոն Պաոլոյի սովորական տեղում լուռդ խաղացող մի զույգ էր նստած, աղջիկն իմ ամենաչսիրած տիպի էր՝ հիմնականում Լուլուի տիպի, չափից դուրս զարդարուն հագնված, ծեքծեքուն, հռհռացող եւ հիմար, սակայն կենսունակությամբ լի:

Մոտ մեկ շաբաթ անց, երբ անձրեւոտ մեկ այլ երեկո կինոթատրոնը դատարկվեց, կինոդիտողներից շատերը, ովքեր հովանոցներ չունեին, վազեցին մեր սրճարան ժամանակ սպանելու՝ սպասելով, որ անձրեւը կտրվի: Հուսահատված՝ թե աշխատանքը վերջ կունենա, Լուլուն որոշեց, որ հաճախորդների այս հանկարծակի հորձանքն ավելին է, քան ինքը կարող է սպասարկել, մի քանի անգամ սխալվելով պատվիրած ուտեստները բերելիս: Ես նույնպես անհանգստությունից իրար էի խառնվել եւ շոռակարկանդակը դրեցի միկրոալիքային վառարանի մեջ՝ կարծելով, թե բրաունի է: Բոլոր պատվերներն ընդունելուց եւ սպասարկելուց հետո սրճարանը բզզում էր: Անձրեւը հաճախ մարդկանց գրգռում է, եւ այս պահն, ըստ երեւույթին, շատերի համար անսպասելի հաջողություն էր: Նրանք բարձրաձայն զրուցում էին, գարեջուր խմում եւ ֆրանսիական թարմ չիփսեր ծամում, իսկ ջեռոցից տարածվում էր սխտորով հացի բույրը, եւ բարձրախոսներից հնչում էր Ջեկ Ջոնսոնի թարմացնող երաժշտությունը: Ամեն անգամ, երբ այսպես է լինում, ես կանգնում եմ լվացարանի մոտ եւ ամաններն եմ չորացնում՝ մի տեսակ շվարած, չիմանալով, թե ինչ եմ անում կամ

ինչ եմ անելու հետո: Նայեցի եւ տեսա Լուլուին իսպանական պարային թատերախմբի սեղանի մոտ, որ ծիծաղելիորեն բանեցնում էր իր բոլոր սովորական հնարքները:

Դա այն ժամանակ էր, երբ կինոյի նեոնային լույսերը մթնեցին:

Իմ զարմանս ինձ, վերջինը հայտնվեցին պարոն Պաոլոն եւ մի կին: Ես նրանց էի նայում ապակու միջով: Որոշ ժամանակ նրանք կանգնած էին կինոթատրոնի մոտի աստիճանների վրա, ապա պարոն Պաոլոն բացեց մեծ սեւ հովանոցը, որն ամբողջությամբ ծածկեց փոքրամարմին կնոջը: Նրանք շատ մոտ էին միմյանց. պարոն Պաոլոն պետք է որ մի ձեռքով գրկած լիներ կնոջը: Նրանք քայլեցին սրճարանի ուղղությամբ: Չգիտեմ, թե ինչու այդքան նյարդայնացա: Ինձ նույնիսկ թվաց, թե շնչահեղձ եմ լինում: Բայց պարոն Պաոլոն ներս չմտավ: Գուցե այն պատճառով, որ սրճարանի բազմությունն իր սպասածից ավելի շատ էր: Նախկինում երբեք այս ժամին չէր եկել. նա արդեն պետք է զբաղեցրած լիներ իր տեղը՝ ապահով տեղավորված իր սեփական աշխարհում: Ակներեւաբար, աղմկոտ բազմությունը վախեցրեց նրան: Նա ժպտաց կնոջը, բռնեց նրա ձեռքը, եւ միասին հեռացան: Ես վերադարձա մի խումբ հաճախորդների ետեւից, որոնք խմում էին վաճառասեղանի մոտի աթոռակներին նստած, քարացած՝ որ նա կտեսնի ինձ, կտեսնի ինձ միայնակ՝ անհաշիվ ափսեներ չորացնելիս, ինչպես միշտ, մշտապես:

Մի հայացք գցեցի հովանոցի տակ գտնվող կնոջ կողմը: Ոտքերին չստեր էին, արեւահարված մուգ մաշկ ուներ, հաստլիկ հետույք: Դեմքի անորոշ արտահայտությամբ էր, յուղոտ մազերը ծածկում էին ուսերը: Այնպիսի կնոջ տեսք ուներ, որ կտեսնեք բանջարեղենի շուկայում կամ շամպունի խանութում: Ընդհանուր առմամբ, աչքի ընկնող ոչինչ չկար, բայց նա եւս մեկ պատճառ կլիներ, որ մարդիկ ծաղրեին պարոն Պաոլոյին:

Բայց կատարյալ քնքշությամբ եւ գեղագիտությունը հաշվի չառնելով՝ պարոն Պաոլոն կնոջն իր կողմն էր գրավում:

Կկարդա՞ր կինը նրա պատմությունները: Եթե պարզեր, որ նա չքավորության հասած եւ հուսահատ մի գրող է, որը Չինաստանի որոգայթն է ընկել, կլքե՞ր նրան: Արդյո՞ք ես սպասում եմ այն օրվան, երբ նա լքված ետ կգա սրճարան, որպեսզի Լուլուն թքի նրա էսպրեսոյի մեջ: Ես սարսռում եմ իմ սեփական չարակամությունից:

Անձրեւը դեռ չէր դադարել, երբ սրճարանը փակեցինք: Երբ հեծանվով անցնում եմ էստակադային կամուրջների տակով, զգում եմ, որ իսկապես դառնում եմ մարտաֆիլմերի ռոբոտներից մեկը՝ անտարբեր, անողոք:

ՄԱ ՍՅԱՈՏԱՈ

ԱՆԱՎԱՐՏ ՁՈՒՅԳԸ

1

Լեյ Լեն նայեց խոր քնած Վեն Սյաոնուանին եւ մտածեց, որ նա տարիքի հետ ավելի ու ավելի է նմանվում կատվի: Դիմագծերը հավաք էին, դեմքի արտահայտությունը՝ մեղմ, բայց խորհրդավոր: Արդյո՞ք այն պատճառով էր, որ նա եւ կատուները երկար ժամանակ միասին էին: Լեյ Լեն համբուրեց նրա այտը: Վերջինս ինչ-որ բան քրթմնջաց, երկու անգամ թույլ հոգոց հանեց եւ շուռ եկավ: Վեն Սյաոնուանի ոտքը վերմակի տակից դուրս էր եկել: Եղունգների լաքը փոքր-ինչ թափված էր, եւ դրանց նայելով դժվար կլիներ ասել՝ այս կինն ուզում է գրավի՞չ երեւալ, թե՞ թափթփված է: Լեյ Լեն նրա ոտքը վերմակով ծածկեց, զգույշ շրջանցեց քնած չորս կատուներին, ապա լոք տալով անցավ հատակին այսուայնտեղ թափված իրերի վրայով եւ գնաց աշխատանքի: Ամեն օր նույնն էր: Ժամը յոթին մոտ Լեյ Լեն վեր էր կենում եւ գնում աշխատանքի, բայց Վեն Սյաոնուանը, որ ընդամենը մի քանի ժամ առաջ էր պառկել, խոր քնի ամենաքաղցր փուլում էր լինում:

Լեյ Լեն պետք է հասցներ երկրորդ ավտոբուսին՝ աշխատանքի հասնելու համար: Հեռավորությունը մոտավորապես 30 կիլոմետր էր: Սայրուղով կարողանում էր աշխատանքի հասնել մոտ մեկ ժամվա ընթացքում: Ավտոբուսը լեփ լեցուն էր: Վաղ առավոտյան գրասենյակային տարեց աշխատողներից պահանջվում էր բարձր տրամադրություն: Ոչ ոք տեղը չէր զիջում մեկ ուրիշի եւ ամեն մեկը պաշտպանում էր սեփական գնդասեղաչափ տարածքը: Բայց Լեյ Լեին միշտ հաջողվում էր տեղ գտնել, որովհետեւ նստում էր վերջին կանգառից: Նա ապրում էր քաղաքի արեւելյան ծայրամասում: Ու թեեւ այնքան էլ հարմար չէր այդտեղ հասնելը, բայց դրա միակ առավելությունն այն էր, որ վերջին կանգառ է: Ավտոբուսի երթուղին սկսվում եւ ավարտվում էր այստեղից, եւ դանդաղ ու երկար ճանապարհորդության ժամանակ նա ստիպված չէր կանգնել, այլ կարող էր նստել ու հանգստանալ:

Լեյ Լեն արագ լվացվեց եւ ճիշտ ժամը յոթին դուրս եկավ: Աշխատանքի

գնալուց առաջ մտավ ներքեւի հարկում գտնվող խորտկարան՝ նախաճաշելու:

Քաղցրաբլիթներ, փքաբլիթներ, յուղաբլիթներ եւ սոյայի կաթ. միայն այս չորս կերակրատեսակն ունեին: Բայց անընդհատ եփութափ եւ եռուզեռ էր այդտեղ, ինչպես ընտրության լայն հնարավորություններ ունեցող միջազգային հյուրանոցում: Նախաճաշելիս ստիպված էր ժպտալ շանդունյան առոգանությամբ խոսող երկարադեմ մատուցողուհուն, ասես անմահության էլիքսիր էր պատվիրում:

Առաջ տանն էր նախաճաշում: Վեն Սյաոնուանը նրանից կես ժամ շուտ էր արթնանում, մշուշված աչքերով դեսուդեն էր վազում՝ խոհանոցային պարագաները շխկշխկացնելով: Երկուսով նախաճաշում էին, Վեն Սյաոնուանը՝ միշտ կիսաքնած, կուլ գնացած աչքերով եւ ծույլ ու դանդաղ շարժումներով: Լեյ Լեն մտածում էր, որ նա ցանկացած պահի կարող է գիտակցությունը կորցնել: Նախաճաշն ավարտելուց հետո Վեն Սյաոնուանը ճանապարհում էր Լեյ Լեին մինչեւ դուռը եւ վերադառնում էր ու քուն մտնում: Ուղիղ կեսօրին նա վերջնականապես վեր էր կենում: Նախաճաշը միշտ արտակարգ նրբաճաշակ էր ընտրված: Սրտածեւ ծվածեղ, որի մեջտեղում դեղնուցն էր, նրբագեղ կտրված սենդվիչ՝ ներսում լոլիկ եւ խոզապուխտ: Կարտոֆիլի պյուրեն ձեւավորված էր կատվի դեմքի նման՝ ծվածեւ գլխի վրա երկու եռանկյուն ականջ, աչքերի տեղում՝ երկու չամիչ: Բացված ծաղկի նման կտրված նրբերշիկ, ատամնափորիչ փայտիկով զարդարված՝ ժպտացող նրբերշիկ: Աստվա՜ծ իմ: Ո՞վ կմտածեր, որ այս քաղաքի արեւելյան արվարձանների կոպիտ սվաղված պատերով տանը մենության մեջ հմուտ շեֆ-խոհարար է ապրում: Երբ առաջին անգամ տեսավ այս սովորական-արտասովոր նախաճաշը, Լեյ Լեն սաստիկ հուզվեց: Համբուրեց Վեն Սյաոնուանի անլվա դեմքը՝ իր երախտագիտությունն ու հիացմունքն արտահայտելով: Մի քանի օր անց, սակայն, Լեյ Լեն սրտնեղեց: Ամեն օր ծվածեղ ու սենդվիչ եւ արեւմտյան նախաճաշ, ամեն օր: Միեւնույն ժամանակ Վեն Սյաոնուանն ավելի ու ավելի էր խելացնոր դառնում: Կարտոֆիլի պյուրեով կատվիկը, որ անգերազանցելի էր, դարձավ առավել թանկարժեք պարսկական կատու՝ իր պսպղուն, կյանքով լի կանաչ եւ մանուշակագույն երկու միաչափ չամիչ-աչքերով: Լեյ Լեն համարյա շվարել էր, իրեն կորցրել ու չգիտեր՝ ինչպես ավերի Վեն Սյաոնուանի նոր արվեստը, արդյոք կատվի ակա՞նջը կծի, թե՞ աչքը քչփորի: Սովորական տնական նախաճաշը շատ հանդիսավոր էր մատուցվում, եւ դա ստիպում էր Լեյ Լեին տատանվել, չիմանալ ինչ անել եւ սաստիկ վախենալ: Ավելին, նա զտարյուն

հյուսիսցի էր եւ չէր կարող տանել այս հարավֆրանսիական կամ ամերիկյան արեւմտյան ափի նախաճաշը: Մեկ կամ երկու անգամը, որպես նորույթ, լավ էր, բայց երկար ժամանակի առումով նա իրոք վախեցավ այս՝ ասես հինգաստղանի հյուրանոցի շլացուցիչ փայլից: Ամբողջ սրտով նա ցանկանում էր ճամփեզրի խորտկարանի քաղցրաբլիթներ կամ շիլա՝ թթվի հետ: Հենց որ տեսնում էր չսանրված ու թափթփված Վեն Սյաոնուանին խոհանոցում զբաղված, սիրտը սեղմվում էր այն մտքից, թե ինչպես կարող է դիմակայել արեւմտյան կերակրատեսակներով զարդարված սեղանին: Լեյ Լեն սիրալիր հորդորում էր Վեն Սյաոնուանին, որ այդպես իրար չխառնվի լուսաբացից մինչեւ մայրամուտ: Սիրտը ցավում էր նրա համար: Վեն Սյաոնուանը քաղաքավարի հավաստիացնում էր, որ ամեն բան կարգին է, որ պատրաստ է սիրելիի համար քնից էլ հրաժարվել: Ի վերջո, Լեյ Լեի շարունակական պնդմամբ, Վեն Սյաոնուանը բարեհաճորեն համաձայնեց վեր չկենալ եւ նախաճաշ չպատրաստել: Լեյ Լեն շոյեց նրա գլուխը՝ թաքուն իրեն թեթեւացած զգալով, որ հիմա կարող է հրաժեշտ տալ այդ խաղալիք նախաճաշերին:

Քաղցրաբլիթ պատրաստող փոքրիկ ջեռոցը երկարատեւ օգտագործումից վաղուց կեղտոտվել էր: Փքաբլիթի ամանի եզրին էլ երկու չիփս էր կպած, բայց Լեյ Լեն բավականությամբ կերավ կոպիտ սպասքից: Հիմա սա այն էր, ինչ պետք է լիներ նախաճաշը՝ պարզ, առատ, եւ ուտելիս էլ ճակատդ թեթեւակի քրտնում էր: Հետո նա մաքրեց կոկորդը եւ քայլեց գրասենյակ: Լեյ Լեն աշխատում էր արտադրական ընկերությունում: Այն իբր ընկերություն էր, բայց ավելի շատ նման էր արտադրամասի: Ընդհանուր առմամբ, այդտեղ մի քանի տասնյակ աշխատակից կար: Նույնիսկ նա, որ երկու տարուց քիչ ժամանակ էր այդտեղ աշխատում, արդեն ընդունվել էր հիմնական աշխատախմբի կողմից: Ընկերությունը հիմնականում տեսաձայնագրմամբ էր զբաղվում եւ երբեմն ընդունում էր որոշ դպրոցական տեքստերի ու տեսագրությունների հետ կապված պատվերներ: Չնայած ուշադրության կենտրոնում գտնվելը դժվար էր, միաժամանակ՝ աշխատանքի պակաս չկար: Անցյալ տարի Լեյ Լեն թողել էր մասնավոր կորպորատիվ հեռուստաընկերությունը, որպեսզի աշխատի այստեղ: Նա հրաժարվեց ծրագիր վարողի կայուն աշխատանքից՝ ավելի շատ գումար վաստակելու եւ վարկերը շուտ մարելու համար: Նախքան կորպորատիվ հեռուստաալիքում աշխատելը Լեյ Լեն շարժական խորհրդատվական ալիքի աշխատողներից էր: Այդտեղ ավելի շատ մարդիկ կային, քան օգուտ, եւ մի բուռ աշխատողներով կենաց մահու հրմշտոցի մեջ էին: Իսկ նախքան այդ՝

մարզական ալիքի հաղորդավար էր: Գործընկերների կեսից ավելին նրա նախկին դասընկերներն էին, եւ նրանք ուրախ համագործակցում էին ու լավ էլ վաստակում: Բայց հետո ծրագրի վարկանիշն ընկավ, եւ այն, ցավոք սրտի, դադարեցրեց իր գործունեությունը: Երբ ծրագիրը դադարեց, Լեյ Լեն շատ բան կորցրեց: Ուսումն ավարտելուց վեց տարի անց նա աշխատանքը փոխել էր չորս անգամ եւ հիմա ստրուկի պես աշխատում էր որպես հաղորդավար, ֆիլմի մոնտաժող եւ, ի հավելումն, կապի աշխատանքն էր ապահովում:

Լեյ Լեն ավարտել էր Ռադիոհաղորդակցման ինստիտուտի ռադիոհեռուստահաղորդակցման բաժինը: Սովորելիս, իր ակնառու աշխատանքի շնորհիվ, նա բաժնի յոթ «գայլերից» մեկն էր: Ամեն անգամ, երբ հնարավորություններ էին լինում մասնակցելու մեկ այլ դպրոցի ներկայացմանը, ողջունելու օտարերկրյա հյուրերին կամ հանդես գալու կենտրոնական հեռուստատեսությամբ, այդ յոթը միշտ ընդգրկված էին: Նրանք բարձրահասակ եւ ուժեղ, գեղեցկադեմ ուսանող տղաներ էին՝ հնչեղ ձայներով: Ճլացուցիչ տեսք ունեին իրենց եվրոպական սեւ կոստյումներով: Հիմա այդ յոթից ոմանք առանց մեծ ջանքերի դարձել էին հեռուստաալիքի նորությունների հաղորդավարներ, ոմանք դուրս էին եկել աշխատանքից եւ դարձել տնակյաց հայրեր, իսկ ոմանք էլ արտահաստիքային աշխատողներ էին՝ մի օր հարուստ, մի օր աղքատ, որ կադրից դուրս ձայներ էին հնչեցնում, ինչպես ստուդիայի տխմարները: Լեյ Լեն աշխատում էր իննից մինչեւ հինգը եւ իր մասնագիտությունից երբեք չէր հեռացել, բայց նաեւ այնքան մեծ ծավալի աշխատանք էր կատարել մասնագիտությունից դուրս, որ իրեն գրեթե լուսանցքում էր զգում:

Վեն Սյաոնուանը Լեյ Լեի կրտսեր դասընկերուհին էր: Նրանք հանդիպել էին ռադիոհաղորդակցման բաժնի ուսանողական կազմակերպությունում: Այդ ժամանակ Լեյ Լեն նոր էր դարձել ավագ՝ չորրորդ կուրսի ուսանող, իսկ Վեն Սյաոնուանը երկրորդ կուրսում էր: Որպես մարզական բաժնի ղեկավար՝ Լեյ Լեն նոր ուսանողներից օգնականներ ընտրելու գործի պատասխանատուն էր: Վեն Սյաոնուանը բեյսբոլի վարդագույն գլխարկով էր եւ ոսկեգույն ներկած մազերով: Հագին բաց վարդագույն անկրունկ կոշիկներ էին, որոնց մեջ սրունքները երկու փայտիկների էին նման: Աղջկա գունագեղ տեսքն ու հանդերձանքը եւ չափազանց բարակ ոտքերը Լեյ Լեին թեթեւամիտ ծիածանագույն թութակ հիշեցրին: Ընդունված կարգի համաձայն Լեյ Լեն դիմորդներին մի քանի հարց տվեց: Ընդամենը՝ թե ինչու են ուզում ընդգրկվել մարզական բաժնում եւ եթե ընդունվեին, արդյոք հե-

տագա աշխատանքային ծրագրեր ունեի՞ն: Նոր ուսանողները բոլորովին անփորձ էին եւ պատասխանելիս, բնականաբար, այնքան էլ ճարտարամիտ չէին: Երբ Վեն Սյաոնուանի հերթը հասավ, առաջին հայացքից նա էլ ամաչկոտ էր թվում: Լեյ Լեն հարցրեց, թե ինչու է ուզում ընդգրկվել մարգական բաժնում: Նա արագ բլբլացնելով պատասխանեց, որ տեղեկատվական բաժինը միշտ հոգնեցնում է՝ ստիպելով դեսուդեն վազել, քարոզչական բաժինը ստիպում է պաստառներ պատրաստել եւ մրցույթներ կազմակերպել, հազար ու մի բան, արվեստի բաժնում մարդ կարող է ուշադրության կենտրոնում լինել, բայց լավ չերգել կամ պարել, այնպես որ, երկար մտածելուց հետո, թվում է՝ միակ տեղը, որտեղ կարող է դժվարությունը հաղթահարել, մարգական բաժինն է: Լեյ Լեն լսում էր, թե ինչպես է Վեն Սյաոնուանը բնորոշում իր բաժինը, ասես դա պարզապես անվճար նախաճաշելու տեղ է, ապա հարցրեց՝ նա արդյոք ծրագրեր ունի՞ ապագայի համար: Աղջիկն աչքերը լայն բացեց եւ պատասխանեց.

- Ես պատրաստվում եմ լինել օգնական, ոչ թե բաժնի ղեկավար: Ինչ-որ ղեկավարը կասի, այն էլ կանեմ անխոս, ինչպես ասում են՝ գլուխս կախ, պոչս բարձր: Ես այդքան երկարաժամկետ, բարձր հավակնություններ չունեմ:

Լեյ Լեի համար նրա պատասխանը զարմանալի էր եւ զվարճալի: Հաշվի առնելով, թե որքան արագ եւ վճռական էր Վեն Սյաոնուանը, ինքը կարող էր նաեւ ընդունել նրան հենց միայն մթնոլորտն աշխուժացնելու համար: Այդպիսով՝ ամեն օր Վեն Սյաոնուանը ինքնագոհ մտնում էր մարգական բաժանմունք՝ հետեւելով Լեյ Լեին, բարձր կանչելով ու շշնջալով եւ զբաղվելով այս կամ այն բանով: Լեյ Լեն կարծում էր, որ նա փոքրիկ, բայց այնուամենայնիվ ճարտարամիտ մի կկու է: Դրանից հետո յոթ «գայլերից» մեկը աչք դրեց Վեն Սյաոնուանի վրա: Նա օգտվեց ուսանողական կազմակերպության զբոսախնջույքի ստեղծած հնարավորությունից, որպեսզի, ինչպես ասում են, «հետեւի գեներալի ձիու գլխին», եւ կրնկակոխ հետապնդում էր աղջկան, ինչպես շունը: Նա այնքան ուշադիր էր, որ դա վրդովեցնում էր մյուսներին: Բայց դեմքը խոժոռելով՝ Վեն Սյաոնուանը թաքնվեց Լեյ Լեի թիկունքում եւ մերժեց «գայլի» ուշադրությունը: Զբոսախնջույքից հետո «գայլը» Լեյ Լեին ասաց, որ դեռ կտեսնեն՝ ով ում: Պարզ էր, որ Լեյ Լեն Վեն Սյաոնուանին դուր էր գալիս. քայլ անելու ժամանակն էր: Լեյ Լեն ավելի քան երկու տարի էր, ինչ որեւէ աղջկա հետ չէր հանդիպում: Դա սրտակեղեք մի բան չէր, բայց անվիճելի էր, որ միայնակ է: Նա կարծում էր, որ աղջիկն այնքան էլ զուսպ չէ, բայց վերջինիս մեջ ինչ-

որ բան կար, դրա համար էլ որոշեց նրան գրավել՝ ճաշի հրավիրելով: Դեռ նոր էին սկսել, եւ Լեյ Լեն դեռ չէր հասել բուն նյութին, երբ Վեն Սյաոնուանը երկու աչքը հառեց ուղիղ իր դիմաց, դեմքի գույնն ամբողջովին ճերմակ դարձավ, սկսեց դժվար շնչել եւ աթոռից ցած սահեց: Անհաջողակ Լեյ Լեն բռնեց նրան, վեր բարձրացրեց, ռեստորանից դուրս եկավ եւ տաքսի կանգնեցնելով՝ տարավ հիվանդանոց: Սպիտակ վերնաշապիկը, որը հատուկ էր հագել, ապականվել էր աղջկա փսխուքից: Իսկ լիքը դրամապանակը, ուտելիքի եւ առաջին օգնության համար վճարելուց հետո, կրկին դատարկվեց: Ստամոքսի լվացումից, ներերակային կաթիլներ ընդունելուց եւ շատ տանջվելուց հետո հագիվ փրկված Վեն Սյաոնուանի վիճակը վերջապես կայունացավ: Ջարկերակը կարգավորվեց: Պարզվեց, որ նա ալերգիկ է: Ալերգիան գետնանուշից էր: Ուտեստները գետնանուշի յուղով էին պատրաստված: Վեն Սյաոնուանն, այդ ամենին անտեղյակ, երկու կտոր ուտելուց հետո այդ վիճակում էր հայտնվել, եւ ահա հարկ եղավ նրան առաջին օգնություն ցուցաբերել: Ոտքից գլուխ ապականված՝ Լեյ Լեն տագնապահար նստել էր մահճակալի կողքին, անհանգստանալով աղջկա համար: Երկու ժամ անց Վեն Սյաոնուանը հագիվ բացեց աչքերը: Լեյ Լեն խռոված փնթփնթաց.

-Ես երբեք աղջկա չեմ գրկել, այնպես որ պատրաստվիր՝ գուցե ամուսնանաս ինձ հետ:

Վեն Սյաոնուանը պատասխանեց.

- Ուրեմն նախ կդառնամ ձեր ընկերուհին, որպեսզի կամաց պատրաստվեմ:

Այս ասելուց հետո նա շուռ եկավ եւ քնեց: Այդպես, հենց հիվանդասենյակի մահճակալի մոտ, նրանց միջեւ հաստատվեց պարզ մի հարաբերություն:

Որոշ ժամանակ հետո Լեյ Լեն ուսումն ավարտեց եւ հեռացավ հանրակացարանից, որպեսզի ուսումնական հաստատությանը մոտ՝ ընկերոջ հետ բնակարան վարձի: Վեն Սյաոնուանը ազատ ժամանակ միշտ նրա մոտ էր լինում: Երկու տարի անց նրա դրկիցը դադարեցրեց վարձակալությունը, եւ Լեյ Լեն ուղղակի վարձակալեց երկու սենյակով եւ մեկ խոհանոցով այդ բնակարանը: Վեն Սյաոնուանը, բնականաբար, նույնպես տեղափոխվեց, եւ այսպես սկսվեց կյանքը մեկ տանիքի տակ՝ սիրով ու առանց ձանձրույթի: Սկսեցին արդեն գումար խնայել. ռեստորան կամ կինոթատրոն չէին գնում: Բնավորվեցին տանը, տեսասկավառակներ էին դիտում, կարդում էին, տեսախաղեր էին խաղում, իսկ երբ քաղցած էին, գնում էին

ինքնասպասարկման սրճարան-ճաշարան՝ օգտվելով Վեն Սյաոնուանի ուսանողական սննդի քարտից: Սկզբում Լեյ Լեն մտածում էր, թե Վեն Սյաոնուանը հասուն է ու գիտակից եւ գիտե տան հարցերում տնտեսող լինել: Հետո հասկացավ, որ նա պարզապես ծույլ է եւ չի սիրում տնից դուրս գալ: Իսկ երբ պատահում էր՝ դուրս էր ելնում, տուն չէր գալիս այնքան ժամանակ, քանի դեռ գրպանի եղածն ամբողջովին չէր ծախսել:

2

-Եղբայր, շաբաթավերջին Լուլուն ընկերներով գալիս է ճաշելու: Ազատ ժամանակ ունե՞ս,- հեռախոսի մեջ բլբլացրեց Վեն Սյաոնուանը: Կեսօրից հետո ժամը մեկն էր, երբ նա նոր արթնանում էր, եւ նրա ձայնը դեռ քնաթաթախ էր:

-Շաբա՞թ, թե՞ կիրակի,- հարցրեց Լեյ Լեն:

-Վա՛յ, չասացին: Կհարցնեմ, հետո քեզ կասեմ: Առայժմ, եղբայր:

-Կխոսենք, երբ տուն գամ: Ուրիշ ի՞նչ կարող եմ անել: Եթե չես նեղվում, թող գան:

-Նեղվելու ի՞նչ ունեմ: Վերադարձիր աշխատանքիդ: Աշխատանքային ժամերդ մի՛ ծախսիր կնոջդ վրա: Երեկոյան շուտ արի, եթե կարող ես: Կովի պոչով ապուր եմ պատրաստել:

Ավելի քան վեց տարի միասին էին, բայց Վեն Սյաոնուանը Լեյ Լեին դեռ «եղբայր» էր ասում: Լեյ Լեն արդեն սովորել էր դրան: Ասես չինական մարտարվեստի մասին վեպ լիներ: Սովորաբար երբ «քույրն» ամուսնանում էր իր դաստիարակ-ուսուցչի հետ, նրան չէր դիմում «ամուսին» բառով, այլ առաջվա պես «եղբայր» էր ասում: Եվ հիմա ասես էլի դասընկերներ լինեին: Լեյ Լեն հեռախոսն անջատեց եւ շարունակեց ուտել իր սառը լապշան: Մտածեց երեկոյան մատուցվելիք՝ կովի պոչով ապուրի մասին եւ գոհ ժպտաց:

Սկզբում Վեն Սյաոնուանը գաղափար չուներ, թե ինչպես պետք է խոհանոցում ինչ-որ բան պատրաստեր: Նախքան քոլեջ գնալը ջուր անգամ չէր եռացրել: Թեեւ հարուստ ընտանիքի աղջիկ չէր, բայց երես տված էր ու ալարկոտ: Մի անգամ, մեծ հանդիսավորությամբ, երկու պայուսակ նպարեղեն բերեց Լեյ Լեի վարձած բնակարան, որպեսզի ինչ-որ բան պատրաստի: Ավելի քան մեկ ժամ անց նա հայտնվեց երեք թասերով: Դրանցից մեկը կամ չափազանց ջրիկ բրնձի փլավ էր, կամ վարսակածավարի շատ

պինդ շիլա: Ամեն դեպքում, եթե դա բրինձ էր, ապա չափազանց թույլ էր, իսկ եթե շիլա էր, ապա չափազանց պինդ էր: Խնամքով կտրած երշիկի մի թաս կար, որը տաք գոլորշի էր արձակում, ասես մեջը եփած երշիկ լիներ, եւ սալաթի սոուսի հետ խառնած լոլիկ, վարունգ ու գազար՝ մեջտեղում էլ խաշած ձվի պյուրե: Դեմքի հուսահատ արտահայտությամբ՝ Լեյ Լեն վերցրեց այդ երեք չարագույժ թասերը, մտածելով, թե ինչ է անելու, եթե իրոք տուն բերի այդ տեսակ կնոջը: Լեյ Լեն ավելի լավ կերակուր էր պատրաստում, երբ Վեն Սյաոնուանը ծուլորեն մի կողմ էր քաշվում: Հետագայում, երբ Վեն Սյաոնուանը տանն էր մնում ու անելու բան չուներ, սկսեց զարգացնել շեֆ խոհարարի իր հմտությունները. մեծ տաղանդները դանդաղ էին հասունանում:

Վեն Սյաոնուանի ավարտելուց երկու տարի անց, նրա եւ իր աշխատավայրի տնօրենի միջեւ մեծ վիճաբանություն եղավ: Վեն Սյաոնուանը հեռացավ՝ թողնելով մեկ տողանոց մի գրություն՝ «Այլեւս վերջ»: Նա հավաքեց իր ճամպրուկը, որպեսզի վերադառնա հայրենի քաղաք եւ հանդարտվի: Լեյ Լեն եկավ տուն եւ տեսավ ննջասենյակի հատակը կեղտոտ, ամեն բան խառնված եւ չորս կատուներին՝ մլավելիս: Քիչ էր մնում բռնի ու խեղդի դրանց: Այդ ծույլ ու ալարկոտ Վեն Սյաոնուանը առանց նախազգուշացնելու հեռացել էր՝ թողնելով չորս անտեր կատուների՝ որպես լրացուցիչ վիրավորանք: Այդ երեկո Վեն Սյաոնուանը զանգ տվեց գնացքից: Միայն գնացք նստելուց հետո էր զգացել, որ լավ չէ մնաս բարով չասել, դրա համար էլ հատուկ զանգել էր, որ Լեյ Լեից ներողություն խնդրի: Լեյ Լեն խիստ զայրացավ, իսկ նա արդարանում էր՝ մեղադրելով տնօրենին:

Ավարտելուց ի վեր Վեն Սյաոնուանն այդ ընկերությունում էր: Օրական ութ ժամվա ընթացքում նա ցանկացած ժամանակ առաջադրանքներ էր ստանձնում, օրինակ՝զանգի մեղեդին կարգավորելու, հումորային սցենարներ ստեղծելու եւ ուրվականների մասին պատմություններ գրելու հետ կապված: Երբ փոստ էր գալիս կամ հեռախոսը զանգում էր, նա անմիջապես ձայնագրության ստուդիայում էր հայտնվում: Մեկ ամսվա վճարը կազմում էր 2000 յուան, դրանից բացի կային նաեւ աշխատանքային ծանրաբեռնվածության վրա հիմնված հավելավճարներ: Աշխատանքն այնքան էլ ծանծրալի չէր, եւ շաղակրատելն ու աճպարարությամբ զբաղվելը խնդիր չէին: Բայց ամեն օր, որպես կանոն, պետք է աշխատանքի վայրում լիներ ուղիղ ժամը իններին: Դա Վեն Սյաոնուանի սրտով չէր: Նա երբեք չէր գնացել արտերկիր, բայց դեռ ապրում էր եվրոպական ժամային գոտու համաձայն: Եվ միշտ Պեկինի ժամանակից ետ էր ընկնում: Երբ ուրիշները

քնում էին, նա արթուն էր, եւ երբ ուրիշներն արթնանում էին, քնում էր: Ամեն օր, երբ զարթուցիչը հնչում էր, անջատում էր այն՝ դեմքը ծռմռելով, որոշելով մի քիչ էլ քնել: Լեյ Լեն շատ մեծ ջանքեր էր թափում նրան արթնացնելու համար: Եվ ուղղակի չէր կարողանում հասկանալ, թե ինչու սովորաբար բարեհոգի Վեն Սյաոնուանը այդպես քնկոտ էր դառնում ու այդքան զայրանում էր, երբ ինքն ամեն անգամ ջանք էր թափում: Մատով փակում էր նրա քթանցքերը՝ խանգարելով շնչել, որպեսզի արթնացնի: Հեռախոսը հարմարեցնում էր թրթռոցով ազդանշանի վրա եւ դնում նրա փորին, բայց նա երազում երեւի տրակտորներ էր տեսնում: Ամեն առավոտ նրան ավտոբուսի կանգառ էր քարշ տալիս՝ նոր աշխատանքային օր սկսելու համար: Երբեմն համբերությունից դուրս էր գալիս, գուցե նրա համառության պատճառով: Իսկ նա կարող էր քնել ամբողջ մի հերթափոխ: Չափազանց անկայունության եւ անկանխատեսելի դանդաղկոտության պատճառով նրա աշխատավարձից ամեն ամիս մի կլորիկ գումար էր պահվում: Վեն Սյաոնուանը երբեք չէր ընդունում իր սխալները, բայց ամեն կերպ դատապարտում էր ընկերության կողմից կատարված պահումները: Նրա հիմնական աշխատավարձը կազմում էր 2000 յուան, բայց մեկ բացակայության համար պահումը 100 յուան էր, իսկ ուշացման համար՝ 50: «Ի՞նչ եք կարծում, եթե մեկ ամիս բացակայեմ, ուրեմն ե՞ս պիտի նրանց փող վճարեմ»: Գարնանից հետո, երբ ուժերի անկում է լինում, շոգ ամռանից ու ծանծրալի աշնանից հետո ձմռանն էլ Վեն Սյաոնուանը քանիցս աշխատանքի չգնաց: Ամսի վերջում նրա եկամուտը, գումարած պարգեւավճարը, ընդամենը 900 յուան էր: Նա բռնեց փողերի բարակ տրցակը, կռվեց տնօրենի հետ, վերցրեց իր իրերը եւ այդուհետ դարձավ նոր դարաշրջանի գործազուրկ երիտասարդ:

Սկզբում նա վերադարձավ հայրենի քաղաք՝ մեկ ամիս ապրելու: Փող չէր կորցնում, անկախ նրանից, թե ինչքան էր քնում, իսկ ուտելիքի եւ հագուստի մասին հոգում էին մայրն ու հայրը: Վեն Սյաոնուանը բարձր տրամադրությամբ էր, եւ չէր էլ ուզում այդտեղից հեռանալ: Լեյ Լեն ամենայն անկեղծությամբ ու լրջությամբ աղաչում էր նրա ծնողներին, բայց նա մտադիր չէր վերադառնալ: Այդժամ դաժան մի վերջնագրով սպառնաց՝ եթե չվերադառնաս, կսպանեմ չորս կատուներին, եւ սա կատակ չէ: Վեն Սյաոնուանը գիտեր՝ Լեյ Լեն այդքան քաջություն չունի, որ դա անի, բայց այդուհանդերձ ձեւացրեց, թե հանձնվում է, եւ շտապեց վերադառնալ Պեկին: Երբ դուրս եկավ կայարանից, նրանք նայեցին մեկմեկու: Ռոմանտիկ եւ սենսացիոն գրկրախառնումներ ու արցունքներ չեղան, ընդամենը հին ընկերների պես

միասին վերադարձան: Վեն Սյաոնուանի հայացքը ջերմացավ, եւ նա քնքշորեն ժպտաց, երբ տեսավ կատուներին: Ստուգեց կատուների ուտելիքն ու ավազի արկղիկը եւ ժպտաց Լեյ Լեին՝ հավանություն արտահայտող ժպիտով: Կատուներին ուշադրություն ու հոգատարություն ցուցաբերելուց հետո հերթը հասավ Լեյ Լեին:

Լեյ Լեն ատելով ատում էր այդ կատուներին: Դրանք շատակեր էին եւ ծույլ, թափառում էին այդ համեստ չափերի տան ամբողջ տարածքով, աներկյուղ ճանկռտում ամենուր եւ ամեն ինչ: Բայց նա այլընտրանք չուներ: Վեն Սյաոնուանը չէր ուզում ադամանդներ կամ վարդեր կամ մոդայիկ հագուստ: Նա մահու չափ շատ էր սիրում կատուներ: Չորս կատուներից ոչ մեկը հայտնի ցեղատեսակից չէր: Երկուսը վերցված էին փողոցից, երկուսը՝ նախորդ խորամանկ տանտերերն էին թողել, որոնք իրենց կատուներին հատկապես նրան էին վստահել: Կատուներն սկսում էին աստիճանաբար ավելանալ: Սկզբում Վեն Սյաոնուանը ցանկանում էր բոլոր դրսի կատուներին գրկաբաց ընդունել, բայց Լեյ Լեի կտրուկ ընդվզումից հետո խռովեց եւ հրաժարվեց այդ մտքից: Չորս կատուն արդեն բավական էր: Տունը լի էր դրանցով, դեսուդեն էին ցատկում, իրենց անընդհատ մլավոցներով մարդու գլուխ տանում: Դրանք լքված ու թափառական էին եղել եւ հանկարծ դարձել էին Վեն Սյաոնուանի թանկագինները: Թվում էր՝ Մեյմեյը վատ ախորժակ ունի, Նյուվանի մազերը վերջերս սկսել էին թափվել, Ցունշանը նորից կռվում էր Գանդանի հետ... Վեն Սյաոնուանը խոսում էր կատվանման՝ մլավելով, իրեն պահելով ճիշտ եւ ճիշտ կատվի պես: Մի օր Ցունշանը դուրս ցատկեց բաց պատուհանից: Վեն Սյաոնուանը կենդանության նշույլ իսկ ցույց չէր տալիս՝ երկու օր ոչինչ չուտելով: Արյունով լցված աչքերով նա իր առջեւ էր նայում՝ հուսալով, որ անառակ որդին կվերադառնա: Լեյ Լեն ձեւականորեն մխիթարում էր նրան՝ հոգու խորքում մտածելով, որ մեկ կատու պակաս՝ նշանակում է ավելի քիչ անհանգստություն եւ անախորժություն: Ճաշի ժամանակ նա երկու օր հացադուլ հայտարարած աղջկան տարավ ներքեւի հարկում գտնվող մի փոքրիկ ռեստորան: Վերջինս ուտում էր դյուրագրգիռ դեմքով, ուտելիքը փայտե ծողիկով քչփորելով, կարծես փայտե ծողիկներն էին սնվելու կարիք զգում, ոչ թե ինքը: Երեք թե չորս օր հալումաշ լինելուց հետո Վեն Սյաոնուանը հանկարծ լսեց ծանոթ մլավոցի ձայնը: Ծենքի մուտքի ծածկի ներքո, աղոտ լույսի տակ կանգնած էր նրա խեղճ կատուն: Վեն Սյաոնուանի ուրախությանը չափուսահման չկար: Նա կամացուկ մոտեցավ Ցունշանին՝ ասես վախենալով, թե կատուն չի ուզի ետ գալ: Վախենում էր կոպիտ լինել, որ հանկարծ կատվին

չխրտնեցնի: Լեյ Լեին աղաչեց վերեւ բարձրանալ եւ բերել կատվի պայուսակը: Լեյ Լեն բերեց պայուսակը եւ ընդունեց իր ճակատագիրը: Այդ սրիկան, որ մի քանի օր պահմտոցի էր խաղացել, վերջապես, անամոթաբար տուն էր եկել:

Որպես տան կերակրող ձեռք՝ Լեյ Լեն ստիպված էր տեր կանգնել Վեն Սյաոնուանին եւ նրա չորս կատուներին: Գործազուրկ Վեն Սյաոնուանը հրամայում էր աշխարհին եւ տնօրինում՝ գիշերազգեստը հագին, ուտելով ու քնելով եւ քնելով ու ուտելով ամեն օր, տնից ընդհանրապես դուրս չգալով, եթե ծայրահեղ անհրաժեշտ չէր: Բայց քաշը չէր ավելանում: Նրա մարմինը դեռ երկար էր ու նուրբ, ինչպես լուսանկարում: Անելու ոչինչ չունենալով՝ նա սկսեց խոհարարություն սովորել: Խոհանոցային մի քանի գիրք էր գնել եւ ցուցադրաբար ձեռք բերեց խոհանոցային նոր պարագաներ: Վարձակալված բնակարանի կեղտոտ ու խղճուկ խոհանոցում նրա խոհանոցային պարագաներն անթերի մաքուր եւ փայլուն տեսք ունեին: Տեսնելով նրա լուրջ եւ բարեխիղճ պահվածքը՝ Լեյ Լեն մտածեց, թե գուցե շեֆ խոհարարի գլխարկ էլ ձեռք կբերի: Անկախ նրանից, թե ինչ էր անում, Վեն Սյաոնուանը երբեք իրեն այդ բնագավառում սիրող չէր համարում: Նա իրեն դրսեւորում էր սննդի աստծո նման, թեեւ նոր էր սկսել այդ գործը: Այդ ժամանակ ամեն օր դուռը բացելիս մի նոր ու արտառոց հոտ էր գալիս՝ «միսո» ապուրի, կարմիր գինու մեջ պատրաստած տանձի, խորոված իսպանական թյունիկի, կարագով խաշած ծովամթերքի... Պեկին, Ճանդուն, Սիչուան, Կանտոն, հին, նոր, չինական եւ արտասահմանյան: Վեն Սյաոնուանը նույնիսկ գնաց մեծածախ շուկա՝ խմորեղենի համար կաղապարներ գնելու: Փորձում էր պատրաստել լոտոսի տերեւի ապուր, որ կերել էր «Երազ կարմիր դղյակում» վեպի հերոս Ցզյա Բաոյույը: Սկզբում Լեյ Լեն կարծում էր, թե ինքը կարող է ամեն օր ընտանեկան տաք կերակուր ուտել: Շատ չէր պատկերացնում, որ ամեն օր ստիպված կլինի նոր ճաշատեսակներ փորձել: Նրանք, փաստորեն, բոլոր կերակուրներն էլ լավ համտեսեցին: Լեյ Լեն համաձայնեց, որ Վեն Սյաոնուանն, իհարկե, այդ բնագավառում տաղանդ ունի: Միայն թե չէր կարողանում տանել նրա՝ ամեն անգամ նոր ճաշատեսակները, մոլեռանդորեն զարդարված ճա-շա-սկու-տեղները կամ թանկ արժեցող, բայց զուր վատնվող՝ կերակրի բաղադրամասերը: Տանը պատրաստելն արժենում էր նույնքան, որքան դրսում ուտելը:

3

Շաբաթ օրը Լուլուն եւ ընկերներն իսկապես եկան: Վեն Սյաոնուանը հեռախոսով երկար բացատրում էր, թե ինչպես հասնեն իրենց տուն: Ի վերջո Լուլուն, որ վարում էր մեքենան, եւ մյուսները հասան Պեկինի արեւելյան ծայրամաս: Լուլուն Վեն Սյաոնուանի դասընկերուհին էր. կից սենյակներում էին մնում: Մյուս տղաներն ու աղջիկը նույնպես նրա դասընկերներն էին: Նրանք աղմուկ-աղաղակով ներս խուժեցին՝ խմիչքների արկղով:

-Եղբայր, իրոք որ խուլ ծայրամասում ես ապրում: Մի քանի մետր էլ՝ ու Պեկինի սահմաններից դուրս կգայինք, հը՞,- Լեյ Լեին բողոքեց Լուլուն: Վեն Սյաոնուանը զբաղված էր խոհանոցում՝ Լեյ Լեին թողնելով, որ հյուրասենյակում հյուրընկալի դասընկերներին:

-Իսկապես, ա՛յ հիմա հասկանում եմ, թե Պեկինն ինչքան մեծ է,- նկատեց դասընկերներից մեկը:

-Աստվա՛ծ իմ, Վեն, իրո՞ք այստեղ եք ապրում,- չսպասելով, որ Լեյ Լեն ի պատասխան արծագանքի բնակարանի հեռավորության մասին իրենց խոսքերին, բարձր ճչաց Լուլուն:

Ապա բոլորն սկսեցին չափել սենյակը: Դեմքերի տարբեր արտահայտություններ ունեին, թեեւ բոլորն ասես ցնցված էին:

Տեսնելով, թե որտեղ են ապրում Լեյ Լեն եւ Վեն Սյաոնուանը, զարմանքի ճիչ արձակելուց բացի, կարող էին միայն լուռ ապշանքով նայել իրենց շուրջը:

Կոպիտ սվաղով բնակարան: Այո, Լեյ Լեն եւ Վեն Սյաոնուանն ապրում էին կոպիտ սվաղով, դեռ լրիվ չնորոգված բնակարանում: Պատերը գույն չունեին, հատակին լինոլեում էր, տունը լուսավորվում էր էներգախնայող լամպերով, ճաշասեղանի փոխարեն լաքը թափված ծալովի սեղան էր, եւ ամեն ինչ երկաթբետոնի գույնի էր: Հյուրասենյակում կամ ննջասենյակում պատշաճ կահույք չկար: Սավանով ծածկված մի հին բազմոց էր, երկու երեսունյուանանոց պլաստիկ զգեստապահարան՝ յուրաքանչյուր բնակչի համար մեկը: Մահճակալի կողքին կոշիկի մի հասարակ դարակ կար՝ Վեն Սյաոնուանի՝ դիմահարդարման պարագաներով ծածկված: Ինչպես էլ նայեիր, բնակարանում կարծես մարդ չէր ապրում: Այնպիսի տպավորություն էր, կարծես տանտերը խելքը թռցրել էր ու լքել բնակարանը՝թողնելով այն անտեր վիճակում:

-Լսի՛ր, եղբայր, դուք իրոք վերջն եք: Այսպիսի մի վիճակ...Մարդու մա-

զերը բիզ-բիզ են լինում,- հանկարծ բացականչեց մինչ այդ լուռ տղաներից մեկը:

-Փող չկա: Նախնական գումարը մուծելուց հետո քիչ գումար մնաց մեզ մոտ: Հաշվարկ արեցի եւ կարողացա նորոգել լոգարանն ու խոհանոցը:

Վեն Սյաոնուանը խոհանոցից երկու անուշաբույր ուտեստ դուրս բերեց՝ միաժամանակ բացատրություն տալով բնակարանի թերությունների հետ կապված հարցերին:

-Հաշվա՞րկ արեցիր: Մի՛ լսեք նրա անհեթեթությունները: Միայն լոգարանի հախճասալիկներից մեկն արժեր 90 յուանից ավելի: Ես նրան համոզում էի ավելի պարզ ու հասարակ բան գնել, մի քիչ փող խնայել, բայց նա ասաց, թե տարիներ շարունակ աչք է ունեցել բաց վարդագույն, ծաղկավոր սալիկների վրա եւ այժմ, երբ վերջապես իր տունն ուներ, վճռեց այդ սալիկներն ամեն գնով ձեռք բերել: Այսպիսով, մենք 7 հազար յուան շռայլեցինք լոգարանի պատի սալիկների վրա: Եթե այդքան խնայող էր, չէ՞ր կարող 2 հազար յուանով բավարարվել:

Այսքան երկար տարիներ միասին էին, եւ Լեյ Լեն չէր կարողանում հասկանալ, թե ինչու է Վեն Սյաոնուանը միշտ մտածում, որ գումար խնայելու գործից լավ է հասկանում: Որտեղի՞ց նրան այսպիսի համոզվածություն:

- Ինչպե՞ս չես հասկանում: Կանայք պետք է հարմարավետ լոգարաններ ունենան:

Չսպասելով, որ Վեն Սյաոնուանը խոսի, Լուլուն խառնվեց խոսակցությանը՝ պաշտպանելով ընկերուհուն: Նույն այդ խոսքերով էր արդարանում Վեն Սյաոնուանը: Իսկապես որ՝ ամբողջ աշխարհի ագռավները մեկը մյուսի նման սեւ են: Այդ ի՞նչն է կանանց մղում, որ ունենան շատ թանկարժեք, սալիկապատ լոգարաններ:

Անցյալ տարի, երբ վարձակալության ժամկետը լրանում էր, տանտերն ասաց, որ մտադիր է գինը մի փոքր բարձրացնել: Սկզբնապես Լեյ Լեն բնակարանը վարձակալել էր, քանի որ հարմար էր իրենց համար՝ որպես ժամադրավայր: Բայց Վեն Սյաոնուանն արդեն երկու տարի է, ինչ ավարտել էր, այնպես որ կարիք չկար այդքան մոտ մնալ ինստիտուտին: Մինչ Վեն Սյաոնուանը տատանվում էր, թե արդյոք պե՞տք է ընդունեին գնի բարձրացման առաջարկը եւ շարունակեին վարձակալումը, Լեյ Լեն մտմտում էր տունը գնել: Վեն Սյաոնուանն ասում էր, որ տուն գնելն իրենց՝ երկու չքավորի համար երկնքում գտնվող կարկանդակ ձեռք բերելու նման մի բան է: Այդ ժամանակ նա արդեն ավելի քան մեկ տարի առանց աշխա-

տանքի էր: Բնակարանային գները միայն կարող էին բարձրանալ, եւ այն, ինչ տվյալ պահին աստղաբաշխական էր թվում, հետո կարող էր անհասանելի լինել ընդհանրապես, ու զղջայիր, որ ժամանակին չօգտվեցիր հնարավորությունից: Լեյ Լեն վճռեց անել մտքին դրածը:

Իհարկե, իմաստ չուներ հաշվի առնել 2-րդ, 3-րդ կամ 4-րդ օղակաձեւ ճանապարհները: Դրանք այն վայրերը չէին, ուր կարող էիք խցկվել առանց գոտիներդ ծգելու: Եթե վիճակախաղում չես շահել, ապա այդտեղ գործ չունես: Երբ առաջին անգամ սկսեցին բնակարաններ փնտրել, մեծ հույսերով մոտեցան 5-րդ օղակաձեւ ճանապարհի շրջակա տարածքին: Բայց հենց որ գինը լսեցին, նրանց հույսերն ամբողջովին ի չիք դարձան: Վեն Սյաոնուանի հորդորով՝ Լեյ Լեն հույսը կտրած նայեց ցուցադրվող բնակարաններին: 5-րդ օղակաձեւ ճանապարհից դուրս, 5-րդ օղակաձեւ ճանապարհից հինգ կիլոմետր դուրս, 5-րդ օղակաձեւ ճանապարհից տասը կիլոմետր դուրս... Ի վերջո հեռացան դեպի քաղաքի ծայրամաս, 5-րդ օղակաձեւ ճանապարհից 15 կիլոմետր դուրս: Ողջամիտ գին էր, եւ բնակարանը գեղեցիկ էր: Վեն Սյաոնուանի սիրած՝ հատակից մինչեւ առաստաղ լուսամուտներով էր եւ լոգարանով: Դա մի փոքր հեռու էր, բայց դրանից ավելի հեռու տեղերն էլ անմատչելի էին: Դրա համար էլ հանեցին իրենց մի քանի տարվա խնայողությունները, եւ յուրաքանչյուրը տուն գնաց՝ ծնողներից որոշ գումար խնդրելու: Կանխավճար մուծելով՝ քսան տարվա հիպոթեքային վարկ վերցրին: Տարիների դառը, ծանր աշխատանքով վերջապես տուն ունեցան, իսկ փող չմնաց: Ինչպե՞ս նորոգեին տունը, կահույք ձեռք բերեին: Եթե փող չկա, ապա գնում ես միայն ամենահասարակ ու անհրաժեշտ բաները: Լեյ Լեն առաջարկեց նախեւառաջ ննջասենյակը նորոգել, քանի որ քնելն ամենակարեւորն է: Վեն Սյաոնուանն ասաց, որ ինքն ամեն բան կանի, քանի դեռ Լեյ Լեն աշխատանքի է: Եվ մինչ Լեյ Լեն աշխատավայրում ձայնագրման գործերով էր զբաղված, Վեն Սյաոնուանը վազվզում էր շինանյութերի շուկայի եւ իրենց նոր բնակարանի միջեւ:

Բայց Լեյ Լեն անհանգիստ էր: Ինչպե՞ս կարելի էր իրենց միակ արժեքավոր ունեցվածքը՝ իրենց տունը թողնել թեթեւամիտ ու անլուրջ Վեն Սյաոնուանի հույսին: Բայց ի՞նչ կարող էր անել: Ամեն օր պետք է աշխատանքի գնար: Իսկ եթե միայն շաբաթ եւ կիրակի զբաղվեին այդ հարցով, ապա ամբողջ մեկ տարի կտեւեր: Ինչեւէ, տունը կոպիտ սվաղած էր, նորոգումն անավարտ, իսկ Վեն Սյաոնուանը շատ գումար չուներ: Լուսամուտները հո չէ՞ր հանելու եւ տեղափոխելու, այնպես որ՝ եթե ինչ-որ բան չստացվի էլ, մեկ է՝ սրանից ավելի վատը չի լինի:

Մեկ ամսից ավելի Վեն Սայոնուանը, կեղտ ու փոշուց դեմքը գորշ-ծխագույն, չարչարվում էր ու դեսուդեն վազվզում: Այնքան էր ուժասպառ լինում, որ խոհանոցով էլ չէր հետաքրքրվում, եւ նրանց ամենօրյա ուտելիքը պարզ ու սովորական էր դարձել:

Բայց նորոգման հետ կապված գործերն զգալիորեն առաջ էին գնում: Վեն Սայոնուանը վարձու աշխատողներ գտավ, նրանց հետ սակարկեց հնարավորինս ցածր գնով աշխատանքի համար եւ ինքն էր ղեկավարում աշխատանքային գործընթացը: Ամեն օր լուրջ դեմքով գնում էր գործերը հոգալու, վաղ վեր էր կենում եւ ուշ երեկոյան վերադառնում: Միակ բանը, որ հայտնեց Լեյ Լեին, այն էր, որ վերջապես գտել է իր երազած՝ պատի սալիկները: Մնացած ամեն ինչ գաղտնի էր պահում եւ միայն ընդհանուր բաներ էր ասում: Միայն երբ Լեյ Լեն շաբաթավերջի ազատ օրերին այցելեց նոր տուն, տեսավ նույն մերկ բետոնե պատերը: Պարզվեց՝ Վեն Սյաոնուանն իր ողջ ջանքերը ներդրել է՝ լոգարանն ու խոհանոցը նորոգելու գործում, իսկ մնացած ամեն ինչ նույն վիճակում էր: Մինչդեռ Լեյ Լեն մտածում էր, թե նա հնարավորինս քիչ գումարով կարգի բերած կլինի ամբողջ տունը: Ստքով իսկ չէր անցել, որ Վեն Սյաոնուանն ամբողջ այդ ժամանակ այդ երկու փոքր սենյակներով է միայն զբաղվել:

Երբ տեսավ, թե ինչ հպարտ է իրեն զգում Վեն Սյաոնուանը, Լեյ Լեն ուզում էր լաց լինել, բայց արցունքներ չկային: Իսկ Վեն Սյաոնուանն ինքնավստահ բացատրում էր՝ խոհանոցն ուտելիք պատրաստելու համար է, լոգարանն ու զուգարանը՝ լողանալու եւ բնական կարիքները հոգալու, իսկ առանց դրանց հնարավոր չէ, եւ պետք է նորոգված ու հարմարավետ լինեն: Իսկ մնացածն այդքան էլ կարեւոր չէ: Ննջարանում երկուսով կարող ենք միասին քնել մահճակալին եւ երազներ տեսնել, ահա եւ երջանկությունը: Հյուրասենյակն ու պատշգամբը ուրիշների համար ենք նորոգում ու զարդարում, բայց խոհանոցն ու լոգարանը՝ մեզ համար: Մեկ է, մենք հարուստ չենք, ուրեմն եկ այդքան չմտածենք ուրիշների աչքերին թոզ փչելու մասին, այլ մեր հարմարավետության մասին հոգանք: Արդեն ավարտել ենք ամենադժվար մասը եւ մեծ քայլ ենք կատարել: Երբ փող կլինի, կավարտենք նաեւ մյուս մասերը: Լեյ Լեն ակնթարթորեն հանդարտվեց նրա հիմնավորումներով եւ հանկարծ հասկացավ՝ իր համար ամենակարեւորն այն է, որ Վեն Սյաոնուանը բացառապես զուրկ է հավակնոտ սնափառությունից: Կյանքի հանդեպ նրա վերաբերմունքը պարզ էր ու հարգանքի արժանի: Փիլիսոփայի նման՝ նա միշտ արտառոց էր, բայց միշտ վերին աստիճանի պաշտպանված ու հիմնավոր:

-Բայց ընտիր դռներ ունեք: Հիշում եմ՝ երբ փոքր էի, մեր տանն էլ ճիշտ այսպիսի դռներ էին: Թա՞նկ նստեցին դրանք:

Վեն Սյոնուանի դասընկերը հիացած զննում էր սենյակների փայտե, բաց կանաչ նեֆրիտի գույնի դռները:

-Հա՛, իհարկե:

Լեյ Լեն ժպտաց՝ հիշելով, թե որքան է չարչարվել դրանք գտնելու համար:

Երբ խոհանոցն ու լոգարանն ավարտեցին, բավականին տնտեսեցին, որպեսզի մեծ մահճակալ գնեն: Վեն Սյաոնուանի պնդմամբ՝ հատակին հնաոճ ու էժան լինոլեում գցեցին, որպեսզի կատուները չմրսեն: Վարձու բնակարանի նախկին տանտիրոջ հետ լավ հարաբերություններ ունեին, եւ նա մի հին բազմոց տվեց, որն օգտագործել էր երկար տարիներ: Դրան հետեւեցին պլաստիկ պահարանները, երկու համակարգիչը, կախիչները, այն ամենն, ինչ կարող էին տեղափոխել քաղաքի արեւելյան ծայրամաս: Այդուհանդերձ, տեղափոխվելուց հետո հենց առաջին օրը հասկացան, որ մի շատ լուրջ խնդիր ունեն. բնակարանը դռներ չուներ: Մուտքի դուռը բացում էիր, եւ մյուս սենյակներից ոչ մեկը դուռ չուներ: Իսկ փողը միայն ուտելիքի համար կբավականացներ: Դուռ կարելի էր գնել միայն այն դեպքում, եթե մի տեղից փող գողանային: Վեն Սյաոնուանն ուզում էր զանգել ծնողներին եւ մի քիչ փող խնդրել, բայց Լեյ Լեն դեմ էր: Ծաբաթվա վերջին նա ավտոբուս նստեց եւ գնաց մի քանի շուկայում նայելու: Երբ արդեն հույսը կտրել էր, թե մի բան կգտնի, հանկարծ նկատեց բնակարանի համար նախատեսված մեծ, կանաչ դռները. այդպիսի դռներ կան 1980-ականների հեռուստասերիալների բարձրահարկերում: Ասել, թե դրանք գեղեցիկ էին, չափազանցություն կլիներ, բայց այդուհանդերձ բավականին ինքնատիպ էին: Ամենակարեւորը դրանց գինն էր: Լեյ Լեն հաշվեց մոտի գումարը եւ տուն տարավ այդ դռները: Վեն Սյաոնուանը պարում էր ուրախությունից: Դռները նրան շատ դուր եկան: Գույնը շատ հարմար էր եւ անցյալի հուշ էր արթնացնում նաեւ:

-Միայն մեր դռներով մի՛ հիացեք: Նայեք մեր խոհանոցի սեղանիկին,- ասաց Վեն Սյաոնուանը շողացող ժպիտով՝ բերելով հերթական խորտիկը մեծ ափսեի վրա եւ նորից վերադառնալով խոհանոց՝ շեֆ խոհարարի իր գործին:

Արդեն չորս կերակրատեսակ կար՝ նարնջի հյութով սեխի շերտիկներ, խաշած դդում՝ պանրով, սեւ պղպեղով տավարի սուկի եւ թույլ խմորով ու ձվով պատրաստած բադրիջան: Սեղանիկի վրա փռած թերթին հյուրերի թվով թղթե բաժակներ էին դրված: Տանտիրուհին բոլորին բարձրաձայն հրավիրեց մոտենալ եւ խորտիկներով զբաղվել, քանի դեռ պատրաստվում էր հիմնական ուտեստը՝ կծու կարմիր տաքդեղով ձկան գլուխն ու կանաչ լոբով լապշան: Չինական եւ արեւմտյան, հարավային եւ հյուսիսային՝ տարբեր տեսակի կերակուրները հոյակապորեն ներդաշնակվում էին: Լուլուն եւ մյուսները հիացած էին այս ամենով եւ առանց այլեւայլության շտապեցին տեղ գրավել սեղանիկի մոտ: Լեյ Լեն նայեց սեղանի շուրջ նստածներին, որ ախորժակով վայելում էին, խնամքով եւ ուշադիր լցրեց նրանց բաժակները եւ գոհունակությամբ իրեն իսկական տանտեր զգաց:

-Դեռ փակվա՞ծ ես տանը,- Վեն Սյաոնուանին հարցրեց դասընկեր տղաներից մեկը:

-Իհարկե: Գործազուրկ աշխատող եմ՝ ամեն օր ծանրաբեռնված լվացք անելու եւ խոհանոցում եփել-թափելու գործերով: Եթե օրավարձով գործ կա, ասեք ինձ: Ազատ ժամանակ շատ ունեմ,- անհոգ նետեց Վեն Սյաոնուանը, ասես իր միակ ցանկությունն աշխատելն էր, բայց միշտ դժվարությունների էր հանդիպել:

-Ասում էիր, որ չքավոր ընտանիքից ես, մանկությունից աշխատելու սովոր: Հիմա ինչո՞ւ ես հույսդ կորցրել, բա ո՞ւր է առաջընթացի հասնելու քո հեղափոխական ձգտումը,- ասաց Լուլուն՝ մի կտոր բադրիջան դնելով բերանը եւ շրջվելով Լեյ Լեի կողմը:- Եղբայր, բա ե՞րբ եք պատրաստվում ամուսնանալ:

-Ի՞նչ: Նվեր տա՞լ ես շտապում:

-Դե, դա կլինի, բայց շատ եմ ուզում Վենին տեսնել հարսանեկան գեղեցիկ զգեստով:

-Ուրեմն իրեն հարցրու: Ես պատրաստ եմ, բայց նա միշտ մտածում է, թե հազար ու մի հոգս կա:

-Արդեն գրանցված է մեր ամուսնությունը, էլ հարսանիքի ի՞նչ կարիք կա: Հո հանրահայտ մարդիկ չե՞նք, որ ամբողջ աշխարհին տեղեկացնենք մեր ամուսնության մասին: Հարսանեկան հանդեսները հոգս ու չարչարանք են: Լիքը փող ենք ծախսում, հետո էլ ձեզնից նվեր կամ փող ենք ստանում: Դա էլ մի բան չէ: Կսպասեմ, մինչեւ մազերս երկարեն, հետո կգնանք ու հարսանեկան լուսանկարներ կանենք: Այդքան բան:

Գոգնոցը կապած՝ Վեն Սյաոնուանը նրբերշիկի համեղ կտորները դրեց

կատուների ամանի մեջ, ապա վերադարձավ խոհանոց եւ բերեց ու սեղանին դրեց վերջին ուտեստը՝ սպիտակ սնկով արգանակը:

-Քեզ պես մեկին չեմ տեսել: Ուրիշ կանայք սովորաբար անընդհատ պահանջում են, որ հարսանիք լինի, հարսանեկան զգեստ հագնեն, իսկ տղամարդիկ ծուլանում են եւ չեն ուզում ոչինչ անել,- համաձայնեց ընկեր տղաներից մեկը:

-Ես նույնպես չեմ տեսել,- ասաց Լեյ Լեն՝ նայելով, թե նա ինչպես է ուտելով զբաղված:

Նոր տուն տեղափոխվելուց երկու ամիս հետո Լեյ Լեն եւ Վեն Սյաոնուանը պաշտոնապես հաստատեցին իրենց ամուսնությունը: Իրենց առաջին իսկ հանդիպումից ի վեր Լեյ Լեն մտածում էր ամուսնության մասին: Բայց հասկանում էր, որ դեռ երիտասարդ է, եւ Վեն Սյաոնուանի հետ վեց տարի ապրելուց հետո էլ դեռ հակասական զգացումներ ուներ:

-Ամուսնանալու մասին ի՞նչ կասես,- հարցրեց Լեյ Լեն՝ չնորոգված ննջարանի մեծ մահճակալին պառկած:

-Ճիշտ ես: Մայրս շատ կուրախանա,- ասաց համակարգչի դիմաց նստած Վեն Սյաոնուանը՝ ձեռքը մկնիկի վրա եւ անգամ նրա կողմը չշրջվելով:

-Իսկ դո՞ւ ինչ ես մտածում:

-Ինչ մայրս կասի, այն էլ կանեմ:

-Այդ երբվանի՞ց այդպես լսող դարձար:

Լեյ Լեն նայեց նրա թիկունքին:

-Մայրս ասում է, որ ամոթ է, եթե չամուսնացած աղջիկն ապրում է տղայի հետ: Երբ ամուսնանում են, արդեն չեն մտահոգվում մարդկանց բամբասանքներից: Ես պարզ ու շիտակ մարդ եմ եւ չեմ ուզում, որ քո մասին մտածեն, թե գայթակղում ես երիտասարդ աղջիկներին, դրա համար էլ չեմ ուզում, որ այդպիսի կարծիք լինի քո մասին:

-Լսի՛ր, լուրջ թեմայից ենք խոսում: Չե՞ս կարող շրջվել եւ դեմքիս նայել:

-Վախենում եմ, որ եթե դեմքիդ նայեմ ու քո տանջահար դեմքը տեսնեմ, քեզ հետ ամուսնանալու ցանկությունս կփախչի: Դե լավ, մոռացիր: Ես ընդամենը գործազուրկի մեկն եմ, ուրեմն պայմաններ չեմ դնի քո առջեւ:

Վեն Սյաոնուանը նետվեց Լեյ Լեի կողմը, ձեռքերով բռնեց նրա ականջներից եւ ուղիղ նայեց դեմքին:

Հաջորդ օրն առավոտյան նրանք զանգեցին իրենց ծնողներին եւ հայտնեցին համատեղ որոշման մասին: Իսկ հետո, Վեն Սյաոնուանի

ծնունդյան օրը, գրանցեցին իրենց ամուսնությունը:

-Համալսարանական իմ դասընկեր, եթե հետո ինձ լքես, չեմ կարողանա նույնիսկ ծնունդյանս օրը նշել: Սա իմ աշխարհ գալու օրն է, ուրեմն այնպես չանես, որ այն դառնա ձախողված հարաբերությունների հիշատակի օր:

-Չե՞ս կարող մի լավ բան ասել: Վեց տարի է, ինչ միասին բարոյապես փչացած ենք, քեզնից բացի որեւէ մեկն ինձ հետ կապ ունեցե՞լ է: Քո ծնունդյան օրն ընտրեցի գրանցվելու համար, որպեսզի փող խնայեմ, թե չէ եւ՛ այս օրվա համար պիտի նվեր գնեի, եւ՛ ծնունդյանդ օրվա համար: Մի կրակոցով երկու նապաստակ սպանեցի:

-Երբեք չպետք է քեզնից մեծ տղաների հետ հարաբերություններ հաստատես: Դուք այնքան նենգ ու խորամանկ եք:

Այդ օրը երկուսով ընթրեցին իրենց շենքի ներքեւի հարկում գտնվող ամենապատշաճ ռեստորաններից մեկում՝ նշելով ընկեր-ընկերուհուց ամուսին-կին հարաբերության անցնելու առիթը: Լեյ Լեն մեկ շիշ կարմիր գինի պատվիրեց: Վեն Սյաոնուանն այնքան խմեց, մինչեւ նրա փոքրիկ դեմքն ամբողջովին կարմրատակեց: Երկուսն էլ շատ բարձր տրամադրությամբ էին եւ մնացին մինչեւ ռեստորանի փակվելը: Ապա մեկը մյուսին հենվելով դուրս եկան փողոց: Քաղաքի ծայրամասում գիշերային կյանք, որպես այդպիսին, չկա: Ժամը տասին մոտ բոլոր փողոցներն ամայի էին, ամենուր լռություն էր ու խավար: Նրանց շենքի հարեւանությամբ մի քանի չարտոնագրված տաքսի էին կանգնած՝ թույլ ազդանշանային լույսերով: Լեյ Լեն քաշելով տանում էր օրորվող Վեն Սյաոնուանին: Վեն Սյաոնուանի ձեռքերն այնքան բարակ էին, որ դրանք սեղմելիս ասես ջրի վրա լողացող թեթեւ ճյուղեր լինեին: Ծոյելով նրա գլուխը՝ Լեյ Լեն առաջին անգամ նրան այսպես դիմեց՝ «Իմ կին»:

Նորալուսնի բարակ մահիկը նման էր կալցիումի պակաս ունեցող մարդու եղունգի: Լուսնի լույսի տակ երկու թափառական շուն աղբարկղի մոտ ուտելիք էին գտել: Երեւի բարի մարդիկ ուտելիք էին թողել նրանց համար, կամ ինչ-որ մեկը աղբարկղի մեջ սննդի մնացորդ էր նետել եւ վրիպել, եւ նրանք ախորժակով խժռում էին գտածը: Խմիչքի ազդեցությունից Լեյ Լեն բավականին մելամաղձոտ էր դարձել:

-Նայիր: Չե՞ս կարծում, որ մենք էլ նրանց նման երկու թափառական շուն ենք՝ քաղաքից մղոններով հեռու այս ծայրամասում: Ամեն օր ես դուրս եմ ելնում ուտելիք գտնելու եւ տուն եմ գալիս քեզ կերակրելու, բայց ինչի՞ց է, որ դու երբեք չես գիրանում:

4

Գրեթե երեք տարի էր, ինչ ավարտել էր, բայց Վեն Սյաոնուանը դեռ աշխատանք չէր գտել՝ նախկին աշխատանքից դուրս գալուց հետո: Սկզբում չէր էլ ուզում աշխատանք փնտրել՝ բողոքելով, թե շատ էր հոգնում աշխատելիս, հիմա էլ վատառողջ է: Նրան հանգիստ էր պետք եւ առողջությունը վերականգնել: Հետո ակնարկեց, որ աշխատել է ուզում, բայց չի կարողանում հարմար աշխատանք գտնել: Ապա սկսեց փնտրել, բայց այդպես էլ իրեն հարմար աշխատանք չգտավ: Ինչպես Յանցզի գետի ալիքներն են առաջ շարժվում ավելի ու ավելի արագընթաց, այդպես էլ շրջանավարտների նոր խմբերն ավելի ու ավելի էին նվազեցնում աշխատանք գտնելու նրա հնարավորությունները: Աշխատանքը թողնելով՝ հիմա դժվար թե կարող էր հուսալ, որ նոր աշխատանք կգտնի: Այդ ամենը գիտակցելով՝ արագ հուսահատվեց, դադարեց աշխատանք փնտրել, ուշ պառկում էր քնելու եւ ավելի ուշ էլ արթնանում էր՝ աչքերը բացելուց հետո շարունակելով անիմաստ բաներով զբաղվել: Ամբողջ տունը տակնուվրա էր, ինչպես լքված մի արտադրամաս: Ցեմենտը պատերից թափվում էր հատակին, ամեն ինչ խառնաշփոթ վիճակում էր, իսկ նա իր կատուների հետ կուչ էր գալիս մի անկյունում: Առաջ էլ, երբ վարձակալած տանն էին ապրում, Վեն Սյաոնուանը տան մաքրությամբ չէր զբաղվում: Ասում էր, որ սպասում է, մինչեւ սեփական տուն ունենան,այդ ժամանակ էլ ամեն ինչ տեղը տեղին կանի: Բայց դրանք հենց այնպես ասված խոսքեր էին: Նոր տուն տեղափոխվելուց հետո էլ նա չուղղվեց եւ ավելի ու ավելի էր իրասածի դառնում: Այսպես էր ասում՝ ուրիշի տանը պետք է զգույշ լինես, իսկ սեփական տանդ ինչ ուզես, կարող ես անել: Մի բան գիտեր՝ ուտել եւ քնել: Չէր էլ նկատում՝ լուսամուտից դուրս ցերե՞կ է, թե՞ գիշեր. կատուների հետ միշտ պառկած էր անկողնում: Երբեմն պատահում էր, որ ձայնագրման ստուդիայում ինչ-որ գործ էր անում՝ կամ մուլտֆիլմ էր ձայնագրում, կամ ինչ-որ ապրանքանիշի գովազդ հնչեցնում: Քիչ էր վաստակում, բայց գոնե ընտանիքի բյուջեում ներդրում էր դա: Լեյ Լեն ամբողջ հոգսն իր ուսերին էր տանում: Երկուշաբթիից ուրբաթ, առավոտից երեկո նա ուժասպառ էր լինում: Ամեն ամիս ավելի քան 4 հազար յուան էր տուն բերում: 2 հազարը բնակարանի վարկն էր վճարում, մնացած փողը ծախսվում էր ուտելիքի, տրանսպորտի, տարբեր այլ բաների, կատուների կերի վրա: Ամեն ամիս այդ ծախսերից հետո գրեթե ոչինչ չէր մնում: Կյանքն ասես գլուխկոտրուկների անվերջ մի շրջապտույտ էր, թե ինչպես կատարել այլեւայլ ծախսեր եւ վճարել հիփո-

թեքը: Կապ չունի՝ ինչքան ես հոգնած, մեկ է՝ չես կարող պարտքդ մարել: Ուժասպառ լինելով եւ մշտապես վազքի մեջ գտնվելով՝ Լեյ Լեն սկսեց գիրանալ: Նա ցավով նկատեց, որ ավելի ու ավելի է նմանվում միջին տարիքի տիպիկ տղամարդու, չնայած որ երեսունը նոր էր լրացել:

Երբ Լուլուն եւ ընկերները հյուր եկան, Վեն Սյաոնուանը շատ ուրախացավ: Երկու օր առաջ նա արդեն որոշել էր, թե ինչ կերակուր է պատրաստելու: Շաբաթ օրը նույնիսկ շուտ արթնացավ, որպեսզի շուկայում գնումներ կատարի: Եվ երբ տուն հասավ, թաղվեց խոհանոցում ու ոգեւորված սկսեց պատրաստվել հյուրերի ընդունելությանը:

Ընկերներով գրկախառնվում էին, կատակներ անում, ասես դեռ ապրում էին ուսանողական անհոգ տարիներին: Սեղանի շուրջ իրենց շատ ազատ ու անկաշկանդ էին զգում, եւ ամեն ինչ կայծակնային արագությամբ սրբել-վերացնելուց հետո սկսեցին կատակել ու զրուցել: Կուշտ ուտել-խմելուց հետո հյուրերը գնացին: Վեն Սյաոնուանը, չուզելով բաժանվել նրանցից, ներքեւ իջավ ճանապարհելու: Ետ գալով՝ սեղանն սկսեց հավաքել՝ դեմքին սքանչելի մի ժպիտ: Լեյ Լեին, անկասկած, դուր էր գալիս այսպիսի ջերմ մթնոլորտը: Եվ հյուրերի գնալուց հետո նա բավականին տխրեց:

Լուլուն արբանյակային հեռուստատեսությունում սոցիալական կրթության ծրագրեր էր պատրաստում: Թեեւ արտաքնապես այդքան չէր փայլում, բայց որոշակի ժամերի ամեն օր երեւում էր հեռուստացույցի էկրանին: Մյուս երեքից մեկը մարզական հաղորդման հեռուստամեկնաբան էր, մյուսը գյուղատնտեսական հաղորդման գլխավոր կին հաղորդավար, երրորդը՝ բջջային լրատվության նորությունների ալիքի հաղորդավար: Թեեւ աշխատանքի մասին խոսելիս տրտնջում էին դժվարություններից, բայց բոլորն էլ քայլում էին տրորված ճանապարհով: Ընթրիքի մնացած մասը խոսում էին իրենց աշխատանքից՝ Վեն Սյաոնուանին չթողնելով որեւէ բան ավելացնել: Լեյ Լեն գիտեր, որ նրանք դա հատուկ նպատակով չեն անում: Պարզապես բոլորն էլ շատ զբաղված մարդիկ էին եւ բավական ժամանակ իրար չէին տեսել: Իսկ աշխատանքն այն գլխավոր բանն էր, որ միավորում էր նրանց: Բայց այդ խոսակցությունները Վեն Սյաոնուանի հետ ոչ մի կապ չունեին: Նա նստել էր մտասույզ եւ ուտում էր: Ապա, ինչպես միշտ, շարունակեց ծաղրել իրենց նախկին դասընկերուհիներից մեկին: Լուլուն եւ մյուսները պարզապես քաղաքավարությունից ժպտացին: Նրանց համար ուսանողական անցած տարիները միայն հաճելի հուշեր էին թողել: Մինչ-

դեռ Վեն Սյաոնուանը ուսումն ավարտելուց հետո կարծես սառել մնացել էր նույն տեղում: Նրա ընկերները բոլորը համակուրսեցիներն էին, եւ շփման շրջանակն էլ նույնն էր, ինչ առաջ: Նա խուսափում էր իրական կյանքի դժվարություններից, փակվում իր տանը, որի հետ նույնացել էր: Նրա երեկը, այսօրը, վաղը նույն բանն էին: Կյանքը նրա համար մի երկար արձակուրդ էր: Լեյ Լեն փորձում էր նրան համոզել, որ տասը տարի պատին դեմ հանդիման կանգնած լինելով՝ ի վերջո պետք է քանդել այդ պատը: Եթե երկար փակված մնաս, ապա զգույշ պետք է լինես, որ աշխարհն էլ քեզ չմոռանա: Բայց գիտեր, որ դա Վեն Սյաոնուանին չի անհանգստացնում: Հիմա այնքան շատ մարդիկ են գոյության կռիվ մղում, ամեն ինչի համար պայքարում, որ կապ չունի՝ պայքարում ես, թե ոչ. մեկ է, դարձյալ քաղցած ես մնում հաճախ: Լեյ Լեն ուզում էր նրան ասել, որ ուրիշ մի բան փորձի անել: Բայց տեսնելով, թե ինչպես է Վեն Սյաոնուանը ուրախ երգելով սրբում սեղանը, ոչինչ չասաց: Դե լավ, չարժե տրամադրություն փչացնել: Ամեն անգամ, երբ փորձում էր համոզել, որ այլ մի գործով զբաղվի, Վեն Սյաոնուանն սկսում էր լաց լինել: «Բացի ռադիոհաղորդումներից ես ուրիշ բանով չեմ կարող զբաղվել,- ասում էր:- Դու նույնպես ավարտել ես ռադիոհեռարձակման բաժինը: Պետք է իմանաս, թե որքան դժվար էին մեզ համար առոգանությամբ խոսելու եւ շնչառական վարժությունները: Ինչո՞ւ պետք է դու աշխատես քո մասնագիտությամբ, մյուսները նույնպես, իսկ ես ուրիշ բանով զբաղվեմ»: Լացն ավարտելուց հետո մի երկու անգամ էլ հեկեկում էր, ասես վիրավորված հեռուստառադիոաստղ լիներ: Լեյ Լեն կնոջից երեք տարով էր մեծ, բայց նրան հաճախ թվում էր, թե Վեն Սյաոնուանն իրենից տասը տարով փոքր է:

Ժամը տասին Լեյ Լեն լվացվեց եւ արագ պառկեց: Սահճակալի դիմաց կռացած նստել էր Վեն Սյաոնուանը եւ կատուների խնամքի մասին համացանցով ինչ-որ հրապարակում էր կարդում: Ամեն օր նույնն էր: Աշխատող Լեյ Լեն ուզում էր շուտ քնել, իսկ տանտիրուհին՝ Վեն Սյաոնուանը, որ երեկոյան ժամերին կենսաբանական ակտիվության ամենաբարձր փուլում էր, կարդում էր, հեռուստացույց դիտում, համացանցով զբաղվում: Լեյ Լեն արդեն սովոր էր դրան: Մյուս սենյակը դատարկ էր: Նրանց ամբողջ կյանքն անցնում էր ննջարանում:

-Ես քնում եմ: Բարի գիշեր: Ծատ երկար չնստես:

-Շուտ քնիր: Վաղը շուտ պիտի արթնանաս:

Այս խոսակցությունն էր ամեն երեկո մշտապես հնչում ժամային երկու տարբեր գոտիներում ապրող ամուսինների միջեւ:

Մեկը քնում էր, մյուսը համացանցով էր զբաղվում: Ամեն գիշեր համակարգչի ստեղնաշարի տկտկոցի հետ լսվում էր նաեւ քնած Լեյ Լեի համաչափ շնչառությունը: Եվ այդպես՝ ամեն օր:

-Չէ... այնուամենայնիվ ես պետք է փող աշխատեմ:

Վեն Սյաոնուանը նայեց համակարգչի էկրանի ժամացույցին: Երկուսն անց կես էր: Նա շրջվեց եւ նայեց Լեյ Լեին, որ շուռ եկավ անկողնում եւ քնի մեջ ինչ-որ անհասկանալի բան էր քրթմնջում: Մի պահ տատանվեց, ապա արթնացրեց նրան: Զարմանքը հետաքրքրության վերածվեց. այսքան տարի միասին էին, բայց սա առաջին անգամն էր, որ Լեյ Լեն քնի մեջ խոսում էր:

-Երազում տեսա, որ հիվանդ էի, եւ բուժման համար փող չունեինք: Մենք չէինք կարող վարկը վճարել, բնակարանը բռնագրավել էին, եւ մենք փողոցում էինք հայտնվել...

Լեյ Լեն խոսում էր դեռ լրիվ չարթնացած: Ցնցված էր, ճակատը ծածկվել էր քրտինքի մանր կաթիլներով: Վախեցած տեսք ուներ:

-Ի՞նչ զգայուն ես ու տպավորվող:

Վեն Սյաոնուանը գրեթե քամահրանքով էր նայում վախեցած ամուսնու դեմքին:

-Ինձ հիվանդանալ չի կարելի: Ես պետք է քեզ ու կատուներին ապահովեմ ուտելիքով եւ տաք հագուստով,- հատ-հատ արտաբերեց Լեյ Լեն, ասես վճռական որոշում կայացրած լիներ:

-Եղբայր, դու իրոք որ շատ պատկերավոր ես մտածում եւ շատ տպավորվող ես,- ասաց Վեն Սյաոնուանը եւ պատրաստվեց համակարգչի մոտ վերադառնալ:

Նա ուզեց մոռանալ Լեյ Լեի երազը: Երազ է, էլի, մտածում էր, այդպիսի երազներն անառողջ մի բան են, ինչ մտածում ես ցերեկով, այդ մասին էլ երազ ես տեսնում գիշերը: Դա մի մռայլ մեղեդի էր, որը խոսում էր գոյության փխրունության մասին: Բայց վերադառնալով համակարգչի մոտ՝ մի տեսակ մտահոգ դարձավ: Լեյ Լեի երազը խոր տպավորություն էր գործել նրա վրա, եւ մտքերը խառնվեցին՝ անընդհատ դրա շուրջ պտտվելով:

Դրսում չափազանց մութ էր: Դիմացի շենքի բոլոր պատուհանները սեւ էին, լույս չէր երեւում: Ասես խավարի ծածկոցն այլեւս չէր վերանալու, եւ որեւէ հույս չկար, թե լույս կբացվի: Քաղաքի արեւելյան ծայրամասն, ինչպես ասում էին, «քնած քաղաք» էր: Այդտեղ ապրող մարդիկ վաղ արթնանում էին, գնում աշխատանքի եւ ուշ էլ վերադառնում էին: Նրանք իրենց

ամբողջ եռանդը ներդնում էին՝ աշխատելով քաղաքի զարգացող ու ծաղկուն թաղամասերում, ապա, երկար ճանապարհ հաղթահարելով, վերադառնում էին ծայրամասային արվարձաններ, որպեսզի հանգստանային եւ ուժերը վերականգնեին: Դրա համար էլ լույսերն այստեղ շուտ էին հանգցնում, ինչպես բանակային զորամասում: Ժամը տասից հետո լույսերն սկսում էին մարել: Իսկ տասնմեկից շուրջբոլորը լուռ ու խաղաղ էր: Վեն Սյաոնուանն ասես արվարձանի հսկիչ պահակն էր, որ սովորել էր ապրել անսահման լռության ու մենության մեջ: Ի տարբերություն ուրիշների՝ նրան չէր հետաքրքրում, թե ինչ օր է կամ ժամը քանիսն է: Նա վայելում էր իր կյանքում եւս մեկ օր չաշխատած լինելու հաճույքը: Օբյեկտիվ տեսանկյունից՝ նրա կյանքը մի խառնաշփոթ էր, եւ նա կախված էր կանխիկ փողից: Բայց բոլորն աշխատում էին եւ չարչարվում, պայքարում դժվարությունների դեմ, իսկ Վեն Սյաոնուանն ապրում էր արքայադստեր պես՝ հարմարավետ կյանքով եւ չէր անհանգստանում սարսափելի վիճակի համար, քանի որ նրա թիկունքում կար տղամարդ, որն իր երազներում վախենում էր հիվանդությունից ու գործազրկությունից:

-Եղբայր, քանի որ դու ինձ թեւութիկունք ես, նույնիսկ աշխատանք չունենալով՝ ես ինձ լավ եմ զգում եւ գանգատվելու ոչինչ չունեմ,- նայելով նորից քուն մտած Լեյ Լեին՝ շշնջաց Վեն Սյաոնուանը:

Լեյ Լեն, որ երազի պատճառով արթնացել էր, մի քանի ժամ էլ քնեց: Երբ շրջվեց, տեսավ, որ Վեն Սյաոնուանը կողքին չէ: Կտրուկ վեր կացավ եւ զարմացավ, որ կինը դեռ նստած է՝ համակարգչին կպած:

-Սիրելիս, արդեն վե՞ր ես կացել:

-Իհարկե ոչ: Ես դեռ չեմ էլ պառկել:

Վեն Սյաոնուանն ուշադիր համակարգչին էր նայում եւ գլուխն էլ չշրջեց նրա կողմը:

Լեյ Լեն նայեց նրա նիհար մարմնին եւ մտածեց, որ «մեռած խոզը չի վախենում եռման ջրից» արտահայտությունը ամենալավն էր բնորոշում իրավիճակը *(չինական ասացվածք է, նկատի ունի մեկին, որի համար ամեն ինչ մեկ է - Ծ.Թ.):* Հենց ուզում էր մի բան ասել, Վեն Սյաոնուանն ընդհատեց նրան:

-Եկ այստե՛ղ, արա՛գ: Լավն է, չէ՞,- մատն ուղղելով համակարգչի էկրանի կողմը՝ ձայն տվեց նա:

Էկրանին մի տարօրինակ փոքր կոստյում էր՝ երեք ներքին եւ երեք արտաքին շերտերով: Խառնաշփոթ մի բան: Բամբակից, տրիկոտաժից եւ էլի երկու կամ երեք աննկարագրելի նյութերից: Արժեր 49 յուան, որ միանգա-

մայն համապատասխանում էր այդ ամենին: Միայն թե Լեյ Լեն որքան ավելի էր նայում դրան, այնքան ավելի անվայելուչ էր թվում: Եվ չէր կարողանում հասկանալ, թե ինչու է Վեն Սյաոնուանն ամբողջ գիշեր «Տաբաո» կայքէջում այդպիսի հիմարությունների նայում:

-Դու աշխատանքի չես գնում, ինչի՞դ է պետք այդպես հագնվելը: Փողոցում զբոսնելու համա՞ր:

-Ի՞նչ է, չե՞ս հասկանում: Եթե չեմ աշխատում, ուրեմն նաեւ չպիտի հագնվե՞մ:

Վեն Սյաոնուանը քիթը կախեց, բայց դեռ էկրանին էր նայում: Նա չէր էլ ուզում մտածել իր ետեւում կանգնած ամուսնու ասածի մասին եւ չէր էլ նկատում վերջինիս ընդվզումն ու վատ տրամադրությունը:

-Դու մի փոքր չափն անցնում ես. ամբողջ գիշեր չես քնել:

-Դո՛ւ փախցրեցիր իմ քունը: Երազիդ մեջ խոսում էիր:

Լեյ Սյաոնուանն իրոք չէր քնել Լեյ Լեի երազի պատճառով: Լեյ Լեի տագնապները դուրս էին լողացել նրա երազներից եւ խոր գիշերի մեջ տխրեցրել Վեն Սյաոնուանին:

Երազը պարզ էր ու հստակ: Նա անօգնական պառկած էր հիվանդանոցի մահճակալին: Վեն Սյաոնուանը միայն լալիս էր, կաթիլային ներարկիչից կաթիլ առ կաթիլ լուծույթ էր հոսում, իսկ հատակին ամենուր վիրակապեր էին թափված: Մռայլ, ցնցող մթնոլորտն այնպես էր ազդել Լեյ Լեի վրա, որ նա արթնացավ սառը քրտինքի մեջ կորած: Անկասկած, դա վատ նշան էր: Ինքն ասես առանց զորքի հրամանատար լիներ եւ պետք է դիմագրավեր վտանգին: Եթե ինչ-որ բան պատահեր, ապա կվտանգվեին երկու մարդկային եւ չորս կատվային կյանքեր:

Լեյ Լեն ուշադիր զննում էր կնոջը: Այս աղջիկը, որն ուզում էր ամուսնական գրանցում ստանալ, բայց այնքան ծույլ էր, որ հարսանիք չէր ուզում անել, իր անգործությամբ ինքն էր իրեն անկյուն քշել: Լեյ Լեն, որ ամեն օր ինքն իրեն ուժ էր տալիս, ներշնչում, որ ոչ մի վայրկյան չթուլանա, վախենում էր՝ հանկարծ ինչ-որ բան կպատահի եւ կխաթարի իրենց՝ առանց այն էլ փխրուն երջանկությունը: Իսկ նա... Նա ամբողջ գիշեր նստում էր համակարգչի դեմ, «Տաոբաո» կայքէջն էր նայում՝ մշտապես անճաշակ ու անպետք հագուստների վրա կենտրոնանալով: Եվ սա՞ էր իր այսպես կոչված կինը: Ո՛չ: Վեն Սյաոնուանն ավելի շուտ ասես իր դուստրը լիներ՝ ճարտարամիտ, անմեղ, քմահաճ ու անկանխատեսելի, զայրացնող ու համբերությունից հանող, անուշադիր ու ցրված դուստրը:

-Ամբողջ կյանքդ այսպե՞ս ես անցկացնելու,- ուզեց ասել Լեյ Լեն, բայց

շշունջն իսկ դուրս չեկավ, եւ նա կուլ տվեց դեռ շուրթերին չհասած բառերը:

Մինչեւ Լեյ Լեի տնից դուրս գալը Վեն Սյաոնուանն այդպես էլ նստած մնաց համակարգչի առջեւ: Քնելու ոչ մի մտադրություն չուներ, իսկ Լեյ Լեի գոյության մասին ասես լրիվ մոռացել էր եւ ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել էր համակարգչի վրա: Չէր էլ ուզում նայել Լեյ Լեի կողմը: Ամբողջ այդ անքուն գիշերը նա չէր կարողանում արցունքները զսպել: Լեյ Լեն դիտավորյալ փոքր-ինչ աղմկեց, բայց իրեն լրիվ անտեսված էր զգում: Ճանապարհին, աշխատանքի գնալիս, նա ավտոբուսում տեսավ երիտասարդ կանանց եւ հանկարծ նրանց հանդեպ հարգանքով լցվեց: Այդ բարձր տրամադրությամբ կամ անտրամադիր աղջիկներն արթնացել էին վաղ, արեւը ծագելուն պես, եւ լեփլեցուն ավտոբուսով քաղաք էին գնում: Վեն Սյաոնուանի պես՝ նրանք էլ հավանաբար դժկամությամբ էին արթնացել: Բայց այդուհանդերձ արթնացել էին՝ հաղթահարելով իրենց քնկոտությունը եւ ուղեւորվելով աշխատանքի, որտեղ հանդիպելու էին իրենց ղեկավարներին եւ հազար ու մի հոգս ու խնդիրների: Լեյ Լեն հանկարծ մտաբերեց փոքր-ինչ հնացած ու խոսակցական, բայց քիչ գործածվող արտահայտությունը՝ «աշխատավոր կանայք»:

5

Վեն Սյաոնուանն սկսեց Է՛լ ավելի ուշ մտնել անկողին, կամ, եթե ճիշտն ասենք, ավելի ու ավելի շուտ: Նրա հետկեսգիշերյան քնելու ժամանակն աստիճանաբար տեղափոխվեց մինչեւ առավոտ: Երբ Լեյ Լեն ծուլորեն բացում էր իր քնաթաթախ աչքերը, միշտ տեսնում էր նրան համակարգչի առջեւ նստած: Մի օր, սակայն, տեսավ, որ նա այդտեղ չէ: Վեն Սյաոնուանը գրկել էր քնած կատվին եւ լռության մեջ նստել հյուրասենյակի՝ պատռված շորով ծածկված բազմոցին: Իր ցրված տեսքով՝ հյուրասենյակի մերկ, անհրապույր պատերի ֆոնին, ասես լուցկի վաճառող փոքրիկ աղջիկը լիներ *(նկատի ունի Անդերսենի «Լուցկի վաճառող աղջիկը» հեքիաթի հերոսուհուն- Ծ. Թ.):* Լեյ Լեն հարցրեց, թե ինչու չի քնել: Վեն Սյաոնուանը պատասխանեց, որ չգիտե, բայց իրեն թվում է, թե գիշերն արագ է անցնում: Ինքը պարզապես ուզում էր մի փոքր ավելի երկար նստած մնալ եւ աննկատելիորեն մնաց մինչեւ հաջորդ օրը: Հետեւաբար, նրա արթնանալու ժամանակը նույնպես տեղաշարժվել էր: Մի օր, երբ Լեյ Լեն աշխատանքից վերադարձավ, Վեն Սյաոնուանն ատամներն էր մաքրում: Նա ամուսնուն ժպտաց

փրփուրոտ բերանով եւ ասաց, որ ճիշտ ժամանակին է վերադարձել, կարող են միասին նախաճաշել: Լեյ Լեն ծուռ ժպտաց եւ պատասխանեց՝ արդյոք շատ բան չի՞ վերցրել իր վրա՝ ամուսնանալով լուսնային աստվածուհու հետ, որի մտքերը բացարձակապես խորհրդավոր են ու ոչ երկրային:

Նա հիշեց այն օրը, երբ կեսօրին իրեն զանգել էր խիստ անհանգիստ Լուլուն: Իրենք այդքան էլ մտերիմ չէին, պարզապես իրար նոր տարվա շնորհավորանքներ էին ուղարկում: Եթե Լուլուն Վեն Սյաոնուանի ընկերուհին չլիներ, նա եւ Լեյ Լեն ուղղակի նույն ինստիտուտի դասընկերներ կլինեին, ոչ ավելին:

-Եղբայր, կարո՞ղ ես ասել որտեղ է Վենը: Նրա բջջայինն անջատված է,- հարցրեց Լուլուն անմիջապես:

-Քնած է:

-Տանդ հեռախոսի համարն ասա:

-Տան հեռախոս չունենք:

-Իսկ ինչպե՞ս կապվեմ նրա հետ:

-Երեւի միայն այն դեպքում, երբ դռան զանգի կոճակը շատ երկար սեղմած պահես,- դառն քմծիծաղեց Լեյ Լեն:

Ակնհայտ էր, որ ցերեկն անհնար էր Սյաոնուանին գտնել: Ամբողջ օրը քնելով եւ գիշերն արթուն մնալով՝ նա արդեն ցերեկվա լույսից խուսափող մի ուրվական էր դարձել:

-Վամպի՞ր է, ինչ է: Ինչպե՞ս ես դիմանում: Ուրեմն դու է՞լ չես կարողանում հետը կապվել:

-Հա, ոչ ոք չի կարողանում: Ամբողջ օրը քնում է, միայն շաբաթ-կիրակի օրերին է մի քիչ շուտ վեր կենում, որովհետեւ ես տանն եմ: Մնացած օրերին տանը միշտ մենակ է, դրա համար էլ անընդհատ քնում է:

-Դե լավ: Ասելու լավ նորություն կար, իսկ նա չի պատասխանում:

Լուլուն ուզում էր ընկերուհուն առաջարկել, որ նա մասնակցի ձայնագրման: Նրանց աշխատակցուհին աշխատանքից ազատվել էր, եւ Լուլուն մտածել էր, որ աշխատանքի տեղավորվելու լավ հնարավորություն է Վեն Սյաոնուանի համար: Բայց ժամանակ չկար: Նա պետք է հենց այդ օրը գնար ստուդիա՝փորձնական ձայնագրման համար: Լուլուն եւ Լեյ Լեն երկուսն էլ աշխատանքի էին, եւ չկար մեկը, որ ամենապարզ ձեւով արթնացներ Վեն Սյաոնուանին՝ պարզապես դուռը երկար թակելով: Եթե ոչ ոք չէր կարող մտնել նրա երազի մեջ եւ արթնացնել նրան, ուրեմն բոլորի համար նա անհասանելի էր: Նա վաղուց բացակայում էր ցերեկվա իրական աշխարհից:

Ճաշից հետո Լեյ Լեն տեսավ, որ Վեն Սյաոնուանի նկարը առկայծում է MSN համացանցային ծրագրում, բայց քսանչորսժամյա ժամանակային շրջանով արդեն ժամը 16-ն էր: Եթե անգամ Վեն Սյաոնուանը դուրս էր եկել տնից առանց լվացվելու եւ շպարվելու, ապա արեւելյան արվարձանից մինչեւ Լուլուի աշխատավայրը՝ հեռուստաընկերություն հասած կլիներ միայն երեկոյան վեցին: Նա որոշեց հույս կապել հրաշքի հետ եւ զանգեց Լուլուին: Գուցե դեռ հնարավորություն կար:

-Բայց դուք երկուսով ի՞նչ հրաշալի եք: Նայիր ժամացույցին: Արդեն վաղուց գտել են փոխարինող: Աշխատանք քիչ կա, դիմողները շատ են, իսկ Վենը քնած է, ի՞նչ ասեմ: Ուզում էի օգնել նրան աշխատանք գտնել, որպեսզի կարողանայիք հյուրասենյակի նորոգման համար փող ունենալ, բայց այս անգամ չստացվեց...

Լուլուի խոսքերն անսպասելիորեն վիրավորեցին Լեյ Լեի արժանապատվությունը: Հիշեց, որ Սյաոնուանն ավելի լավ էր սովորում, քան Լուլուն: Մի անգամ ինքն առաջարկեց երկուսին էլ վերցնել ձայնագրման ստուդիա, բայց լսելուց հետո Վեն Սյաոնուանին ընտրեցին, իսկ Լուլուին մերժեցին: Վեն Սյաոնուանը դրանից հետո վատ էր զգում: Նա վախենում էր, որ Լուլուն կտխրի, եւ դա կարող է ազդել իրենց ընկերական հարաբերությունների վրա: Բայց անցածն անցած է: Լուլուն այսօր ոչ միայն կայացել է իր մասնագիտության մեջ, այլ նաեւ հասարակության մեջ գտել է իր տեղը, իսկ Վեն Սյաոնուանը փակված է տանը: Նրանք արդեն տարբեր աշխարհների են պատկանում: Երիտասարդ գործազուրկ տնային տնտեսուհու եւ հաջողակ հեռուստահաղորդավարուհու միջեւ այժմ անհաղթահարելի անդունդ գոյություն ունի: Ցավոք, նրանք ընդամենը նախկին դասընկերուհիներ էին:

Լեյ Լեն կարծում էր, թե Սյաոնուանը գոնե կտխրի եղածի համար, բայց երբ նրան հաղորդագրություն ուղարկեց, տեսավ, որ հանգիստ էր եւ անխռով: Վեն Սյաոնուանն ասաց, որ չէր էլ կարծում, թե աշխատանք կգտնի, եւ որ ցերեկը քնած է եղել: Ասաց, որ երազում ինչ-որ մեկն ուզում էր իրեն սովորեցնել տորթ թխել, բայց ինքը նախ պետք է սոխ կտրտեր: Լեյ Լեն մռայլվեց, բերանը ծռմռեց եւ չկարողացավ զայրույթը զսպել: Տորթ թխել, սոխ կտրտել... Ուշքումիտքը միայն ուտելիքն է եւ խոհանոցը, նույնիսկ երազում դա է տեսնում: Այդ լավ հնարավորությունը բաց թողնելուց հետո էլ ինչպես հարկն է չի արձագանքում, այլ անտարբեր շաղակրատում է ինչ-որ տորթի ու սոխի մասին:

-Սրա մասին ի՞նչ ես մտածում:

Վեն Սյաոնուանի հաղորդագրության մեջ համացանցային հղում երեւաց: Լեյ Լեին դա չէր հետաքրքրում, բայցեւայնպես իմիջիայլոց բացեց հղումը: Դա գլխարկով մի զգեստ էր, շափյուղագույն, անհավասար սփռված կարմիր կետերով: Գինը 36 յուան էր:

-Լավն է: Գնիր, եթե դուր է գալիս:

Լեյ Լեն ըստ էության կարգին չնայեց էլ: Այդ ճչացող գույներն ու արտառոց ձեւերը նյարդայնացնում էին նրան: Պատկերացրեց, թե Վեյ Սյաոնուանն ինչպես է նստած համակարգչի դիմաց՝ չսանրված, անլվա դեմքով, եւ էկրանին է նայում:

-Չեմ գնելու: Պարզապես նայում եմ:

-Եղավ:

Լեյ Լեն չգիտեր, թե ուրիշ ինչ պատասխանի: Կնոջ ուշադրությունը սեւեռված էր համացանցին՝ ճչացող գույներով հագուստներ, կատվի խնամքի մասին հրապարակումներ, ամերիկյան էժանագին ֆիլմեր: Այս ամենը գրավում էր Վեն Սյաոնուանի ազատ ժամանակը, ավելի ճիշտ՝ արթուն եղած ժամերը: Ինքն ստիպված էր հաշտվել դրա հետ: Կինը միաժամանակ եւ՛ ձանձրանում էր, եւ՛ ուրախ էր: Եվ նա չէր ուզում խաթարել այդ ուրախությունը: Նույնիսկ կասկածում էր՝ կկարողանա՞ արդյոք դա անել: Կա՞ր արդյոք իր համար փոքրիկ մի տարածք նրա աշխարհում:

-Գնում եմ ձայնագրման: Լավ եղիր, նայիր քեզ:

Լեյ Լեն հավաքեց բառերի այս շարքը եւ բթացած հայացքով նայեց համակարգչին: Իրականում նա այդ պահին գործ չուներ անելու:

-Լեյ Լե, չմոռանաս, որ վաղն ընթրիքի եք հրավիրված, սպասում եմ քեզ եւ Սյաոնուանին,- այսպիսի մի հաղորդագրություն ուղարկեց Ֆեն Յույը:

Ֆեն Յույը նստած էր պատի այն կողմում, կից խցիկում, բայց ալարում էր վեր կենալ ու բան ասել, դրա համար էլ հաղորդագրություն ուղարկեց: Նա Լեյ Լեին հիշեցրեց վաղվա պայմանավորվածության մասին:

-Շատ լավ:

Վեն Սյաոնուանի՝ չղջիկի թեւեր ունեցող զգեստի տեսքից դեռ ուշքի չեկած՝ Լեյ Լեն կորցրել էր Ֆեն Յույի հետ խոսելու ցանկությունն անգամ: Նույնիսկ տհաճ մի զգացողություն ունեցավ, թե Սյաոնուանն ամենայն հավանականությամբ հազարումի պատճառ կբերի, որպեսզի խուսափի այդ հանդիպումից: Նա ավելի ու ավելի դժկամորեն էր ուզում տնից դուրս գալ:

Ընկերության բոլոր աշխատակիցները երիտասարդներ էին, եւ, ինչպես բոլոր աշխատավայրերում, հակասություններն անխուսափելի էին,

բայց ընդհանուր առմամբ բարեկամական մթնոլորտ էր տիրում: Հաճախ էր պատահում, որ միասին ընթրում էին՝ հրավիրելով նաեւ ընտանիքների անդամներին: Առաջ Վեն Սյաոնունը հաճույքով էր ընդունում հրավերները, երբեմն ինքն էր հարցնում, թե նոր հանդիպում չի՞ լինելու: Բայց որքան երկար էր մնում տանը, այնքան քիչ էր հետաքրքրվում դրսի աշխարհով: Նույնիսկ ծուլանում էր հյուրասենյակ գնալ, եթե ինչ-որ բան կարելի էր անել ննջարանում: Առանց հիմնավոր ու ծանրակշիռ պատճառի շատ դժվար էր նրան համոզել փողոց դուրս գալ:

Ինչպես եւ սպասելի էր, երբ երեկոյան Լեյ Լեն նրան ասաց հաջորդ օրվա ընթրիքի հրավերի մասին, Վեն Սյաոնուանը դժկամորեն կծկվեց նստած տեղում եւ փորձեց հնարավոր պատրվակներ գտնել հրաժարվելու համար: Գիտեր՝ Լեյ Լեն ուզում է, որ ինքը գնա, բայց չէր ուզում այդ ամբողջ ճանապարհը մենակ անցնել ավտոբուսով՝ հանդիպելու համար նրան: Չէր ուզում երկար ճանապարհ կտրել հենց միայն նրա համար, որպեսզի ընտանիքի անդամի կարգավիճակում ընթրեր այն մարդկանց հետ, որոնց ընդհանրապես չէր էլ ճանաչում:

-Կարո՞ղ եմ չգալ:

-Իհարկե:

Վեն Սյաոնուանը դեռ չէր հասցրել հրաժարվելու պատճառ հորինել, երբ Լեյ Լեն անմիջապես համաձայնեց: Նա հանկարծ իրեն անհույս ու տխուր զգաց: «Դու թագուհի չես,-մտածեց:- Ինչո՞ւ պիտի խնդրեմ, որ ինձ հետ ընթրես: Եթե չես ուզում գալ, մի՛ գա: Ինքդ ես որոշողը»:

-Բավականին անկեղծ պատասխան էր, սիրելիս:

-Ուզում եմ մի քիչ փող ծախսել քեզ վրա,- ասաց Լեյ Լեն՝ որոշելով բարի հայրիկի դերը խաղալ:- Չե՞ս ուզում ինչ-որ բան սովորել: Թե չէ այդպես տանը միշտ նստած... վատ կլինի քեզ համար:

-Խուսափո՞ւմ ես ինձնից: Ձանձրացե՞լ ես:

Վեն Սյաոնուանը երեխայի դերում էր: Արտաքին նեղացածության տակ հրճվանք էր թաքնված:

-Ես պարզապես վախենում եմ, որ դու կձանձրանաս ու կհոգնես:

-Չեմ ձանձրանում: Ինձ շատ լավ եմ զգում: Եվ այդ ամենը քո շնորհիվ: Այնքան հանգիստ եմ ինձ զգում, որ չեմ ուզում այլեւս որեւէ բանով զբաղվել:

-Բայց դու իրոք պետք է մտնես հասարակության մեջ, այլապես կվերածվես քո երկու տարիքն ունեցող ծեր տատիկի: Հետո կզղջաս, որ քեզ փակի տակ եմ պահել:

-Թե ինչ կլինի հետո, այդ մասին հետո էլ կմտածենք:

-Լավ մտածիր: Ի՞նչ ես ուզում սովորել: Մի խմբակ ընտրիր եւ նոր հետաքրքրություն կգտնես: Սարսափում եմ, երբ ամեն օր տեսնում եմ քեզ «Տաոբաոյի» էջերում այդ հիմար հագուստներին նայելիս:

-Կմտածեմ:

Վեն Սյաոնուանը նայեց ամբարտավան մի հայացքով, ասես տհաճությամբ համաձայնել էր ընդունել իրենից ստորադաս մեկի առաջարկը:

Լեյ Լեն միշտ մտածել էր, որ նրա ձեւական պահվածքն ու կոտրատվելը խիստ գրավիչ են, բայց հիմա աստիճանաբար սկսել էր զգալիորեն հոգնել այդ ամենից: Եթե նա ձեւականորեն գրավիչ լիներ, դա դեռ ոչինչ, բայց նա իրոք գրավիչ էր, այնքան գրավիչ, որ դա չէր համապատասխանում նրա տարիքին, եւ դա ամբողջովին ուժասպառ էր արել Լեյ Լեին:

Հաջորդ օրը երեկոյան Լեյ Լեն մենակ գնաց ընթրիքի: Թարսի պես՝ Վեյ Սյաոնուանը միակն էր, որ չէր եկել: Բոլորը եկել էին իրենց ընկեր-ընկերուհիներով, ընտանեկան զույգերով: Միայն նա էր, ամուսնացած, արդեն գիրացող տղամարդ, մենակ նստած խմբի մեջ:

-Ո՞ւր է քո գեղեցիկ կեսը: Ինչո՞ւ չի եկել: Հո նորից կատուներդ չե՞ն հիվանդացել,- սրտացավորեն հետաքրքրվեց Ֆեն Յույի ընկերուհին:

-Նա ինքը լավ չէր զգում,- ասաց Լեյ Լեն, որ կարծես ասեղների վրա նստած լիներ: Լեյ Լեն արդեն զղջում էր, որ այդքան հեշտ տեղի տվեց Սյաոնուանի համառ քմահաճույքին: Պետք է ուղղակի ասած լիներ, որ նրա ներկայությունը կարեւոր է իր համար:

-Գեղեցկությունը թաքնվում է իր ոսկե պալատում: Կինդ չի աշխատում, ամբողջ օրը տանն է, դեռ մի բան էլ հիվանդանում է:

Ֆեն Յույի ընկերուհու պերճախոսությունն ստիպեց Լեյ Լեին էլ ավելի անհարմար զգալ:

-Զուգադիպություն է: Ճիշտն ասած՝ ուզում էր գալ: Բայց ես որոշեցի, որ ավելի լավ է իրեն նեղություն չտա այդքան երկար ճանապարհ անցնելով եւ տանը հանգստանա:

Լեյ Լեն փորձեց անտարբեր ձեւանալով հարթել իրավիճակը, բայց սրտի խորքում զայրացավ Վեն Սյաոնուանի վրա: «Անցած անգամ պատճառ բռնեցիր, որ Մեյմեյին բժշկի ես տանելու, կարծես թափառական կատուն արքայադուստր է: Եթե անգամ իսկապես հիվանդ էր, ի՞նչ տարբերություն՝ մեկ օր շո՞ւտ տանեիր բժշկի, թե՞ մեկ օր ուշ: Ամբողջ օրը տանն ես, տնային տնտեսուհի, կարող էիր, չէ՞, գոնե երբեմն ամուսնուդ հետ մարդա-

մեջ դուրս գալ, շփվել մարդկանց հետ: Թե՞ կարծում ես այդ չնորոգված, կոշտուկոպիտ սվաղով բնակարանը քեզ համար ուտոպիական մի դրախտ է երկրի վրա եւ ազատության ու մենության անխորտակ մի ամրոց»:

Իսկ այդ ժամանակ Վեն Սյաոնուանն իր լիակատար հանգիստն էր վայելում: Լեյ Լեն տանը չէ, ուրեմն ընթրիք չի պատրաստի: Մի քիչ սոյայի կաթ, մի երկու բլիթ, մի աման լոբի, եւ ահա քեզ ընթրիք: Հարմարվելով համակարգչի բազկաթոռին եւ սոյայի կաթ խմելով՝ սկսեց դիտել «Մեծ պայթյունի տեսությունը» սերիալի չորրորդ սերիան: Լեյ Լեն տանը չէր, ուրեմն կարող էր ոտքերի ծայրին չքայլել եւ ականջակալներ չդնել: Նա չգիտեր, որ ամուսինն այդ ժամանակ մտքում դատապարտում է իր բազմաթիվ ու բազմազան թերությունները՝ գիշերը չի քնում, ցերեկը չի արթնանում, չի աշխատում, չի սովորում, անուշադիր է դիմացինի կարծիքի ու զգացմունքների հանդեպ եւ անտարբեր է մարդկանց տրամադրությունների նկատմամբ: Ըստ էության՝ նա ամենեւին չափահաս չէր: Նա ետընթաց էր ապրում, ետ էր գնում դեպի մանկություն:

6

Վիճաբանությունն սկսվեց այն ժամանակ, երբ Լեյ Լեն պարզեց, որ իր բանկային քարտից 2 500 յուանի ծախս է կատարվել: Դա եղել էր ցերեկը, երբ, սովորության համաձայն, Վեն Սյաոնուանը երազների աշխարհում պետք է լիներ: Բայց Լեյ Լեն հեռախոսի վրա հաղորդագրություն ստացավ: Գումարը չնչին մի բան չէր, այլ բավականին մեծ էր: Քարտը Վեն Սյաոնուանի ձեռքին էր, քանի որ սկզբում նա քուն չէր մտնում ցերեկը եւ ծախսեր էր կատարում: Լեյ Լեն ուզում էր զանգել եւ հարցնել՝ արդյո՞ք դա խելքի մոտ բան է: Եթե գումար է ծախսվել, ուրեմն կինն արթուն է: Բայց մտածեց, որ իրենց ամուսնանալուց հետո Սյաոնուանն արդեն սովորած պետք է լիներ ընտանեկան բյուջեն խնայել, եւ ինքը նրա հանդեպ չպիտի շատ խիստ լինի: Սակայն դա իր վաստակած գումարն էր, եւ ինքը պետք է իմանար, թե ինչի վրա է ծախսվել: Նա զսպեց իր հետաքրքրասիրությունը եւ որոշեց աշխատանքից տուն վերադառնալուց հետո պարզել ամեն բան: Սակայն, ո՛վ զարմանք, Վեն Սյաոնուանը տանը չէր: Ցնակյաց տանտիրուհին դուրս էր եկել եւ ընթրիքի ժամին դեռ չէր վերադարձել: Լեյ Լեն արդեն սովոր էր գալ տուն, տաք ապուր ուտել, տաք թեյ խմել: Եվ հիմա զայրացած նայում էր սառը կաթսային ու սալօջախին, ու դա այնքան անսովոր էր: Արդեն

մտածում էր զանգել, երբ լսեց բանալու չխկոցը դռան փականի մեջ:

-Ներիր, սիրելիս, չգիտեի, որ երեկոյան ճանապարհներն այդքան դժվարանցանելի են: Ամենուր խցանումներ էին:

Վեն Սյաոնուանն ուղիղ խոհանոց գնաց՝ ձեռքին բողկ եւ բրոկկոլի կաղամբ: Քանի որ հյուրասենյակի հատակի լինոլեումը լրիվ մաշվել ու շարքից դուրս էր եկել, մաքրության մասին մտածելն ավելորդ էր, եւ Վեն Սյաոնուանը, որ կոշիկ փոխելու ժամանակ էլ չուներ, առանց կոշիկները հանելու, բարձր կրունկների վրա, անցավ շեֆ խոհարարի իր լիազորություններն իրականացնելուն:

-Կուշտը սովածին մանր է բրդում: Իհարկե, չես իմանա, որ այս ժամերին փողոցներում խցանումներ են: Ասեղ գցելու տեղ չկա: Մետրոյում խցանում չկա, բայց քեզ կարող են լուսանկարի նման սեղմել տափակեցնել: Աշխատանքի ամբողջ ծանրությունը ոչ թե աշխատավայրում է, այլ գնալ-գալու ճանապարհին:

Լեյ Լեն զայրացած էր, որ գործազուրկ կինն այդ մասին պատկերացում իսկ չունի, բայց փոխարենը գոհ էր խոհանոցում նրա աշխուժությունից:

-Ինչո՞ւ էիր դուրս եկել: Ի՞նչ էիր անում: Այս ժամին տուն գալով՝ բանվորների խառնաշփոթ խմբի՞ն էիր միացել:

-Քո խորհրդին էի հետեւում, որ մտահորիզոնս ընդլայնեմ, շարունակեմ կատարելագործվել: Որ խուսափեմ հասարակության հետ կապս կորցնելուց եւ Ձերդ գերազանցության ու իմ միջեւ անընդհատ խորացող անդունդ չստեղծեմ:

-Ուրեմն գնումներ անելով հասարակության հե՞տ էիր շփվում:

-Այսօր Լուլուի ազատ օրն էր: Դե, ես էլ գրանցվեցի խմբակում, հետո միասին գնումների դուրս եկանք:

Երբ Լեյ Լեն լսեց «գրանցվեցի խմբակում» բառերը, աչքերը փայլեցին: Չէր կարող հավատալ, որ իր անուղղակի հորդորներն ի վերջո ազդել են Վեն Սյաոնուանի գիտակցության վրա: Վերջինս անսպասելիորեն արթնացել էր:

-Ուզում էի իմանալ, թե քարտիցս այդ ի՞նչ գումար էր հանվել: Հիմա տեսնում եմ՝ կինս պատրաստվում է իր մարտկոցները լիցքավորել:

-Հա: Նույնիսկ սկզբում նախնական պարապմունքի մասնակցեցի, որ տեսնեմ, թե ինչի վրա եմ գումար ծախսելու: Ինչպես ասում են՝ նախ համտես արա, հետո գնիր:

-Այս ի՜նչ խնայող կին ունեմ:

Լեյ Լեն մոտեցավ եւ ետեւից գրկեց նրան:

-Սպասիր սովորեմ վերջացնեմ, քեզ համար հապալասի տորթ էլ կթխեմ:

Վեն Սյաոնուանը հուզվել էր Լեյ Լեի քնքշանքից եւ դադարեցրեց բրոկկոլին կտրտելը:

-Ինչ ասացի՞ր:

Լեյ Լեն հանկարծ զգաց, որ ինչ-որ բան այն չէ եւ ամուր սեղմեց Սյաոնուանի ուսերը:

-Ասացի՝ սովորելն ավարտեմ՝ կկարողանամ տորթ թխել: Երբ ժամանակը գա, քեզ համար հապալասի տորթ էլ կթխեմ, քո սիրածը:

Վեն Սյաոնուանը ծիծաղում էր, ասես ոչինչ չէր եղել:

-Ի՞նչ խմբակում ես գրանցվե՞լ:

-Իհարկե՛ թխվածքներ պատրաստելու:

-Դու 2 500 յուան ես ծախսել, որ տորթ պատրաստե՞լ սովորես: Համոզվա՞ծ ես, որ կատակ չես անում:

Լեյ Լեի վզի երակները պրկվեցին սխտորի երկու կոթունի նման:

-Դե հա, գրանցվել եմ արեւմտյան անուշեղենի դասընթացների համար: Դու չէի՞ր ուզում, որ տնից դուրս գամ: Ես, ախր, սկզբում չէի ուզում:

Վեն Սյաոնուանն սկսեց կամաց ու անվրդով կտրել բողկը:

-Դու այնքան հոգատար ես իմ հանդեպ:

-Խելքդ թռցրե՞լ ես, ի՞նչ է: Ռադիոհաղորդումների բաժինն ավարտածների համարյա հարյուր տոկոսն աշխատանք է գտնում, բայց դու ավարտելուց հետո մի կարգին աշխատանք էլ չունեցար: Ես վախենում էի, որ տանը երկար փակված մնալով, լրիվ անօգուտ մի բան կդառնաս, դրա համար էլ առաջարկեցի, որ գնաս, օգտակար մի բան սովորես: Բայց դու խելքդ քամուն ես տվել եւ որոշել ես տորթ թխել սովորել: 2 500-ն իմ կես ամսվա աշխատավարձն է, տան ամենամսյա վարձավճարի չափն է, իսկ դու առանց խղճի խայթի տվել ես թխվածք թխել սովորելու համար: Էլ սովորելուդ իմաստը ո՞րն է: Թե՞ քեզ իսկապես կարգին խոհարար ես կարծում: Նայիր մեր տանը: Բետոնե հատակ, հնամաշ բազմոց... Ոնց որ շինհրապարակ լինի, ոչ թե տուն: Միայն խոհանոցը, սալօջախը, ամանեղենը եւ սոյայի կաթ պատրաստելու մեքենան են ամբողջական կազմով՝ ոնց որ փոքրիկ ռեստորանում, դեռ մի բան էլ ավելի: Իրո՞ք մտածում ես, որ եթե կուշտ ուտում ենք եւ տաք հագնվում, ուրեմն ամեն ինչ լավ է: Եվ հանգիստ ու հարմարավետ ես քեզ զգում, հա՞: Ամեն օր մի նոր բան ես հնարում, տարբեր անհեթեթություններ: Մտածում էի, թե անելու բան չունես, դրա համար էլ քեզ չէի խանգարում: Բայց հիմա մոլեռանդ ես դարձել, եւ դրա վերջը չկա: Խելագարվե՞լ ես: Դու...

Լեյ Լեն պարզապես չէր կարողանում հույզերը զսպել: Նույնիսկ Վեն Սյաոնուանի աչքերում արցունք տեսնելուց հետո էլ սիրտը չփափկեց: Այդ պահին մտածում էր, որ նա անհեթեթ է, ոչինչ չի հասկանում, ոչ մի բանի համար պիտանի չէ: Միայն իրեն տարօրինակ պահել ու մեկ էլ արցունք թափել գիտի:

-Բայց դու ասում էիր, որ հոգ ես տանում իմ մասին: Ուզում էիր, որ նոր հետաքրքրություններ գտնեմ: Ահա թե ով եմ ես: Պայքարելու կամք չունեմ: Ցանկություն ու ձգտում չունեմ: Ծույլ եմ: Ավելի շուտ քաղցած կմնամ, քան դուրս կգամ ուտելիք փնտրելու: Երբ ամուսնացանք, հենց այդպիսին էի: Միշտ եմ այդպիսին եղել: Ինչո՞ւ ես զայրանում:

Վեն Սյաոնուանն էլ սկսեց զայրանալ, նույնիսկ ոտքը բարձրացրեց, որ խփի Լեյ Լեին եւ կրունկով զարկեց նրա ոտնաթաթին: Կարծր կրունկի հարվածը Լեյ Լեին ստիպեց ցավից դեմքը ծամածռել: Թվաց՝ այդ ամենը զառանցանք է: Այս դաժան ու անպատկառ կինը, որ խոստովանեց, թե ավելի շուտ քաղցած կմնա, քան ուտելիք փնտրելու համար աշխատանքի դուրս կգա, իր սերն է եղել երկար տարիներ, որին ինքը տուն է բերել եւ շարունակում է սիրել: Անամոթաբար թոշակառուի կյանք է վարում, երբ ընդամենը քսանն անց է, ինքնագոհ ապրում է արտառոց, գրեթե սյուրռեալիստական ձեւով եւ արդարացնում է իր երազանման գոյությունը: Ինքն ասել էր, որ դուրս գա եւ մի բան սովորի, իսկ նա խելագարի պես գրանցվել էր թխվածք պատրաստելու խմբակում: Ինքը մի քիչ կշտամբեց նրան, իսկ նա կատաղած՝ ոտքով հարվածեց իրեն:

-Ես դուրս եմ գնում:

Նայեց նրա՝ արցունքից աղավաղված դեմքին եւ դուրս եկավ:

Ճենքի մոտակա խորոված ծանոցում գարեջուր եւ քյաբաբ պատվիրեց: Տխուր սեղան-աթոռի ֆոնին ինքն էլ տխուր ու ձախողակ մարդու տպավորություն էր թողնում: Եվ դա իրականությունից շատ չէր տարբերվում: Նա իրոք տխուր էր եւ կոտրված: Ամեն ինչ այնքան սովորական էր, բացի կնոջից, եւ կինը նյարդայնացնում էր նրան: Չէր ուզում մնալ դրսում, այսպես մտամոլոր, բայց վախենում էր տուն գնալ: Դա Վեն Սյաոնուանի տունն էր: Ամբողջ ժամանակ նա այդտեղ էր՝ այդ խառնաշփոթի ու թշվառության մեջ եւ դրանից չէր էլ հոգնում ու ձանձրանում: Մինչդեռ ինքը... Ինքը պարզապես պատասխանատու էր առավոտյան վաղ արթնանալու եւ երեկոյան ուշ վերադառնալու համար, տան եղածի համար, իսկ իրավունքները չնչին էին: Նա սիրում էր Սյաոնուանին, բայց չէր կարողանում վերահսկել ձանձրույթի այդ ահավոր ու ճնշող զգացումը: Վեն Սյաոնուանի պատրաստա-

կամությունը՝ ցանկացած իրավիճակում իրեն հարմարավետ զգալ, ուղղակի ճնշող էր: Լեյ Լեն մտածում էր, որ ինքն ու իր կյանքն արդեն նախանշված ուղղությամբ էին գնում: Այդպես էլ կծերանա ու կմեռնի՝ կիսանորոգված, անավարտ բնակարանում, այս անհավակնոտ, որեւէ ծգտում չունեցող կնոջ հետ, մի քանի թափառական կատուների գրկած: Այդ պահին Վեն Սյաոնուանից հաղորդագրություն եկավ. «Ետ արի, էլ վերջ: Ետ արի: Ես քեզ համար ծվածեղ կանեմ»:

Վեն Սյաոնուանի հաղորդագրությունը հենց ժամանակին հայտնվեց: Նա չէր կարողանում երկար նեղանալ, եւ նրա զայրույթն անցնում էր մի քանի բառ ասելուց հետո: 2 500 յուան էր ծախսել, որպեսզի գրանցվեր մտավոր հետամնաց ծախողակների համար նախատեսված խմբակում, եւ կարծում էր, թե ծվածեղով կարող է Լեյ Լեի զայրույթը փարատել:

Դեռ զայրույթից լրիվ չազատված՝ Լեյ Լեն բացեց բնակարանի դուռը: Նա չէր կարող ստիպել իրեն՝ ներողամիտ լինել Վեն Սյաոնուանի անխոհեմության հանդեպ: Բայց աղոտ կերպով գիտակցում էր, որ նրան այլեւս օգնել չի լինի: Եվ հետագա ջանքերը նույնն են լինելու, ինչ կովի համար երաժշտություն հնչեցնելը կամ խոզի առջեւ մարգարիտ լցնելը: Լաքը թափված սեղանիկի վրա մի ափսե բրոկկոլի էր դրված եւ մի ափսե ծվածեղ: Վեն Սյաոնուանն անշարժ նստած էր համակարգչի դիմաց: Կատուներն անվրդով իրենց կերն էին ուտում: Ամեն բան եւ բոլորն իրենց տեղում էին, բացի Լեյ Լեից, որ պետք է մահճակալին պառկած լիներ: Ճիշտ ու ճիշտ նախորդ օրերի կրկնությունն էր: Լեյ Լեն անխոս մտավ վերմակի տակ: Նայեց կնոջ կռացած թիկունքին, եւ աչքերը հանկարծ խոնավացան: Չգիտեր՝ խմիչքի ազդեցությունի՞ց էր, թե՞ պայծառ լույսից: Ուրիշ պատճառ չէր կարող լինել: Այդ ուրվագիծն ու կերպարանքը մահճակալի մոտ էր տարիներ շարունակ, մինչդեռ թվում էր, թե ընդամենը մեկ օր է անցել: Վաղուց արդեն դա սովորություն էր դարձել: Իսկ ինչո՞ւ չէին կարող արցունքներն էլ սովորություն դառնալ:

7

Կռվելուց հետո երկուսն էլ մի քանի օր խռով մնացին: Լեյ Լեն, ինչպես միշտ, գործի էր գնում-գալիս, իսկ Վեն Սյաոնուանը լվացք էր անում եւ խոհանոցում եփութափով զբաղվում: Միայն ավելի քիչ էին խոսում: Վեն Սյաոնուանն սկսեց խմբակ հաճախել երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ

օրերին՝ երեկոյան, թխվածք պատրաստելու այդ անիծյալ խմբակը: Ամեն օր Լեյ Լեն կշտամբում էր նրան: Վեն Սյաոնուանը փորձեց հրաժարվել գրանցումից եւ փողերը ետ ստանալ, բայց նրան ասացին, որ ամբողջ գումարը չի կարող ստանալ: Միայն եթե հարգելի պատճառով չի կարողանում գնալ, ապա կփոխհատուցեն 70 տոկոսը: Վեն Սյաոնուանը վճռեց, որ իմաստ չունի հենց այնպես կորցնել 30 տոկոս գումարը, եւ ստիպված էր ատամները սեղմած սովորել արեւմտյան անուշեղեն պատրաստելու հմտությունները՝ Լեյ Լեի զգոն ու սեւեռուն հայացքի ներքո: Սկզբում պարզ բաղադրատոմսով բաներ էին սովորում պատրաստել՝ յուղաբլիթ ու նման բաներ, որ Վեն Սյաոնուանն ինքն էլ էր փորձել պատրաստել: Նա որոշեց մի քիչ խնայողություն անել եւ սպասել, մինչեւ կսկսեն նրբաճաշակ բաներ պատրաստել: Ա՛յ, այդ ժամանակ Լեյ Լեի համար մի ընտիր գլուխգործոց տորթ կթխի: Երբ իր խոհարարական ընդունակությունները կօգնեն իրեն վերականգնելու կորցրած վստահությունը, եւ իրենք կկարողանան ընթրիքին պարբերաբար սեղանին ունենալ նրբաճաշակ ուտեստներ, Լեյ Լեն եւ՛ կուշտ կլինի, եւ՛ գոհ:

Երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին Լեյ Լեն արդեն ժամանակին չէր ընթրում: Ստիպված էր սպասել, մինչեւ Վեն Սյաոնուանն ավարտի խմբակի պարապմունքները, տուն գա, որպեսզի ուշացած նստեն ընթրիքի: Սովորաբար նա Լեյ Լեից մի փոքր շուտ էր վերադառնում: Քանի տարի է՝ ինքնուրույն ոչինչ չէր պատրաստում եւ Սյաոնուանի պատրաստածն էր ուտում միշտ: Հիշեց, որ Սյաոնուանի ավարտելուց առաջ այդ իրոք խառնափնթոր բնակարանում ինքն էր գոգնոց կապած ինչ-որ բան պատրաստում, իսկ նա կանգնում էր կողքին եւ նայում: Նա նույնիսկ մակարոն չէր կարողանում եփել եւ միշտ հարցնում էր՝ կաթսայի մեջ սկզբում ջո՞ւրը լցնի, թե՞ մակարոնը: Սա հիշելով՝ հանկարծ մտածեց. «Չես կարող ասել, թե ընդհանրապես չի աճել»: Առնվազն խոհանոցում աճել է, հասունացել: Նրա շնորհիվ, ի վերջո, որքան էլ ինքն անտրամադիր լիներ, գոնե միշտ կուշտ էր: Դրա համար էլ, երբ Վեն Սյաոնուանը տուն եկավ՝ բերելով գազարի տորթ, Լեյ Լեն չմոռացավ նրա այտը կսմթել մինչեւ տորթը խժռելը: Եվ դա ոչ թե կոպտության արտահայտություն էր, այլ բարեկամական ժեստ: Սովորաբար, երբ նրանց երկուսի միջեւ փոքրիկ մի անախորժություն էր լինում, նրանց միշտ հարկավոր էր մի կարճ ժամանակահատված՝ սառույցը կոտրելու համար: Լիովին հաշտեցման համար, գրկախառնվելուց, համբուրվելուց եւ նմանատիպ այլ արարքներից բացի, նաեւ կսմթում եւ շոյում էին միմյանց:

-Ի՞նչ ես կարծում, կարո՞ղ եմ այսպիսի տորթ բերել շաբաթ օրը քո դասընկերների հետ հանդիպմանը,- ոգեւորված հարցրեց Վեն Սյաոնուանը:

-Ինչպե՞ս ես իմացել հանդիպման մասին: Ես դեռ ժամանակ չեմ ունեցել քեզ ասելու:

Լեյ Լեն քիչ էր մնում խեղդվի, տորթը բկին կանգնեց: Զարմացավ, թե որտեղի՞ց էր Վեն Սյաոնուանն այդքան լավ տեղեկացված: Շաբաթվա վերջին փոքրիկ մի հավաքույթ էր լինելու: Լեյ Լեի համակուրսեցի ընկերներից մեկը վերադարձել էր՝ արտասահմանում ասպիրանտուրան ավարտելուց հետո: Մի քանի հոգով կազմակերպել էին, որպեսզի հանդիպեն: Լեյ Լեն որոշել էր գնալ: Բացի արտասահմանում սովորած ընկերոջից, նա վաղուց չէր տեսել նաեւ մի քանի այլ ընկերների: Սակայն, թարսի պես, որոշեցին այդ հանդիպումը համատեղել Շա Սյուետինի նոր տունը շնորհավորելու միջոցառման հետ: Իսկ Շա Սյուետինն այլ ոք չէր. նա Լեյ Լեի ընկերուհին էր եղել առաջին կուրսում: Թեեւ նրանց անցյալում անախորժ որեւէ բան չէր եղել, բայց ավելի լավ էր հիշողությունները փայփայել, քան նորից հանդիպել: Անկեղծ ասած, Լեյ Լեի համար անախորժ ոչինչ չկար, նա պարզապես չէր ուզում հանդիպել Շա Սյուետինի հետ:

Գրեթե տասը տարի էր անցել այն ժամանակից, երբ Լեյ Լեն եւ Շա Սյուետինը հանդիպում էին: Սկզբում Լեյ Լեն անտարբեր չէր նրա հանդեպ, հետո նրանք խաղաղ բաժանվեցին: Նրանք հանդիպեցին մեկ տարուց էլ քիչ ժամանակ: Երկու տարուց ավելի էր, ինչ չէին հանդիպում, երբ Վեն Սյաոնուանն ընդունվեց ինստիտուտ: Բաժանվելիս իրար խոստացան, որ կմնան բարեկամներ, բայց հետագայում, առանց ավելորդ խոսքերի, հասկացան որ իրար հետ ընդհանուր ոչինչ չունեն: Լեյ Լեն չէր հիշում, թե դրանից հետո ինստիտուտում երբեւէ խոսել է Շա Սյուետինի հետ: Ասես խուսափում էին իրարից եւ հանդիպելիս էլ ձեւացնում էին, թե չեն ճանաչում մեկմեկու:

Լեյ Լեն ինքն էր առաջարկել, որ բաժանվեն: Չէր կարողանում տանել Շա Սյուետինի անբնական հավակնոտությունը: Նա ասես մի տեսակ խնամքով ձուլված տեսք ունենար, եւ որքան շատ էր նրան ճանաչում, այնքան ավելի էր ուզում հեռու մնալ նրանից: Օրինակ՝ տանել չէր կարողանում, երբ նա տարվա ամենաշոգ եղանակին սեւ զուգագուլպաներ էր հագնում: Եվ բաց ոտքերով ուսանողուհիների ներկայությամբ սիրում էր ի ցույց դնել իր ոչ այնքան նիհար ոտքերը, ասես ամեն րոպե պատրաստ էր կարմիր մարտագորգին հայտնվել: Լեյ Լեն նյարդայնանում էր, երբ նա նշում էր, ասենք, իրենց ծանոթության «վեց ու կես շաբաթը» կամ «նվեր

ստանալու 99-րդ օրը» եւ նմանատիպ բաներ: Տանել չէր կարողանում, երբ նա, մոդայիկ ամսագրերը ձեռքին, հարցնում էր, թե ինչպիսին է իր սանրվածքը կամ վզի մանյակը: Երջանկության մասին նրա պատկերացումը սահմանափակվում էր նյութական բարիքների հանդեպ անհագ ծգտմամբ: Նա միայն գեղեցիկ լուսանկարներով մոդայիկ հանդեսներ էր նայում, սիրում էր այդ թեմաներով հոդվածներից հիշողությամբ ինչ-որ հատվածներ մեջբերել եւ քննարկել դրանք ուրիշների հետ: Միայն այդպիսի հանդեսներ էր սիրում նայել, չէր կարդում այն գրքերը, որ նկարներ չունեն: Նրա հետաքրքրությունների շրջանակը սահմանափակվում էր ուտելիքով, երեկոյան զգեստներով, պայուսակներով եւ նմանատիպ այլ դատարկ բաներով: Ծա Սյուետինը խորապես համոզված էր, որ կինը պետք է նրբագեղ եւ ռոմանտիկ լինի: Մինչդեռ Լեյ Լեն երբեք չէր մտածել նման կարեւոր հարցերի մասին, եւ գիտեր, որ չի կարող նրա համար մշտապես նրբագեղություն եւ ռոմանտիզմ ապահովել: Լեյ Լեն նրան նմանեցնում էր գեղեցիկ նորոգված, զարդարված ու կահավորված բնակարանի. երբ նայում ես, չափազանց գրավիչ տեսք ունի, բայց երբ տեղափոխվում ես, հանկարծ գիտակցում ես, որ այդտեղ ապրելն ամենեւին հարմար չէ:

Լեյ Լեն զգում էր, որ Ծա Սյուետինը նույնպես հակված էր բաժանվելու: Նա լաց եղավ, ճիշտ է, բայց միայն այն գիտակցումից, որ անզոր է փոխելու լքվածի իր կարգավիճակը: Նրան ցավ էր պատճառում ոչ թե իրենց բաժանման իրողությունը, այլ միայն այն, որ ի՛նքը չէր եղել դրա նախաձեռնողը, ի՛նքը չէր հաղթականորեն հայտարարել այդ մասին: Իմանալով, որ նա գործարարի հետ է ամուսնացել, Լեյ Լեն մտածեց, որ բազմազան ու ճոխ կյանքի մասին այդ աղջկա երազանքներն ամենայն հավանականությամբ կարող են առանց մեծ ջանքերի իրականանալ: Մի քանի տարի չէին հանդիպել, բայց Լեյ Լեին ամենեւին չէր հետաքրքրում նրա այժմյան կյանքը:

-Այսօր համացանցով նամակագրություն ունեցա իմ դասընկերուհի Վենցզիի հետ: Ասաց այդ մասին: Ասաց նաեւ, որ ընտանիքի անդամներով են լինելու եւ խնդրեց, որ ես էլ ներկա լինեմ:

Ինստիտուտային դասընկերներ ունենալու առավելությունն այն է, որ միշտ հաղորդակցման շրջանակ ես ունենում: Վատն այն է, որ այդ շրջանակը փոքր է:

-Բայց գնա՞նք որ...

Լեյ Լեն մի քիչ վարանեց:

-Ի՞նչ: Չե՞ս ուզում: Դու ի՞նչ է, սիրտ չունե՞ս: Ընկերդ արտասահմանից

վերադառնում է, իսկ դու չես էլ ուզում նրան տեսնե՞լ: Իսկ քո նախկին ընկերուհին նոր տուն տեղափոխվելն է նշում, նրան է՞լ չես ուզում շնորհավորել:

Վեն Սյաոնուանը գիտեր Լեյ Լեի եւ Ծա Սյուետինի անցյալի մասին: Նա երբեք ոչինչ չէր հարցնում նրանց հարաբերությունների մասին, բայց երբեմն չէր կարողանում իրեն զսպել եւ չծիծաղել Ծա Սյուետինի՝ սեւ զուգագուլպաներով հաստ ոտքերի վրա: Լեյ Լեն գիտեր, որ նա անտարբեր չէր: Պարզապես նրա բնավորությունն ու մոտեցման ձեւն էին այդպիսին: Վեն Սյաոնուանն իրեն չվերաբերող բաներին չէր խառնվում:

-Դու գնո՞ւմ ես:

Լեյ Լեն չէր ուզում, որ Սյաոնուանն իր հետ գնա: Մտածում էր, որ Սյաոնուանի եւ Ծա Սյուետինի ներկայությունը համակուրսեցիների ուշադրության կենտրոնում կլինի: Ծա Սյուետինի ագրեսիվ պահվածքը եւ Սյաոնուանի համարձակ անկեղծությունը կարող էին անկանխատեսելի հետեւանքներ ունենալ: Կնոջ մասին մտածելով՝ չէր ուզում, որ նա անպաշտպան վիճակում հայտնվի, եւ ուզում էր խուսափել ավելորդ հոգս ու խնդիրներից:

-Չե՞ս ուզում, որ գնամ:

-Գնա:

Լեյ Լեն մի պահ մտածեց եւ որոշեց չբացահայտել իր մտավախությունները: Այսպիսի դեպքերում նույնիսկ լավ նկատառումները կարող են որպես պատրվակ ներկայանալ: Ինչպես ասում են՝ թուղթը չի կարող հանգցնել կրակը, եթե անգամ շատ ես ցանկանում:

-Ի՞նչ կասես, եթե այսպիսի տորթ թխեմ:

Վեն Սյաոնուանն ուշադրություն չէր դարձնում նրա վարանումին: Ուշքումիտքը դեռ տորթն էր:

-Իհարկե:

Շաբաթ առավոտյան Վեն Սյաոնուանը, սովորության համաձայն, հույսը դրել էր զարթուցիչի վրա եւ ներքին մի պայքար էր մղում, որպեսզի մինչեւ կեսօր արթնանա: Միայն ի սեր ամուսնու, որպեսզի նրան ճանապարհ դնի, նա իր կնոջական պարտականությունն էր համարում՝ հաղթահարել իր կենսաբանական ժամացույցի պարտադրանքը, ըստ որի պետք է արթնանար կեսօրից հետո: Սովորաբար շաբաթ-կիրակի օրերին Լեյ Լեն ինքն էլ ուշ էր արթնանում՝ մի քիչ անձնատուր լինելով ազատ օրերի հանգիստը վայելելուն:

Ատամները մաքրելուց հետո Սյաոնուանն անցավ գազարի տորթ

պատրաստելուն: Երբ ծու էր հարում, մտածեց, որ էլեկտրական հարիչն ընդամենը մի քանի տասնյակ յուանով է թանկ մեխանիկականից:

-Ի՞նչ ես հագնելու, սիրելիս,- ծեւացնելով, թե ուշադիր է կնոջ հանդեպ, հարցրեց Լեյ Լեն՝ տեսնելով, որ նա չի էլ մտածում իրեն կարգի բերելու մասին:

-Այն, ինչ հագել եմ:

Վեն Սյաոնուանը, կիսաբաց աչքերով, ալյուրն էր խառնում: Նրա հագին տարիներ առաջ գնած ջինսն էր: Լեյ Լեն նույնիսկ կասկածով նայեց, թե արդյո՞ք այն նույն ջինսը չէ, որ Սյաոնուանը հագել էր այն ժամանակ, երբ գետնանաուշի յուղից թունավորվեց ու հիվանդանոց ընկավ: Ջինսի հետ նա հագել էր մարզական կարճաթեւ վերնաշապիկ, որի վրա Միքի Մաուսի գունաթափ պատկերն էր:

-Անկախ նրանից, թե բնականում որքան գեղեցիկ ես, չես կարող միշտ անլվա ու չսանրված լինել: Բարեբախտաբար, դասընկերներիցդ ավելի երիտասարդ ես եւ պետք է շատ ավելի երիտասարդ ու գեղեցիկ երեւաս, քան մեր խմբի աղջիկները: Նրանք այսօր շատ սիրուն ու մոդայիկ շորերով կլինեն, այնպես որ՝ չպետք է շատ անփույթ լինես:

Լեյ Լեն հիշեց, որ Սյաոնուանը միշտ սիրում էր լավ հագնվել եւ գեղեցիկ երեւալ: Սովորելու տարիներին նա իր մոտ եղած գրեթե ամբողջ գումարը ծախսում էր հագուստի վրա: Հիշեց, որ նույնիսկ մի զույգ կոշիկի համար ամբողջ մի ամիս նա ճաշարանի ամենաէժան կերակուրներով էր սնվում:

-Բայց ի՞նչ փառամոլն ես: Լավ, կփոխվեմ: Չեմ ուզում մեր սիրելի դասընկերոջը՝ եղբայր Լեյ Լեին ամոթով թողնել:

Լեյ Լեն բացեց Սյաոնուանի զգեստապահարանը: Եվ հանկարծ տխրությամբ համակվեց: Մի քանի սովորական մարզական վերնաշապիկ, մի երկու ճմռթված տաբատ, էլի ինչ-որ շորումոր... Ուզեց կնոջ համար գեղեցիկ մի զգեստ ընտրել, բայց ոչ մի կարգին բան չկար:

-Սա՞ է ունեցածդ: Ուրիշ բան չկա՞,- ձայն տվեց խոհանոցի կողմը:

-Ո՞ւր եմ գնում, որ... Գիշերազգեստն էլ է հերիք:

-Բա ինչո՞ւ էիր համացանցի այդ փալաս-փուլուսը ցույց տալիս:

-Դրանք նայելու համար էին: Նայելու համար փող չեն վճարում:

Վեն Սյաոնուանի ձեռքերն ալյուրոտ էին: Դեմքին՝ սեփական իրավացիության խորամանկ արտահայտություն էր, կարծես թե մի քանի տասնյակ յուան արժեցող այդ տարօրինակ հագուստներին նայելը մի մեծ առավելություն էր:

-Եթե քեզ դուր էին գալիս, պետք է գնեիր: Դրանք թանկ չէին: Մենք էլ այդքան աղքատ չենք, որ քեզ համար շոր գնելու փող չունենանք:

-Մի՛ նեղվիր այդ դատարկ բաներից:

-Իսկ ի՞նչ ես հագնելու:

-Նայիր այդտեղ ներքեւում, տես՝ մաշկագույն մարգաշապիկ չկա՞: Մայրս է ինձ համար գնել անցյալ տարի, ծննդյանս օրը, ասում են՝ լավ էլ թանկ է:

-Ի՞նչ է նշանակում մաշկագույն:

-Դե, մարմնագույն: Հագնում ես, բայց ասես մերկ լինես, մարմնիդ գույնի է: Դե լավ, դու չես հասկանում: Ես ինքս կգտնեմ:

Վեն Սյաոնուանը ձեռքերը լվաց եւ պահարանից հանեց բաց վարդագույն մի վերնաշապիկ: Ըստ երեւույթին բաց վարդագույնին այլեւս բաց վարդագույն չէին անվանում, այլ մաշկագույն: Հագնելով այդ մաշկագույն վերնաշապիկը՝ Վեն Սյաոնուանը ժպտաց պայծառ ժպիտով: Լեյ Լեն շտապեց հավանություն տալ՝ հաճոյախոսելով, ապա լուռ նայեցին իրար: Երբ նոր էին սիրահարվել, Լեյ Լեն նորից ու նորից խոստանում էր, որ ուշադիր կլինի նրա հանդեպ: Ասում էր, որ նրան աշխարհի ամենալավ բանը կտա, կբավարարի նրա պահանջները եւ հազարումի տեղ կտանի: Խոստանում էր «դառնալ գարնան Աստված եւ այնպես անել, որ նա բացվի դեղձենու ծաղիկների հետ» *(բանաստեղծ եւ ապստամբ Հուան Չաոյի (820-884) բանաստեղծության տողերը- Ծ. Թ.):* Բայց հիմա իր կինը միայն մի հասարակ զգեստապահարան ուներ եւ չէր կարողանում գոնե մի չճմռթված զգեստ գտնել հագնելու համար:

8

Ծա Սյուետինն ապրում էր շքեղ ամառանոցում: Թեեւ ոչ ոք չգիտեր դրա իսկական գինը, բայց Լեյ Լեն կարող էր կռահել, որ 4-րդ օղակաձեւ ճանապարհից ներս գտնվող տարածքում այդ տեսակ առանձնատներն ամբողջ մի կարողություն արժեին: Շենքի ներսը ձեւավորված էր դասական եվրոպական ոճով: Ճոխությունն աչք էր շլացնում: Կահույքը բնական նյութերից էր պատրաստված՝ բարձրորակ կաշվից եւ փայտից: Ծաղկազարդ, ալիքաձեւ նախշեր ու ծալքեր... Չէր կարելի չնկատել, թե ինչ մեծ աշխատանք է կատարվել: Այդպիսի նրբաճաշակ ու նրբագեղ զարդարված կառույցը չէր էլ կարելի տուն անվանել: Ենթագիտակցորեն կա՛մ պիտի ցանկանայիր պաշտպանել այդ ամենը, կա՛մ քանդել: Կա՛մ չպիտի խառնեիր ոչինչ եւ փորձեիր պահպանել նախնական նրբագեղ տեսքը, կա՛մ ամեն

ինչ քանդուքարափ անեիր, ճիլտեիր կոկիկ բարձերը եւ թրմփալով նստեիր բազմոցի վրա: Հսկայական ջահը, պատին ամրացված գեղեցիկ որմնալամպերը... մի խոսքով, այստեղ շատ լույսի կարիք կար, քանի որ երեկոյան այդքան մեծ տարածքում մեկ լուսատուն չէր կարող խավարը ցրել: Սենյակում մի աննկարագրելի բուրմունք էր տարածվել: Այդ բուրմունքը թափանցեց մինչեւ Լեյ Լեի թոքերը: Լեյ Լեն հիշեց Ճա Սյուետինից եկող բույրը՝ կեղծ, անբնական, բայց ծանր ու հանդիսավոր, անհարկի անուշաբույր: Ճա Սյուետինն ուսերին շալ էր գցել եւ անբնական ու ձիգ նստել տանտիրուհու աթոռին: Փառահեղ տեսք ուներ, ինչպես դպրոցի ուսմասվարը: Լեյ Լեն իրեն մի տեսակ կաշկանդված զգաց, ասես հեռուստադրամայի տեսարան էր նկարահանվում: Ծուրջն այնքան լուռ էր, որ լսում էր սեփական շնչառության ձայնը: Տեսավ, թե ինչպես Սյաոնուանը տորթը նրան մեկնեց: Ճա Սյուետինը պարզապես նայեց դրան եւ հայացքով կարգադրեց սպասուհուն, որ վերցնի: Բայց Սյաոնուանը դրանից ամենեւին չնեղվեց, իսկ Ճա Սյուետինն ավելի փքուն ու խստաբարո երեւաց: Կարծես երրորդական կարգի մի դերասանուհի լիներ, որ դերն էր փորձում:

Հյուրասենյակում դասընկեր տղամարդկանցով խոսում էին կյանքի տարբեր հոգսերից ու դժվարություններից: Տրտնջում էին, որ գներն աճում են, իսկ աշխատավարձը շատ քիչ է ավելանում: Այդ ընթացքում Ճա Սյուետինն ուղեվարի դեր էր ստանձնել եւ դասընկերուհիների համար էքսկուրսիա էր անցկացնում իր տիրույթներում: Երբ հասան զգեստասենյակին, կանանցից մի քանիսը հիացմունքի բացականչություններ արձակեցին. «Սա վե՛րջն է: Գրեթե մեր հյուրասենյակի չափ մե՛ծ է»:

Լեյ Լեն փոքր-ինչ մտքերով էր ընկել: Չգիտեր, թե Վեն Սյաոնուանի վրա ինչպիսի տպավորություն կգործեն Ճա Սյուետինի ճոխ զգեստապահարանները: Արդյոք նա թաքուն հոգոց չի՞ հանի եւ չի՞ տխրի իրեն բաժին ընկած բախտի համար: Հիշեց, թե ինչպես առաջին կուրսում Ճա Սյուետինը, բեմին կանգնած, արտասանելիս մոռացավ բանաստեղծության տողերը: Ձեւացրեց, թե հանգիստ է եւ երկու անգամ ասաց. «Ծաղիկները նույնն են ամեն տարի, բայց մարդիկ տարեցտարի փոխվում են» *(չին բանաստեղծ Լյու Սի-ի (մոտ 651-680?) բանաստեղծության տողերն են - Ծ. Թ.):* Այլեւս ոչինչ չհիշելով՝ տխուր լռեց:

Թեեւ տարիներն անցել էին, բայց Ճա Սյուետինը չէր փոխվել: Սարտական հրամանատարի նույն արժանապատիվ կեցվածքը, նույն փառահեղ կեղծավորությունը, խոսելու՝ երաժշտական նույն տոնը... Այդ ամենը մարդկանց ստիպում էր հորանջել, եթե անգամ հենց նոր էին արթնացել:

Մի քանի տարի համակուրսեցիներն իրար չէին տեսել, բայց Ծա Սյուետինը նույնն էր մնացել: Նա վստահ ու հաստատուն քայլերով գնում էր դեպի իր նպատակը: Երազել էր հարուստ լինել եւ հարուստ էր դարձել: Եվ դա անսովոր մի բան չէր: Ամեն բան հնարավոր էր, պարզապես պետք էր հաստատակամ լինել: Լեյ Լեն հանկարծ հիացախառն հարգանքի մի զգացում ունեցավ նրա հանդեպ: Գուցե նա երբեք էլ չէր ձեւացրել: Գուցե միշտ եղել էր այն, ինչ կար: Ինքը հիասթափված էր նրանից, երբ բաժանվեցին: Բայց նրան սխալ էր հասկացել: Նրա արարքները համարել էր կեղծ ու անբնական, բայց իրականում որոշ մարդիկ հենց այդպիսին էին ծնվել: Ծա Սյուետինի ԴՆԹ-ն եւ բջիջները կանխորոշել էին նրա անցյալը, ներկան ու ապագան, եւ նա շարունակելու էր տաղտկալի լինել, ճիշտ այսպիսին: Այս միօրինակ միապաղաղությունը նրա մեծագույն ճշմարտությունն էր:

Ուտեստները բերեցին հինգաստղանի ռեստորանից՝ մատուցելով ոսկեզօծ եզրաշերտերով ափսեների մեջ: Սեղանին ժանեկազարդ սփռոց էր գցված: Ծա Սյուետինը, կծկելով իր հիասքանչ, բալանման շուրթերը, բոլորին հրավիրեց սեղանի մոտ: Աղանդերը, բնականաբար, նույն ռեստորանից էր: Կար նաեւ հապալասի շոռակարկանդակ, որը Լեյ Լեն շատ էր սիրում: Լեյ Լեն նկատեց, որ Սյաոնուանի գազարի տորթը չէր երեւում: Նայեց կնոջ կողմը՝ տեսնելու, թե տրամադրությունը չի՞ գցել արդյոք: Սյաոնուանը կենտրոնացած, հաճույքով տորթ էր ուտում: Եվ հանկարծ շրջվելով Լեյ Լեի կողմը՝ ասաց.

-Ուզում եմ սովորել, թե ինչպես են սա պատրաստում: Շատ համեղ է:

-Դա շատ դժվար է պատրաստել: Մի քանի տեղ հարցրել եմ: Բայց ամենալավն այս ռեստորանում են պատրաստում,- ասաց Ծա Սյուետինը՝ ձայնի մեջ արհամարհական երանգ:

-Քույրիկ, ես տորթ թխել եմ սովորում: Այդ առաջադրանքը կատարելն իմ նպատակը կլինի:

-Տորթ թխելը դժվար գործ է, ես այդքան ուժ չունեմ: Փորձիր այս մեկը, գետնանուշի թխվածքաբլիթ է:

Ծա Սյուետինը մատնացույց արեց ափսեում դրված փոքրիկ քառակուսիների կողմը:

-Շատ համեղ է: Ամենալավը սա են պատրաստում,- ասաց:

-Արդեն կուշտ եմ: Էլ չեմ կարող ուտել:

-Միայն մի կտոր կծիր, մնացածը դիր ափսեիդ մեջ: Բերանիդ մեջ ուղղակի հալվում է: Ես շատ քմահաճ եմ, գիտես, բայց չդիմացա: Սա ուրիշ մի բան է, շատ լավն է:

Ծա Սյուետինը շարունակում էր պնդել:

-Ես գետնանուշ չեմ սիրում:

-Գետնանուշի համն այդքան շատ չի զգացվում: Ծատ օգտակար՝ կարագի համ է գալիս:

-Նա իրոք գետնանուշ չի սիրում: Դու կեր, եթե այդքան շատ ես սիրում,- ասաց Լեյ Լեն:

Լեյ Լեն չէր կարողանում հասկանալ, թե ինչու Սյաոնուանը չասաց, որ գետնանուշից ալերգիա ունի: Ախր, բանն այն չէր, որ չէր սիրում: Մի փոքրիկ կտոր էլ եթե ուտեր, կուռչեր, ինչպես խոճկորը: Կարող էր նույնիսկ գիտակցությունը կորցնել: Ծա Սյուետինի բնավորությունը չէր փոխվել: Նա դեռ սիրում էր մարդկանց պարտադրել:

Լեյ Լեն նայեց զրուցող երկու կանանց, եւ նրան թվաց, թե Ծա Սյուետինը շատ նման է Սյաոնուանի մորաքրոջը: Բարձր մազափունջ, նուրբ դիմահարդարանք եւ շատ հնչեղ ու մի տեսակ գանգատվող ձայն: Կարծես Ծա Սյուետինին եւ այս հոյակապ տունը նույն վարպետ արհեստավորն էր պատրաստել: Տանտիրուհին ասես միաձուլվել էր իր շրջապտում գտնվող ամեն ինչին՝ դառնալով բարձրարժեք, բայց ցածրակարգ, թանկ գին ունեցող, բայց գռեհիկ: Ամենուր զգացվում էր թանկության եւ քաղքենության մի խառնուրդ: Թեեւ Վեն Սյաոնուանն իր ամենաթանկ զգեստն էր հագել, այդուհանդերձ այդ սենյակում նա այնքան էլ շքեղ տեսք չուներ: Բայց դա աղքատության կամ խեղճության դրսեւորում չէր: Դա անբիծ ու մաքուր մի աուրա էր: Պարզ ու հասարակ, մարդկային մի հմայք կար այդտեղ: Ասես գարնան ու երիտասարդության լույս էր ճառագում նրանից: Նա երբեք չէր կարող այս ցոփ տան մաս կազմել: Եվ նրա հոգն էլ չէր: Նրա սիրտը պատկանում էր երկնքին, տիեզերքին, երազների աշխարհին:

-Լսել եմ՝ 5-րդ օղակաձեւ ճանապարհից դուրս եք ապրում, այո՞,- միտումնավոր հարցրեց Ծա Սյուետինը: Լեյ Լեն նկատեց, որ բոլոր հյուրերը մի տեսակ սառան՝ պատառաքաղները ձեռքերին, բայց ձեւացրին, թե ամեն բան կարգին է, թեեւ անկասկած հասկացան տիկին Ծայի թաքուն դիտավորությունը:

-Այո: Եվ դեռ 30 յուան էլ տաքսուն պիտի վճարես՝ տեղ հասնելու համար,- անխռով ձայնով ասաց Վեն Սյաոնուանը:

-Այդքան հեռո՞ւ եք ապրում, իսկ ինչպե՞ս եք հասնում աշխատանքի վայր:

Ծա Սյուետինը չէր դադարում եւ դեռ հարցնում էր՝ միամիտ ձեւանալով:

-Վաղ արթնանում ենք, ուշ պառկում քնելու, աշխատում ենք լուսաբացից մինչեւ մայրամուտ,- գլուխը բարձրացնելով ասաց Վեն Սյաոնուանը: Ասես պարծենում էր հրաշալի կյանքով, եւ մյուսները պիտի նախանձեին:

-Շատ դժվար է,- գլուխը տարուբերելով հոգոց հանեց Ճա Սյուետինը, որ ամեն կերպ ուզում էր սեփական առավելությունը ցուցադրել:

-Փող չկա, բայց մենք դեռ երիտասարդ ենք, պետք է մի քիչ էլ համբերենք: Մի՞թե մարդիկ աշխատանքի չեն գնում Հոնկոնգ եւ ամեն օր սահմանը չեն անցնում, որպեսզի վերադառնան տուն՝ Ծենչ Ժեն: Երբ մտածում եմ այդ մասին, ինձ ավելի հանգիստ եմ զգում,- ասաց Վեն Սյաոնուանը եւ տորթից մի կտոր էլ կծեց:

-Հա՛, հիշեցի. մյուս ամիս գնալու եմ Հոնկոնգ գնումներ կատարելու: Կգա՞ս ինձ հետ,- սիրալիր հարցրեց Ճա Սյուետինը:

-Ի՞նչ: Մենք դեռ չենք ճանաչում իրար: Ինձ համար մի քիչ դժվար կլինի:

Ճա Սյուետինը շինծու ծիծաղեց: Լեյ Լեն նկատեց, որ նրա առջեւի ատամներին հալած շոկոլադ է կպել: Ժպիտի եւ շոկոլադի համադրությունը տարօրինակ ու զվարճալի մի պատկեր էր ստեղծում:

-Քույրիկ, ատամներիդ շոկոլադ է կպել:

Վեն Սյաոնուանի այս խոսքի վրա՝ բոլորը հայացքներն ուղղեցին Ճա Սյուետինի կողմը՝ նայելով նրա ատամներին: Սյաոնուանի խոսքն այնքա՛ն բարեհոգի ու անմեղ հնչեց: Լեյ Լեն չկարողացավ ժպիտը պահել: Նրա կինն արժանի հակահարված էր հասցրել տանտիրուհուն: Եվ դա կարողացել էր անել առանց որեւէ զենք կիրառելու, իր անչար խոսքով: Լեյ Լեն համոզված չէր՝ արդյո՞ք դա կանխամտածված էր, թե՞ ոչ:

Ինստիտուտում Ճա Սյուետինը միշտ դժգոհում էր ուտելիքից: Նույնիսկ ճաշարանում, որտեղ երեք յուանով կարելի էր երկու տեսակի ուտելիք եւ ապուր գնել, նա սիրում էր բողոքել, որ ուտելիքը շատ յուղալի է, իսկ աղը քիչ է: Պատահում էր, որ մասնագետի նման քննադատում էր որեւէ ռեստորանի, թե, ասենք, տավարի միսը միշտ շատ են եփում: Ասում էր, որ դա պրոֆեսիանալ չէ, մինչդեռ ճաշացուցակում հատուկ նշված է, թե ինչքան եփեն: Ճաշացուցակին «մենյու» էր ասում եւ բառն էլ անգլերեն առոգանությամբ էր արտաբերում: «Ահավո՛ր է,-ասում էր:- Պատվիրեցի, որ շատ չեփեն, իսկ նրանք մի բան էլ երկար են եփել: Նույնիսկ մենյուում է գրված: Տանե՛լ չեմ կարող»:

Հինգաստղանի ռեստորանի հինգաստղանի խոհանոցից հինգաստղանի հյուրանոց հիշեցնող այս տուն բերված ուտելիքն, ինչ խոսք, բարձրակարգ էր: Թեեւ ճաշատեսակներն առատ էին ու բազմազան, բայց Լեյ Լեն

դեռ քաղցած էր: Ուտելու ախորժակ չուներ: Պարզապես չէր ուզում ուտել Ծա Սյուետինի սեղանին դրված նրբաճաշակ ու նրբահամ կերակուրը: Նա այդտեղ չէր զգում տանտիրուհու սերը, եւ ուտելիքը թվում էր անդեմ ու չէր կարող հաճույք պատճառել: Ինչպե՞ս կարող էր ուտելիքը մարդկային դեմք ունենալ: Այս ի՞նչ ծիծաղելի, քմահաճ չափանիշ էր: Միգուցե իր բնորոշումը տեղին չէր: Բայց նա մտածում էր Վեն Սյաոնուանի պատրաստածի մասին: Դրանք փորձերի, հաճախ նաեւ ձախողումների ու սխալների արդյունք էին: Երբեմն տգեղ, բայց համեղ, երբեմն գրավիչ, բայց անհամ: Լեյ Լեն անհամբեր սպասում էր, որ այս բարձրակարգ ճաշկերույթը շուտ ավարտվի, իրենք կտրեն անցնեն Պեկինի կեսից ավելին եւ տուն հասնեն՝ վայելելու սովորական ընտանեկան ընթրիքը:

Տունդարձի ճանապարհին երեկոյան թեթեւ քամին խառնում էր Վեն Սյաոնուանի չխնամված մազերը: Լեյ Լեն թաքուն ու խորհրդավոր ժպտում էր: Նրան դուր էին գալիս կնոջ գունատ դեմքը, նիհար կազմվածքը, անփայլ, սեւ մազերը: Հիշեց, թե ինչպես հիվանդանոցում, ալերգիայի նոպայից հետո ուշքի գալով, իրեն ասաց.

-Ուրեմն նախ կդառնամ ձեր ընկերուհին, որպեսզի կամաց պատրաստվեմ:

Հիմա նրանք արդեն մի քանի տարի է՝ ամուսնացած էին...

-Սիրելիս, ի՞նչ ես կարծում, ես կարո՞ղ եմ այդքան համեղ հապալասի տորթ թխել:

Վեն Սյաոնուանն ընդհատեց Լեյ Լեի վերհուշը:

-Դատարկ բան է: Քո պատրաստածը շատ ավելի լավն է:

-Մի՛ հաճոյանա: Դա քո կույր հիացմունքն է:

-Մի բան հարցնե՞մ,- ասաց Լեյ Լեն՝ հանկարծ հիշելով:

-Դե՞...

-Ինչո՞ւ չասացիր, որ գետնանուշից ալերգիա ունես, այլ ասացիր՝ չես սիրում:

-Իսկ ինչո՞ւ պիտի նրան ասեի, որ ալերգիա ունեմ: Ո՞վ է նա: Ինչո՞ւ պետք է բացահայտեմ իմ թույլ կողմերը: Իսկ եթե նա փորձի ինձ սպանե՞լ գետնանուշով:

Վեն Սյաոնուանը ձեռքով օդի մեջ կտրուկ մի շարժում արեց:

-Դու ի՞նչ է, պարանոի՞կ ես:

-Ո՞վ գիտե: Չե՞ս կարծում, որ մի քիչ թշնամաբար էր տրամադրված իմ հանդեպ:

-Զգացի՞ր: Կարծում էի լուռումունջ ես: Փաստորեն լավ էլ դաժան ես: Այսօր կտրուկ պայքար տարար սառը պատերազմում:

-Ես նրան նույնիսկ չեմ ճանաչում, ինչո՞ւ պիտի դաժան լինեի: Բացի այդ, տեսա՞ր ինչքան ցուցադրական էր ու իր մասին բարձր կարծիք ուներ: Տանն էլ այդ հիմար շալն էր գցել: Ախր, դրա եղանակը չէ, այնքան տաք է: Մենք հո խարույկի մոտ չէի՞նք հավաքվել: Ակնհայտ է, որ մի տեսակ նորմալ չէ: Կամ շատ ուժեղ է, խելագարության չափ ուժեղ: Ինչո՞ւ պետք է կռվեի նրա հետ: Կամ էլ գուցե շատ թույլ մարդ է: Ես չեմ ուզում պայքարել պարտվողի դեմ: Ես կարեկցող եմ: Համ էլ՝ ինչո՞ւ կռվեմ քո նախկին ընկերուհու հետ: Ինչպես ասում են՝ նախորդները ծառն են տնկում, իսկ հաջորդները հանգստանում են ծառի ստվերում: Եթե նա հեռացած չլիներ, մի՞թե ես եկած կլինեի: Ես նրա հետնորդն եմ: Մարդ չպետք է կռվի իր նախորդի հետ, ճի՞շտ է:

Լեյ Լեի հետաքրքրությունը շարժվեց, բայց նաեւ զգաց, որ քաղցած է:

-Սիրելիս, գնանք տուն եւ մի բան ուտենք: Ես դեռ քաղցած եմ:

-Իսկապե՞ս: Որպես տանտիրուհի՝ նա մի բան չէր, բայց ուտելիքն, իրոք, շատ լավն էր: Իմ պատրաստածին անուն ես դնում: Նրանը հինգաստղանի էր, էլի՞ անուն ես դնում:

-Չեմ կարծում, թե այդքան լավն էր: Ձանձրալի ու տխուր էր:

-Դա անառողջ մոտեցում է:

-Եթե մարդը չար ու զզվելի է, ուրեմն այդպիսին է, ի՞նչ արած, բայց համեղ ուտելիքը համեղ ուտելիք է: Պետք չէ այդքան նեղմիտ լինել: Կե՛ր, երբ պետք է ուտես:

-Ինչպես զգացի՝ չպիտի քո գազարի տորթը բերեինք: Երբ տուն հասնեինք, տանը կուտեի:

Լեյ Լեն հիշեց Սյաոնուանի մոռացված տորթը:

-Դե լավ: Թող մնա քույրիկ Ծայի համար: Տեսար, չէ՞, ինչքան քիչ էր ուտում: Երեւի սպասում էր, որ մեր գնալուց հետո վրա պրծնի ու խժռի իմ գազարի տորթը: Պետք է որ անչափ շատակեր լինի, թե չէ ինչո՞ւ է այդքան ծանրաքաշ: Հաստատ եմ ասում՝ թաքուն ուտում է ամեն ինչ:

Մետրոյում ասեղ գցելու տեղ չկար: Այս քաղաքում միշտ այնքա՛ն շատ մարդ կա: Նույնիսկ շաբաթ-կիրակի օրերին ամենուր լեփլեցուն է: Մարդկանց ծովի մեջ Լեյ Լեն բռնեց Վեն Սյաոնուանի ձեռքը, եւ ջերմության մի ալիք հոսեց դեպի իրեն: Վեն Սյաոնուանի ափերը փափուկ էին ու տաք *(հերոսուհու անվան մեջ «վեն» եւ «նուան» գաղափարագրերը չինարեն նշանակում են «ջերմություն» - Ծ. Թ.):*

-Ի՞նչ ես մտածում նրանց տան մասին,- հարցրեց Լեյ Լեն:

-Այնքան մեծ էր, որ մարդ սարսափում էր: Եթե անցածդ ճանապարհին մանր քարեր չլցնես, չես իմանա, թե որ սենյակից ես դուրս եկել: Իսկ ծեւավորումն իրոք որ ճչացող էր:

-Բայց երբ նրա այդքան մեծ տունը տեսա, հանկարծ մի տեսակ մեղավոր զգացի քո առջեւ:

-Եղբայր, որտե՞ղ է քո բանաստեղծական ռոմանտիկան: Նա ունի՞ արդյոք մեր կանաչ դռներից:

Վեն Սյաոնուանը վագոնում ճոճվեց ամբոխի հետ, ապա շարունակեց.

-Բայց նրա զգեստասենյակն իսկապես հոյակապ էր: Դու չտեսար, բայց իսկապես կինոաստղի զգեստապահարաններ էին: Երբ փող ունենանք, ես էլ զգեստասենյակ կունենամ:

-Իսկ եթե փող չունե՞նք,- բազմանշանակ շեշտեց Լեյ Լեն:

-Ուրեմն մոռանանք: Այդքան շոր ու գլխարկ չունենք, որ զգեստասենյակի մասին մտածենք:

Վեն Սյաոնուանի անխռովությունից Լեյ Լեի կոկորդում սեղմող մի գունդ առաջացավ: Ճա Սյուետինը նույնպես տնային տնտեսուհի էր: Նրա ամբողջ անելիքն այն էր, որ գնումներ կատարեր զգեստապահարանները լցնելու համար, սպասուհուն կարգադրեր տունը մաքրել, թղթախաղով զբաղվեր կամ թատրոն գնար: Լեյ Լեն ընդհանրապես պատկերացում չուներ այսպես կոչված բարձրաշխարհիկ, հարուստ ընտանիքի կնոջ ապրելակերպի ու կենսաոճի մասին: Վեն Սյաոնուանը չէր աշխատում, նա չէր սիրում մրցակցությունը եւ տանել չէր կարողանում, երբ մարդու վրա ճնշում էին գործադրում: Նախընտրում էր ստեղծել իր աշխարհը, իր թագավորությունը, որտեղ նաեւ իր կատուներն էին: Մի քանի օր առաջ Լեյ Լեն հիասթափված էր, թե որքան անհուսալիորեն անուղղելի է նա: Այսօր հանկարծ զղջումի պես մի բան էր զգում: Թեեւ Սյաոնուանը տարբեր էր, նման չէր մյուս աղջիկներին, լավ կյանքի մասին նրա պատկերացումները եւ՛ ավելի բարդ էին, եւ՛ ավելի պարզ: Բայց որպես ամուսին՝ ինքը պարտավոր էր առնվազն նորոգված ննջասենյակով ապահովել նրան, հետո նոր բողոքներ ու մեղադրեր՝ օրերն անիմաստ վատնելու համար: Գուցե մի քանի օր հետո նորից կվրդովվեր նրա թխվածքի խմբակի դասընթացների պատճառով, կամ էլ կփորձեր համոզել, որ աշխատանք կամ օգտակար մի գործ գտնի: Իսկ գուցե կզայրանար՝ տեսնելով համակարգչի դիմաց նրա կռացած թիկունքը: Բայց այսօր ասես այդ թիկունքին տեսնում էր նրա կիսաթափանցիկ թեւերը: Տեսնում էր նրա հոգին՝ թեթեւ եւ ազատ: Զգում էր,

որ նա թռչում է: Շատ տարիներ առաջ, երբ սիրահետում էր նրան, նա արդեն այսպիսին էր: Եվ հիմա էլ նույնն էր մնացել: Քանի դեռ չէին փոխվել այս հիմնական հատկանիշները, նա մի անգին գանձ էր:

Երբ մետրոյի կայարանից դուրս եկան, ավտոբուսով երկու կանգառ պետք է անցնեին մինչեւ տուն հասնելը: Լեյ Լեն առաջարկեց ոտքով գնալ: Սյառնուանը լուռ գլխով արեց: Նրանց առջեւ լայն, ուղիղ ճանապարհն էր, որ տանում էր դեպի հեռուն, ասես ձգվում էր դեպի անվերջություն: Մի երկու կիլոմետր անցնելուց հետո կհասնեին կոպիտ սվաղով, կիսանորոգված, անավարտ բնակարանին, որ իրենցն էր, իրենց սեփական տունը:

ՍՈՒ ՑԻՑԻ

ՎԱՋԻՐ, ԼԻ ԼԻՆԻ, ՎԱՋԻՐ

Շատ տարիներ առաջ սիրում էի վազել, երբ քամի էր լինում: Այսօր էլ անջնջելի են այդ հիշողությունն ու իմ ապրած զգացողությունը: Ականջներիս մեջ քամու սուր ձայնն էր, ծառերն իրենց կանաչ ճյուղերն էին տարածում, բայց ես առաջ էի անցնում այդ ճիչերից ու ձայներից: Ճանապարհն ավելի ու ավելի էր նեղանում, մինչեւ որ վերջում վերածվում էր գորգի բարակ մի շերտի, եւ երբ ոտքերս դիպչում էին գորգին, զգում էի դրա փափկությունը:

Բաց դաշտերում կարմիր, վայրի ծաղիկներ էին, որ վազելիս բոցի պես առկայծում էին աչքերիս անկյունում: Լսածս բոլոր ձայներն անորոշ էին, քանի որ քամին շատ արագ պատառոտում էր դրանք՝ ծվենների վերածելով: Ոգեւորվում էի այդ սրընթաց փոփոխվող զգացողությունների պատառիկներից, մարմինս շարունակում էր ճոճվելով առաջ մղվել, իսկ քամին մաքրում, լվանում էր մաշկս: Բոլոր զգացողություններս ծվեն-ծվեն էին լինում անճանաչելիության աստիճան, եւ ամեն ինչ դառնում էր աղոտ ու մշուշապատ: Ամեն ինչ վերածվում էր գույների անորոշ բծերի, որ վերուվարում էին ճանապարհիս բոլոր կողմերում: Սկսում էի քրտնել, բայց հոգնածություն չէի զգում: Դա ինձ ստիպում էր հավատալ, որ նախկին կյանքում թռչուն եմ եղել եւ ունեցել եմ հզոր թեւեր՝ վիթխարի բացվածքով: Եվ իսկապես, երբ վազում էի դեպի նպատակակետս, տեսնում էի թանձր, ճերմակ, ալիքվող ամպերը: Իսկ ամպերի միջից շողում էին լույսի կուրացուցիչ ճառագայթներ: Այդ պահին իմ ամբողջ էությունը ողողվում էր լույսով: Եվ երբ ներսուզվում էի նույն ճերմակ տարածության մեջ, մարմինս տարրալուծվում, միաձուլվում էր այդ ճերմակությանը: Հավանաբար այդ պահին կարող էի անհետանալ: Բայց, իհարկե, դա միայն թվում էր ինձ:

Այժմ, սակայն, նստել էի պատուհանի մոտ՝ ձեռքիս մի զույգ մաքուր, սպիտակ մարգակոշիկ: Դրսում, ինչպես անցյալում, դեռ քամի էր, բայց այն այլեւս իմ մարմնի մի մասը չէր: Ուզում էի գնալ, բայց չէի կարող դուրս ցատկել ու վազել քամու հետ: Հայրս ու մայրս նստած էին պատուհանի տակ եւ քննարկում էին, թե պե՞տք է արդյոք մասնակցեի բուժքույր դառնալու համար նախատեսվող քննությանը:

Արդեն երկար տարիներ չէի հագել այդ մարգակոշիկները: Դրանց վրա մի քանի կարկատան կար, բայց ես կավիճով սպիտակեցրել ու հարթեցրել էի կարկատանները: Հիմա մի թեթեւ շարժումից սպիտակ փոշին թափվեց հատակին, եւ կարկատանների շուրջ երեւացին սեւ ու անհրապույր կարերի տեղերը: Կոշկատակերը շատ բարակ էին, քանի որ դրանցով երկար տարածություններ էի վազելով անցել: Դրանք արդեն նման էին կնոջ, որն այլեւս երեխաներ չի ծնում, արգանդը չորացել է՝ թողնելով միայն որովայնի բարակ մի շերտ: Բարձր կրունկներիս վրա՝ կտկտացնելով հասա դարակին եւ մարգակոշիկները դրեցի այդտեղ: Հայրիկն ու մայրիկը դեռ նույն թեման էին քննարկում: Վերցրի ձեռքիս փոքրիկ պայուսակն ու սենյակից դուրս եկա բակ: Նրանք ծմերուկի սերմ էին չրթում:

-Գործի եմ գնում:

Խոսելիս նկատեցի, որ կոշիկներիս վրա յուղոտ բիծ կա: Ծնողներս ասացին, որ զգույշ լինեմ, եւ ես արագ դուրս եկա:

Հիվանդանոցում հանդիպեցի գործընկերուհուս՝ Յան Հունին: Նա բարձր ձայն ուներ եւ դյուրագրգիռ էր: Մենք երկուսով եւ տղամարդ բժիշկներից մեկը, որ սիրում էր դժգոհել ու նաեւ մի քիչ գոռգոռացող էր, մի խումբ էինք կազմում, որը պատասխանատու էր քսանչորս հիվանդի բուժման համար: Միշտ միասին էինք աշխատել: Բայց այսօր Յան Հունի դեմքը սոսկալի գունատ էր:

-Բա՞ն է պատահել,- հարցրի:

Հանկարծ նրա դեմքը միանգամից կարմրեց: Ինձ ներս քաշեց հիվանդասենյակ եւ հենվեց պատին: Խիստ հուզված էր երեւում:

-Ի՞նչ է եղել:

-Մեծ անախորժության մեջ ենք,- խուճապահար ասաց նա:

Համազգեստս հագնելիս՝ վրայից թափ տվեցի բրնձի հատիկները:

-Լավ, ի՞նչ է պատահել: Ի՞նչ ես խորհրդավոր խոսում:

Նրա շփոթված ու խառնված տեսքից վերջապես հասկացա, թե ինչ էր պատահել: Երբ կեսօրվա ուտելիքի հետ դեղեր էր բաժանելիս եղել, սխալմամբ շիզոֆրենիայի համար նախատեսված դեղը տվել էր ալկոհոլային կախվածություն ունեցող հիվանդին:

-Ի՞նչ ալկոհոլային կախվածություն ունեցող հիվանդ,- հարցրի:

Նա մի հայացք գցեց դեմքիս:

-Յան Չժենյույը: Մի՞թե չգիտես, թե ինչ հիվանդների ենք բուժում:

Ես էլ իմ հերթին նրա դեմքին նայեցի:

- Գրողը տանի: Ինչպե՞ս իմանամ: Հիվանդների համար պատասխանա-

տուն դու չե՞ս, ես էլ գրառումները չե՞մ կատարում:

Քանի որ հիվանդների ներկայությունը չէի կարողանում տանել, երբեք հիվանդասենյակներ չէի այցելում: Ցան Հունը փաստաթղթային աշխատանքները լավ չէր կարողանում կատարել, դրա համար էլ պայմանավորվել էինք, որ նա այցելեր հիվանդասենյակներ, կտրեր նրանց եղունգները, սանրեր մազերը, տրամադրեր առողջապահական տեղեկատվություն եւ նման բաներ: Ես բուժքրոջ գրառումներն էի կատարում: Թեեւ ամեն երեք օրը մեկ գրանցում էի նրանց վիճակը, բայց ըստ էության չէի կարող բոլոր գրառումները համապատասխանեցնել հիվանդների հետ: Ես նույնիսկ չգիտեի մեր բոլոր հիվանդներին: Միայն ընտրում էի մի քանի կարեւոր բան, որոնք Ցան Հունը հայտնում էր իր այցելությունների հետ կապված, եւ նշում էի դրանք:

Նայելով Ցան Հունի զարհուրած դեմքին՝ հանգստացրի նրան:

Հենց որ միջանցք հասանք, տեսա մի խոշորամարմին, խռպոտ ձայնով տղամարդ հիվանդի, որ ձեռքերը տարածած՝ շոշափում էր պատը:

-Նա՞ է:

Ցան Հունը գլխով արեց: Հիվանդն, անկասկած, հալյուցինացիաներ ուներ: Նա պատի վրա ինչ-որ բաներ էր տեսնում, դրա համար էլ շարունակաբար շոշափում էր պատը: Դա զառանցանքի նման մի բան էր: Եթե հալյուցինացիաներ չունեցող մեկին սխալմամբ դրանք կանխարգելող դեղորայք տան, ապա վերջինս հալյուցինացիաներ կունենա: Դեղագործական պատրաստուկներն այդպիսի տարօրինակ նյութեր են. հիվանդը, որ միայն ալկոհոլային կախվածություն ուներ, Ցան Հունի տված երկու հաբով կարող էր վերածվել շիզոֆրենիկի: Չկարողանալով զսպել ինձ՝ սկսեցի ծիծաղել: Ցան Հունը ոտքը զայրացած խփեց հատակին: Դեմքն ամբողջովին վառ կարմիր էր:

-Լի Լինի՛,- մատը պարզելով դեպի դեմքս՝ ֆշշացրեց նա:- Ի՞նչ ես ծիծաղում: Ծիծաղում ես ուրիշների տառապանքների վրա: Դու ինձ չես օգնում: Մի բան մտածիր: Մի՞թե սա քեզ համար կատակ բան է:

Ծիծաղս զսպեցի եւ պատասխանեցի.

-Լավ, լավ: Չեմ ծիծաղի: Այդքան մի՛ բորբոքվիր: Լավ է, որ շաբաթվա վերջ է, եւ միայն երկուսս ենք հերթապահում: Ղեկավարներն այստեղ չեն: Վախենալու բան չկա:

Նա դեղը խմել է, բայց դրանից չի մեռնի: Մի երկու ժամից ամեն ինչ կարգին կլինի, երբ դեղի ազդեցությունն անցնի:

Ցան Հունն ակնհայտորեն դժգոհ էր իմ պատասխանից: Նա զայրույ-

թից ու հուզմունքից ջղածիգ տրորեց ձեռքերը:

-Բայց հենց նոր բժիշկը զանգեց ու ասաց, որ կեսօրից հետո տնօրենը գալիս է այստեղ: Եթե տեսնի նրան այսպես պատերը շոշափելիս, դա մեր վերջը կլինի:

-Արի նրան տանենք հիվանդասենյակ, որպեսզի չկարողանա դուրս գալ: Այդ ժամանակ տնօրենը չի տեսնի,- ասացի:

Յան Հունը տխուր հոգոց հանեց:

-Բայց հիվանդների սենյակները փականներ չունեն: Ո՞վ կարող է վերահսկել նրան: Եթե դուրս գա, տնօրենը չի՞ տեսնի: Ի վերջո, մենք չենք կարող զսպել նրան:

-Ճիշտ ես:

Սկսեցի մտահոգվել: Ալկոհոլային կախվածություն ունեցող հիվանդին անկողնում պառկեցնելու որեւէ պատճառ չկա: Եթե տնօրենը դա տեսներ, ավելի շատ կկասկածեր: Ի՞նչ անել:

Յան Հունն ու ես որոշ ժամանակ ետուառաջ էինք անում միջանցքում: Հանկարծ նա երկու ձեռքով բռնեց ուսերս:

-Գիտեմ, թե ինչ անենք, Լինի: Հանգստաբեր դեղամիջոց կտանք, որպեսզի խաղաղվի: Այդպես գոնե էլ չի թափառի դեսուդեն: Ի՞նչ կարծիքի ես:

Նույնիսկ արձագանքելու ժամանակ չունեցա, մեկ էլ Յան Հունը վազեց բուժասենյակից դեղ բերելու: Ներարկիչի մեջ 2 մլ հանգստաբեր քաշեց եւ ինձ ստիպեց, որ հիվանդին քարշ տամ հիվանդասենյակ: Բաց դեղնավուն հեղուկը զգուշորեն ներարկվեց հիվանդի մարմնի մեջ:

Սկզբում հիվանդը մահճակալին պառկած դիմադրում էր, եւ Յան Հունը գրեթե ծնկել էր նրա վրա: Ես ամուր սեղմեցի դաստակները, եւ նրա գունատ, ճերմակ ափերը լարվեցին, իսկ կապույտ երակները փքվեցին: Մի ձեռքով Յան Հունը բռնեց ասեղը, որ մտցրել էր նրա երակի մեջ, մյուսով արագ սեղմեց ներարկիչի մխոցը: Ձեռքերը կամաց թուլացան, եւ նա պառկեց ճերմակ սավանին, ինչպես չորացած մի տերեւ: Յան Հունը դուրս քաշեց ասեղը, ապա սրսկած տեղը սեղմեց մի կտոր վիրակապով: Հիվանդի թուխ, հսկա մարմինը հանգիստ պառկած էր հիվանդանոցային նեղ մահճակալին: Նա աչքերը փակել էր եւ ոչ մի ձայն չէր հանում:

Սենյակից դուրս եկա, եւ սառցե պաղ ջրով մի քանի անգամ լվացի ձեռքերս: Բուժքույրերի սենյակում, լուսամուտին հենված, սպասում էի, որ ձեռքերս չորանան: Հետո, վեր ձգվելով, ձեռքերս դրեցի լուսամուտի վանդակաճաղերին: Դրանք դրսի աշխարհը բաժանում էին քառակուսի փոք-

րիկ կտորների: Հիվանդանոցի շենքի ներքեւում, գետնին թափված տերեւների մեջ, մի պստլիկ աղջնակ էր կանգնած: Մայրը կոպտորեն խփում էր նրա գլխին: Երեխայի բարձրածայն լացն արձագանքում էր հիվանդանոցի ներսում: Սառը ջուրն իմ բաց մատներից ցած հոսեց թեւքերիցս ներս եւ հավաքվեց կրծքիս վրա: Այնպիսի մի զգացողություն էր, ասես կրծքերիս արանքում սառույցի կարծր կտոր լիներ:

-Նա մեզ անախորժություն չի՞ պատճառի:

Ձայնս հնչեց ժանգոտած զարթուցիչի պես՝ ծանր ու մթագնած:

-Մի՛ անհանգստանա: Չի մեռնի: Մի լավ կքնի, իսկ երբ արթնանա, ամեն ինչ անցած կլինի,- ասաց Ցան Հունը: Նա ձեռքերն էր լվանում եւ պատասխանեց՝ անգամ շուրջը չնայելով:

Օրվա ընթացքում ինձ անհանգիստ էի զգում եւ մի քանի անգամ ներս մտա, որ տեսնեմ՝ հիվանդն արդյո՞ք կյանքի նշաններ է ցուցաբերում: Բարեբախտաբար, վիճակը կայուն էր: Ցան Հունը թփթփացրեց ուսիս եւ ասաց.

-Լինի, մի՛ անհանգստանա:

Լուսամուտից դուրս նայեցի՝ երկնքում ցրված մութ ամպերին: Դրանք սահում էին, փոփոխվում՝ անորոշ եւ չարագույժ տեսք ընդունելով:

-Կարմայական հետեւանքներ կլինե՞ն,- հարցրի հանկարծ:

Ետեւումս կանգնած Ցան Հունը սառը պատասխանեց.

-Մենք միշտ էլ կարմայական վիճակներում ենք եղել: Ամեն մեկն էլ մշտապես ապրում է կարմայական վիճակներ: Վախենալու ոչինչ չկա:

Այս ասելով՝ վճռական մի շարժումով փակեց բուժգրառումների գիրքը, որի մետաղյա ճերմակ կազմը փայլում էր սեղանի վրա:

Մենք միշտ սխալներ էինք թույլ տալիս: Սխալ դեղեր էինք տալիս, սխալ տողեր էինք լրացնում եւ կոտրում ներարկիչներն ու ասեղները: Մի հիվանդը կարող էր եռացրած ջուր լցնել մյուսի դեմքին: Հուսահատված՝ նոր սխալներ էինք անում, որպեսզի հները թաքցնեինք: Բոլոր բուժքույրերը բարոյալքված էին: Բարձր ու զայրալից ձայներով եւ կոպիտ շարժուձեւերով՝ մենք հիվանդասենյակում հիվանդներին էիք կանչում անունով: Ըստ էության, երեք հերթափոխի աշխատողներից ոչ մեկը գիշերը ցերեկից չէր տարբերում: Բոլորն էլ ապավինում էին քնաբեր հաբերին, որպեսզի կարգուկանոն պահպանեն եւ խուսափեն հիվանդների ազդեցության տակ ընկնելուց:

Ծնողներիս մոտ երբեք այդ բաների մասին չէի խոսում: Երեքով նստած էինք ճաշի սեղանի մոտ: Գոլորշապատ, տաք կերակուրը փայլում էր յուղի

մեջ: Տարօրինակ մի հոտ զգացի, տհաճ այն հոտը, որ գալիս է այնպիսի դժբախտ մարդկանց մարմնից, ովքեր չեն կարողանում պատշաճ կերպով հոգալ իրենց մասին: Զգույշ ու խնամքով, հատիկ առ հատիկ, վերցնում էի բրինձը եւ ծամում: Նրանք երկուսով զրուցելու անվերջանալի թեմաներ ունեին: Ճաշի ժամանակ մշտապես մի նոր ծրագիր էին մշակում իմ հետագա կյանքի համար: Կամ պետք է գրանցվեի՝ անգլերենի դասընթացներին մասնակցելու, կամ բուժքույրի աստիճան ստանայի, կամ էլ՝ մի որեւէ պաշտոնի համար վկայական: Եվ կամ ծրագրում էին իմ ամուսնությունը: Ես աչքի պոչով հեռուստացույց էի նայում: Հեռավազքի մրցումներ էին անցկացվում: Վազորդները խնամված, նրբագեղ եղջերուների էին նման: Նրանց ուժեղ մկանները լի էին ռիթմիկ շարժումով, իսկ ճոճվող ուսերն ասես արագ փոփոխվող, կենդանի երաժշտական նոտաներ լինեին՝ վազքուղու ճերմակ գծերի վրա: Համոզված էի, որ եթե հիմա նրանց մեջ լինեի, չեմպիոն կդառնայի: Հենց այդ պահին մի աղջիկ սրընթաց հատեց վերջնագիծը: Մոտակայքում գտնվող հանդիսատեսները ոտքի ելան եւ ծափահարեցին: Հոգնած ցած դրեցի ափսեն եւ վեր կացա:

-Մի քիչ էլ ուտեիր,- հորդորեց մայրս: Գլուխս տարուբերեցի եւ գնացի իմ սենյակ:

Սենյակում բացեցի կողպած դարակս: Այդտեղ, բացի իմ ճերմակ վազքակոշիկներից, դեղնած մի թերթ կար եւ նոթատետրս: Թերթի անկյունները ոլորված էին, իսկ վրայի բառերն արդեն սկսել էին խամրել: Դրա մեջ այն պատվոգրերն էին, որ ստացել էի հեռավազքի դպրոցական մրցումների կամ տարածաշրջանային մրցումների ժամանակ հաղթող ճանաչվելու համար:

«Լի Լինի», «Հեռավազք», «Առաջին տեղ». այս երեք անփոփոխ բառբառակապակցություններն էին պատվոգրերի վրա: Գիտեի, որ կարող եմ հաղթել նաեւ հեռավազքի հանրապետական մրցումների ժամանակ: Եվ դա ընդամենը մեկ պատվոգիր չէր լինի: Չնայած գիտեի, որ դա անպայման տեղի կունենար, այդուհանդերձ շատ հուզված էի եւ ամեն օր վազում էի առանց հոգնածություն զգալու: Վազում էի նույնիսկ երազներիս մեջ, այնքան ժամանակ, մինչեւ որ ծնողներս ինձ ստիպեցին բուժքույրի մասնագիտություն ընտրել: Բայց ես ոչ մի բանում ընդունակ չէի, բացի վազքից: Բացեցի նոթատետրս: Այդտեղ խիտ տողերով նշված էին հիվանդանոցում աշխատած մեկ տարվա ընթացքում գործածս սխալները: Դրանց մեծ մասը ղեկավարները չէին նկատել: Բայց գործընկերներս գիտեին, քանի որ միասին էինք արել դրանք եւ մեկս մյուսիս արածը թաքցնում էինք: Որոշ

սխալներ միայն ինձ էին հայտնի: Չգիտեմ, թե ինչու էի հատ-հատ գրանցում, որովհետեւ դրանցից այդպես էլ ոչինչ չէի սովորում, եւ երբեք էլ մեղքի զգացում չէի ունենում: Կարող եմ ասել միայն, որ դա մի տեսակ սովորություն էր: Եվ հիմա էլ մանրամասն գրի առա այն ամենն, ինչ այսօր էր պատահել՝ սխալ դեղորայք տալը, հանգստաբեր ներարկելը, ստվերի պես ճոճվող հիվանդը: Հետո փակեցի նոթատետրը, կողպեցի դարակը, լույսը հանգցրի եւ գնացի քնելու:

Խմբում գիտեին, որ ամենաարագաշարժ բուժքույրը ես եմ: Արագ հասցնում էի ներարկիչներն ու դեղերը: Վերեւում, ներքեւում, ամենուր իմ ոտնաձայներն էին լսվում: Թե՛ գլխավոր բուժքույրը, թե՛ գործընկերներս գիտեին, որ հարկ չկա այդպես արագ վազելու, քանզի հոգեբուժարանն, ի վերջո, վիրաբուժական կամ վնասվածքաբանական բաժանմունք չէ: Հոգեբուժարաններում նույնիսկ օդն էր ծույլ ու ալարկոտ: Գլխավոր բուժքույրը զգում էր, որ չափազանց շատ եռանդ կա իմ մեջ, դրա համար էլ ինձ հանձնարարեց հիվանդների ֆիզիկական ակտիվությունը խթանող աշխատանքը:

Ճենքի ներքեւում, ֆիզիկական վարժությունների համար նախատեսված ցեմենտե հատակով բակի չորս կողմում, բարձր պատեր էին: Երբ մի բուժքույրը հսկում էր միակ մուտքը, ես հիվանդներին պետք է շարք կանգնեցնեի: Տարածքը կիսով չափ արեւի տակ էր, կիսով չափ ստվերում: Կանգնեցի շարքի առջեւում եւ ուղղորդում էի նրանց: Մեկ պտույտ, երկու կտույտ, հիվանդները շարժվեցին դանդաղ, ծանր քայլերով, եւ շարքն աստիճանաբար քանդվեց: Երրորդ պտույտի ժամանակ նկատեցի, որ հիվանդներից մեկը՝ երկար մազերով աղջիկը, դեռ կողքիս է, վազում է առանց ջանք թափելու, հավասարաչափ շնչառությամբ: Ես չգիտեի նրա անունը, հիվանդներից ոչ մեկի անունը չգիտեի, բայց այդ ինչպե՞ս էր նա կարողանում այդքան հեշտ վազել ինձ հետ հավասար: Ենթագիտակցաբար ավելի արագ սկսեցի վազել: Առանց իմ կողմը նայելու՝ նա էլ սկսեց այնպես վազել, որ ինձնից ետ չէր մնում: Ապշած էի: Խոր շունչ քաշեցի եւ նետվեցի առաջ: Ականջներիս մեջ հնչեց քամու ձայնը, բայց նա շարունակում էր առաջ սլանալ՝ երկար մազերը ծածանելով: Ձեռքերս ճոճվում էին՝ մեծ աղեղներ գծելով: Տեսա, որ դեմքն արդեն շառագունել է: Բայց շարունակում էր վազել իմ աջ կողմում: Ես երբեք չէի տեսել նման հակառակորդի: Այո, ես նրան որպես հակառակորդ մրցակցի էի նայում: Վազքուղու վրա ոչ ոք երբեք չէր կարողացել այդքան մոտ լինել ինձ: Ո՛վ գիտե՝ արդեն

քանի շրջանից հետո դեռ վազում էինք ուս ուսի, բայց թեեւ նրա արագությունը եւ տոկունությունն ապշեցուցիչ էին, չէր կարողանում ինձնից առաջ անցնել: Նրա մարմինը լարվում էր, շնչառությունն ավելի էր արագանում. այդ էին ինձ ասում արդեն ծանրացող ոտնաձայները: Բայց նույնիսկ այդպես՝ չէի կարողանում ազատվել նրանից: Թեեւ հաղթանակը կամ պարտությունն ընդամենը մեկ քայլի վրա էին, ես հասել էի իմ սահմանագծին: Իմ սկզբնական զարմանքը, կասկածամտությունն ու մրցակից լինելու թաքուն մղումը տեղի տվեցին անօգնականության զգացումին, ապա անխռով հանդարտությանը, երբ շարունակում էինք վազել՝ պահպանելով մեր արագությունն ու տեմպը, մինչեւ որ գլխավոր բուժքույրը վերեւի լուսամուտից սուր ձայնով կանչեց.

-Լի Լինի՛, դեռ վազո՞ւմ եք, չե՞ք ավարտել: Ծտապի՛ր, հիվանդներին բեր այստեղ: Նրանց դեղ տալու ժամանակն է:

Մենք միասին կանգ առանք: Հիվանդները նստել էին աստիճաններին եւ մեզ էին նայում: Ես գնահատող հայացքով նայեցի նրան: Նա արագ էր շնչում, օդը չէր բավականացնում: Աչքերը փոքր էին: Մոտավորապես իմ տարիքին կլիներ: Նրա դեմքին նույնպես թեթեւ ժպիտ էր նշմարվում: Ապա հիվանդներին ետ տարա հիվանդասենյակ:

Բուժքույրերի սենյակում գտա նրա մասին տեղեկությունները: Հասարակական անվտանգության աշխատակիցները նախորդ գիշեր էին նրան բերել, որովհետեւ մերկ վազելիս էր եղել փողոցում: Նա չգիտեր իր տարիքը, տան հասցեն, միայն գիտեր, որ ազգանունը Վան է, դրա համար էլ անվան դիմաց միայն նշված էր՝ «Ոմն Վան»: Փակեցի նշումները: Անհայտ ծագման իգական սեռի հիվանդ, որ կարողանում էր այդպես վազել: Խիստ հետաքրքրում էր ինձ, եւ որոշեցի գտնել նրան ու զրուցել հետը:

Երբ Յան Հունը Վանին հիվանդասենյակ բերեց, ես լուսամուտին հենված նրան էի նայում: Հենց ներս մտավ, նստեց մահճակալին: Երկու ձեռքով բռնեց մահճակալի եզրից, իսկ երկու ոտքերն անդադար իրար էր զարկում: Ինձ չէր նայում, այլ հայացքը պտտում էր շուրջբոլորը:

-Անունդ ի՞նչ է:

Գլուխը վեր բարձրացրեց ու նայեց ինձ՝ դեմքին հիմար մի քմծիծաղ:

-Անունս Վան է,- ասաց:

-Վան՝ ի՞նչ:

-Անունս Վան է, անունս Վան է:

Գլուխը կախեց եւ, մատների հետ խաղալով, ինքն իրեն կրկնեց մի քանի անգամ:

-Որտե՞ղ ես ապրում:

Անխոս տարուբերեց գլուխը:

Նկատեցի, որ նրա մաշկի վրա, մարմնի երեւացող մասերին տարբեր խորության շատ վերքեր կային: Վերքերի մի մասն արդեն կեղակալել էր, մյուսները դեռ թարմ էին, կարմիր գույնի:

-Ընտանիք ունե՞ս:

Նա այլեւս գլուխը չբարձրացրեց, միայն նույն ձեւով թափահարում էր այն: Համբերությունս կորցնում էի: Պարզ էր, որ հոգեկան հիվանդ է, որ միտքը խախտված է, եւ որ թափառել էր այսուայնտեղ: Զգացի՝ չի գիտակցում, որ վազելու հազվագյուտ տաղանդ ունի: Ցրված էր ու անտարբեր ամեն ինչի հանդեպ: Քայլեցի դեպի դուռը՝ պատրաստ արագ վերջ տալու խոսքերի մեր այս փոխանակմանը: Հանկարծ Վանը վեր ցատկեց մահճակալից եւ գոռաց.

-Ես հեռավազքի չեմպիոն եմ: Ես ուզում եմ վազե՛լ: Վազե՛լ, վազե՛լ:

Ետ շրջվեցի: Նրա մարմինն ասես խորհրդավոր մի ուժով էր համակվել: Նա ատամներն էր կրճտացնում, աչքերը ոգեւորված փայլում էին, երկու ոտքերն անդադար վազում էին տեղում, իսկ երկու ձեռքերը շարժվում էին անընդհատ: Նման էր մի մարզիկի, որն ամեն պահի կարող էր վազել:

Մոտ վազեցի եւ բռնեցի նրա ուսերից:

-Ինչ ասացի՞ր:

Վանի հայացքը թափանցեց անցավ ուսերիս միջով: Նա աչքերն ուղիղ սեւեռեց իր առջեւ գտնվող ինչ-որ բանի: Մարմինը դեռ շարժվում էր առանց դադարի, ավելի ու ավելի ճոճվելով:

- Ուզում եմ վազել: Վազել, վազել: Ինձ ասացին, որ արագ վազեմ, կանգ չառնեմ: Ես հեռավազքի չեմպիոն եմ: Ոչ ոք չի կարող ավելի արագ վազել: Ուզում եմ վազել:

Խոսելիս բառերը խառնում էր իրար եւ որքան շատ էր խոսում, այնքան ավելի հուզախռով էր դառնում:

-Ո՞վ է ասում, որ վազես: Ի՞նչ հեռավազքի չեմպիոն ես դու: Ո՞ւր ես վազում:

Իմ եւ նրա ձայները խաչաձեւվում, բախվում էին իրար՝ աղմուկ ստեղծելով: Վանը գոռում էր, շարժում ոտքերը: Ես խոչընդոտեցի նրան՝ փակելով ճանապարհը: Նա մարմինն աղեղի պես ճկեց, եւ ուսերը դեմ առան կրծքավանդակիս, մի ոտքն առաջ, մյուսը ետ՝ ուժով հրեց ինձ: Ձայն տվեցի սանիտարներին: Վերջապես նրանք ներս վազեցին եւ կապեցին Վանի ձեռքերն ու ոտքերը, իսկ նա թպրտում էր մահճակալի վրա: Դուրս ելա հի-

վանդասենյակից՝ ձեռքերս կրծքավանդակիս դրած, որ դեռ ցավում էր նրա գործադրած ուժից: Առաջին անգամն էր, որ հիվանդի հետ շփվում էի, եւ այդ շփումն ի վերջո ավարտվեց Վանի սրտակեղեք ճիչերով:

Քնելուց առաջ անկողնում պառկած մտածում էի օրվա դեպքերի մասին: Վանի կերպարանքը լողում էր մտքիս օվկիանոսում: Նրա վազող պատկերն աստիճանաբար թափանցեց իմ մեջ: Նույնիսկ երբ փակեցի աչքերս, պատկերը համառորեն հասավ մինչեւ երազներս: Վազում էինք կողք կողքի՝ անծայրածիր բաց դաշտում, եւ միայն մեր ոտնաձայներն ու սրտի զարկերն էին լսվում խաղաղ, լայնարձակ տարածության մեջ:

Մենք նման էինք իրար հետապնդող երկու ստվերների: Լուսադեմին, երբ երազիցս հետո արթնացա, զգացի, որ ամբողջ մարմինս ցավում է:

Իսկ այս մեկն արդեն երազների աշխարհում չէր: Ցերեկը, նախկինի պես, հիվանդներին տանում էի վազելու: Վերջում մնում էինք Վանն ու ես: Ճրջանաձեւ վազում էինք մարզահրապարակում, նորից ու նորից պտտվելով ծառի շուրջը: Արեւի ճառագայթները տերեւների արանքից ընկնում էին մեզ վրա, խայտացող լույսը կանաչ բծեր էր գցում մեր մարմիններին: Վազելիս՝ գողունի հայացք էի գցում նրա կողմը: Միտքը կենտրոնացած էր, որոնող հայացքն ուղղված էր դեպի հեռուն, ասես ինչ-որ բան կանչում էր, եւ նա կարող էր վազել առանց հոգնելու: Չգիտեմ՝ արդյո՞ք ձայնային հալյուցինացիաներ էր ունենում, բայց ինքս արդեն մի քանի անգամ վազելիս լսել էի, թե ինչպես է քաջալերող ճիչերի միջից հանդարտ մի ձայն ասում՝ «Վազիր, վազիր»: Կանգ չէի առնում, այլ ապավինում էի աչքերիս՝ հայացքով ընդգրկելով շրջակայքս: Ինչպես միշտ, հիվանդներն անիմաստ ծիծաղում էին, երբ աստիճաններին նստած՝ նայում էին մեր վազքին: Վանը եւ ես հասել էինք լուռ մի համաձայնության, որ քսաներորդ պտույտից հետո ես գոչելու էի՝ «Կանգնե՛լ», եւ մեր վազքն ավարտվելու էր: Հիմա նա արդեն մեկ ամիս է, ինչ հիվանդանոցում էր, եւ վազքը խաղ էր դարձել, որ միայն մեր երկուսինն էր:

Բուժքույրերի սենյակում հավաքվել էր ամբողջ անձնակազմը, բայց ամեն բան հանգիստ էր: Պարզ լսվում էր լուսամուտից դուրս հովանոցաձառի ճյուղերին բախվող ուժեղ քամու շառաչը: Տնօրենը խոսում էր զուսպ, հանդարտ դեմքով:

- Բոլորդ տեսե՞լ եք Վանի վիճակը:

-Այո,- աննշան, կամացուկ մի ձայն դուրս թռավ կրծքիցս:

Մահճակալին պառկած Վանի աջ ոտնաթաթն ամբողջովին անարյուն

էր, ասես փտած ծառի կոճղ լիներ: Հատակին ընկած էր կեղտոտ մի գոտի: Նախքան հերթափոխս ավարտելը սանիտարին հանձնարարել էի դրանով կապել Վանի ոտնաթաթը, քանի որ վերջինս խիստ հուզախռով վիճակում սկսել էր վազել հիվանդասենյակում: Բժիշկն էր ինձ հանձնարարել զսպել նրան, ես էլ նրա ասածը սանիտարին էի փոխանցել: Բայց չգիտեի, որ զսպող գոտին այդքան ձիգ եւ ամուր էր կապվել:

Տնօրենը խոսում էր ցածրաձայն:

-Երկու օրից հիվանդների անվտանգությունը վերահսկող հանձնաժողովն այստեղ է գալու: Ստածեք այդ մասին:

Տնօրենի գնալուց հետո սկսվեցին աշխատակիցների աղմկոտ քննարկումները: Ամեն մեկն իր կարծիքն էր հայտնում: Ես մենակ դուրս եկա, գնացի բուժասենյակ եւ հենվեցի պատին: Գիտեի, որ այս ամենն ուշադրության կենտրոնում կհայտնվի: Հիմնական պատասխանատվությունն իմն էր: Չէի ստուգել Վանին զսպող գոտիները եւ միայն այս մասին հայտնել էի Յան Հունին, որն ինձնից ընդունել էր հերթափոխը: Յան Հունը եւ գիշերային հերթափոխի բուժքույրը նույն սխալն էին թույլ տվել: Արդյունքն այն էր, որ Վանի կապված վերջույթի արյան շրջանառությունը դադարել էր, եւ մեռուկ՝ նեկրոզ էր առաջացել: Մեր երեքից բացի, նաեւ ցերեկային հերթափոխի մյուս բուժքույրերն էին, սանիտարները եւ բժիշկները: Ոչ ոք բարեխիղճ չէր եղել՝ այցելելու հիվանդներին, եւ բոլորն էլ որոշակի պատասխանատվություն էին կրում: Գիտեի՝ ամենալուրջ հետեւանքն այն կլիներ, որ Վանի աջ ոտնաթաթը կարող էին անդամահատել: Ոտքերս թուլացել էին, գլուխս պտտվում էր, պատն իմ թիկունքում ասես սառույց լիներ, ճակատիս վրա քրտինքի կաթիլներ էին դանդաղ գոյանում:

Յան Հունը մտավ բուժասենյակ: Դեմքը մոխրագույն էր:

-Լինի, ի՞նչ ենք անելու,- հարցրեց ինձ:

Մեծագույն ճիգով գլուխս տարուբերեցի եւ հեռացա:

Գլխավոր բուժքույրը մոլեգնել էր:

-Ասել եմ քեզ, եւ՛ քեզ, որ երբ հերթապահում եք, պետք է ուշադիր լինեք, պատասխանատվության զգացում պետք է ունենաք, բայց ոչ մեկդ լուրջ չեք ընդունում, ամբողջ օրը մանր սխալներ եք թույլ տալիս, եւ այժմ ահա՝ դա հանգեցրեց շատ մեծ սխալի: Բոլորդ պետք է շատ լուրջ մտածեք: Բայց այնպես չանեք, որ այս մասին իմանան: Վերահսկող հանձնաժողովը շուտով հիվանդանոց է գալու: Եթե իմանան այս մասին, ոչ միայն մեր բաժանմունքը լուրջ խնդրի առջեւ կկանգնի, այլեւ ամբողջ հիվանդանոցը: Լսո՞ւմ եք ինձ:

Բոլորը լուռ էին, ճնշված ու գլխիկոր: Համաձայնություն արտահայտող նրանց մրմնջոցները հնչում էին մոծակի տզզոցի նման:

Լուսամուտի մեծ ապակու ետեւում կանգնած՝ նայում էի Վանին: Պառկած էր մահճակալին, աչքերը լայն բացած՝ առաստաղին էր նայում: Երկու ձեռքով փորձում էր վեր բարձրացնել աջ ոտքը, բայց այն, ծնկից ներքեւ, մազաչափ իսկ չէր շարժվում, ասես մի մեծ ծանրություն կախված լիներ նրանից: Վանը հերոսաբար պայքարում էր նորից ու նորից: Մեծ ջանքերով մի փոքր վեր հանեց աջ ոտքը, բայց այն թրմփալով ցած ընկավ: Քարի մի մեծ կտորի պես այդ մեռած ոտքը զարկվեց մետաղե մահճակալին, եւ ձայնն անսահման բարձր հնչեց իմ ականջներում: Կարողացա միայն ականջներս փակել եւ փախչել հեռու:

Ես սկսեցի նորից վազել, բայց իմ կողքից ուրիշ մեկի կերպարանքն էր սլանում: Մյուս հիվանդներն առաջվա պես շատ ետ մնացին: Իմ կողքի դատարկ տարածությունը մութ էր, այդտեղ նույնիսկ քամու ձայնն էր կորչում: Այդտեղ միայն իմ ծանր շնչառությունն էր: Հանկարծ կրծքավանդակս զգաց, որ կարծես չի կարողանում դիմանալ, այնպես որ՝ ընդամենը երկու պտույտից հետո թվաց, թե վիզս պարան է գցված, որն ինձ խեղդում է, եւ ես չէի կարողանում շնչել: Ուժասպառ՝ կանգ առա եւ նստեցի աստիճաններին: Նայեցի իմ աջ ոտքին եւ մտածեցի Վանի մասին: Ոտքս կամաց-կամաց սկսեց թմրել: Երեւի շատ երկար էի նստել, բայց հետո, երբ վեր կացա, տեսա, որ աջ ոտքս չի շարժվում: Ի՞նչ էի անելու, եթե Վանի պես ես էլ կորցնեի աջ ոտքս: Վախեցա այլեւս այդ մասին մտածել: Ցանկացած մեկը, ով վազքի մոլի սիրահար է, միշտ պետք է խուսափի նման մտքեր ունենալուց: Բայց Վանի մեռած աջ ոտքը իրականություն էր, եւ դա ինձ անասելի տառապանք էր պատճառում:

Երբ վերադարձա հիվանդասենյակ, Ցան Հունն ինձ անկյուն քաշեց եւ ասաց.

-Լինի, այս իրավիճակը շատ մարդկանց հետ է կապված: Միայն քո մեղքը չէ: Այդքան շատ քեզ մի՛ տանջիր: Նաեւ լավ նորություն ունեմ քեզ հայտնելու: Լսեցի, թե ինչպես էր գլխավոր բուժքույրն ասում, որ տնօրենն արդեն խոսել է հասարակական անվտանգության ներկայացուցիչների հետ եւ պատրաստվում է այստեղից տեղափոխել Վանին՝ նախքան վերահսկող հանձնաժողովի գալը: Այնպես որ՝ նա մեզ հիմա չի պատժի:

Ես անմիջապես հարցրի.

-Իսկ ի՞նչ կասես Վանի ոտքի մասին: Եթե ոտնաթաթը չբուժեն, ապա հաստատ ամբողջ ոտքը կկտրեն:

Յան Հունը հարցական հայացքով նայեց ինձ:

-Ինչո՞ւ ես դրա համար անհանգստանում: Այս պահին կարեւորը վերահսկող հանձնաժողովից պրծնելն է: Գլխավոր բուժքույրը մեզ ասել է, որ խիստ գաղտնի պահենք այս ամենը: Չպետք է թույլ տանք, որ ուրիշ մեկն իմանա:

Ես տագնապալից սկսեցի քայլել՝ խոր մտքերի մեջ ընկած, ապա ասացի.

-Ոչ, չեք կարող տեղափոխել Վանին: Եթե բուժումը ձգձգվի, մեծ խնդիր կառաջանա: Միայն աջ ոտնաթաթի հարցը չէ, ամբողջ ոտքը ստիպված կլինեն անդամահատել, եւ նա այլեւս չի կարողանա կանգնել:

Յան Հունն սկսեց անհանգստանալ: Ձայնը բարձրացնելով ասաց.

-Չասացի՞, որ լավ է լինելու, քեզ ոչինչ չի պատահի: Առաջ այսպիսին չէիր: Երբվանի՞ց այսքան մարդասեր դարձար: Այս պահին նույնիսկ վստահ չենք, թե ինքներս կփրկվենք: Եթե չթողնենք Վանը գնա, մեզ համար իրոք ավելի մեծ խնդիրներ կառաջանան:

Հանգիստ սպասեցի մինչեւ ավարտի: Հետո երկու ձեռքով բռնեցի նրա ձեռքերը եւ խնդրեցի.

-Յան Հուն, ես մտածել եմ այդ մասին եւ չեմ կարող դա անել: Մենք շատ սխալներ ենք թույլ տվել, ու մեր բախտը նաեւ բերել է, որ այդ սխալները չեն նկատել: Բայց սա ուրիշ է: Եթե թողնենք, որ այսպես տեղափոխեն Վանին, ի՞նչ կկատարվի հետո: Ես մարդասեր չեմ, բայց այս անգամ սա ուրիշ բան է: Չեմ կարող թույլ տալ, որ Վանը կորցնի ոտքը, թե չէ ինքս ինձ չեմ կարող ներել: Հասկանո՞ւմ ես:

Յան Հունը լուռ, ապշահար ինձ էր նայում, հետո անօգնական ժպտաց:

-Լինի, չգիտեմ, թե ինչպես կարող ես նման բան մտածել, բայց ես չեմ կարող քեզ հետ լինել: Ամեն դեպքում, սա քո եւ իմ որոշելիք բանը չէ: Կներես:

Նա ձեռքերը ետ քաշեց, շրջվեց ու հեռացավ:

Մենակ կանգնած էի միջանցքում, պատին հենված: Ոտքերիս տակ մուգ ստվերներ էին, որ առաջացել էին լամպի լույսից: Չէի համարձակվում ոտքերս շարժել, մահու չափ վախենալով, որ եթե ոտք դնեմ այդ մուգ ստվերների վրա, դրանք մարդկային ճիչ կարձակեն: Վախենում էի նաեւ Վանի սենյակից ներս նայել: Մի խառնաշփոթ, մթագնած զգացողություն ունեի, թե ես ինքն եմ, թե ես մի մարդ եմ, որն ուր որ է կորցնելու է իր աջ ոտքը: Եթե հնարավոր լիներ, կուզեի գրավել նրա տեղը, բայց դա հնարավոր չէր: Երբ գնացի տուն, միացրի իմ սիրած կինոնկարը՝ «Ֆորրեսթ

Գամփ» *(Ուինսթոն Գրումի համանուն վեպի հիման վրա նկարահանված՝ ԱՄՆ կինոռեժիսոր Ռոբերտ Զեմեքիսի՝ 38 պարգեւի, այդ թվում «Օսկարի» 6 մրցանակի արժանացած կինոնկար- Ծ. Թ.).*, այն կինոնկարը, որ դիտում էի, երբ հեռավազքի թիմի մարզիկ էի: Նորից ու նորից դիտեցի Ֆորրեսթի աննպատակ, վերջնակետ չունեցող վազքը, եւ հանկարծ արցունքները ցած հոսեցին դեմքիս վրայով: Իմ երազները մութ գիշերների մասին էին, երկար մութ գիշերների: Միայնակ, միոտանի մի աղջիկ էր ցատկում: Ցատկում էր վեր, շատ բարձր, բայց չէր կարողանում հասնել լուսավոր, պայծառ մի տեղ: Վատ երազների գիշերից հետո արթնացա եւ նոթատետրս հետս վերցնելով՝ գնացի հիվանդանոց:

Երկար սպասեցի դրսում, դռան առջեւ: Նոթատետրը բռնած ձեռքիս ափն ամբողջովին քրտնել էր: Տնօրենը հեռախոսով խոսում էր, եւ թվում էր՝ խոսակցությունը վերջ չունի: Համբերությունս կորցրի, հրելով բացեցի դուռն ու ներս մտա:

-Տնօրեն Վու, խորապես երախտապարտ եմ Ձեզ՝ Վանի հետ կապված այս խնդրի առիթով: Այսօր երեկոյան ես ընթրիքի սեղան եմ պատվիրել «Ծաղիկների պարտեզ» ռեստորանի 18-րդ սենյակում: Անկեղծորեն հույս ունեմ, որ կկարողանաք պատվել մեզ Ձեր ներկայությամբ:

Ես քայլեցի ուղիղ դեպի տնօրենը, որը դեռ հեռախոսը ձեռքին՝ հարցական հայացքով ինձ էր նայում: Երբ լսեցի, որ դեռ խոսում է, ուզում էի նետվել առաջ, վերցնել հեռախոսն ու ջարդուփշուր անել: Բայց փոխարենը տեղումս կանգնած մնացի եւ մատներովս ամուր սեղմեցի նոթատետրիս կազմը: Տնօրենը վերջապես ցած դրեց հեռախոսը եւ հարցրեց.

-Օրիորդ Լի, ինչ-որ բա՞ն կա, որի համար ուզում եք ինձ տեսնել:

Մի պահ հապաղեցի եւ շտապ ասացի.

-Տնօրեն, ես եկել եմ ազնվորեն խոստովանելու ամեն բան: Խոսքը մեր հիվանդներից մեկի՝ Վանի մասին է: Այդտեղ հիմնականում պատասխանատուն ես եմ: Երբ զսպող գոտիով նրան կապում էին, ես տեղում չեմ եղել, իսկ հետո չեմ գնացել վիճակը տեսնելու, չեմ նկատել նրա արյան շրջանառության հետ կապված...

Խոսքս չէի ավարտել, երբ տնօրենը մռայլվեց եւ ձեռքը թափահարեց, որ ընդհատի ինձ:

-Այդ մասին հետո կխոսենք: Հիմա ինքնախոստովանության ու ինքնաքննադատության ժամանակը չէ: Մենք պետք է բոլոր ջանքերը ներդնենք, որպեսզի պատրաստ լինենք վերահսկիչ տեսուչների այցելությանը: Գնացեք եւ շարունակեք ձեր աշխատանքը բաժանմունքում:

Ես հրաժարվեցի շարժվել տեղիցս եւ շարունակեցի ասել այն, ինչի համար եկել էի.

- Տնօրեն, ես հենց հիմա պետք է պատասխանատվություն ստանձնեմ, եւ, բացի այդ, խնդրում եմ որոշում կայացնել ինձ պատժելու մասին:

Տնօրենն ապշահար ինձ նայեց, ապա հարցրեց.

-Օրիորդ Լի, ի՞նչ նկատի ունեք:

Ուղիղ կանգնեցի եւ ասացի.

-Դուք բոլորդ որոշել եք Վանին այստեղից տանե՞լ:

Նա երկար նայեց ինձ նախքան պատասխանելը:

- Ի՞նչ է պատահել:

Հարցս համառորեն կրկնեցի.

-Իրո՞ք դուք բոլորդ որոշել եք Վանին այստեղից տանել: Եթե նա անմիջապես չբուժվի հիվանդանոցում, կարող է կորցնել ամբողջ ոտքը:

Տնօրենը ձեռքը թափահարեց:

-Օրիորդ Լի, մի՛ լսեք ուրիշների անհեթեթությունները: Ես հասկանում եմ Վանի հետ կապված իրավիճակը: Այդքան չպետք է անհանգստանաք: Գնացեք աշխատելու:

Խիստ հիասթափված՝ դուրս ելա տնօրենի աշխատասենյակից: Կանգնել էի աստիճաններին, նոթատետրս ձեռքումս սեղմած, եւ նորից ու նորից հարցնում էի ինքս ինձ՝ ի՞նչ պետք է անեմ: Մի՞թե թողնելու եմ, որ անեն՝ ինչ մտածել են: Բայց Ցան Հունն ինձ այնպիսի բան չէր ասի, որ ճիշտ չլիներ: Նրանք Վանին այստեղից տեղափոխելու են: Ի՞նչ անեմ հիմա: Նրանք չպետք է դա անեն: Ես պետք է գնամ եւ ամեն ինչ հստակ բացատրեմ տնօրենին: Պետք է խնդրեմ նրան, որ Վանին պահի: Այսպես մտածելով՝ շրջվեցի եւ վերադարձա տնօրենի աշխատասենյակ: Դռան մոտ խոր շունչ քաշեցի՝ ինձ հիշեցնելով, որ հանգիստ լինեմ, ապա մեկ անգամ էլ թակեցի դուռն ու ներս մտա:

Տնօրենը կրկին զարմացավ՝ ինձ տեսնելով:

-Օրիորդ Լի, ինչո՞ւ դեռ աշխատանքի չեք անցել ձեր հերթափոխում,- փոքր-ինչ անհամբեր տոնով հարցրեց նա:

Նախապես մտածել էի, որ այն, ինչ ուզում էի ասել, պետք է տնօրենին ներկայացնեի կողմնակի ճանապարհով, բայց երբ բերանս բացեցի, արտաբերեցի նույն նախադասությունը.

-Տնօրեն, Դուք չեք կարող Վանին այստեղից տեղափոխել:

Տնօրենը տեղից վեր ցատկեց եւ զայրացած դիմեց ինձ.

-Շատ լավ, ասացեք տեսնեմ՝ ի՞նչ է ձեզ հետ կատարվում, ընկե՛ր: Քա-

նի՞ անգամ եմ ասել, որ դա ձեզ հետ ոչ մի կապ չունի: Մի՛ խանգարեք: Պարզապես ձեր գործը կատարեք ձեր հերթափոխում, եւ ամեն ինչ լավ կլինի: Պատկերացում ունե՞ք, թե ինչպես պետք է ձեզ պահեք: Ինչո՞ւ ուշադրություն չեք դարձնում վերադասների ասածին:

Կանգնել էի հիմարի պես տեղում գամված: Միշտ ինձ համակող մի զգացողություն էի ունեցել: Հիվանդանոց գալուս առաջին իսկ օրից աղտոտված, հեղձուցիչ օդը, այս ու այնտեղ շարժվող մարդկային կերպարանքները, ամենուր աչքի զարնող կարմիր, հոսող արյունը, այս ամենն աղմուկով արձագանքեց կրծքիս տակ: Գլուխս ծանր ու դանդաղ թափահարեցի: Չէի կարող փախչել դրանցից, չէի կարող ազատվել:

Հանկարծ առաջ նետվեցի եւ հայտարարեցի.

-Ո՛չ, չե՛ք կարող նրան այստեղից տանել:

Ապա լուռ նայեցինք մեկս մյուսիս:

Ես վախեցել էի իմ իսկ արտաբերած բարձր ձայնից:

Տնօրենի դեմքը կապարագույն էր դարձել:

-Դա իմ ցանկությունն է, որ ենթարկվեք հիվանդանոցի կարգուկանոնին: Դուք չեք կարող պատասխանատվություն կրել նման լուրջ հետեւանքների համար:

Գլուխս հանգիստ տարուբերեցի:

-Ես ուզում եմ պատասխանատվության ենթարկվել այս սխալի համար: Մի՞թե դա հնարավոր չէ:

Տնօրենը մի պահ մտածեց եւ հանկարծ ժպտաց: Ապա մեղմ, հանդարտ ձայնով ասաց.

-Սխալ չի եղել: Չկա ոչինչ, որի համար պետք է պատասխանատվության ենթարկվել: Եթե բաժանմունքն այս ստուգումն անցնի առանց խնդիրների, որեւէ պատիժ չեք կրի:

Գլուխս մի քանի անգամ տարուբերեցի: Տնօրենի ժպիտն աստիճանաբար մարեց:

Ինձ նայեց զայրացած ու խոժոռ դեմքով, ուժեղ զարկեց գրասեղանին եւ ոտքի կանգնեց:

Բացեց դուռն ու դուրս եկավ:

Տնօրենի աշխատասենյակից գնացի ընդհանուր սենյակ: Անվարժ շարժումով հանելով բանալիս՝ բացեցի մետաղե դուռն ու ներս մտա: Մի քանի բուժքույր հավաքվեցին շուրջս:

-Գնացել էիր տնօրենին տեսնելո՞ւ,- հարցրին:

Կիսամեռի պես գլխով արեցի:

-Ի՞նչ էիր ուզում:

-Հոգնած գլուխս հազիվ տարուբերեցի եւ ոչինչ չասացի:

-Ասա, ասա՛ մեզ,- պահանջեցին բոլորը միանգամից:

-Գնացել էի տնօրենին խնդրելու, որ ինձ պատժի, խնդրելու, որ Վանին չտեղափոխի,- քրթմնջացի:

Ինչպես եռացող յուղի մեջ հանկարծ ընկած ջրի կաթիլներն են ցայտում, բոլորը դեսուդեն ցատկեցին:

-Լինի, գլխիդ հետ հաստատ ինչ-որ բան է կատարվում: Այդքան անախորժության պատճառ ես դարձել, դեռ նոր անախորժությո՞ւն ես փնտրում: Փաստորեն, գնացել ես տնօրենի մոտ, խնդրել, որ քեզ պատժի, եւ ուզում ես հիվանդին այստեղ պահել, որպեսզի մենք բոլորս անախորժության մեջ ընկնենք: Մեզ համար ի՞նչ լավ բան կա նրան այստեղ պահելուց: Երբ վերահսկող հանձնաժողովը գա, բոլորս կկորցնենք մեր աշխատանքը: Հիմա է, որ պետք է բոլորս միասնական լինենք: Եթե հիվանդանոցը ներքին հետաքննություն կատարի, ապա ընդամենը նկատողություններ կլինեն եւ որոշ տուգանքներ, բայց վերահսկող հանձնաժողովը կզեկուցի ընդհուպ մինչեւ Առողջապահության նախարարություն: Հիվանդանոցը չի կարողանա մեզ պաշտպանել, եթե անգամ ցանկանա: Մենք ստիպված ենք Վանին արագ տեղափոխել: Նա ընտանիք չունի եւ խելքը գլխին չէ: Ազատվենք նրանից, եւ ոչ ոք մեզ համար անախորժություն չի ստեղծի:

Գլուխս կախեցի, իսկ նրանք հերթով փորձում էին համոզել ինձ: Սիրտս կրծքիցս դուրս էր թռչում, իսկ ոտքերս ուժասպառությունից ծալվում էին: Ուզում էի նստելու մի տեղ գտնել եւ փոքր-ինչ հանգստանալ: Հավաքվածներին մի կողմ հրելով՝ ուզում էի հեռանալ, երբ հանկարծ մեկը ձեռքս բռնեց: Ավագ քույր Չժանն էր, որն իմ խորհրդատուն էր, երբ առաջին անգամ ինձ այստեղ նշանակեցին: Աղերսագին դեմքով նա ինձ խնդրեց.

-Լինի, գիտեմ, որ դու պետք է իսկապես վատ զգաս նրանից, ինչ պատահել է:

Բայց պետք է մտածես բոլորի մասին, չես կարող պարզապես անել այն, ինչ ուզում ես:

Պետք է հասկանաս՝ միայն դու չես, որ պատասխանատվություն կկրես: Մնացած բոլորս ենք պատասխանատվություն կրելու: Ի՞նչ կլինի մեզ հետ, եթե դա անես:

Ինչպե՞ս կուզեի գրկել նրան եւ լաց լինել: Ուզում էի նրանց ասել, թե որքան եմ սիրում վազել եւ որքան եմ ատում բուժքույրի գործը, ինչքան եմ

վախենում, որ չեմ կարողանա վազելը շարունակել, ահա թե ինչու եմ ներքին ցավ ապրում, ահա թե ինչու եմ ուզում փրկել Վանի աջ ոտքը: Բայց մեկ բառ իսկ չկարողացա արտաբերել: Չհամարձակվեցի խոսել, որովհետեւ շատ լավ գիտեի՝ նրանք չեն փոխի իրենց մտածելակերպը: Եվ եթե խոսեի, միայն սեփական անզորությունս եւ ջանքերիս ապարդյուն լինելն էի շեշտելու: Հայացքս արագ սահեց բոլոր գործընկերներիս դեմքերի վրայով, որոնց հետ աշխատում էի ամեն օր: Նրանք սպասողական ինձ էին նայում: Վերջում ոչինչ չխոսեցի եւ այդ ճնշող պահին մի կողմ քաշելով ավագ քույր Չժանի ձեռքը՝ առանց գլուխս նույնիսկ շրջելու դուրս եկա սենյակից:

-Ուրեմն միակ համարձակը նա է: Նա միակ բուժքույրն է, որ անձնվիրաբար օգնում է մեռնողներին եւ խնամում վիրավորներին: Եվ ինչպիսի՜ ժամանակ է ընտրում, որ գնա եւ գթասրտություն ցուցաբերի: Ինչպիսի՜ աչքակապություն, ինչպիսի՜ անհեթեթություն:

Մետաղե դուռը փակվեց իմ ետեւից, բայց նրանց ձայները պարզ լսվում էին: Հենվեցի պատին, որպեսզի չընկնեմ: Զգացի, որ չեմ կարողանում կանգնած մնալ, որ կարող եմ հենց այդտեղ փռվել գետնին ու քնել: Բայց գիտեի, որ ավելի կարեւոր մի բան ունեմ անելու: Ամուր բռնեցի նոթատետրս եւ սկսեցի դանդաղ ցած իջնել աստիճաններով:

Հիվանդանոցի վերատեսուչը բարի դեմքով մի ծերունի էր: Իրեն հատուկ ժպիտը դեմքին՝ նա տեղից վեր կացավ եւ ինձ նստեցրեց: Ես հուզված ու վախվորած նստեցի:

-Օրիորդ Լի, բա՞ն է պատահել:

Ծունչս ետ բերեցի եւ մեկ անգամ էլ պատմեցի այն, ինչ տեղի էր ունեցել: Վերատեսուչն այդ ամբողջ ժամանակ ժպտալով գլխով էր անում:

-Դուք լավ բուժքույր եք,- ասաց ինձ ջերմ ժպիտով:

-Ոչ, ես լավ բուժքույր չե՛մ: Երբե՛ք չեմ եղել:

Ամենայն լրջությամբ նոթատետրս մեկնեցի նրան:

-Սրանք այն սխալներն են, որ արել եմ այստեղ բուժքույր աշխատածս այս մեկ տարվա ընթացքում: Ես հմուտ եւ բանիմաց բուժքույր չեմ: Խնդրում եմ, որ հիվանդանոցն ինձ պատժի ենթարկի: Բայց խնդրում եմ՝ մի՛ տեղափոխեք Վանին: Վերատեսուչ, խնդրու՛մ եմ:

Վերատեսուչը ձեռքը մեղմորեն դրեց ուսիս:

-Օրիորդ Լի, լաց մի՛ եղեք: Երբ երիտասարդները գիտակցում են իրենց սխալները եւ ուզում են փոխվել, դա լավ է: Ես հավատում եմ՝ այս փորձառությունն այս պահից կստիպի, որ դասեր քաղեք եւ առաջնակարգ բուժ-

քույր դառնաք: Լավ կանեք վերադառնաք աշխատանքի: Մի՛ անտեսեք ձեր պարտականությունները: Մենք շատ ուշադիր կքննարկենք Վանի դեպքը: Ի՞նչ կարծիքի եք:

Վերատեսուչը նայում էր խաղաղ ու անկեղծ հայացքով: Ես փոքր-ինչ հանդարտվեցի եւ գլխով արեցի: Եվ նախքան հեռանալս խոնարհվեցի նրա առջեւ:

Երբ վերադարձա հիվանդասենյակ, մթնոլորտը շատ լարված էր: Բոլորն ինձ կասկածանքով ու խեթ էին նայում եւ հեռու էին մնում ինձնից: Վանը պառկած էր իր մահճակալին՝ ասեղները ձեռքի մեջ: Դեղորայքն ընկնում էր կաթոցիչի մեջ՝ կաթ-կաթ, կաթ-կաթ, ինչպես ճոճանակն է գնում-գալիս կամ ինչպես ռումբի պայթուցիչը գործի գցող ժամացույցն է աշխատում՝ մոտեցնելով վերջին վայրկյանները: Վանն իր չորացած շուրթերը ծգելով ժպտաց, երբ նստեցի նրա մահճակալի մոտ:

-Բուժքույր Լի, ինչո՞ւ վերջին մի քանի օրը ինձ վազելու չտարաք:

Ես ճիգով մի կերպ ժպտացի եւ ասացի.

-Անձրեւ էր գալիս: Դրսում թաց է, չենք կարող գնալ վազելու:

-Հա,- ասաց նա եւ գլխով արեց:- Երբ պարզ եղանակ լինի, կարող եք նորից ինձ վերցնել:

-Այո,- ասացի:- Անպայման:

Նա աչքերը փակեց, իսկ ես լուսամուտից դուրս նայեցի: Երկնքում ամպերի գունատ դեղնավուն քուլաներ էին լողում, իսկ բակում մի քանի երեխա բռնոցի էին խաղում: Որոշ ժամանակ անց կարծեցի, թե քնել է, եւ արդեն ուզում էի գնալ, երբ հանկարծ բացեց աչքերը եւ ասաց.

-Ուզում եմ վազել առանց կանգ առնելու: Ուզում եմ վազելով անցնել աշխարհի բոլոր անկյուններով: Եթե դա անեմ, հայրս ու մայրս կտեսնեն ինձ եւ տուն կտանեն: Նրանք հաստատ կճանաչեն ինձ: Ճիշտ չէ՞, բուժքույր Լի:

Թիկունքով էի կանգնած դեպի նա եւ սիրտ չարեցի ետ շրջվել: Գլուխս կախ գցած եւ թաց աչքերս սրբելով՝ բարձր ձայնով պատասխանեցի.

-Այո, երբ ժամանակը գա, ես կվազեմ քեզ հետ: Նրանք անպայման կտեսնեն քեզ եւ շատ կուրախանան:

Զգացի, որ Վանը ժպտում է, այնպես ուժեղ է ժպտում, որ մահճակալը ցնցվում է:

Այդ առավոտ, երբ իմ հերթափոխն ավարտվում էր, գլխավոր բուժքույրն եկավ ինձ տեսնելու: Ասաց, որ բաժանմունքը միջոցներ է ձեռնարկել, որպեսզի ես արձակուրդ գնամ: Արտաժամ աշխատանքի հաշվին ես

որոշակի ազատ օրեր կարող էի ունենալ եւ մի քանի անգամ դիմել էի արձակուրդի համար, բայց թույլտվություն չէի ստացել: Այս հանկարծակի որոշումն ինձ անհանգստացրեց: Գլխավոր բուժքրոջը հարցրի, թե ինչու են հենց հիմա ինձ արձակուրդ տալիս: Նա ժպտալով պատասխանեց.

-Օրիորդ Լի, ղեկավարությունը շատ է մտահոգված ձեր հարցով: Այս միջադեպը պետք է որ հոգեբանական ծանր բեռ լինի ձեզ համար, այդ պատճառով էլ առաջարկել ենք, որ դուք լավ հանգստանաք:

Ես անմիջապես հարցրի.

-Իսկ ի՞նչ կլինի Վանի վիճակը:

- Պետք չէ անհանգստանալ,-ասաց նա:- Վերատեսուչն արդեն հրահանգ է տվել, որ Վանը վաղը տեղափոխվի վիրաբուժական բաժանմունք եւ բուժում ստանա այնքան ժամանակ, մինչեւ որ ապաքինվի:

-Դա ճի՞շտ է:

Գլխավոր բուժքույրը ձեռքը դրեց ուսիս եւ ասաց.

-Վաղը կարող եք տանը մնալ եւ հանգստանալ ու մտքով խաղաղվել: Ես երկար տարիներ գլխավոր բուժքույր եմ եղել: Ինչո՞ւ պիտի ձեզ խաբեի:

Գրեթե դուրս թռա բուժքույրերի սենյակից՝ աննկարագրելիորեն թեթեւացած սրտով: Քայլելով դեպի ճաշարան՝ չկարողացա զսպել ինձ եւ սկսեցի քթիս տակ մեղեդի մրմնջալ: Վերջապես համոզել էի նրանց: Վերատեսուչն իսկապե՛ս մեծ մարդ էր: Չէի կարողանում ինձ տիրապետել եւ նախաճաշիս տուփը ձեռքիս՝ վեր ձգվեցի ու տերեւը վրան մի ճյուղ պոկեցի, փակեցի աչքերս եւ խոր ներշնչեցի դրանց բույրը: Ծուրջս տարածվել էր քափուրի ծառերի թեթեւ բուրմունքը: Ամեն ինչ պարզապես շատ գեղեցիկ էր: Երբ աչքերս բացեցի, Յան Հունը կանգնած էր իմ առջեւ: Նետվեցի դեպի նա եւ սկսեցի ուրախ ցատկոտել նրա շուրջը:

-Յան Հուն, ես հաղթե՛լ եմ: Գիտեի՞ր: Նրանք պահելու են Վանին: Վերատեսուչն այնքան լա՛վն է:

Յան Հունը խոսեց հանգիստ, անարտահայտիչ.

-Ուրեմն պետք է շնորհավորեմ քեզ:

Նա մի քանի քայլ առաջ գնաց, ապա դանդաղ շրջվեց եւ նայելով ոտքերի տակ ընկած տերեւներին՝ շարունակեց.

-Լինի, այսօր հիվանդանոցից քո դուրս գալուց հետո վերատեսուչը գնաց տնօրենի աշխատասենյակ: Ես պարզապես անցնում էի այդտեղով եւ առանց որեւէ մտադրության՝ լսեցի, որ Վանի հարցն են քննարկում: Իրականում շատ բաներ այնքան էլ պարզ չեն, որքան դու մտածում ես:

Այս ասելով՝ Յան Հունն արագ հեռացավ: Ապշահար՝ չէի կարողանում

խոսել: Երկար մտածեցի՝ ինչո՞ւ նա ինձ պատմեց այս ամենը: Ի՞նչ էր նշանակում նրա վերջին նախադասությունը: Մի՞թե բոլորը խաբում էին ինձ: Նախաճաշիս տուփն ընկավ գետնին: Անորոշ մի կանխազգացում ունեցա: Կեսօրվա արեւի լույսն այնքան սուր ու ծակող էր, որ չէի կարողանում աչքերս բացել:

Օրվա երկրորդ կեսին դարակիցս հանեցի եւ լվացի աշխատանքային համազգեստներս: Գործընկերներս խիստ հետաքրքրված էին եւ հարցրին.

-Լինի, ընդամենը մի քանի օրով ես գնում: Ինչո՞ւ ես բոլոր համազգեստներդ հանում ու լվանում:

Նկատելով նրանց սրտացավ մտահոգությունը՝ ժպտացի:

-Եղածը մի բան չէ: Պարզապես մի քիչ մաքրություն եմ անում: Հակառակ դեպքում, երբ վերադառնամ, դրանք բոլորը կեղտոտ կլինեն:

Յան Հունը հեռվում կանգնած ինձ էր նայում: Երբ բոլոր համազգեստներս փռել էի չորանալու, մոտեցա միջանցքի պատուհանին, որպեսզի մազերս սանրեմ: Լուսամուտից դուրս ծուռ բնով մի ծառ կար: Քանի՛ անգամ եմ գիշերային հերթափոխի ժամանակ կանգնել այս լուսամուտի մոտ եւ, հետեւելով այս մեծ ծառի թեք ուրվագծին, նայել եմ գիշերային երկնքին՝ միշտ սպասելով, թե երբ արշալույսը կլուսավորի երկինքը: Ուզել եմ իմանալ, թե երբեւէ ծառը կուղղվի՞, կդառնա՞ մատիտի պես ուղղաձիգ եւ արդյոք նրա ճյուղերը կձգվե՞ն ուղիղ դեպի երկինք, կհասնե՞ն երկնքին: Այժմ նման հարցեր այլեւս գոյություն չունեին: Խնամքով փաթաթեցի երկար մազերս եւ բուժքրոջ իմ գլխարկը դնելով՝ երկու կողմից ամրացրի մազակալներով: Քայլեցի դեպի Վանի սենյակի դուռը՝ ուղղելով համազգեստիս վրայի յուրաքանչյուր ծալք: Այստեղից մինչեւ մետաղե դարպասը հեռու չէր: Բուժանձնակազմը հիվանդներին տարել էր երգեցողության պարապմունքի սենյակ: Հանեցի բանալիներս եւ դեղին բանալին ձեռքիս բռնած՝ ներս մտա Վանի սենյակ: Նա տեսավ ինձ ներս մտնելով եւ սովորականի պես ժպտաց: Վերմակը բարձրացրի եւ նայեցի նրա աջ ոտնաթաթին: Այն արդեն կարծրացել էր ու ծանրացել, ինչպես ածուխի կտոր: Անջատեցի ներերակային ներարկման խողովակը՝ օգնելով, որ ուղղվի, եւ հարցրի.

-Կարո՞ղ ես վեր կենալ եւ մի քիչ քայլել:

Շատ երջանիկ դեմքով՝ Վանը նստեց անկողնում, բայց հենց որ ոտքը գետնին կպավ, մարմինը թափով առաջ ընկավ: Ես բռնեցի նրան:

-Բուժքույր Լի, ի՞նչ է եղել ինձ,- հետաքրքրությամբ հարցրեց Վանը:

-Ոչինչ: Պարզապես շատ երկար ես պառկած եղել անկողնում,- պատասխանեցի:

Պառկեցրի նրան, ապա առա թիկունքիս եւ մեծ դժվարությամբ ուղղվեցի:

-Ո՞ւր ենք գնում,- հարցրեց նա:

Ձայնը հնչում էր ականջիս մոտիկ: Կանգնեցի նրա սենյակի դռան մոտ՝ զգուշորեն դուրս նայելով: Միջանցքում ոչ ոք չկար:

-Գնում ենք վազելու:

-Իսկապե՞ս:

Նա այնքան երջանիկ էր:

-Այո, իսկապես: Պատրա՞ստ ես: Վզիցս ամուր բռնիր: Ես պատրաստվում եմ հաշվել՝ «մեկ, երկու, երեք», եւ հետո մենք պիտի վազենք, լա՞վ:

Վանն իսկույն, ամուր բռնելով, կախվեց վզիցս եւ ոտքերը պահելով՝ ասաց.

-Պատրաստ եմ, ես պատրաստ եմ: Գնա՛նք վազելու:

Ծունչս տեղը բերեցի:

-Մեկ, երկու, երեք, գնացի՛նք:

Վանին շալակած՝ արագ վազեցի դեպի դուռը:

Այդ պահին հիվանդների պարապմունքը մոտեցավ ավարտին: Ես արդեն հանել էի բանալին: Բարձր կանչեր էին լսվում, կանչում էին իրար, լսվում էին ոտնաձայներ: Ետեւիցս բազմաթիվ աղմկոտ, հնչեղ ձայներ էին գալիս: Բանալիս պտտվում էր փականի մեջ, եւ ոտնաձայների ծանր հնչյուններն անսպասելիորեն տարածվել էին ամենուր: Արա՛գ: Արա՛գ: Ավելի՛ արագ: Վերջապես դուռը բացվեց: Արեւի պայծառ լույսն ընկել էր գետնին, իմ առջեւ:

-Լի Լինի, վազի՛ր:

Միայն այդ ձայնն էի լսում: Վանին թիկունքիս պահած՝ լայն քայլերով առաջ գնացի: Քամու ձայնը սուլեց ականջներիս մեջ, եւ հիվանդները փոողոց նետվեցին:

-Վազի՛ր, արա՛գ, Լի Լինի՛:

Ոտքերս սահում էին երկրի վրայով, եւ իմ թիկունքին Վանն ավելի ու ավելի թեթեւ էր դառնում: Վազում էի ու վազում, եւ բոլոր հիվանդները շուտով մնացին հեռվում:

Հիշողությանս մեջ միշտ վառ է եւ անջնջելի այդ զգացողությունը: Ծառերը տարածեցին իրենց ճյուղերի կանաչը, երբ նրանք ձայն էին տալիս ինձ: Ճանապարհն ավելի ու ավելի նեղ դարձավ, մինչեւ որ վերջում վերածվեց գորգի բարակ մի շերտի, եւ երբ ոտքերս դիպան այդ գորգին, զգացի դրա փափկությունը: Բաց դաշտերում կարմիր, վայրի ծաղիկներ

էին, որ վազելիս բոցի պես առկայծեցին աչքերիս անկյունում: Միայն լսեցի՝ «Ավելի արա՛գ վազիր, Լի Լինի»: Քամին արագ պատառոտեց ծաղիկները՝ ծվենների վերածելով: Ոգեւորվեցի այդ սրընթաց փոփոխվող զգացողությունների պատառիկներից, մինչ մարմինս շարունակում էր ճոճվել՝ առաջ սլանալով, առաջ սլանալով: Քամին մաքրեց, լվաց մաշկս: Բոլոր զգացողություններս ծվեն-ծվեն եղան անճանաչելիության աստիճան, եւ ամեն ինչ դարձավ աղոտ ու մշուշապատ: Ամեն ինչ վերածվեց գույների անորոշ բծերի, որ վերուվարում էին ճանապարհիս բոլոր կողմերում: Սկսեցի քրտնել, բայց հոգնածություն չէի զգում: Տեսա թանձր, ճերմակ, ալիքվող ամպերը: Իսկ ամպերի միջից շողացին լույսի կուրացուցիչ ճառագայթներ: Այդ պահին իմ ամբողջ էությունը ողողվեց լույսով: Եվ երբ ներսուզվեցի նույն ճերմակ տարածության մեջ, մարմինս տարրալուծվեց, միաձուլվեց այդ ճերմակությանը: Հավանաբար այդ պահին անհետացա: Բայց ես վազելու եմ, վազելու եմ ընդմիշտ...

ՇՈՈՒ ՉԺԻ

ԵԿԵՔ ՄԻ ԲԱՆ ԱՆԵՆՔ

Ասես հատուկ պայմանավորվածությամբ՝ մեր բոլոր ընկերուհիները հաջորդաբար բաժանվեցին մեզնից: Մեզնից, այսինքն՝ ինձնից, Ծեր Թռչնից, Լի Դունից ու Չժաո Սյաոսիից: Թող հեռանան, եթե ուզում են, ասաց Ծեր Թռչունը: Ո՞նց կարող է նորը գալ, եթե հինը չի հեռացել: Լի Դունը փոքր-ինչ տխուր էր եւ ասաց՝ էդպես մի՛ ասա, Թռչուն, ես դեռ սիրում եմ նրան: Էդ տղան էնքան զզվելի էր: Ինչ էլ որ լիներ, միշտ լեզվի ծայրին սերն էր, միշտ դրա մասին էր խոսում: Չժաո Սյաոսին ոչինչ չասաց: Պարզապես շարունակում էր խմել: Դե՛, մի բան ասա՛: Լի Դունը ձեռքը դրեց նրա ուսին եւ թեթեւակի թփթփացրեց, բայց չէր սպասում, որ նա գլուխը կկախի ու կսկսի հեկեկալ: Մենք նրան երբեք չէինք տեսել էդպես լաց լինելիս:

Դեռ երեխա ժամանակվանից գիտեինք մեկս մյուսիս: Միայն մի կարճ ժամանակ բաժանվեցինք, երբ գնացի սովորելու: Ծեր Թռչունն ու նրա հայրն աշխատում էին գնացքների վրա: Լի Դունը թափառում էր փողոցներում, մինչեւ որ էդպես թափառելով ուղիղ բանտ ընկավ մի քանի տարով: Բոլորիցս միայն Չժաո Սյաոսին էր մնում տանը: Երբ վերադառնում էինք մեր փոքրիկ քաղաք, զգում էինք, որ մեր մեջ ամենաբախտավորը Չժաո Սյաոսին է: Ապա նայեք մեզ: Մենք էդպիսի շրջապտույտներ էինք կատարում, որպեսզի բոլոր դեպքերում ետ վերադառնայինք:

-Մենք՝ տռաններս, բացի դատարկ բաներից, ոչնչի չհասանք:

Երբ ասում էր՝ Ծեր Թռչնի աչքերը թափառում էին Չժաո Սյաոսիի ընկերուհու մարմնի վրա: Էդ օրը մենք Չժաոյին հարբած գտանք, կատակներ խաղացինք նրա գլխին ու վարտիքը ցած քաշեցինք, ճիշտ էնպես, ինչպես անում էինք, երբ փոքր էինք: Չժաոյի ընկերուհին նեղացավ մեզնից:

-Նրանք իմ եղբայրներն են, իմ լավ ընկերները,- ընկերուհուն ասաց Չժաոն:

-Նույնիսկ ամենալավ ընկերները չպետք է էդպիսի բաներ անեն,- ասաց նրա ընկերուհին զայրույթից կարմրատակած աչքերով:

Դրանից հետո մենք մեր մեջ մտածում էինք, որ Ծեր Թռչունը ձեռ էր գցել Չժաոյի ընկերուհուն: Իհարկե, դա պարզապես ենթադրություն էր: Մի

բան կարող եմ հաստատ ասել՝ իմ ու նրա միջեւ բան չէր եղել:

Ծեր Թռչնի հայրը կարծում էր, որ մենք արժանի ենք էդ ամենին: Նա դա ասաց ուղիղ մեր երեսին եւ նույնն ասաց նաեւ մեր հայրերին: Հոր համար Ծեր Թռչունը լավ երեխա էր, բայց մենք փչացրել էինք նրան: Սկզբում նա մեզ ասաց.

-Էն մի քանի տարին, երբ գնացած էիք, Ծեր Թռչունն անում էր, ինչ ասում էին: Ամեն օր զարթնում էր լուսաբացից առաջ: Եվ երբ ես վեր էի կենում, ամեն ինչ պատրաստ էր գնալու համար: Նույնիսկ մեքենան էր տաքացված լինում: Հենց ետ եկաք, Ծեր Թռչունը փոխվեց, դարձավ վատը: Գիշերը չէր քնում, օրվա ընթացքում չէր զարթնում: Լավ, էդ ի՞նչ եք մտքներիդ դրել:

Հա, ի՞նչ էինք անում մենք: Ամեն օր, երեկոյան կողմ, մեզնից մեկը զանգում էր մյուսներին: Ի՞նչ էինք անում: Ոչինչ: Մաջո՞նգ էինք խաղում *(մաջոնգ կամ մացգյան- չինական մոլեխաղ՝զառերով - Ծ. Թ.):* Այդ օրերին մեր բախտը չէր բերում: Գնա՞նք Փոքր Հոնկոնգ: Ոչ մի դեպքում: Վերջին անգամ աղջիկներն էդտեղ փչացրին իմ ախորժակը, եւ հիմա ամեն անգամ, երբ մտածում եմ էդ մասին, ուզում եմ ետ տալ: Քա՛ք է: Ոչինչ իմաստ չունի: Ի՞նչ եք ուզում անել: Ոչինչ չէինք ուզում անել: Պարզապես ուզում էինք սպասել: Գրո՛ղը տանի: Բա մի բան չպե՞տք է անենք: Գրո՛ղը տանի: Ի՞նչ ես առաջարկում: Ես էլ չգիտեմ: Դո՛ւ որոշիր: Քաք վիճակ: Ուրեմն առաջինը դուրս արի: Դուրս գանք, հետո կքննարկենք: Բոլորի՞ն ես կանչել: Լավ: Եղավ: Մեկ վայրկյանից էնտեղ կլինեմ, նույն տեղում, կամ կլինես, կամ կկորցնես: Մի բան պետք է անեինք: Դրա համար էլ մաջոնգ էինք խաղում՝ խնդիրը քննարկելիս: Ինչ էլ որ անենք, դա պետք է մի մեծ բան լինի, ասում էր Ծեր Թռչունը: Եկեք կարաոկե բար բացենք: Արագ փող կբերի: Կարաոկե բարը պետք է ետնաբեմ ունենա, գիտեք դա: Դե, ուրեմն, ածուխ քանդենք հանենք ու ծախենք, ասում էր Ծեր Թռչունը: Վա՛յ, քո՛ւ... Լրիվ էներգիան ունեք, բայց օգտագործելու ոչ մի տեղ չկա:

Երբ որ քննարկում ենք, թե ինչ անենք, բոլորս էլ փորձում ենք ինչ-որ բան ներկայացնել: Մենք պետք է ավելի ողջամիտ ծրագիր ներկայացնենք, ասում էր Չժանը: Էդ տղան միշտ իրեն ղեկավարի տեղ է դնում: Էս ծրագիրը, էն ծրագիրը: Հայրը նրան հարցնում էր՝ դո՛ւ, փոքրիկ քաքլան, ամեն օր ծրագիր ես ծամում, բայց երբեք չեմ տեսել, որ դրանցից մեկը կուլ տաս, էլ չեմ ասում, որ դուրս հանես:

Մի անգամ մենք գրեթե մտածում էինք, որ ունենք ծրագիրը: Դա ուղիղ մեր առջեւ էր: Լի Դունի խցակիցներից մեկը մի օր անսպասելի զանգ

տվեց նրան: Հարստանալու մեծ հնարավորություն կա՝ խորհրդավոր ասաց նա: Համաձա՞յն ես, թե՞չէ: Լի Դունը հենց որ լսեց, անկողնուց դուրս ցատկեց: Բա՛ծր խոսիր: Ի՞նչ հնարավորություն: Հենց հիմի էդտեղ կգանք: Տղան ասաց՝ եկեք, կխոսենք: Դրանից հետո Լի Դունն անհետացավ ավելի քան մեկ շաբաթ: Հետո ամեն մեկիս առանձին-առանձին զանգ տվեց ու ձայնի նույն խորհրդավոր տոնով ասաց՝ մեծ փողեր աշխատելու հնարավորություն կա, համաձա՞յն եք, թե՞ չէ: Հենց որ լսեցինք, անմիջապես շտապեցինք էդտեղ: Ծեր Թռչունը նույնիսկ փող ճարեց իր ծերուկից:

Էս անգամ ես փողը կշատացնեմ, ասաց հորը: Լի Դունն արդեն արել է դա: Եթե նորից ետ ընկնեմ, գնացքը բաց կթողնեմ: Նրա հայրը վերջապես համոզվեց: Բայց ասաց՝ տղաս, թույլ չտաս, որ քեզ վաճառեն, բայց մտածեն, թե լավություն են անում:

Ծեր Թռչնի հայրն էդպես խոսելու հիմքեր ուներ: Լի Դունը վատ համբավի տեր էր: Դա, իհարկե, հասկանալի է, քանի որ բանտում էր եղել: Ծեծկռտուքի պատճառով էր բանտարկվել, եւ դա է՛լ ավելի հասկանալի է: Ծեր Թռչունը հաճախ էր հարցնում Լի Դունին՝ ամեն դեպքում, քանի որ բանտում ես եղել, ինչո՞ւ չգնաս Բանիի մոտ: Լի Դունը պատասխանում էր՝ գրողը տանի, էնպես չի, որ ես չեմ ուզում, ի՛նքը չի թողնում ինձ: Վերջիվերջո, բանտ էիր ընկնելու: Ծեր Թռչունը փոքր-ինչ բթամիտ է: Մտածում է, որ եթե Լի Դունը, այնուամենայնիվ, բանտ է ընկել, նրա համար լրացուցիչ պարգեւ կլինի, եթե քնի Բանիի հետ: Բանին մեր ավագ դպրոցից էր, գեղեցիկ էր եւ բոլորին դուր էր գալիս: Բայց Բանիի հայրը շատ տաքարյուն բնավորություն ուներ: Ով Բանիին մոտ գնար, նրան էր պատասխան տալու: Եվ նա ուղղակի շան ծեծ էր տալիս էդպիսի մեկին: Լի Դունը բացառություն էր, եւ Բանիի հայրը նրա հետ լավ էր: Մենք կարգին չէինք հասկանում, թե, անկեղծ ասած, ինչու էր էդպես, չէ՞ որ Լի Դունն էդքան գեղեցիկ չէր, ոչ էլ ունեւոր ընտանիքից: Էդպես չպետք է լիներ: Հետո պարզեցինք, որ Լի Դունն ինչ-որ բան ուներ Բանիի հոր հետ կապված: Թե ինչ էր դա, Լի Դունը երբեք չէր ասում: Մենք էդ մասին երկար ժամանակ մտածեցինք, բայց ոչ մի եզրահանգման չեկանք:

Փոշեխառն մազերով՝ նետվեցինք առաջ, որ հանդիպենք Լի Դունին, իսկ հետո նույն արագությամբ ետ եկանք: Ետդարձի ճանապարհին Լի Դունին դուրս գցեցինք մեքենայից: Լրիվ շվարած՝ Լի Դունն ասաց՝ դուք էլ, տղերք, ոչ մի բան չեք կարող անել: Չեք կարողանա էս փոսից դուրս պրծնել: Ձենդ կտրի՛, ապուշ, ասաց Ծեր Թռչունը: Էլ սրանից հետո հերս մեզ չի հավատա: Եկեք ձեւացնենք, թե ճամփորդության ենք մեկնել, լա՞վ: Արդեն

էսքան տարիքով ենք, բայց երբեք ճամփորդության չենք մեկնել, ասաց Լի Դունը, ուղղակի հանգստանալու համար: Մեր ետ գալուց հետո, ոչ մեկին ոչ մի բառ չասացինք, թե ինչ էր եղել, բայց ինչ-որ կերպ հայտնի էր դարձել, եւ երբ մարդկանց հանդիպում էինք, նրանք ծիծաղից փորներն էին բռնում: Բանիի հայրն ամենաբարձրն էր ծիծաղում: Նա փռթկաց եւ գարեջուրը գետնին թափեց, հետո ասաց Լի Դունին՝ լսել եմ, որ մեր Լին ու իր ընկերները մեծ հաջողության են հասել: Լի Դունը ձեւացրեց, թե պետքն էլ չէ, եւ ասաց՝ ուղղակի ծրագիր ենք քննարկում: Բանիի հայրը խեղդվելով քրքջաց ու հարցրեց՝ մե՞ծ ծրագիր: Լի Դունն ասաց՝ կարող է եւ՝ էդպես: Մեկս մյուսիս ետեւից՝ սկսեցինք քաշել Լի Դունի շորերից՝ վերջ տուր, բոլորն էլ գիտեն, որ հարիֆի ենք քաշվել բազմամակարդակ մարքեթինգում:

Էդ օրը Չժաո Սյաոսին լալիս էր անվերջ, ամբողջովին չափն անցնելով: Բոլոր մեր ընկերուհիները փախել էին: Ինչո՞ւ պիտի էսպիսի դրամայի առաջ կանգնեինք: Փորձեցինք նրա հետ ինչ-որ բան մտածել, մինչեւ տեսնեինք, թե ինչ ենք անում: Լի Դունն ասաց՝ եկեք պարզապես գնանք մաջոնգ խաղալու: Ծեր Թռչունը, որ կանխիկ փող չուներ, ուղղակի խենթացավ: Մի քիչ պարտքով կտամ, ասաց Լի Դունը: Ծեր Թռչունն ասաց՝ ես ոչ մի բան պարտքով չեմ վերցնում: Գնա՛, քո՛ւ... ասաց Լի Դունը, ես չեմ էլ ուզում քեզ բան տալ: Բա հիմի ի՞նչ ենք անելու: Թափառել էինք քաղաքի արեւելյան ծայրից մինչեւ արեւմտյան ծայրն ու ետ եկել: Բայց միայն գարեջուրն էինք շատացրել, որի ճղփոցը լսվում էր մեր փորերի մեջ: Վերջապես նստեցինք խորովածանոցի մոտ, Կենտրոնական հրապարակի շատրվանի հարեւանությամբ, լրիվ ուժասպառ եղած: Եկեք մի բան ուտենք: Գոնե մի քիչ կհանգստանանք:

Չժաո Սյաոսին արդեն հանդարտվել էր եւ լուռ ուտում էր ոչխարի մսով քյաբաբը: Էնպիսի տեսք ուներ, ասես երեք օր ոչինչ չէր կերել: Ճամփուրը ձախ ձեռքին, մի շամփուր էլ աջ ձեռքին, բերանն էլ՝ լիքը: Սյաոսի՛, գոռացինք վրան: Հը՛մ, արձագանքեց՝ առանց նույնիսկ գլուխը բարձրացնելու: Վա՛յ, քո՛ւ... Սյաոսի՛, Լի Դունն սկսեց հայհոյել նրան, չպրծա՞ր... Էդ ի՞նչ դառավ, հիմար մի կնիկ է, էլի... Սյաոսին բառ անգամ չասաց, շարունակեց ուտել: Լի Դունին նշան արեցինք, որ ձենը կտրի: Ավելի լավ է՝ միայն կեր, ասաց Ծեր Թռչունը: Խնդրեմ: Կեր: Լի Դունն իր բաց ձեռքը պարզեց դեպի Ծեր Թռչունը՝ ձեր հիմա՛ր ծնողը... ախմա՛խ գլուխներ:

Ճիշտն ասած՝ էդ երեկո հեչ ծեծկռտուքի տրամադրություն չունեի: Բայց գիտեմ՝ Լի Դունը կռվել էր ուզում: Էդ քաքոտ լակոտը մեր միջի ամե-

նա կռվարարն էր: Ինձ հետ էլ էր կռվել, Ծեր Թռչնի հետ էլ, եւ եթե Սյաոսին հետը գլուխ դներ, նրան էլ կծեծեր: Վատն էն էր, որ նույնիսկ նախքան Լի Դունի հրահրելը, Սյաոսին նյարդայնացած էր, իրեն կորցրած, եւ խառնաշփոթն սկսվելու էր: Լի Դունը հաճախ ասում էր՝ Սյաոսի, Սյաոսի, կռվի՛ր ինձ հետ: Էլի ասաց: Սյաոսին հարցրեց՝ ինչո՞ւ: Լի Դունն ասաց՝ ուղղակի կռվիր մի անգամ, որ սովորես դրան: Չժաո Սյաոսին ասաց՝ ոչ մի դեպքում: Եթե չկռվես, ո՞նց ես իմանալու: Լի Դունն էր հարցնողը: Ուղղակի գիտեմ, ասաց Սյաոսին: Ամեն ինչ բոլորի համար նույնը չէ: Կռիվն ինձ համար ոչ մի հարց չի լուծի: Թո՛ւ, ասաց Լի Դունը: Չժաո Սյաոսին ասաց՝ գնա կռվիր Ծեր Թռչնի հետ: Ուզում եմ քացով ոռիդ խփել, ասաց Լի Դունը: Չժաո Սյաոսին կրկնեց՝ ես քեզ հետ չեմ կռվի: Իսկ եթե ես ուզո՞ւմ եմ կռվել: Ես էլ կփախչեմ: Բա որ չկարողանա՞ս հեռու փախչել: Ես էլ քո խփածին չեմ պատասխանի: Լի Դունը ոտքի կանգնեց, բռնեց եւ քաշեց Սյաոսիի ուսերից, նայեց դեմքին ու հարցրեց՝ Սյաոսի, եթե էդ բանն անեմ ընկերուհուդ հետ, կկռվե՞ս հետս: Սյաոսին պաշտպանություն խնդրող հայացքով նայեց ինձ ու Ծեր Թռչնին: Մենք չտեսնելու տվեցինք: Հետս կռվելո՞ւ ես, թե՞ չէ: Լի Դունը պահանջելով հարցրեց: Չէ՛: Պատասխանեց Սյաոսին: Ինչո՞ւ: Որովհետեւ դու նրա հետ չես եղել: Քո՛ւ..., ասաց Լի Դունը, եղե՛լ եմ: Ի՞նչ ես ասում, հետս կռվելո՞ւ ես, թե՞ չէ: Սյաոսիի արցունքներն սկսեցին անմիջապես հոսել, հետո սկսեց անհույս հեկեկալ: Լի Դունը թողեց նրան եւ նստեց գետնին: Վերջապես ոռը գետնին դրեց:

Մենք մի տեսակ էինք մեզ զգում, որ Սյաոսիի ընկերուհին՝ Սյաո Սան, ավելի սիրուն էր, քան մեր ընկերուհիներից որեւէ մեկը: Ամեն անգամ, երբ նրանք երկուսով երեւում էին, Ծեր Թռչունը ձեռքով խփում էր բերանին, կարծես բերանի մեջ ճանճ լիներ: Իսկ Լի Դունը միշտ ասում էր՝ գրողը տանի, թրիքն է գալիս՝ վրան թարմ ծաղիկներ: Սակայն, բարեբախտաբար, թեեւ Սյաո Սային տհաճություն պատճառեցինք, երբ առաջին անգամ նրան տեսանք, բայց հենց որ մեզ ճանաչեց, սկսեց շատ լավ վերաբերվել: Սլացիկ մարմնով եւ բարեկազմ ոտքերով էս աղջիկը երբ նստում էր մեր կողքին, ամեն մեկս խռովիչ ու հուզիչ մի զգացողություն էինք ունենում: Ամեն անգամ, երբ շատ խմելուց հետո Սյաոսին զուգարան էր գնում, Ծեր Թռչունն օգտվում էր առիթից եւ Սյաո Սային խնդրում էր՝ արի ինձ հետ, Սյաո Սա, Սյաոսիի հետ ապագա չկա: Սյաո Սան նայում էր Սյաոսիի ետեւից, հետո հարցնում՝ ի՞նչ ապագա կա քեզ հետ: Ծեր Թռչունը նայում էր ինձ ու Լի Դունին եւ ասում՝ մենք հարստանալու ենք, ճիշտ չէ՞, Լի Դուն: Լի Դունը, խմիչքը դեռ կուլ չտված, ասում էր՝ հաստատ, Ծեր Թռչուն, դու

հարստանալու ես: Սյաո Սան գլուխը ծաղրալից տարուբերում էր եւ ասում՝ խեղճ էշ, ապագադ շատ է գեշ: Եթե բոլորս նույն ցեխ ու կեղտի մեջ ենք, էլ ինչո՞ւ է Սյաոսին ձեզ համար անտանելի, փոխանակ ես լինեմ անտանելի: Սյաո Սան էլ էր մի քիչ խմում: Էդ աղջիկն իրոք կարողանում էր խմել: Եվ նայում էր մեզ ու ասում՝ ուշ թե շուտ հեռանալու եմ Սյաոսիից: Հենց էդպես էլ ասում էր՝ հեռանալու եմ Սյաոսիից: Հետո ավելացնում էր՝ ուշ թե շուտ բոլորիցդ էլ հեռանալու եմ:

Միայն Սյաո Սան չէր մեզ լքելու, մեր բոլոր ընկերուհիներն էին լքելու: Բոլորիս համար էլ պարզ էր: Բերանով ասում էինք՝ գնացեք, գնացեք, պետքներս էլ չի: Նույնիսկ երբ իսկապես հավաքեցին իրենց իրերը եւ դուրս եկան, մի մասը բարձրաձայն, մի մասն էլ կեղծ լաց լինելով, մի քիչ հենց էնպես արցունք թափելով, էլի նույնն ասացինք՝ գնացե՛ք, դո՛ւրս: Ոչ մի նոր բան չի գա, քանի դեռ հինը չի հեռացել: Էս բաների մասին մտածելիս գլխացավդ բռնում է, բայց դա հարցի լուծում չէ: Ի՞նչ էինք անելու: Լի Դունը հաճախ էր կրկնում՝ ի՞նչ ենք անելու: Գիտեինք ինչ նկատի ունի, եւ եթե դեռ ոչինչ չէինք անում, գուցե նրա համար, որ մեզ էլ էինք մոռացել, թողել մենակ:

Հիմա նստել էինք խորովածանոց-տաղավարի դիմաց, շամփուրները ձեռքներիս՝ ուտում էինք ոչխարի մսով քյաբաբը: Անվերջ դիմում էինք բադի լեզվի նման կոր հովարով գլխարկ դրած՝ խորովածանոցի երկար մորուք ունեցող տիրոջը, որ ավելի շատ պղպեղ տա: Մեզ շատ կծու պղպեղ ու չիլի է պետք, շատ գարեջուր է պետք, ուզում ենք շատ վառելիքով լցվել, շարունակել քրտնել՝ հույս ունենալով, որ դրանից մեզ մի քիչ ավելի վստահ կզգանք: Էսպիսի տոթ ու հեղձուկ կեսօրին կարճ տաբատով ու կարճաթեւ շապիկով էինք, ոտքներիս՝ չստեր, բոլորս էլ պատրաստ՝ շատ ուտելու եւ գարեջուր խմելու: Մեզնից հետո մեզ նման ուրիշ տղերք էին, բոլորն էլ մռայլված տեսքով: Տղե՛րք: Հանկարծ Լի Դունը տեղից վեր ցատկեց: Եկեք մի բան անենք: Գլուխներս բարձրացրինք էդ ցնդածին նայելու, հետո էլի կախեցինք՝ սկսելով ուտել: Լի Դունը ոնց որ թե մի քիչ ավելի կերավ: Քաշեցինք, մինչեւ որ նորից նստեց:

Նեղացե՞լ ես ինձնից: Մի քիչ հետո Լի Դունը հարցրեց Չժաո Սյաոսիին: Հետդ կատակ էինք անում: Սյաոսին շարունակում էր իր համար գարեջուր լցնել, եւ եթե շարունակեր, նույնն էր անելու, ինչ անցած անգամ: Որոշկալու էր ու ետ տար բոլորիս վրա: Էն ժամանակ մեր բոլոր ընկերուհիները դեռ մեզ հետ էին, չնայած տրամադրություն չունեին ու տարօրինակ հայացքով մեզ էին նայում: Գիտեինք՝ ինչ էին մտածում, բայց ուրիշ բան

չէինք կարող անել: Մեր սրտերը լի էին ամոթով ու տխուր ափսոսանքով: Վերջին երկու ամսում նրանցից ամեն մեկն աբորտ էր արել: Բայց ուրիշ տարբերակներ էլ կային: Կարող էինք ամուսնանալ, օրինակ: Էդ դեպքում՝ տասն ամիս հետո կարող էի հայր լինել: Տղայիս կամ աղջկանս գրկած, կամ էլ բոլորով միասին... Ամեն մեկս կպարծենայինք մեր երեխայով, կամ էլ փոքրիկներից մեկը կնստեր հատակին ու կերգեր, կամ էլ կպարեր մեզ համար: Վատ չէր լինի:

Բայց մեր ընկերուհիներն ուրիշ ընտրություն կատարեցին: Առանց նույնիսկ քննարկելու մեզ հետ, առանց տատանվելու՝ գնացին հիվանդանոց, իսկ ետդարձի ճանապարհին էնպես զիլ էին լաց լինում, որ խելքներս կորցրինք: Ամեն ինչ փորձեցինք անել, որ հանգստացնեինք նրանց, բայց դա լրիվ անօգուտ էր: Վերջում իրենք իրենց հանգստացան:

Հիմա չորս կողմից մեզ էին նայում ու իրար հետ փսփսում: Մենք, մեզ լրիվ կորցրած, առիթ էինք փնտրում, որ դուրս գայինք ու զուգարան գնայինք: Երկար կանգնել էինք, ու մեր խմած գարեջուրը օվկիանոս էր դարձել մեր փորերի մեջ: Բաճկոններս բարձրացրինք վեր, բայց մեր փորերն առաջվա նման հարթ ու ողորկ էին: Տե՛ր Աստված: Սյաոսին սկսեց գոռալ: Էդ ամբողջ գարեջուրն ո՞ւր է չքացել: Փորձեցինք ազատվել մեր բեռից, բայց անօգուտ: Երկար մնացինք զուգարանում: Եթե գարեջուր խմողների ամբոխի բարձր ու զայրացած ձայները չլինեին, որ մեզ հիշեցնում էին՝ դուրս գալու ժամանակն է, հավերժ կմնայինք զուգարանում, կծխեինք ու կզրուցեինք, կվայելեինք ներսի խաղաղությունը, որ դրսում չկար: Նորից ասելով, որ սա լուծում չէ, Լի Դունը ծանր ու տխուր ասաց՝ ի՞նչ ենք անելու:

Վերջապես Սյաոսին ոտքի ցատկեց եւ ասաց Լի Դունին՝ Լի Դուն, սրիկա՛, չգիտե՞ս, որ ընկերուհուդ հեռանալը քեզ արժանի պատասխան էր: Լի Դունն, արդեն հալից ընկած, ասաց՝ հա: Սյաոսին ասաց՝ Լի Դուն, քաքոտ լակոտ, ուզում եմ ոռիդ քացով տալ: Խոսելու ժամանակ վեր քաշեց Լի Դունին՝ վե՛ր կաց: Ծեր Թռչունն ու ես Սյաոսիին ասացինք՝ Սյաոսի՛, նրան մի՛ զայրացնի: Դու նրա հետ չես կարող կռվել: Չէինք սպասում, որ Սյաոսին կասի՝ էդ երկուսդ ծեններդ կտրե՛ք: Ձե՛զ էլ կսատկացնեմ, ոռի լակոտներ: Էլ բան չասացինք: Մեզ մեղավոր էինք զգում: Գիտեինք, թե ինչու է իրեն էդպես պահում: Դրա համար էլ ասացինք՝ Սյաոսի, մենք չենք արել էն, ինչ որ դու մտածում ես: Գնացե՛ք, ձեր տիրոջ..., ասաց Սյաոսին, կարծում եք ես ապո՞ւշ եմ: Նույնիսկ փակ աչքերով գիտեմ, թե ինչ եք մտածում:

Սյաոսիի կարծիքով՝ բոլորս եղել էինք իր ընկերուհու հետ: Ծեր Թռչունն

ասաց՝ Սյաոսի, ախմախ բաներ մի՛ ասա, մենք բոլորս մեր ընկերուհիներն ենք ունեցել: Մե՛ր հարցերը չէինք կարողանում լուծել, ի՞նչ կարիք կար քո հարցն էլ ավելացնել: Ծեր Թռչուն, ինձ համար ցերեկվա լույսի պես պարզ է, թե դու քանի փետուր ունես, ասաց Սյաոսին: Գիտեմ՝ ինչ եք արել, ուրեմն ձենդ կտրի՛: Լի Դուն, ի՞նչ ես ասում: Հետս կռվելո՞ւ ես, թե՞ չէ:

Փաստորեն Սյաոսին իրոք սխալ էր հասկացել մեզ: Թեեւ բոլորս էլ ուզում էինք մի քիչ զբաղվել նրա ընկերուհու հետ եւ տարբեր հնարքներ էինք մտածում, որ հետը մոտիկանայինք: Եվ էդ հարցում ես ավելի ստոր էի, քան Ծեր Թռչունն ու Լի Դունը: Նրանք երբեք ինձնից չէին խուսափում, իսկ ես միշտ խուսափում էի նրանցից: Ես զգում էի, որ նրանք երկուսը ճիշտ չէին անում, նաեւ զգում էի, որ դա ճիշտ չէր Սյաոսիի նկատմամբ: Մի անգամ մտածեցի, որ կկարողանամ հաջողացնել: Էդ ժամանակ նրանք բոլորը չափազանց շատ էին խմել, անզգայանալու չափ, եւ ես թաքուն ձեռնահարեցի Սյաո Մային: Բայց էդքան բան: Երբ մտածեցի, որ նրա լռությունը համաձայնության նշան է, եւ ուզեցի մի քայլ էլ առաջ գնալ, Սյաո Սան ինձ վճռականորեն մի կողմ հրեց: Ասաց՝ ավելի լավ է՝ ընկերուհուդ հետ եղիր: Դրանից հետո էլ փորձ չարեցի նրան մոտենալ:

Սյաոսին գոռում էր, եւ մենք հասկանում էինք նրան: Նրան ետ հրեցինք աթոռի վրա ու ասացինք՝ իսկապես մենք ոչինչ չենք արել: Դու Սյաո Սային ավելի լավ գիտես, քան մենք: Ի՞նչ ես կարծում, նա կթողնե՞ր, որ մի բան անեինք: Սյաոսին ասաց՝ ապուշներ եք դուք: Մենք գլխով արեցինք՝ հա, բոլորս ապուշ ենք:

Մենք՝ ապուշներս, հանեցինք մեր գրպանի մնացած փողն էլ, տեսանք, որ էլի ուտելու բան կարող ենք գնել: Աղջիկների գնալուց հետո շատ քիչ էր նման բան լինում: Ուրեմն պիտի երջանիկ զգայինք մեզ: Եվ Ծեր Թռչնի ձայնը առանձնապես բարձր հնչեց, երբ կանչեց Երկարամորուքին՝ քառասուն հատ էլ բեր: Երկարամորուքը գլուխն էլ չբարձրացրեց, միայն ասաց՝ լավ: Հետո վճռականորեն սկսեց փչել կրակին եւ բոցերն ուժեղացան:

Սրա մերը..., ասաց Լի Դունը եւ իր գարեջրից կում արեց:

Ի՞նչ նկատի ունես, հարցրեց Ծեր Թռչունը:

Քեզ նկատի չունեմ, ասաց Լի Դունը, էդ Երկարամորուքին նկատի ունեմ:

Ի՞նչ արեց, որ..., հարցրեց Սյաոսին:

Հա՛, էլի՛: Ինչի՞ համար ես Երկարամորուքի նման մարդուն հայհոյում: Նա ամեն օր ճիշտ ժամանակին գալիս է, ամեն օր բոլորին ժպտալով բարեւում է, ամեն օր կրակ է անում: Չնայած մարմնից էծի գեշ հոտ է գալիս,

բայց դա նրա աշխատանքի հետեւանքն է: Ասա՛,- Ծեր Թռչունը լրջացել էր,- ի՞նչ պատճառ պիտի ունենաս Երկարամորուքի նման մարդուն հայհոյելու համար:

Բոլորս զարմացանք, որ Ծեր Թռչունը հանկարծ էդքան վրդովվեց: Լի Դունը բերանը բացեց, բայց բան չասաց, հետո նորից բերանը բացեց ու ասաց՝ հայհոյում եմ՝ ում որ ուզում եմ: Քո ի՞նչ գործն է: Ծեր Թռչունն արհամարհանքով նայեց Լի Դունին եւ ասաց՝ գիտեմ ինչ ես մտածում: Ի՞նչ եմ մտածում, հարցրեց Լի Դունը: Չգիտես ինչու՝ Ծեր Թռչունը հանկարծ կարմրեց եւ ասաց՝ դուք՝ ապուշներդ, մտածում եք, որ Երկարամորուքը ստորներից ամենաստորն է: Վա՛յ, քո՛ւ... Լի Դունի դեմքն էլ կարմրեց: Էդ ասացիր, հա՞: Ծեր Թռչունն ասաց՝ էդ բերանը որ դու ունես, ես միշտ գիտեմ, թե ինչ կեղտոտ հոտ է գալիս դրանից: Բայց մի բան չեմ հասկանում, թե էդ ի՞նչ առավելություն ունես, որ մյուսներին վերեւից ես նայում: Ես ոչ մեկին էլ վերեւից չեմ նայում, ասաց Լի Դունը: Բայց Ծեր Թռչունը չէր զիջում: Նա շարունակեց՝ ապո՛ւշ, դու նույնիսկ ընկերուհի չունես, էս խորոված-մորովածի փողն էլ հորդ փողերն են: Դե ասա՝ ցույց տալու ի՞նչ ունես:

Իրականում, մեր ընկերուհիների կողմից լքվելուց հետո, մենք արդեն բավականին հուսահատ էինք: Ծեր Թռչնի խոսքը մեզ ավելի ճնշեց: Բոլորս պարտվածի պես գլուխներս կախեցինք՝ չիմանալով ինչ ասել: Միայն Սյաոսիի՝ գարեջուր խմելու ձայնն էր լսվում:

Սյաոսի, գարեջուրը քեզ չի հագեցնի, ոչ էլ խնդիրներդ կլուծի: Միայն ներսիդ եղածը դուրս կտաս, վերջում էլ բան չի մնա: Բայց մեզնից ոչ ոք դա բարձրաձայն չասաց: Միայն լուռ նրան էինք նայում՝ սպասելով, որ 22ի մեջ մնացած կեսն էլ իր անտակ կոկորդը լցնի: Մինչեւ մյուս 22ին անցնելը տասը րոպե ընդմիջում արեց, եւ էդ տասնքանի րոպեում ելույթ ունեցավ:

Սյաոսին ասաց, որ մի քանի անգամ գնացել է Սյաո Սային տեսնելու: Մի անգամ չի կարողացել գիշերվա կեսին քնել եւ հագնվել է ու գնացել նրանց տուն: Չորս ժամից ավել քայլել է ու երբ տեղ է հասել, արդեն համարյա լույսը բացված է եղել: Ի՞նչ ասաց Սյաո Սան, հարցրինք նրան: Սյաոսին ասաց՝ ներս չգնացի, ուղղակի որոշ ժամանակ կանգնեցի դրսում, հետո ետ եկա:

Ճիշտն ասած, բոլորս էլ գնացել էինք տեսնելու մեր ընկերուհիներին, թեեւ գիտեինք, որ վերջնական վճիռ էին կայացրել: Բայց մեր սրտերը դեռ չէին ուզում հանձնվել: Ես նույնիսկ ընկերուհուս սիրային մի նամակ գրեցի: Մի բան, որ երկար ժամանակ չէի արել: Իրոք հուզված էի, երբ գրում էի: Բայց ընկերուհիս նույնիսկ չնայեց դրան: Ուղղակի շպրտեց գետնին: Լի

Դունի արածն Է՛լ ավելի արտասովոր էր: Ասաց, որ ընկերուհուն օրական մեկ անգամ զանգ էր տալիս, եթե չէր վերցնում հեռախոսը, հաղորդագրություն էր ուղարկում, հաղորդագրության մեջ էլ սպառնում էր, որ եթե նա միտքը չփոխի, ինքը ցած կնետվի Արեւելյան կամրջից: Վերջապես, ասաց Լի Դունը, նա իրեն հաղորդագրություն ուղարկեց՝ երբ ցած նետվելու լինես, ինձ արագ գրություն ուղարկիր: Չեմ ուզում էդ տեսարանը բաց թողնել:

Ծեր Թռչունն ասաց՝ եկեք էդ մասին էլ չխոսենք, տղերք: Եկեք խմենք:

Հետո, մեր մտածածին հակառակ՝ Սյաոսին վերջում ետ չտվեց, չնայած շատ էր գարեջուր խմել: Նա իր կարմրած դեմքը դրեց սեղանին, հին անձեռոցիկի վրա, նայեց ճանապարհի կողմը եւ ասաց՝ Բանիին եմ տեսնում:

Համեմատելով՝ բոլորս էլ մտածեցինք, որ Բանին ավելի կրքոտ է, քան Սյաոսիի ընկերուհին: Նա շատ կարճ շրջազգեստ էր հագել եւ բարձրակրունկ կոշիկներ, ու առանց մեզ վրա անգամ նայելու՝ շաղակրատում էր: Ուզում էինք ողջունել նրան, բայց հետո հրաժարվեցինք էդ մտքից, որովհետեւ մեր ուշադրությունը գրավեց նրա ետեւում կանգնած անսովոր գեղեցիկ տղան, որ առնվազն 1.9 մետր բարձրություն կունենար:

Բայց նա տարբերվում էր իր շատ կանոնավոր զգեստով, որ հագել էր առանց ձեւականության: Պատշաճ հագնված էդ տղան մի տեսակ մեզ ստիպեց անհույս ու նվաստացած զգալ մեզ:

Արդեն լսել էինք էդ տարօրինակ տղայի մասին: Ամեն օր Բանիի հայրը ամբոխի մեջ բոլորին պատմում էր նրա մասին, որ լսեն: Նա լավ գործ էր անում: Երիտասարդ էր, բայց արդեն անուն էր հանել մեր բռաչափ քաղաքում: Եվ ամեն օր գալիս էր Բանիենց տուն ու նվերներ բերում նրա եւ հոր համար: Երբեմն մի շիշ խմիչք կամ մի փաթեթ որակյալ ծխախոտ կամ նույնիսկ խմիչքներով լի մի մեծ տուփ: Բանին եւ հայրը մեծ հարգանք էին վայելում: Եթե հասարակական կարծիքի ճնշումը չլիներ, նա երեւի Բանիին կփաթաթեր մի նուրբ տուփի մեջ, կզարդարեր մետաքսե կարմիր ժապավենով, եւ, առանց փոքր-ինչ տատանվելու, կդներ էդ տղայի գրպանը: Կարող ենք պատկերացնել, թե ինչպես նա, ժպիտը դեմքին, ասում էր էդ տղային՝ ընդամենը փոքրիկ մի նվեր է, ոչինչ չարժե: Իսկ վերջում նրանք երկուսով իրար ձեռք էին սեղմում: Պարզից էլ պարզ է:

Սյաոսին հանկարծ վեր կացավ ու ասաց՝ գնացինք: Մենք այլ ընտրություն չունեինք, բացի վեր կենալուց: Իսկ հետո նման էինք հենց նոր ծակից դուրս ելած փոքրիկ մկների, որ թաքուն հետեւում էինք Բանիին: Էդ ժամանակ էդ շատ քաղաքավարի տղան հասել էր Բանիին եւ ձեռքը վճռա-

կան դրեց նրա ուսին: Բանին ձեւական մի փորձ էլ չարեց ձեռքը հեռացնելու համար: Գրողը տանի, քու մերը..., ասաց Լի Դունը: Քու մերը..., արձագանքեցինք մենք:

Բարեբախտաբար, չնայած երկուսն էլ շատ դանդաղ էին քայլում, շուրջները չէին նայում, եւ էդքան էլ դժվար չէր նրանց թաքուն հետեւել: Անցանք լքված կինոթատրոնի մոտով, որտեղ, երբ երեխա էինք, հաճախ թաքուն մագլցում էինք պատի վրա, որ ֆիլմ նայեինք: Ֆիլմ նայելուց հետո մի քանի օր հուզված էինք լինում, բայց հիմա արդեն կորցրել էինք հետաքրքրությունը, եւ չէինք հիշում թե ինչի մասին էին էդ ֆիլմերը: Անցանք թիվ 2 Առեւտրի կենտրոնի մոտով, որ կորել էր շուրջը կառուցվող նոր շենքերի մեջ: Թվում էր՝ էլ ոչ ոք չի գնում էդտեղ գնումներ անելու, եւ սնանկությունը ժամանակի հարց է ընդամենը: Անցանք նաեւ նոր բացված Հոնկոնգ Հոթելի մոտով, որ ենթադրաբար արժեր 20 միլիոն յուան: Քսան միլիո՞ն: Էս ի՞նչ գաղափար է: Շենքի մոտ տարբեր մակնիշների բարձրակարգ, թանկարժեք ավտոմեքենաներ էին կանգնած: Գրողը տանի, քու մերը..., ասաց Լի Դունը: Քու մերը..., արձագանքեցինք մենք:

Անցանք նաեւ կոյուղագծի մի քանի խողովակների մոտով, որ նույնն էին, ինչ տարիներ առաջ, ճիշտ նույնքան գարշահոտ եւ թափառող շներով շրջապատված: Երբ անցանք նոր զբոսայգու մոտով ու տեսանք գավառում կառուցվող ամենամեծ, ոնց որ ասում են, վերնակամուրջը, Լի Դունը, որ առջեւից էր քայլում, կանգ առավ: Նա նստեց ճանապարհի եզրին: Երկինքն արդեն մթնել էր, եւ մենք նստեցինք նրա կողքին: Եկեք մի բան անենք, ասաց Լի Դունը՝ ծխախոտ վառելով: Մենք բան չասացինք, ամեն մեկս վառեցինք մեր ծխախոտը:

Բացատրեմ, թե ինչ օրի էինք էդ ժամանակ: Երկար ճանապարհ էինք անցել եւ երբ մտածեցինք ետ գալու մասին, գլուխներս ցավում էին: Տե՛ր Աստված, էս ի՞նչ էինք անում: Ինչո՞ւ էինք մեզ համար խնդիրներ ու հոգսեր փնտրում: Մեզ համար խորոված ուտեինք, խմեինք ու հարբեինք առաջվա պես, հետո տուն գնայինք լուսադեմին, ընկնեինք մեր մահճակալների վրա ու մի լավ քնեինք, լավ չէ՞ր լինի: Սյաոսին էս անգամ իսկապես խաղաղություն էր գտել: Գլուխը հենել էր պատին, կարծես ուզում էր քնել: Ծեր Թռչունը քացով խփեց նրան եւ ասաց՝ զարթնե՛ք, տղե՛րք: Քիչ անց լսեցինք Սյաոսիի քրթմնջոցը՝ գնանք մաջոնգ խաղալու: Ծեր Թռչունն ասաց՝ քա՛ք է, մոտս փող չկա: Ես կտամ պարտքով: Լի Դունն էր, որ ծխախոտը դեն նետեց ու վեր կացավ: Լավ, ասաց Ծեր Թռչունն ու նրա հետ վեր կացավ: Ու էդպես՝ դանդաղ, օրորվելով ետ գնացինք մեր եկած ճամփով:

ՍՈՒ ԴԵ

ՄԱՏԱՆԻՆԵՐԻ ԵՎ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սա նրա վերջին «ետթռիչքն» է այս տարի:

Օդանավակայանից դուրս գալով՝ Լին Չժոն զանգ է տալիս Սյույ Ուին: Սյույ Ուն ասում է, որ արդեն նրա համար ետդարձի տոմս է գնել դեպի Էնզե քաղաք: Քանի որ Նոր տարին շուտով մոտենում է, տաքսիների հերթերը երկար են, եւ Լին Չժոն ստիպված է անվավոր ճամպրուկը քարշ տալ, որպեսզի օդանավակայանի ավտոբուս նստի: Սիրտը ծանրացած է, ճամպրուկը քարշ է տվել ամբողջ մի հավերժություն: Դա երկար ժամանակ է պահանջում: Երբեք նախկինում այսքան երկար չի քայլել դեպի տուն: Դանդաղ, ավելի դանդաղ, որքան դանդաղ, այնքան լավ: Ամենալավն այն կլիներ, եթե ինքնաթիռն ուշ վայրէջք կատարեր, եթե այս ավտոբուսը ջարդվեր, փչանար:

Ավտոբուսում նստած՝ նայում է մարդկային բնակության նշաններին, որ աստիճանաբար հայտնվում են Պուդունից Պուկսի ձգվող ավտոմայրուղու կողքին: Տներ, ջուր, անասուններ, փոքր տրակտորներ: Հետո կամաց-կամաց հայտնվում են սուպերմարքեթները, տան շինանյութերի խանութները, բնակարանային համալիրները՝ ընդհուպ մինչեւ Լուպու կամուրջ: Նա Սույ Ուին ընդհանրապես հաղորդագրություն չի ուղարկել, բացի այն մի հեռախոսազանգից: Թվում է, սովորություն է դարձել: Հիշում է, թե ինչպես էին առաջին անգամ սիրահարվել, ինչպես ամուսնությունից անմիջապես հետո Սույ Ուն օդանավակայանում անպայման սպասում էր իրեն, երբ ինքը վերադառնում էր ինքնաթիռով, եւ եթե նույնիսկ նա չէր կարողանում աշխատանքից դուրս գալ ու դիմավորել, իրար անընդհատ հաղորդագրություններ էին ուղարկում՝ հենց որ ինքնաթիռը վայրէջք էր կատարում, եւ գրում էին այնքան, մինչեւ որ տանն էին լինում: Երբ ինքը տուն էր հասնում, ճաշասեղանին միշտ ճերմակ վարդերի փունջ էր դրված: Սույ Ուն վարդերը գնած էր լինում նախորդ գիշեր եւ վստահ էր, որ հաջորդ օրը բացված կլինեն: Լին Չժոն սիրում է ճերմակ վարդեր: Երբ համալսարանում սովորում էր, իր սիրած վեպը «Ճերմակ վարդն» էր: Այնտեղ ասվում էր, որ ճերմակ վարդերը խորհրդանշում են հանդարտությունը, անկախությունը եւ ուժը: Անկեղծ ասած՝ Լին Չժոն առանձնապես անկախ կամ ուժեղ

անձնավորություն չէ: Բայց հանգիստ է: Յոթ տարի աշխատելուց հետո զգում է, որ ժամանակն ու կյանքն իրեն ճերմակ վարդի են վերածել, նույնիսկ եթե ոչ մի վարդ իրեն չի սպասում ճաշասենյակի սեղանին, երբ այսօր տուն վերադառնա:

Երբ տուն է հասնում, Սույ Ուն արդեն այնտեղ է: Ինքը զարմանում է՝ տեսնելով, որ նա կերակուր է պատրաստել, իսկ սեղանին ճերմակ վարդերի մի փունջ է դրված: Տեսնելով Լին Չժոյին ներս մտնելիս՝ նա բազկատարած ընդառաջ է գալիս: Դա կլիներ իրենց առաջին գրկախառնությունը՝ վեց ամիս առաջ սկսված սառը պատերազմից հետո: Բայց Լին Չժոն արդեն անսովոր է այդպիսի շփման եւ խուսափում է դրանից՝ կռանալով, որպեսզի կոշիկների կապերն արձակի: Ծփոթված եւ արհամարհված՝ Սույ Ուն կանգնում է միջանցքում: Մի պահ հապաղում է, ապա կրկին փորձում է ջերմ ընդունելություն ցուցաբերել՝ ձեռքը մեկնելով, որպեսզի ճամպրուկը վերցնի:

Ես ուտելու բան եմ պատրաստել: Վաղուց է, ինչ միասին սեղան չենք նստել, ասում է նա:

Օ: Լին Չժոն հանում է շարֆը եւ մտնում խոհանոց: Նա պետք է ձեռքերը լվանա, մտքերն ի մի բերի: Խոհանոցն այն նույն տեսքն ունի, ինչ տեսք որ ուներ իրենց ամուսնության առաջին տարում. ոչ մի բիծ, ժամանակի ու տարիքի ոչ մի նշան: Լին Չժոն ոչ հաճույք է ստանում ինչ-որ բան պատրաստելուց, ոչ էլ գիտե ինչպես պատրաստել: Եվ նրանք ուտում են, երբ քաղցած են, երբեմն միասին, երբեմն ամեն մեկն իր համար, ընկերների հետ: Երբեմն Սույ Ուն է պատրաստում, թեեւ երբ այդպես է լինում, դա անշուշտ հանգեցնում է սիրառատ գիշերի՝ ննջասենյակում: Սույ Ուն միշտ պատրաստ էր դրան - ինչպես եւ Լին Չժոն - դրա համար էլ իրենց ամուսնության առաջին երեք տարում Լին Չժոն երկու անգամ հղիացավ: Սակայն երկու երեխային էլ կորցրեց հղիության առաջին երկու ամսվա ընթացքում: Լին Չժոն սկզբում չէր մտածում դրա մասին, քանի որ նրա նման խորհրդատուները շատ ժամանակ էին անցկացնում տարբեր վայրեր թռչելով, եւ կարծում էր, թե վիժումները գերլարվածության հետեւանք են: Բայց իրենց ամուսնության չորրորդ տարում, երրորդ անգամ հղիանալուց հետո, թողեց աշխատանքը, որպեսզի կարողանա տանը հանգստանալ: Հղիության երկրորդ ամիսը լրանալուց մի քանի օր առաջ նորից վիժեց: Այս անգամ Լին Չժոն եւ Սույ Ուն երկուսն էլ խիստ անհանգստացան: Շատ բուժհաստատություններ այցելեցին, բայց միայն նույն պատասխանն էին ստանում՝ պարբերաբար կրկնվող վիժում: Եվ բժիշկը խորհուրդ տվեց՝ քա-

նի որ Լին Չժոյի առողջությունն այսպես թե այնպես խոցելի է, լավ կլինի էլ չփորձեն երեխա ունենալ, որովհետեւ հաջորդ վիժումն արդեն նրա կյանքը վտանգի տակ կդնի: Այդ երեկո, երբ հիվանդանոցից վերադարձան, ոչ Լին Չժոն, ոչ Սույ Ուն չկարողացան քնել:

Ցուրն անչափ սառն է: Լին Չժոն օճառը սեղմում է ձեռքերի մեջ եւ երկու ձեռքը միասին քսում իրար: Միջամատին գեղեցիկ ոսկե մատանի է: Այն, ամենայն հավանականությամբ, պատկանելիս էր եղել Սույ Ուի մորը: Երկար նախապատմություն ունեցող ընտանեկան ժառանգական մասունք, որ Սույ Ուի հայրն էր տվել մորը՝ Լին Չժոյի եւ Սույ Ուի ամուսնությունից շատ առաջ: Ճանհայ վերադառնալուց հետո Լին Չժոն եւ Սույ Ուն գնացել էին ոսկերչի մոտ՝ դրա նման մեկ այլ օրինակ Սույ Ուի համար պատվիրելու, որպեսզի կրեր որպես հարսանեկան մատանի: Լին Չժոյի շատ գործընկերներ հիացած էին դրանով: Նուրբ, մաքուր ոսկու վրա նշաններ են փորագրված: Ոմանք կարծում էին, թե դրանք Սանսկրիտով են գրված, ոմանք էլ ասում են, թե հնագույն հնչյունական խորհրդանիշեր են: Մինչդեռ ուրիշներն էլ հարցնում էին՝ արդյո՞ք դա նման չէ ամբրոսիայի ընծյուղի, այնպիսի ընծյուղի, որ կրել է Բուդդան:

Լին Չժոն հինգ տարի է՝ նայում է այս մատանուն: Նա նույնպես կարծում է, որ տարօրինակ այս խորհրդանիշերը, որ փորագրված են մատանու վրա, նման են ամբրոսիայի ընծյուղի:

Հանկարծ Սույ Ուն գրկում է նրան ետեւի կողմից՝ բազուկներով իրանին փաթաթելով: Գլուխը դնում է ուսին: Արի ուտե՛նք: Լին Չժոն հանկարծակիի եկած՝ ուսերն է թոթվում, որ ազատվի, եւ պատահաբար խփում է Սույ Ուի կզակին: Մի պահ Սույ Ուի աչքերին աստղեր են երեւում: Գրո՛ղը տանի, ի՞նչ ես անում: Սույ Ուն զայրացած է, Լին Չժոն էլ ուրախ չէ: Երկուսով նորից խորասուզվում են լռության մեջ:

Շատ ավելի ուշ Սույ Ուն ոտքերն իր վերմակի տակից մեկնում է առաջ՝ փորձելով փաղաքշել Լին Չժոյին: Վերջինս անշարժանում է՝ քնած ձեւանալով: Մինչ Սույ Ուն ծանր հոգոց է հանում, Լին Չժոն նայում է լուսամուտից դուրս: Նրանք սկսեցին առանձին քնել վեց ամիս առաջ: Լին Չժոն չէր ուզում նրան մոտ թողնել, որովհետեւ վախենում էր, թե կհղիանա, վախենում էր չորրորդ անգամ վիժելուց: Առաջին երեք վիժումներից հետո վերականգնվելով՝ նա այնքան թույլ էր լինում, որ հազիվ էր կարողանում խոսել: Դրանից հետո որոշեց ոչ մի երեխա չունենալ: Բայց Սույ Ուի ընտանիքը տղա էր ուզում: Եթե նույնիսկ նրանց առաջին երեխան աղջիկ լիներ, պիտի անպայման հաջորդը տղա ծնվեր: Սույ Ուն եւ Լին Չժոն միշտ վիճում են այս հարցով: Սույ Ուն ասում է՝ եկ նորից փորձենք: Իսկ Լին Չժոն նա-

յում է նրան ու հարցնում՝ արդյո՞ք նրա ընտանիքն իր մահն է ուզում:

Լին Չժոն ամեն բան անում է հեռավոր գործուղումների մեկնելու համար, որպեսզի կարողանա սահմանափակել մեկ ննջասենյակում մնալու իրենց ժամանակը: Խորհրդատուների գործուղումները կարող են տեւել ամենաքիչը մեկ շաբաթ, ամենաշատը՝ երեք ամիս, եւ նույնիսկ եթե նրա ընկերությունը պատրաստակամություն է հայտնում վճարելու, որպեսզի նա ամեն շաբաթ ետ թռչի, ինքը պարտավոր չէ ընդունել այդ առաջարկը: Նրան սկսել է դուր չգալ տուն վերադառնալը, եւ հազվադեպ է ուրիշների մոտ հիշատակում Սույ Ուի անունը: Երբեմն, տեսնելով, թե ինչպես են իր գործընկերուհիները երջանիկ, երբ ամուսինները նրանց ողջունում են օդանավակայանում, կամ լսելով նրանց երկար ու ջերմ հեռախոսազրույցները հյուրանոցում, իրեն խիստ հիասթափված է զգում: Հիշում է այն ժամանակները, երբ ինքն ու Սույ Ուն թունդ սիրահարված էին, բայց հիմա երբ զանգում է նրան, պարզապես վիճում են: Եթե Սույ Ուն քնքշորեն է վերաբերվում իրեն, սկսում է անհանգստանալ ու տագնապել: Մտածում է, որ նա ուզում է իրեն շողոքորթելով, փայփայելով համոզել ու տուն բերել, համոզել ու անկողին մտնել հետը, համոզել ու հղիացնել: Վախեցած է, շվարած, կարկամած, եւ իր սարսափը վերածում է գրգռվածության ու զայրույթի՝ թույլ տալով, որ այդ ամենը դուրս հորդի: Այնքան երկար ժամանակ է այսպես, որ Սույ Ուն հիմա կարծում է, թե դիտավորյալ է այդպես անում, մտադրված դժվարություններ է ստեղծում, եւ այլեւս իր հետ նախկին համբերատար, քնքուշ տոնով չի քննարկում ոչինչ:

Նրանք պատրաստվում են գնալ Չժեցզյան նահանգի հարավ՝ Էնզե, որպեսզի Նոր տարին անցկացնեն Սույ Ուի հայրենի քաղաքում, ինչպես միշտ են անում: Լին Չժոն գիտե, որ չի կարողանա խաբել սկեսրայրին: Ասելու է նրան, որ ինքը չի կարող երեխաներ ունենալ: Ոչ այն պատճառով, որ չի ուզում: Այլ այն պատճառով, որ դա կսպանի իրեն: Գիտե, թե ինչու Սույ Ուն այս երեկո ընթրիք պատրաստեց: Հույս ունի մեկ անգամ էլ պարզել իր մտադրությունը նախքան Էնզե վերադառնալը: Արդեն վաղուց է, որ սիրով չեն զբաղվել: Այն մի քանի անգամն էլ, երբ զբաղվում են, Լին Չժոն պահանջում է, որ նա պաշտպանական միջոց կրի սկզբից մինչեւ վերջ, իսկ հետո անմիջապես գնում եւ ամենայն խնամքով լվանում է ինքն իրեն: Սույ Ուն նույնպես զգում է, որ ամեն բան միապաղաղ ու միօրինակ է դարձել: Երբ նրանք միասին քնում են, Սույ Ուն այն զգացողությունն է ունենում, թե ինքը պարզապես մեխանիկական շարժումներ է անում, քանի որ զուգընկերուհին կարծես չի հասկանում ինչպես հաճույք ստանա:

Սերը հաճույքի մի տեսակ է եւ այն ներառում է սեռական հարաբերու-

թյան հաճույքը: Եթե զուգընկերներից մեկը մտամոլոր է, մթնոլորտը խաթարված է: Սույ Ուն աստիճանաբար սկսում է մտածել, որ առանց սեռական հարաբերության իրենց սերը վտանգված է: Երբ Լին Չժոն կորցնում է հետաքրքրությունը, իր ուշադրությունն էլ է շեղվում այլ ուղղությամբ: Նա սկսում է հետաքրքրվել աշխույժ երիտասարդ ստաժյորով: Բայց ինքը նրանից տարիքով մեծ է, եւ իր տարիները ծանր են երիտասարդության սրընթաց վազքի համար: Երեսուներեքամյա Սույ Ուն վերահսկում է իր մարմնական մղումները: Նա ուզում է բուռն ու անզուսպ սիրով զբաղվել միայն մեկ անգամ, բայց երբ ետ է նայում Լին Չժոյի հետ անցկացրած յոթ տարիներին, գիտե, որ կան որոշ բաներ, որոնք չի կարող մոռանալ: Գիտե, որ կան բաներ, որոնք եթե մեկ անգամ արվեն, չեն կարող ի չիք դառնալ: Այդ ստաժյոր աղջիկը բարեհաճ է Սույ Ուի հանդեպ, ինքն էլ նրա հանդեպ է բարեհաճ: Նա ամեն առավոտ Սույ Ուի համար նախաճաշ է գնում, իսկ Սույ Ուն էլ նրան ամեն երեկո տանում է ինստիտուտ: Երբեմն Սույ Ուն մտածում է, թե հենց այս մաքուր, պլատոնական զգացմունքներն են իրեն բավականություն պատճառում, նրանց մտերմիկ, հարմարավետ ջերմությունը ձմռան կեսին, հար եւ նման գավաթներում լցված ետկեսօրյա տաք թեյին, որ Էնզե քաղաքում տարեցներն են խմում: Թեեւ նա երբեք աղջկա առջեւ չէր բացվում, մի օր աղջիկը կորցրեց ինքնատիրապետումը: Արտասվալից աչքերով եկավ իր մոտ եւ ասաց՝ դու ինձ դուր ես գալիս: Տուն գալով՝ այդ գիշեր Սույ Ուն չկարողացավ քնել: Ամեն անգամ, երբ փակում էր աչքերը, աղջկան էր տեսնում՝ կարմրած եւ աչքերն ուռած:

Այս երեկո Սույ Ուն երազում մորն է տեսնում: Հիշում է նրան, երբ նա երեսուն տարեկան էր՝ կլոր, փափուկ եւ տաք, նստած փոքր սեղանի լամպի լույսի տակ, հոր գուլպաները կարկատելիս: Այդ օրերին հայրն աշխատում էր շրջանային դիակիզարանում: Ասում են, որ նրա մասնագիտության մարդիկ պետք է պատշաճ հագնվեն: Նրանց հագուստի վրա չպետք է բաց տեղեր կամ ծակեր լինեն, այլապես չար ոգիները ներս կթափանցեն: Դրա համար էլ մայրն ամեն օր ամենայն մանրամասնությամբ ներս ու դրսից զննում էր հոր շորերը՝ կարկատելով եւ կարերն ամրացնելով: Սույ Ուն հիշում է, թե ինչպես էր հայրը երբեմն հայտնվում մոր ետեւում եւ թեթեւ շոյում ուսը: Մայրն ամաչելով, շիկնած՝ նրա հետ մտնում էր ննջարան: Սույ Ուն այդ ժամանակ ընդամենը վեց տարեկան էր, եւ անմեղ ու անմեղսունակ՝ փորի վրա պառկում էր ննջասենյակի դռան առջեւ, որպեսզի գաղտագողի նայի դռան տակից: Հոր մարմնի վրա խոնարհված մոր մերկ մարմինը շատ սպիտակ էր, ինչպես նեֆրիտի փայլուն մի կտոր ցեխոտ ջրափոսում: Ինքը չէր հասկանում, թե ինչ է դա: Հետո, երբ արդեն չափա-

հաս էր, հասկացավ, որ տեսել է ծնողներին սեր անելիս: Մի քանի տարի անց մայրը մահացավ արնահոսությունից՝ վիժումից հետո: Եվ հայրը, միայնակ, Սույ Ուին տասը տարեկանից մեծացրեց: Սույ Ուն միշտ լսել է հորը եւ երբեք չի հակառակվել նրան:

Սույ Ուի մոր մահը ծանր քարի նման ճնշում է Լին Չժոյի միտքը: Նա զգում է, որ սա նախանշան է, զգուշացում, որին պետք է ուշադրություն դարձնել:

Հաջորդ օրը վաղ առավոտյան Լին Չժոն արթնանում է եւ տեսնում, որ Սույ Ուն, արդեն արթուն, դատարկ հայացքով առաստաղին է նայում: Երկար լռությունից հետո Սույ Ուն վերջապես ասում է՝ մենք ամուսնալուծվելու ենք: Վաղը կդիմեմ հայրիկին բոլոր թղթերի համար:

Շատ լավ: Լին Չժոն ցնցված է, բայց տիրապետում է ինքն իրեն: Ծրջվում է կողքի՝ ցանկանալով որոշ ժամանակ այդպես պառկել: Սույ Ուն վեր է կենում, որպեսզի գնա լոգարան: Լին Չժոն սկսում է լաց լինել եւ լսում է ծորակի ձայնը: Նրա հեկեկոցները լեռան աղբյուրի են նման, արցունքներն անվերջ հոսում են:

Լոգարանում Սույ Ուն նույնպես լալիս է:

Հարավային Չժեցզյանի աննկատելի մի անկյունում ընկած Էնզեն մի քաղաք է, որը մոտ հազար տարվա պատմություն ունի: Ասում են, որ կայսր Ցյանլունը այստեղով է անցել դեպի հարավ շրջագայությունների ժամանակ՝ քաղաքն անվանակոչելով Էնզե, որ նշանակում է կայսերական բարերարություն, որովհետեւ պատվել էր քաղաքը՝ իր համար տեղացի երիտասարդ մի աղջկա ընտրելով: Ոմանք էլ ասում են, թե Ցյանլուն կայսեր սիրելի հարճերից մեկի անունը Էնզե է եղել, եւ նա մահացել է խորհրդավոր հանգամանքներում, երբ ճամփորդելիս են եղել: Եվ երբ նրան թաղել են այդտեղ, նրա հիշատակը հարգելու համար քաղաքի անունը փոխել են՝ անվանելով Էնզե... Լեգենդի այդպիսի շատ տարբերակներ կան, եւ Սույ Ուն շատ է լսել այդպիսի բաներ իր կյանքում, բայց նրա հայրը հակված էր հավատալու այս վերջին տարբերակին: Նա ասում է, որ դա լսել է իրենից տարիքով շատ մեծ մի ոսկերչից, որի հետ ընկերական հարաբերությունների մեջ է եղել: Ակներեւաբար, ոսկերիչը հարստացել էր գերեզման կողոպտողներից ձեռք բերված գանձերը վաճառելով:

Լին Չժոն այնուամենայնիվ տուն է ուղեկցում Սույ Ուին: Այստեղ էին առաջին անգամ հանդիպել: Լին Չժոն ինստիտուտն ավարտելուց հետո ընկերուհիների հետ ճամփորդում էր: Երիտասարդ աղջիկների խումբը ծի-

ծաղելով քայլում էր գետաքարով սալարկված ճանապարհներով՝ քաղաքի բոլոր տղամարդկանց այրող հայացքներին արժանանալով: Սույ Ուն այդ տղամարդկանցից մեկն էր, բայց նա եկել էր քաղաք մոր գերեզմանը մաքրելու եւ մտադիր էր շուտ ետ գնալ Ծանհայ՝ աշխատանքի: Սույ Ուն քսանհինգ տարեկան էր: Երեք տարի առաջ էր համալսարանն ավարտել եւ արդեն ինժեների օգնական էր: Կարծես թե հենց առաջին հայացքից սիրահարվեց Լին Չժոյին: Որովհետեւ նա այնքան հանգիստ էր թվում: Աղջիկները նրան խնդրել էին, որ իրենց լուսանկարի: Սույ Ուն մի քանի անգամ հայացքը կենտրոնացրեց Լին Չժոյի վրա՝ թաքուն նրան նայելով, մինչեւ որ նրա ժպիտը սառեց եւ աչքերն ապակու պես փայլեցին: Ինչո՞ւ է այդքան երկար նախապատրաստվում: Դա նրանից էր, որ ինչ-որ մեկը սկսել էր բողոքել, թե Սույ Ուն արագ է լուսանկարել: Նա նյարդայնացավ, եւ լուսանկարը խավար ստացվեց:

Հետո Սույ Ուն փնտրեց գտավ Լին Չժոյի հեռախոսահամարը եւ հենց որ Ծանհայ վերադարձավ, սկսեց բուռն կերպով սիրահետել նրան: Հրավիրում էր նրան ճաշի, տանում էր զբոսանքի, գնում էին կինոթատրոն, խաղերի էին մասնակցում, սրճարանում միասին սուրճ էին խմում: Համատեղ կյանքի առաջին տարում նա աշխատանքի մասին քիչ էր մտածում: Միակ բանը, ինչի համար ափսոսում էին, այն էր, որ նախկինում չէին հանդիպել: Այդ տարի Լին Չժոն նոր-նոր էր սկսել աշխատել:

Հանուն սիրո հնարավորինս խուսափում էր գործուղումների մեկնելուց, այդ պատճառով էլ երկու տարի անց իր հետ աշխատողներից բոլորը պաշտոնի բարձրացում ստացան՝ դառնալով խորհրդական, մինչդեռ նա դեռ օգնականի պաշտոնում էր: Բայց Լին Չժոն դեմ չէր: Եթե ուներ Սույ Ուին, ուրեմն ամեն ինչ ուներ:

Եթե հղիանալու հետ կապված նրանց մտահոգությունը չլիներ, նրանք հավանաբար դեռ սիրող ամուսին ու կին կլինեին, եւ վերջին երկու տարիների ընթացքում Լին Չժոն ամեն դեպքում շարքային աշխատողից աստիճանաբար առաջ քաշված կլիներ իր աշխատանքում: Նա արդեն կարողանում էր սեփական խումբը ղեկավարել՝ հաճախորդների հետ գործարքներ կատարելու համար: Այդուհանդերձ, նույնիսկ երբ զգում էր, որ օր օրի ամեն ինչ դեպի լավն է գնում, թվում էր, թե իրենց ամուսնությունն անդառնալիորեն շարժվում է դեպի իր վերջնակետը:

Երկար ժամանակ առանձին ապրել, ոչ մի խոսքային հաղորդակցություն, ոչ մի ֆիզիկական փոխներգործություն: Այո, ի՞նչ իմաստ ունի այդ ամուսնությունը հիմա: Եվ երեխաներ էլ չկային:

Երբ Սույ Ուի հայրը լսում է, որ որդին պատրաստվում է ամուսնալուծվել, երկար ժամանակ լուռ է մնում: Վերջապես սեղմում է իր ծխամորճը: Ես դա թույլ չե՛մ տա: Այդ ասելով՝ դուրս է գալիս սենյակից, ձեռքերը թիկունքին դրած: Սույ Ուն եւ Լին Չժոն կարկամած իրար են նայում՝ առանց բառ իսկ ասելու: Երեկոյան ծերունին վերադառնում է մի հինգ-վեց շիշ օսմանթուսի տեսակավոր գինի բերելով, որպեսզի խմի իր զավակի հետ: Խմում է այնքան, մինչեւ երերում է, ապա, կարմրած աչքերով եւ դեմքին խոր ցավի արտահայտություն, ասում է՝ տղաս, դու իմ որդին չես:

Սույ Ուի հայրն ու մայրն ավելի քան տասը տարի ամուսնացած էին, բայց դեռ երեխա չունեին: Նրանից չէր, որ մայրը չէր կարող հղիանալ, բայց ամեն անգամ, երբ նա հղիանում էր, վիժում էր: Հետո նրանք գնացին շրջանային մանկատուն, որ այնտեղ տղա երեխա գտնեն եւ ընդունեն որպես իրենց միսն ու արյունը հանդիսացող սեփական երեխայի: Բայց Սույ Ուի մայրը չէր ուզում հավատալ ճակատագրին եւ պնդում էր, որ շարունակեն ընտանեկան շառավիղը: Եվ այդպես շարունակվեց: Վիժում վիժումի ետեւից: Դա հանգեցրեց նրան, որ թմբլիկ ու առողջ կինն աստիճանաբար թուլացավ եւ հյուծվեց: Ի վերջո նա մահացավ սաստիկ արյունահոսությունից: Սույ Ուի հայրը տարիներ շարունակ մեղադրում էր ինքն իրեն: Նա այդքան երկար տարիներ աշխատել էր դիակիզարանում: Տեսել էր մահ եւ տեսել էր կյանք: Ինչո՞ւ էին այդքան մտահոգված տոհմական շառավղի շարունակությամբ:

Հիշեց այն ժամանակները, երբ իր ընկեր ծեր ոսկերիչն ասում էր՝ դու միայն մեկ կյանք ես ստանում: Բավարարվիր քեզ վիճակվածով: Մի փնտրիր այն, ինչ չի վիճակվել, որ ունենաս: Ամենավատ բանը, որ կարող ես անել, ուրիշների ունեցածի վրա սեւեռվել մնալն է եւ այդ ընթացքում սեփական երջանկությունդ կորցնելը:

Գիտե՞ս՝ այն օրերին ոսկերիչը բավականին Կազանովա էր: Ծերունին շատ է խմել: Նա բարձրացնում է բաժակը եւ խոսելիս գլուխն այս ու այն կողմ է տարուբերում: Հետո նա սիրահարվեց մի հիմարիկ աղջկա, երբ հիսուն տարեկան էր: Իր արհեստանոց-կրպակը տվեց աշակերտին եւ հեքիմ դարձավ, ամբողջ օրն իր այդ աղջկա հետ լեռներ էր մագլցում ու դեղաբույսեր հավաքում: Ոմանք ասում էին, որ այդ աղջկա հետ քնել է սարերում: Բայց ո՞վ իմանա: Մարդիկ ուղղակի պետք է իրենց գործով զբաղվեն: Աղջկան կարճ կյանք էր վիճակված: Ընդամենը մի քանի տարի անց մահացավ թոքախտից: Ես էի նրա մարմինը դիակիզում, իսկ ընկերս դրսում կանգնած լալիս էր ու ողբում, մինչեւ որ գիտակցությունը կորցրեց: Տղաս, եթե ուզում ես իմանալ ինչ է սերը, ասեմ. սերն այն է, երբ դու միայն ուզում

ես, որ տվյալ մարդը կողքիդ լինի, հիմար է նա թե ոչ, կարող է երեխաներ ունենալ թե ոչ: Մորդ մահն անիմաստ կորուստ էր, անիմաստ կորուստ:

Սույ Ուն քրթմնջացող հորն անկողին է դնում: Նա նույնպես մի քիչ խմած է, աչքերից արցունքներ են հոսում: Լին Չժոն անհաղորդ հայացքով նստած է դրսի սենյակում: Նրա առջեւի սեղանին ուտելիքի ափսեներ են եւ խմիչքի՝ կիսով չափ դատարկ մի շիշ: Նա բաժակը բարձրացնում է, մոտեցնում շուրթերին եւ երեք անգամ անընդմեջ խմում: Հետո հենվում է սեղանին ու անզուսպ լաց լինում: Կարծես ինչ-որ մեկը սեղմելով տրորում, տակնուվրա է անում սիրտը: Ծնչահեղձ է լինում:

Այդ երեկո Սույ Ուն եւ Լին Չժոն նորից քնում են նույն վերմակի տակ: Սույ Ուն բուռն ցանկություն չունի նրա հանդեպ, բայց երկու մարմինները քնում են միասին՝ օսմանթուսի գինով տոգորված: Հաջորդ օրը նման է նրանց հանդիպման առաջին օրվան: Ձեռք ձեռքի շրջում են քաղաքում: Հիշում են, երբ առաջին անգամ սիրահարվել էին, եւ հասկանում են, որ ոչ ոք ոչինչ չի մոռացել: Սույ Ուն հասկանում է, որ կարող է միայն ներողություն խնդրել այս փոքրիկ աղջկանից: Քաղաքի ծայրին գտնվող թեյատներից մեկում հանդիպում են մի ծերունու: Երբ նա հեռվից տեսնում է Լին Չժոյին, վեր է կենում եւ մոտենում նրան: Ցանկություն է հայտնում կարդալ նրա բախտը: Սույ Ուն կարծում է, թե խաբեբա է, եւ ձեռքով նշան է անում, որ հեռանա: Մենք դրա կարիքը չունենք: Հիմա նա միայն մի բան է ուզում՝ պաշտպանել սիրելի կնոջը:

Բայց ծերունուն հնարավոր չէ տարհամոզել: Նայում է Լին Չժոյի աջ ձեռքի մատանուն եւ պնդում, որ նա հանի մատանին, որպեսզի ինքը կարողանա զննել այն: Գիտե՞ք ինչ են նշանակում այս բառերը: Նա քրթմնջում է ինքն իրեն: Այսքան երիտասարդ աղջիկ՝ ինչպե՞ս կարող ես այսպիսի ծանր բան կրել: Այս ասելով՝ մեծ ձեռքի վրա պատճենում-նկարում է մակագրությունը, որպեսզի Լին Չժոն եւ Սույ Ուն կարողանան տեսնել: «Մանտրա՝ մաքուր երկրում վերածնվելու համար»... Namoamitabhayatathagataya... Սա վերածնունդի հմայական խոսք է: Միայն մեռած մարդիկ պետք է սա կրեն: Ամբրոսիան նրանց վերջին կյանքի մեղքերը սրբելու համար է: Ծերունին տարուբերում է գլուխը: Դու չպետք է սա կրես: Դու չպետք է սա կրես:

Ծանհայ վերադառնալուց հետո Լին Չժոն եւ Սույ Ուն անում են այնպես, ինչպես ծերունին է ասել իրենց, եւ մատանին նվիրաբերում են Բուդդային՝ նրա արձանի ստորոտի առջեւ՝ նախասրահի մուտքի մոտ: Մի օր նրանք նույն երազն են տեսնում:

Այդ երազում Սույ Ուի մայրը առաջվա պես կարկատում է, բայց այս անգամ նա երիտասարդ է, ընդամենը քսան տարեկան: Լամպի աղոտ, դեղին լույսի տակ նա զննում է Սույ Ուի հոր շորերը՝ անցքեր փնտրելով: Հանկարծ հասնում է վերնաշապիկի գրպանին եւ այնտեղից ոսկե մի մատանի է հանում: Ձեռքին պահած զննում է այն: Մատանին նրան դուր է գալիս: Նա այն դնում է իր մատին:

Տասնութ ամիս անց Լին Չժոն առողջ մի տղա է ծննդաբերում: Սույ Ուն նրան անվանակոչում է Սույ Էնցզի, որ նշանակում է՝ Բարերարությունը շարունակվում է:

Մատանին, իսկապես, շատ տարիներ առաջ գերեզմանում գտնվող մի դիակից էր հանվել: Թե ով էր գերեզմանում, հնարավոր չէր եղել պարզել: Բայց ասում էին՝ դա հենց իր՝ օրիորդ Էնզեի, Ցյանլուն կայսեր ամենասիրելի հարճի մարմինն է: Գերեզման կողոպտողները մատանին վաճառել էին ոսկերչին: Երբ նա հիսուն տարեկան էր, հանդիպեց այն հիմարիկ աղջկան: Աղջկա փորն ուրիշ մեկն էր կլորացրել, բայց նա վիժում էր, երբ սայթաքեց ոսկերչի կրպակի առջեւ: Ոսկերիչը փրկեց նրան եւ մի մատանի տվեց, որ դնի, մատանի, որը կկանխեր հետագայում հղիանալը: Նա աղջկան պահեց իր մոտ: Ոսկերիչը երբեք չէր նայել, թե մակագրությունն ինչ է նշանակում, ոչ էլ մտադիր էր եղել: Աղջկա մահից եւ նրա մարմինը դիակիզելուց հետո Սույ Ուի հայրն այդ տարօրինակ մատանին գտավ մոխիրների մեջ: Նա մտադիր էր մատանին վերադարձնել ոսկերչին՝ երբեք չմտածելով, որ իր նորապսակ կինն ինքը կգտնի այն ու կկրի իր մատին: Սույ Ուի ընտանիքն այն ժամանակ այնքան աղքատ էր, հայրը մոր համար երբեք այդպիսի բան չէր գնել: Եվ հայրը որոշեց պարզապես կնոջը տալ այն՝ որպես նվեր: Այդպես էլ եղավ: Ժամանակին որպես հակաբեղմնավորիչ ծառայող մատանին, որի վրա Վերածնունդի մանտրան է մակագրված, վերջին հաշվով փոխանցվեց Լին Չժոյին:

Սույ Ուն եւ Լին Չժոն ոչինչ չգիտեն այս պատմության մասին, բայց նրանք դեն չեն գցել մատանին, այլ արել են ծերունու ասածը: Ի վերջո, մատանին էր, որ նրանց համար հասկանալի դարձրեց՝ մատիդ մատանին կարելի է փոխարինել մեկ ուրիշով, բայց սերը եւ կողքիդ գտնվող մարդուն երբեք հնարավոր չէ փոխարինել:

ՉԺԱՆ ԻՎԵՅ

ԴԺԿԱՄ ԱՆԴՐԱԴԱՐՁ

1

-Ես երբեք էլ կարգին չեմ քնի,- մտածեց Սյա Բինբինը, երբ ջանք էր թափում թեյամանը վառարանից վերցնելու եւ թերմոսը լցնելու: Դժվարությամբ էր կանգնում, ոտքերը թույլ էին: Թերմոսի բերանից դուրս մղվող գոլորշուց խաշված նրա բթամատը մաշկազերծ մկան պես վարդագույն էր դարձել: Թեյամանը նրա տնից բերվել էր ավելի քան տասը տարի առաջ: Այդ թեյամաններին Ճանհայի բարբառով դեռ «պղնձե քանդակներ» էին անվանում, որ բավականին տեղին էր՝ հաշվի առնելով դրանց դեղին եւ հանդիսավոր տեսքը: Դրանց վրայի ճաքերն ու խոռոչները հնությունից մուգ շագանակագույն էին դարձել, իսկ արտաքին մակերեւույթը ծածկված էր պողպատալարի անհարթ կտրվածքներով: Սյա Բինբինն ատում էր պղնձին քսվող պողպատալարի ձայնը: Երբ մտածում էր այդ մասին, գլուխը թմրում էր, ասես էլեկտրահարված լիներ: Վառարանի դեմդիմաց հորեղբայր Չժոուի մեծադիր լուսամուտն էր՝ ծածկված սեւ ու դեղին բծերով: Սյա Բինբինի աչքերը բնազդաբար խուսափում էին այդ տհաճ, կեղտոտ բաներից: Նա շրջվեց՝ ժենշենի թեյ ավելացնելով հորեղբայր Չժոուի գավաթի մեջ, եւ լվացարանում մաքուր ջուր լցրեց:

Ինչպե՞ս կարող էր եղանակն այդպես հանկարծ ու անընդմեջ տաքանալ: Սյա Բինբինը համոզված էր, որ իրենցից ոչ ոք չի կարողացել հանգիստ քնել, թեեւ գիշերվա կեսին ոչ ոք վեր չկացավ: Համառորեն ու համբերատար դիմացան: Առաստաղի հովիարը, փոշու շերտերով ծածկված, ճռռում էր եւ անտարբեր պտտվում: Լուսաբացը շուտ էր բացվել, բայց Սյա Բինբինի համար ամեն օր արեւածագին նայելը նրա ամենահուսահատ պահն էր: Այդ թարմ եւ ազդեցիկ հուսալքությունը մարդկանց ստիպում էր էլ ավելի մռայլ ու ինքնամփոփ դառնալ, քան գիշերվա մենակությունը: Ինչպես կցանկանար, որ դա իր համար սովորական դառնար, այնպես, որ այլեւս հուզականորեն իրեն խոցված չզգար: Ցավոք, միայն նոր էր հասկացել, թե որտեղից է դա գալիս ու ճանաչել էր դա, իսկ այս ամենից խույս տալու միտքը շարունակվում էր:

Նույնիսկ կիզիչ շոգին Սյա Բինբինը դեռ բավականություն էր ստանում դեմքը տաք ջրով լվանալուց: Տաք գոլորշու մեջ թաղվում էր ու աշխատում ջերմության հետ շնչել, եւ աչքերն արցունքներով էին լցվում, թեեւ տխրելու որեւէ բան չէր լինում: Չժոու Լեյն արդեն գնացել էր:

Առաջինը գնացած մարդու համար ամեն բան միշտ ավելի հեշտ էր լինում: Իրենց չորսից Չժոու Լեյն առաջինն էր, որ հեռացավ: Նրա հեռանալուց հետո Սյա Բինբինն իրեն բավականին հանգիստ զգաց՝ չիմանալով, թե ինչու, թեեւ մինչ այդ մտածել էր, որ նրա հեռանալը չի ուզում: Նրա գնալուց հետո հորեղբայր Չժոուն բազմոցը վաճառեց:

Հորեղբայր Չժոուն, քիթն ամեն տեղ խոթելու իր բնավորության պատճառով, բազմոցը գնել էր ինչ-որ խաբեբայից, հետո մեծ դժվարությամբ այն քարշ էր տվել տուն: Նա նաեւ վիճել էր Բինբինի մոր հետ այդ հարցի շուրջ: Ճիշտն ասած, դա նրա մեղքը չէր: Պատճառն այն էր, որ նա էր վճարելու ամբողջ արժեքը: Ամեն դեպքում Չժոու Լեյը սկսեց քնել հնամաշ բազմոցին, եւ դա տեւեց յոթ թե ութ տարի: Տունն իսկապես չափազանց փոքր էր, այնպես, որ բոլորի դժբախտություններն ամբողջությամբ մյուսների աչքի առջեւ էին: Բայց այդ պատճառով ամեն բան բացահայտ էր նաեւ, եւ ոչ ոք չէր կարող որեւէ գաղտնիք պահել:

Այնուամենայնիվ, Չժոու Լեյի գնալուց հետո Սյա Բինբինը բնականաբար դարձավ անփույթ: Նա ավելի քիչ էր մտահոգվում, երբ հորեղբայր Չժոուն փնթփնթում էր.

-Էդ ո՞նց եղավ, որ երկու կտոր շորով ես թասը լվանում: Ի՞նչ տեսակ մարդկանց տեղ ես մեզ դրել:

Թեեւ հորեղբայր Չժոուն ասում էր այս բաները, ընդհանուր առմամբ ավելի խաղաղված տրամադրությամբ էր, երբ Չժոուն տարածքն ազատել էր: Երբեմն էլ իր՝ Սյա Բինբինի հետ չար կատակներ էր անում, որոնք իրականում ավելի գերադասելի էին, քան իր մշատապես խոժոռադեմ մոր պահվածքը: Բոլոր դեպքերում հորեղբայր Չժոուն վստահ էր, որ Սյա Բինբինն իր բնավորությամբ կարող է հաղթահարել դա: Նա մտադիր չէր որեւէ ճնշում գործադրել Սյա Բինբինի վրա: Միայն գնահատում էր այն առավելությունները, որոնք վերջինս դեռ կարող էր հորից վերցրած լինել: Այս հարցում Բինբինի մայրը համաձայն էր: Նա նախկին ամուսնուն չէր տեսել ավելի քան տասը տարի, այնպես որ այլեւս չէր մտահոգվում նրա համար, թեեւ չէր կարող Բինբինի զգացմունքների մասին էլ հոգ տանել: Բայց Չժո-

ու Լեյի հեռանալը պետք է որ հարմար վիճակ ստեղծեր նրա համար: Սյա Բինբինը երկար ժամանակ մորն այսքան ուրախ չէր տեսել:

Հորեղբայր Չժոուն վեր կացավ եւ նախքան ատամները լվանալը մտավ խոհանոց ու Սյա Բինբինի պատրաստած թեյից մի կում խմեց: Ապա ժպտալով ասաց.

-Օ, Բինբին, երեկ ի՞նչ խեղդող շոգ էր: Ծոգերն սկսվել են, չէ՞:

Սյա Բինբինը սառն ու ծուռ ժպիտով պատասխանեց.

-Հորեղբայր, նախաճաշին ի՞նչ կուզեիր ուտել:

-Երեւի կծու յուղաբլիթներ: Երկու յուղաբլիթ եւ սոյայի կաթ:

-Բա մայրի՞կը:

-Հը՞: Չէ: Լավ, ինչ-որ քաղցր բան էդ դեպքում: Քաղցր յուղաբլիթներ եւ սոյայի քաղցր կաթ:

-Իսկ մայրի՞կը:

-Դե, մի ախորժաբեր բան բեր, որ միասին կարողանանք նախաճաշել:

2

Բինբինի մայրն ամեն օր ուշ էր արթնանում: Բայց արթնանալուց հետո բավականին աշխույժ էր: Ծուտ չէր արթնանում, որովհետեւ լավ չէր քնում: Այդ պատճառով առավոտն իսկապես պատկանում էր Սյա Բինբինին: Ամեն օր, երբ դուրս էր գալիս նախաճաշի համար ուտելու բան գնելու, Սյա Բինբինը միտումնավոր հեռուն էր գնում եւ երկար էր մնում դրսում՝ հույս ունենալով, որ գոնե ետ գալու ժամանակ հորեղբայր Չժոուն եւ մայրն արթնացած ու հագնված կլինեին: Գիշերվա խոնավությունն ու շոգն անտանելի էին Սյա Բինբինի համար: Բայց նա մենակ չէր, քանի որ իր մոտ քնած երկու մարդիկ էլ նույն բանն էին զգում: Լուռ սպասում էին, որ մյուսները քնեն: Նրանք մեկը մյուսի շարժմանը լուռ ըմբռնումով էին վերաբերվում՝ հասկանալով, որ ամեն մի փոքրիկ աղմուկ կարող է զայրացնել մյուսներին: Իհարկե, որոշ ցանկություններ միայն ձայնով չես կարող հստակ պարզել: Եվ ամեն անգամ Սյա Բինբինն ուզում էր հեռանալ, ինչպես դա արեց Չժոու Լեյը:

Բայց Չժոու Լեյն այդ պատճառով չհեռացավ: Նրան հաջողվեց փախչել միայն այն բանից հետո, երբ հանձնել էր մոր թողած լրացուցիչ աշխատավարձը: Նրա մայրը մի դժբախտ անդրծովյան չինուհի էր: Շատ վաղուց հո-

րեղբայր Չժոուն բերել էր նրան իր հետ, եւ նա ծնել էր Չժոու Լեյին: Բայց հիմա նա արդեն վերադարձել էր իր երկիր: Խարխուլ տունը, որում ներկայումս ապրում էին, Չժոու Լեյի մորից էր մնացել:

Այս օրերին աղքատները հույսը դնում էին տան քանդվելու եւ տեղափոխման վրա, որպեսզի հարստանան: Չժոու Լեյին որպես տան սեփականատեր ճանաչելու գրանցումը պահպանվել էր, բայց վճռվել էր, որ նա տան հետ որեւէ գործարք կատարել չէր կարող, եթե հեռանար:

Սյա Բինբինի ամբողջ ունեցածը մոր ձեռքերում էր: Նա այնպիսի բան չուներ, որ կարողանար թողնել, այնպես որ, ըստ էության, համեմատաբար ազատ էր: Միակ խնդիրն այն էր, որ չգիտեր, թե ուր գնա: Նա մտածել էր այդ մասին: Առանց սեփական գույքի, եթե ցանկանում էր առանձին կյանք վարել, կարող էր ապավինել միայն ինքն իրեն կամ որեւէ տղամարդու: Միայն այս երկու տարբերակն ուներ: Սակայն սեփական անձի վրա հույս դնելը չափազանց դժվար էր թվում: Ինչ վերաբերում է տղամարդուն ապավինելուն, նա արդեն... Այս մասին մտածելիս Սյա Բինբինը միշտ իրեն ինչոր չափով հիասթափված էր զգում:

Երբ բլիթներն ու սոյայի կաթը տուն բերեց, մայրն արդեն արթուն էր եւ բարձր տրամադրությամբ դիմեց նրան.

-Ո՞ւր էիր գնացել, թանկագինս: Ուշ ետ եկար: Արդեն սովից մեռնում եմ:

Նրա ճակատն էլ էր Սյա Բինբինի ճակատի պես քրտնել: Արդեն հագել էր պարարտ մարմինը գրկող մետաքսե ասեղնագործ մաքուր զգեստը:

Մի յուղաբլիթ վերցրեց եւ յուղոտ ձեռքերով ետ քաշվեց:

-Աստված իմ, քաղցր յուղաբլիթ:

-Գրողը տանի: Դու նույնիսկ յուղաբլիթի վրա բառախաղ ես անում: Էդքան մանր ես: Ի՞նչ ունեմ քեզ հետ կիսելու,- առարկեց Բինբինի մայրը:

-Օ, ես նկատի ունեմ, որ քաղցրը լավ է, քաղցրը լավ է: Մեղր եւ յուղ՝ լավ համադրություն է:

Սյա Բինբինը բացեց ծորակը եւ երեսը լվաց: Ջուրն արեւից գրեթե գոլացել էր: Այսօր անսովոր շոգ էր թվում: Վաղ առավոտից արդեն տապ էր: Նա թեթեւ հոգոց հանեց եւ մտածեց, թե ինչպիսի տանջանք է, որ ստիպված է այսօր դուրս գալ:

Հորեղբայր Չժոուն դուրս էր եկել սոյայի քաղցր կաթ բերելու: Կարճ ժամանակ անց նա պատրաստ էր աշխատանքի գնալու՝ ձեռքին գնումների պայուսակը: Հենց որ Սյա Բինբինը պատրաստվում էր սենյակ մտնել,

հորեղբայրն Չժոուն անսպասելիորեն վերադարձավ՝ ձեռքին նրա պատրաստած թեյը:

-Հը՞, Բինբին, ի՞նչ ես խոհանոցում կանգնած էդպես շշմած նայում: Լավ չե՞ս զգում:

-Մի քիչ,- չոր ծիծաղելով ասաց Սյա Բինբինը: Այդ ասելուն պես՝ զղջաց եւ ուզեց ավելացնել՝ «Մի քիչ... շոգում եմ»:

-Է՛յ, աղջի՛կ: Կարո՞ղ է ինչ որ մեկը հղիացրել է քեզ:

Սյա Բինբինն ապշած էր, բայց նրա թույլ զայրույթը շուտով անցավ: Պարզապես խոժոռված նայեց նրան: Հորեղբայր Չժոուն սահեց անցավ աղջկա մոտով:

-Հորեղբայր Չժոուն գիտե ինչ է տեղի ունենում:

Եվ ամեն ինչ իմացողի պես աչքով արեց:

-Դուրս եմ գալիս մի քիչ օդորակիչի մոտ,- հավելեց ինքնագոհ տոնով:

Մինչեւ թոշակի անցնելը հորեղբայր Չժոուն աշխատում էր մոտակայքում գտնվող Հրատարակչական ակադեմիայում՝ որպես պահակ:

3

Երբ Սյա Բինբինը սենյակ մտավ, տեսավ, որ մայրն արդեն պատրաստել է այն շորերը, որ ինքը պետք է հագներ դուրս գալու համար: Կարճթեւ վերնաշապիկ էր եւ կարճ տաբատ, որ հագել էր միջնակարգ դպրոցում սովորելիս, մի վեց տարի առաջ:

-Մայրիկ, սրանց հետ հագնելու կոշիկներ չունեմ: Ոչ սպիտակ, ոչ կապույտ չստերս էլ հետը չեն գնա:

-Մի՛ անհանգստանա: Քեզ համար կոշիկներ եմ ճարել:

Սյա Բինբինը մի հայացք գցեց մահճակալի տակ եւ տեսավ մի զույգ ճերմակ մարզակոշիկ՝ բաց կանաչ նախշերով: Երբեք չէր սպասի, որ մայրը կարող է դրանք պեղել հանել իր համար:

-Մամ, բա չէի՞ն ասել, որ մենք սեւ շոր պիտի հագնենք

-Էդքան հիմար մի՛ լինի: Սկզբում քեզ համար ընտրեցի հին կարմիրը: Բայց հիմա կրծքերդ մեծացել են, եւ արդեն դա քեզ չի սազի: Ինչո՞ւ անհանգստանալ հագնվելու համար: Կարծում են քեզ համար հեշտ է, դրա համար էլ համախմբվում են ու քեզ վախեցնում: Ես կարող եմ խոսել քո անունից: Ես չեմ մասնակցում նրանց ընտանիքի միջոցառումներին, բացի միայն թաղումներից: Մենք պետք է մասնակցենք: Հասկացա՞ր: Հիմա

դու մեծացել ես: Ստածիր այդ մասին: Ո՞վ է քո հանդեպ լավ վերաբերվել վերջին տարիներին: Քո այդ ծեր տատիկը բավականին չար է: Համառորեն հրաժարվում էր մեռնել: Եվ հիմա, երբ ջերմաստիճանն այսպես անտանելի է, բոլորիդ հավաքում է իր կողքին: Լավ է, էլի: Դե գնա, արագ, եւ հետդ հովանոց վերցրու: Երկու անգամ ավտոբուս պիտի փոխես: Երկար ճամփա է: Հա, մեկ էլ՝ ետ կգաս, երբ արդեն կերած կլինես:

Հերոսաբար դիմակայելով այրող արեւին՝ Սյա Բինբինը ճամփա ընկավ: Նա այդ նույն ճամփով անցել էր այդ տարի, երբ պապն էր մահացել, այնպես որ վտահ էր: Պապն ու տատը երկուսն էլ այդ տարի հեռացան, մեկը մյուսի ետեւից: Մեկը մահացել էր խոր ծմռանը, մյուսն, ահա, ամռան կեսին: Բայց պապի մահվան օրվա հետ համեմատած՝ Սյա Բինբինն այս անգամ մի տեսակ տխուր էր: Հազիվ կես տարի էր անցել, բայց արդեն հայրը չէր իրեն թաղման կանչում: Դա հոր ընկերուհին էր: Այդ անհեթեթ մանկամիտ կինը շարունակաբար հեկեկում էր հեռախոսի մեջ եւ ասում, որ Բինբինի տատն այնպիսի վհուկ է եղել, այս ու այն է արել: Նա նաեւ խնդրեց Բինբինին, որ իր հետ լինի թաղման ժամանակ, քանի որ նրա հայրը տանը չէ: Բինբինի մոր աչքում այդ կինն ամբողջովին «պախարակված լիրբ» էր եւ «իրեն երեւակայող»: Բինբինի մայրն ամբողջ գիշեր վատ խոսքեր ասաց այդ կնոջ մասին, որին իրենցից ոչ ոք չէր տեսել: Գիշերվա կեսին Սյա Բինբինը պարզորոշ լսեց, որ մայրն արագ խույս է տալիս հորեղբայր Չժոուի ճարպիկ հարձակումներից:

Սյա Բինբինը մտածեց, որ հայրն ու մայրն, ըստ էության, այդ առումով իրար շատ նման են: Նա պարզապես ցավում էր, որ ինքն այնքան անկարեւոր էր եւ անկարող՝ արգելք լինելու այդ մարդուն իր հոր անկողնում: Գիտեր, որ տխուր է միայն այն պատճառով, որ ոչ ընտանիքի անդամն էր իրեն տեղեկացրել թաղման մասին: Կամ գուցե տխուր էր, քանի որ դրանից հետո միշտ լինելու է ընտանիքից դուրս մեկը, որ իրեն տեղեկություններ է տալու իր ընտանիքի մասին:

Թաղման սրահը փոքր չէր, եւ մասնակիցների մեծ մասը չափազանց ուշադիր էր: Բոլորն զբաղված էին ամեն մեկն իր ձեւով մարդկանց ողջունելով, ասես դա հազվադեպ մի հավաքույթ էր: Հեռվում կախված էր տատիկի նկարը: Նկարում նա չարագուշակ ժպտում էր: Նրա դիմագծերը, որ ամենեւին բարեկամական չէին, ըստ էության գրեթե չարակամ էին: Բինբինի տատը չէր կարողանում հիշել ընտանիքի կրտսեր անդամներից բոլորի

անունները, եւ դժվար էր ասել՝ արդյո՞ք իսկապես շփոթում էր, թե՞ ձեւացնում էր: Նա հայտարարում էր՝ «Ձեզ ծնունդ տալն արդեն բավական էր»: Հետեւաբար չէր կարող բողոքել, որ իր զավակներն այժմ ցրված էին եւ սրտով իրարից բաժանված: Սյա գերդաստանը կարելի էր թվով մեծ համարել: Առնվազն քսանից ավելի մարդ կար, որոնք տատիկի շառավիղներն էին: Նրանց բացարձակ անմիաբանության պատճառը հավանաբար այդքան շատ բաժանումներն էին: Սյա Բինբինը միայն աղոտ մանկական տպավորություններ ուներ այդ մարդկանց մասին: Այդ հորեղբայրների ու հորաքույրերի համար դրանք լավ տպավորություններ էին թվում, բայց մի բան չէր լավ, որ նրանք զգալիորեն տարիք էին առել: Բինբինը մտածում էր՝ որքան զվարճալի է, թե ինչպես կարող են այդքան շատ միայնակ ծեր մարդիկ շրջապատված լինել երեխաների ու թոռների այդպիսի ցեղախմբով:

Երբ Բինբինն այլեւս չէր կարողանում կանգնել, պատահաբար մի աթոռ գտավ, որի վրա հանգրվանեց նրա մարմնի անհարմար մասը: Լուսամուտի անդրադարձում տեսավ իր փոքր-ինչ հուզված ու տանջահար դեմքը եւ մարմինը՝ զարդարված վեց տարի առաջվա այդ հնամաշ հանդերձանքով, որ այժմ հավակնում էր իրենը լինել:

Սյա Բինբինը հեռավորության վրա ինտուիցիայով ճանաչեց արագաշարժ մի կնոջ, որը նրան մի տեսակ կասկածելի թվաց: Նա ճարպկորեն մոտենում, զրուցում էր սրահում գտնվող ամեն մեկի հետ, ասես բոլորին գիտեր: Բայց ավելի տարօրինակն այն էր, որ բոլորն իրենց այնպես էին պահում, ասես գիտեին նրան: Նա բավականին գրավիչ էր, եւ նրա երբեմն հստակ, երբեմն թույլ ձայնը շատ ծանոթ էր հնչում:

-Օ՛, սա Բինբինը չէ՞: Դու իսկ եւ իսկ այնպիսին ես, ինչպիսին քո նկարում: Նույնիսկ շորերդ են... նույնը,- ասաց ու խոսելիս բերանը բռնեց:- Բինբին, կուզեի՞ր հանդիպել հորդ միավորման տնօրենի հետ: Աստված իմ, երբ հայրդ Ճանհայում չէ, ես այնքան զբաղված եմ, բայց կարող եմ դա կազմակերպել: Հենց նոր նրան տեսա:

-Դուք արդեն հանդիպել եք նրան, այնպես որ կարիք չկա, որ ես հանդիպեմ,- մեղմ տոնով ասաց Սյա Բինբինը:

«Դու ներկայացել ես հորս փոխարեն, ե՞ս ում փոխարեն եմ ներկայանալու»,- մտածեց Սյա Բինբինը:

Այդ կինն ինքն իրեն քրթմնջում էր, երբ մոտեցավ, որ նստի Սյա Բինբինի կողքին:

-Բինբին,- ասաց զսպված քմծիծաղով եւ շարունակեց:- Ես հենց նոր եմ

պտտվել սենյակում եւ նկատել եմ, որ դու երեւի միակն ես քո ընտանիքում, որ վերեւի ծուռ ատամներ չունի... Համաձայն չե՞ս... Հը՞... Մի բան ասա... Հը՞...

Հանկարծ մի սուր հայացք ուղիղ դիմացից նայեց Բինբինին: Միայն այդ ժամանակ Սյա Բինբինը հասկացավ, որ նստած է իր հորաքրոջ եւ կրտսեր քրոջ դիմաց: Բայց սա այն հորաքույրը չէր, որին հիշում էր, երբ փոքր էր: Սա նոր հորաքույր էր: Բինբինը նրա նկարը տեսել էր հարսանեկան հրավիրատոմսի վրա: Նրա կողքին գտնվող աղջիկը դեռ երիտասարդ էր: Առաջին անգամ էր Բինբինը նրան տեսնում: Նա ատամներին պողպատե շրջանակներ էր կրում:

Բինբինը մտաբերեց, որ շատ վաղուց ինքը նույնպես հնազանդ նստում էր մոր կողքին, երբ Սյա գերդաստանի հարսանիքներին կամ թաղումներին էին գնում: Այդ ժամանակ էլ էր իր հայրը զբաղված, եւ ինքն ու մայրն ուղղակիորեն կարող էին ներկայացնել հորը: Երբ ծնողների միջեւ խնդիրներ ծագեցին, եւ նրանց ամուսնական հարաբերությունները վատթարացան, Բինբինը երկար ժամանակ այդպիսի իրադարձություններին մենակ էր մասնակցում: Այդպես է մինչեւ այսօր: Հիմա նա նստել էր մեկ ուրիշի կողքին... եւ թվում էր ոչ ոք չի առարկում: Գուցե ինքը չափազանց զգայուն էր: Հետեւելով այդ աղջկան՝ Սյա Բինբինը շուրջը նայեց եւ իրոք հեռվում մեկ այլ աղջկա նկատեց: Սա այն աղջիկն էր, որին ինքը պատրաստ էր ընդունել որպես իր կրտսեր քրոջ՝ մանկությունից ի վեր: Թեեւ նրա ատամները գեղեցիկ չէին, Սյա Բինբինը մտածեց, որ գոնե նա կարող էր հասկանալ իրեն: Ուղղակի հույս ուներ, որ իր կրտսեր քույրն իրեն երբեք չի նմանվի:

4

Երիտասարդ սերնդի ներկայացուցիչներից միայն Սյա Բինբինը ծուռ ատամներ չուներ: Դա նրանից էր, որ իր հոր սերնդում միայն իր հայրը չուներ ծուռ ատամներ:

Չժոու Լեյի ատամները թեթեւակի ծուռ էին, բայց ոչ հորեղբայր Չժոուինը: Դա, հավանաբար, Չժոու Լեյի առեղծվածային մորից ժառանգած գեների պատճառով էր: Սյա Բինբինի միտքն անջատվել էր: Դրա համար էլ, երբ տուն վերադարձավ եւ զեկուցեց թշնամու ճամբարում կատարվող գործողությունների մասին, ուղղակի արժանացավ մոր կշտամբանքին:

- Չե՞ս կարծում, որ անօգուտ ես: Ոչ մի բան չես կարողանում հիշել: Իզուր ժամանակ եմ կորցրել էսքան տարի քեզ մեծացնելով: Հայրդ ու էդ կինը ամուսնական վկայական հանե՞լ էին:

-Վստահ չեմ: Ասում էին, որ նրա ընկերուհին է:

-Ե՞րբ են ծրագրել ամուսնանալ: Պապիդ հին տա՞նն է դա լինելու: Թե՞ նոր տուն են պատրաստվում գնել:

-Չգիտեմ: Լսեցի, որ սպասում են տեղափոխման՝ հին տունը քանդելուց հետո:

-Քանդել ու տեղափոխվե՞լ: Ա՛յ թե կին է: Երեւում է էս անգամ հորդ ճանկն է գցել: Ուրիշ էլ ի՞նչ ասաց քեզ:

-Էլ ոչ մի բան: Միայն փորձում էր հետս մտերմանալ եւ ձեռքս էր բռնում:

-Հասկանում եմ: Ուրեմն իրոք վճռել է տպավորություն գործել եւ բոլորին տեղյակ պահել, որ հաղթելու է: Ասեմ քեզ, Բինբին, դու դեռ պետք է գնաս հորդ մոտ, որպեսզի ավելի շատ բան իմանաս: Չգիտե՞ս, որ քո անունը կա էդ տան հետ կապված գործերում: Եթե դու չհամաձայնես, նրանք ոչինչ չեն կարողանա անել: Հենց կարողանաս, էլի գնա: Հայրդ ե՞րբ է ետ գալու:

-Մամ, փորս ցավում է:

-Իմ էլ գլուխն է ցավում: Քեզ նայիր: Ոչ մի բան չես կարողանում ճիշտ անել: Երբ մանկապարտեզի դաստիարակչուհի էիր, երեխեքի ծնողները վրադ բողոք էին գրել:

Երբ քարտուղարուհի էիր աշխատում, տնօրենիդ թղթերն էիր կորցրել: Ասա, թե ինչ մի լավ բանի ես ընդունակ: Միայն պարապ թրեւ գալ ու ձրիակերությամբ զբաղվել գիտես: Դեռ պետք է օգնեմ քեզ, որ աշխատանք գտնես: Դու չես կարող էսպես շարունակել: Բեռ ես դարձել ինձ համար:

Լսիր, Բինբին, եթե հայրդ քեզ ակնարկի տունը վաճառելու մասին, նրանից երեք հարյուր հազար յուան ուզիր: Ոչ մի մանրադրամ պակաս, հասկանո՞ւմ ես: Մի չնչին բան էլ պակաս եղավ՝ էս տնից դուրս կգաս: Իսկ էն տունը հատկացվեց մորական պապիդ աշխատանքային կազմակերպության կողմից, երբ ես ամուսնացա հորդ հետ: Դա իմն է: Հասկանո՞ւմ ես:

-Հա, երեք հարյուր հազար:

Երբ հորեղբայր Չժոուն վերադարձավ, ձեռքին մանր գետնանուշով լի մի տոպրակ կար: Դեմքին սոյայի հատիկների մեծության քրտինքի կաթիլներ էին հայտնվում եւ կնճիռների վրայով գլորվում մինչեւ պարանոցը:

-Տե՛ր Աստված: Եղանակի տեսությունն ասում է, որ էսօր 40 աստիճան է ըստ Ցելսիուսի: Առաջ էսքան շոգ երբեք չի եղել: Ծոգե՞լ եք:

Բինբինի մայրը քթի վրայի քրտինքն էր սրբում:

-Դատարկ բաներ մի՛ խոսիր: Էս ի՞նչ ես գնել: Իրոք որ շատակերի մեկն ես:

Նա վեր կացավ եւ հորեղբայր Չժոուի ձեռքի պոլիէթիլենե տոպրակից մի քանի գետնանուշ վերցրեց ու սկսեց ուտել:

-Էսօր Չժոու Լեյն էր եկել:

Հորեղբայր Չժոուն մի հայացք գցեց Բինբինի կողմը եւ խոսելիս հյուրասիրեց Բինբինի մորը:

-Ի՞նչ է ուզում,- հարցրեց Բինբինի մայրը:

-Չի՞ կարող ուղղակի գալ ու ինձ տեսնել: Հը՞: Դու աղջկանդ մոտդ ես պահում, ես չե՞մ կարող տղայիս տեսնել: Հը՞մ:

-Ձենդ կտրի՛ր: Էդ հիմար բաները մի՛ ասա ինձ: Կարծում ես քեզ չե՞մ հասկանում: Փո՞ղ է տվել քեզ: Ես էլ ասում էի՝ ինչո՞ւ էիր հանկարծ էդքան ուրախացել: Տո՛ւր տեսնեմ:

Բինբինի մայրը սովորականի պես սառը հայացքով նայեց հորեղբայր Չժոուին, հետո շրջվեց Սյա Բինբինի կողմն ու ասաց.

-Գնա ուտելիք բեր: Ուտելու ժամն է:

Սյա Բինբինը ոտքի ելավ եւ քստքստացնելով գնաց դեպի խոհանոց: Նա ժամանակ առ ժամանակ զզվանք էր զգում, հատկապես երբ տեսնում էր այդ սեղանը՝ միս ու բանջարեղենով խառն ափսեներով լի: Դեմքը յուղոտ էր եւ լպրծուն, եւ ձեռքերի վրա ծակոտիներն այնքան էին լայնացել, որ մաշկը բորբոքվել էր: Նա պատրաստակամ, դժվարությամբ բարձրացրեց թեյամանը եւ մի քիչ ջուր լցրեց լվացարանի մեջ:

-Չժոու Լեյն ասաց, որ գնում է Դունգուան...,- հայտարարեց հորեղբայր Չժոուն:

-Որ ի՞նչ անի: Արտագնա աշխատո՞ղ դառնա: Խելքը թռցրել է:

-Բարեւում էր քեզ, քեզ ու Բինբինին:

-Չէ, դեռ խիղճ ունի:

-Բա չէ՞ր ուզում բանակում ծառայել կամ էդպիսի մի բան, ու ես չէի՞ օգնում իրեն: Չնայած մայրն օտարերկրացի է, բայց ի՞նչ: Նա Չժոու Լեյի մասին չի հոգում: Եթե էդ տղան խելացի լիներ, ավելի շատ հոգ կտաներ մեր մասին...

Սյա Բինբինը ենթագիտակցորեն փակեց սառը ջրի ծորակը: Ցած քաշեց սրբիչը, զգուշությամբ դատարկեց ջուրը եւ հենվեց լվացարանին: Բինբի՛ն... Բինբի՛ն:

Սյա Բինբինը հանկարծ շրջվեց եւ անսպասելիորեն տեսավ, որ մայրը կանգնած է իր ետեւում:

-Գնա ուրիշ տաբատ բեր: Էս մեկը կեղտոտել ես:

-Վայ:

Միայն այդ պահին Բինբինը հանկարծ սթափվեց:

Բինբինի մայրը եւ հորեղբայր Չժոուն երկուսն էլ բավականին ուրախ էին ընթրիքի ժամանակ: Այս լուռ համաձայնությունը նրանց միջեւ, որ նկատել էր Սյա Բինբինը, իրականում ճնշող էր: Բայց Բինբինը միշտ զգում էր՝ դա նրանից է, որ նրանք շատ էին իրար նման: Ամենեւին հնարավոր չէր պատկերացնել, թե մի օր նրանք հանկարծ կվիճեն փողի կամ մեկ այլ բանի պատճառով:

Իր կապերի միջոցով հորեղբայր Չժոուն Բինբինի համար խանութում օգնականի գործ էր գտել, եւ պայմանավորվել էին, որ Բինբինն աշխատանքի կանցնի աշնանը: Նա բավականին օգնել էր Բինբինին: Անկեղծ ասած, նա Բինբինին շատ լավ էր վերաբերվում: Սյա Բինբինը գիտեր դա: Թեեւ նա կարող էր խիստ ու դաժան լինել, բայց լիակատար սրիկա չէր: Նրանց միջեւ չէին կարող լինել ոչ հոր եւ դստեր հարաբերություններ, ոչ էլ սերունդների ընկերական հարաբերություններ: Այդ ամենը մի փոքր ավելի նյարդայնացնող էր, քան օտարների հարաբերությունը, բայց՝ առանց թշնամական չարակամության: Եվ սակայն, Սյա Բինբինը չէր կարող ասել, թե ինչպիսի հարաբերություններ էին դրանք:

Կեսգիշերից հետո ժամացույցը մեկ անգամ խփեց: Սյա Բինբինն, ինչպես միշտ, ցավ զգաց սրտում: Նա այլեւս անկարող էր խուսափել այսպիսի սպասումից ու տանջանքից: Վերեւում պտտվող հովհարի ձայնի եւ իր մարմնին շփվող ամառային քնագորգի ձայնի հետ նա նորից լսեց, թե ինչպես է հորեղբայր Չժոուի ձեռքն ագահորեն մղվում դեպի իր մոր մարմինը: Լսում էր ինչպես է մայրը կեղծ, ձեւական մերժում նրան: Օծանելիքի բույրի հետ խառնված՝ այդ մերժումը գրեթե լուռ սիրախաղ էր: Պատուհանից դուրս լսվում էր ծղրիդների բարձր ձայնը...

Նա միայն կարող էր կամաց շնչել, որովհետեւ ամեն մի թեթեւ շարժում կարող էր լսելի լինել հորեղբայր Չժոուի եւ իր մոր համար: Երբեմն չէր էլ ուզում, որ նրանք դադարեցնեն, թեեւ, երբ պատկերացնում էր նրանց դեմ-

քը, միայն ընդվզում էր: Թշնամի են: Ինչ վերաբերում է նրանց վերաբերմունքին իր հանդեպ, ինքը ոչինչ չէր կարող ասել:

Չժոու Լեյի հեռանալուց հետո Բինբինն այսպիսի բաների էր ականատես լինում գիշերները: Նա դեռ հիշում էր՝ երբ առաջին անգամ նայեց Չժոու Լեյի աչքերին: Դա նույնպես գիշերն էր: Այդ նույն խարխուլ բազմոցին նա այնպես նյարդայնորեն էր շրջում գլուխը: Նույնիսկ նրա մոլորված մազափունջը անհարմար ձեւով ոլորվել էր:

Նա իրեն էր նայում: Առաջին անգամն էր, որ ինքը տեսավ ցանկալից այդ հայացքը եւ հանկարծակիի եկավ, թեեւ միաժամանակ տարօրինակ կերպով ջերմացել էր: Սյա Բինբինն զգաց, որ, անկախ ամեն ինչից, աշխարհում չի լինի ոչ ոք, որ մեկ էլ այսպիսի վառ ու ըմբռնող հայացքով կնայի իրեն: Այս զգացումը կյանքում միայն մեկ անգամ կարող էր լինել, եւ առաջին անգամը նաեւ միակ անգամը կլիներ: Եվ երբ նա դրանից հետո նայեց իրեն, դա արդեն նման չէր այն առաջին անգամվան: Թեեւ ինքն այդ ժամանակ ընդամենը տասներեք, իսկ Չժոու Լեյը՝ տասնհինգ տարեկան էր:

Սկզբում կարծում էր, թե Չժոու Լեյը միակ մարդն է ընտանիքում, որ կարող է իր հետ լավ վերաբերվել: Նա եւս մի անգամ այդպես ասաց իրեն: Բայց ի վերջո նա առաջինն էր, որ հեռացավ: Գուցե ճիշտ էր:

Ինչպե՞ս էր ուզում մեռնել այդ օրը: Սյա Բինբինը հաճախ այսպես էր մտածում եւ որքան մտածում էր այսպես, այնքան ավելի հուսահատ էր դառնում: Որովայնի ստորին մասում դեռ բութ ցավեր կային: Մի տեսակ աննկարագրելի տկարություն էր զգում, կարծես ինչ-որ բան որոշել էր փախչել իր մարմնից: Սկզբում դա եղել էր իր մի մասը, բայց հիմա որոշել էր երես թեքել իրենից:

5

Սյա Բինբինը ջանք թափեց անկողնուց վեր կենալ միայն այն ժամանակ, երբ հորից զանգ ստացավ: Նույնիսկ վաղ առավոտյան շոգն անտանելի էր: Նա վերցրեց հեռախոսն ու կաղալով գնաց խոհանոց... Պետք է մաքրեր պողպատալարե խծուծը, ջուր եռացներ, լվացվեր եւ թեյ պատրաստեր: Դեմքը թաղելով խոնավ, տաք սրբիչի մեջ՝ Սյա Բինբինն զգաց, որ հիմա կհալվի: Տաք գոլորշին ասես այրեց նրան:

Առավոտյան վաղ ժամերին գոնե նա իր գլխի տերն էր: Ինչ ուզեր, կա-

րող էր անել նրանց առջեւ: Նրանք երանելիորեն անտեղյակ էին, եւ թվում էր ոչ մի զգացմունք չունեին իր հանդեպ, ու հոգներն էլ չէր՝ կապրեր ինքը թե կմեռներ: Չկար մայր-դուստր հարաբերություն, իսկ հորեղբայր Չժոուն այնպիսի տղամարդ չէր, որի հետ ստիպված լիներ հաշտ ապրել:

Մինչ պատրաստվում էր դուրս գալ նախաճաշելու, Բինբինի մայրը վեր կացավ եւ քունը գլուխը՝ քայլեց դեպի զուգարան: Ինչ-որ բան նկատելով՝ անմիջապես գոռաց Բինբինի վրա.

-Քե՛զ նայիր, քե՛զ նայիր: Զզվելի է: Քե՛զ նայիր հապա, հատակն ամբողջովին...

Սյա Բինբինը տաբատը վեր բարձրացրեց, ապա անմիջապես կռացավ եւ սկսեց հատակը սրբել:

-Էդ փալասը սեղանը սրբելու համար է: Տեր Աստված, առավոտ կանուխ ի՞նչ ես մտածում: Արդեն քսանքանի տարեկան ես: Ամոթ քեզ...

Սյա Բինբինը ժպտաց եւ գլուխը բարձրացրեց:

-Մամ, հայրիկն ասաց, որ ինձ 300 հազար յուան կտա:

Մայրն անակնկալի եկավ: Քիչ անց հավաքեց մազերը, շրջվեց եւ գնաց զուգարան:

-Եթե ավելի շուտ իմանայի, ավելի շատ կուզեի,- ասաց:

Սյա Բինբինը փութեռանդ մաքրեց փալասը:

Արյունը հոսեց նրա ձեռքերի վրայով եւ սկսեց ցած կաթել:

6

Սյա Բինբինի հայրն ամուսնանում էր: Նա հոր տանը երկու նոր բարձ եւ նոր ու գեղեցիկ փափուկ ծածկոց տեսավ: Հանկարծ Սյա Բինբինի մեջ ցանկություն արթնացավ քնել նրանց մահճակալի կողքին: Գոհ կլիներ պառկել հատակին՝ նրանց մահճակալի կողքին: Բայց ոչ հոտին էր սովոր, ոչ էլ տեղին էր ծանոթ:

Սյա Բինբինն սկզբնապես համաձայնել էր հոր հետ հանդիպել բանկում, բայց հայրը նրան առաջարկեց նախ իրենց տուն գալ: Երբ մտավ տուն, հայրն արդեն կոկիկ հագնված էր: Կոշիկները դժվարությամբ հագավ մի անհարմար թիով: Սյա Բինբինը հանկարծ քիչ մնաց լաց լինի: Հիշեց այն օրերը, երբ ինքը մանկական շորեր էր դեռ հագնում եւ եկել էր հոր մոտ փող ուզելու: Երբ արդեն պիտի գնար, հայրը հարցրեց, թե ավտոբուսի փող ունի՞: Ինքը գլուխը տարուբերեց: Հայրը գլուխը կախեց եւ հուսա-

հատ շարժումներով փորձեց դրամապանակում, տաբատի ետեւի գրպանում եւ ծոցագրպանում մանրադրամ գտնել: Պարզ երեւում էր, որ ծխախոտի տուփի կողքին 100 յուանանոց գորշ թղթադրամներ եւ դեղին 50 յուանանոցներ կային: Շատ լավ տեսանելի էին: Բայց Բինբինի հայրը, սաստիկ քրտնած, որոշել էր տասը յուանանոց գտնել նրա համար:

Այն ժամանակ էլ էր ուզում լաց լինել, ինչպես որ հիմա, քանի որ իսկապես չէր կարող հաստատ ասել, թե արդյո՞ք իր առջեւ կանգնած այդ մարդն իրեն սիրում էր:

Հայրը Սյա Բինբինին հեռախոսով ասել էր, որ սա վերջին անգամն է եւ որ այսուհետ այլեւս իրենից փող չպետք է խնդրի: Այդ փողը նաեւ իր՝ Սյա Բինբինի հարսանիքի համար էր, եւ հիմա հայրն ինքն էր պատրաստվում ամուսնանալ, այնպես որ առաջվա պես հարուստ չէ:

Սյա Բինբինը պատասխանեց.

-Իհարկե:

Հայրը հարցրեց.

-Մայրդ էր, չէ՞, քեզ ստիպել, որ ինձնից փող ուզես:

Սյա Բինբինն ասաց.

-Հա:

Հայրն ասաց.

-Գիտեմ, որ դու չէիր անի դա:

Սյա Բինբինը պատասխանեց.

-... Իրականում դա ինձ համար էր:

Հայրն ասաց.

-Լավ: Երբ ժամանակ ունենաս, արի:

Սյա Բինբինն այդ ժամանակ, երբ հեռախոսով խոսում էին, մտածեց, որ իրենք երկուսով հավանաբար այսպես չէին զրուցի, եթե հանդիպեին երես առ երես: Բայց նա միայն ենթադրում էր:

Նա տեսավ, թե հայրն ինչպես է քայլում իր կողմը՝ դեմքի անորոշ արտահայտությամբ: Հանկարծ ձեռքերն առաջ մեկնեց, որպեսզի պահի իրեն:

-Բինբին, դու լա՞վ ես: Էս ի՞նչ արյուն է վրադ:

-Օ... ոչինչ... լավ է... Գնանք բանկ, որ կարողանաս ետ գնալ տուն ու հանգստանալ:

7

Այն օրը, երբ Սյա Բինբինը գիտակցության եկավ, Դունգուանում կայ-ծակի հարվածից մի մարդ էր մահացել: Նա այդ լուրը լսեց հիվանդանոցի մահճակալին պառկած, այն ռադիոյով, որ մայրն էր բերել իր համար, եւ չէր կարող չանհանգստանալ:

Մայրն իրեն թեթեւացած էր զգում, որ Բինբինն ընկել էր միայն փողը վերցնելուց եւ տուն վերադառնալուց հետո: Ի վերջո, նա չէր կարող իրեն թույլ տալ այդ մարդու մոտ նվաստանալ: Սակայն հետագայում մտածում էր, որ դա կարեւոր չէ, քանի որ ի վերջո բոլորովին այլ ժամանակաշրջան էր: Միակ բանը, որ հույս ուներ անել, դա Բինբինին ամուսնացնելն էր, հենց որ նա դուրս գրվեր հիվանդանոցից: Հորեղբայր Չժոուն առաջարկել էր գտնել գյուղից մեկին, որը հող եւ տուն ունի: Քաղաքում մարդիկ խցկված՝ նեղվածքի մեջ են: Եվ ինչքան ավելի նեղվածք է լինում, այնքան ավելի են աղքատանում: Ավելին, եթե հաշվի ենք առնում Սյա Բինբինի վի-ճակը, պարզ է, որ մուրացկանները չեն կարող ընտրել:

Ինչ վերաբերում է Սյա Բինբինի ինտիմ մասերից հանված պողպատա-լարե խծուծին, հորեղբայր Չժոուն Բինբինի մորը թաքուն բացատրում էր, որ երեւի դա նրանից է, որ Բինբինը չափազանց գրգռված է եղել: Սյա Բին-բինն այդ նույն բանը հետագայում մի քանի անգամ էլ լսեց, բայց գիտեր, որ հորեղբայր Չժոուն միշտ բարի մտադրություններ ունի:

ՎԱՆ ՎԵՅԼՅԱՆ

ԱՂԻ ՁԱՅՆԸ

Երեկոյան ժամը չորսն էր, երբ դուրս եկա գործարանից եւ նայեցի աղի պայծառ, ճերմակ հարթություններին, որ սփռված էին շուրջբոլորը, ուր աչքդ կտրեր: Լացս գալիս էր: Վերջին ժամանակներս ավելի ու ավելի հաճախ էի այդ ցանկությունն ունենում: Նոր էի հեռախոսազանգ ստացել Դինից: Ասաց, որ Տիբեթ է գնալու եւ մեր կողմերով է անցնելու: Ուզում էր ինձ տեսնել: Երբեք ոչ ոք հատուկ այցի չէր եկել այս կողմերն՝ ինձ տեսնելու: Բոլորն ինչ-որ գործով տեղ գնալիս էին միայն կարճ ժամանակով այցելում: Վաղուց սովորել էի դրան: Անգամ եթե պարզապես անցնում էին այս տարածքով, բավականին դժվար էր այստեղ: Սոտեցա լաբորատորիայի դռան առջեւի աստիճաններին եւ նստեցի: Լսեցի, թե ինչպես է տանիքի բարձրախոսն ամենայն մանրամասնությամբ հաղորդում անվտանգության կանոնները: Սյա Լինի ձայնն այլեւս այնքան հաճելի չէր, ինչպես մեր առաջին հանդիպման ժամանակ: Այն կոշտ էր ու կոպիտ, ինչպես երբ կռվում էինք խոհանոցում:

Երբ Սյա Լինը հայտարարում էր այդ ամենը, չէի կարող ասել, թե ինչ տրամադրություն ունի: Չնայած միջադեպից արդեն մեկ ամիս էր անցել, բայց դեռ ի վիճակի չէի հաշտվել դրա հետ: Նախկին հարբեցողի նման՝ ընդհանրապես դադարեցրել էի խմելը: Դա չի նշանակում, թե նոր էջից էի սկսել եւ սեփական կամքով էի խմելը թողել. ավելի շուտ՝ չէի համարձակվում դիպչել շշին, քանի որ ամեն անգամ շիշը ձեռքս վերցնելիս հիշում էի Չժաոյի դեմքը: Այն երեկո մենք չափից դուրս շատ էինք խմել, եւ Չժաոն ընկել էր աղի լիճը: Երբ Չժաոյին գտան, նրա դեմքն ամբողջովին պատված էր աղի նստվածքից առաջացած ծաղկանախշերով, իսկ ականախնձորները բարակ սպիտակ շերտով էին ծածկված, ասես աղն ինքը կյանք էր առել: Հենց միայն մի հայացք գցելուց հետո ետ տվեցի նախորդ գիշերվա ամբողջ խմածս: Այն այրեց ներսս ամբողջությամբ: Փսխուքս դանդաղ ներծծվելով իջնում էր աղի գետնի խորքը՝ ստեղծելով գարշելի փոքրիկ մի ավազան, որ նման էր առասպելական արտառոց հրեշի սարսափելիորեն լայն բացված երախի: Չհամարձակվեցի մեկ անգամ էլ նայել՝ վախենալով, որ այդ գազանը կցատկի եւ կուլ կտա ինձ:

Հիմա Դինն ուզում էր այցի գալ ինձ: Մի տեսակ հուզախառն ոգեւորությամբ նա ուզում էր տեսնել առասպելական աղի լիճը: Նայելով շուրջս սփռված կուրացուցիչ ճերմակությանը՝ ոչ մի հրաշալի բան չէի տեսնում այդտեղ: Իհարկե, դեռ ուրախ էի, որ նորից կտեսնեմ Դինին այդքան տարիներ անց: Նա իմ դասընկերն էր ավագ դպրոցում: Մեզնից ոչ մեկը քննությունները կարգին չէր հանձնում: Դրա համար էլ ուսուցիչը դասարանում մեզ վերջին շարքում էր նստեցնում: Մենք թաքնվում էինք այդտեղ դասերի ժամանակ եւ միշտ մոռացված էինք: Քանի հիշեցի, ասեմ, որ իմ անկումն սկսվել է այդ ժամանակվանից: Դինն ավելի լավ բնավորություն ուներ, քան ես: Նա երբեք ցածր ինքնագնահատական չուներ եւ լուրջ չէր ընդունում, երբ իր հանդեպ սառն ու անտարբեր էին լինում: Դասարանում, եթե չէր առանձնանում բոլորից, ապա ինչ-որ բան էր նկարում: Հիշում եմ՝ մի անգամ կիսադեմից նկարեց մեր դասընկերուհիներից մեկին, եւ շատ նման ստացվեց: Ցավոք, մոռացել եմ այդ աղջկա անունը: Դինը պետք է որ թաքուն համակրանք ունենար նրա հանդեպ: Երբ նա նկարում էր, ես մի կողմ քաշված՝ թաքուն երգի բառեր էի հորինում: Քիչումիչ գիտեի երաժշտական նոտագրության համակարգը եւ մտքիս մեջ մեղեդի էի դնդնում: Ապա համապատասխան արտահայտություններ էի փնտրում՝ հաճախ գրելով միայն մեկ կամ երկու տող մինչեւ դասի ավարտը: Ապա բոլորն աղմկում էին, դեսուդեն վազվզում, եւ ստիպված էի ավարտել իմ շարադրանքը: Դրա համար էլ ծգտում էի, որ դասարանը խաղաղ ու անաղմուկ լիներ:

Շատ տարիներ անց, աղի այս շերտերի լայնածավալ տարածության մեջ, հիմա արդեն իմ օրն ու գիշերն անցնում են խաղաղ ու հանդարտ: Բայցեւայնպես, երգի ոչ մի տող չեմ գրել: Ճակատագրով էր այդպես վիճակված: Երբ բացահայտեցի, որ իմ ներքին էության մեջ դույզն-ինչ ներդաշնակություն չկա, սկսեցի չափից դուրս շատ խմել: Չժառն էր, որ ինձ տարավ այդ ճանապարհով: Ամենաուշ ժամին անգամ բավական է միայն թակեր պատուհանս, եւ ես շորերս հագնելով՝ դուրս էի վազում նրա ետեւից: Խմում էինք գարու գինի՝ տասը յուանանոց շշերով, սովորաբար ոչինչ չուտելով: Ցուրաքանչյուրս մեկ շիշ էինք վերցնում, զարկում իրար ու խմում միասին, եւ հենց որ շշերը դատարկվում էին, սովորաբար հեռանում էինք: Ես միշտ զարմանում էի, երբ հաջորդ օրն ինձ գտնում էի տանը, անկողնում պառկած: Երբեք չէի կարողանում հիշել, թե ինչպես եմ տուն հասել, բայց կոշիկներս խնամքով դրված էին լինում մահճակալիս կողքին՝ ծայրերը դեպի դուրս, ինչպես նավահանգստում նավարկության կազմ ու

պատրաստ՝ իրար ուղեկցող ռազմանավեր: Սկզբում կարծում էի, թե Սյա Լինն է դա անում: Բայց հետո պարզեցի, որ նույնիսկ երբ նա ծնողների տուն էր գնացած լինում, կոշիկներս էլի նույն կերպ խնամքով դրված էին լինում մահճակալիս մոտ: Սա միակ բանն էր, որ ինձ ստիպում էր հավատալ ուրիշներին, երբ ասում էին, թե երբեք չեմ կարող հարբել: Իրականում վաղուց էի հարբում, պարզապես ոչ ուրիշները, ոչ ինքս չէինք կարող ասել, թե ինչպես: Երբեմն այդպես մտածելը սարսափեցնում էր ինձ, ասես մեկ այլ մարդ կար իմ ներսում, իսկ իմ իսկական եսը պարզապես ապրում էր այդ էության փոխարեն: Երբ այս եսը կորցնում էր գիտակցությունը, այն մյուս էությունը գալիս եւ վերահսկում էր իմ կյանքը:

Չէի խմում այլեւս, բայց դրանից կյանքս չէր բարելավվում: Իմ եւ Սյա Լինի միջեւ սառը պատերազմն ավելի ու ավելի անտանելի էր դառնում: Հաճախ անկողնում կիսապառկած՝ զայրացած նայում էինք մեկմեկու, վիճում ամեն հասարակ բանի պատճառով, ապա երկուսս էլ ընկնում էինք ապշահար մի վիճակի մեջ՝ ճաշասենյակում հեռուստացույցը դեռ միացրած թողած, որի ձայնը դատարկ էր ու աննպատակ, ինչպես մեր կյանքը: Հյուրասենյակում, սակայն, հազվադեպ էինք կռվում, քանի որ երկուսս էլ հեռուստացույց էինք դիտում: Առաջ, երբ խմում էի, երբեք չէի անհանգստանում քնելու համար: Մի անգամ քնեցի ամբողջ օրը՝ առավոտից երեկո: Բայց խմելը թողնելուց հետո անքնություն ձեռք բերեցի: Անկախ նրանից, թե օրվա ընթացքում որքան հոգնած ու տանջված կլինեի, գիշերը կարողանում էի քնել միայն անկողնում մի քանի ժամ այս ու այն կողմ պտտվելուց հետո: Մի երեկո այլեւս չկարողացա դիմանալ: Լոգարանում բնական կարիքներս հոգալուց հետո մտա խոհանոց եւ դատարկեցի մի շիշ խոհանոցային գինի, ապա պառկեցի մահճակալին եւ քնեցի մշուշի մեջ: Առավոտյան արթնացա՝ մղձավանջից ցնցված ու ահաբեկված: Երազումս Չժաոն կանգնած էր աղի հարթությունների վրա, օդում թրթռում էին ձյան փաթիլներ, աշխարհը ճերմակ ու լայնարձակ մի տարածություն էր՝ ներթափանցված սուր, ծակող սառնամանիքով: «Ողջությունդ, եղբայր»,- կանչում էր նա: Աղի՞, թե՞ ձյան ճերմակ շերտերը մաքրվեցին նրա դեմքից՝ ի ցույց հանելով նեխած մի սեւություն: Ամբողջ մի շաբաթ ուտել չէի կարողանում, հոգուս խորքում տանջալից ցավ էր: Չցանկանալով այլեւս մղձավանջներ տեսնել՝ գերադասեցի տառապել անքնությունից:

Մեկ էլ ասեմ. Դինը գալիս էր ինձ տեսնելու: Եվ ես ուրախ էի: Ու որքան շատ էի մտածում այդ մասին, այնքան ավելի երջանիկ էի ինձ զգում: Որո-

շեցի մի քանի ազատ օր վերցնել ու մնալ քաղաքում նրա հետ: Դինն ինձ խնդրեց Լիասայի տոմսեր գնել վաղը չէ մյուս օրվա համար: Գնացքի կայարանում տոմսարկղի մոտ կանգնած՝ մի պահ երկմտեցի, ապա տոմսեր գնեցի հինգ օր հետոյի համար: Զանգեցի նրան եւ ասացի.

- Վաղը չէ մյուս օրվա տոմսերը բոլորը վաճառված են: Պետք է այստեղ մի քանի օր ավել մնաս:

Դինն անմիջապես արձագանքեց.

- Հրաշալի՛ է, եղբայր: Մի քիչ ավելի երկար կբամբասենք:

Սկսեցի կարգի բերել ամեն բան, մաքրեցի հյուրասենյակը, պատրաստեցի անկողնային պարագաները: Դինն ասել էր, որ «երկուսով» են լինելու. Նրա ասածից ենթադրեցի, որ մյուսը կին է, եւ էլ հարցուփորձ չարեցի:

Սյա Լինի համար անսովոր հետաքրքիր էր այս ամենը, եւ նա մի քանի անգամ ինձ հարցրեց.

- Դինը լավ ընկե՞ր է քեզ համար: Ինչու՞ առաջ նրա մասին չեմ լսել քեզնից:

- Ուրիշների մասին էլ չես լսել, բացի մի քանի գործընկերներից,- պատասխանեցի:

Սյա Լինը գլխով արեց, բայց դեմքը դեռ դժգոհություն էր արտահայտում:

- Ե՞րբ ես վերջապես կարողանալու ինձ ամեն ինչ ասել: Դու ինձ ամենեւին չես վստահում:

- Սա ի՞նչ կապ ունի վստահության հետ: Ես ինքս հազվադեպ եմ նրա մասին մտածում,- ասացի:

Նա գլուխը տարուբերեց.

- Դու, դու իրոք որ անխիղճ ես:

Բառ իսկ չասացի: Գիտեմ, որ անխիղճ մարդ չեմ:

Սյա Լինը հանկարծ անսպասելի հարցրեց.

- Ի՞նչ է անում այդ Դինը:

- Լսել եմ, որ իրենց մոտ ածխահանքում է աշխատում:

Դինն ու ես որոշ ժամանակ կապ չէինք ունեցել, եւ թվում էր, թե այդ ընթացքում ամեն բան հենց այդպես էլ կար:

- Ածխահա՞տ:

- Հազիվ թե: Ամենայն հավանականությամբ ինչ-որ վարչական աշխատանք է:

Սա ինձնից հորինեցի: Նույնիսկ ես տեխնիկի գործ էի անում, իսկ ինչու՞ Դինը չէր կարող:

- Ոնց որ թե այս ընկերոջդ հետ ինչ-որ բան այն չէ,- արհամարհալից ծաղրանքով նետեց Սյա Լինը, ապա դուրս եկավ՝ շուկայից նպարեղեն գնելու:

Սյա Լինը մեր գործարանի ամենահմայիչ կինն է: Երբ սա ասում եմ, ամենեւին էլ չեմ հպարտանում, որովհետեւ գործարանում ընդամենը տասը կին կա: Չեմ կարող մոռանալ, թե ինչպիսին էր, երբ առաջին անգամ նրան տեսա: Ծանր մի ճամպրուկ էր քարշ տալիս, ավտոբուսից էր իջել, եւ դեմքը կարմրատակել էր. կարծես շրջակա ամայության մեջ հանկարծակի արեւ հայտնվեց: Ես անմիջապես սիրահարվեցի նրան: Սիրո այս կերպն օգտակարության տարր ունի, քանի որ ես ձգտում էի ամեն գնով նվաճել նրան, ապա ամուսնանալ եւ զավակներ ունենալ: Այս կողմերում լավ կնոջ հանդիպելու հնարավորությունը նույնքան անհավանական է, որքան կանաչ բուսականության հետք գտնելը: Գուցե ճակատագիր էր, որ նրան նշանակել էին աշխատանքային իմ թիմում ՝ համագործակցության լայն հնարավորությամբ: Բայց հենց սկզբից գիտեի, որ նրան ձեռք բերելը շատ դժվար կլինի: Սյա Լինի խոշոր աչքերը միշտ տխուր էին: Նույնիսկ երբ Սունն ու Լին ծամածռություններ ու կատակներ էին անում, Սյա Լինը մռայլ էր եւ անխռով: Նա նույնիսկ իմ կողմը չէր էլ նայում: Ես հասկանում էի նրա հոգեվիճակը: Սկզբում ես էլ նույն վիճակում էի: Աղի շերտերին ընկած լույսը սաստիկ կսկծացնում էր աչքերս: Հաճախ չէի կարողանում արցունքներս զսպել ու երբեմն չէի էլ հասկանում՝ ցավի՞ց է դա, թե՞ տխրությունից: Չժաոն ինձ ասում էր. «Երբ գարուն գա, ավելի լավ կլինի, ավազահողմերը կծածկեն այս ճերմակությունը»: Երբ գարնան ավազահողմերն սկսվեցին, մտա ծածկի տակ եւ հեկեկոցով սիրտս դատարկեցի: Գրողը տանի: Այդպիսի գարուն երբեք չէի տեսել: Այդ դարչնագույն-դեղին ավազահողմը դժոխքի վերածեց այս տարածքը:

Դինը զանգեց եւ ասաց, որ արդեն ժամանել է, եւ ես աստիճաններով վար սլացա, որպեսզի գնամ նրան դիմավորելու: Թեեւ մի քանի տարի էր անցել մեր վերջին հանդիպումից, բայց միանգամից ճանաչեցի նրան: Նրա թմփլիկ, կլոր դեմքին դարձյալ նույն անտարբեր ժպիտն էր: Կողքին կանգնած էր սեւ, կարճ շրջազգեստով, մի աղջիկ: Ուսերին թափված երկար մազեր ուներ եւ արեւային ակնոց էր կրում: Չկարողացա դեմքը լավ տեսնել, չնայած լավ տպավորություն ստացա: Դինը եւ ես ջերմորեն գրկախառնվեցինք, հետո նա ներկայացրեց աղջկան՝ ասելով, որ իր ընկերուհին է՝ Ցին Ցզինը:

- Դեռ չե՞ք ամուսնացել,- թոցրի բերանից:

- Չէ, դեռ ոչ,- ժպտալով ասաց Դինը: Նրա ժպիտը շատ բան էր ենթադրում եւ ինձ ստիպեց սուր գիտակցել սեփական կյանքիս լիակատար տաղտուկը: Ես նրանց բերեցի այնտեղ, ուր մնում էինք, եւ մենք աստիճանների մոտ դեմառդեմ հանդիպեցինք Սյա Լինին, որ նպարեղեն գնած՝ շուկայից էր վերադառնում:

- Սա իմ կինն է՝ Սյա Լինը,- ասացի Դինին:

Դինն իսկույն Սյա Լինի ձեռքից վերցրեց մթերքը եւ բացականչեց.

- Հարսի՛կ, մենք այնքա՜ն նեղություն ենք պատճառում ձեզ մեր այս այցելությամբ:

Սյա Լինը պատասխանեց պատշաճ կերպով.

- Ոչ մի նեղություն, մենք միայն անհանգստանում էինք, թե չեք գա:

Ներս մտնելով՝ մենք Դինին ու իր ընկերուհուն մեկառմեկ ցույց տվեցինք սենյակները, իսկ նրանք բարեսիրտ կատակներով իրենց գոհունակությունն արտահայտեցին: Հետո նստեցին բազմոցին: Ցին Ցզինն անմիջապես հանեց արեւային ակնոցը: Նրա գեղեցկությունն ասես սուր դաշույն լիներ, որը նույն պահին պատյանից դուրս գալով խոցեց ինձ: Հուզախառով՝ նրանց համար թեյ լցրեցի, ապա նստեցի Դինի կողքին: Նայեցի շուրջս՝ մեր բնակարանին եւ մտածեցի, որ այդքան ջանք թափելուց հետո, որպեսզի պատշաճ ու ներկայանալի լինի, հիմա այն հանկարծ տաղտկալի, միապաղաղ տեսք ուներ:

- Երկար ժամանակ կապեր չենք ունեցել: Դու... ածխահանքում չե՞ս աշխատում,- չկարողացա հարցս զսպել:

- Չէ, չդիմացա, դրա համար էլ թողեցի,- անփութորեն ասաց Դինը:

- Իսկ հիմա ի՞նչ ես անում,- հետաքրքրվեցի:

- Նկարում եմ,- ասաց՝ ժպիտով ինձ նայելով:- Կհիշես՝ միշտ սիրում էի նկարել:

- Իհարկե, հիշում եմ,- ասացի՝ փութեռանդ գլխով անելով:

Դինն աչքերը կկոցեց եւ երազանքների գիրկն ընկավ.

- Երբ աշխատում էի ածխահանքում, խավարն ինձ խեղդո՛ւմ էր: Ամբողջ օրը մարդ ծյութի պես սեւ մթության մեջ էր, գետնի տակ: Իսկ երբ գիշերը վեր էիր ելնում, դարձյալ մութ էր: Երբեմն մտածում էի, թե աչքերս շուտով կկուրանան: Հետո մի օր սկսեցի նորից նկարել եւ տեսա գույների առատությունը, ճիշտ այնպես, ինչպես ծարավից մեռնող մարդն է մի մեծ բաժակ ջուր խմում: Օգտագործում էի ամենապայծառ գույները՝ մտադրված լինելով նկարել ամենագունագեղ նկարը: Մի քանի հարյուր մետր գետնի տակ՝ հենց որ ընդմիջում էր լինում, նկարում էի: Ուզում էի հոյա-

կապ գործեր նկարել, եզակի ու անկրկնելի: Իմ գործընկեր բանվորներն ուղղակի հուզված էին, ավելի հուզված եւ ոգեւորված, քան երբ ամեն օր աղջիկների մասին էին խոսում:

Դինը խոսում էր ու խոսում՝ ամբողջ էությամբ ոգեւորված: Սենյակի մթնոլորտը կենդանացել էր, ինչպես երբ հին բարեկամներն են կրկին հանդիպում իրար:

- Քանի որ այդպես ես ասում... մի՞թե իրոք ածխահատությամբ ես զբաղվել,- ասացի: Չէի պատկերացնում, թե ինչ բացատրություն տամ նրա նկարչությանը:

- Իրոք ածխահատ էի: Հայրս ամբողջ կյանքում ածխահատ է եղել: Նրա թոքերը երկար ժամանակ հիվանդ էին, բայց էլի ստիպեց ինձ դա անել: Նրա կարծիքով ուրիշ բան անել չէի կարող:

- Լավ է, որ կարող ես նկարել:

- Հա, լավ է, որ կարող եմ նկարել:

Խոսակցությունն այդ պահին ընդհատվեց կարճատեւ դադարով: Դինը վերհիշում էր անցյալը, եւ դա ինձ է՛լ ավելի էր ստիպում ներկա կյանքիս անհույս վիճակն զգալ: Սյա Լինն ավարտեց առաջին ուտեստի եփութափը, ապա խնդրեց գնալ եւ սկսել հացկերույթը: Ցին Ցզինը վեր կացավ. «Թույլ տվեք օգնել»: Սյա Լինը ձեռքով նշան արեց նրան, որ պետք չէ, բայց չկարողացավ համոզել, եւ նրանք միասին անհետացան խոհանոցում: Նայեցի նրանց ետեւից: Եվ վատ զգացի Սյա Լինի պատճառով: Չեմ կարող ասել, թե երբ սկսվեց այդ զգացողությունը, բայց առաջին անգամ հասկացա, որ Սյա Լինն այլեւս հոգ չի տանում իր արտաքին տեսքի մասին: Ետեւի կողմից նա այնքան գեր էր երեւում, ասես քաղաքում աշխատանք փնտրելու եկած մի դայակ լիներ: Դա ինձ ցավ ու շփոթմունք պատճառեց: Չհամարձակվեցի նայել Դինի կողմը եւ քայլեցի ուղիղ դեպի հյուրասենյակի պահարանը: Մի շիշ խմիչք հանելով՝ ասացի Դինին.

- Կրկին հանդիպելու հազվագյուտ առիթ է: Խմե՛նք եղբայրների պես:

Հոնքերը կիտած նայեց, մի ստվեր սահեց նրա հայացքով, երբ ի վերջո գլխով արեց եւ արձագանքեց. «Լավ»:

Տարօրինակ է իսկապես, որ երկու երիտասարդ, որոնք ակնհայտորեն խմել չէին ուզում, պնդում էին, թե պիտի խմեն: Բայց իմ գլխում համառ մի ձայն պահանջում էր, որ պիտի խմեմ, չեմ կարող դա չանել: Գրեթե նույն պահին Սյա Լինն ու Ցին Ցզինը մտահոգ մի հայացք գցեցին մեր կողմը: Բայց Դինն ու ես վճռական ժպիտներով մեզ ստիպեցինք առաջին բաժակը գցել: Նրանք հայացքները շրջեցին առանց մի խոսքի:

Ճաշից հետո կազմակերպեցի նրանց ետճաշյա հանգիստը: Բազկաթոռին նստած հեռուստացույց էի նայում: Սյա Լինը խոհանոցում եփութափով էր զբաղված: Չգիտեմ ինչու, բայց մտածեցի մեր երեխայի մասին, այն երեխայի, որ երբեք այս աշխարհ չեկավ: Այսպիսի մի կեսօր էր: Սյա Լինը խոհանոցում ամաններն էր լվանում եւ հանկարծ ասաց, որ որովայնի ներքեւում ցավեր ունի: Առանց ժամանակ կորցնելու օգնեցի ցած իջնել, ապա մեքենա կանչեցի, որպեսզի նրան շտապ հիվանդանոց հասցնի: Բայց արդեն շատ ուշ էր: Վիժում. բառն ինձ վրա ցնցող ազդեցություն գործեց: Սա մահ էր, որը չէիր կարող տեսնել, հանկարծակի հարված: Սյա Լինը լալիս էր: Թեեւ լուռ էր լալիս, բայց այնքան խեղճացած տեսք ուներ: Վշտահար սիրտս կտոր-կտոր էր լինում: Սեղմած ատամների արանքից մրմնջում էր. «Գիտեմ, որ դա եղել է այս անիծյալ աղի տարածքի պատճառով»: «Հաստատ գիտե՞ս, որ այդպես է»,- հարցրի: «Պետք չէ անգամ նայել: Մի քանի մղոն հեռավորության վրա կյանք կա՞ արդյոք, մեզնից բացի: Գրո՛ղը տանի»: «Գրողը տանի»: Սյա Լինն իսկապես ասել էր դա՝ «Գրողը տանի»: Ես սովոր չէի նրա հայհոյանքին, բայց մտածեցի, որ նրա ասածն իմաստ ունի:

Այդ ժամանակ հյուրասենյակի դուռը հանկարծ բացվեց: Դինը դուրս ելավ:

- Չեմ կարողանում քնել,- ասաց հորանջելով:

- Ի՞նչ է եղել,- հարցրի:

Նա մի հայաք գցեց դեպի դուրս.

- Շատ պայծառ է: Ինչի՞ց է, որ այսքան պայծառ է:

- Ինչպե՞ս կարող էր պայծառ չլինել: Ծովի մակարդակից ավելի քան երեք հազար մետր բարձր է այստեղ,- պատասխանեցի:

Դինը վիատված նստեց բազմոցին:

- Առաջ ատում էի խավարը, բայց հանքախորշից փախչելուց հետո խավարի հանդեպ մի տեսակ սիրով եմ լցված, ինչպես խլուրդը: Ցերեկն իմ սենյակում քաշում եմ վարագույրները եւ այնտեղ եմ մնում՝ մթության մեջ նկարելու:

Ժպտալով պատասխանեցի.

- Բարի գալուստ իմ չափազանց պայծառ աշխարհը:

Դինն աչքերը փակեց եւ ծիծաղեց՝ ամբողջ մարմնով ցնցվելով, ասես կաթվածահար եղած: Վեր ելա եւ հյուրասենյակի վարագույրները քաշելով փակեցի: Սենյակը մթնեց, թեեւ պայծառ լույսը ներս էր թափանցում փոք-

րիկ ճեղքերից: Ինչպիսի՞ զգացողություն կունենաս ամբողջ տարին խավարում մնալով: Չէի կարող դա պատկերացնել:

- Ճի՞շտ է, որ ձեր աղի հանքը երկրում ամենամեծն է, ինչպես լսել եմ,- հարցրեց Դինը:

- Ոչ միայն երկրում, հնարավոր է, որ ամենամեծն է աշխարհում,- ասացի՝ ինքս ինձ ծաղրանմանակելով:

Հանկարծ Դինը ոգեւորվեց.

- Տար ինձ այնտեղ տեսնելու:

- Նկատի ունես... հիմա՞:

Դինը գլխով արեց, բարձրացրեց ձեռքը եւ նայեց ժամացույցին:

- Դեռ ուշ չէ: Հանքը չի կարող հեռու լինել:

- Մեքենայով մեկ ժամից ավելի ճանապարհ է:

Ճիշտն ասած՝ չէի ուզում գնալ: Այդ առավոտ հենց հանքից էի վերադարձել: Բայց չկարողացա ասել, հատկապես նկատելով սպասումով լի նրա հայացքը:

- Ամեն օ՞ր ես գնում-գալիս:

- Չէ: Երբեմն շատ հոգնած եմ լինում եւ մնում եմ գործարանում: Այնտեղ հանրակացարան կա:

- Պետք է որ դժվար լինի:

- Նորմալ է: Ես տեխնիկ եմ:

Դինը ժպտալով նկատեց.

- Մի ժամանակ, հիշում եմ, քիմիայից շատ լավ էիր:

- Հա՞ որ...

Իսկապես չէի հիշում: Միայն հիշեցի, որ ոչ մի առարկայից կարգին գնահատականներ չէի ստանում: Ի վերջո, սակայն, ընդունելության քննություններին բախտս բերեց, եւ ընդունվեցի մասնագիտական դպրոց: Բայց Դինը դպրոցը թողեց ընդունելության քննությունների նախօրեին: Ինձ ասաց, որ արդեն լրիվ կորցրել էր վստահությունը: Փաստորեն, պարզվում է, որ իր անխռով վարքագծի ետեւում այլ մարդ էր նա, ներքնապես վաղուց արդեն հանձնվել էր: Բայց պե՞տք էր արդյոք անցյալի այս բաներն այսօր վերհիշել:

- Մի քիչ էլ չխմե՞նք,- անսպասելի ցանկություն հայտնեց Դինը:

Երեք անգամ խմել էինք արդեն: Նոր էինք դադար առել, եւ նոր էին երկու կանայք իրենց թեթեւ զգացել: Հիմա նրանք երկուսն էլ հանգստանում էին: Այնպես որ՝ խմելու համար իրոք հարմար պահ էր: Ճիշը վերցրի, եւ նորից սկսեցինք: Երկար-բարակ խոսեցինք շատուշատ բաների մասին միջ-

նակարգ դպրոցի մեր օրերից: Ճիշտն ասած՝ անցյալն ամենեւին չեմ կարոտում եւ չեմ կարծում, թե հրաշալի ժամանակ էր դա, բայց որպես զրույցի թեմա՝ առիթ էր, որպեսզի անհոգ ու անփույթ կարողանայինք խոսել այն օրերի մասին, որ մեզ համար մնացել էին թանկ եւ անփոխարինելի: Իրականում ուզում էի Դինին հարցնել Ցին Ցզինի մասին: Այդքան գեղեցիկ մի աղջիկ: Դինն ինչպե՞ս էր կարողացել ճանկը գցել նրան: Բայց դա ասելու քաջություն չունեցա՝ չցանկանալով բացահայտել զուտ տղամարդուն բնորոշ մտքերս: Խմեցինք, ապա էլի խմեցինք, մինչեւ որ հոգնածություն զգացի: Ի վերջո, խմած եւ հոգնած, Դինն ու ես թախտին ընկնելով քուն մտանք: Անսպասելի չէր, որ երազում Չժաոյին տեսա: «Ո՞ղջ լինենք»,- ասաց: Դեմքն ամբողջովին աղի նստվածքով էր ծածկված: Նստել էր աղահանքի նավի տախտակամածին: Նրա ստվերը չէր արտացոլվում ջրի մակերեսին: «Չժաո, ընկերս է եկել ինձ տեսության»,- ասացի: «Մի քիչ էլ խմիր ընկերոջդ հետ»,- արձագանքեց նա: «Նա իրեն լավ է զգում»,-պատասխանեցի: Չժաոն ժպտաց՝ լայն բացելով բերանի խոռոչը. «Դու էլ ես լավ զգում»: Ցնցվելով արթնացա եւ տեսա՝ Սյա Լինն ու Ցին Ցզինը պատշգամբում նստած շշուկով զրուցում էին, ասես վաղեմի ընկերուհիներ լինեին, որ տարիներ շարունակ իրար չէին տեսել: Իսկ Դինը կողքիս պառկած բարձր խռմփացնում էր: Աչքերս նորից փակեցի եւ ձեւացրի, թե խորը քնած եմ: Զղջում էի, որ տոմսերը մի քանի օր հետոյի համար եմ գնել, եւ պատկերացում իսկ չունեի, թե ինչ եմ անելու մյուս օրերին:

Երեկոյան պարզապես կերանք ճաշի ժամանակ թողածը: Հետո Սյա Լինն առաջարկեց միասին դուրս գալ զբոսնելու: Երբ փողոց ելանք, արեւի ուժն արդեն թուլացել էր, լույսն էլ նվազել, թեեւ ամռան կեսն էր: Պաղ մի զեփյուռ փչեց անապատի հեռու խորքերից, եւ մենք թեթեւակի սառնություն զգացինք:

- Բավականին զով է,-բացականչեց Դինը,- իսկապես հարմարավետ վայր է:

- Հոյակապ է, այո,- հավելեց Ցին Ցզինը:

Հայացքս մի պահ կանգ առավ նրա գեղեցիկ դեմքին, ապա սահեց եւ ծուլվեց երեկոյան հեռավոր ու խաղաղ լույսին: Ճանապարհի վերջում տեսա օրորվելով քայլող մի քանի հարբած տղամարդու: Հոգուս խորքում այս լքված, ամայի քաղաքն ինձ խոր ցավ էր պատճառում: Իսկ Ցին Ցզինն իր շլացուցիչ գեղեցկությունն էր այստեղ բերել. ինչպես կայծակի լուսապայծառ մի շանթ՝ նա էլ ավելի ակներեւ էր դարձնում իմ ցավը:

- Դեռ գրո՞ւմ ես երգեր,- հանկարծ հարցրեց Դինը:

Ցին Ցզինն ու Սյա Լինը շրջվեցին եւ նայեցին ինձ: Ես Սյա Լինին երբեք չէի ասել իմ երգերի մասին: Նա անկեղծորեն զարմացած էր: Ժպտացի եւ թփթփացրի Դինի ուսերին.

- Ի՞նչ անհեթեթ բաների մասին ես խոսում:

Դինը պատասխանեց.

- Չնայած ինձ երբեք ոչինչ չէիր ասում, որ բանաստեղծություններ ես գրում ու երգում, բայց ես վաղուց եմ այդ մասին գլխի ընկել, նույնիսկ լսել եմ, թե ինչպես էիր դնդնում բառերն արտաբերելիս:

Ամաչելով՝ ձեռքերս թափահարեցի եւ ասացի.

- Պարզապես պարապ զբաղմունք էր:

- Բոլորս ենք պարապ բաներով զբաղվում,- վրա բերեց Դինը:- Իմ նկարչությունն էլ պարապ զբաղմունք է: Մեր կյանքն էլ պարապ զբաղմունք է:

Էլ ոչինչ չասացի, բայց ինքս ինձ մտածեցի. «Սակայն որոշ մարդիկ չեն կարող շարունակել պարապ զբաղմունքը»:

Հաջորդ օրը միտք էի անում՝ պե՞տք է արդյոք նրանց տանեմ աղի լիճը տեսնելու: Իսկ հետո ի՞նչ էինք անելու: Մինչ տատանվում էի, մեկ օր էլ անցավ: Այդ օրն արեւը պայծառ շողում էր: Ծուրջն ամեն առարկա ճառագայթում էր՝ ասես լուսապսակով եզերված: Փակվել էինք սենյակում եւ ծուլորեն սպանում էինք ժամանակը՝ ոչինչ չանելով, մինչեւ որ երեկոն իջավ, եւ վերջապես դուրս ելանք՝ մոտակա սննդի կետում խորոված ուտելու: Ասում էին այստեղ ոչխարի միսը լավն է, եւ ես ինձ փոքր-ինչ գոհ էի զգում: Երբ խորոված էինք ուտում, Ցին Ցզինն ուղիղ իմ դիմաց էր նստած, եւ մի քանի գողունի հայացք նետեցի նրա կողմը՝ պարզելով, որ հազվադեպ է ժպտում: Նրա աչքերը խորհրդավոր մի մելամաղձություն էին քողարկում: Եվ Դինն ու նա իմ պատկերացմամբ ոչ մի կերպ չէին կարող մոտ լինել: Բայց հետո մտածեցի, որ Սյա Լինն էլ մելամաղձոտ տեսք ունի, եւ նա ու ես էլ մոտ մարդկանց տպավորություն չենք թողնում:

Քյաբաբի մեր բաժինն ուտելուց հետո, երբ արդեն կուշտ էինք, մեր խոսակցությունը կրկին աշխույժ բնույթ ստացավ: Սյա Լինը ժպտաց եւ հարցրեց.

- Դին, ինչպե՞ս նվաճեցիր Ցին Ցզինի սիրտը: Պատմիր հապա այդ մասին:

Մտքովս իսկ չէր անցնի, որ Սյա Լինը կարող է հարցնել այն, ինչն այդքան անհուսորեն ուզում էի իմանալ:

Դինը ժպտաց եւ ծիծաղելով ասաց.

- Դա գաղտնիք է:

- Մեզ անորոշության մեջ մի՛ պահիր: Պատմի՛ր,- ասացի:

Դինը նայեց Ցին Ցզինին, իսկ վերջինս ասաց.

- Իրականում գաղտնիք չկա: Ես նրա հաճախորդն եմ: Մենք ծանոթացանք, երբ նա իմ դիմանակարն էր նկարում:

- Հա, այդպես էլ եղել է,- համաձայնեց Դինը:- Ածխահանքից փախչելուց հետո միայն նկարչությամբ կարող էի ապրուստի միջոց հայթայթել: Մի օր էլ հանդիպեցի Ցին Ցզինին: Առաջարկեցի ձրի նկարել նրան, բայց պայմանով, որ թողնի մի քանի դիմանկար անել: Ի զարմանս ինձ նա համաձայնեց:

Ցին Ցզինը նայեց ինձ եւ ասաց.

- Հիմնականում պատճառն այն էր, որ շատ լրջորեն էր նկարում, եւ առաջին անգամն էր, որ ինչ-որ մեկն ինձ վրա այդքան ուշադրություն էր դարձնում:

Ես էլ նրան նայեցի: Մեր հայացքներն ընդամենը մեկ վայրկյան հանդիպեցին, նախքան գլուխս կկախեի եւ կձեւացնեի, թե ինչ-որ բան եմ ուտում, ու կխուսափեի նրա գեղեցկությունից: Գուցե միայն գեղանկարիչների՞ն էր թույլատրված անմիջականորեն դիտարկել այդպիսի գեղեցկությունը՝ արվեստ ստեղծելու պատրվակով:

Դինը հարցրեց.

- Ես լա՞վ էի նկարում:

Ցին Ցզինը պատասխանեց.

-Լավ էիր նկարում, բայց դա ես չէի:

Դինը զարմանքից լայն բացեց բերանը.

- Դու չէի՞ր: Իսկ ո՞վ էր:

Ցին Ցզինը ժպտաց.

- Քո երազանքը:

Սյա Լինն ու ես սկսեցինք ծիծաղել: Ես նայեցի Ցին Ցզինին եւ ասացի.

- Այն, ինչ ստեղծում են նկարիչները, նրանց երազանքներն են, բայց դու տվե՛լ ես նրան այդ երազանքը:

- Ճիշտ այդպես, ճիշտ այդպես,- Դինը մի քանի անգամ գլխով արեց եւ մի մեծ կում գարեջուր խմեց:

Ցին Ցզինը թեքեց գլուխը, որպեսզի նայի Դինին.

- Կարո՞ղ ես ինձ ետ վերադարձնել քեզ տվածս երազանքը:

Մի պահ բոլորս շվարեցինք, ապա սկսեցինք ծիծաղել: Ցին Ցզինը

պարզապես սրամտել էր: Նրա ժպիտը նման էր շողացող երկնաքարի: Այս աղջիկն իրոք անբացատրելի խորհրդավոր հատկանիշներով էր օժտված: Նա եւ՛ խորապես հմայում, եւ՛ միաժամանակ խիստ վախեցնում էր ինձ: Անկարող էի ազատվել նրա հանդեպ ունեցած հետաքրքրասիրությունից:

Դինը քրքջալով շարունակեց.

- Ո՛չ միայն դա, ուրախ կլինեի քեզ ամեն ինչ տալ:

Բոլորս սկսեցինք նորից ծիծաղել: Հանկարծ Սյա Լինը հոգոց հանեց.

- Հաճելի է տեսնել, որ այդքան գոհ եք:

- Չես ուզում ասել, որ դուք գոհ չեք, չէ՞,- հարցրեց Դինը:

Ի պատասխան ոչինչ չունեի ասելու, բայց դե մի բան պետք է անեի, այնպես որ կարողացա միայն ծիծաղել:

- Եղբայր, կենացդ,- Դինը մի լիքը բաժակ գարեջուր էր վեր պարզել եւ մեկ շնչում դատարկեց բաժակը: Ապա բերանը սրբեց եւ շարունակեց.

- Իրականում չեմ կարողանում խմել, բայց այնքան շատ ժամանակ է անցել մեր վերջին հանդիպումից: Ես շատ ուրախ եմ: Արդեն պատմել եմ Ցին Ցզինին այս մասին: Մի անգամ կրպակ բացեցի, եւ տեղական ոստիկաններից մի քանիսն ինձ լավ ջարդ տվեցին: Միայն երեսունքանի կար ստանալուց հետո իմ խղճուկ կյանքը փրկվեց, հա՛, հա՛:

Դինի դեմքին ժպիտ իջավ: Աչքերը կուլ էին գնացել ակնախոռոչների ստվերներում, եւ ես չէի կարողանում հստակ տեսնել դրանք: Թեեւ ընդամենը մի քանի բառ էր ասել, հասկացա, թե ինչ նկատի ունի: Ես նույնպես մի լիքը բաժակ խմիչք լցրեցի, եւ մեկ շնչով խմեցի նրա կենացը:

- Արի՛ վաղն աղի լիճ գնանք,- հանկարծ ինձ դիմելով բացականչեց Դինը:

Ա՛խ այդ անպիտանը: Որպեսզի կանխի զրույցը շարունակելու ամեն մի անհարմարություն, հենց հիմա է դա ասում: Գլուխս շրջեցի եւ տեսա, որ Ցին Ցզինն ինձ է նայում՝ սպասումով լի հայացքով:

- Շատ լավ, վաղը քեզ այնտեղ կտանեմ,- ասացի՝ բարձրացնելով բաժակս:

Եվ այսպես՝ աղի լիճն էր:

Մեկ ժամ ավտոբուսով գնալուց եւ գործարանի մռայլ, ծանծրալի շենքերի միջով քայլելուց հետո պտույտ ես գործում, եւ աչքերիդ առջեւ աղի լիճն է: Դինը, բերանը բացած, հազիվ արտաբերեց.

- Ա՛յ քեզ բան, շշմեցուցիչ է...:

Այնպիսի տեսք ուներ, ինչպիսին պատկերացրել էի: Վաղուց իմ մտապատկերում արդեն ուրվագծվել էր այս տեսարանը: Բանն այն է, սակայն,

որ չէի կարծում, թե Սյա Լինը նույնպես կգա: Պարզապես չէի կարող դա պատկերացնել: Նախկինում, երբ ընկերներիցս գալիս էին, եւ ամեն անգամ երբ ուզում էի նրան էլ հետներս վերցնել որպես ուղեկից, Սյա Լինը միշտ կտրուկ հրաժարվում էր: «Ուզում եմ հնարավորինս քիչ լինել այդ գարշելի վայրում»,- ասում էր: Այս անգամ պարզապես չհարցրի նրան, քանի որ եթե չգար, ապա ավելի հանգիստ կլիներ ինձ համար, երբ Ցին Ցզինի հետ առանձին մնայինք: Բայց երբ Ցին Ցզինը ցանկացավ, որ նա միանա մեզ, Սյա Լինն, ի զարմանս ինձ, պատրաստակամորեն համաձայնեց, առանց դույզն-ինչ վարանելու: Սի՞թե միեւնույն սեռի ներկայացուցչի համար էլ դժվար է ետ մղել գեղեցիկ կնոջ հմայքները: Սյա Լինը կանգնած էր Ցին Ցզինի կողքին եւ բռնել էր նրա թեւից, մինչ քամին խառնշտում էր նրանց մազերը: Հենց այդ պահին զգացի, որ նրանք նման են կենսաբանական քույրերի:

Շարժվեցինք դեպի լճի եզրը: Մեր ոտքերի տակ լսվում էր աղի կոշտ ու չոր մանրահատիկների ճռճռոցը, ասես ձյան վրայով քայլելիս լինեինք: Շուրջբոլորն ամայի էր, թռչուն անգամ չէր երեւում: Թեեւ երկինքը կապույտ էր, աղի ջուրը, սակայն, մռայլ, սեւ-կանաչ գույն ուներ: Լճի կենտրոնական մասում կանաչը խառնվում էր դեղինի հետ, ասես թաքուն տագնապներով խռովված դեմք լիներ:

- Եկանք այստեղ, եւ կարծես հանկարծակի ձմեռ սկսվեց,- ասաց Ցին Ցզինը:

- Գիտե՞ս ինչպես է կոչվում այս զգացողությունը- ձայնակցեցի նրան:

Ցին Ցզինը նայեց ինձ, մի պահ մտածեց, ապա ասաց.

- Ամայությո՞ւն:

Նրա արձագանքն ասես ուղիղ նշանակետին դիպած գնդակ լիներ, որ խոցեց մտքումս արդեն պատրաստ պատասխանը:

- Այո, հենց այդպես,- հոգոց հանեցի,- ամայություն:

Քամին փչեց ուղիղ Սյա Լինի դեմքին, որը դրանից տգեղ տեսք ստացավ:

- Ես ուղղակի խորշում եմ այստեղ գալ,- ասաց նա:

Այդ պահին Դինը, որ քայլում էր մեր առջեւից, շրջվեց եւ ասաց.

- Ինչպե՞ս կարող ես նման բան ասել, իմ կարծիքով սա գեղեցիկ վայր է:

Իհարկե, տարածքն իր յուրահատուկ գեղեցկությունն ուներ: Շուրջբոլորն ասես ձյուն լիներ նստած: Աղի մաքուր նստվածքները լճեզրին, ինչպես նաեւ լճի ջրում գոյացած աղե ծաղիկները, այս ամենը կարելի էր հազ-

վագյուտ հրաշքներ համարել: Նկարիչը չէր կարող անտարբեր մնալ այսպիսի տեսարանի հանդեպ: Բայց Մարսն էլ իր յուրահատուկ գեղեցկությունն ունի, այդուհանդերձ ոչ ոք չի ցանկանում ապրել այնտեղ: Եվ սակայն ցավալին այն էր, որ Սյա Լինը եւ ես պատկանում էինք այն մարսեցիների խմբին, ովքեր ստիպված էին մնալ այստեղ: Դինի խոսքերից քաջալերված՝ կեսկատակ ասացի նրան.

- Դու իհարկե կնկարես այս բնապատկերը. դա հաստատ անակնկալ կլինի բոլորիս համար:

Դինը պպզեց եւ ձեռքը մտցրեց աղի ջրի մեջ:

- Իհարկե կնկարեմ,- ասաց: - Եվ դուք մեծ տպավորություն կստանաք:

- Եթե մարզիկ ես, ոտքերդ ջրի մեջ դիր, եւ լավ կզգաս,- առաջարկեցի:

Դինը խոսքերս ընդունեց ամենայն լրջությամբ եւ գուլպաները հանելով մտավ աղի ջուրը: Ցին Ցզինը նրա ետեւից ձայն տվեց.

- Ուզում ես աղաջրի լոգանք ընդունած արագավազ տոտիկնե՞ր ունենալ,- եւ բոլորս սրտանց ծիծաղեցինք:

Ոչ շատ հեռվում աշխատում էր աղ արդյունահանող կապույտ նավը: Երբ մեզ նկատեցին, նավը շարժվեց մեր կողմը: Պետք է որ Սան լիներ տախտակամածին: Գիտեի, որ միայն նա է նավը վարում:

Ինչպես եւ սպասվում էր, դա Սան էր: Նա գլուխը դուրս հանեց նավապետի խցիկից ու ձեռքով արեց մեզ, եւ մենք ի պատասխան ձեռքով արեցինք: Դինը ոգեւորված էր.

- Եկեք բոլորս նավ բարձրանանք, լա՞վ:

Նա արդեն գնում էր դեպի նավը, երբ ասաց այդ խոսքերը:

- Ա՛յ քեզ հիմար,- գոչեցի:

- Սա նման է Մեռյալ ծովին, չես կարող խեղդվել,- պատասխանեց Դինը: Նա ուղղակի գլխովին սուզվեց՝ ամբողջ մարմնով լիճը նետվելով եւ լողաց դեպի նավը:

Սյա Լինն ու ես Ցին Ցզինին տարանք դեպի մոտակա հասարակ նավամատույցը: Մինչ այնտեղ կհասնեինք, Սան արդեն հանել էր լրիվ թրջված Դինին եւ մեր կողմն էր շարժվում: Դինը կանգնած էր նավի վրա, ուրախուրախ ձայն էր տալիս մեզ՝ ձեռքերը վեր պարզած: Նրա ոգեւորությունը դեռ չէր անցել:

Սան այնքան ուրախ էր թվում:

- Այս ընկերդ շատ զվարճալի է,- ասաց նա:

- Դա հասկանալի է,- ասացի:- Կարո՞ղ ես գուշակել, թե ինչ է անում:

Սան գլուխը տարուբերեց: Դինը ժպտալով պատասխանեց.

- Երկրի մակերեւույթից մի քանի հարյուր մետր ներքեւ, ծյութի պես սեւ, երբեք արեւի երես չեմ տեսնում ամբողջ տարին:

- Ածխահա՛տ է: Զարմանալի չէ: Այստեղ չափազանց շատ արեւ կա: Կարծես իսկապես երկու տարբեր աշխարհներից ենք,- նկատեց Սան:

Բոլորս ծիծաղեցինք: Սան նավը տարավ դեպի լճի միջնամաս: Այն միջնամաս է կոչվում, բայց իրականում մեծ, աղի ջրավազանի հենց կենտրոնն է: Որպեսզի աշխատանքն ավելի հեշտ կարգավորվեր, այս հսկայական աղի լիճը բրնձի դաշտի պես տեղամասերի էր բաժանված:

- Ես քեզ կտանեմ տեսնելու մայրամուտն աղի լճի վրա: Հաստատ ամբողջ կյանքում չես մոռանա դա,- ասաց Սան՝ հստակ մտադրությամբ:

- Իսկապե՞ս,- հարցրեց Դինը՝ աչքերը լայն բացած նայելով դեպի արեւմուտք:

Անհաշիվ անգամներ էի տեսել այդ տեսարանը: Մայրամուտը նման է պատռված լյարդի. վառ կարմիր արյունը հոսում է ճերմակ վիրակապի վրայով: Այնպես էի զգում, ասես անտեսանելի մի թնդանոթից կրակում են արեւին, անտեսանելի մի գնդացիր գնդակոծում է կյանքս: Արեւի նման՝ ես կարմիր արյան մի ավազան էի... Այս տիպի վերքը գնահատելը նույնպես գեղեցիկ բան էր, եթե նույնիսկ վերքը սեփական մարմինդ էր ստացել: Մայր մտնող արեւն անսահման հրաշալի է: Աթնշաղին անչափ մոտ է, եւ իրերը, որ անչափ գեղեցիկ են, բոլորն էլ անչափ մոտ են մահին: Նայում էի Ցին Ցզինին: Երեկոյան ամպերն իջել էին վրան՝ վերածելով նրան մի գեղեցկության, որ շքեղություն էր ճառագում: Նա նստած նայում էր հեռավոր բնապատկերին: Թվում էր՝ անհաղորդ է սեփական գեղեցկությանը: Դինն ասես խորասուզվել էր աղի լճի տեսարանում եւ մոռացել էր ընկերակցել Ցին Ցզինին:

- Դե՛, խմե՛նք միասին,- Սան նավախցից գարու գինու մի շիշ հանեց:

Այս տարածքում բոլոր տղամարդիկ են խմում:

Եվ չի կարելի մերժել խմելու առաջարկը:

Երեք տղաներով նստեցինք տախտակամածին, իսկ Ցին Ցզինը կանգնած էր նավի ճաղաշարի մոտ: Միայն Սյա Լինը մնաց եւ գնում-գալիս էր՝ մեզ համար խմիչք լցնելով: Նա նույնիսկ նավախցիկ գնաց մի տոպրակ գետնանուշ բերելու, որպեսզի խմիչքի հետ հյուրասիրի: Սան հուզումնալից հառաչեց եւ ինձ ասաց.

- Բախտավոր եք, տղաներ:

Գլխով արեցի եւ նայեցի Սյա Լինին՝ ասելով.

- Հե՛յ, դու միշտ Սային դուր ես եկել:

Սյա Լինն աչքերը ոլորեց եւ արձագանքեց խիստ ցասումնալից.

- Այդպե՞ս ես կնոջդ ծաղրում:

- Սա ապացուցում է, որ ես լավ կին ունեմ, - պատասխանեցի:

- Հա, ճիշտ ես:

Նա շրջվեց եւ վերադարձավ նավախցիկ ու էլ չերեւաց: Հավանաբար գնաց հեռուստացույց դիտելու՝ այլեւս ի վիճակի չլինելով գնահատել մեր առջեւ բացված գեղեցիկ բնապատկերը: Սա արդեն մի տեսակ կտտանք էր նրա համար: Հիշեցի այն օրերը, երբ Սան ու ես երկուսս էլ միաժամանակ սիրահետում էինք Սյա Լինին: Ի վերջո իմ բախտը բերեց: Միակ բանը, որից իսկապես կախվածություն ունեի, իմ հիմնական հետաքրքրությունն էր՝ բանաստեղծություն գրելը: Բայց դեռ գրածս երգերից ոչ մի տող չէի երգել, եւ կարողացա միայն մի բանաստեղծություն ծոնել Սյա Լինին: Կյանքից զուրկ այս վայրում բանաստեղծության ռոմանտիզմը շատ ավելի օգտակար էր, քան որեւէ այլ բան: Հաջորդ օրն, ի պատասխան, ստացա Սյա Լինի նամակը: Նա գրում էր. «Քո պոեզիան է, որ օգնում է ինձ այստեղ նկատել գեղեցկությունը: Գուցե միայն դա է ինձ քաջություն տալիս մնալու»: Ես մտածեցի, որ նրա խոսքերը շատ ավելի հզոր էին, քան իմ բանաստեղծությունը: Այդ խոսքերը տեւական ժամանակ խորապես հուզում էին ինձ, եւ սիրտս ափեափ կարեկցանքով լցնում այդ աղջկա հանդեպ, երբ տեսնում էի նրան: Մենք արդեն հեռուն էինք գնացել՝ փոխադարձ սիրով ու մտերմությամբ համակված, բայց ի վերջո ամայության այս հավիտենական տարածությունը պարտության մատնեց մեր սերը: Մենք երկուսս էլ դարձանք ամայության մաս, իսկ հետո՝ անգամ փոխադարձ թշնամիներ:

Թունդ ոգելից խմիչքից բավականին խմել էինք: Մթնշաղի պաղ զեփյուռը փչում էր ուղիղ դեմքներիս: Մի քիչ գլխապտույտ էի զգում: Մայի թուխ, արեւահարված դեմքի ուրվագիծն ասես իմ դեմքի անդրադարձը լիներ հայելու մեջ: Չկարողացա զսպել արցունքներս, որ սկսեցին հոսել դեմքիս վրայով: Դինը զարմացավ՝ տեսնելով դա, բայց դրանք սրբելու համար արդեն շատ ուշ էր:

- Ոչինչ, ոչինչ, պարզապես կոկորդումս ինչ-որ բան կա:

Նորից չխկացրի Դինի հետ, ապա Մային ասացի.

- Հոգատար եղիր այս եղբորս հանդեպ: Եթե դեռ բավականին չի խմել, նրանից է, որ այնքան էլ հոգատար չես եղել իր հանդեպ:

Սան լսեց ասածս, ապա սկսեց Դինին ավելի հաճախ ստիպել, որ շատ խմի: Մի քանի բաժակից հետո Դինի հայացքը մի տեսակ մթագնեց: Չուզելով ետ մնալ՝ Դինն ինձ դրդում էր ավելի շատ խմել: Եվս երեք բաժակ

խմեցի՝ մրցելով նրա հետ: Սրտումս սարսուռ զգացի եւ ինքս ինձ հիշեցրի, որ այլեւս չեմ կարող խմել:

- Քեզ մի՛ մեղադրիր Չժաոյի հետ պատահածի համար,- հանկարծ ասաց Սան:

Զգացի կրծքիցս դուրս հորդող արյան հոտը, որը խլացրեց բառերս:

- Չէ...,- ուզեցի բացատրել արցունքներիս պատճառը, բայց ինչպե՞ս հստակ բացատրել:

- Ի՞նչ է եղել,- Դինը պնդեց, որ Սան բացատրի:

Սան ինձ նայեց՝ ներողություն խնդրող հայացքով:

- Ոչինչ, Մա, ասա նրան,- ձեռքով նշան արեցի եւ նայեցի հեռուն:

Հասկացա, որ Ցին Ցզինն ինձ է նայում: Մեր հայացքները հանդիպեցին: Հենց այդ պահին երեկոյան արեւը վերջնականապես մայր մտավ: Հսկայական բաց տարածության պատճառով դա շատ հանկարծակի թվաց. հորիզոնի մահացու գունատ այդ հատվածն ակնթարթորեն սեւացավ: Այդ խավարը, հակադրվելով երկնքի անհուն խորքերում թույլ փայլ արձակող հրացոլքին, թանձրախիտ էր, ինչպես ծանր մի մետաղ: Որոշ ժամանակ չէի կարող տեսնել Ցին Ցզինի դեմքը: Հանկարծ ուզեցի նրա դեմքը տեսնել՝ ինքս էլ չիմանալով, թե ինչու: Ոչ այն պատճառով, որ որոշակի թաքուն կիրք էի տածում նրա հանդեպ՝ լինելով ազդեցության տակ: Ավելի շուտ՝ դա պարզապես մաքուր ձգտում էր, ինչպես իմ ամբողջ կյանքում հազվադեպ ունեցած հույսի մի զգացում: Ոչ, ոչ, սա երազանք էր, ավելի գեղեցիկ, քան հույսը:

Մթան մեջ Դինն արցունքախեղդ էր լինում: Գուցե Չժաոյի պատմությունն էր նրան ցավ պատճառել: Գուցե միայն իր համար էր լալիս: Ես վաղուց վարժվել եմ տղամարդկանց հեկեկոցներին: Ոչ միայն իմ արցունքներին, այլեւ երբեւէ այստեղ մնացած յուրաքանչյուր երիտասարդի: Սան շարունակում էր Դինին դրդել, որ խմի: Նա այս հարցերում փորձառու էր: Մեկ անգամ նման իրավիճակների հանդիպելիս մարդիկ ոչ միայն չեն դադարում լաց լինել մի քիչ ավել խմելուց հետո, այլ նաեւ սկսում են ծիծաղել՝ անկարող լինելով վերջ տալ դրան: Ես ոտքի ելա, քայլեցի դեպի նավի ճաղաշարը եւ կանգնեցի Ցին Ցզինի կողքին: Այս կերպ կարողացա նորից պարզորոշ տեսնել նրա դեմքը: Երկար արտեւանունքներով այդ աչքերում ասես ջրի թույլ ցոլք կար, ճիշտ այնպես, ինչպես լճի մոտակա ջրում: Ես անդիմադրելիորեն գայթակղվել էի: Ի՞նչ կարող ես զգալ այդպիսի կնոջ հետ միասին ապրելիս: Չէի կարող խուսափել անրջալից բաղձանքներից՝ Ցին Ցզինին պատկերացնելով Սյա Լինի փոխարեն: Որքա՜ն տարբեր կլի-

ներ իմ կյանքն ի վերջո: Ծվարած էի եւ հառաչանքս չէի կարող զսպել:

- Սա ի՞նչ է,- վերջապես խոսելով հարցրեց Ցին Ցզինը:

- Դու սիրու՞մ ես Դինին,- հանկարծ հարցրի՝ ի զարմանս ինձ:

- Չգիտեմ: Կարծում եմ՝ ոչ,- Ցին Ցզինի պատասխանը շատ վճռական էր, առանց ամենաանհշան վարանման:

- Բայց նրա հե՞տ ես դեռ:

- Ես ինձ էլ չեմ սիրում, բայց մի՞թե չպետք է ինքս ինձ հետ լինեմ:

- Ինքդ քեզ չե՞ս սիրում:

- Ըհը՛:

- Ինչո՞ւ: Դու այնքան գեղեցիկ ես:

- Որովհետեւ փախստական եմ: Ես մարդ եմ սպանել...:

Չէի ուզում հավատալ լսածիս:

Արագ սթափվեցի, որովհետեւ սաստիկ ահավոր էր: Ցին Ցզինի պահվածքը սակայն շարունակում էր մնալ բնական, ասես սովորական զրույց էր անում: Բայց արցունքներն սկսեցին հոսել այտերն ի վար, ինչն ինձ ստիպեց իրոք հավատալ, որ այն, ինչ ասաց, ճշմարիտ էր:

- Դինը գիտի՞,- զգացի, որ կոկորդս քերծվում է, եւ հազացի:

Ցին Ցզինը գլուխը տարուբերեց.

- Նա երբեք չի հարցրել:

Մի պահ կանգ առավ, ապա շարունակեց.

- Եթե հարցներ, կասեի:

- Ավելի լավ է չասես,- հառաչեցի:

- Չնայած այդ մարդն արժանի էր դրան, բայց գիտեմ, որ հանցանքս լուրջ է: Երբեք մտադիր չեմ եղել այսպես խառն ու թափթփված ապրել: Թափառում եմ դեսուդեն՝ գնալով այնտեղ, ուր կյանքը կտանի:

- Ես ոչինչ չգիտեմ:

Իրոք ինձ չէր հետաքրքրում մանրամասն իմանալ այդ ամենը: Թվում էր, թե այն, ինչ ինձ պատմեց Ցին Ցզինը, հեռուստատեսային դրամայի մի պատմություն է:

- Եթե մարդիկ հարցնեն, կասեմ նրանց: Բայց ոչ ոք երբեք չի հարցնում: Դու միակ մարդն ես, որ հարց ես տվել: Հարցրիր, թե ինչու չեմ ինձ սիրում: Խիստ հուզվեցի: Ծատերին է դուր գալիս իմ գեղեցիկ տեսքը, բայց հազվադեպ են հարց տալիս՝ արդյո՞ք սիրում եմ ինձ:

- Հասկանում եմ:

- Իսկապե՞ս հասկանում ես:

- Իսկապես: Գիտեի՞ր ինչ էինք հենց նոր խոսում Չժաոյի մասին:

- Սյա Լինն ինձ ասաց:

- Այն օրը, երբ Չժաոն մահացավ, մենք միայն երկուսով էինք: Հաճախ կասկածում եմ, թե դա իմ մեղքն էր: Արդյո՞ք ես էի նրան սպանողը:

- Այդ երեկո հարբա՞ծ էիր:

- Այո, հարբած էի: Բայց տարօրինակն այն է, որ հարբելուց հետո էլ սթափ մարդու պես եմ ինձ պահում: Ուրիշները սխալմամբ կարծում են, թե բարձր դիմադրողականություն ունեմ: Բայց իրականում այդպես չէ: Սթափվելուց հետո հաճախ չեմ էլ հիշում, թե ինչ եմ արել:

- Մի բան եմ ուզում իմանալ. ինչո՞ւ ես ինքդ քեզ կասկածում:- Ցին Ցզինն այնքան ամուր էր բռնել իմ աքիլեսյան գարշապարից եւ ինձ ստիպում էր ասել, թե ինչու:

Ստածեցի եւ նայելով քիչ հեռվում գործարանը լուսավորող լույսերին՝ պատասխանեցի.

- Բանն այն է, որ Չժաոյին շատ էի սիրում: Երբ միասին խմում էինք, կարող էինք աշխարհում ամեն ինչի մասին խոսել: Ժամանակն արագ էր անցնում, եւ կյանքը փոքր-ինչ բարելավվել էր: Իրականում չեմ կարող տանել այս կենսակերպը եւ ուզում եմ ընդդիմանալ դրան: Բայց Չժաոն այս կենսակերպի ներկայացուցիչն է, ահա թե ինչու եմ այդպիսի մտքեր ունենում: Սակայն հիմա, երբ Չժաոն չկա, կյանքս է՛լ ավելի ծանր է ու դժվարին:

- Դե, լավ է, եթե կարծում ես, որ սպանել ես Չժաոյին: Այդպես փոքր-ինչ ավելի հեշտ կլինի քեզ համար,- Ցին Ցզինը խոսում էր մեղմ ձայնով եւ մոտեցավ ինձ: Նրա թեւը շատ մոտ էր իմ թեւին:

Զգացի, որ մխիթարում է ինձ բայց էլի քրթմնջացի.

- Մի՞թե:

- Նույնիսկ չգիտես, թե որքան եմ նախանձում քո ներկայիս կյանքին: Եթե իրոք լինեիր սպանության համար կասկածվող մեկը, ապա որպես փոխհատուցում չէիր ընտրի այս ամայի վայրում փակվելը: Դու նույնիսկ կին ունես, որը քեզ շատ է սիրում եւ ցանկացել է, որ երեխա ունենաք:

- Քեզ ասե՞լ է:

- Իհարկե,- Ցին Ցզինը ժպտաց սա ասելով: Մթնշաղի մեջ, լամպի լույսի տակ նրա ժպիտը ճառագում էր սուրբ ու մաքուր: Դրանից գրեթե հալվում էի:

- Հե՛յ, այդ ի՞նչ եք խոսում: Եկե՛ք խմելու,- մեր կողմը նայելով բղավեց Դինը:

Նա արդեն հարբած էր եւ խնդում էր երջանիկ ապուշի նման:

Չեմ հիշում, թե այդ օրն ինչ եղավ հետո, որովհետեւ Սան, Ցին Ցզինը եւ ես շարունակեցինք խմել: Ես հարբել էի: Եվ տարօրինակ է, որ այդ երեկո Չժաոյին չտեսա երազում: Բայց երազ տեսա այնուամենայնիվ: Երեկո էր, միայնակ քայլում էի լճի ափով: Խավարն այնպես էր իջել վրաս, որ շնչել չէի կարողանում: Հուսահատ փակեցի աչքերս եւ շուրջբոլորս հրաշալի երաժշտական հատվածների հնչյուններ լսեցի, ասես աճող ինչ-որ բանի ձայն լիներ: Սատիկ վախեցա: Առավոտյան արթնանալով՝ մտածեցի, որ դա պարզապես աղագոյացման ձայնն էր: Այստեղ կարող է աղ գոյանալ, եւ այդ գեղեցիկ աղե ծաղիկներն անընդհատ ծաղկում են: Այսպիսով, կարելի է մտածել, որ մեր կյանքից զատ՝ այստեղ կյանքի այլ ձեւեր էլ գոյություն ունեն: Պարզապես աղը կյանքի մի ձեւ է՝ առանց կյանքի: Մի՞թե Արարչի համար իսկապես տարբերություն կա մարդկանց եւ աղի գոյությունների միջեւ: Ե՛վ մարդիկ, եւ՛ աղը աճի ու անկման փոխակերպումներ են սոսկ:

Դինի եւ Ցին Ցզինի մեկնումից ավելի քան երկու ամիս անցած կլիներ, երբ մի մեծ փաթեթ ստացա: Ձեւից կռահեցի, որ նկար կարող է լինել, ու երբ բացեցի, ինչպես ենթադրում էի, տեսա, որ շրջանակված եւ պատվերով ուղարկված յուղաներկ կտավ է: Դինի ստեղծագործությունն էր, որ պատկերում էր աղի լիճը: Աղի լիճն ու աղե ծաղիկները նկարում ամենատարօրինակ տեսքն ունեին: Առաջին հայացքից ասես տիեզերքից երեւացող տեսարան լիներ կամ սյուրռեալիստական ոճի մի բան: Բայց երբ մի քիչ երկար նայեցի, նկատեցի, որ այլափոխված չափազանցումներն այդտեղ հենց այն էին, ինչն առավել ընդգծում էր աղի լճի ամենակարեւոր ու էական առանձնահատկությունները: Նկարը դրեցի հյուրասենյակում եւ սպասեցի, որ Սյա Լինը վերադառնա ու իր գնահատականը տա: Բայց նա միայն մի հայացք գցեց եւ տագնապած ճչաց.

- Հենց հիմա հեռացրու՛: Չեմ ուզում այլեւս տեսնել:

- Ինչո՞ւ,- շփոթված տարակուսեցի:

Սյա Լինը պատասխանեց.

- Ճիշտ այնպիսին է, ինչպիսին աղի լիճն է իմ երազներում, եւ սաստիկ վախեցնում է ինձ:

Իսկապես տարօրինակ էր: Ինձ մնում էր միայն փաթաթել նկարը եւ դնել հեռու մի տեղ: Գուցե երբ աղի լճից հեռու մեկ այլ տեղ նորից բացեմ այն, ուրիշ տպավորություն գործի:

Դինին նամակ գրեցի եւ շնորհակալություն հայտնեցի նկարի համար: Ասացի, որ գանձի պես կպահեմ այն: Ցին Ցզինի մասին ոչինչ չհարցրի:

Ստածեցի, որ դրանից լավ չի զգա: Այլեւս չէի նախանձում Դինին: Թերեւս նրանից էր, որ Ցին Ցզինն իսկապես չէր սիրում նրան, իսկ գուցե այն պատճառով, որ հաշտվել էի սեփական մեղքիս հետ եւ հետեւաբար գտել էի սեփական երջանկությունս: Ստադիր էի բավարարվել այստեղ մնալով: Դինը նամակիս չպատասխանեց եւ այդ կերպ աներեւութացավ, ինչպես աղի լճում լողացող աղահատիկն է լուծվում հորդ եւ հողմախառն անձրեւի տակ:

Կյանքն, այսպիսով, նորից խաղաղ հունի մեջ ընկավ: Ալեկոծությունն աստիճանաբար հանդարտվեց: Այլեւս չափից դուրս շատ չէի խմում, բայց ոչ այն պատճառով, որ վախենում էի, թե երազում Չժաոյին կտեսնեի (ժամանակ առ ժամանակ տեսնում էի նման երազներ): Ավելի շուտ այն պատճառով, որ ստիպված էինք վերջ տալ հարբեցողությանը՝ ապահովագրելով մեզ եւ նախածննդյան մեր պատրաստությունները տեսնելով: Հենց որ Սյա Լինը հղիացավ, անվճար արձակուրդ վերցրեց եւ մեկնեց ծնողների տուն՝ գավառի մայրաքաղաք: Առանձին ապրելով երկու տարբեր վայրերում՝ մենք ավելի քիչ էինք վիճում, եւ մեր զգացմունքները վերստին ջերմացան: Արդեն չէի կարող պատկերացնել այնպիսի մի իրավիճակ, երբ կապրեի մեկ այլ կնոջ հետ: Հաջորդ տարի աշնանը Սյա Լինն առողջ մի տղա ունեցավ: Հայր դառնալուց հետո էլ դեռ գնում էի աղի լճի գործարան աշխատելու, բայց նաեւ աշխատանքս թողնելու մտադրություն ունեի: Տարօրինակն այն էր, սակայն, որ այդ անսահման աղի տարածքում ապրելիս հոգեվիճակս աստիճանաբար խաղաղվում էր: Հեռանալու մասին մտքերն էլ այդքան հաճախ չէին համակում ինձ: Երբ քայլում էի աղի լճի ափով եւ նայում էի արտառոց բնապատկերին, հաճախ էի մտածում Դինի նկարածի եւ Ցին Ցզինի գեղեցիկ դիմագծերի մասին: Անորոշ մի զգացում էի ունենում, ասես իրականում երբեք չէի տեսել նրանց, այլ տեսել էի սոսկ ցնորական մի երազում:

Ձմռան սկզբին մի անսպասելի հյուսիսային քամի փչեց: Զարմանքով նկատեցի, որ աղի լճի մակերեւույթին բարակ սառույց է գոյացել եւ սերտաճել է փայլուն ու կիսաթափանցիկ աղաշերտի հետ: Դա հազվագյուտ տեսարան էր, քանի որ աղի լճերը հազվադեպ են սառչում: Հատուկ գնում էի նայելու գործարանի ջերմաչափին: Ամենացուրտ ջերմաստիճանը հասել էր զրոյից ցածր քսանհինգ աստիճանի: Բայց առավել ցավալին այն էր, որ այդ անսովոր ցուրտ ձմռանն այդպես էլ ձյուն չեկավ, եւ սարսափելի չոր եղանակ էր: Ամեն առավոտ արթնանալիս կոկորդդ այրվում էր չորությունից: Մի առավոտ արթնացա եւ տեսա՝ նամակ եմ ստացել: Կարծես

արտերկրից էր: Իմ սահմանափակ անգլերենով ի վերջո պարզեցի, որ հավանաբար Նեպալից է: Կռահեցի՝ ամենայն հավանականությամբ Ցին Ցզինից է: Նամակ երազի՞ց: Մի պահ կասկածեցի՝ արթնացե՞լ եմ, թե՞ ոչ:

Ցին Ցզինի ձեռագիրն իր նման գեղեցիկ էր: Գրում էր, որ ամեն ինչ լավ է: Ինձ գրելու պատճառն այն էր, որ մտածել էր իմ մասին, երբ ապաշխարելիս էր եղել Բուդհանաթ Ստուպայի առջեւ Կատմանդուում: Ստուպայի ստորոտին, հիմքի մոտ Բուդդայի շատ աչքեր են նկարված: Այդ ողորմած, բարեգութ աչքերը սեւեռվել էին իր վրա, եւ վերջնականապես հնարավոր դարձրին, որ այլեւս չվախենա մահից: Ասում էր, որ Կատմանդուն շատ գեղեցիկ է: Ծուրջբոլորը կանաչ լեռներ են, եւ քաղաքում ամենուր թարմ ծաղիկներ են: Ցին Ցզինը հույս էր հայտնում, որ մի օր ես էլ հնարավորություն կունենամ գնալ Կատմանդու: Աղի լճի տարածքից տարբերվող բոլորովին այլ տեսարան է այդտեղ: Գրել էր նաեւ, թե որտեղ է Դինը: Վերջինս մեկնել էր Ծենժեն եւ այնտեղ պատկերասրահ էր բացել: Լսել էր, որ Դինի գործերը բավականին լավ են: Այդ ամենից հետո ասում էր, որ որոշել է կյանքի վերջին օրերն անցկացնել աղի լճի տարածքի նման մի վայրում եւ այդտեղ էլ մեռնել ու միանալ հավերժական նախնականությանը: Նա տեղեկություններ էր փնտրել, եւ պարզել էր, որ աշխարհի ամենամեծ աղի լիճն այստեղ չէ, այլ Հարավային Ամերիկայում՝ Բոլիվիայի հարավարեւմտյան մասում գտնվող բարձրավանդակում: Այն կոչվում էր Սալար դե Ույունի: Ասում էր, որ հետագայում կուզեր գերեզման ունենալ Սալար դե Ույունիում՝ թաղվելով այդտեղ: Ցանք էր թափել ներկայացնելու նաեւ որոշ տվյալներ.

«Այն ծովի մակարդակից 3000 մետր բարձրության վրա է եւ գրավում է 12 500 քառակուսի կիլոմետր տարածք: Ամեն ձմեռ աղի լիճը լցվում է անձրեւաջրով՝ կազմելով ջրի բարակ, ոչ խոր մի շերտ: Ամռանը լճի ջուրը չորանում է՝ թողնելով հանքային նյութերի նստվածք, որ հիմնականում բաղկացած է աղից: Շատ տեղերում աղի շերտերը 10 մետրից ավելի հաստություն ունեն՝ մոտավորապես 650 միլիարդ տոննա ընդհանուր պաշարով, որը 1 000 տարի կբավարարի աշխարհի ողջ բնակչության պահանջարկը: Տեղի բնակիչները չոր եղանակին լճում ձեւավորված աղային կարծր շերտերից աղյուսանման հաստ խորանարդներ են պատրաստում, որոնք օգտագործում են իրենց տները կառուցելիս: Բացի տանիքից, դռներից եւ լուսամուտներից, պատերն ու կահավորանքը, ներառյալ մահճակալները, աթոռները եւ մյուս կահույքը, բոլորն էլ պատրաստված են աղի խորանարդներից»:

Պատասխանելով Ցին Ցզինին՝ գրեցի. «Եթե Սալար դե Ույունիին վերաբերող թվային որոշ տվյալներ նվազեցնենք եւ եղանակն էլ նկատի ունենանք հյուսիսային կիսագնդի համար, ապա ոչ մի տարբերություն չկա այստեղի ու այնտեղի միջեւ: Հիմա գրում եմ՝ հենված աղի խորանարդներից պատրաստված սեղանին: Վրան ապակի է: Ապակու վրա թավշե կապույտ կտոր է փռած, որից հուսալի մի ջերմություն է բխում: Ձեռք եմ տալիս սեղանին, որը թեեւ անսովոր կառուցվածք ունի, բայց ամենեւին չի տարբերվում սովորական սեղանից...»:

Ցին Ցզինից այլեւս նամակ չստացա: Որքան ժամանակն անցնում էր, այնքան ինձ թվում էր, թե նույնիսկ այն ստացածս էլ անիրական մի պատրանք էր, քանի որ ֆիզիկական ոչ մի ապացույց չկար. վախենալով, որ Սյա Լինը կտեսնի, կարդալուց հետո նամակն այրել էի: Գարունը մոտենում էր, եւ Սյա Լինը զանգահարեց՝ հորդորելով վերադառնալ ու տեսնել մեր երեխային, ինչպես նաեւ ներկայանալ հարցազրույցի՝ այնտեղ աշխատանքի տեղավորվելու համար: Ասաց, որ իր ազգականն օգնել էր ինձ՝ նոր աշխատանքի հնարավորություններ փնտրելով: Երբ ուղեբեռս կապում էի, մտածեցի, որ գուցե ոչ ոք չի եկել այստեղ ինձ տեսնելու: Միակ բանը, որ ուղեկցել է ինձ, աղի առաջացման անվերջ ձայնն է եղել: Այո, նույնիսկ առօրյա աղմուկ-ժխորի մեջ ես դեռ կարող եմ զանազանել այդ հատվածների ձայնը: Գլուխս բարձրացրի եւ պատուհանից դուրս նայեցի աղի հարթությունների գունատ անվերջությանը՝ չիմանալով, թե արդյոք երբեւէ կվերադառնա՞մ:

ՉԺԵՆ ՍՅԱՈԼՅՈՒՅ

«ՖԻԼԻՊՍ» ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱԾԵԼԻՆ

1

«Ֆիլիպս» արծաթե էլեկտրական ածելին սովորաբար դրված էր լոգարանում, լվացարանի վերեւում, բայց երբեմն պահարանում էր լինում: Ածելին ընտանիքի ավագ որդու անձնական սեփականությունն էր, եւ ուրիշ ոչ ոքի թույլատրված չէր դիպչել դրան: Երբ Սյաոցզյան՝ կրտսեր եղբայրը, տրվում էր գայթակղությանը եւ ձեռքը դնում էր էլեկտրական ածելու վրա, որպեսզի այն շոյի, այնպիսի հուզագրգիռ վիճակում էր հայտնվում, ասես ձեռքն աղջկա հետույքի էր դրել: Եղբոր իրերը բացարձակապես անձեռնմխելի էին: Նա դրանք կուռք էր դարձնում: Եղբայրը եւ նրա ընկերուհին՝ Սյաո Լյուն, առանձին տուն էին վարձել, բայց եղբայրը հաճախ տուն էր գալիս ճաշելու, իսկ երբեմն գիշերը մնում էր: Դա, իհարկե, միայն այն դեպքում էր լինում, երբ վիճած էր լինում Սյաո Լյուի հետ: Առավոտյան ավագ եղբայրը կանգնում էր լոգարանի հայելու դիմաց եւ սափրվում՝ անոթոք շեղբերին հանձնելով դեմքի մազերի ճակատագիրը, որոնք շատ արագ էին աճում, երբ զայրացած էր լինում: Էլեկտրական ածելու բզզոցը լսելի էր լոգարանի պատերից դուրս, եւ այդ ձայնը Սյաոցզյային ստիպում էր ամբողջովին փշաքաղվել: Մի օր ավագ եղբայրը ներս մտավ, երբ հայրն օգտագործում էր ածելին: Անհարմար վիճակում հայտնված հայրն անշնորհք ժպտաց եղբորը, նայեց հայելուն, կարծես թե դա պիտի բացատրեր ամեն բան, ապա անմիջապես ցած դրեց ածելին: Թեեւ բոլորը գիտեին, որ հայրը շատ անգամ էր օգտագործել այն: Հնարավոր չէ ասել, թե տղայի հետ ինչ էր կատարվում: Նա միշտ գողի պես թաքուն ֆռֆռում էր շուրջը: Այդ օրը տնից գնալիս ավագ եղբայրը խիստ զայրացած էր եւ իր ետեւից շրխկալով փակեց մետաղե պաշտպանիչ դուռը: Սյաոցզյան պետք է դա ընդուներ որպես նախազգուշացում այն բանի, որ հետո էր տեղի ունենալու: Սյաոցզյան երկար ժամանակ անհանգստանում էր, որ հոր ու եղբոր հարաբերությունները մի օր ի վերջո ծեծկռտուքի կվերածվեն, եւ գիտեր, որ քանիցս ավագ եղբայրը պատճառներ էր ունեցել կասկածելու, թե հայրն օգտագործում է իր ածելին: Եղբայրն ասում էր.

-Եթե էդ ծեր սրիկան մեկ էլ ձեռք տա իմ ածելուն...

Սյաոցզյան նայում էր, թե ինչպես էր վերուվար անում եղբոր ադամախնձորը, երբ նա թուքը կուլ էր տալիս, ապա ճռթճռթոցով պտտում վիզը: Եղբայրը, որ առաքիչ էր աշխատում եւ մոտոցիկլով առաքումներ էր կատարում, սիրում էր սափրվելուց հետո ձեռքը շփել մաքուր կզակին, երբ նայում էր հայելուն եւ ինքն իրենով հիանում: Բայց նրա դեմքի խիտ մազերը կրկին հայտնվում էին մեկ գիշերվա մեջ:

Այդ առավոտ, ինչպես սովորաբար, ավագ եղբայրը մտավ լոգարան եւ սափրվեց, ապա վերջին անգամ զգուշացրեց Սյաոցզյային.

-Ինչո՞ւ ես դեռ անկողնում: Ի՞նչ, էսօր դպրոց չե՞ս գնում:

Նախքան եղբայրը կհասցներ վերմակը քաշել նրա վրայից, Սյաոցզյան վեր կացավ եւ հագնվեց: Հյուրասենյակաում եղբայրը հագավ կոշիկները եւ վերցրեց մոտոցիկլի սաղավարտը: Ջեյ Չոուի երգերից մեկը քթի տակ երգելով՝ սաղավարտը դրեց գլխին եւ ցույց տալով պատին փակցված՝ համազգեստավոր Սադդամ Հուսեյնի նկարը՝ ասաց.

-Սյաոցզյա, հիմա ամեն օր ամերիկացիները պատրաստվում են ազատվել Սադդամից:

Ընտանիքում ոչ ոք չէր կարող հիշել, թե որտեղից է նկարը: Տղաների մայրն այդ առիթով մի քանի անգամ դժգոհել էր՝ ասելով, որ անբարետես է՝ պատի վրա ինչ-որ մորուքավոր օտարերկրացու նկար ունենալ, բայց նկարը չէր հանում: Դա նույն տեղում էլ մնում էր: Նկարը երկար ժամանակ կախված էր այդտեղ, մինչեւ Սյաոցզյան կիմանար, որ դա հայտնի մի անձնավորություն է՝ Սադդամ անունով, որը բավականին արդյունավետ կերպով համարձակություն էր ունեցել դուրս գալ Ամերիկայի դեմ եւ կռվել Ծոցի պատերազմում:

Ժամանակի հետ Սադդամը Սյաոցզյային սկսեց շատ դուր գալ:

Ասես մեկ գիշերվա մեջ՝ նրանց տան բակի բալենիները ծաղկել էին: Գարունն իր կանաչ հարստությունն էր սփռում ամենուր, կանաչ ծառերն ու թփերը երջանկությամբ նվաճում էին աշխարհը: Գարնան յուրահատուկ բուրմունքն էր ամենուր, ամեն բան կյանք էր առել: Սյաոցզյան ամենեւին դեմ չէր այդ ամենին, բայց մեծ մասամբ անուշադրության էր մատնում: «Գարունը եկել է» վերնագրով շարադրությունն էր պատճառը, որ նա այդ եղանակը չէր սիրում: Շարադրությունն սկսվում էր այսպես. «Գարունը եկել է: Ծիծեռնակները վերադարձել են հարավից: Տանձենիները, ծիրանենիներն ու բալենիները ծաղկել են»: Ուսուցիչը Սյաոցզյային ստիպել էր հարյուր անգամ արտագրել շարադրությունը՝ որպես պատիժ նրա վատ

վարքի համար: Դրանից հետո Սյաոցզյան հայհոյանքով էր հիշում գարունը:

Բայց պատճառը միայն շարադրությունը չէր, այլ նաեւ այն, որ գարնանը բոլորը գրիպով հիվանդանում էին: Գրիպը գալիս էր անձրեւի հետ, որը չէր ուզում դադարել: Որքան կարողանում էր հիշել, գարունը միշտ եղել էր երկարատեւ անձրեւների ժամանակ, երբ լուսամուտի ապակիները միշտ թրջված էին լինում անձրեւի կաթիլներով: Կաթիլները զարկվում էին ապակուն, թողնում տգեղ բծեր, եւ այդ բծերը մնում էին մինչեւ գարնան ավարտը:

Այդ առավոտ նորից անձրեւ էր գալիս, եւ դասասենյակի լուսամուտից դուրս երկինքը գորշ էր ու թաց: Առավոտյան մանրամաղ անձրեւ էր, որ կեսօրին ուժեղացավ, բայց երեկոյան կողմ անձրեւի կաթիլները քչացան՝ հողագործի ցանած սերմերի նման նոսրանալով: Սյաոցզյան մտածում էր այն մասին, թե ինչպես տարիներ շարունակ անձրեւոտ օրերին հայրն իրեն հեծանվով տանում էր իրենց բնակարանային համալիրի հարավային մուտքի մոտ՝քաղցր բամբակ գնելու: Քաղցր բամբակի գունդը տատանվում էր գարնան թեթեւ քամուց: Դա այնքան մեծ էր, որ հազիվ էր տեղավորվում իր փոքրիկ բերանում: Սյաոցզյայի հայրն այն ժամանակ դեռ երիտասարդ էր, եւ իր ուժեղ ոտքերով անընդհատ պտտում էր հեծանվի ոտնակները: Սյաոցզյան նայում էր բոլոր մարդկանց, որոնք ողջունում էին իրենց: Նա ուրախ եւ երջանիկ էր զգում իրեն:

Աշխարհագրության դասին Սյաոցզյան հայացքը սեւեռեց քարտեզի վրա եւ թողեց մտքերը թափառեն: Իրաքի տարածքը հիմնականում անապատ էր, ուրեմն այնտե՞ղ էլ կարող էր անձրեւ գալ: Ի՞նչ էր անում Սադդամն այդ ժամանակ: Իրաքի մասին գիտեր միայն, որ այն Միջին Արեւելքում ինչ-որ մի տեղ է: Բայց գիտեր, որ Սադդամն այդ երկրի նախագահն է, առաջին դեմքը:

-Ատում եմ էդ ամերիկյան թռիչքներն ու ռմբակոծումները,- այդ առավոտ ասել էր եղբայրը փոքր-ինչ վրդովված արդարացիությամբ:

-Մի՞թե դու Բասկետբոլի ազգային ընկերության մեծ երկրպագու չես:

Ավագ եղբայրը չիմացավ ինչ պատասխանի այս հարցին, դրա համար էլ իր ետեւից փակեց դուռը եւ աստիճաններով աղմուկով ցած իջավ, որ աշխատանքի գնա:

Սյաոցզյայի եղբայրը ինստիտուտը վերջերս էր ավարտել եւ երկրի քաղաքային երիտասարդ պրոլետարիատի տիպիկ ներկայացուցիչ էր, որ ռոճիկից ռոճիկ էր ապրում: Իրականում նա ոչ միայն սիրում էր Ամերիկան,

կադիլլակներն ու նիկեները եւ Լեոնարդո Դի Կապրիոյին ու հոլիվուդյան մյուս աստղերին, ջազ երաժշտությունն ու «Քենթուքի ֆրայդ չիքին» ռեստորանային ցանցը, այլ նաեւ նրա սիրած հայհոյական բառը անգլերեն fuck-ն էր, չնայած անգլերեն Սյաոցզյայից լավ չգիտեր: Սեպտեմբերի 11-ի օրը նա թախտին նստած ծխախոտ էր ծխում եւ մռայլ դեմքով նայում, թե ինչպես է ծուխը ծածանվում Մանհեթենի վրա: Սակայն, երբ ասացին, որ Պենտագոնը չի ոչնչացվել, երիտասարդ առաքիչ մոտոցիկլավարը թեքվեց առաջ, ծխախոտի մնացորդն ամբողջ ուժով սեղմեց մոխրամանի մեջ եւ դուրս թքեց իր իմացած ամենավատ հայհոյանքը:

Սյաոցզյան չէր հասկանում, թե ինչու էր եղբայրն այդքան ատում Ամերիկան: Նա մոռացել էր այդ տարի տեղի ունեցածը: Եթե ուզում էր մի բան մոռանալ, նույնիսկ Պենտագոնի վրա հարձակում գործած ինքնաթիռի հետ կապված դեպքը, ապա այն ամբողջովին ջնջվում էր նրա մտքից: «Սյաոցզյան թքած ուներ», ինչպես կասեր հաստլիկ Լյու Սինը: Լյու Սինը Սյաոցզյայի դասընկերն էր, եւ միշտ այդպես էր ասում: Սեպտեմբերի 11-ի դեպքերի տարուց միակ բանը, որ անջնջելի տպավորություն էր գործել Սյաոցզյայի վրա, հաստլիկ Լյու Սինի եւ Կարտոլ անունով մեկ այլ տղայի կռիվն էր:

Լյու Սինը շատ բարձրահասակ էր եւ ծանր, նույնիսկ ամենամեծ չափի «Նիկե» մարզական համազգեստը նրա հագին խիստ նեղ էր: Եվ Սյաոցզյան Լյու Սինի պարարտ մարմնի տեսքից մի տեսակ սրտխառնուք էր զգում: Երբ Լյու Սինը մատով իրեն կանչեց ու ասաց՝«Արի էստեղ», Սյաոցզյան երկմտել անգամ չհամարձակվեց: Լյու Սինը միայն Սյաոցզյային նկատի չուներ: Նա նույն կերպ նշան արեց նաեւ Լի Լենին, որին կարելի էր համարել դպրոցի անձեռնմխելիներից մեկը: Լի Լենը կարտոֆիլի էր նման, եւ բոլորը նրան Կարտոլ էին ասում: Երբ Սյաոցզյան բախվեց Լի Լենին, նա չնկատելու տվեց: Երբ Լյու Սինը սպառնաց Լի Լենին, Սյաոցզյան վատ զգաց, որ ինքն ու Լի Լենը նույնն էին, եւ դա նվաստացում էր իր համար: Բայց ինքը գոնե Լի Լենի նման կարճահասակ չէր: Լի Լենը կարճահասակ էր, բայց չափազանց ամրակազմ: Ձեռքերի մկաններն ասես մաշկի տակ հաստ պարաններ լինեին: Շատ վատ էր, սակայն, որ Լի Լենը երկչոտ էր եւ լռակյաց: Չէր խոսի, մինչեւ հետը չխոսեին:

Ամեն անգամ, երբ Լյու Սինն ուզում էր խոսել Լի Լենի հետ, նախ խփում էր նրան, մինչեւ որ վերջինս բղավում էր: Միայն այդ ժամանակ էր Լյու Սինն ասում իր ասելիքը.

«Հեյ, քաքլան, գնա ինձ համար մի տուփ ծխախոտ առ»: Լի Լենը

շրջվում էր եւ զայրացած նայում, բայց այդ կռվարարի հետ գլուխ դնել չէր լինի, պարտությունն անխուսափելի էր, եւ նա արագ տեղի էր տալիս: Ամեն անգամ, երբ Լի Լենն անում էր իրեն ասվածը, Սյաոցզյան արհամարհանքով էր լցվում նրա հանդեպ, թեեւ ինքն էլ հնազանդ ենթարկվում էր, հենց որ Լյու Սինի բետոնանման բռունցքներն իջնում էին իր մարմնին:

Սյաոցզյային զայրացնում էր այն, որ Լի Լենը գոնե մեկ անգամ պատասխան հարված չէր հասցնում: Բավական կլիներ, եթե անգամ Լի Լենը քթի տակ մի բան ասեր կամ, եթե մի քիչ ավելի քաջություն առներ ու պատասխան հարված տար Լյու Սինին: Սյաոցզյան դրանից իրեն երջանիկ կզգար: Բայց ամեն անգամ Լի Լենը հիասթափեցնում էր նրան: Սկզբում, երբ Լյու Սինը հարվածում էր, Լի Լենը փոքր-ինչ դժգոհում էր, բայց ինչքան ավելի շատ էր խփում Լյու Սինը, այնքան ավելի էին կախ ընկնում Լի Լենի ուսերը, եւ նա գլուխն ավելի ցած էր կախում ու աչքերն անշարժ հառում էր գետնին: Ի վերջո, դա նույնիսկ բավական կլիներ, որպեսզի Լյու Սինը զրկվեր չարախնդալուց: Սյաոցզյան միանգամից չհիասթափվեց Լի Լենից: Նրա հիասթափությունն աստիճանաբար եկավ, ինչպես ինքնասպանության հուսալքող, անելանելի միտքն է կամաց-կամաց հասունանում, սրտում բույն դնում եւ ամեն անգամ մղում, որ շենքից ցած նետվես: Սյաոցզյան Լի Լենին թույլիկի մեկն էր համարում: Բայց քանի որ ինքն ու այդ թույլիկը նույն մարդու կողմից էին ծեծ ուտում եւ ստորացվում, ամաչում էր: Ուզում էր, որ Լի Լենը քաջություն գտնի եւ անի այն, ինչ արել էր: Մի անգամ Սյաոցզյան կռվեց, երբ Լյու Սինն իրեն ընտրեց որպես թիրախ: Ու թեեւ ամեն բան ավարտվեց նրանով, որ Լյու Սինը մի լավ ծեծի ենթարկեց Սյաոցզյային եւ սոսկալի ցավ պատճառեց, բայցեւայնպես Սյաոցզյան իրեն հաղթող էր համարում, գոնե բարոյական իմաստով, գոնե Լի Լենի հետ համեմատած: Բայց Լի Լենին չէր հաջողվել արդարացնել Սյաոցզյայի հույսերը գեթ մեկ անգամ: Լի Լենը մտախոհ հենվել էր երկրորդ հարկի բաց միջանցքի ճաղավանդակին, երբ որտեղից որտեղ մի բռունցք այնքան ուժեղ զարկեց նրա մեջքին, որ նա երկտակվեց: Լյու Սինն սպասում էր, որ նա սարսափահար է եղել՝ տեսնելով իր անվերահսկելի, հզոր բռունցքները, որոնք գործի էին անցել, բայց կանգ առավ եւ նայեց, թե ինչպես է Լի Լենը դանդաղ ոտքի կանգնում՝ սեղմած ատամների միջից ներծծելով օդը, ցասումնալից աչքերն արցունքներով լի: Նա նման էր կատաղած ընձառյուծի, որ վերջին անգամ զգուշացնում է նախքան վրադ թռչելը: Առաջին անգամն էր, որ Սյաոցզյան Լի Լենին զայրացած տեսավ, բայց հենց որ մտածեց, թե այդ երկու տղաներն իսկապես սկսելու են կռվել, Լի

Լենի աչքերում ցասումը մարեց: Նա տարօրինակ հայացքով նայեց Լյու Սինին, շրջվեց եւ մտավ դասասեյակ: Սյաո Ցզյանը համոզված էր, որ Լի Լենը նահանջեց ոչ թե Լյու Սինի արածի պատճառով, այլ որովհետեւ ընտրություն էր կատարում, թե ինչպես տեղի տա: Նա հաղթել էր ինքն իրեն: Նա կարող էր հովազի պես նետվել Լյու Սինի վրա, քացով տալ ձվերին, բռունցքներով ու արմունկներով զարկել գլխին, ծնկով խփել ստամոքսին, իսկ հետո ոտքերով տրորել մեջքը, երբ ցած ընկներ: Բայց այդպիսի բան ֆիլմերում է լինում, իհարկե, իսկ Լի Լենը չէր կարող դա անել: Նա թույլի՛կ էր: Դա էր Լի Լենի հանդեպ Սյաոցզյայի արհամարհանքի պատճառը:

2

Մինչեւ կեսօր չէին նկատել բնակարանում ջրի արտահոսքը: Ծենքի դռնապանի ասելով՝ ջուրը նրանց տնից հոսել՝ հասել էր առաջին հարկ: Այլ կերպ ասած՝ նրանց բնակարանից ջուրը հոսել էր երկու հատակի եւ երկու առաստաղի միջով: Սյաոցզյան սարսռաց, երբ լուրն իմացավ: Նա նետվեց դեպի տուն,եւ երբ տեղ հասավ, տեսավ, որ հայրը՝ Դու Հուայմինը, ոտաբոբիկ ու ներքնաշորերով կանգնած է հյուրասենյակում, ջրի մեջ: Նա լվացքի տաշտով ջուրը կրում էր եւ լցնում զուգարանի մեջ: Սյաոցզյան շուրջը նայեց: Ջուրը հասել էր սուրճի սեղանի բարձրությանը եւ քշել դրա վրա եղած լրագրերն ու ձմերուկի սերմերը: Սյաոցզյային տեսնելով՝ Դու Հուայմինը ձեռքերը դրեց կոնքերին, հետո վերցրեց լվացքի տաշտն ու զարկեց սուրճի սեղանին: Ձայրույթից գունատ ու ահավոր դեմք ուներ:

-Էս ի՞նչ եղավ, գրողը տանի: Էս ի՞նչ պատահեց: Ամեն ինչ կարգին էր, երբ դուրս եկա: Բացատրեք, իմանամ,- ասում էր նա:

Հուզված ու իրար խառնված՝ Սյաոցզյան վեր քշտեց տաբատի փողքերը եւ անխոս միացավ ջուրը հեռացնելու աշխատանքին: Գլուխն ասես դատարկ լիներ, բայց որքան հիշում էր՝ լոգարանի ծորակը փակ էր, երբ տնից դուրս եկավ, եւ եթե անգամ լրիվ փակ էլ չլիներ, չէր կարող այսպիսի բան պատահել: Մտավ լոգարան՝ նայելու, ապա խոհանոց, որտեղ տեսավ, որ ջրի խողովակը պայթել է: Գլխավոր փականն արդեն փակված էր եւ խողովակի պայթած տեղն ամուր փաթաթված էր սրբիչով, բայց ակնհայտ էր, որ դա էր աղետի պատճառը: Սյաոցզյան պատկերացրեց, թե ինչպես դա եղած կլինի, ինչպես է ճնշման տակ ջուրը ճեղք գտել, եւ ապա խողովակը պայթել է: Նա դուրս եկավ խոհանոցից եւ ասաց.

-Ջրի խողովակն է պայթել:

Դու Հուայմինը խիստ զայրացած էր եւ հիմա կատաղած նայեց Սյաոցզյային ու ասաց.

-Կարծում ես չգիտե՞մ: Բայց ինչո՞ւ է պայթել: Ամեն ինչ կարգին էր, երբ դուրս եկա:

Սյաոցզյան էլ ոչինչ չհամարձակվեց ասել եւ նորից սկսեց ելումուտը լոգարան, որպեսզի ջուրը դատարկի զուգարանի մեջ: Ջրի ճողփյունի ձայնի տակ Սյաոցզյան մտածեց. «Մի գիշերվա մեջ խողովակը չէր կարող հնանալ ու մաշվել: Գիտեիք, որ մի օր պայթելու է, բայց երբեք ջրմուղագործ չկանչեցիք, որ նորոգի»:

Երկուսով չարչարվեցին՝ ժամեր շարունակ դատարկելով ջուրը, մինչեւ այնքան հոգնեցին, որ էլ չէին կարողանում կանգնել: Բնակարանն աղետալի վիճակում էր, բայց գոնե հատակն ավելի մաքուր դարձավ, քան եղել էր: Հատակը միշտ մաքուր էր, երբ Սյաոցզյայի մայրը ողջ էր: Բայց մայրը հիմա սենյակի սրբարանում էր եւ չէր կարող կարծիք հայտնել ջրի արտահոսքի կամ հատակի մաքրության մասին: Դու Հուայմինը, խառնված մազերով, ծխախոտը ծխախոտի ետեւից էր վառում, ծխում մտահոգ, ասես տանջահար ու մոլորված թափառական մի ասպետ լիներ՝ խառն մտքերով ու զգացումներով: Նա այն նույն մարդը չէր, որ մի ժամանակ քաղցր բամբակ էր գնել Սյաոցզյայի համար: Սարտ ամիսն էր, եւ դեռ բավականին սառն էր: Նրանք հողաթափերով էին, բայց ցուրտը չէին զգում, քանի դեռ գործ էին անում: Բայց երբ դադարեցին աշխատել, զգում էին թե ինչպես է ցուրտը վեր ելնում ոտնաթաթերից: Սյաոցզյան չէր ուզում շարժվել: Նստել էր սաստիկ հոգնած, այնքան հոգնած, որ աչքերն անգամ չէր կարողանում թարթել: Նրան թվում էր, թե մայրն իրեն է նայում պատի վրայի լուսանկարից՝ սիրով ու խղճահարությամբ լի հայացքով, եւ դրանից տխրում էր:

Երբ մայրը հիվանդանոցում քիմիական բուժում էր ընդունում կրծքի քաղցկեղի դեմ, Սյաոցզյան ամեն օր նրա համար հավի մսով ապուր էր բերում: Հիվանդանոցը Սյաոցզյայի դպրոցի հարեւանությամբ էր գտնվում, եւ մորը տեսնելուց հետո նա ուղիղ դպրոց էր գնում:

Մայրը լուռ պառկած էր հիվանդանոցի մահճակալին: Շատ չէր խոսում եւ հազվադեպ էր բացում աչքերը: Նա հավաքում էր իր թափվող մազերը եւ դնում պոլիէթիլենե տոպրակի մեջ, որ բարձի տակ էր պահում: Շարունակ շշնջում էր.

-Երկար չեմ ձգի:

-Էդպես մի՛ ասա, մայրիկ,- ասում էր Սյաոցզյան՝ սփոփելով մորը, ինչ-

պես մեծերն էին անում, եւ փորձելով թաքցնել արցունքները:

Մի անգամ ներս մտավ, երբ մայրը տոպրակի միջի մազերն էր շոյում: Երբ նա տեսավ Սյաոցզյային, տոպրակն արագ դրեց բարձի տակ: Մի քանի անգամ մայրը հարցրել էր նրան.

-Տղաս, մենք տունը ծախե՞լ ենք: Կարո՛ղ ես ինձ ասել:

Սյաոցզյան միշտ արագ պատասխանում էր՝ «Չէ»:

Մայրն ասում էր.

-Նրանք չեն կարող ինձ բուժել: Հորդ ասա, որ էլ պետք չէ փող ծախսել:

Հետո հառաչում էր, պառկում ու փակում աչքերը, ասես կենտրոնանում էր ներհայեցման մեջ: Սյաոցզյան երբեք չէր մոռանում նրա հայացքը: Նա այնպես էր նայում, ասես տեսնում էր աշխարհի միջով, բայց նաեւ չէր ուզում մահանալ:

Սյաոցզյան չգիտեր՝ արդյոք կկարողանայի՞ն իրենց թույլ տալ պահել այդ փոքրիկ բնակարանը՝ իրենց միակ տունը, եթե մայրը մի քիչ երկար ապրեր: Անշարժ գույքի գործակալության աշխատողը մի քանի անգամ տեսել էր նրանց, որպեսզի համոզեր բնակարանը վաճառել, եւ նրանք այն ցույց էին տվել նաեւ մի քանի հնարավոր գնորդների, մի անգամ նույնիսկ գործարք կնքելով: Բնակարանը կգնեին, եթե լոգարանն անմիջապես ննջասենյակի դռան առջեւ չլիներ: Դա շատ դժվար ժամանակ էր հոր համար: Հիվանդանոցը նրան ստիպում էր վճարել, բայց եթե նա բնակարանը վաճառեր, ո՞ւր պիտի գնային: Ամեն ինչ անորոշ էր: Երբ մարդիկ, որ գրեթե պիտի գնեին բնակարանը, հայտնվեցին, որ տեսնեն այն, հենց դռան զանգը հնչեց, հայրը վեր թռավ թախտից, ասես ցնցված, եւ շունչը պահած ասաց.

-Նրանք էստեղ են:

Այդ պահին Սյաոցզյան զգաց հոր աչքերում բուն դրած ցավը: Այդ ցավը երկաթե խարանի պես այրեց նրան: Դեմքին մռայլ մի արտահայտություն՝ Դու Հուայմինը բացեց դուռը: Դռան առջեւ միջին տարիքի մի զույգ էր կանգնած: Հայրը թեթեւակի գլուխ տվեց, ճիգով ժպտաց եւ ներս հրավիրեց նրանց: Ձայնի մեջ լարված մի կայտառություն կար, եւ դա նրան ստիպում էր կեղծ տոնով խոսել:

Ամուսինները բնակարանային փորձառու որսորդներ էին եւ գործի դրեցին իրենց իմացած բոլոր հնարքները: Նրանք մի շարք թերություններ նկատեցին՝ բնակարանի հետ կապված: Սյաոցզյան ամբողջ կյանքում ապրել էր այդտեղ, բայց երբեք այդքան թերություն չէր նկատել: Նա թախտին նստած հեռուստացույց էր դիտում: Եվ զգաց, որ զայրացած ոգնու է

վերածվում: Հոր դեմքին ժպիտը դեռ մնում էր դաջված: Նա ասաց.

-Տեսեք, դիրքը հիանալի է: Լավ տեղ է: Այս օրերին չեք կարող այս վայրում այսպիսի գնով բնակարան գտնել: Կինս հիվանդ է, եւ մենք այլ ընտրություն չունենք: Թե չէ չէինք վաճառի:

Սյաոցզյան ականջ չէր դնում, բայց լսեց, թե հայրն ինչ ասաց: Հեռուստացույցը միացրած էր, լուրերն էին հաղորդում: Դրությունն Իրաքում լարված էր: Ամերիկան զորքերը տեղակայել էր Քուվեյթում, եւ բոլոր նշանները կային, որ պատրաստ է պատերազմի: Քուվեյթցի տղամարդիկ, երկարաթեւ, ճերմակ դիշդաշաներ հագած, շրջում էին Միջին Արեւելքի հաճելի արեւի տակ, ասես շուրջը տեղի ունեցող ոչինչ կապ չուներ իրենց հետ: Սյաոցզյան հանկարծ համակվեց մելամաղձոտ տխրությամբ:

Ամուսինները երկար ժամանակ զննում էին բնակարանը, մինչեւ վերջապես հեռացան՝ դարձյալ չմոռանալով թվարկել բնակարանի թերությունները: Սյաոցզյան նայեց հորը, որ դուռը փակեց ու երկար մի հառաչ արձակեց: Հայրն ուժասպառ տեսք ուներ, ասես հենց նոր էր ավարտել երկարատեւ վազքը: Անշարժ, փայտացած՝ նստեց թախտին, հայացքը հառեց հեռուստացույցին եւ սկսեց լուռ ծխել: Հեռուստացույցով շարունակվում էին Սադդամի մասին լուրերը: Սուրը կողքին կապած, ասես հնադարյան մի ռազմիկ, Սադդամը քաջարի տղամարդ էր: Աշխարհում ոչինչ չէր կարող վախեցնել նրան:

Սյաոցզյան ասաց.

-Մեր ամբողջ ունեցածն այս բնակարանն է: Եթե ծախենք, որտե՞ղ ենք ապրելու:

Հայրը տարակուսանքով, շվարած ու անհանգիստ նայեց նրան եւ ծուխը ծանր ներս քաշեց: Նրա միակ պատասխանը ծխի քուլան էր, որ դանդաղ վեր բարձրացավ եւ լուռ տարածվեց շուրջը:

Մայրը մենակ էր, երբ մահացավ: Տարօրինակ էր, որ թթվածնի դիմակը դեմքին չէր, այլ դրված էր բարձի կողքին: Բուժքույրերն անհանգիստ էին եւ շփոթված, բայց պնդում էին, որ մայրը խաղաղ է մահացել: Հայրն անխոս կանգնել էր՝ դռան շրջանակին հենված, բացակա հայացքով նայում էր բուժքույրերին, որ իրար խառնված ներսուդուրս էին անում՝ իրենց պարտականությունը կատարելով: Մոր մարմինը խաղաղ պառկած էր մահճակալին: Նա հեռացել էր առանց բառ իսկ ասելու: Եվ եսասերի պես հրաժեշտ էլ չէր տվել: Սյաոցզյան ոչ ոքի չասաց պոլիէթիլենե տոպրակում գտնվող նրա մազերի մասին: Նա տոպրակը վերցրեց եւ դրեց հին գրքի մեջ: Երբ կարոտում էր մորը, հանում էր տոպրակը եւ նայում մազերին:

3

Ջրի արտահոսքը տեղի ունենալուց հետո երեկոյան ջրմուղագործը եկավ եւ խողովակը նորոգեց: Երբ ավագ եղբայրը աշխատանքից հետո տուն եկավ, ապշահար մի հայացք գցեց շուրջբոլորն ու հարցրեց.

-Էս ո՞նց է տունն էսքան մաքրվել:

Սյաոցզյան մռայլված պատասխանեց.

-Ջուրն էր տուն լցվել:

Ընթրիքի ժամանակ չխոսեցին, մթնոլորտը սեղանի շուրջ լարված էր: Եղբայրներն զգույշ ուտում էին: Հայրն ասաց.

-Ես ներքեւ իջա ու թակեցի դուռը, բայց պատասխան չեղավ: Առաջին հարկում էլ ջուրը հասել էր պարոն Չենի բնակարան: Հատակը, անկողինները լրիվ թրջվել էին: Լավ է, որ Չենն իմ գործընկերն է, թե չէ կրակն էինք ընկնելու: Չենը լավ տղա է: Նույնիսկ չբողոքեց էլ: Կինը մի քիչ փնթփնթաց, բայց վճարելու մասին բան չասաց:

-Ուրեմն նրանց վերմակը թրջվել է: Դե, մնում է լվացնեն, ճիշտ չէ՞,- ասաց ավագ եղբայրը:

-Մենք խոսում ենք Չենի ընտանիքի մասին: Դու միայն մտածիր՝ ինչ կլիներ, եթե ուրիշ մեկը լիներ: Մի քանի օր առաջ էսպիսի մի դեպքի մասին լսեցի: Մեկի տանը ջրի գլխավոր փականը փչացել էր: Իրենք էլ տանը չէին եղել: Երկու օր հետո երբ ետ էին եկել, տեսել էին ամբողջ տունը ջրի մեջ է: Ներքեւում ապրող ծեր ամուսիններն էլ տանը չէին եղել: Նրանք էլ երբ ետ էին եկել, տեսել էին տունը լրիվ ջրի մեջ է: Մի խոսքով, մեծ աղմուկաղաղակ էր բարձրացել: Վերեւի հարեւաններն ստիպված էին եղել վճարել հասցված վնասի համար, բայց դրանից հետո ավելի տհաճ բաներ էին եղել: Ամեն օր ներքեւի էդ ծեր հարեւանները գնացել թակել էին վերեւի հարեւանի դուռը: Սկզբում ասել էին, որ ջրի պատճառով իրենց պատերի վրա բորբոս է բռնել, հեռուստացույցի ձայնն է կտրվել, հատակը ճռճռում է, իսկ գրքերը բոլորը ծռմռվել են: Հետո ասել էին, որ ռեւմատիզմ ու նեւրասթենիա ունեն, վերջում էլ՝ թե դատական հայց են ներկայացնում, քանի որ էլ չեն կարող էդ բնակարանում ապրել: Ու էդպես՝ անվերջ: Դա վերեւի հարեւաններին խելագարության էր հասցրել, վերջն էլ ասել էին՝ հերն անիծած, տունը ծախել էին ու գնացել:

Հայրը մի պահ դադար տվեց եւ անհանգիստ հայացքով նայեց որդիներին: Ապա ասաց.

-Դեռ չգիտեմ, թե ով է ապրում մեր ներքեւի հարկում: Գնացի գույքի

կառավարման գրասենյակ, բնակարանի սեփականատիրոջ հեռախոսահամարն իմացա, բայց երբ զանգ տվեցի, հաղորդագրություն ստացա, որ հեռախոսն անջատված է: Եթե առաջին հարկում Չենի տունը ջրի մեջ կորած էր, ուրեմն երկրորդ հարկում հաստատ շատ ավելի վատ վիճակ է: Եթե պարզվի, որ էդ հարեւանն էնպիսի մեկն է, որի հետ դժվար է գլուխ դնել, պետք է թողնենք ինչ լինելու է՝ լինի:

Ընթրիքից հետո հայրիկն էլի իջավ ներքեւ եւ թակեց հարեւանի դուռը, բայց ոչ ոք չպատասխանեց: Մռայլ ու խոժոռ դեմքով նորից վեր բարձրացավ:

Չինաստանի կենտրոնական հեռուստատեսության թղթակիցը հաղորդում էր Իրաքում տեղի ունեցող դեպքերի մասին: Բառերը նրա բերանից դուրս էին թռչում ինքնաձիգից արձակված կրակահերթի արագությամբ: Էկրանի ներքեւում վազող տողերը հայտնում էին, որ ամբողջ աշխարհում անհանգիստ վիճակ է: Դու Հուայմինը դժգոհ կնճռոտեց ճակատը եւ մուգ թեյից մի քանի կում արեց: Կողքին նստած Սյաոցզյան սկսեց փռշտալ: Իրար ետեւից մի քանի անգամ փռշտաց:

-Մրսել ես հաստատ,- ասաց Դու Հուայմինը: Նա որդուն հիսուն յուան տվեց եւ ասաց.

-Վերցրու: Գնա բժշկի մոտ ու դեղ առ:

Սյաոցզյան վերցրեց փողը: Նա նկատեց, որ սուրճի ապակե սեղանի վրայի բծերը վերացել էին, եւ այդտեղ միշտ դրված հին թերթերն էլ էին անհետացել: Սեղանի երեսն այնքան մաքուր էր, որ տարօրինակ էր թվում: Երբ դռնից դուրս էր գալիս եւ շրջվեց դուռն իր ետեւից ծածկելու, նայեց թախտին նստած հորը, որ գլուխը բարձին հենած ծխում էր: Կապույտ ծխի մի պարույր էր բարձրանում նրա գլխավերեւում: Հայրն ասես կաթվածահար էր եղել: Նա Սյաոցզյային նույնքան տարօրինակ ու անծանոթ թվաց, որքան սուրճի սեղանը:

4

Սյաոցզյան բժշկի մոտ չգնաց: Նա որոշ ժամանակ քայլեց աննպատակ: Գարնանային անձրեւոտ երեկոն ծաղիկների բուրմունքով էր հագեցած, փողոցի լապտերների լույսն արտացոլվում էր ճանապարհի վրա: Ավտոմեքենաներ էին անցնում՝ անիվները թշշացնելով եւ շուրջբոլորն անձրեւաջուր ցայտեցնելով: Ապա ամեն ինչ սուզվեց լռության մեջ: Սյաոցզյան վեր նայեց, բայց աստղեր չկային: Դրանք թաքնվել էին այն նույն ամպերի

ետեւում, որ ծածկել էին լուսինը: Հետաքրքիր էր, թե այդ պահին ինչ էր անում Սադդամը մոլորակի մյուս կողմում: Արդյոք Իրաքում գիշե՞ր էր: Չէր հիշում, թե քանի տարի առաջ էր, որ կեղտոտ նրբանցքներից մեկում մի ծեր ուղտ տեսավ: Բուրդը գրեթե ամբողջովին թափվել էր, իսկ աչքերն արցունքոտ էին: Ուղտի մեծ, մշուշոտ աչքերը խոնարհ ըմբռնումով նայում էին Սյաոցզյային: Հյուսիս-արեւմուտքից եկած մի տղամարդ, թասակը գլխին, կանգնած էր հեռախոսասյունի մոտ: Նա կասկածանքով նայում էր իրեն: Սյաոցզյան պատկերացում չուներ, թե որքան ճանապարհ էր կտրել այդ ոսկրոտ, ծեր ուղտը՝ այդտեղ հասնելու համար: Երբ թասակով մարդը հեծավ ուղտին ու քշեց նրան, ուղտը գլուխը շրջեց եւ նայեց Սյաոցզյային: Սյաոցզյայի սիրտը ցավեց: Հասկացավ, որ ուղտը երբեք չի կարող վերադառնալ իր տուն՝ անապատ: Նա կմեռնի իր հարավից շատ հեռու: Այլեւս չի կարող դիմանալ երկար ճանապարհի տանջանքներին: Եվ ո՞վ իմանա, թե մի օր թասակով այդ մարդը նրան սպանդանոց չի տանի:

Այդ օրվանից Սյաոցզյան սիրեց ուղտերին: Նրանց խոնարհ ըմբռնման մեջ դիմացկունություն կար: Քանի որ սիրում էր ուղտերին, սիրում էր նրանց հետ կապված ամեն բան, այդ պատճառով էլ սիրում էր դիշդաշա հագած միջինարեւելցի տղամարդկանց, որոնք հեծնում էին ուղտերին: Մի քանի տարի առաջ հեռուստատեսությամբ միշտ լուրեր էին հաղորդվում Արաֆաթի մասին: Արաֆաթը սափրված չէր, սպիտակ դիշդաշա էր հագնում, եւ բարի, բայց վճռական աչքեր ուներ: Նա ուներ ուղտերին բնորոշ հատկանիշները: Որոշ ժամանակ անց, Երկրորդ աշխարհամարտի մասին մի լուսանկարում Սյաոցզյան հաճելի զարմանքով տեսավ, որ եթովպացիները, հրացանները ձեռքներին, հերոսաբար առաջ էին սլանում՝ ուղտերին հեծած:

Սյաոցզյան մտավ համացանցային կապ ունեցող սրճարաններից մեկը եւ կյանքում առաջին անգամ նստեց կարդալու իսկական նորությունները իսկական ուշադրությամբ: Բոլոր առաջատար լրատվամիջոցները Իրաքի մասին էին լուրեր հաղորդում: Ակնհայտ էր, որ ամեն րոպե կարող էր պատերազմ բռնկվել: Իրաքցի որոշ ջերմեռանդ երիտասարդներ փողոց էին դուրս եկել՝բողոքելու Իրաքի գործերին ԱՄՆ-ի միջամտության դեմ: Բայց իրաքցիների մեծամասնությունը միջին դիրք էր գրավում կամ սպասում էր, թե ինչ կլինի: Սադդամը պատկերվում էր սպառազինված, սուրը կողքին կապած, եւ քաջալերում էր իր պալատական պահակախմբին: Թավ մորուք ուներ եւ արժանապատիվ տեսք, որ իր երկրպագուների մոտ նրան կուռք էին դարձնում: «Օ՛, Սադդամ: Դու Միջին Արեւելքի մարդկության

փայլուն կատարելությունն ես»: Այս բառերը Սյաոցզյայի մտքում լուռ ճիչի էին վերածվում: Նա չգիտեր, թե ինչու է Սադդամի կողմնակից դարձել եւ չգիտեր, թե ինչու է այդքան հուսահատ խելահեղությամբ հույս փայփայում, որ պատերազմը կսկսվի: Բոցավառ սրտով՝ նա անհամբեր սպասում էր, թե երբ կսկսվեն կրակոցները: Նրա կուռքը պատերազմով մկրտվելու կարիք ուներ:

Սաոցզյան համացանցում շատ լուսանկարներ ու տեղեկատվություն գտավ Սադդամի մասին, պատճենեց դրանք եւ տեղադրեց իր կայքէջում: Այնպես որ՝ հետո կարող էր ըստ արժանվույն՝ հարգալից եւ մանրամասն ուշադրություն դարձնել այդ ամենին: Նրա դասընկերները Տ.Հ.Է. խմբի կամ Ցեյ Չոուի երկրպագուներ էին, բայց դա պարզապես ապացուցում էր, որ նրանք անչափահաս են ու մակերեսային, եւ Սյաոցզյան Է՛լ ավելի արհամարհանքով էր լցվում նրանց հանդեպ: Նա իրեն դպրոցում բոլորից բարձր էր համարում, որովհետեւ ուներ Սադդամին՝ անզուգական մորուքավոր առաջամարտիկին: Խավարում շողացող լույս էր նա, որ հանգրվան էր Սյաոցզյայի հույսերի համար: Իրաքը հաղթանակ էր տանելու, եւ Սադդամը հավերժ ապրելու էր իր սրտում՝ որպես իր հոգեւոր առաջնորդը:

Հյուրասենյակում լույսը չէր վառվում: Հայրը դեռ նստած էր թախտին ու անհաղորդ ծխում էր: Հեռուստացույցն անջատված էր: Սյաոցզյան կամացուկ հրեց բացեց դուռը՝ թախտը զգույշ շրջանցելու եւ ուղիղ իր սենյակը գնալու մտադրությամբ: Թախտի վրայից ձայն լսվեց.

-Դեղ վերցրի՞ր:

Սյաոցզյան անմիջապես պատասխանեց.

-Հա:

Նա տեսավ մթան մեջ լույս տվող՝ հոր ծխախոտի կասկարմիր ծայրը:

-Գնա քնիր,- ասաց հայրը:

Սյաոցզյան հարցրեց.

-Ներքեւի ապրողները չեկա՞ն:

Հայրն ասաց.

-Դեռ ոչ ոք չի երեւում:

Հայրը թախտից վեր կացավ, թեքվեց առաջ, եւ մթան մեջ Սյաոցզյան լսում էր, թե ինչպես է հոր ողնաշարը շարժվելիս ճռճռում: Հայրը ծխախոտի մոխիրը թափ տվեց եւ ասաց.

-Երեկոյան մի անգամ էլ ներքեւ իջա, դուռը թակեցի, բայց տանը դեռ ոչ ոք չկար: Դռնապանին՝ պարոն Չժանին հարցրի, բայց նա էլ չգիտի, թե ով է ապրում էդտեղ:

Նա ծխախոտի մնացորդը գցեց մոխրամանի մեջ եւ ասաց.

-Կարո՞ղ է էդ տունը դատարկ է: Տեսե՞լ ես, որ մեկնումեկը ներս մտնի կամ դուրս գա:

Սյաոցզյան ասաց.

-Ոնց որ թե հա: Մի անգամ դեմս մի կին դուրս եկավ: Կարծում եմ էդ-տեղ մարդ է ապրում:

Սյաոցզյան լարվեց՝ փորձելով հիշողությունը տեղը բերել: Թվաց՝ վեր-հիշեց երիտասարդ մի կնոջ, մոտ երեսուն տարեկան, որ դուրս էր գալիս այդ բնակարանի դռնից: Կինը վատ տեսք չուներ:

Աշխարհն այդ գիշեր կարծես փլվեց ինքն իր վրա: Իսկ օդը լցված էր անսովոր բզզացող ձայնով:

Անկողնում պառկելով՝ Սյաոցզյան սկսեց չոր հազալ: Կոկորդում ասես աղվամազեր էին: Կոկորդը սարսափելի քերծվում էր ու քոր գալիս, եւ նա չէր կարողանում հազալով մաքրել: Դրսում կայծակը լուսավորեց երկինքը, եւ հնչեց ամպրոպի ձայնը: Ասես երկնքում պատերազմ էր մղվում: «Օ՛, Սադդամ: Ի՞նչ ես անում այս պահին»,- մտածեց Սյաոցզյան:

5

Պատերազմն սկսվեց այդ առավոտ: Աշակերտների դասամիջոցի ժամն էր, եւ բոլորը դուրս էին եկել մարզադաշտ ու ֆիզիկական ռիթմիկ վարժություններ էին անում բարձրախոսից հնչող հրահանգների ներքո: Հենց որ վարժություններն ավարտվեցին, նրանց կանոնավոր շարքերը խառնվեցին, եւ բոլորը ցրվեցին: Որոշ աշակերտներ ետ գնացին իրենց դասասենյակները, բայց ավելի անհնազանդները հապաղեցին դրսում: Եղանակի տեսությունն ամպրոպ էր կանխատեսել, բայց ամբողջ առավոտ արեւը, խավոտ մի շրջանակով ներկված, ինչպես խոնավ թղթի կտոր, թույլ ու անկենդան փայլել էր թավ ամպերի ետեւից: Եթե անձրեւ գար, դպրոցը չեղյալ կհամարեր այդ օրվա մարմնամարզությունը, դրա համար էլ ան-բարյացակամ եղանակը զայրացրեց աշակերտներին, որոնք մարմնա-մարզություններ չէին սիրում: Վարժությունների ընթացքում Սյաոցզյան կանգնած էր Կարտոլի կողքին, եւ երբ դրանք ավարտվեցին, հաստլիկ Լյու Սինը, որ նրանց ետեւում էր, հանկարծակի հարձակում գործեց: Նա բռնեց Լի Լենի գլուխը, իր թեւի տակ առավ, ծիծաղեց եւ ասաց.

-Փսլնքոտ քաքլան, էսօր ինձ համար մի տուփ ծխախոտ պիտի առնես:

Լի Լենի գլուխը սեղմված էր, դեմքը կարմրատակած: Նա պահել էր շունչը, աչքերը լայն բացած եւ ատամները սեղմած՝ սպասում էր, որ դուրս պրծնելու մի հնար գտնի: Հաստլիկը կարող էր կարծել, թե Կարտոլը դեռ չի հանձնվում, դրա համար էլ նրա գլուխը բռնած՝ մի քանի քայլ առաջ քաշեց: Լի Լենը պայքարում էր ոտքի վրա մնալու համար, բայց Լյու Սինն այնպես ամուր էր բռնել նրան, որ նա ոչինչ չէր կարող անել:

Լյու Սինն ամեն անգամ այդպես էր անում, եւ ամեն անգամ ճնշվելով՝ Լի Լենն ստիպված էր հանձնվել: Երբ աղջիկներն ականատես էին լինում այդպիսի տեսարանների, հնարավորինս հեռու էին քաշվում: Չժաո Յասին միակ աղջիկն էր, որ այդպես չէր անում: Նա սառն հայացքով նայում էր Լյու Սինին՝ աչքերում արհամարհանք: Այդ օրը նա երկնագույն շրջազգեստ էր հագել, բայց կեղծ համեստություն չէր անում: Լուրջ տեսքով՝ նա քայլեց ուղիղ դեպի Լյու Սինը եւ ասաց.

-Ի՞նչ իրավունքով ես կպչում նրան ու ծաղրում: Հետո՞ ինչ, որ նրանից ուժեղ ես:

Լյու Սինի դեմքին անկեղծ զարմանք հայտնվեց: Նա լսածին չէր հավատում: Սկսեց հռհռալ եւ ասաց.

-Կարտոլ, այ քաքլան, դու պետք է որ կնամոլի մեկը լինես:

Ճերմակամաշկ Չժաո Յասին սաստիկ կարմրեց: Խեթ նայելով Լյու Սինին՝ նա արագ հեռացավ: Չժաո Յասին դպրոցի գեղեցկուհին էր, բոլորն էլ այդպես էին մտածում, եւ Սյաոցզյայի մտքով իսկ չէր անցնի, որ նա կպաշտպանի Լի Լենին: Չժաո Յասիի այդ արարքից խիստ ընկճված եւ ազդված՝ Լի Լենը նայում էր հեռացող աղջկան: Իրեն որոշակիորեն անպատժելի զգալով՝ Լյու Սինը թեւը փոքր-ինչ թուլացրեց, եւ Լի Լենը կարողացավ դուրս պրծնել: Լի Լենն ուժով թափահարեց ձեռքերը: Նա նման էր ամուր սեղմված զսպանակի: Լյու Սինին դիմելով՝ սառցե ձայնով ասաց.

-Լավ կանես պաշտպանվես:

Նախքան Լյու Սինը կկարողանար հակազդել, Լի Լենը դուրս պրծավ: Լյու Սինը բղավեց նրա ետեւից.

-Կարծում ես կարո՞ղ ես ինձ հետ կռվել:

Նա վազեց Լի Լենի ետեւից եւ հրեց մեջքին: Լի Լենը պոկվեց նրանից, բայց Լյու Սինը ճանկեց նրան, ուժեղ ձգեց դեպի իրեն եւ ասաց.

-Լավ կանես ասածս անես, քու...

Լի Լենը շրջվեց, մատն ուղղեց Լյուի դեմքին եւ ասաց.

-Մեկ էլ ինձ ձեռք տվեցիր՝ քեզ էլ կսպանեմ, ընտանիքիդ էլ:

Լի Լենի սովորաբար անտարբեր ու անկյանք, մեռած ձկան աչքերը

փայլում էին դաշույնների պես: Լյու Սինն իր տեսածից շփոթվեց ու սառավ: Կարողացավ միայն քրթմնջալ՝ «Դու դեռ սպասիր», նախքան Լի Լենին թողնելը: Ուսերը թափահարելով՝ Լի Լենը խույս տվեց, այնպես նայելով, ասես ոչ ոքից չէր վախենում: Հենց որ դասի զանգը հնչեց, աշակերտներից մեկը բղավեց.

-Ամերիկան ու Իրաքն սկսեցին կռիվը:

Սյաոցզյան այդ առավոտ դասի ժամանակ ոչինչ չլսեց: Հենց որ զանգը հնչեց, նա գնաց դեպի սրճարան՝ համացանցով լուրերին տեղեկանալու: Հուզախառով սեղմեց մկնիկը: Դա ճիշտ էր: Մարտադաշտում արված լուսանկարներում խառնաշփոթ էր, անընդհատ գնդակոծումից առաջացած ծուխը պարուրել էր ողջ Բաղդադը: Ահավոր բաներ էին ասվում՝ «գլխատիչ հարված», «ցնցում եւ սարսափ»: Համակարգչի մուկը բռնած՝ Սյաոցզյայի ձեռքի ափը քրտնել էր: Օդային հարձակման տագնապի ահազանգերը շարունակաբար հնչում էին Բաղդադի վրա: Կրակներ էին բռնկվում: Սուլում էին կործանիչ ինքնաթիռները, ապա հետեւում էին հուժկու պայթյուններ: Սյաոցզյան գիտեր, որ Սադդամը դեռ ողջ է: Նա այդ պահին պետք է որ պատյանից հանած լիներ սուրը՝ իր զորքերին ուղղորդելով, որպեսզի հակահարված հասցնեն ամերիկացիներին: Սա իսկապես պատերազմ էր: Օ՛, Սադդամ: Սյաոցզյան ետ գնաց՝ հենվելով աթոռի թիկնակին եւ երկար, խորը շունչ քաշեց: Ականջակալներում հնչում էր Մայքլ Ջեքսոնի «Երկրի երգը»: Փոփ երաժշտության արքայի անվրեպ ձայնն ասեղի պես ծակող էր ու ցավալի: Սյաոցզյան նստած էր համակարգչի առջեւ՝ ապշահար հայացքով, ցնցված, թողնելով, որ ժամանակը սահի անցնի, երազելով այն օրվա մասին, երբ ինքն իսկական տղամարդ կլինի, կընտրի իր զենքը եւ կգնա պատերազմ՝ սպանելու թշնամուն:

6

Ամբողջ օրը Դու Հուայմինը խենթացած էր մեկ օր առաջ տեղի ունեցածի պատճառով: Երբ հեռախոսազանգ էր ստացել, շուտափույթ ժամանակ էր խնդրել, որպեսզի տուն գնա: Գործընկերը խիստ զարմացած նայել էր նրան եւ հարցրել.

-Ի՞նչ է տեղի ունենում, Հուայմին:

Դու Հուայմինն արագ վերցրել էր վերարկուն եւ ձեռքերը մտցրել վերարկուի թեւքերի մեջ:

-Մեր բնակարանը ջուր է լցվել: Մեր ներքեւի հարկի տանն ավելի վատ վիճակ է հաստատ: Գնում եմ տեսնեմ,- ասել էր:

Տուն գնալիս ինքն իրեն քրթմնջում էր. «Տեսնես շա՞տ է վնասը: Ջուրը հասել էր ներքեւի տան հատակին ու մի հարկ էլ ներքեւ, ուրեմն հաստատ վատ վիճակ է»:

Երկրորդ հարկի դռան թակոցին ոչ ոք չպատասխանեց: Դու Հուայմինը երկար թակեց դուռը, ապա փորձեց նայել դռան վրայի երկկողմանի դիտանցքից, բայց միայն ինքն իր աղոտ անդրադարձը տեսավ: Ջրի արտահոսքից մեկ օր էր անցել, եւ նա անհանգստանում էր: Ստամոքսում առաջացած կոշտ գունդն ավելի էր ծանրանում: Նրանք ապրում էին դեռ 1980-ականներին կառուցված հին շենքում: Շենքը հատկացվել էր իրենց աշխատանքային միավորման աշխատողներին՝ բնակվելու համար: Հատակի սալիկները ջուրը չէին պահում: Երբ խոհանոցում ոտքերդ լվանում էիր տաշտի մեջ, եթե հատակին մի փոքր ջուր իսկ թափվեր, հատակի ճեղքերով կիջներ ներքեւի հարկ: Դու Հուայմինը չէր ուզում մտածել այն մասին, թե ինչ արած կլիներ դարի ջրհեղեղը, որովհետեւ այդ միտքը սարսափեցնում էր նրան: Ո՛վ իմանար, թե ջրի հոսքն ինչ էր արել ներքեւի բնակարանում:

Հեռուստատեսությամբ հայտնում էին, որ պատերազմն Իրաքում անխուսափելի էր: Երբ երիտասարդ էր, Դու Հուայմինը հետաքրքրվում էր միջազգային իրադարձություններով, հետաքրքրվում էր, թե ինչ է տեղի ունենում Չինաստանում, հետաքրքրվում էր այն ամենով, ինչն իր հետ անմիջական կապ չուներ: Հիմա նա իրեն նեղություն չէր տա անհանգստանալ նույնիսկ եթե իր քաղաքը գտնվեր ոչնչացման եզրին, քանի որ մտածում էր՝ ամենավատ բանը, որ կարող էր լինել, բոլոր մյուսների հետ մեռնելն էր: Որոշել էր բնակարանը հիմնովին մաքրման տալ: Բայց որքան ջանք էր թափում, այնքան ավելի էր հուսալքվում, որովհետեւ տունն ավելի ու ավելի անմխիթար տեսք էր ստանում: Պատերը մի ժամանակ մաքուր ու սպիտակ էին, բայց հիմա մաշված ու տգեղ տեսք ունեին: Նրա բոլոր գործընկերներից յուրաքանչյուրը երկուական բնակարան ուներ: Դու Հուայմինի տարիքի ցանկացած մեկի համար բացարձակ ընդունված կարգ էր երկու բնակարան ունենալը, բայց Դու Հուայմինը չուներ: Կեսօրից հետո, երբ նրա գործընկերներն անելու բան չէին ունենում, նստում էին աշխատասենյակում եւ ոգեւորված խոսում բնակարանների գների մասին: Մինչդեռ Դու Հուայմինը նստում էր առանձին մի անկյունում եւ լրագիր էր կարդում՝ ամեն կերպ ջանալով էջերը հնարավորինս կամաց թերթել, քիչ աղմուկ

հանել եւ քիչ շարժումներ անել, որպեսզի ուշադրություն չգրավի: Նա լուռ էր մնում՝ բացարձակ անտարբերություն ցուցաբերելով գործընկերների զրույցի նկատմամբ: Մի անգամ ասաց.

-Ինձ ընդամենը քնելու տեղ է պետք: Ի՞նչ կարիք կա անհանգստանալ անշարժ գույք ունենալու համար:

Գործընկերներից մեկը մեղմ հումորով ասաց.

-Հուայմինը սիրում է, որ ամեն բան հեշտ լինի: Նա ավելի անհոգ կյանքով է ապրում, քան մենք: Մենք մեր սեփականության ստրուկն ենք:

Բայց Հուայմինն, իհարկե, գիտեր, թե իրականում նրանք ինչ են մտածում: Դու Հուայմինը հույս չուներ, թե կկարողանա նոր բնակարան գնել: Նա նույնիսկ երազում էր այդ մասին: Առաջին հերթին դա ուզում էր ինքնահարգանքի համար, երկրորդ հերթին՝ ավագ որդին՝ Դու Յուանը, մի քանի անգամ ակնարկել էր, որ ընկերուհին չի ամուսնանա իր հետ, մինչեւ նոր բնակարան չունենան: Այս հարցում որդու եւ նրա ընկերուհու, ինչպես նաեւ ընկերուհու ընտանիքի միջեւ շատ տարաձայնություններ կային: Երբ Դու Յուանը տուն էր գալիս, որ գիշերն այդտեղ անցկացնի, Դու Հուայմինն արդեն գիտեր, որ նա եւ ընկերուհին դարձյալ վիճել են այդ թեմայով:

Դու Հուայմինը մտածել էր, թե արդյոք պե՞տք է բնակարան գնի որդու համար: Դու Յուանը չափազանց մեծ պահանջներ չուներ, եւ աշխարհում ծնողի համար ամենաբնական բանը ամուսնացած զավակի համար բնակարան ձեռք բերելն էր: Խնդիրն այն էր, սակայն, որ Դու Հուայմինը բավականին գումար չուներ կանխավճար մուծելու համար, որը հարյուր հազար յուանից պակաս չէր լինի: Իսկ նա առավելագույնը հիսուն կամ վաթսուն հազար ուներ: Կինը վախճանվեց առանց մեկ անգամ վիրահատվելու, ինչը նրանց համար ամբողջ մի կարողություն կարժենար, բայց նրա հիվանդությունը ընտանիքի նյութական միջոցներին շատ լուրջ հարված հասցրեց: Եվ եթե Դու Հուայմինը բնակարան գներ, ի՞նչ էր անելու կրտսեր որդու համար: Արդյո՞ք բնակարան չէր լինելու կրտսեր որդու համար, երբ ավագ որդին ի վերջո ամուսնանար: Բացի այդ, ի՞նչ կլիներ, եթե Սյաոցզյան ինստիտուտ ընդունվեր: Դա մեկ այլ մեծ ծախս էր լինելու: Մի ժամանակ Սյաոցզյան շատ էր խոսում այն մասին, թե ինչպես իր մի խումբ դասընկերներ սովորելու համար գնում էին Կանադա կամ Ավստրալիա: Եթե հիմա ինքը երկրորդ բնակարանը գներ, դա հավասարազոր կլիներ երաշխավորելու, որ ապագայում պարտքերի տակ էր ընկնելու: Մի անգամ Սյաոցզյայի հետ առանձին խոսել էր Դու Յուանի համար բնակարան գնելու հավանականության մասին: Հարցրեց նրան, թե արդյոք չի՞ մեղադրի

իրեն, եթե համալսարան ընդունվելու դեպքում ուսման վարձ վճարելու փող չունեեան: Սյաոցզյան անձնազոհաբար տարուբերեց գլուխը եւ ասաց.

-Գնիր: Ուշ թե շուտ պետք է տեղափոխվենք, դուրս գանք էս աղբանոցից: Մի քանի տարի անց չենք կարողանա ծախել, նույնիսկ եթե ուզենք:

Դու Հուայմինը չէր սպասում, որ Սյաոցզյան այդքան մեծահոգի կլինի: Թվում էր՝ տղան պատասխանելուց առաջ չէր էլ մտածել եւ իր ապագան ամենեւին հաշվի չէր առել: Ի վերջո, նա դեռ չափահաս չէր, դեռ չէր կարող շատ հեռու ապագայի մասին մտածել: Դու Հուայմինն այլեւս բնակարան գնելու մասին թեման չշոշափեց, բայց մտքից չէր հանում, եւ դա միշտ ճնշում էր նրան: Երբ Դու Յուանը տանն էր լինում եւ ընկերուհու մասին հարցն էր բարձրացնում, նա փորձում էր լրիվ չեզոք դիրք գրավել: Որդուն ասում էր.

-Նրա մասին հոգ կտանեմ միայն, երբ կամուսնանաս հետն ու տուն կբերես:

Սյաո Լյուն մի քանի անգամ այցելել էր Դու ընտանիքին: Նա գյուղից էր, բայց եկել էր քաղաք համալսարան ընդունվելու համար եւ միանգամայն վճռականորեն էր տրամադրված՝ այստեղ մնալու: Ահա թե ինչու ամեն անգամ, երբ գալիս էր այս բնակարան, ամեն բան հավաքում, տեղը տեղին կարգի էր բերում, ասես իր սեփական բնակարանը մաքրելիս լիներ: Միայն այն ժամանակ, երբ նա մաքրում էր, Դու Հուայմինը, որ թախտին նստած լուռ ծխախոտ էր ծխում, մի տեսակ սպառնալիք էր զգում: Այդ ամենն արվում էր Դու Հուայմինի համար: Աղջիկը վճռականորեն տրամադրվել էր ամուսնանալ Դու Յուանի հետ եւ դառնալ այդ ընտանիքի տանտիրուհին:

Դու Հուայմինին դուր չէին գալիս չափազանց ինքնավստահ ու քմահաճ աղջիկները: Նրա համար տան կատարյալ հարսը զուսպ ու համեստ, վայելուչ, իրեն երբեք չպարտադրող եւ, որ նախընտրելի էր, քաղաքի աղջիկ պիտի լիներ: Սյաո Լյուն քամու պես արագաշարժ էր, կրակի կտոր: Դու Հուայմինը չէր կարծում, որ նա ճիշտ է: Գիտեր, թե ինչ է նա ուզում: Ուզում էր այն, ինչ Դու Յուանն էր ուզում: Այդ մասին Դու Յուանն ասաց, թեեւ նրբանկատորեն, Սյաո Լյուի առաջին այցելությունից առաջ: Դու Յուանն ասաց.

-Մենք նորից ենք բնակարաններ փնտրում: Մի քանի լավ բնակարան ենք տեսել, բայց բավարար չափով կանխավճար չունենք:

Սկզբում Դու Հուայմինն անհանգստացավ, երբ լսեց, որ որդին այդպիսի բան է ասում, բայց ի վերջո անտարբեր դարձավ: Պարզապես ասում էր.

-Մի քիչ սպասենք:

Նրանք նորից ու նորից խոսում էին այդ մասին, եւ ժամանակի ընթացքում Դու Հուայմինը որդու աչքերում ավելի ու ավելի ակնհայտ էր տեսնում աճող արհամարհանքը: Նա իրեն ավելի ու ավելի քիչ էր իսկական հայր զգում: Նա կորցնում էր իր ազդեցությունն ու հեղինակությունը:

Ամեն անգամ իրենց բնակարանային համալիրում գտնվող անշարժ գույքի գործակալության գրասենյակի մոտով անցնելիս Դու Հուայմինը մի պահ կանգ էր առնում այդտեղ փակցված ցուցակի առջեւ: Նա հավանել էր մի քանի հին բնակարաններ, որ նախատեսված էին վերավաճառքի համար, բայց միշտ տատանվում էր եւ երբ ետ եկավ, դրանք արդեն վաճառվել էին: Չէր հասկանում, թե որտեղից էին հանկարծ եկել բոլոր հարուստ մարդիկ: Ժամանակները փոխվում էին: Ավելի ու ավելի աղքատ մարդիկ կային, բայց կային նաեւ ավելի ու ավելի հարուստ մարդիկ: Ամեն բան փոխվել էր: Նա մի կողմ քաշեց վարագույրը եւ նայեց բնակարանային համալիրին: Ծառերը նույն ծառերն էին, ամեն տարի դրանց տերեւները կանաչից դեղինի էին փոխվում, նորից ու նորից, լուռ կրկնության մեջ, բայց պարզապես չգիտեիր, թե ինչ փոփոխություն կարող է լինել ցանկացած պահի:

Ճաշի ժամանակ Դու Հուայմինն անխոս՝ աչքերը հառել էր հեռուստացույցին, մտքով դեռ ներքեւի հարկի բնակարանում էր: Թրջված թերթերն ու գրքերը կնճռոտվել ու ծռմռվել էին: Այդ օրը պարոն Չենը եկել էր եւ ասել, որ իրենց բնակարանում ջուրը ժամանակ առ ժամանակ դեռ կաթում է, եւ ապրելն անհնարին է: Դու Հուայիմինը ոչինչ չէր կարող անել, ներողություն խնդրելուց բացի: Պարոն Չենը հարցրեց.

-Երկրորդ հարկում ապրողը դեռ չի՞ վերադարձել:

Դու Հուայմինը գլուխը տարուբերեց: Պարոն Չենն ասաց.

-Հաստատ ինչ-որ մեկն ապրում է էնտեղ: Մի երկու օր առաջ ձայն լսեցինք, ինչ-որ շարժում կար:

Դու Հուայմինը, մի տեսակ պաշտպանվելով, ասաց.

-Ես ժամը մեկ իջնում եմ ներքեւ եւ թակում դուռը: Բայց ոչ ոք չկա:

-Լավ, հիմա ի՞նչ անենք,- հարցրեց պարոն Չենը:- Երկրորդ հարկում պետք է որ շատ վնասներ հասցված լինեն:

Դու Հուայմինի հետ ասես ինչ-որ բան պատահեց, նա ցնցվեց: Ապա անվճռականորեն ասաց.

-Մենք չենք կարող դուռը կոտրել ու ներս մտնել, չէ՞:

Պարոն Չենն ասաց.

-Իհարկե ոչ:

Պարոն Չենի գնալուց հետո Դու Հուայմինը մեկ անգամ էլ զանգեց երկրորդ հարկի բնակարանի տիրոջ համարով, բայց ինչպես միշտ լսեց ձայնագրությունը, որ ասում էր, թե այդ հեռախոսահամարն անջատված է: Ձեռքերը դողում էին, երբ հեռախոսը ցած դրեց: Մի տեսակ անորոշ կանխազգացում ուներ: Նրա կենդանակերպի տարվա նշանը վատ բան էր կանխանշում: Կույր բախտագուշակն ասել էր նրան, որ հատկապես զգույշ լինի գարնանը: Այն ժամանակ ինքը հարցրեց, թե ինչից է զգուշանալու, սակայն բախտագուշակը ոչինչ չասաց: Դու Հուայմինը հասկացավ, որ այդ մարդն ավելին չի ասի, քանի դեռ նրան մի քիչ շատ փող չի տվել, բայց զսպելով ինքն իրեն՝ հարցը չկրկնեց: Եվ հիմա կարծես դժբախտությունն սկսել է ճնշել իրեն, ասես քունքին դրված ատրճանակ լինի: Ուզում էր փախչել, բայց փախչելու տեղ չուներ:

Ճաշից հետո նա շրջեց ամբողջ բնակարանային համալիրում՝ հարցնելով, թե արդյո՞ք որեւէ մեկն ինչ-որ բան գիտե երկրորդ հարկի բնակարանի սեփականատիրոջ մասին: Ամեն մեկն ինչ-որ բան ասաց՝ մեկը մյուսից տարբեր, եւ շրջելով ու հարցուփորձ անելով՝ նա այդպես էլ չկարողացավ իմանալ, թե ով է այդտեղ բնակվում: Բնակարանի սեփականատիրոջ անունը Չժոու Ցյուան էր, բայց Չժոուի հեռախոսահամարն անջատված էր: Երկրորդ հարկում, Չժոու Ցյուանի բնակարանի դիմացի տանն ապրողն ասաց.

-Չժոու Ցյուանը վաղուց է տեղափոխվել:

Դու Հուայմինը խնդրեց, որ իրեն տեղեկություններ տան, թե ինչպես կապվի Չժոուի հետ, բայց այդ մարդն ասաց.

-Ես ինչպե՞ս կարող եմ իմանալ, թե նա ուր է գնացել: Ինչո՞ւ եք ուզում մարդկանց հետ շփվել այս տհաճ վայրում: Կարծում եմ այդտեղ հիմա մի կին է ապրում, բայց չգիտեմ՝ հետն էլի մարդ կա՞, թե՞ մենակ է: Ամեն դեպքում, նա միշտ ուշ է տուն գալիս, եւ ես դեռ երբեք չեմ հանդիպել նրան: Երիտասարդներն այսօր մեզ նման չեն: Նախկինում մենք ընկերներ էինք մեր բոլոր հարեւանների հետ: Երիտասարդներն այսօր փակվում են աշխարհից, հեռու պահում իրենց եւ ոչ մի կապ չունեն իրենց շրջապատի մարդկանց հետ:

Դու Հուայմինն ստիպված էր տուն վերադառնալ: Նա արդեն ետ էր եկել, իսկ Սյաոցզյան կլանված հեռուստացույց էր դիտում: Դու Հուայմինն ասաց.

-Ամբողջ օրը հեռուստացույց ես նայում: Էս ի՞նչ է, դպրոց չե՞ս գնացել:

Սյաոցզյան ասաց.

-Էսօր հատուկ օր է: Ամերիկացիք հարձակվում են Իրաքի վրա: Աշխարհն էլի պատերազմի մեջ է:

Զայրացած Դու Հուայմինն ասաց.

-Ամեն օր էլ պատերազմ է: Էդ անտերը մեզ հետ կապ չունի:

Սյաոցզյան շրջվեց, որ հորը նայի եւ լուրջ դեմքով ասաց.

-Ինչո՞ւ ես ասում, թե դա մեզ հետ կապ չունի: Մենք հիմի ապրում ենք համաշխարհային մեծ մի գյուղում: Ամեն ինչ իրար հետ կապ ունի: Մի տեղ մի բան փոխվում է՝ ամեն տեղ զգացվում է: Ո՞նց կարող ես ասել, թե դա մեզ հետ կապ չունի: Եթե Իրաքը դադարեցնի նավթի վաճառքը, բենզինի գինն ամեն տեղ կբարձրանա:

Դու Հուայմինը քմծիծաղեց եւ ասաց.

- Ոնց որ թե պատրաստվում ես մեքենա ունենալ: Բենզինի գնի մասին անհանգստանում ես, որ ի՞նչ:

Չնահանջելով՝ տղան ասաց.

-Տաքսի նստում ես, չէ՞:

Երկուսով նստեցին թախտին՝ պատերազմի մասին վերջին լուրերը նայելու: Սի-Էն-Էնի անձնակազմը տարհանել էր իր գրասենյակները: Գերմանիան ՍԱԿ-ին կոչ էր անում միջամտել Իրաքի գործերին: Հազարավոր ցուցարարներ, որ դեմ էին պատերազմին, հավաքվել էին Սպիտակ տան առջեւ՝ ի նշան բողոքի ընդդեմ Իրաքի վրա հարձակման: Բաղդադի օդը ռմբակոծությունների թանձր ծխով էր լի, եւ պայթյունների ձայներն ու ցնցումներն էին լսվում ու երեւում հեռուստացույցի էկրանից:

Այդ գիշեր, ուշ ժամի, երբ Սյաոցզյան խոր քնած էր, Դու Հուայմինն անկողնում պառկած լսում էր հյուրասենյակի պատի ժամացույցի տկտկոցը: Ձայնն ասես մի տեսակ խախտված ու ընդհատ-ընդհատ էր հնչում: Նա մեկ րոպե իսկ աչք չէր փակել, իսկ ձայնն ազդում էր նյարդերի վրա: Նրա համար անքնության ամենավատ նշանն այդ ժամացույցի ձայնն էր: Լսում էր, թե ինչպես է իր կյանքն աստիճանաբար մարում՝ վայրկյան առ վայրկյան, րոպե առ րոպե: Ժամացույցի սլաքի ամեն տկտկոցի ու շարժման հետ նրա կյանքն ավելի էր կարճանում: Կաթիլ առ կաթիլ, անընդհատ՝ թափվում էր, ինչպես լավ չփակվող ծորակից: Ձայնն ազդում էր նյարդերի վրա: Վաղ թե ուշ՝ ջուրը չորանալու էր իր ձեռքերի մեջ, եւ ինքն ի վերջո դառնալու էր չորուցամաք մի դիակ: Գիշերը լուռ էր ու խաղաղ, ինչպես մտասույզ եւ ներհայեցող մի վանական: Նա չէր կարողանում քնել: Փակեց աչքերը եւ ընկավ արթուն երազանքի մի տեսակ խառն զգացողության մեջ: Լուսադե-

մին, ժամը չորսին մոտ, ցնցվեց աստիճաններով վեր բարձրացող ոտնաձայներից: Աստիճանների վրա, ստակատոյի հստակ եւ ընդհատ ռիթմով բարձրակրունկ կոշիկների կտկտոց էր լսվում: Հետո լսեց դուրս հանվող բանալիների ձայնը, ապա բացվող փականի բարձր ու հստակ ձայնը: Ներքեւում ինչ-որ մեկը դուռն էր բացել:

Դու Հուայմինը լարվեց: Մթան մեջ պառկել էր՝ լրիվ զգոն, շունչը պահած, աչքերն առաստաղին հառած: Սպասում էր ու սպասում: Հյուրասենյակի ժամացույցի վայրկենացույց սլաքի պես՝ նա հիմա շարժվում էր դողդոջուն քայլերով՝ դեպի վերջնական կանգառը, որտեղ ավարտվում էր շրջանը: Չգիտեր, թե որքան էր պառկել այդտեղ, մթնում, բայց մի քանի անորոշ, խուլ բառ լսեց ներքեւից՝ նախքան ամեն բան կթաղվեր լռության մեջ: Առաջին լույսի հետ, այն պահին, երբ աշխարհն սկսում էր վերագտնել գիտակցությունը, ամբողջ բնակարանային համալիրը տագնապալից լռության մեջ էր: Դու Հուայմինն սկսեց մտածել, որ ոչինչ այլեւս չի շարժվի ու կենդանություն չի առնի, եւ երկար ու տխուր հառաչանք արձակեց: Առավոտյան թույլ լույսն աստիճանաբար ներս էր թափանցում հաստ վարագույրների ետեւից: Օրն սկսվում էր:

7

Երբ Դու Հուայմինն աչքերը բացեց, արդեն ժամը ութն էր, եւ որդին վաղուց դպրոց էր գնացել: Զարմացավ, որ չի իմացել, թե որդին երբ է վեր կացել: Նույնիսկ չէր լսել, թե ինչպես է նա լոգարան մտել: Մեռածի պես քնել էր: Սովորաբար, եթե բնակարանի որեւէ մասում ամենաթեթեւ ձայնն իսկ լսվեր, նա անմիջապես արթնանում էր: Արդեն ուշանում էր աշխատանքից, դրա համար էլ շտապեց լվացվել եւ հագնվել: Արագ վերցրեց պորտֆելը եւ հենց որ դռնից ոտքը դուրս դրեց, նայեց այն կողմը, որտեղ ակնկալում էր կնոջ տեսնել:

Դու Հուայմինն ու կինը քիչ էր մնում գլուխներով իրար բախվեին: Դու Հուայմինը չէր կարող ասել՝ արդյոք նա նո՞ր էր ժամանել, թե՞ որոշ ժամանակ կանգնել էր սանդղահարթակում՝ սպասելով իր դուրս գալուն: Կինը կլիներ մոտ երեսուն տարեկան: Ձվածեւ դեմք ուներ, երազկոտ, ցանկահարույց աչքեր եւ հարթ ու փայլուն մաշկ: Հագել էր երկար, զոլավոր վերնաշապիկ եւ սեւ զանգվածներ: Գայթակղիչ էր եւ շատ գրավիչ: Վարժ ու փորձված շարժումներով՝ ծխախոտի գլանակից ծխի մի քուլա արձակեց եւ ասաց.

-Ձեր տանը ջրի արտահո՞սք է:

Դու Հուայմինը կարմրատակեց եւ արագ քրթմնջոց արձակեց, որ նշանակում էր «այո»: Կինը հենվեց դռան շրջանակին եւ հայացքը պտտեց բնակարանով մեկ: Ի վերջո նրա հայացքը կանգ առավ Դուի հանգուցյալ կնոջ՝ սեւ շրջանակով լուսանկարի վրա:

-Ներքեւում իմ բնակարանը ջրից ահագին վնաս է կրել: Անցած գիշեր անհնար էր այնտեղ քնելը:

Դու Հուայմինը ներողություն խնդրեց՝ մի բաժակ ջուր լցնելով նրա համար: Ապա ասաց.

-Ներս եկեք եւ նստեք: Ես այնքան մտահոգ եմ եւ դժվարին վիճակում:

Կինը դանդաղ ներս մտավ՝ փարթամ կոնքերը պտտելով եւ զգուշորեն նստեց թախտի եզրին:

-Մենա՞կ եք ապրում,- հարցրեց:

Դու Հուայմինը շրջվեց ու դուռը ծածկեց:

-Երկու որդի ունեմ, բայց այստեղ չեն ապրում: Սա կինս է: Մահացել է,- ասաց նա:

Կինը հայացքը բարձրացրեց ի նշան հարգալից ուշադրության եւ մեղմ արտաբերեց՝ «Օ՛»: Նրա ձայնի հնչերանգից Դու Հուայմինը կռահեց, որ Սիչուանից է: Կինը հարցրեց.

-Ծորա՞կն էիք մոռացել փակել:

Դու Հուայմինն արագ ասաց, որ ջրի խողովակն էր պայթել, ապա երկար-բարակ խոսքեր ասաց՝ ըմբռնումով մոտենալու վերաբերյալ: Կինը ոտքի ելավ եւ ասաց.

-Պետք է իջնեք ներքեւ եւ նայեք: Մինչեւ երեկ գիշեր ես այդ մասին չգիտեի: Ամեն ինչ թրջվել է ու ջրով ներծծվել:

Դու Հուայմինը նրա ետեւից ներքեւ իջավ: Բնակարանը սարսափելի խղճուկ տեսք ուներ: Հին կահույքի կտորները արդեն մեկ տասնամյակ առաջ էին նորածեւությունից դուրս եկել: Հիմա այդպիսի կահույք միայն վարձակալման կետերում կարելի էր տեսնել: Դու Հուայմինը հարցրեց.

-Բնակարանը ձեր սեփակա՞նն է, թե՞ վարձով եք մնում:

Կինն ասաց, որ վարձակալել է: Հատակին դեռ ջուր կար կանգնած, իսկ չորացած տեղերում՝ ետուառաջ արած ոտքերի հետքեր կային: Կինն ասաց.

-Նայեք այստեղ: Իմ վերմակը, իմ սավանները, իմ կոշիկները: Լրիվ թրջված են: Սա լուրջ բան է:

Դու Հուայմինն արագ եւ անշնորհք ձեւով ներողություն խնդրեց, բայց

ներքուստ իրեն փոքր-ինչ ավելի լավ էր զգում՝ իրերի հետ կապված:

Կնոջ պայուսակի միջից լսվեց հեռախոսի զանգի բարձր ձայնը: Նա նայեց Դու Հուայմինին, եւ վերջինս քաղաքավարությամբ ու ըմբռնումով մի կողմ քաշվեց: Հեռախոսից տղամարդու բարձր, ընդհատվող ձայն էր լսվում: Այդ ձայնն արագ ասաց.

-Այս գիշեր ժամը ութին: «Ժասմին» հյուրանոց, 8037 սենյակ: Աշտական հաճախորդ է: Պատրաստ եղիր, Ցին: Տղան հիշում է քեզ, գիտես:

Կինն ի պատասխան ինչ-որ բան փնթփնթաց, նորից նայեց Դու Հուայ-մինին եւ չրխկացնելով փակեց բջջային հեռախոսը:

-Ինքներդ նայեք: Կարող եք տեսնել, թե ինչ խառնաշփոթ է: Արեք, ինչ ճիշտ եք համարում:

-Դուք որտե՞ղ եք աշխատում:

Կինը նայեց Դու Հուայմինին, փոքր-ինչ վարանեց, ապա մի տեսակ անհամբեր տոնով ասաց.

-Իսկ ի՞նչ տարբերություն:

Աչքերը մատնում էին, որ նա ուզում է հարցի պատասխանից խուսա-փել:

Դու Հուայմինն սկսեց հաշվարկներ անել, թե ինչ կպահանջվի այդ կնո-ջը հանգստացնելու համար: Կարծես նրա միտքը կարդալով՝ կինն ավելի հարձակողական դիրք բռնեց եւ ասաց.

-Լավ նայեք շուրջը: Վերմակը թաց է: Այս եղանակին երբեք չի չորանա:

Այդ սքանչելի արարածն իմաստուն էր եւ օգտվում էր վնաս կրած կող-մի իր վիճակից, որպեսզի վախեցնի Դու Հուայմինին: Նա ակնհայտորեն թույլ հակառակորդ չէր:

Նրա հայացքը տեսնելով՝ Դու Հուայմինն ավելի մեղմ մոտեցում փոր-ձեց ցուցաբերել:

-Շատ եմ ցավում: Իսկապես: Սա այլեւս չի կրկնվի, - ասաց:

Կնոջ հեռախոսի զանգը կրկին ընդհատեց նրանց խոսակցությունը՝ Դու Հուայմինին ազատելով ավելին ասելու պարտադրանքից: Վերջինս խոր հոգոց հանեց: Կինն աչքի պոչով զգուշացնող մի հայացք նետեց նրա վրա եւ, նախքան հեռախոսին պատասխանելը, քայլեց դեպի լուսամուտը:

-Որտե՞ղ,- հարցրեց:- Արդեն հաճախորդ ունեմ այս գիշեր... Ես չգիտեմ, թե որտեղ է «Ինը վիշապների» միջազգային հյուրանոցը... Ի՞նչ: Լավ, Ա Ցյաոյին համոզիր՝ թող իմ տուն գա... Արդեն ասել եմ, որ չգիտեմ որտեղ է դա... Լավ:

Զայրացած փակեց բջջային հեռախոսը, հետո գլուխը բարձրացրեց՝

նորից նայելու Դու Հուայմինի կողմը: Դու Հուայմինի ձայնի հնչերանգը հանկարծ փոխվեց, եւ նա ասաց.

-Ասացիք «Ինը վիշապների» միջազգային հյուրանոց, չէ՞: Ես գիտեմ որտեղ է դա:

-Ե՞վ...,- սառը տոնով ասաց կինը:

-Այդտեղ չե՞ք գնում:

-Վե՛րջ տվեք,- անհամբեր ընդհատեց նրան կինը:

-Դուք Նանչունի՞ց եք,- հարցրեց Դու Հուայմինը:

Անակնկալի եկած՝ կինը նայեց նրան, շիկնեց եւ գլուխը տարուբերեց:

-Ոչ, Նանչունից չեմ: Ինչո՞ւ եք այդպես մտածում:

Կինը սա ասաց առանց սիչուանյան առոգանության նշույլի:

Դու Հուայմինը նայեց բազմոցի անկյունում դրված մեծ հողաթափերին:

Նրա համար հետաքրքիր էր, թե ինչո՞ւ հողաթափերի տերը չի երեւում:

-Մենա՞կ եք ապրում:

-Գրո՛ղը տանի:

Վերջապես համբերությունը կորցնելով՝ կինը մռայլվեց, զայրացած վեր բարձրացրեց հոնքերը, մատն ուղղեց դեպի Դու Հուայմինը եւ ասաց.

- Ասացեք, թե ինչ եք պատրաստվում անել բնակարանի հետ կապված: Եվ թեման մի՛ փոխեք:

Դու Հուայմինը մոտիկից շատ ուշադիր նայեց նրան՝ իրեն ավելի թեթեւ ու անկաշկանդ զգալով: Գոնե հիմա գիտեր, թե նա ինչ է ուզում: Կնոջ փոքրիկ, սիրունիկ դեմքը կարմրատակեց նրա հայացքի ներքո: Դու Հուայմինն զգում էր, որ սիրտն սկսում է ավելի ու ավելի արագ բաբախել, եւ չէր կարողանում ինքն իրեն հանգստացնել: Կինն այնքան լավիկն էր: Ինչպե՞ս էր հասել այս վիճակին: Իհարկե, այսպես հրամայական ու ամբարտավան լինելը բավական էր, որ տղամարդը զայրանար: Պատասխանատվությունն իր վրա վերցրեց՝ ասելով.

-Մեղքն իմն է: Անփույթ եմ եղել, եւ հիմա տեսեք...

Ցանք թափեց ավարտելու նախադասությունը: Ստադիր էր մի թիվ ասել, բայց չգիտեր, թե որքան պետք է վճարեր նրան, կամ ինչպես կարող էր խոսք բացել փողի մասին: Կինը հայացքը շրջել էր, որպեսզի ուսումնասիրի վարագույրների ծալքերը: Կիսադեմից նա է՛լ ավելի գայթակղիչ էր:

-Իսկ սրա մասի՞ն ինչ կասեք,- ասաց նա՝ գլուխը բարձրացնելով եւ նայելով Դու Հուայմինին:- Ես միայն վարձակալում եմ այս բնակարանը եւ չեմ ուզում այնպես անել, որ ձեզ համար չափազանց դժվար լինի: Ինձ հազար յուան տվեք: Համաձայնեք՝ դա չափազանց մեծ գումար չէ: Վերմակը, սա-

վանները, բազմոցը, ամեն բան ջրով է ներծծված: Իսկ երբ այդ իրերը թրջվում են, շատ բան չես կարող անել:

Նրա աշխույժ, վճռական տոնից Դու Հուայմինը հասկացավ, որ սա առաջարկած ամենաքիչ գումարն է:

-Հազա՞ր:

Դու Հուայմինն ակնհայտորեն շփոթված էր: Նա ասաց.

-Իսկ հնարավոր չէ՞ մի փոքր ավելի քիչ: Ես սա մտադրված չեմ արել: Ութ հարյուրի մասին ի՞նչ կասեիք:

-Ութ հարյո՞ւր:

Կինը հոնքերը վեր բարձրացրեց՝ աչքերում արհամարհանքի նշույլ:

-Շատ լավ: Ութ հարյուր, ուրեմն: Ես գործեր ունեմ անելու: Չեմ պատրաստվում վիճաբանել:

Նրա աչքերի արհամարհանքը Դու Հուայմինի համար ասես որովայնին հասցված բռունցքի հարված էր: Ծունչը կտրվեց: Կինը կռացավ, որպեսզի հատակից վերցնի բջջային հեռախոսի լիցքավորիչը, եւ նրա վերնաշապիկի բացվածքից Դու Հուայմինին երեւաց քաջվարդի ապշեցուցիչ մի դաջվածք: Այնտեղ՝ նրա լիքը, ճերմակ կրծքերի վերեւում, ասես պահպանիչ թալիսման լիներ:

-Եթե փողն այսօր եք ուզում, ապա դա պետք է վեցից հետո լինի: Ես աշխատանքի պիտի գնամ,- միանգամից ասաց Դու Հուայմինը:

-Չե՞ք կարող հիմա տալ,- զարմացած հարցրեց կինը:

-Աշխատանքի պիտի գնամ: Իսկապես պետք է աշխատեմ: Անգործ ու անբան մեկը չեմ: Չեմ կարող գործից ուշանալ:

Դու Հուայմինը զարմացավ իր այդքան հիմար ու անտաշ լինելու վրա:

-Ուղիղ վեցին եկեք, փողը պատրաստ կլինի:

-Ինչպե՞ս կարող եմ վեցին ժամանակ ունենալ: Ես միայն ցերեկն ունեմ ազատ ժամանակ,- ասաց կինը՝ չհամաձայնելով:- Իսկ ցերեկով չի՞ լինի:

-Ես այսօր կեսօրին ժամանակ չունեմ, իսկ կեսօրից հետո հանդիպում եմ կազմակերպելու,- ասաց Դու Հուայմինը՝ մի պահ ուսումնասիրելով կնոջը: Ապա լռեց, հետո ասաց.

-Վաղը կեսօրին շատ հարմար կլիներ: Եկեք պայմանավորվենք վաղը կեսօրին հանդիպել, լա՞վ:

Կինը համաձայնեց, թվում է՝ նույնիսկ առանց այդ մասին մտածելու:

Դու Հուայմինը ցույց տվեց, թե շտապում է մեկնել աշխատանքի, բայց նախքան գնալը կնոջից խնդրեց նրա բջջային հեռախոսի համարը:

-Թույլ տվեք ձեր հեռախոսահամարն ունենալ, եւ վաղը կեսօրին կապի մեջ կլինեմ ձեզ հետ,- ասաց:

Կինն ասաց.

-Ես հենց ներքեւի հարկում եմ, էլ համարն ի՞նչ եք անում:

Նա Դու Հուայմինին նայեց փոքր-ինչ կասկածանքով: Վերջինս ժպտաց եւ ասաց.

-Միշտ էլ հեռախոսահամարներ փոխանակելը շատ լավ է: Ամեն ինչ այսքան վատ չէր լինի ջրի այս արտահոսքի հետ կապված, եթե իմանայի, թե ինչպես կապվեմ ձեզ հետ: Ճիշտ չէ՞:

Կինը մի պահ շփոթված կանգնել էր՝ չիմանալով, թե ինչպես մերժի նրան, մինչեւ որ ի վերջո տվեց իր հեռախոսահամարը:

Դու Հուայմինն ասաց.

-Երբ ժամանակ կունենաք, այցելեք: Մենք հարեւաններ ենք, մեկս մյուսիս պետք է օգտակար լինենք:

Կինը քաղաքավարի ժպտաց, ինչը հրաժեշտի նշան էր:

8

Բաղդադի վրա ամերիկյան հարձակումը հեռուստատեսությամբ ավելի արագ էր եւ ավելի վայրագ տպավորություն էր թողնում, քան Սյաոցզյան երբեւէ կարող էր պատկերացնել: Բայց Սադդամը չէր գլխատվել: Նա դեռ ողջ էր, նույնիսկ հեռուստատեսությամբ ելույթներ էր ունենում: Սադդամն ասում էր, որ ամերիկյան հարձակումը ոտնձգություն է Իրաքի ինքնիշխանության դեմ: Նա կոչ էր անում Իրաքի յուրաքանչյուր քաղաքացու՝ պայքարել տան եւ երկրի համար: Ասում էր, որ Իրաքի վրա հարձակումն ամոթալի է, եւ խոստանում էր, որ Իրաքի թշնամիները կկործանվեն:

Առավոտյան Սյաոցզյան մտավ լոգարան լվացվելու: Նայեց դեմքին հայելու մեջ եւ հիմար վիճակում զգաց իրեն: Ծուրթի վրայի աղվամազը թավ էր, բայց փափուկ էր ու դեղին եւ պատշաճ տեսք չուներ: Նա ամեն առավոտ տագնապով էր նայում դեղձի մազմզուկների նմանվող աղվամազին՝ չիմանալով ինչ անել դրա հետ: Իսկ աղվամազը պարզապես շարունակում էր աճել: Երբեմն դասարանում, երբ ոչինչ չէին անում, նայում էր դեմքին՝ իր հետ բերած փոքրիկ հայելու մեջ եւ հատիկ-հատիկ քաշում ու պոկում էր աղվամազը, ասես խոտն էր արմատներով դուրս քաշում: Ջգում էր մաշկի վրայի ամեն մի փոքրիկ փուշը: Մի քանի օր անց, սակայն, իր այդ դեղ-

ծի մազմզուկ աղվամազերն էլի աճում էին՝ ավելի արագ եւ ավելի խիտ, կարծես միտումնավոր վրեժխնդիր էին լինում: Սյաոցզյան դրանից հետո սովորեց դեմքի մազերով շատ չտարվել: Երբ դրանք դուրս էր քաշում, ավելի հաստ ու խիտ էին աճում, հետո ավելի դժվար էր լինում պոկելը:

Մատները թեթեւակի սահեցրեց դեմքի մազերի վրայով, հաշտեցնող, շոյող մի շարժումով, ինչպես թագավորն է փորձում պաշտպանվելով ետ մղել իր պաշտոնյաների պահանջները, եւ գիտակցելով, որ իր իշխանությունը բացարձակ չէ: «Ֆիլիպս» էլեկտրական ածելին լվացարանի վերեւում էր: Մի քանի ժամ լիցքավորելուց հետո կարող եք այն օգտագործել ավելի քան մեկ ամիս: Միացնելիս այն բզզում էր (դա Սյաոցզյային հիշեցնում էր հեռուստացույցով իր տեսած՝ մարգագետին հնձող մեքենայի ձայնը): Դրա երեք պտտվող սայրերն արագ կատարում էին իրենց գործը, եւ հայելու մեջ շուտով երեւում էր մաքուր սափրված մի մարդ: Ածելին փորձելու գայթակղությանը տրվելով՝ միացրեց այն: Ձայնը հաստատուն էր ու տիրական: Արագ անջատեց: Իր կզակի մազերը փափուկ էին ու դեղին, ոչնչով նման չէին եղբոր մուգ եւ թավ մազերին, ամենեւին նման չէին: Դասընկերներն ասում էին, որ ինչքան շատ սափրվես, այնքան մորուքդ ավելի թավ կաճի, եւ եթե շարունակես սափրվել, ի վերջո շատ արագ կնմանվես միջին տարիքի տղամարդու: Եվ այլեւս հնարավոր չի լինի կասեցնել դա ու նորից երիտասարդ տեսք ունենալ:

Սյաոցզյան վախենում էր չափազանց իշխող ամեն ինչից, այդ թվում հաստլիկ Լյու Սինից եւ նրա տիրական ու ամբարտավան ահաբեկումներից:

Լյու Սինը եւ Լի Լենն այն մեծ ընդհարումից հետո կարծես պատրաստ էին ամեն անգամ կռվելու, երբ միմյանց ընդառաջ էին դուրս գալիս: Հաստլիկն ուզում էր իր հեղինակությունը վերականգնել, իսկ Կարտոլը կարծես մի տեսակ անսպառ ուժ էր ձեռք բերել Չժաո Յասիի աջակցությունից եւ դարձել էր անվախ: Տղաներից ոչ մեկն ուղիղ չէր նայում մյուսի աչքերի մեջ, երբ հանդիպում էին: Լյու Սինն այնքան զայրացած էր Լի Լենի բացահայտ անհնազանդությունից, որ խիստ թշնամաբար էր տրամադրված:

Ոչ ոք չգիտեր, թե ով սկսեց լուր տարածել, որ Լյու Սինն ու Լի Լենը պայմանավորվել են կռվելու ժամանակի եւ տեղի մասին, բայց լուրը մակընթացության ալիքի պես տարածվեց ամբողջ դպրոցում: Լյու Սինն անտարբեր ասաց.

-Ո՞ւր էր թե էդ փոքրիկ փսլնքոտը համարձակվեր հետս կռվել:

Լի Լենն անցնում էր բոլորի մոտով, ինչպես խորապես դժգոհ մի տղա,

բայց ոչ ոք չէր կարող ասել, թե իրականում ինչ է մտածում: Երկուսից ոչ մեկը չէր հայտնում, թե իրականում ինչ է մտածում, եւ ոչ էլ հաստատում կամ ժխտում էր, թե պատրաստվում են կռվել: Բայց բոլորը համոզված էին, որ կռիվը տեղի կունենա այդ օրը դասերից հետո, ծառերի փոքրիկ պուրակում՝ մարզադաշտի կողքին: Ինչ-որ մեկը շշնջաց, որ Լի Լենի պայուսակում գրպանի դանակ է տեսել: Բոլորը համոզվել էին, որ ոչ մի ուսուցիչ կամ մեծահասակներից ուրիշ մեկը գլխի չէին ընկել, թե ինչ է լինելու: Եվ բոլորն անհամբեր սպասում էին, որ կեսօրն անցնի:

Լյու Սինն ու Լի Լենը փորձում էին մեկը մյուսին գերազանցել՝ ցույց տալով, որ չեն վախենում եւ չեն զիջելու: Դասից հետո Սյաոցզյան փորձեց կատակել Լի Լենի հետ՝ ասելով.

-Պատրա՞ստ ես կռվելու:

Լի Լենը ծաղրական փնչացրեց եւ ասաց.

-Ինչի՞ համար ես էդքան շատ ուզում մեր կռվելը:

Սյաոցզյան կտրականապես ժխտեց, թե այդպիսի բան կա: Եթե մի քանի օր առաջ լիներ, Սյաոցզյան Լի Լենին կպաշտպաներ եւ կուզեր, որ նա մի լավ պատժեր Լյու Սինին: Բայց հիմա այլեւս այդպես չէր մտածում: Հիմա ուզում էր, որ Լյու Սինը նվաստացնի Լի Լենին, որպեսզի վերջինս հասկանա, թե ինչ է տեղի ունենում, երբ չես պաշտպանում ինքդ քեզ, քո տեղն ու դիրքը:

Որքան դպրոցական օրվա ավարտը մոտենում էր, այնքան դասարանում տրամադրությունն ավելի ու ավելի էր լարվում:

-Ասում են՝ մի լավ ջարդ ես տալու նրան: Ճի՞շտ է,- թաքուն հարցրեց մեկը Լյու Սինին:

Լյու Սինը գոռոզ տեսք ընդունեց, ձեռքով թփթփացրեց կրծքին եւ ասաց.

-Հա: Ինքնահավան փոքրիկ քաքլան:

Մի փոքր անց նույն հարցն ուրիշները տվեցին Լի Լենին:

Վրդովված՝ Լի Լենը պատասխանեց.

-Էդ հաստլիկ գլուխգովանը շատ է չափն անցնում:

Հենց զանգը հնչեց, աշակերտները դուրս թռան դասարաններից, կռվողներից մեկնումեկի կողմն անցնելով՝ դուրս եկան դպրոցի շենքից: Սյաոցզյային այնպես էր թվում, թե Լյու Սինն ու Լի Լենը պատանդ են վերցվել եւ չգիտեն էլ, թե իրենց ուր են տանում: Լյու Սինն ու Լի Լենն այնպես էին նայում, ասես այլ մտադրություն ունեին, բայց ամեն ինչ հիմա իրենց կամքից անկախ էր լինում:

Ծառերի պուրակում մութ էր ու հանգիստ: Տերեւներից դեռ թափվում էին գարնան անձրեւի կաթիլները: Մի քիչ սառն էր: Ամբոխն անհանգիստ էր, բաժանվել էր երկու խմբի: Լյու Սինին եւ Լի Լենին առաջ հրեցին:

Երկուսն էլ իրար նայեցին, ոչ ոք չէր ուզում առաջին շարժումն անել: Սպասումից դողում էին:

Մթնոլորտը լարված էր, բոլոր տղաները լարված սպասում էին՝ անհամբերությամբ ու վառ երեւակայությամբ լի: Բայց ո՛չ Լյու Սինը, ո՛չ Լի Լենը չէին ուզում առաջինը հարվածել: Նրանց նայելիս կարող էր թվալ, թե ընկերներ են, որոնց ստիպել են կռվել իրար հետ:

-Կռվե՛ք: Էս ի՞նչ եք անշարժ կանգնել,- անհամբեր ասաց տղաներից մեկը:

-Խփի՛ դրան, չաղո՛:

-Ձենդ կտրի՛,- ասաց Լյու Սինը՝ ետ նայելով: Աչքերը զայրույթից նեղացել էին:

-Էս ի՞նչ է, ծանձրացանք,- ասաց մեկը՝ արտահայտելով ընդհանուր հիասթափությունը:

Ամբոխով օղակված՝ Լյու Սինն ու Լի Լենը պտտվում էին իրար շուրջ, ետուառաջ նայում, բայց ոչ մեկն առաջինը չէր հարվածում: Ուժ էին խնայում:

Լյու Սինն ասաց.

-Էլի՞ քեզ էդպես ես պահելու իմ դեմ:

Լի Լենն ասաց.

-Ինչի՞ մասին ես խոսում: Բոլորն էլ տեսան՝ ինչ էիր անում:

Լյու Սինն ուրիշ ոչինչ չասաց: Նա հրեց Լի Լենին: Լի Լենը, իմանալով, որ չի կարող նահանջել, իր հերթին հրեց Լյու Սինին: Եվ երկու տղաներն ընկան իրար վրա՝ հարվածելով ու հրելով: Ամեն ինչ խառնվեց իրար: Տղաներն ամբոխի մեջ խիստ հուզված էին, որպեսզի հստակ տեսնեին ամեն բան: Լի Լենն ընկավ գետնին՝ Լյու Սինի տակ, բայց հետո նորից ոտքի ելավ: Երկուսն էլ ցեխակոլոլ էին, լարված ու ծամածռված դեմքերով, ծանր էին շնչում:

Լյու Սինն, իհարկե, ավելի ուժեղ էր, քան Լի Լենը եւ առավելություն ուներ: Նա նստեց Լի Լենի վրա՝ զրկելով շարժվելու հնարավորությունից, ձեռքերով բռնելով նրա պարանոցից եւ խեղդելով:

-Էլի կկռվե՞ս հետս, ուժեղ տղա,- ասաց նա:

Լի Լենը պայքարում էր ազատվելու համար՝ ոտքերն արագ շարժելով եւ շուրջբոլորը ցեխ շաղ տալով: Որքան էլ ջանում էր, չէր կարողանում դուրս

պրծնել Լյու Սինի տակից: Լյու Սինը նստեց նրա վրա՝ հպարտ ծիծաղելով: Թվում էր Լի Լենը վերջնականապես պարտվել է, բայց հենց այդ ժամանակ Չժաո Յասին չգիտես որտեղից հայտնվեց եւ առաջ նետվեց՝ ուժով մի կողմ հրելով իր առջեւ գտնվող ամբոխին:

-Վե՛րջ տվեք կռվելուն,- ճչաց սուր ձայնով:

Լյու Սինը զարմացավ ու մի պահ շփոթվեց, եւ Լի Լենը, դրանից օգտվելով, օձաձկան պես դուրս սահեց նրա ոտքերի արանքից: Ձեռքը խարխափելով մտավ գրպանն ու դուրս եկավ: Գրպանից հանած ձեռքում ճաշի գդալ էր: Այդ պահին Լյու Սինն ուշադիր չէր:

Լի Լենը ձեռքում ամուր բռնեց գդալը: Ծանր հեւալով՝ թափահարեց այն: Գդալը տեսնելով՝ բոլորն սկսեցին բարձրաձայն ծիծաղել: Ոչ ոքի մտքով իսկ չէր անցնում, որ Լի Լենն իր մոտ գդալ էր թաքցրել: Ծիծաղը խոցեց Լի Լենի ինքնասիրությունը: Նա տեսավ, որ Չժաո Յասին գդալին է նայում, ապա աղջիկը նրան նայեց հեգնական տարակուսանքով: Նա սաստիկ կարմրեց եւ գդալը ցած գցեց:

Ամեն անգամ այդ մասին մտածելիս Սյաոցզին միշտ համոզված էր, որ Չժաո Յասիի հայացքն էր, որ պարտության մատնեց Լի Լենին: Նա ընկճված մի կողմ էր նետել գդալը եւ ամբոխի միջով ճանապարհ հարթելով հեռացել՝ առանց Լյու Սինին նայելու: Տղաների մոտ նրա հեղինակությունն ընկել էր:

9

Կեսօրից հետո Դու Հուայմինը միայն մեկ հաղորդագրություն ստացավ ավագ որդուց: Դու Յուանն ասում էր, որ գիշերը տուն է գալու: Դու Հուայմինը հաղորդագրություն ուղարկեց՝ հարցնելով, թե Դու Յուանն ու Սյաո Լյուն դարձյալ վիճե՞լ են: Դու Յուանից պատասխան չեկավ: Վերջերս որդին շատ էր իր տանն անցկացնում գիշերը, եւ Դու Հուայմինն սկսել էր կասկածել, որ նրա եւ ընկերուհու հարաբերությունները լավ չեն: Բայց որդուն այդ մասին չէր հարցնում: Չէր ուզում մտահոգվել որդու խնդիրների պատճառով: Անձրեւը խփում էր լուսամուտին: Դու Հուայմինը նստած՝ երկար ժամանակ սուրճի սեղանին դրված իր բջջային հեռախոսին էր նայում: Հաճախ նայում էր թղթին գրված՝ այն կնոջ հեռախոսահամարին: Նա բավականին հմայիչ կին էր, եւ ինքն անընդհատ հիշում էր նրան: Աշխատանքի ժամանակ էլ կինն էր իր մտապատկերում, եւ ինքը, զմայլված,

անընդհատ ուզում էր հանել հեռախոսն ու զանգել նրան՝ չդիմանալով գայթակղությանը: Նրա կրծքին արված՝ քաջվարդի այն դաջվածքը շարունակում էր կուրացուցիչ փայլել իր աչքերի դեմ:

Դու Հուայմինը մտածում էր, թե ինչպես էր կնոջը տալու ութ հարյուր յուանի պարտքը: Երկու ամիս այդքան փողով կարող էին ապրել: Չգիտեր, թե ինչու համաձայնեց: Ութ հարյուրը զգալի գումար էր: Որքան շատ էր մտածում այդ մասին, այնքան ավելի էր զգում, որ իրեն օգտագործել են: Զգում էր, որ արդար չէ, եթե նա պարզապես ստանա այդ ութ հարյուրը հենց այնպես:

Տանը մենակ ճաշեց: Սյաոցզյան երբեմն տուն էր գալիս ճաշելու, իսկ երբեմն էլ դպրոցի մոտակա փոքրիկ ռեստորաններից մեկում էր սնվում: Դու Հուայմինը երբեք ընդմիջման ժամանակ չէր գալիս տուն: Միայն այն ժամանակ, երբ Դու Յուանը եւ Սյաո Լյուն այցի էին գալիս, Դու Հուայմինը գնումներ էր կատարում եւ ճաշի համար հատուկ բան էր բերում: Չէր կարծում, որ ներքեւի հարկում ապրող կինն արդեն վերադարձել է: Ուշադիր ականջ էր դրել, բայց ոչ մի ձայն չէր լսել: Մտածեց «Ինը վիշապների» միջազգային հյուրանոցի մասին եւ հիշեց, որ դա տաք աղբյուրներով հանգստավայր է: Քաղաքից շատ հեռու է: Կինն, անկասկած, լավիկն էր: Երբ մտքերն այդ ուղղությամբ թեքվեցին, հանկարծ զգաց, որ անհանգիստ ու անկայուն վիճակում է: Ամանները լվալուց հետո նստեց թախտին եւ որոշ ժամանակ հեռուստացույց սկսեց դիտել՝ ալիքները շուտ-շուտ փոխելով: Դաշնակիցների առաջ շարժվող զորքերը շրջապատել եւ ջախջախել էին Սադդամի զինված ուժերին: Ճակատային գծի իրաքյան շատ ուժեր արդեն զենքերը ցած էին դրել եւ հանձնվել ամերիկացիներին: Հեռուստացույցն անջատեց եւ ներքեւ իջավ՝ տեսնելու, թե կարո՞ղ է շախմատ խաղալ շենքի դռնապան պարոն Չժանի հետ: Չժանն ամեն օր հանում էր շախմատը, բայց սովորաբար ծեր թոշակառուներն էին խաղում: Միայն ճաշի ժամին կարող էր հերթդ հասնել: Դու Հուայմինը նստեց շենքի մուտքի մոտի ծառի տակ՝ մտախոհ նայելով բոլոր ներսուդուրս անողներին:

Շախմատի տախտակի վրա ծաղկափոշի էր նստել: Նա ձեռքով մաքրեց այն: Ապա խաղաքարով մի շատ հիմար քայլ կատարեց: Անձրեւը դադարել էր, եւ երկնքից ընկած վերջին լույսը լուսավորում էր բնակարանային համալիրի մի մասը: Նայեց խաղատախտակին եւ զգաց, որ շատ անբարենպաստ վիճակում է: Հանկարծ չարացած հայացքով նայեց հակառակորդին, ծիծաղեց եւ ասաց.

-Հաղթելու եմ:

Խաղընկերը դա լուրջ ընդունեց եւ ուշադիր զննեց խաղատախտակն ու ասաց.

-Ոչ մի կերպ չես կարող: Բացարձակապես ոչ մի կերպ չես կարող:

Դու Հուայմինը համարձակ, բայց վտանգավոր քայլ կատարեց, որն սպառնալիքի տակ դրեց նրա հնարավորությունները: Եթե այդ քայլը հակառակորդին անակնկալի բերեր, կկարողանար ինքն իրեն փրկել պարտությունից, բայց հակառակորդն անդրդվելի էր, ինչպես բուդդայական վանական, որ ոտքերը խաչած անշարժ նստում է մինչեւ մեռնելը: Դու Հուայմինն ընկճվեց: Այդ մարդն, անտարակույս, մի լավ հարված հասցրեց իր սափրած գլխին եւ ծիծաղեց: Նա ասաց.

-Պարտվե՞լ ես ուզում:

Դու Հուայմինը ձեռքից գցեց խաղաքարը եւ ընդունեց պարտությունը: Վեր կացավ, թափ տվեց տաբատի նստատեղի փոշին եւ հեռացավ: Բնակարանային համալիրի փողոցների երկայնքով ծգվող ծառերը լրիվ ծաղկել էին եւ գարնան բույր էին սփռում:

Դու Հուայմինը խոր ներշնչեց այդ բույրը եւ զգաց, որ հազիվ է կարողանում հուզմունքը զսպել: Արագ քայլեց դեպի դեղատուն եւ մի տուփ պահպանակ գնեց: Շատ վաղուց էր նման բան արել եւ մի փոքր շփոթված էր զգում իրեն:

Պահպանակների տուփը դրեց իր մահճակալի մոտի սեղանիկի դարակում, բայց հետո, անհանգստանալով, որ Սյաոցզյան կարող է գտնել, պատռելով բացեց տուփը, հանեց պահպանակները եւ դրեց վերմակի տակ: Վեր կացավ եւ հանկարծ հիմար վիճակում զգաց իրեն: Բայց հետո նորից մտածեց՝ մի՞թե ԱՄՆ-ը եւ Իրաքը բաժանված չէին իրարից աշխարհի կեսի չափ հեռավորությամբ եւ թվում էր լրիվ կտրված են ու ոչ մի կապ չունեն: Բայց հիմա այսպիսի հարաբերություններ են:

Վերջերս Դու Հուայմինն զգում էր, որ կենսական եռանդն ավելի ու ավելի է նվազում: Երբ աստիճաններով վեր էր բարձրանում, երբեմն զգում էր, որ ոտքերում ասես ուժ չունի, եւ սիրտն սկսում էր արագ զարկել: Ընդամենը երկու-երեք տարի առաջ նման բան չկար: Ճաշից հետո այն ժամանակ երբեմն դուրս էր ելնում եւ թենիս կամ բադմինտոն խաղում, բայց հիմա պարզապես չէր կարողանում գնալ: Պատահում էր, որ ուտելուց հետո նույնիսկ ամանները լվանալու ուժ չէր ունենում: Հիմնականում հեռուստացույց էր դիտում: Բայց մեծ մասամբ աչքերը բաց ասես երազում էր՝ էկրանին նայելով: Աշխույժ երիտասարդները, որոնց տեսնում էր էկրանին, թվում էր՝ ապրում են իր ապրած աշխարհից բոլորովին տարբեր մեկ այլ

աշխարհում: Իր կյանքի կեսից ավելին անցել էր արդեն, եւ իրեն մնացած ժամանակում նա երեւակայության հաճույքն անգամ չուներ այլեւս: Երիտասարդ ժամանակ Դու Հուայմինը շատ լավատես էր: Հավատում էր, որ ինքն է տնօրինում իր ճակատագիրը: Կարծում էր, թե կարող է սեփական կամքով սեփական բախտը փոխել: Նայեց հեռախոսահամարների ցանկը եւ հասկացավ, որ գեթ մեկ ընկեր չունի, որի հետ կարողանա թեկուզ հաղորդագրություններ փոխանակելով զրուցել: Միակ անունն այն կնոջ անունն էր, որից սրտի զարկերն սկսում էին արագանալ:

Հաղորդագրություն ուղարկեց կնոջը՝ հարցնելով, թե երբ է նա վերադառնալու: Մտածում էր, որ միանգամայն ընդունելի եւ պատշաճ է իր այս հարցը: Բայց կինը չպատասխանեց: Սպասեց երկար, ժամանակն անցնում էր: Հյուրասենյակի ժամացույցի վայրկյանների սլաքի ձայնը հուսահատեցնում էր նրան: Աչքերը փակած՝ պառկեց թախտին: Չգիտեր՝ որքան ժամանակ է անցել, երբ հեռախոսի ազդանշանից նստեց տեղում: Գրպանում լսվեց զանգի ձայնը եւ զգաց բջջային հեռախոսի թրթռոցը: Կնոջ հաղորդագրությունն ասում էր՝ «Վաղը»: Ընդամենն այդ մեկ բառը, որից սիրտը թուլացավ: Չգիտեր՝ պե՞տք է նորից ինչ-որ բան գրի, բայց երկար մտածելուց հետո գրեց. «Ինչո՞ւ եք միշտ գիշերն աշխատում: Ո՞րն է Ձեր աշխատանքը»: Ծարունակում էր պատկերացնել, թե գրպանում զգում է հեռախոսի թրթռոցը, բայց պատասխան չէր ստանում: Փորձել էր քաղաքավարի ու հաճելի լինել, բայց սառն ընդունելության էր արժանացել: Ինքն ընդհանրապես կնոջը չէր հետաքրքրում: Մի հաղորդագրություն էլ հավաքեց, բայց ուղարկելու համարձակություն չունեցավ: Էլի մի քանի անգամ այդպես արեց, մինչեւ որ հոգնեց: Մոտեցավ սառնարանին եւ այնտեղից մի շիշ չինական «Կարմիր աստղ» օղի հանեց: Նստեց ու սկսեց մռայլված խմել: Հեռուստացույցով հոնկոնգյան ոստիկանական ֆիլմ էր ցուցադրվում: Մի սիրունիկ երիտասարդ աղջիկ էր նստած բանդայի շեֆի ծնկներին, հետույքը ետուառաջ պտտելով՝ դանդաղ հանում էր կիպ վերնաշապիկը՝ ի ցույց դնելով ծաղկի սեքսուալ դաջվածքը:

Դու Հուայմինն ասաց.

-Բոլոր լավ քաճերին բոգի տղերքն են շինում:

Պատի ժամացույցը վայրկյաններն առաջ էր մղում, եւ Դու Հուայմինն ուզում էր իմանալ, թե ինչու տղաները դեռ չեն վերադարձել: Բնակարանը ցուրտ ու միայնակ էր, երբ տղաներն այդտեղ չէին: Խմում էր եւ նայում ժամացույցին: Զգաց, որ էլի զայրանում է: Ինչ-որ բան տանջում էր նրան, եւ ուզում էր բացել պատուհանն ու գոռալ:

10

Պատերազմի դաշտում կրած պարտություններն ու նահանջներն ասես Սյաոցզյայի գլխին հասցված հարվածներ լինեին: Նստել էր սրճարանում, համացանցով նայում էր այդ ամենը, եւ խորտակվում էին նրա հույսերն ու իդեալները: Ամերիկյան զինված ուժերն արդեն գրեթե ամբողջովին շրջապատել էին Բաղդադը...

Սյաոցզյան ահավոր հիասթափված էր: Գիշեր էր, փողոցում գրեթե ոչ ոք չկար: Մի քանի հարբած երիտասարդ, սյունին հենված, փսխում էին: Ալկոհոլի հոտը հեռվից էլ զգացվում էր: Դու Յուանի տարիքին կլինեին: Սյաոցզյան շտապեց արագ անցնել նրանց կողքից: Ապա ետ նայեց եւ ցնցվեց՝ տեսնելով, որ եղբայրը՝ Դու Յուանը, նրանց հետ է:

Սյաոցզյան շտապեց դեպի Դու Յուանը:

-Եղբա՞յր,- ասաց:

Դու Յուանը մռայլված թափահարեց գլուխը: Ալկոհոլի տհաճ հոտ էր փչում նրանից: Աչքերը կկոցած նայեց Սյաոցզյային եւ բխկաց: Սյուս երեքը նույնպես այնքան հարբած էին, որ օրորվում էին: Նրանք նստեցին ճամփեզրին, ծխախոտ վառեցին եւ սկսեցին բարձրաձայն հայհոյել: Նրանցից մեկն սկսեց երգել, ապա մյուս բոլորը ձայնակցեցին: Ցույ Ցզյանի *(համարվում է չինական ռոքի հայրը- Ծ. Թ.)* «Ես ոչինչ չունեմ» երգն էին երգում.

-Ես քեզ հարցրի նորից ու նորից՝ ե՞րբ կգաս ինձ հետ, բայց ծիծաղեցիր, ծաղրեցիր դու ինձ, որ չունեմ ոչինչ:

Ցերեկվա աղմուկն արդեն չկար, տեղատվության պես ետ էր քաշվել, եւ նրանց երգի վայրի հնչյունները տարածվում էին գարնանային օդի մեջ: Նորից ու նորից երգեցին, մինչեւ որ կողքի շենքերից մեկի պատուհանը բացվեց, եւ մի տղամարդ զայրացած ձայն տվեց.

-Գիշերվա կե՛սն է: Ձեներդ կտրե՛ք: Թողեք քնե՛նք:

Երիտասարդները գլուխները շրջեցին եւ վեր կացան՝ նստատեղերը թափ տալով: Նայեցին ձայնի կողմն ու գոռացին.

-Գնա՛, քու... Քու՛ մերը...

Տղամարդու կողքին մի կնոջ գլուխ հայտնվեց: Նա ասաց.

-Դուք խիղճ չունեք: Գիշերվա կեսն է: Մենք առավոտ շուտ աշխատանքի ենք գնալու:

Երիտասարդները միայն ծիծաղեցին ու նորից սկսեցին երգել, էլ ավելի բարձրաձայն: Պատուհանը շրխկոցով փակվեց: Երիտասարդները

հռհռացին: Մի քանի անցորդ խեթ-խեթ նայեցին նրանց: Դու Յուանն ու իր ընկերները նրանց ետեւից գոռալով երգեցին.

-Երկիրն է պտտվում, գետերն են հոսում, բայց ծիծաղում ես, որ չունեմ ոչինչ: Ե՞րբ պիտի վրաս էլ չծիծաղես: Ինչո՞ւ եմ գալիս միշտ քո ետեւից: Մի՞թե քեզ համար ոչինչ չունեմ ես:

Երբ երգում էին, նրանցից մեկն սկսեց լաց լինել եւ ողբալ, իսկ մյուսը գլուխը բարձրացրեց վեր, նայեց երկնքին ու ոռնալով հայհոյանքներ տեղաց: Սյաոցզյան նրանց կողքին էր եւ շատ վատ էր զգում: Չգիտեր ինչ անի: Երբեք եղբորն այսպես հարբած ու անվերահսկելի վիճակում չէր տեսել: Սա իր իմացած Դու Յուանը չէր: Դու Յուանն ինչ-որ մի կատաղի հրեշի էր վերածվել:

Սյաոցզյան մեծ դժվարությամբ կարողացավ եղբորը քարշ տալ տուն:

Հայրը կարծես թե սպասում էր նրանց, եւ հյուրասենյակը լցված էր ծխախոտի ծխով ու ալկոհոլի թունդ հոտով: Սուրճի սեղանիկի վրա չինական օղու մի քանի դատարկ շիշ կար, իսկ մոխրամանը լիքն էր ծխախոտի մնացուկներով: Սյաոցզյան շատ վատ կանխազգացում ունեցավ, երբ տեսավ շշերն ու մոխրամանը: Դու Հուայմինն ասաց.

-Ամբողջ գիշեր զանգ եմ տվել ձեզ:

Սյաոցզյան տեսավ զայրույթը հոր աչքերում, երբ վերջինս երերալով ոտքի կանգնեց:

-Էս գիշեր ի՞նչ բանի եք եղել երկուսով,- ասաց հայրը:

Նա հանգիստ ասաց սա, ինչը զարմացրեց ու շփոթեցրեց Սյաոցզյային: Սյաոցզյան շտապեց բացատրել.

-Դու Յուանը շատ էր խմել: Ես տուն էի գալիս, ճանապարհին հանդիպեցի նրան:

Թախտի վրա կծկված Դու Յուանն սկսեց սթափվել: Նա դեմքը սրբեց Սյաոցզյայի տված թաց շորով եւ երկար ու բարձրաձայն բխկաց: Արյունով լցված աչքերով նայելով Սյաոցզյային՝ ասաց.

-Էս ինչո՞ւ տեղդ չես մտել:

Կուշտ կերածի ձայնով էր խոսում: Դրանից հոր զայրույթը կրկին բորբոքվեց: Նա ուղղվեց, մատնացույց արեց Դու Յուանին եւ ասաց.

-Ապա մի քե՛զ նայիր: Թափթփված ու անկարգ տեսք ունես: Ինքնուրույն ոչինչ չես փորձում անել: Քեզ էսպե՛ս ես պահում, որ ոչ մի կին չի ուզում հետդ լինել:

Ալկոհոլի ազդեցության տակ՝ Դու Յուանը չէր պատրաստվում հանձնվել: Ոտքի կանգնելով, ձեռքերը կոնքերին, նա ասաց.

-Ի՞նչ սխալ բան եմ արել: Ի՞նչ եմ արել, որ նա չի ուզում հետս լինել: Թե էդքան կարգին մարդ ես, ինձ համար նոր բնակարան առ ու հարմար աշխատանք գտիր: Դու պետք է որ էդքան ընդունակ լինեիր: Կրթված մարդ ես, չէ՞: Ի՞նչ իրավունքով ես գլխիս ճառ կարդում:

Հայրը կանգնել էր՝ դեմքը զայրույթից կարմրատակած:

-Իմ տղան ես: Դա՛ է իրավունք տալիս գլխիդ ճառ կարդալու: Եթե շնորհք ունենայիր, ավելի լավ համալսարան կընդունվեիր: Փոխարենը՝ ծնողներիդ վրա ես հույս դրել: Կարծում էիր՝ ծնողներդ իշխանություն ու կապեր ունեցող պաշտոնյաներ են: Սա քո՛ կյանքն է: Ո՞ւմ ես պատրաստվում մեղադրել:

Ծանր շնչելով՝ Դու Յուանը նորից նստեց թախտին, ձեռքերով մազերը խառնեց ու ասաց.

-Ես ոչ ոքի չեմ մեղադրում, գրո՛ղը տանի: Ինձ եմ մեղադրում, որ լավը չեմ: Եղա՞վ, գո՞հ ես:

Դրանից հայրն է՛լ ավելի զայրացավ: Նա մոտեցավ Դու Յուանին, բռնեց մազերից եւ գոռաց.

-Կեղտոտ բերանդ չբացե՛ս, տղա՛: Հորդ հե՛տ ես խոսում:

Դու Յուանը հրեց հորը, որն ընկավ սուրճի սեղանիկի վրա: Մրգերի ապակե սկահակը սեղանիկի վրայից ցած սահեց եւ փշուր-փշուր եղավ: Հայր ու որդի սկսեցին կռվել՝ մեկը մյուսին չզիջելով: Սյաոցզյան փորձում էր իրարից անջատել նրանց, բայց հայրը նրան մի կողմ հրեց՝ ասելով.

-Մի կողմ քաշվիր, քաքլան լակոտ:

Կռվելով, իրար քաշքշելով՝ նրանք հյուրասենյակից հասան ննջարան, ապա խոհանոց՝ դիպչելով կահույքին ու պատերին եւ աղմուկ բարձրացնելով: Դու Յուանը ձեռքերը մի քիչ թուլացրեց, եւ Դու Հուայմինը երերաց, քիչ էր մնում ընկնի, ապա պպզեց՝ ծանր շնչելով ու քրտնելով: Նա ծերանում էր, դա ճիշտ էր: Սյաոցզյան մոտեցավ, սեւեռուն նայեց եղբորն ու ասաց.

-Գժվե՞լ ես:

Երեքով նստել էին հյուրասենյակում: Դու Հուայմինը ծանր հեւում էր, Դու Յուանը լուռ ծխում էր, իսկ Սյաոցզյան զգույշ նայում էր նրանց դեմքերին: Բնակարանը տակնուվրա էր: Սկահակի մեջ եղած ծմերուկի սերմերը շաղ էին եկել հատակով մեկ, թերթերն ու ամսագրերը դեսուդեն էին թռել: Գիշերը լուռ էր ու խաղաղ, եւ վայրկենացույց սլաքը տկտկում էր՝ լիովին անտարբեր քիչ առաջ տեղի ունեցածի հանդեպ: Լուսանկարում ժպտացող մայրն ասես կշտամբալից ծաղրում էր նրանց: Այս ամենի կենտրոնում

հայտնված Սյաոցզյան չգիտեր ինչ անի: Ոչ ոք չէր խոսում: Վերեւի հարկի բնակարանից լսվում էին խուլ ոտնաձայներ, ապա լսվեց զուգարանում ինչ-որ մեկի միզելու ձայնը: Ի վերջո, Դու Հուայմինն այլեւս չկարողացավ զսպել իրեն եւ սկսեց լաց լինել: Երբ սրբեց աչքերը, հեծկլտոցներից խեղդվում էր:

Հոր լացի ձայնը շվարեցրեց Սյաոցզյային: Արյունը գլխին տվեց, եւ քունքերի զարկերակներն սկսեցին արագ տրոփել: Գլուխն ասես պայթում էր: Չգիտեր, թե ինչ պետք է անի: Խիստ շփոթված էր հոր պահվածքից: Նայեց եղբորը: Դու Յուանը դեռ նստած էր՝ անհաղորդ, բացակա հայացքով, արձանի պես անշարժ: Սյաոցզյան ուզում էր ապտակել նրան:

Սյաոցզյան մի քանի վայրկյան նստած էր լրիվ անշարժ, ընդարմացած: Նայեց պատին փակցված՝ Սադդամի լուսանկարին եւ տեսավ, որ Սադդամը կամաց դուրս է քաշում կողքին կապված սուրը, իսկ հետո, երբ Սյաոցզյան երկար նայեց, նրա հպարտ աչքերը եւ փառահեղ մորուքը շարժվեցին: Օ՛, Սադդամ:

11

Այդ գիշեր, ուշ ժամի, երբ ամեն ինչ կատարելապես խաղաղ էր, Դու Հուայմինը պառկել էր անկողնում՝ քիչ առաջ պատահածից դեռ ուշքի չեկած, թեեւ սպասում էր, որ վաղ թե ուշ այդպիսի մի բան լինելու է: Պարզապես չէր սպասում, որ դա այդքան շուտ տեղի կունենա: Եվ հենց այդ հանկարծակիությունի՛ց չէր ուշքի գալիս: Նրա զայրույթը վաղուց էր անցել: Բայց զայրույթը մարել էր այն պահից, երբ որդին իրեն հրել գցել էր սուրճի սեղանիկի վրա: Այդ պահին Դու Հուայմինը հասկացավ, որ իրոք ծերացել է: Դա նրան հանկարծակիի բերեց. ինքն ամենեւին պատրաստ չէր դրան: Ժամանակն անողոք էր: Ժամանակը լիակատար հաղթանակ էր տարել: Դու Հուայմինը միջին տարիքից անցում էր կատարել ծեր տարիքի:

Պառկել էր ու չէր կարողանում քնել: Աստիճանների վրա թույլ ոտնաձայներ լսեց եւ ականջ դրեց: Ցնցվեց: Կինը վերադարձել է: Հետո կարծես տղամարդու ձայն լսեց: Նրա հետ կարծես թե տղամարդ կար: Ականջը հպեց անկողնուն, եւ թվաց՝ համատարած լռության մեջ պարզորոշ զանազանում է ձայները: Լսեց՝ ինչպես են քայլում, կոշիկները փոխում, թեյ լցնում, զուգարանում ջուր թափում: Թվաց՝ վիճում են ինչ-որ բանի շուրջ: Դու Հուայմինին թվաց, թե լսում է, որ կինն ասում է՝ հենց տնօրենն իր այս

ամսվա աշխատավարձը տա, ինքը կգնա: Տղամարդը հարցրեց, թե ինչու, եւ ճչացող ձայնով նա այսպիսի մի բան ասաց. ոչ ոք չի ուզի մնալ էս ոջլոտ վայրում: Լսեց ինչպես է կինն ասում. «Գրողը տանի տղամարդկանց: Ոչ մի տղամարդ չի հասկանում, թե ինչերի միջով է անցնում կինը»: Նրանց ձայները բարձրանում էին, ապա թուլանում: Քիչ անց լռեցին: Երեւի լույսերն անջատել էին եւ անկողին մտել:

Որոշ ժամանակ ձայն չէր լսվում, եւ Դու Հուայմինը մտածեց, թե քնել են: Բայց հանկարծ լսեց ինչպես է կինը զզվանքով ասում. «Ձեռքերդ ինձնից հեռո՛ւ տար»: Քիչ անց լսեց. «Թող: Էս գիշեր շատ եմ հոգնած»: Բայց ձայնն արդեն փոքր-ինչ ավելի մեղմ էր: Մի փոքր էլ անցավ, եւ լսվեց կնոջ տնքոցի ցածր ձայնը: Դա սիրո տեւական, կրքոտ ձայն էր: Դու Հուայմինը կարմրեց մինչեւ գանգամաշկը: Սիրտը լցվեց ցանկասիրությամբ: Վեր կացավ անկողնուց, պառկեց հատակին եւ ականջը հատակին հպած փորձեց լսել: Հիմա ավելի պարզ էր լսվում: Ձայները փայտոջիլների պես նրա ականջն էին սողոսկում: Սարմինը կրակվում էր, բերանը չորացել էր: Երբ ի վերջո ներքեւում լռություն տիրեց, Դու Հուայմինը վեր կացավ եւ մռայլված վերադարձավ անկողին: Նայեց բջջային հեռախոսին: Ժամը երեքին մոտ էր: Երկար ժամանակ պահանջվեց, որ կարողանա քնել: Շարունակ մտածում էր ներքեւի հարկի կնոջ մասին: Վառեց մահճակալի կողքի լույսը եւ անօգնական հայացքով նայեց առաստաղին: Առաստաղի ճաքերը նման էին ցանցի բացվածքների, որ ավելի ու ավելի էին լայնանում: Պատկերացրեց կնոջը, որ հագին ցանկահարույց սեւ ներքնազգեստ՝ հմայիչ, լավ երեւացող դաջվածքը բաց, դանդաղ իր կողմն է գալիս:

Այդ օրն ավելի ուշ, կեսօրից հետո, երբ արդեն աշխատանքից տուն էր վերադառնալու, Դու Հուայմինն ստացավ սպասված հաղորդագրությունը: Կինն ասում էր, որ տեղում կլինի ուղիղ ժամը մեկին, որպեսզի փողն ստանա: Հենց սա՛ էլ սպասում էր: Դանդաղ, հանգիստ՝ պատասխան գրեց՝ ասելով, որ կես ժամից գա իր տուն փողն ստանալու: Ամբողջ մեկ րոպե սպասեց նախքան հաղորդագրությունն ուղարկելու կոճակը սեղմելը: Կինն անմիջապես պատասխան հաղորդագրությամբ հարցրեց, թե ինչու չի ինքը բերում փողը: Դու Հուայմինը չպատասխանեց:

Կինը Դու Հուայմինի բնակարանի մոտ հայտնվեց կես ժամից մի փոքր ավելի ուշ: Բարձրակրունկ սեւ կոշիկներով էր, հագին գեղեցիկ կարճ վերնաշապիկ էր եւ մետաքսե գուլպաներ: Չքնաղ տեսք ուներ: Դու Հուայմինը միայն արագ հայացք գցեց նրա վրա, բայց երկար չնայեց: Փակեց դուռը, մի բաժակ սառը ջուր լցրեց նրա համար եւ ձեռքով հրավիրեց, որ նստի:

Կինը փոքր-ինչ անփութորեն վերցրեց ստվարաթղթե բաժակը, եւ ջուրը թափվեց ձեռքին: Դու Հուայմինն անձեռոցիկ վերցրեց, որ նա ձեռքը սրբի: Բայց կինն ասաց.

-Ամեն ինչ կարգին է:

Նայելով կնոջ աչքերին՝ Դու Հուայմինն անուանով դիմեց նրան.

-Ա՛հ, Ցին...

-Ինչո՞ւ եք այդպես ինձ դիմում: Որտեղի՞ց գիտեք իմ անունը:

Անակնկալի եկած՝ կինը նայեց նրան:

Դու Հուայմինն ուղիղ կանգնեց եւ ասաց.

-Իհարկե գիտեմ քո անունը:

Այնպես ասաց, կարծես նախադասության մեջ խոսքերով չասված ինչ-որ իմաստ էր դնում: Բայց կինն անակնկալի չեկավ ու չվախեցավ եւ ասաց.

-Ուրեմն անունս գիտեք: Հետո՞ ինչ: Փողը որտե՞ղ է: Արդեն պատրաստ է, չէ՞:

-Պատրաստ է: Արի հաշվենք:

Դու Հուայմինը շրջվեց եւ մտավ ննջասենյակ: Կինը հետեւեց նրան մինչեւ դուռը եւ անվստահ կանգ առավ: Թեքվեց առաջ, ներս նայեց շուրջբոլորը եւ ասաց.

-Էս ի՞նչ խառնաշփոթ է: Ձեր կնոջ մահից հետո ինչո՞ւ նոր կին չեք գտնում, որ տունը կարգի բերի:

Դու Հուայմինը մոտեցավ, կանգնեց նրա կողքին, ժպտաց եւ ասաց.

-Քեզ նման մեկի՞ն:

Ձեռքերը մեկնեց եւ նրան քաշեց դեպի իրեն, բայց կինը ոզնու պես կծկվեց եւ ճչաց.

-Ի՞նչ ես անում: Մեկ էլ ինձ կպչես՝ կգոռամ:

Դու Հուայմինի դեմքի ժպիտն անփոփոխ մնաց: Սառն ու կտրուկ ասաց.

-Ձեւեր մի՛ թափիր:

Կնոջ դեմքը գունատվեց: Նա շփոթված քրթմնջաց.

-Ի՞նչ ես ուզում:

-Քուն... Քնել հետդ:

12

Իր ամենատարօրինակ երազներում անգամ Սյաոցզյան չէր կարող պատկերացնել, որ Լի Լենը եւ Լյու Սինը կդառնան ընկերներ: Այդ մասին պատահաբար իմացավ կեսօրին: Անցնում էր, երբ աստիճանների վրա տեսավ նրանց երկուսին: Մեկը բարձրահասակ, մյուսը կարճ՝ կողք կողքի զբոսնում էին եւ ծիծաղում լավագույն ընկերների պես: Սյաոցզյան թեքվեց, որպեսզի ճանապարհ տա անցնելու, եւ զարմանքով նայեց նրանց: Աշխարհն ավելի բարդ էր, քան ինքն էր մտածում: Ձեռքը շփեց ճակատին՝ տեսածին չհավատալով:

Դասերից հետո մոտեցավ Լի Լենին եւ արմունկով հրելով նրան՝ հարցրեց.

-Ո՞նց կարող ես էդ չաղի նման մեկի հետ ընկերություն անել:

Լի Լենը խոժոռվեց, սրտնեղած նայեց Սյաոցզյային եւ ասաց.

-Քո ի՞նչ գործն է: Քեզ բոլորից շատ էր դուր գալիս, երբ մենք երեկ կռվում էինք, չէ՞:

Լի Լենի աչքերը լի էին արհամարհանքով: Սյաոցզյան ուզում էր նետվել Լի Լենի վրա եւ բռունցքներով հարվածել նրան: Փոքրիկ հաստլիկ կարտոլն ավելի ու ավելի էր զայրացնում նրան:

-Չմտածես, թե նրա հետ ընկերություն անելով՝ ինչ-որ հատուկ մեկն ես,- ասաց մռայլված:

-Էդ սպառնո՞ւմ ես ինձ,- հարցրեց Լի Լենը՝ մատը դեպի Սյաոցզյայի դեմքը պարզելով:

Լի Լենի աչքերը փայլում էին ապակե ուլունքների պես: Մեկ գիշերվա մեջ նա լրիվ ուրիշ մարդ էր դարձել: Նրա անձնավորության այս բացարձակ կերպափոխությունից Սյաոցզյան մի մեծ դաս ստացավ վերափոխման սոսկալի ուժի մասին:

-Դավաճա՛ն,- զայրացած ասաց Սյաոցզյան:

Լի Լենը չգիտեր, թե ինչ նկատի ունի Սյաոցզյան այդ տարօրինակ բառն ասելով: Վերջինս շրջվեց եւ հեռացավ առանց ետ նայելու:

Սյաոցզյան քայլում էր մտախոհ՝ սեփական ստվերը ոտնատակ տալով: Փողոցում շատ քիչ մարդիկ կային, թեեւ գարնան անսովոր արեւոտ օր էր: Որքան էլ արագ քայլեր, չէր կարող սեփական ստվերից առաջ անցնել: Երբ փոքր էր եւ մոր հետ միասին, նրա ձեռքը բռնած քայլում էր կեսօրվա արեւի տակ, ամենից շատ սիրում էր սեփական ստվերը բռնել: Համոզված էր, որ մեծանալուց հետո կկարողանա իր ստվերից առաջ անցնել: Քայլե-

ը դանդաղեցրեց եւ հանկարծ ուզեց պարզապես տուն գնալ: Օրվա կեսին ոչ ոք տանը չէր լինի: Իր գոյությունն արձանագրելու համար շուրջը ոչ ոք չէր լինի, բացի սեփական ստվերից: Մտածում էր իրաքյան զորքերի մասին, որոնք հանձնվել էին ամերիկացիներին: Ամաչում էր նրանց համար: «Նա պետք է որ ամաչի, չէ՞»,- մտածում էր՝ շատ ուզելով իմանալ այդ մասին: Կարմրեց, եւ սիրտն սկսեց արագ զարկել, երբ սկսեց մտածել բոլոր այն բաների մասին, որ իրեն ստիպել էին ամաչել: Երբ լսեց, թե ինչպես են ծնողները սեռական հարաբերություն ունենում... իր առաջին երազախաբությունը... ինչպես էր մայրը մթերք գնելիս վիճում մանրադրամի համար... եղբոր կռիվն ու ամբողջովին արյունոտված տուն գալը... երբ Չժաո Յասին ետ ուղարկեց եղբոր գրած սիրային նամակը... այդ կեղտոտ հին բնակարանում այդպես թաղված մնալը... Սադդամի բանակի ջախջախվելը, հենց որ նրա վրա գրոհեցին: Սյաոցզյան ուզում էր, որ աշխարհը կործանվի:

Երբ Սյաոցզյան մտնում էր իրենց շենք, պարոն Չժանը՝ դռնապանը, բարեւեց նրան՝ հարցնելով.

-Էսօր տա՞նն ես ճաշելու:

Սյաոցզյան ոչինչ չպատասխանեց, աստիճաններով վազեց վեր, հանեց բանալին եւ մտցրեց փականի մեջ: Դուռը չրխկոցով բացվեց: Առաջին բանը, որ տեսավ, հյուրասենյակում միացված հեռուստացույցն էր: Միջազգային լուրեր էին հաղորդում: Ամերիկյան զորքերը սաղավարտներով, ամբողջովին սպառազինված, նորագույն զրահատեխնիկայով շարժվում էին դեպի Բաղդադ՝ պայթյունների կատաղի հնչյունների ներքո: Սյաոցզյան հոր ննջարանից եկող ձայներ լսեց: Դուռը բաց էր, եւ նա սաստիկ շփոթվեց ու շվարեց՝ տեսնելով զզզված մազերով, մեծ, ճերմակ կրծքերը բաց մի կնոջ: Այդ կինը ցասումնալից նայում էր Սյաոցզյայի հորը, որը նույնպես մերկ՝ կուչ էր եկել անկյունում եւ դողում էր: Հայրը նվաստացած ու խեղճ հայացքով նայում էր կնոջ ձեռքի խոհանոցային դանակին: Սյաոցզյան զգուշությամբ քաշեց դուռը եւ գնաց լոգարան: Հայելու մեջ կարող էր տեսնել այտերով վար հոսող արցունքների հետքերը: Դեմքը հայելու մեջ պղտորված էր երեւում: Ծոշափեց կզակը, որի վրա անշեղորեն աճել էին նրա պատանեկության առաջին բանբերները:

Ձեռքը պարզելով վերցրեց «Ֆիլիպս» էլեկտրական ածելին եւ միացրեց այն: Էլեկտրական ածելին թրթռաց նրա ձեռքի մեջ, երբ բզզոցը հետզհետե մոտենում էր դեմքին:

ՖԵՅ ԴԱՈ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐՋԻ ՄԱՍԻՆ

Երբ մայրս երիտասարդ էր, հորս ասել էր, որ չի ամուսնանա նրա հետ, եթե նույնիսկ նա աշխարհում մնացած վերջին տղամարդը լինի: Այդ խոսքերը խորապես վիրավորել էին հորս: Նա իր վիշտը վերափոխեց ուժի եւ ոտքի կանգնեց՝ ի վերջո դառնալով տիեզերքի տեխնիկական սպասարկման մշտական աշխատող, մարդ, որ տասնյակ հազարավոր ոտնաչափ հեռավորության վրա՝ երկնքում ի կատար էր ածում հեռավոր մարդկության, հեռավոր երկրի եւ իմ հեռավոր մոր հույսերը:

Հետո, երբ հայրս ամբողջ աշխարհում մնացել էր վերջին տղամարդը, մայրս ամուսնացավ նրա հետ:

Երբ հայրս ընկերակցում էր աստղերին այդ մռայլ, կլաուստրաֆոբիկ տիեզերական կայանում, իր գործից բացի՝ բոլոր ջանքերը ներդրեց մորս հանդեպ ատելությունը վառ պահելու համար՝ երդվելով, որ մնացած կյանքում այլեւս ոչ մի կնոջ չի սիրի: Հետո հայրս վերադարձավ երկիր եւ ամուսնացավ նրա հետ, որովհետեւ այդ ժամանակ մայրս աշխարհում մնացած միակ կինն էր:

Նրանք այլընտրանք չունեին:

Ոչ վաղ անցյալում մարդկությունը գաղափար չուներ, որ ինքը ոչնչացման շեմին է: Այդ կույր լավատեսության պատճառով՝ աղետից առաջ մարդիկ ամենեւին պատրաստ չէին:

Անհետացումները տեղի էին ունենում որոշակի մեթոդով, հետեւողականորեն: Վիճակագրության համաձայն, անհետանում էին մարդկանց հետեւյալ տեսակները՝ Ամեն բանի ընդունակներ, Ոչ մի բանի պիտանի չեղողներ, Հերոսներ, Չարագործներ, Ցնցող գեղեցկություն ունեցողներ, Սոսկալի տգեղներ, Համաշխարհային միլիարդատերեր, Փողոցի մուրացկաններ... Ըստ էության, որտեղ մարդիկ կային, անհետանում էին: Դա հավասարապես վերաբերում էր բոլոր բնակիչներին, որոնք մարմնավորում էին բարու եւ չարի անաչառ նախասկիզբը խախտող ինչ-որ բան:

Տարիներ շարունակ մարդկությանն անհանգստացնող հիմնախնդիրը՝

բնակեցվածության հետ կապված, կարծես թե հիմնարար լուծում էր ստացել:

Տարիներ շարունակ Աստծուն անհանգստացնող՝ մարդկության հիմնախնդիրը կարծես թե հիմնարար լուծում էր ստացել:

Հազիվ թե արժե հիշատակել այդ ամենին հաջորդած խուճապի մասին: Դա միայն քաոսի մի պահ էր աշխարհի վերջին օրերից առաջ:

Մարդիկ սիրում էին այսպես նկարագրել դա. Այսինչը «չքացել է»: Դա պարզ բնորոշում էր, եւ իմաստն էր պարզ՝ ամեն ինչ կատարյալ է: Ոմանք ասում էին, որ Աստված սկսել է աշխարհը մաքրելու աշխատանքը: Սյուսներն էլ կարծում էին, թե օտարերկրացիներն առեւանգում են մարդկանց ինչ-ինչ պատճառներով, գուցե ստրկական աշխատանքի համար: Ոմանք էլ, որ մի քիչ ավելի հարուստ երեւակայություն ունեին, կարծում էին, թե ավելի բարձր մի քաղաքակրթության ներկայացուցիչներ իրենց սիրելի երկրաբնակներին ուղարկում են ավելի կատարյալ մի կենսատարածք, որտեղ նրանք ապրելու են ավելի բարձր ու վսեմ կյանքով: Բայց դա չափազանց անբնական, մտացածին մի բան էր, այնպես որ՝ ոչ ոք ուշադրություն չէր դարձնում այդ ամենին:

Աշխարհը դարձավ հանգիստ ու խաղաղ: Մարդիկ դադարեցրին բոլոր պատերազմները: Պատմության մեջ առաջին ու նաեւ վերջին անգամ նրանք միավորվեցին ընդդեմ ընդհանուր թշնամու՝ վճռելով վերջ տալ այդպիսի արգահատելի վարքագծին: Բոլոր միջոցները ներդրվեցին այդ նպատակի համար: Երկրագնդի ամբողջ բնակչությունը կազմակերպվեց: Աշխարհի բոլոր անկյունների ակտիվ գրողներից բացառիկ մի խումբ ձեւավորվեց, եւ այդ գրողներն ստեղծեցին բազմաթիվ գործեր, որ ներկայացնում էին վերջին օրերի տրամադրությունները եւ մարդկային մշակույթի միայնակ վախճանը: Այդ մարդկանց մեծամասնությունը շուտով չքացավ՝ շատ անավարտ գործեր թողնելով դարերին: Փիլիսոփաներն օգտագործում էին ամեն մի վայրկյանը: Խուճապի մեջ չիմանալով, թե երբ կչքանան առանց որեւէ հետքի, նրանք շտապում էին հիմնադրել ու սահմանել ով գիտե ինչքան եւ ինչպիսի թարմ եւ նոր տեսական համակարգեր: Փիլիսոփաներից եւ աստվածաբաններից ոչ ոք չէր հետաքրքրվում, թե ինչպես էին մարդիկ այդուհետ գոյատեւելու: Նրանք կենտրոնացած էին այն բանի վրա, թե ինչպես մարդիկ չէին գոյատեւելու: Իհարկե, ամենից գործնականը եւ ամենից հարգանքի արժանին գիտնականներն էին: Նրանք միավորեցին աշխատողների մնացած զանգվածներին եւ զարմանալի արագությամբ ստեղծեցին Համաշխարհային ինքնասպասարկման գոյատեւման

համակարգ (ՀԻԳՀ)՝ նպատակ ունենալով ինչ-որ կերպ փրկվածների ու վերապրածների համար պայմաններ ապահովել, որպեսզի նրանք կարողանան շարունակել գոյատեւել եւ ամեն բան տանել իրենց ուսերին՝ հուսալով, որ մարդկային քաղաքակրթությունը կարող է վերադառնալ, ինչպես Դունշանի ճգնավորն է վերադառնում աշխարհիկ կյանքին:

Այն օրը, երբ այս նախագիծը ավարտվեց, մոլորակի վրա մոտ հիսուն գիտնական էր մնացել: Նրանք արտասվում էին՝ խորապես հուզված: Միայն այդ ժամանակ մարդիկ հասկացան, թե ինչ է նշանակում միահամուռ համախմբվել բազմաթիվ դժվարությունների դեմ: Միավորվեցին պայծառ մտքի տեր տասնյակ եւ միջակ ունակության տեր հարյուրավոր մարդիկ: Ափսոս, որ այդ միջազգային առաջադեմ ոգին փոքր-ինչ ուշ միավորեց մարդկանց: Այլապես կյանքը մի քիչ ավելի հիասքանչ կլիներ:

Այդ երեկո խմբի հերոսները վճռականորեն որոշեցին առաջ շարժվել եւ գիշեր-ցերեկ հսկողության տակ պահել ամեն բան, որպեսզի տեսնեն, թե արդյո՞ք իրենց ընկերներից մեկնումեկը կարող է անհետանալ խիստ ուշադիր հսկողության պայմաններում:

Հաջորդ առավոտյան բոլոր հիսուն հերոսներն էլ անհետացան:

Դա մեծ վիշտ պատճառեց ժամանակի բոլոր մարդկանց: Բոլորն անհուն մի դառնություն էին զգում մարդկային արժանապատվության հանդեպ այդ թշնամանքից: Քննարկումների միջոցով նրանք որոշում կայացրին՝ մի վերջին ջանք գործադրել դիմակայության համար: Մնացած տասը հազարի չափ մարդիկ հրաժարվեցին անձնական կյանքի գաղտնիությունից՝ օգտագործելով ՀԻԳՀ-ի տեսախցիկները, որոնք ընդգրկում էին ամբողջ տարածությունը եւ մշտապես հետեւում ու հսկողության տակ էին պահում նրանց: Նրանք օգտագործելու էին այդ համակարգը՝ արձանագրելու յուրաքանչյուր մարդու կյանքի ամեն րոպեն, ամեն վայրկյանը, եւ նկատի ունենալով, որ կլինեն մարդիկ, ովքեր չեն անհետանա, ենթադրում էին, որ կմնան մարդիկ, ովքեր կդիտեն տեսագրությունը:

Նրանք պետք է տեսնեին եւ հասկանային, թե իրականում ինչպես են մարդիկ չքանում:

«Նույնիսկ եթե մեռնենք, պետք է հասկանանք ինչպես»,- մտածում էին բոլորը:

Եվ այնժամ, ակնթարթորեն,- դժվար է ճշգրիտ ասել, թե երբ,- տասը հազարի չափ մարդիկ բացարձակապես չքացան:

Կյանքն այնքան դաժան է. վերջում ձեզ ստիպում է պարզապես անձնատուր լինել:

Այդ ժամանակ աշխարհում մնացել էին միայն մեկ տղամարդ եւ մեկ կին:

Թվում էր՝ աղետը դադարել է:

Երկուսն էլ գոնե բնական մահով մահացան, ոչ թե չքացան:

Կարող եք ասել, թե երկրի վրա մնացած վերջին տղամարդ ու կին զույգի համար մի փոքր ավելի հեշտ էր, քան Ադամի եւ Եվայի համար՝ նրանց օրերում: Առնվազն գոնե կար անհավանական ՀԻԳՀ-ն, որ նրանց կարող էր հագուստ ու սնունդ տալ առանց որեւէ դժվարության: Այդ տեսանկյունից հնարավոր էր, որ քաղաքակրթությունը, թեեւ վերջին ծանր շնչում, դեռ չէր հասել իր վերջնական սահմանագծին:

Շատ դժվարություններ ծագեցին անհետացումների պատահական տեղաբաշխման պատճառով: Հատկապես մարդկային ռեսուրսների ոլորտում, օրինակ, սարսափելի շատ դժվարություններ կային: Գրեթե անհնար էր որեւէ մտահղացում հանգեցնել վերջնական անսխալ իրականացման: Սա շատ մտահոգիչ խնդիր էր: Հետագա վերլուծության ենթարկելիս այս հիմնախնդրի հարուցած ամենացավալի արդյունքն այն ժամանակ հետեւյալն էր: Քաոսային, անկանոն կառավարման պատճառով հայրս տիեզերքում գրեթե կորել էր տեսադաշտից: Եթե չլինեին որոշակի պահի որոշակի իրավիճակում պատասխանատու անձինք, ովքեր հետագայում ինչ-որ պատճառներով անսպասելիորեն մտածում էին ինչ-որ բաների մասին, ապա որոշակի հանձնարարություններ տալիս, որոնք կարողանում էին հանգեցնել որոշակի ճիշտ արդյունքների ձեռքբերման, հայրս անկասկած լքված կլիներ տասնյակ հազարավոր ոտնաչափ բարձրության վրա՝ ընկերակցելով աստղերին տիեզերքի սառն անսահմանության մեջ, մարդկության վերացման նախաշեմին: Իհարկե, եթե դա տեղի ունենար, ապա կարող էր սփոփանք լինել նրա համար:

Ի վերջո, նա վերադարձավ երկիր:

Հայրս, հենց որ պարկուճի դուռը բացեց, տեսավ ՀԻԳՀ-ի ավտոմատ սարքավորումը: Անօդաչու թռչող սարքեր, անվարորդ էքսկավատորներ, ինքնագնացներ ու փոխադրամիջոցներ, ավտոմատ ջեռուցիչներ, ավտոմատ կերպով բերք հավաքող մեքենաներ, ավտոմատ մերսող, ավտոմատ կերպով համբուրգեր պատրաստող մեքենաներ եւ ամեն տեսակ նման բաներ, որ ետուառաջ էին անում՝ աշխատելով հանգիստ, անշտապ, ասես ոչինչ էլ չէր պատահել:

Ծաղկեփնջեր կամ ծափահարություններ չեղան: Մեկ մարդ իսկ չկար, որ ուշադրություն դարձներ նրա վրա:

Թվում էր, որքան որ աչքը կարող էր տեսնել, անսահման երկնքի ներքո, ծովերով սահմանափակված ամբողջ ցամաքը անխռով ու ներդաշնակ, խաղաղ ոսկեդարում է գտնվում: Ամբողջ աշխարհը բացարձակապես անբիծ էր ու անարատ: Եվ միակ բանը, որ կարող էր ստիպել աշխարհն ամայի անվանել, այն էր, որ մեկ մարդ անգամ չէր երեւում:

Ավելի ուշ, վիթխարի համակարգչի առջեւ, որը կառավարում եւ վերահսկում էր ամբողջ ՀԻԳՀ-ն, հայրս դողացող շուրթերով հարցրեց. «Ասա ինձ՝ ես վերջի՞նն եմ»:

Համակարգիչը կայծակնային արագությամբ զննեց ամբողջ երկրագունդը եւ ցածր ձայնով պատասխանեց, որ հայրս վերջին մարդը չէ: Նա զուգընկեր ուներ:

Հայրս գտավ մորս եւ ամուսնացավ նրա հետ:

Չնայած մի ժամանակ ամենաչար եւ քինոտ խոսքերն էին նետել իրար երեսի, հիմա, երբ աշխարհում մնացել էին միայն երկուսով, հասկացան, որ այլեւս երբեք չեն կարող լքել իրար: Նրանք պետք է միանային: Դա պարտականություն էր եւ պարտավորություն, բայց նաեւ նրանց հոգու խորքից ծնված անհրաժեշտություն էր:

Այդ պահից ի վեր նրանք հազվադեպ էին խոսում: Կարողանում էին համաձայնության գալ ցանկացած բանի շուրջ՝ պարզապես լուռ նայելով միմյանց: Նրանք ապրեցին միասին. դա նախասահմանված էր երկնքի կողմից:

Գյուղական վայրում կիսավեր մի եկեղեցի գտան, հագան իրենց տոնական պատշաճ զգեստները: Ոչ ոք չկար այդտեղ, որ հարց տար նրանց: Պարզապես նայեցին իրենց առջեւ վեր խոյացող խաչին եւ արտաբերեցին այս երկու բառը՝ «Համաձայն եմ»:

ՀԻԳՀ-ի օգնությամբ եւ պաշտպանությամբ՝ շրջեցին ամբողջ աշխարհը: Նիագարայի ջրվեժից մինչեւ աֆրիկական անապատներ, բուրգերից մինչեւ Մեծ պարիսպ, Լուվրից մինչեւ Էմփայր սթեյթ բիլդինգ: Նրանք ունեին եւ՛ ժամանակ, եւ՛ եռանդ՝ թափառելու դատարկ երկրագնդով մեկ:

Անօդաչու ինքնաթիռներով կտրեցին անցան լեռնագագաթներ եւ օվկիանոսներ՝ մեն-մենակ թռչելով շերտավոր ամպերի միջով, անսահման պայծառ լույսին ընդառաջ:

Այդ անվերջ մեղրամիսն այնքա՛ն ազատ էր ու անհոգ եւ այնքա՛ն թախծալի: Օրվա ընթացքում միշտ միմյանց ձեռք էին բռնում, իսկ գիշերները քնում էին իրար գրկած: Մեկ վայրկյան իսկ չէին լքում իրար՝ համակված նախնական մի վախով, թե անփութության ու անուշադրության մի պահի

այլեւս երբեք չեն կարողանա տեսնել միմյանց: Նրանք միայն պետք է ապրեին կամ մեռնեին միասին՝ կտրականապես դեմ լինելով, որ իրենցից մեկնումեկն անհետանար եւ մյուսին թողներ անասելի վշտի մեջ:

Ուրիշ ոչ ոք չունեին, որին կարողանային ապավինել: Նրանք կախված էին մեկը մյուսից:

Ինձ ծնունդ տալուց հետո մայրս ընկավ հետծննդաբերական դեպրեսիայի մեջ: Մի օր նա զգաց, որ այլեւս հորս կարիքը չունի: Երբ հայրս քնած էր, նա թողեց այն ձեռքը, որ բռնել էր այդքան երկար տարիներ, վեր կացավ ու գնաց: Նա երկար ճանապարհ անցավ, կտրեց զարկերակը եւ հանգիստ պառկեց:

Հայրս գտավ մորս եւ թաղեց նրան:

Այդ պահից հայրս այնքա՛ն դժբախտ էր: Երբ գրկում էր ինձ, երբեք չէր ժպտում: Իհարկե, նա դաժան մարդ չէր: Երբ ես սկսեցի հասկանալ ամեն բան եւ կարող էի ինքնուրույն սովորել ու գործել, հայրս մեկ գիշերվա մեջ անճանաչելիորեն ծերացավ:

Նա մահացավ՝ ամուր բռնած իմ ձեռքը, ասելով, որ երբեք իր ամբողջ կյանքում մորս հանդեպ ատելություն չի ունեցել: Նա սիրում էր մորս:

Հիմա նրանք հանգստի գրկում են եւ ինձ մենակ են թողել, ամբողջովին մենակ: Երբեմն մտածում եմ, թե միգուցե Աստված այլեւս չէր կարող տեսնել մարդկային աշխարհում տիրող ամբողջ ատելությունը, դրա համար էլ խնդրեց բոլոր կողմնակի մարդկանց մի կողմ քաշվել մի պահ՝ թողնելով միայն հորս ու մորս, որպեսզի սովորեն, թե ինչպես պետք է համակերպվեն կյանքի հետ:

ՇՈՒ ՑՅԱՈ

ՓԱՓՈՒԿ ԵՎ ՀԱՄԵՂ ՁՎԱԾԵՂ

Կեսօրից հետո ժամը երեքին շատ կարեւոր հանդիպում ունեմ:

Հիվանդասենյակից շուտ գնալու թույլտվություն խնդրեցի եւ տուն վերադարձա: Անցյալ գիշեր մի լավ մաքրեցի բնակարանը, բայց դեռ չէի համարում, թե դա ճիշտ է: Ինձ համար մեկ գավաթ թեյ լցրեցի եւ հյուրասենյակում նստեցի բազկաթոռին՝ զննելով մյուս կողմում գտնվող երկտեղանոց բազկաթոռը, որտեղ դեղին եւ մոխրագույն մի քանի բարձ էի դրել: Ինձ թվում էր, թե դրանք այս կամ այն դիրքով դնելը հարմար չէր, բայց երբ տեղափոխեցի, դարձյալ հարմար չէր:

Ժամացույցը 2:50 էր ցույց տալիս: Գավաթիս մեջ բավականաչափ թեյի տերեւներ չէի դրել: Թեյը մի քիչ անհամ էր ստացվել:

Բացի սպասելուց, ուրիշ բան չկար անելու: Ծարունակում էի նայել տարբեր չափերի դեղին եւ մոխրագույն բարձերին: Դրանք հինգն էին՝ երկուսը մեծ, երեքը փոքր:

Դարչնա-դեղնավուն եւ գորշ ցեխագույն պուտերով բարձեր: Դրանք ենթադրաբար նոր մոդայիկ գունային համադրումներ էին: Հաստ կտորի վրա այսուայնտեղ դաջված մեծ ու փոքր շրջանակներ: Պետք է որ փոփ-արվեստի նախշեր լինեին: Ամեն դեպքում, երկտեղանոց բազկաթոռին գցված՝ փոփ-արվեստ ներկայացնող հինգ բարձերը, որոնց վրա ոչ մի հյուր չէր նստել, պարզապես չափազանց շատ էին թվում:

Դռան զանգը հնչեց 2:56-ին: Սա, անշուշտ, ճշտապահ հյուր էր:

Ծեմին ճերմակամորթ մի աղջիկ էր կանգնած:

-Ձեզ ստիպել եմ սպասե՞լ:

-Ը-ը, ես կասեի, որ ճիշտ ժամանակին եք եկել:

Կռացա եւ նրան մի զույգ հողաթափ մեկնեցի: Նայեցի նրան ներքեւից վերեւ՝ թենիսի մարզակոշիկներից վեր, ծնկներից մինչեւ շրջազգեստը, մինչեւ գոտկատեղին կապված կաշվե ամրագոտին, մինչեւ կուրծքն ու դեմքը: Ապա կրկին զննեցի նրան:

Բացառիկ գեղեցիկ մաշկ ուներ: Այն փայլում էր եւ փոքր-ինչ նման էր փափուկ ու քաղցր, կաթնագույն սերուցքային իրիս կոնֆետի: Թեեւ դիմագծերում առանձնահատուկ ոչինչ չկար: Նա փոքր էր ու նրբագեղ, բայց

համարձակությամբ ու ինքնավստահությամբ լի, ինչպես այդ տարիքի բոլոր աղջիկները:

Ներս մտավ եւ վստահ նստեց հատուկ հյուրերիս համար պատրաստված երկտեղանոց բազկաթոռին: Արագ հավաքեց ու մի կողմի վրա դրեց երկար տանջանքով դասավորածս բարձերը, եւ շարունակեց վարվել ցանկացած այլ հյուրի նման՝ ընդունելով հյուրասիրությունը, որն առաջարկեցի նախքան նրան ընկերակցելը:

Հյուրերը բոլորն այդպիսին են. ուզում են նախ նստել եւ հարմարվել իրենց շրջապատին: Հետո պատրաստ են զրուցել տանտիրոջ հետ:

Բայց առաջին թեմայի քննարկումը տանտերը պետք է սկսի:

Մեկ րոպե բավականին սրտառուչ լռությունից հետո ես սկսեցի.

- Այսօր կեսօրից հետո դասեր չունե՞ք:

-Հը՞մ,- նա իր հարթ, փոքրիկ մատներով բարձրացրեց գավաթը:- Ուզում եք իմանալ, թե ինչու՞ ենք հիմա հանդիպում:

-Ոչ: Ուղղակի նկատեցի, որ համազգեստով չեք: Ձեր դպրոցական համազգեստները բավականին գրավիչ են:

-Իսկապե՞ս:

Նա ինձ նայեց մի փոքր զարմացած:

Մի պահ լռեց, ապա ասաց.

- Դպրոցն արդեն վտարել է Ուսուցչին եւ ինձ:

Բառերը նրա բերանից ելնում էին արձաթահունչ, պարզ ու դյուրաբեկ, ասես փոքրիկ մի թռչուն լիներ: Դրանք արձագանքում էին հյուրասենյակի օդի մեջ:

Խոհանոցում թեյամանը ձայն արձակեց՝ բա՛մ: Անջատիչը չրխկալով իր սկզբնական դիրքին վերադարձավ: Ջուրը եռում էր:

Վեր կացա եւ գնացի խոհանոց՝ ինձ համար մի գավաթ թեյ լցնելու, նաեւ ոտքերիս թմրածությունն անցկացնելու: Չգիտեի, թե ինչ ասեմ նրան:

-Իրո՞ք: Արդեն վտարե՞լ են...

Բազկաթոռին նստելով՝ քրթմնջացի նրա խոսքերը:

-Այո: Դրա համար էլ որոշեցի գալ ու խոսել ձեզ հետ:

-Բայց ես իսկապես գաղափար չունեմ, թե որտեղ կարող եմ օգնել:

Ապշած հայացքով նայեցի նրա դեմքին: Նա իմ հայացքին պատասխանեց դեմքի մեկ այլ արտահայտությամբ՝ խոր մտահոգված եւ հույսով լի: Այդ հայացքն ինձ սարսափեցրեց:

Հեռանալուց առաջ ամուսինս մի քանի անգամ փորձել էր լուրջ զրույց

ունենալ ինձ հետ, եւ միշտ նրա դեմքին ճիշտ այդ նույն արտահայտությունն էր:

-Հը՛մ, անկեղծ ասած՝ իրոք չգիտեմ, թե ինչ պետք է անեմ,- կմկմացի ես:- Ի վերջո, նա ինձ լքեց չորս ամիս առաջ: Ես նրա համար բացարձակապես անօգուտ էի, դրա համար էլ լքեց ինձ:

Աղջիկը ոտքի կանգնեց փոքր-ինչ նյարդայնացած:

- Բայց նա ի վերջո ձեր ամուսինն էր: Չե՞ք կարծում, որ մի քիչ տարօրինակ էր այն փաստը, որ ոչինչ չեք իմացել մեր չորսամսյա կապի մասին:

-Դե, գուցե մի քիչ...

-Նա ձեզ այլեւս չի՞ հետաքրքրում:

-Ի՞նչ ասեմ...

-Դա ա՞յն է, ինչն անվանում են անսեր ամուսնություն:

-Հը՛մ: Դե, հա...

-Ուրեմն, այս չորս ամսվա ընթացքում պարզապես որոշել եք ընդունե՞լ ամուսնալուծությունը:

Բառերը չափազանց արագ էր արտաբերում: Ծատ ուժեղ մեկը դուրս եկավ: Այդպիսի մեկի հետ զրուցելը հեշտ չէր ինձ համար: Բայց ինչ էլ լիներ, ես դեռ կարող էի իրավիճակը գնահատելու ժամանակ ունենալ: Պետք է նրան մտածված պատասխան տայի: Մեր երկուսի համար:

-Ճիշտն ասած, չեմ կարծում, թե դա ձեր երկուսի համար օգտակար կլինի,- ասացի խիստ գործնական տոնով:

Իր հարցերն արագ կրակելուց հետո նա թրմփալով ընկավ երկտեղանոց բազկաթոռին: Մեղմ փնչացնում էր՝ սպասելով իմ պատասխանին:

Երբ պատասխանս լսեց, քթի տակ ծիծաղեց:

-Հրե՛շ,- բացականչեց:

-Ի՞նչ:

-Հրեշի մեկն ես:

Երկար եւ խորը շունչ քաշեց, ասես կրկնում էր ինքն իրեն, ապա լայն ժպտաց:

-Ծխելու բան ունե՞ք այստեղ:

-Խոհանոցի պահարանում:

Աղջիկը ոչ միայն մի տուփ ծխախոտ բերեց հյուրասենյակ, այլ նաեւ փոքրիկ մոխրաման:

Չորս ամիսների ընթացքում, երբ ամուսինս ապրում էր մեկ այլ կնոջ հետ, ոչ ոք բնակարանում չէր ծխել: Օդը կորցրել էր ծխի բոլոր հետքերը, եւ մոխրամանները մաքուր էին:

Բայց հիմա երիտասարդ աղջիկը, որը քնել էր ամուսնուս հետ, եկել եւ ծխախոտ էր վառում: Այդ ամենը փոքր-ինչ տարօրինակ էր:

-Ուսուցիչն ինձ երբեք չէր թողնում ծխել: Նա ընդհանրապես ոչ մի աշակերտի չէր թողնում ծխել:

Աղջիկը ճարպկորեն թափ տվեց ծխախոտի մոխիրը:

-Կողքիս ունենալով այդպիսի մեծ ուսուցիչ՝ ես միշտ մեծ ճնշման տակ եմ, էլ չեմ ասում՝ նրա հետ ապրելով: Միշտ ստիպում է այս ու այն անել կամ այս ու այն չանել: Եվ այդ ամենը՝ «իմ օգուտի համար»:

-Հա: Նա իրոք տիպ է:

-Իսկապե՞ս: Նա միշտ այդպիսի՞ն էր: Երբ միասին էիք, էլի՞ այդպիսին էր:

-Իհարկե:

-Իսկ ինչպե՞ս եք, ը-ըմ, համակերպվում դրա հետ:

-Պարզապես ուշադրություն մի՛ դարձրու նրա վրա,- ասացի:- Որոշ բաներ ավելի լավ է անտեսել: Կոկա-կոլա կուզե՞ս:

-Այո:

-Սառո՞ւյց:

-Սառույց էլ:

Նայեց, թե ինչպես եմ լցնում իր բաժակը, ապա սառույցի վեց խորանարդիկ ավելացրեց:

-Սառույցը քիչ էր: Գնամ մի քիչ էլ սարքեմ:

Նա հետս եկավ խոհանոց՝ օգնելու ինձ:

-Ուսուցիչն ասում է, որ բժիշկ եք:

-Հա:

-Ի՞նչ բժիշկ:

-Դե... Գերիատրիկ բժիշկ: Ծերաբույժ: Սարդիկ ծերանում են, հիվանդանում են (կամ ոչ) եւ մահանում ծերանոցում: Ես նրանց բուժման ու խնամքի հարցերով եմ զբաղվում՝ նրանց վախճանվելուց առաջ: Երբ նրանք հասնում են իրենց կյանքի մայրամուտին, բնական է, որ բուժման եւ խնամքի կարիք են զգում: Միակ բանը, որ պետք է անել, նրանց մահը թեթեւացնելն է: Ծերանոցը չպետք է ուրիշ բաների խառնվի: Եվ հարազատները գոհ կլինեն:

-Ուրեմն, Ուսուցչի գործի հետ ընդհանուր ոչինչ չկա՞:

-Դա, անկասկած, այն աշխատանքը չէ, որ հույս է ներշնչում,- ասում եմ:

Միասին աշխատեցինք խոհանոցում՝ սառցարանի մեջ դնելով ջրով լի պլաստմասե ամանը:

-Ինչպե՞ս եք առաջին անգամ հանդիպել:

-Պատահական ռոմանտիկ հանդիպում էր:

-Օ՛, դուք, ձեր սերունդը սիրում էր դա անել,- քրթմնջաց նա:

-Դա այնքան էլ վաղուց չէր:

Հիշեցի, թե ինչպես առաջին անգամ հանդիպեցի ամուսնուս, ինչպես սիրահարվեցինք, հետո ամուսնացանք: Վեց կամ յոթ տարի առաջ ընդամենը: Բայց վեց կամ յոթ տարին այս երիտասարդ աղջկա համար կարծես հավերժություն էր:

-Ինչո՞ւ երեխաներ չունեցաք:

Ոչինչ չասացի: Փակեցի սառցարանի դուռը եւ ետ գնացի ուղիղ հյուրասենյակ: Վերցրի սառը թեյիս գավաթը եւ մի կում արեցի:

-Կներեք: Երեւի ձեր ցավոտ տեղի՞ն կպա:

-Ոչ: Խոհանոցում շատ շոգ է: Իսկ ես ծարավ եմ:

Բարձրացրի գավաթը եւ մի կում էլ խմեցի: Այս եղանակին սառը թեյ խմելը լավ է:

-Հիմա... ինչու երեխաներ չունեցա՞նք: Դե, երբ ամուսնացանք, արդեն ծեր էինք: Դրան ավելացրու մեր երկուսի աշխատանքը, եւ կարծում եմ պարզ կլինի, որ չենք ցանկացել նաեւ:

Աղջիկը թեթեւակի ժպտաց:

-Քաղցած եմ,- ասաց:- Ուտելու ի՞նչ ունեք:

-Ոչինչ:

-Լավ, իսկ ի՞նչ եք ուտում սովորաբար:

-Հետս տուփի մեջ ուտելիք եմ տանում, երբ արտաժամ եմ աշխատում:

-Իսկ եթե արտաժամ չեք աշխատո՞ւմ:

-Այդ դեպքում տուփը տուն եմ բերում:

-Կարո՞ղ եմ սառնարանի մեջ նայել:

-Այո, իմ հյուրն ես:

Նա բացեց սառնարանի դուռը եւ գլուխը ներս մտցրեց՝ խառնշտելով:

Աչք գցեց նաեւ խոհանոցի գազօջախի վրա: Երբ սառնարանի դուռը փակել էր, տեսա, որ չորս ձու է հանել:

-Ուզում եմ ձվածեղ անել, լա՞վ:

-Հը՞...

-Կլինի, չէ՞:

-Այո, իհարկե: Բայց ինչո՞ւ ձվածեղ:

-Որովհետեւ ձեր տանը միայն չորս ձու եւ մեկ փոքրիկ թավա կա,- պատասխանեց նյարդայնացած՝ աչքերը պտտելով: Ձեռքերը լվաց եւ սկսեց ձվերը ջարդել՝ շարունակելով խոսել.

-Եթե հինգ կամ վեց ծու ունենայի, ձեզ համար իտալական ծվածեղ՝ ֆրիտտատա կպատրաստեի: Հինգ կամ վեց ծու ունենալու դեպքում արժեր նաեւ մի քիչ բանջարեղեն գնել եւ պատրաստել դա:

-Իսկ եթե նույնիսկ չորսը չունե՞ս:

-Ուրեմն չարժե խանութ գնալ:

-Այստեղ մի քանի ծու եմ ունենում սովորաբար, ասենք՝ մի երկու-երեքը:

-Եթե երեք ծու է,- ասաց՝ թավայի մեջ յուղ լցնելով,- ավելի լավ է ծվածեղ անել: Եթե երկուսն է, ավելի լավ է խաշել, բայց դեղնուցները շատ պինդ չլինեն:

-Իսկ եթե մե՞կն է:

-Ուրեմն չարժե չարչարվել: Ուղղակի դեն նետեք,- ասաց սառը տոնով:

Գազօջախը միացրեց: Կապույտ բոցն սկսեց թրթռալ: Քիչ անց փայտիկներով սկսեց խառնել ծվերը: Ապա լցրեց թավայի մեջ:

-Պատրաստելու ժամանակն է,- ասաց: Սկզբում լցրեց բարակ շերտով, ապա սպասեց, որ շերտը պնդանա: Հետո նոր շերտ լցրեց: Ապա հաջորդը: Թավայի մեջ աստիճանաբար սկսեց վեր բարձրանալ հաստ, գայթակղիչ, փքուն մի կիսաշրջան:

Ես կանգնած հիանում էի: Անկեղծորեն հաճոյախոսեցի.

-Ի՜նչ գեղեցիկ ծվածեղ է:

-Եթե քառակուսի թավայում արվեր, ավելի տպավորիչ կլիներ,- հանգիստ արձագանքեց աղջիկը:

-Կարո՞ղ եմ համտեսել:

-Իհարկե:

Վերցրի երկու փոքր ափսե, երկու զույգ փայտիկ եւ դրանք տարա խոհանոց:

Ձվածեղն արդեն ճենապակե ափսեի վրա էր, որ Աստված գիտե որտեղից էր նա գտել: Ափսեն դրվեց սեղանին:

-Ի՞նչ համ ունի,- հարցրի ապուշի պես:

-Չգիտեի՝ քա՞ղցր եք սիրում, թե՞ կծու, դրա համար էլ եւ՛ սոյայի սոուս ավելացրի, եւ՛ շաքար:

-Կծու եմ սիրում:

Փայտիկներովս մի մեծ կտոր վերցրի հաստ ծվածեղից եւ բերանս տարա՝ համտես անելու: Ինչպես եւ սպասում էի, համեղ էր ու հյութալի: Բերանիս մեջ զգում էի շերտերը:

Հիացմունքով վայելում էի ճաշակածս, երբ հանկարծ աղջիկն ասաց.

-Ուսուցիչը քաղցր է սիրում:

Բերանս լիքն էր, եւ ես հանկարծ հասկացա, որ աղջիկը դեռ այստեղ էր:

Մի պահ լռություն էր, եւ լսվում էր, թե ինչպես եմ ծամում ու կուլ տալիս:

Հազիվ էի կուլ տվել համեղ պատառը, երբ շրջվեցի նրա կողմը եւ անկեղծորեն ասացի.

-Կներես:

Նա ուղիղ ինձ էր նայում՝ առանց մի բառ ասելու: Ասես իր աչքերում ամրագրում էր իմ զզվելի պատկերը՝ ծվածեղ խժռելիս: «Իրոք ցավում եմ»:

Ինքս ինձ ասացի. «Երբեք այսքան լավ ծվածեղ չեմ կերել»: Աղջիկը լուռ էր: Մտածեցի՝ երեւի ուր որ է կարտասվի:

Բայց նա չարտասվեց:

Ընդհակառակը, իմ աչքերն էին արցունքոտվել:

-Տես, Է՛... Ես երբեք այսքան լավ չեմ պատրաստել,- ասացի՝ հոտ քաշելով:- Ես երբեք լավ կին չեմ եղել: Քո աչքերում՝ նույնիսկ արժանի մրցակից չեմ:

Նրա դեմքը լուրջ արտահայտություն ստացավ: Տեղից անգամ չշարժվեց:

-Ուրեմն, լավ բժի՞շկ եք:

-Դե... Չեմ կարծում:

Նա բարձր ծիծաղեց:

-Օ՛, շատ տխուր է ձեր կյանքը:

Դառն ծիծաղեցի: Նա ճիշտ էր:

Արագ ոտքի ելավ, ուշադիր նայեց դեմքիս:

-Լավ, ես վաղը կգնամ:

-Հը՞:

-Ասացի՝ վաղը կգնամ:

-Գնալու եմ ուրիշ տեղ՝ ավագ դպրոցում սովորելու:

-Ինչո՞ւ:

-Չլսեցի՞ք ինձ:

-Ինձ վտարել են: Իմ եւ Ուսուցչի պատճառով:

-Ուրեմն...

-Ուրեմն պետք է գնամ ուրիշ տեղ եւ ավագ դպրոց ընդունվեմ: Կասեմ՝ ծնողներս աշխատանքը փոխել են: Կամ նման մի բան: Մայրս արդեն ամեն ինչ կազմակերպել է:

-Իսկ նա՞ ինչ է անելու:

-Նա՞: Նկատի ունեք Ուսուցչի՞ն: Դե, պարզ է, ես լքել եմ նրան:

Երբ նայեցի դեմքին, իսկապես մտահոգվեցի նրա համար:

-Ուրեմն, եկել էիր, որ այսօր այդ մասի՞ն ասեիր ինձ:

-Ի՞նչ: Ոչ մի դեպքում: Չեմ եկել մրցակցուհուս ասելու՝ «Հեյ, վաղն ամուսնուդ քեզ եմ վերադարձնելու»:

-Բայց պարզ ասացիր, որ կապերդ խզել ես նրա հետ:

-Դա պարզապես պատահականություն է:

Մի ծխախոտ էլ վառեց եւ ուրախ ժպիտը դեմքին շարունակեց.

-Պարզ չէ՞: Եկել եմ ձեզ սովորեցնեմ, թե ինչպես պետք է ձվածեղ պատրաստել:

-Դա պարզապես...

-Բայց լուրջ...,- հայացքը խոնարհեց եւ ծխախոտի մոխիրը թափ տվեց:- Լավ էլ ջոկող եք:

-Ե՞ս: Ինչո՞ւ:

-Որովհետեւ,- ասաց կամաց,- իրերը կոչում եք իրենց անունով:- Ասացիք՝ «Չեմ կարծում, որ կշարունակեք ձեր հարաբերությունները»: Եվ Ուսուցիչն ու ես իսկապես... իրո՛ք իրար համար չենք ստեղծված:

-Հա...

-Բանն այն է, որ,- շարունակեց,- Ուսուցիչն ու ես նույն նավակի մեջ ենք: Գնալու տեղ չունենք, նույն վիճակում ենք: Եթե նույնիսկ վերադարձնեք նրան, դա պարզապես մի մեծ խառնաշփոթ կլինի, գլխացավանքի մեջ կընկնեք:

-Անկեղծորեն՝ ես էլ չեմ սիրում դժբախտությունները գրկաբաց ընդունել,- ասացի:- Ինչպես ասում են, իմ կյանքում եւ աշխատանքում կարծես ուրիշ բան չեմ անում, միայն գլխացավանքի մեջ եմ ընկնում:

-Դե, լավ է ուրեմն:

Աղջիկը գնաց 5:45-ին: Հեռանալիս շրջվեց եւ ինձ ասաց.

-Հետեւեք բոցին: Սկզբից մինչեւ վերջ պետք է այն պահեք ճիշտ բարձրության վրա՝ ոչ շատ բարձր, ոչ շատ ցածր: Ահա այդպես կպատրաստեք փափուկ եւ համեղ ձվածեղ:

ՀԱՈ ՑԶԻՆՖԱՆ

ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ՄՈԼՈՐԱԿՆԵՐ

-Պատմիր ինձ հիասքանչ մոլորակների մասին: Ես չեմ սիրում դաժան ու գարշելի վայրերը,- ասում ես դու:

-Լավ,- ժպտում եմ ես ու գլխով անում:- Իհարկե, կպատմեմ:

ՍԻՍԻԼԱՑԶՅԱ

Սիսիլացզյան հիասքանչ մի մոլորակ է, որի ծաղիկներն ու լճերը բոլոր այցելուներին անմոռանալի հիշողություններ են պարգեւում: Այդտեղ ոչ մի թիզ անմշակ հող չեք տեսնի, հողի ամեն մի հատված ծածկված է բուսաշխարհի՝ մետաքսի պես նուրբ անուա խոտով, կուցինցին ծառերով, որոնց կատարներն ամպերին են հասնում: Այդտեղ այնքան տեսակ-տեսակ հրաշալի մրգեր կան, որոնց անունը շատ մարդիկ չգիտեն, չեն կարող նույնիսկ նկարագրել դրանց տեսքը, դրանց գայթակղիչ բուրմունքն ու համը:

Սիսիլացզյացիները երբեք ստիպված չեն եղել անհանգստանալ իրենց գոյության համար: Նրանց կյանքի տեւողությունը շատ երկար է, իսկ նյութափոխանակությունը շատ դանդաղ է, եւ քիչ բնական թշնամիներ ունեն: Ուտելու համար ընտրում են բոլոր տեսակի պտուղները, իսկ իրենք ապրում են այկայա ծառի ներսում: Այդ ծառն օղակաձեւ է, ներքին տրամագիծը բավականին մեծ է, եւ չափահաս մարդը կարող է հանգիստ պառկել այդտեղ: Եվ այդպես սերնդեսերունդ ապրում են այկայա ծառի ներսում: Արեւոտ եղանակին ծառերի ճյուղերը հովհարաձեւ տարածվում են, իսկ անձրեւի ժամանակ լայն բացվում են, այնպես, որ դրանց տերեւները բացվում են մեծ հովանոցների նման:

Առաջին անգամ գալով Սիսիլացզյա՝ բոլորը տարակուսում են: Նրանք չգիտեն, թե ինչպես կարող է այսպիսի մոլորակի վրա քաղաքակրթություն առաջանալ, որովհետեւ, ինչպես տեսնում են, այնպիսի վայրում, որտեղ չկա վտանգ եւ մրցակցություն, կյանքը կարող է հոյակապ շարունակվել առանց գիտելիքի անհրաժեշտության: Բայց այստեղ իսկապես կա քաղաքակրթություն, եւ այն իրոք գեղեցիկ է, զարգացող ու մեծապես ստեղծարար:

Սիսիլացվա ժամանելիս շատերի ստացած առաջին տպավորությունն այն է, որ երբ տարիք առնեն, կգան այստեղ՝ վայելելու իրենց ոսկե տարիները: Նրանց մեծ մասի կարծիքով՝ խանգարող առաջին հանգամանքն այն կլինի, որ սովոր չեն այստեղի ուտելիքին, դրա համար էլ ժամանակ չեն կորցնում՝ զգուշորեն փորձելով բոլոր տեսակի մրգերն ու պտուղները: Ապա, որոշ ժամանակ այստեղ ապրելուց եւ բարիքները ճաշակելուց ու բավականին բարձր գնահատելուց հետո, զարմանալու են՝ իմանալով, որ սիրում են այստեղի ամեն տեսակ ուտելիքները եւ բոլոր տեսակի ծաղիկները, բայց չեն կարող այստեղի կյանքին դիմանալ,- հատկապես տարեցները,- իսկապես չեն կարող դիմանալ:

Իրենց ծնվելու պահից սիսիլացվացիները սկսում են սովորել, թե ինչպես ստեն: Ըստ էության, սա նրանց կյանքի ամենակարեւոր առանձնահատկությունն է: Իրենց ամբողջ կյանքում նրանք միշտ հորինում են, հորինում են պատմություններ, որ տեղի են ունեցել, եւ պատմություններ, որ տեղի չեն ունեցել, դրանք գրի առնելով, նկարելով, երգելով, բայց երբեք չհիշելով: Նրանք երբեք չեն մտածել, թե արդյոք լեզուն համապատասխանո՞ւմ է իրականությանը. զվարճանքը նրանց խոսքի միակ չափանիշն է: Եթե հարցնեք Սիսիլացվայի պատմության մասին, հարյուր տարբեր պատմություններ կներկայացեն ձեզ, եւ ոչ ոք չի հերքի որեւէ մեկի տեսակետը, քանի որ ամեն պահի նրանք զբաղված են ինքնահերքմամբ:

Սիսիլացվայում մարդիկ միշտ ասում են. «Լավ, ես դա կանեմ», իսկ իրականում երբեք ոչինչ չեն անում, բացարձակապես ոչ ոք այդպիսի խոսքը ճշմարտություն չի համարում, բայց տարաբնույթ զանազան զբաղմունքները կյանքն ավելի հարուստ ու գունագեղ են դարձնում: Միայն շատ հազվադեպ են մարդիկ իսկապես անում այն, ինչ հավաստում են, թե կանեն, բայց դրա համար հատուկ պատճառ պետք է լինի: Եթե հանդիպում կա, եւ երկու կողմերն էլ կատարում են պարտավորությունը, նրանք հաճախ միավորվում են եւ ապրում միասին: Իհարկե, նման բան շատ քիչ է լինում, եւ շատերը միայնակ են ապրում իրենց կյանքը: Սիսիլացվացիներն այստեղ ոչ մի սխալ բան չեն տեսնում: Ընդհակառակը, երբ լսում են գերբնակվածության պատճառով այլ մոլորակների դժվարությունների մասին, ավելի շատ են համոզվում, որ իրենց մոլորակում ամենալավն են հասկանում կյանքի բարվոք պայմանների մասին:

Այդ իսկ պատճառով Սիսիլացվան ծնունդ տվեց հատկապես փառահեղ գրականության, կերպարվեստի եւ պատմական ուսումնասիրությունների՝ դառնալով լայնորեն հայտնի մշակութային կենտրոն: Այլ տեղերից

եկած մարդիկ հիանում էին՝ հուսալով, որ այս կամ այն ծառի տակ, խոտերում կկարողանան լսել տեղացիների ինքնատիպ պատմություններն իրենց ընտանիքի մասին:

Որոշ մարդիկ զարմանում են՝ մի՞թե հնարավոր է ստեղծել կայուն հասարակություն այդպիսի մոլորակի վրա: Նրանք միշտ Սիսիլացզյան պատկերացնում են որպես քաոսային մի պետություն՝ առանց կառավարության կամ առեւտրի: Բայց նրանք սխալվում են: Սիսիլացզյայի կառավարությունը քաղաքակիրթ է ու ծաղկուն, եւ դարեր շարունակ մրգերի արտահանման առեւտուրը հաստատուն զարգացում է ունեցել: Ստելու լեզվական սովորությունը երբեք չի խոչընդոտել նրանց առաջընթացին, այլ իրականում նպաստել է: Միակ բանը, որ Սիսիլացզյան չունի, գիտությունն է: Ամեն մի իմաստուն մարդ ինչ-որ բան գիտե աշխարհի հրաշալիքների մասին, բայց այդ պատառիկները երբեք ի մի չեն բերվել:

ՊԻՄՈՒՅԱՑԻ

Պիմույացին մեկ այլ վայր է, որ ձեզ չի թողնի պատմությունն իմաստավորել: Այս մոլորակի թանգարաններում, ռեստորաններում եւ հյուրանոցներում կկարողանաք անցած օրերի մասին զանազան պատմություններ լսել: Դուք կշփոթվեք, քանի որ ամեն մեկն այնքան անկեղծ է պատմում, որ պարտավոր եք հավատալ, բայց այդ պատմություններից ոչ մեկը չի համապատասխանում մյուսների հետ: Սքանչելի պատմություններ կան Պիմույացիի բնապատկերի մասին: Եթե ճիշտն ասենք, այն գրեթե չի կարող կոչվել գնդաձեւ մոլորակ: Հյուսիսային եւ հարավային կիսագնդերի միջեւ բարձրության տարբերությունը դրամատիկական է:

Գրեթե ուղղահայաց կախված մի ժայռ շարունակաբար հորիզոնական ձեւով պարուրում է հասարակածի շրջանը՝ մոլորակը բաժանելով կտրուկ իրար հակապատկեր երկու աշխարհների: Վերին մասը ծածկված է մաքուր ձյուն ու սառույցով, իսկ ստորոտը շրջապատված է երկնագույն անսահման ծովով: Բայց քաղաքները կառուցված են այդ՝ թվում է անվերջանալի պատի վերեւում՝ նրբորեն փորագրված շենքեր, վերեւից ներքեւ իջնող ճանապարհներ, որ նման են արեւի ճառագայթների տակ երեւացող հսկա գեղանկարների:

Ոչ ոք իրականում չգիտե այդ պետության ստեղծման պատմությունը: Այն, ինչ կլսեք, պարզապես ներկայիս բնակչի՝ ռոմանտիկ բնույթի պատ-

մություն է: Ամեն պատմություն հուզիչ է, դրանց մի մասը զարմանահրաշ հեքիաթներ են՝ արյամբ ողողված, մի մասը՝ ողբերգական ու թշվառ պատմություններ, կան նաեւ սիրո պատմություններ, որ ստիպում են արտասվել: Իհարկե, այդ ամենը կախված է պատմողի տարիքից ու սեռից: Ոչ ոք չի փորձում ստիպել, որ բոլորն իրենց հավատան, եւ այս կերպ Պիմույացիի բանավոր պատմությունը շուրթից շուրթ է փոխանցվում՝ ավելի ու ավելի հրաշապատում դառնալով:

Շատ մարդիկ գրավվում են հրաշալի բնապատկերով եւ այստեղի պատմություններով, դրա համար էլ մնում են՝ չցանկանալով հեռանալ: Սա մի անհամեմատելիորեն բաց եւ հյուրընկալ մոլորակ է, որտեղ յուրաքանչյուր այցելու ջերմորեն է ընդունվում եւ ապրում է երջանիկ կյանքով: Երբ այցելուները որոշում են մնալ, նրանք նույնպես տուն են կառուցում զառիթափին, անդունդի վրա եւ իրենց լսած պատմություններն են պատմում նոր ժամանած հյուրերին: Լիովին գոհ եւ բավարարված՝ նրանք աստիճանաբար դառնում են այստեղի նոր բնակիչները:

Այս արբեցումը շարունակվում է այնքան ժամանակ, մինչեւ որ մի օր անսպասելիորեն նրանք իրազեկ են դառնում իրական ճշմարտությանը: Հանկարծ գիտակցում են, որ Պիմույացիի պատմությունն իսկապես արդեն բացահայտվել է անվերջանալիորեն փոքր ու նուրբ նշաններում: Ըստ էության, բոլորն այստեղ նույնն են: Ըստ էության, այս մոլորակը միայն այցելուներ ունի, իսկ իրական քաղաքացիներ կամ նրանց հետնորդներ չկան:

Հենց այդպես: Պիմույացին միշտ եղել է հոյակապ պատմություն ունեցող մի վայր, բայց անհայտ մի պատճառով այն անտեսվել է: Պիմույացիի ժողովուրդը լքել է իր հայրենիքը՝ իրենից հետո թողնելով դատարկ, շողացող քաղաքը, այստեղ սխալմամբ եկողներին սոսկ զարմանք ու հիացմունք պատճառելով: Պիմույացիի բնիկներից հետո մնացել են նաեւ նրանց լեզվի անհասկանալի ու անհասանելի պատառիկները եւ մակերեսային գիտելիքներ այդ լեզվի մասին: Նրանք հավանաբար մի քանի սահմանափակ, ժլատ տեղեկություններ ու հետքեր են թողել իրենց շենքերի ճեղքերում: Եվ դրանք թողել են, որպեսզի գուցե արմատավորվեն կամ ծիլեր տան հետո եկողների ուղեղներում եւ վերաճեն այս մոլորակի անցյալի մասին ամենածաղկուն, գունագեղ երեւակայության:

Ոչ ոք չգիտե, թե ով առաջինը հայտնաբերեց քաղաքացի չունեցող այս երկիրը: Այցելուների պատմությունը, որը փոխանցվել է սերնդից սերունդ, նույնպես, միտումնավոր թե ոչ, տարրալուծվել է անհայտության մեջ: Բո-

լոր այն այցելուները, ովքեր նախընտրում են մնալ, հույս ունեն լինել Պիմույացիի իսկական քաղաքացիները: Նրանք հետեւում են այս մոլորակին՝ անսասան խանդավառությամբ կառավարչի դեր տանելով, ի վերջո նույնիսկ հավատալով, որ դա եղել եւ միշտ կլինի իրենց հայրենիքը:

Թվում է՝ ոչ մի օտար մարդ չի կարող բացահայտել Պիմույացիի գաղտնիքը, բացի մի քանի թափառականից, որ եղել են տիեզերքի բոլոր անկյուններում: Նրանք խորաթափանց կերպով ընկալում են, որ այստեղի մարդիկ մշտապես պատրաստ են շեշտել այն փաստը, որ իրենք Պիմույացիի բնիկներ են, եւ սա այն է, ինչը շատ հաճախ հեշտությամբ մոռացվել է այն մոլորակների վրա, որոնք ղեկավարվում են բնիկ ժողովուրդների կողմից:

ՊԻՆՉԺԻՎՈ

Բացի Պիմույացիից, հավանաբար միայն Պինչժիվոյում կկարողանաք տեսնել կյանքի զանազան ձեւեր, որ բոլորովին այլ սովորույթներ ու մշակույթ են բերում, որոնք իրար են բախվում այս փոքրիկ մոլորակի վրա, միասին խորտակվում ու կայծեր արձակում:

Պինչժիվոն մեծ չէ, ոչ էլ փոքր է: Տարվա եղանակները տաք են, իսկ ջերմաստիճանն ու եղանակը՝ մեղմ: Հարթավայրերը լայնարձակ են, լեռներ չկան: Մակերեւույթին միայն փոքր բարձունքներ են, որ գեղեցիկ մի կամար են գծում այնտեղ, որտեղ երկինքը միանում է երկրին: Այն ունի մոլորակին բնորոշ բոլոր հատկանիշները, բայց ուրիշ ոչինչ չկա: Այդտեղ պարարտ հող կա, հարուստ հանքեր, բուսական ու կենդանական բազմազան աշխարհ, թփուտներով շրջապատված կլոր դաշտեր, որ բոլորին մղում են երգելու եւ պարելու: Բայց միայն այդքանը, մարդկանց զարմացնելու այլ վայրեր չկան:

Մարդիկ սովորական են, եւ ամենեւին աչքի չեն ընկնում որեւէ բանով: Նրանք պատկանում են կաթնասունների շատ սովորական մի խմբի. չափազանց մեծ չեն, պարզ են ու բարեսիրտ, հեշտ են հաշտվում սեփական վիճակի հետ: Սոցիալական համակարգը յուրահատուկ է իր մեղմությամբ, մարդիկ բավականաչափ ներդաշնակ կյանքով են ապրում:

Պինչժիվոյի ժողովուրդն աչքի է ընկնում իր անսահման բարի բնավորությամբ: Ոչ իրար հետ են վիճում, ոչ էլ այլ մոլորակներից եկած՝ տարբեր գույնի, չափի ու ձեւի օտարների հետ: Թե՛ մեծահասակները, թե՛ երեխա-

ները հմուտ ունկնդիրներ են: Երբ լսում են մեկին, միշտ իրենց մեծ աչքերը լայն բացում են, հաճախակի գլխով են անում, եւ նրանց դեմքերը զարմանք կամ հիացմունք են արտահայտում:

Տեղացիների այս բարի բնույթը տեսնելով՝ տիեզերքի առավել խելացի ու պատվախնդիր ժողովուրդները հասկացան դրա արժեքը եւ գաղտնի սկսեցին մրցակցել միմյանց հետ: Դա իրոք այդպես է: Ո՞վ չէր ուզի նման երկիր կառավարել: Այդտեղ կային օգտակար ռեսուրսների բոլոր տեսակները, հարմար կենսապայմաններ եւ, որ ամենից կարեւորն է, մեծ նշանակություն ուներ այդքան շատ առեւտրական երթուղիների խաչման կետում գտնվելը: Ո՞վ չէր ուզի նվաճել այդպիսի մի պետություն:

Այսպիսով, ուսուցիչներ, միսիոներներ, քաղաքական գործիչներ, հեղափոխականներ ու լրագրողներ, բոլորը եկան, եւ յուրաքանչյուրը պատկերեց երկնապարգեւ մի պետություն՝ բացահայտելով իդեալական շատ կողմեր: Եվ Պինչժիվոյի ժողովուրդը խոր ու լիաթոք հոգոցներ արձակեց՝ այդ ամենի մասին իմանալով: Եվ ավելին, կային այնպիսի մոլորակներ, որ զարմանալիորեն՝ նույնիսկ անմիջապես «վերակացուներ» ուղարկեցին ու հանդիսավոր կերպով ներգրավվեցին այդ մոլորակի իշխանության ամենաբարձր նստավայրում: Իսկ բնակիչները չընդդիմացան, ըստ էության ամենեւին չմտածեցին անգամ այդ մասին:

Իսկ հետո, երբ այդ հաղթական պահերը անցել էին, այլմոլորակային այցելուներն սկսեցին կորցնել հույսը, յուրաքանչյուրը յուրովի, եւ որքան ավելի շատ ժամանակ էր անցնում, այնքան ավելի էին հուսալքվում: Պինչժիվոյի ժողովուրդն ըստ էության երբեք չի ընդունում այդ քարոզչություններից որեւէ մեկը, եւ նույնիսկ ուսուցումների դեպքում, որ այնքան էլ հավանության չեն արժանանում, երբեք դրանք գործադրելու ծրագրեր չեն ունեցել: Մի կողմից՝ նրանք անընդհատ հիացմունքի բացականչություններ էին արձակում օրենքի գերակայությամբ ամրապնդվող հասարակության հետ կապված: Մյուս կողմից՝ կարծես թե չեն էլ լսել հեռավոր վայրերից եկած այս օրենսդիրների կողմից սահմանված կանոնների մասին:

Այդ առումով բոլոր ինքնահավան ու հավակնոտ անձինք անօգնական էին, քանի որ պարզել էին, որ խոսքի եւ գործի միջեւ այդ անհամապատասխանությունը ինչ-որ չարամիտ ու դիտավորյալ խաբեության արդյունք չէ, այլ, ավելի շուտ, կենսակերպ է:

Առերեսվելով «ինչու» հարցին, առանց որեւէ հիմնավորման, նրանք ասում էին. «Ճշմարիտ է, ինչ ասում եք, ճիշտ է, բայց աշխարհում շատ ճիշտ բաներ կան, ի՞նչն է իսկապես ճիշտ»:

Որոշ մոլորակներ այլեւս չէին կարողանում դա ընդունել, դրա համար էլ փորձում էին ռազմական ուժի միջոցով իրականացնել իրենց ծրագրերը: Բայց այդ դեպքում մեկ այլ մոլորակ հանկարծակի կարող էր միջամտել: Իշխանության եւ զինված ուժերի զնումները ու հավասարակշռումը ցույց էր տալիս, որ ամեն մի հնարավոր հակասություն լուծվում էր Պինչժիվոյի օդային տարածությունից դուրս:

Այսպիսով, Պինչժիվոն ծառայում է որպես կենտրոն, որտեղ օտարները հավաքվում են, եւ այն դարձել է համակեցության ու բնապահպանության ամենանախնական օրինակներից մեկը գալակտիկայի սրտում:

Քեզ դո՞ւր են գալիս այս պատմությունները:

-Դուր գալիս են, բայց մի տեսակ չեմ հասկանում: Ինչո՞ւ են բոլոր մոլորակները լցված այլ մոլորակներից եկած ճանապարհորդներով: Մի տեսակ անհարմար վիճակում եմ հայտնվում: Կենդանաբանակոն այգու նման մի բան է դա:

Հը՛մմ, ճիշտ ես, ինձ էլ դա դուր չի գալիս: Մոլորակի մատնահետքերը միշտ մաշվում, բարակում են այդպիսի դեպքերում: Լավ, ուրեմն խոսենք մի քանի ճշմարիտ բնիկների մասին:

ԱՄԻՅԱՑՁԻ ԵՎ ԱՅՀՈՒՈՈՒ

Ինչ վերաբերում է բնիկների կողմից ղեկավարվող մոլորակներին, ես կուզեի քեզ պատմել երկու մոլորակների պատմությունը: Դրանք Ամիյացզին եւ Այհուուուն են: Այս երկու մոլորակների վրա կան բանական էակների երկու առանձին ցեղեր, որոնք իշխում են, եւ երկուսն էլ հավատում են, որ իրենք իսկապես մոլորակի օրինական տերերն են:

Ամիյացզիի արեւը կրկնակի աստղ է՝ մեկը կուրացուցիչ ճառագայթող կապույտ հսկա, իսկ մյուսը՝ թույլ ճերմակ գաճաճ: Երկուսն էլ համեմատաբար նույնական զանգվածներ ունեն, սակայն դրանց ծավալն ու պայծառությունը խիստ տարբեր են: Այդ պատճառով Ամիյացզիի ուղեծիրն անհամաչափ դդմի ձեւ ունի: Նրա հեղափոխական բնույթը կապված է այս երկու աստղերի հակասականության հետ: Ամիյացզին պտտվում է վալսանման պարի պտույտով:

Ամեն անգամ, երբ մոտենում է կապույտ հսկային, Ամիյացզին մտնում է երկարատեւ ամռան շրջանի մեջ, իսկ երբ մոտենում է սպիտակ գաճա-

ճին, նույնքան երկարատեւ ձմռան մեջ է հայտնվում: Ամռանը մոլորակը ծածկված է բուսական աշխարհի բոլոր տեսակներով: Իսկ ձմռանը դրանց մեծ մասը խոր քուն է մտնում լռության մեջ:

Ձմռանն ու ամռանը Ամիյացգիում երկու տարբեր տեսակի կյանք է: Մեկն ամռան խիտ անտառներում փթթող կյանքն է, մյուսը՝ մերկ ու լերկ հարթավայրերի ձմեռային մենությունը: Ամառաբնակ ամիյացգիացիներն ապրում են որթատունկերի ներքո, ծղոտածածկ խրճիթներում, եւ երբ ջերմաստիճանն իջնում է ու սառն է լինում, այդ խրճիթներն անհետանում են ծխի եւ ամպի քուլաների պես, քանի որ տերեւները չորանում ու թափվում են: Ձմեռաբնակ ամիյացգիացիներն ապրում են ժայռափոր կացարաններում: Երբ եղանակը կրկին տաքանում է, քարանձավների մուտքերի առջեւի բոլոր հետքերն անհետանում են հաստ խոտածածկույթի տակ:

Ամեն անգամ, երբ ամառաբնակ ամիյացգիացիները պատրաստվում են ձմեռելու, նրանք հեղուկ են արտազատում, որը ներծծվում է հողի մեջ: Այդ հեղուկն ազդում է *ուսուսու* անունով հայտնի յուրատեսակ միջատի վրա՝ ստիպելով մտնել զուգավորման շրջան եւ մեծ քանակով բազմանալ: Դա իր հերթին նպաստում է, որ *ալուոդոն* կոչվող բույսը, որը թաքնվում է ձմռան ցրտից, նորից արթնանա: Այնուհետեւ այդ փոքրիկ, խոնարհ բույսը նպաստում է ձմեռաբնակ ամիյացգիացիների աստիճանական արթնացմանը: Երբ ձմեռաբնակ ամիյացգիացիներն ավարտում են իրենց սեզոնային ճանապարհորդությունը, քանի որ ձմեռը մոտենում է իր ավարտին, նրանք ծնունդ են տալիս իրենց երիտասարդ սերնդին: Այդ վաղ հասունացող երիտասարդները զարգանում եւ չափահաս են դառնում գետնի տակ՝ թաղանթի շերտով պաշտպանված: Նրանց զարգացումը հանգեցնում է իոնային ռեակցիայի, որը փոխում է հողի բաղադրությունը եւ pH- ը՝ ջրածնային ցուցիչը: Դա էլ իր հերթին նպաստում է, որ բուսական մի ամբողջ կյանք սկսի ծաղկել ու փթթել: Այդ բույսերը մեկը մյուսի ետեւից նախանշում են շոգ ամռան գալուստը, ինչպես նաեւ ազդարարում ամառաբնակ ամիյացգիացիների տիրապետության սկիզբը:

Եվ այսպես, բանական կյանքի այդ երկու տեսակներն Ամիյացգիում անտեղյակ են մեկը մյուսի գոյությունից: Նրանք չգիտեն, որ իրենց գոյությունն ու կենսակերպն անքակտելիորեն եւ անխուսափելիորեն կապված է մեկ այլ քաղաքակրթության հետ: Երկուսն էլ ունեն շատ առաջնակարգ ընտիր ստեղծագործություններ, որոնք փառաբանում են իրենց առաջնորդող հոգիների գերակայությունը, որ իրենց հնարավորություն են տալիս նոր կյանք ձեռք բերել իրենց խոր նիրհի եւ վերստին արթնացման միջեւ

ընկած ժամանակաընթացքում: Բայց նրանք երբեք չեն հասկացել, որ իրենք են աստվածների կողմից կանչված զավակները եւ որ հենց իրենք են աստվածները:

Ինչ վերաբերում է Այհուոուին, իրավիճակը բացառապես այլ է: Այհուոուի վրա երկու տարբեր բանական քաղաքակրթություններ են, երկուսն էլ հստակ կարող են ընկալել մյուսի գոյությունը, բայց նրանք ամենեւին տեղյակ չեն, որ իրենց նմանակներն իրենց պես են՝ ունեն զգացմունքներ, տրամաբանություն եւ բարոյական վարքականոն:

Պատճառը միանգամայն պարզ է՝ կյանքի այս երկու ձեւերի համար ժամանակի մասշտաբով հսկայական անհամապատասխանությունը:

Այհուոուն շատ յուրահատուկ ուղեծրով մոլորակ է. նրա պտտման առանցքի եւ ուղեծրի հարթության միջեւ անկյունը բավականին փոքր է, իսկ իր՝ մոլորակի առանցքը մշտապես դանդաղ տատանման մեջ է: Այդ պատճառով մոլորակի մակերեսը բաժանվել է չորս գոտիների: Այհուոուի երկար շերտը, որ մոտ է հասարակածին, ընդմիջվում է ցերեկի եւ գիշերվա միջեւ՝ իր առանցքի շուրջը մոլորակի պտույտից կախված, մինչդեռ երկու բեւեռները ցերեկվա եւ գիշերվա իրենց սեփական հերթափոխն ունեն՝ առանցքային տատանման արագությունից կախված:

Ցերեկվա եւ գիշերվա այդ երկու տարբեր բաժանումները հաճախ իրենց հարաբերակցությամբ իրարից տարբերվում են մի քանի հարյուր անգամ, այդ իսկ պատճառով այդ երկու տարբեր գոտիներում ծնունդ առած կյանքի երկու տեսակներն ունեն ժամանակային չափումներ, որ տարբերվում են մի քանի հարյուր գործոնով:

Հասարակածի այհուոուցիների համար բեւեռներում առեղծվածային ու երկարատեւ բեւեռային ցերեկներ եւ բեւեռային գիշերներ են լինում, մինչդեռ բեւեռների այհուոուցիների համար խավարից լույս հասարակածային անցումը տեղի է ունենում նորից ու նորից, ակնթարթի նման կարճ ժամանակում: Դա իսկապես հետաքրքիր երեւույթ է: Հասարակածի այհուոուցիները նրբագեղ են, ճարպիկ ու արագաշարժ, հարյուր հազարներով ապրում են միասին, խմբավորված, մինչդեռ բեւեռների այհուոուցիներն ունեն իրենց սեփական ցերեկներին ու գիշերներին համապատասխան նյութափոխանակություն, եւ նրանց մարմինները նույնպես հարմարեցված են ժամանակային ցուցիչին:

Երբեմն հասարակածի այհուոուցիները գնում են եւ հետազոտում բեւեռները, որտեղ նրանք անխուսափելիորեն կորչում են լաբիրինթային անտառներում, քանի որ պատահաբար հանդիպած կացարաններն ընդու-

նում են որպես հսկայական անդունդներ: Հետո, երբ բեւեռի այհուոուցիները գալիս են հասարակածում թափառելու, նրանք հիմնականում չեն կարողանում տեսնել մանրամասները՝ նույնիսկ պատահաբար ոչնչացնելով տները: Դա նման է այն հնագույն հեքիաթներին՝ հսկաների եւ փոքր ժողովուրդների երկրների մասին: Նրանք բնակվում են նույն մոլորակի վրա եւ ապրում են տարբեր աշխարհներում:

Երբեմն հասարակածի այհուոուցիները մտածում են, թե այդ հսկա արարածները բեւեռներում կարո՞ղ են իրենց պես բանական լինել: Իրենց սրտի խորքում նրանք կարծում են, որ այդքան դժվարին ու դանդաղ մի բան, մի արարած, որը հազիվ է շարժվում հարյուրամյակների ընթացքում, եթե անգամ գիտակից է, կարող է միայն պարզունակ եւ անգործունակ լինել: Իսկ բեւեռի այհուոուցիները նույն կասկածներն ունեն իրենց սրտերում: Նրանք հոգոց են հանում, գլուխները տմբտմբացնում՝ մտածելով, որ այդ փոքրիկ արարածը, որ ծնվում է առավոտյան ու մեռնում գիշերով, ամենայն հավանականությամբ չէր կարողանա հասկանալ կյանքն ու քաղաքակրթությունը:

Այսպիսով, Այհուոուի բանական արարածների երկու խմբերն էլ ապրում են՝ սովորելով, աշխատելով, սիրելով, ատելով, գիտակցելով, թե ինչ են պատերազմն ու խաղաղությունը, քանի որ նրանց պատմությունները դրսեւորվում են տարբեր ժամանակային չափումներում՝ հաստատելով մեկը մյուսին: Բայց ոչինչ չգիտեն իրենց նմանակների մասին, տեղյակ չեն նաեւ ժամանակի տեւողության մասին, թեեւ օգտագործում են իրենց սեփական կյանքի տեւողությունը՝ որպես չափորոշիչ, որով չափում են տիեզերքը:

-Սպասիր, - հանկարծ ընդհատում ես դու:- Ինչպե՞ս կարող ես իմանալ այդ երկու քաղաքակրթությունների մասին միաժամանակ: Ե՞րբ ես գնացել Ամիյացզի: Ժամանակի ի՞նչ չափացույց ես կիրառել Այհուոուի վրա:

Ես գիտեմ, իհարկե գիտեմ, որ եթե դու լինեիր, դու էլ իսկապես նույնը կասեիր: Սա հենց տարբերությունն է այցելուի եւ բնակչի միջեւ, սա ճանապարհորդություն է:

-Սա ճանապարհորդությո՞ւն է: Այդ պատճառո՞վ ենք ճանապարհորդում:

Ե՛վ այո, եւ՛ ոչ:

Ուզում ես իմանալ ճանապարհորդության նշանակությո՞ւնը:

Ուրեմն թող քեզ պատմեմ ճանապարհորդողների մի մոլորակի մասին:

ԼՈՒՆԱՑԻ

Լունացիաբնակներն արտադրում են գալակտիկայում ամենագեղեցիկ ավտոմեքենաները, նավերը, օդանավերը եւ հրթիռները: Նրանց գեղեցկությունն ու բարդությունը հաճախ գերազանցում են այցելուների երեւակայությունը, նրանք նաեւ խիստ գերազանցում են մոլորակի վրա բոլոր մյուս ինժեներական տեխնոլոգիաների մակարդակը:

Ինտուիտիվ, ներըմբռնող մարդիկ կարող են անմիջապես կռահել, թե ինչն է պատճառը, որ լունացիաբնակների համար այդքան կարեւոր է ճանապարհորդելը: Այնուամենայնիվ, ավելի խորը պատճառը բավականին դժվար է բացահայտել: Նրանք չեն կարող պատկերացնել, թե ինչու են այդ խելացի մարդիկ այդքան մեծ ջանքեր թափում ճանապարհորդելու եւ ճանապարհորդության նախապատրաստվելու համար՝ անտեսելով ավելի արդյունավետ գործունեություն ծավալելը: Միայն լունացիաբնակների զարգացման մասին հիմնավոր պատկերացում ունեցող մարդիկ են, որ կարողանում են հասկանալ ամբողջ կյանքում նրանց ստիպող այս անբացատրելի կենսական մղումը:

Լունացիների տունը մի մեծ ավազան ունեցող վայր է, որտեղ թթվածնի խտացումն ավելի բարձր է, քան մյուս վայրերում, հողը հարուստ է եւ խոնավ, փոքր ջրվեժները թափվում են խորը, վճիտ լճի մեջ, ծաղիկները ծաղկում են տարին բոլոր, գնդակի մեծության պտուղներով ծառեր են շուրջբոլորը, դաշտերը փարթամ, առատ խոտով են ծածկված, ամենուր գունավոր, գեղեցիկ սնկեր են աճում: Յուրաքանչյուր լունացիաբնակ, այդտեղ ծնվելով, հովվերգական մանկություն է անցկացնում: Ոչ ոք չգիտե, թե ինչպես են հայտնվել այս վայրում: Այն պահից, ինչ աչք են բացել, այս ավազանն է եղել նրանց ամբողջ կյանքը:

Միշտ կան այդպիսի պահեր, եւ միշտ կան այդպիսի անձինք, որ ուզում են իմանալ իրենց ծագման գաղտնիքը կամ ուզում են հայտնաբերել աստվածների կացարանը: Եվ այդպես նրանք հասունանում են ու բավականին մեծ են դառնում, որպեսզի մագլցեն այդ ավազանը շրջապատող մեծ ժայռերի զառիթափ լանջերը: Նրանք խիզախում են եւ առաջ գնում խիտ աճած լաբիրինթանման անտառի միջով՝ լեռնալանջով դեպի վեր, ավազանից դուրս մագլցելով ու ելք որոնելով: Նրանք չեն կարող հստակ ասել, թե ինչ տարիք ունեին, երբ մեծացան, քանի որ միշտ տարբեր է այն ժամանակը, երբ յուրաքանչյուր մարդ սկսում է հասակ առնել՝ ավելի ու ավե-

լի բարձրահասակ դառնալով. ոչ ոք չգիտե, թե իրականում երբ է դա սկսվել:

Ավազանից դուրս ճանապարհ հարթելուց հետո նրանք նորից ու նորից շարունակում են առաջ գնալ՝ ոչինչ չգտնելով: Նրանք գուցե կգտնեն շատ այլ մարդկանց, ովքեր իրենցից առաջ են դուրս եկել ավազանից: Այնժամ կիմանան, որ որոնողները դեռ որոնում են, որ ճանապարհորդությունը դեռ ճանապարհորդություն է, իսկ գաղտնիքն էլ դեռ գաղտնիք է: Այդ պատճառով Լունացիի բնակիչների կյանքը արտագաղթ է, ելից ճանապարհ: Նրանք մի տեղից մյուսն են գնում՝ երբեք չհիմնավորվելով ու դադար չառնելով: Կառուցում են նավակներ, մեքենաներ եւ ինքնաթիռներ՝հույս ունենալով արագացնել իրենց ընթացքը, ճանապարհորդել ամբողջ մոլորակի վրա, հասնել երկնքի սահմանին:

Երբեմն, միանգամայն անսպասելիորեն, նրանցից ոմանք մի փոքրիկ, ամայի արահետով հասնում են լեռնային մարգագետին: Այդտեղ ծաղկում է արբեցուցիչ բուրմունք արձակող՝ մի առեղծվածային արծաթե ծաղիկ: Այդ բուրմունքը խենթացնում, ցնորքի մեջ է գցում Լունացիի յուրաքանչյուր բնակչի եւ համակում մինչ այդ չունեցած քնքուշ զգացումներով: Առաջին անգամ դա ստիպում է նրանց նկատել դիմացինի հմայքն ու գրավչությունը, ստիպում է փոխադարձաբար սիրել միմյանց, միավորվել եւ հարգանք տածել մեկմեկու հանդեպ: Այնուհետեւ, ջրի կողքին, նրանք երեխա են ծնում, երեխան ջրվեժի հոսքով քշվում է ներքեւ՝ դեպի ավազան, իսկ նրանք բաժանվում են իրարից եւ սուզվում ցեխի մեջ:

Ճիշտ այդպես՝ այդպիսի պարզ շրջապտույտը դառնում է Լունացիի բնակիչների ճանապարհորդության եւ նրանց կյանքի ամբողջ իմաստը:

ՅԱՆՅԱՆՆԻ

Ինչ վերաբերում է հասունացմանը, կարող եմ մի քանի կարճ պատմություն պատմել: Առաջինը Յանյաննին է:

Յանյաննիի բնակիչների տարիքը միշտ անմիջապես երեւում է: Նրանք միշտ աճում են, ինչպես ծառի բնի օղակները, եւ երբեք այդ աճը չի դադարում: Աճում են՝ դառնալով ավելի բարձրահասակ, ավելի մեծ, աճում են՝ իրենց տարիքն ի ցույց դնելով: Ամեն տարի ավելի բարձրահասակ են դառնում: Մեծահասակները մի քանի անգամ ավելի բարձր են, քան երեխաները, եւ հնարավոր է, որ երիտասարդների ու տարեցների միջեւ մի քանի

ոտնաչափի տարբերություն լինի: Ամենատարեցները մնացած բոլորից միշտ ավելի բարձրահասակ են:

Այդ պատճառով յանյաննիցիների աշխարհում գրեթե չկա այնպիսի բան, ինչպիսին «բարեկամությունը, որը տարիք չի ճանաչում», եւ զրույցը տարբեր տարիքի մարդկանց միջեւ հոգնեցուցիչ ու ծանծրալի բան է: Որոշ ժամանակ խոսելուց հետո՝ վերեւ նայելու համար վիզները վեր ծգածները կամ ցած նայելու համար կռացածներն սկսում են նեղվել: Ավելին, տարբեր տարիքի յանյաննիցիներն, ըստ էության, խոսելու բան էլ չունեն: Նրանց տները տարբեր չափերի են, իսկ այն, ինչ գնում են, տարբեր գներ ունեն, մեկը մյուսի գոտկատեղը կարող է տեսնել, եւ ոչ ոք մյուսի դեմքի արտահայտությունը չի կարող տեսնել:

Բայց յանյաննիցիները չեն կարող հավերժ ապրել: Ի վերջո նրանք արթնանում են եւ գիտակցում, որ իրենց բարձրությունը չի փոխվել: Եթե դա շարունակվում է մի քանի օր, նրանք հասկանում են, որ արդեն մահանալու են: Բայց բոլորը չէ, որ վշտանում են դրանից, քանի որ աճելն այդքան ծանր աշխատանք է: Շատերն զգում են, որ խիստ ուժասպառ են եղել, ուստի իրենց դադարի համար բավարար արդարացում են գտնում: Մահը շատ դանդաղ գործընթաց է, բայց ոչ ոք չի կարող ասել, թե որքան ժամանակ է պահանջվում: Նրանք երբեք դա չեն հաշվարկել: Պարզապես այն օրը, երբ դադարում են աճել, նշում են որպես իրենց ամենածեր տարիք: Նրանց համար ժամանակը վիճակի փոփոխության չափում է, եւ երբ աճը դադարում է, ժամանակն էլ կանգ է առնում:

Յանյաննիի ամենաբարձր շենքը կառուցվել է մեկ դար առաջ, այդ ժամանակ մարդը շատ երկար էր ապրում: Տարեցտարի նրա գլուխն ավելի ու ավելի վեր էր բարձրանում, հասնում եւ բախվում էր ամենաբարձր շենքերի առաստաղին, դրա համար էլ Յանյաննիցիները պագոդա կառուցեցին: Պագոդայի հիմքի տարածքը փոքրիկ մի զբոսայգու չափ էր: Նրա մահից հետո, քանի որ ուրիշ ոչ ոք չէր ապրելու այդքան, պագոդան բաժանվեց երկու հարկի եւ վերածվեց ազգային թանգարանի: Ասում են, որ ծերունին պագոդայի ամեն լուսամուտի մոտ օրագիր է թողել, որտեղ գրի է առել իր կյանքի վայրիվերումները: Հետագայում մարդիկ սանդուղքներով վեր են բարձրացել, որպեսզի ցած իջեցնեն օրագրերն ու կարդան դրանք, բայց այդ օրագրերն ի վերջո այնքան շատ մարդկանց ձեռք են ընկել, որ այսօր ոչ ոք չգիտե, թե որտեղ են: Այնպես որ՝ շատ մարդիկ այսօր կարող են միայն կանգնել դատարկ լուսամուտների կողքին եւ միայն ենթադրել, թե այն մարդը, որ կարող էր մի քայլով գետն անցնել, ինչպես է անցկացրել իր առօրյա կյանքը:

ՏԻՍՈՒԱՏԻ ԵՎ ԼՈՑԻԿԱՈՒՈՒ

Տիսուատին եւ Լոցիկաուուն հակասությունների մեկ այլ զույգ են: Հարյուր հազար լուսատարով հեռու այս երկու աստղերը երկբեւեռի՝ դիպոլի երկու կեսեր են՝ իրար հակառակ եւ իրար դիմաց շողացող:

Տիսուատիում ապրողների մարմիններն ավելի փոքր են, քան շատ այլ մոլորակների բնակիչների մարմինները: Նրանց մաշկը հազվագյուտ փափուկ է, իսկ մարմիններն արագ փոխում են իրենց ձեւը: Այս լամարկյան մոլորակը գենետիկ արտահայտությունը զարգացրել է ծայրահեղորեն՝ գերազանցելով սահմանները եւ սեղմելով խտացնելով տեսակների տարբերությունը մեկ մարդու կարճ կյանքի մեջ:

Տիսուատիցիները կարող են փոխվել ըստ իրենց ցանկության: Նրանք, ովքեր լեռներ են բարձրանում, կարող են ավելի ու ավելի երկար ձեռքեր ունենալ, այնքան, որ նույնիսկ դրանք կարող են իրենց մարմնից ավելի երկար դառնալ: Մեքենայի օպերատորները կարող են վեց ձեռք ունենալ, եւ մեկ աշխատողը կարող է միաժամանակ մի քանի անջատիչ միացնել-անջատել:

Փողոցներում մարդիկ բոլորը մեկը մյուսից խիստ տարբերվում են: Որտեղ էլ լինեք, ամենուր կարող եք տեսնել բերաններ, որ գրավում են դեմքի կեսը, նուրբ ու բարակ կոնքեր, որ ճոճվում են քամուց, եւ մարմիններ, որ գլխից մինչեւ ոտքի ծայրը եղջերաթաղանթի շերտավոր զրահի կիսագնդերով են ծածկված: Նման փոփոխություն տեղի է ունենում նրանց ամբողջ կյանքի ընթացքում: Ոչ ոք արտաքին տեսքից դատելով չի կարող ասել, թե ովքեր են իր ծնողները, եւ ծնողներն էլ շատ մեծ դժվարությամբ են իրենց երեխաներին զանազանում:

Ոչ բոլոր տիսուատիցիները կարող են ընտրել իրենց ուզած ձեւը: Այդ պատճառով տիսուատիցիների մեծ մասը շատ ավելի զգուշավոր է, քան մյուս մոլորակների մարդիկ: Խոսելիս եւ գործելիս նրանք շատ զգուշավոր են ու շրջահայաց եւ անհանգստանում են, որ քնելուց առաջ ունեցած իրենց տեսքն առավոտյան լիովին փոխված կլինի:

Տիսուատիի բազմամարդ փողոցներում դուք մի հայացքով կարող եք տեսնել բոլորի կյանքը եւ աշխատանքը, եւ, ցավոք, սա միակ ընդհանրությունն է Լոուցիկաուուի հետ:

Լոուցիկաուուի մարդկանց տեսքը նույնպես շատ է տարբերվում. կան վազորդներ, երգիչներ, ձուլագործներ, մտածողներ եւ շատ այլ տեսակի

մարդիկ, եւ այդ տեսակների միջեւ տարբերությունները կարելի է հստակ տեսնել նրանց մկանային համակարգի, մարմնակազմության, հասակի եւ զգայական օրգանների տարբերության մեջ: Իրավիճակը շատ նման է Տիսուատիի իրավիճակին:

Այդուհանդերձ, Լոուցիկաուուի վրա կյանքի ուղին ամբողջովին տարբերվում է Տիսուատիի վրայի կյանքի ուղուց:

Սա դարվինիստական մոլորակ է՝ ոտքից գլուխ հակառակ բոլոր այն ջանքերին, որ կապված են «օգտագործման եւ չօգտագործման» լամարկյան տեսության հետ: Լոուցիկաուուի վրա գենետիկ մուտացիայի գործակիցը շատ փոքր է, եւ փոփոխությունն ու տարբերակումը, որոնք հիմնված են պատահական փոփոխության եւ բնական ընտրության վրա, շատ դանդաղ են տեղի ունենում: Այսպիսով, ոչ սեռական ճանապարհով բազմացման առանձնահատուկ ձեւի պատճառով, առանձին լոուցիկաուուցիների բջջային մուտացիաները կարող են արտահայտվել ժառանգության միջոցով: Այդ բջիջները մարմնում փոխվելով սերնդից սերունդ՝ առանց վերապահության ծնողներից անցնում են որդիներին ու դուստրերին:

Այսպիսով, երկաթագործների որդիները բնականաբար ավելի ուժեղ են մյուսներից,

Իսկ ժամագործների դուստրերն իրենց ծննդյան օրվանից օժտված են գերազանց տեսողությամբ եւ արագաշարժ, ճկուն մատներով: Հազարավոր տարիների կուտակումից հետո այդ տարբերակումն ի վերջո վերածվում է այնպիսի տարբերակման, որ հնարավոր չի դարձնում խաչասերումը, եւ ամեն մասնագիտական զբաղմունք դառնում է մի առանձին տեսակ: Դրանցից որոշները նույնիսկ վերացել են: Առավել կենսունակ ու հարմարվող տեսակները շարունակում են համառել եւ ծաղկել:

Այն, ինչ միավորում է բոլոր այս տարբեր բանական տեսակները, լեզուն է:

Միայն ընդհանուր լեզուն եւ քրոմոսոմների ընդհանուր թիվն է, որ նրանց թույլ է տալիս ճանաչել նախնիների հետ կապող իրենց արմատները: Բացի դրանից, ընդհանուր ոչինչ չունեն: Ոչ ոք չի նախանձում մյուսի աշխատանքին, ինչպես կապիկը չի նախանձում դինոզավրին: Թռչուններն ունեն երկինք, իսկ ձկներն՝ օվկիանոս: Նրանք անցնում են մեկը մյուսի կողքով նույն քաղաքում եւ տեսել են իրար, բայց ըստ էության ոչինչ չեն տեսել:

Տիսուատիցիները տասը միլիոն անգամ իրականացրել են էվոլյուցիայի գործընթացը, բայց իրենց հեռու են պահել իսկական առաջընթացից.

նրանց սաղմերը մնացել են նույնը՝ թմբլիկ եւ կլոր, դեռեւս իրենց սկզբնական ձեւով: Իսկ լոուցիկաուուցիները ճիշտ հակառակն են, նրանցից ոչ մեկը չի կարող զգալ տարբերակումը կամ էվոլյուցիան, բայց ամիսներ եւ տարիներ տեւող մեծ փոփոխությունների ժամանակ, որ թթենու կանաչ տարածքները ծովերի են վերածում, նրանք երթեւեկության մի շարք ուղիներ են կառուցել:

-Ստում ես, -խռոված՝ քիթդ կախում ես:- Ինչպե՞ս կարող են միեւնույն տիեզերքում երկու լիովին հակառակ համակարգեր լինել:

Ինչպե՞ս կարող են չլինել, իմ սիրելի փոքրիկ արքայադուստր: Անհնարին ոչինչ չկա: Փոքրիկ, չնախատեսված քայլերը, որ միասին են արվում, դառնում են համակարգ: Գուցե հիմա մի քիչ ժպտում ես կամ կնճռոտում ճակատդ, ապագայում դրանք երկու տարբեր արդյունքներ կունենան եւ կդառնան երկու տարբեր համակարգեր, բայց ինչպե՞ս կարող ես դու, որ այժմ այստեղ ես, իմանալ դա:

-Արդյո՞ք այդպես է,- հարցնում ես՝ մտածկոտ կախելով գլուխդ, որոշ ժամանակ չխոսելով:

Նայելով դեմքիդ՝ քնքուշ ժպտում եմ: Ճոճանակը, որին նստած ես, մեղմորեն ճոճվում է՝ թեթեւ քամի անելով, որը ետուառաջ է տանում մազերդ: Ըստ էության, հարցին տրված պատասխանը վերարտադրման ձեւն է: Պարզապես այդ պատասխանը չափազանց ծանծրալի է, եւ ես չեմ ուզում քեզ ասել:

Գիտես՝ իսկական բանալին այնտեղ չէ, թե արդյո՞ք ճշմարտությունն եմ ասում քեզ, այլ այնտեղ է, թե դու հավատո՞ւմ ես թե ոչ: Սկզբից մինչեւ վերջ պատմության կարգաբերող խմբավարը բերանը չէ, այլ ականջներն են:

ՑԻՆԿԱՏՈ

Միայն Ցինկատոյում են բերանն ու ականջները ձեռք բերում իրենց մեծագույն իրական նշանակությունը: Ցինկատոյի բնակիչների համար խոսքը ժամանակ անցկացնելու միջոց չէ. այն կենսական անհրաժեշտություն է:

Ոչինչ Ցինկատոյում առանձնահատուկ չէ, բացառությամբ այդտեղի թանձր մթնոլորտի, որն անթափանցելի է լույսի համար: Սոլորակի մակերեւույթը խավարի թաղանթ է: Կյանքը Ցինկատոյի հեղձուցիչ, խտացյալ մակերեւույթին ծնունդ է առնում օրգանական մակընթացային հորձանք-

ների մեջ, էներգիան հավաքում է մագմայի հոսքերից եւ տեւում է անվերջ՝ հրաբխային կրակի ստորգետնյա ջերմության մեջ: Նրանց համար փոթորկուն, խլթխլթացող խառնարաններն արեւ են, աստվածների բնակավայր, էներգիայի եւ գիտելիքի աղբյուր: Հրաբխերի խառնարանային կաթսաներից դուրս նրանք կարող են գտնել հավերժ վերականգնող Սիտայանին քաղցրավենիքը, որը նրանց ուտելիքն է, նրանց կյանքի աղբյուրը:

Ցինկատոցիները երբեք լուսազգայուն օրգաններ չեն ունեցել. նրանք աչքեր չունեն: Միմյանց գտնելու համար օգտվում են ձայնից, եւ նրանց ականջները ոչ միայն կարող են լսել, այլ նաեւ նկատել: Իհարկե, ավելի ճշգրիտ ասած, նրանք իրականում ականջներ չունեն, փոխարենը օգտագործում են իրենց մարմինները՝ ամեն ինչ զգալու համար: Նրանց մարմնի ամբողջ վերնամասը ծածկված է սանդղաձեւ թաղանթներով, որոնց յուրաքանչյուր շերտը ծածկված է տարբեր երկարության հազարավոր մանրաթելերով, որ արձագանքում են ձայնային տարբեր հաճախականությունների: Յուրաքանչյուր թաղանթի կողմից նշվող փուլային տարբերությունը հետո պետք է մշակվի ուղեղի կողմից՝ որոշելու համար ձայնի աղբյուրի գտնվելու վայրը: Դա ոչ միայն հաշվարկում է հեռավորությունը, այլեւ կարող է որոշել առարկայի ձեւը:

Այդ իսկ պատճառով ցինկատոցիներն ամեն օր անդադար խոսում են եւ անդադար լսում են այլոց խոսքը: Նրանք ձայն են արձակում ուրիշների գոյությունը զգալու եւ իրենց գոյությունը նրանց հայտնի դարձնելու համար: Ցինկատոցիները չեն կարող լռել, եթե լռում են, վտանգի մեջ են: Լռությունը նրանց վախեցնում է: Միայն անընդհատ խոսելով են նրանք կարողանում հաղորդել իրենց գտնվելու ճշգրիտ վայրը ուրիշներին՝ հաստատելու համար, որ դեռ ողջ են: Նրանք ձգտում են խոսել բարձրաձայն, որովհետեւ դա իրենց կդարձնի ավելի բացահայտ եւ այլոց համար ավելի հեշտ զգալի ու ընկալելի:

Երբեմն որոշ երեխաներ ծնվում են իրենց ձայնային տուփերի վնասվածքով, եւ թվում է այդ պատճառով նրանք չեն կարող գոյատեւել: Անզգույշ մի պահ՝ եւ նրանց կարող է հարվածել ավագներից մեկնումեկը, իսկ մյուսները նույնիսկ չեն էլ իմանա, որ այդտեղ երեխա կա:

-Դա շատ ողբերգական է: Ինչո՞ւ են քո պատմություններն ավելի ու ավելի կարճ դառնում, եւ ամեն մեկը՝ նախորդից ավելի ողբերգական:

Ողբերգակա՞ն: Արդյոք իմ պատմածնե՞րն են ողբերգական, թե՞ քո լսած պատմությունները:

-Մի՞թե տարբերություն կա:

Իհարկե, կա: Ես էլ եմ եղել այլ մոլորակի վրա: Այնտեղ մարդիկ կարող են արտաբերել ծայնի տասը հազար տարբեր հաճախականություններ, բայց կարող են լսել միայն դրանց մի փոքր մասը: Նրանց ականջների զգայունակությունն այնպիսին է, որ չի կարող լրիվ ընկալել կոկորդների արձակած ծայնային տատանումները, դրա համար էլ մարդիկ միշտ ավելի քիչ են լսում, քան ասում են: Ամենահետաքրքրականն այն է, որ հաճախականությունները, որ մարդիկ զգում են, բոլորն էլ փոքր-ինչ տարբեր են, այնպես որ՝ մինչ բոլորը կարծում են, թե նույն երգն են լսում, հազար մարդ իրականում հազար տարբեր երգ է լսում, բայց ոչ մեկը դա չգիտե:

-Դու ծաղրում ես ինձ: Որտե՞ղ կարող է այդպիսի վայր լինել:- Կծում ես շուրթդ, լայն բացված աչքերդ ասես ափսեներ լինեն:- Սկսում եմ կասկածել՝ եղե՞լ ես արդյոք այդ մոլորակներում: Պարզապես հնարել ես դրանք, որպեսզի ինձ ուրախացնես, չէ՞:

Իմ սիրելի արքայադուստր, սկսած Օթելլոյից՝ ամեն ասպետ հեռավոր մի հրաշքի մասին հեքիաթներ է ասել, որպեսզի հուզի իր սրտի տիրուհուն: Կարո՞ղ ես ասել, թե դրանցից որն է ճշմարիտ եւ որն է կեղծ: Այդ մոլորակներ կատարած իմ ճամփորդությունների ժամանակ ես նման եմ Մարկո Պոլոյին, իսկ այն քաղաքները, որ նա այցելել է, նման են եղել Կուբլա Խանի այցելած հեռավոր երկրներին, որոնք մեկ ակնթարթում, նրա սրի տակ, անցել են իր աչքի առջեւով: Կարող ես ասել, որ ես իսկապես եղել եմ այնտեղ, եւ կարող ես ասել, որ երբեք չեմ հեռացել: Մոլորակները, որոնց մասին խոսում եմ, ցրված են տիեզերքի ամեն անկյունում, բայց լինում են նաեւ ժամանակներ, երբ նրանք հանկարծակի հավաքվում են մեկտեղ, եւ կարծես թե նրանք միշտ միասին են եղել:

Լսելով սա՝ դու հռհռում ես.

- Հասկանում եմ. դրանք հավաքվում են քո պատմություններում, եւ հիմա պատմություններդ պատմել ես ինձ, ու նրանք հավաքվել են իմ մտքում, չէ՞:

Ես նայում եմ քեզ եւ մեղմ ժպտում՝ ինքս ինձ լուռ հառաչելով, եւ իմ ժպիտից դու ոչինչ չես կանխազգում: Ինչ կարող եմ ասել, ինչպես կարող եմ ասել քեզ, որ պատմությունները չեն կարող որեւէ բան հավաքել, ի մի բերել, եթե դատապարտված են բաժանման:

Այո, հանգիստ ասում եմ ես, նստել ենք այստեղ, պատմություններ պատմել ամբողջ մի օր, եւ ունեցել ենք ամբողջ մի տիեզերք: Պարզապես այս պատմությունն այն մեկը չէ, որ ասում էի քեզ: Այսօր դու եւ ես՝ երկուսս էլ եւ՛ պատմություն պատմող ենք, եւ՛ հանդիսատես ու լսող:

ՑՁԻՆՑՁՅԱԼԻՆ

Ցզինցզյալինը վերջին մոլորակն է, որի մասին այսօր քեզ կպատմեմ: Պատմությունը շատ կարճ է. այն մեկ ակնթարթում կպատմվի:

Ցզինցզյալինցիներն այլ կերպարանք ունեն եւ տարբերվում են այն բոլոր մոլորակների բնակիչներից, որոնց մասին քեզ պատմեցի: Նրանց մարմինները նման են փափուկ փուչիկների կամ օդում լողացող մեդուզաների՝ թափանցիկ եւ դյուրամատչելի: Ցզինցզյալինցիների մարմինների մակերեսները բաղկացած են գրեթե հեղուկ բջջաթաղանթներից: Նրանք ամբողջովին թափանցիկ չեն, բայց եթե միմյանց հետ շփման մեջ են մտնում, կարող են միաձուլվել, ապա նորից բաժանվել:

Երբ երկու ցզինցզյալինցիներ մտնում են շփման մեջ, նրանց մարմինների մասերը կարճ ժամանակում միաձուլվում են, եւ դրանց մեջ եղած նյութերը միախառնվում են, մինչեւ որ երկու մարմինները նորից բաժանվում են: Այնպես որ, բոլոր ցզինցզյալինցիները չէ, որ մտահոգված են իրենց վերջույթներով ու մարմնի մասերով:

Իրենք էլ չեն կարող ասել, թե իրենց մարմնի որ մասն է վերցված նրանցից, ում հետ շփման մեջ են մտել: Համարում են, որ քանի դեռ իրենք իրենք են, որոշ բաների փոխառությունը կարեւոր չէ:

Սակայն նրանք իրոք չգիտեն, որ ըստ էության «եսի» պահպանումն իսկապես պատրանք է: Միաձուլման այդ պահին նախատիպ երկու անհատներն այլեւս գոյություն չունեն, նրանք դառնում են բաղադրյալ, ապա բաժանվում երկու նոր անհատների: Նոր անհատները տեղյակ չեն, թե ինչ է եղել իրենց միությունից առաջ:

Նրանք պարզապես կարծում են, որ իրենք իրենք են եւ որ ոչինչ չի փոխվել:

Գիտե՞ս արդյոք, որ այս պատմությունները քեզ պատմելուց հետո, իմ այս պատմած պատմությունները քո լսելուց հետո՝ ես այլեւս ես չեմ, եւ դու այլեւս դու չես: Այս ջերմ կեսօրին, ժամանակի այս միաձուլման մեջ, այսուհետ մեր անձերն իրենց մեջ դիմացինի մի մասնիկն ունեն, եթե անգամ այս գրույցի մասին ամեն ինչ մոռանանք:

-Ասում ես, որ Ցզինցզյալինի մասին քո պատմությունն իրականում մեր մոլորակի մասի՞ն է:

Մեր մոլորակի՞: Ո՞ր մեկը նկատի ունես: Ո՞ր մոլորակն է երբեւէ մեզ

պատկանել: Կամ ո՞ր մոլորակին ենք պատկանել մենք: Եվ ինձ մի՛ հարցրու այդ մոլորակների կոորդինատների մասին: Այդ թվերը տիեզերքի հնագույն առասպելներն են: Դրանք դատարկ տարածություն են քո մատների միջեւ: Կարող ես ձեռքդ մեկնել եւ բռնել դրանք, բայց երբ նորից բացես, բացարձակապես դատարկ կլինի: Դու եւ ես հանդիպել ենք նրանց հետ, տարածություն-ժամանակի միեւնույն կետում եւ հետո կրկին բաժանվել: Ի վերջո, մենք պարզապես ճանապարհորդներ ենք, որ մշուշոտ ու անորոշ երգեր ենք երգում՝ թափառելով ձյութի պես սեւ երկնքում, եւ դա է ամբողջը: Գիտես, որ նրանք երգում են քամու գրկում, հեռավոր հայրենիքում նրանք երգում են քամու գրկում:

ՉԵՆ ՑՅՈՒՖԱՆ

Գ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ԳԵՐԲՆԱԿԱՆ

Իրեն երկրպագող միլիոնների համար նա անվանի օրիորդ Գ-ն էր, բայց կյանքն սկսել էր լրիվ սովորական մի անունով, ինչպես բոլոր մյուսները: Ծնվել էր այս դարի առաջին տարիների մեծ տնտեսական անկման ժամանակ, ծովափնյա մի քաղաքում, որտեղ վարդագույն հինաճաղիկներ են ծաղկում: Ծնողները միջին խավի գրասենյակային ծառայողներ էին, որ տարիներ շարունակ քաղաքից քաղաք էին տեղափոխվել՝ փորձելով փախչել բնական աղետներից ու մարդկանց ստեղծած տեխնածին փորձանքներից եւ ապրուստի միջոցներ գտնել: Նրանք վերջապես բնակություն հաստատեցին վարդագույն հինաճաղիկների քաղաքում: Վարդագույն հինաճաղիկն այնպիսի մի ծաղիկ է, որ, ինչքան էլ տարօրինակ է, ծաղիկների լեզվով նշանակում է «արտաքսում»:

Ծնողները հուզված էին, որ աղջիկ է ծնվել, որովհետեւ այդ օրերին կին լինելը կրկնակի շահավետ էր, քանզի առավելություն էր եւ՛ աշխատավայրում, եւ՛ տանն աշխատելը: Դուստր ունենալը նաեւ մեծացնում է ծնողների վստահությունը՝ որ իրենց գեները կփոխանցվեն ապագա սերունդներին: Բժշկի մեկ խոսքը, սակայն, վերջ դրեց նրանց սպասելիքներին՝ թե իրենց դուստրը ապրելու է հիանալի կյանքով:

«Պատրաստ եղեք: Նա թերզարգացած հեշտոց ունի»:

Բժշկական մասնագիտությունը ճանաչում է մի քանի տեսակի թերզարգացում՝ հիպոպլազիա, եւ օրիորդ Գ-ն տառապում էր դրա ամենադաժան դրսեւորումով: Նրա արգանդն ու հեշտոցային ուղին լիովին զարգացած չէին, ինչը նշանակում էր, որ երբեք դաշտան չէր ունենա, երբեք չէր կարողանա բնականոն սեռական կյանք վարել եւ չէր կարողանա ծննդաբերել: Լավ լուրն այն էր, որ ձվարանները գերազանց վիճակում էին, եւ նրա երկրորդային սեռական հատկանիշները կանոնավոր զարգացում կունենային, ու կկարողանար երեխաներ ունենալ արհեստական բեղմնավորման եւ փոխնակ մայր դառնալու միջոցով:

Բժիշկը փորձեց մխիթարել ծնողներին՝ ասելով, որ աղջկա սեռահասուն դառնալուց հետո հնարավոր կլինի վիրաբուժական միջամտությամբ

վերականգնել սեռական օրգանները, եւ նա կկարողանա ամուսնանալ:

Աղջկա ծնողները հղիության ընթացքում պրոգեստերոն չէին օգտագործել, ու նրանց ընտանիքներից որեւէ մեկում էպիլեպսիա հիվանդության պատմություն չէր եղել, հետեւաբար, այս դժբախտությունը կարող էին միայն ճակատագրին վերագրել եւ ընդունել անտրտունջ:

Ծնողներն ամեն ինչ արեցին, որպեսզի օրիորդ Գ-ն սեռական որեւէ դաստիարակություն չստանա, այդուհանդերձ, երբ նա տասներեք տարեկան էր, բացահայտեց իր եւ մյուս աղջիկների հիմնական տարբերությունը:

-Մա՛, նրանք բոլորն ամբողջ ժամանակ արնահոսում են,- ասաց դպրոցից խուճապահար տուն եկած օրիորդ Գ-ն:

Երեւակայությունը լարելով՝ օրիորդ Գ-ի մայրը կարողացավ գեղեցիկ մի հեքիաթ հորինել, որով բացատրեց նրա եւ մյուս աղջիկների տարբերությունը: Դա նրան տրված երկնային պարգեւ էր, ասաց օրիորդ Գ-ի մայրը: Մաքրասիրտ մի հրեշտակ միջամտել էր՝ համոզվելու համար, որ օրիորդ Գ-ն հեռու էր կեղտ ու չարիքից: Առնվազն՝ մինչեւ տասնութ տարեկան դառնալը:

Օրիորդ Գ-ն ստիպված էր հանդուրժել դասընկերների խանդն ու նախանձը, երբ ֆիզիկական դաստիարակությունից բարձր գնահատականներ էր ստանում, քանի որ դաշտանի պատճառած նեղությունները նրան չէին անհանգստացնում: Տրամադրության անբացատրելի պարբերական տատանումներ ունենում էր, բայց ավելի հանգիստ եւ զուսպ էր մնում, քան մյուս աղջիկները: Բավականաչափ զգույշ էր՝ իր գաղտնիքն իր մեջ պահելու համար, որովհետեւ ներըմբռնումով հասկանում էր, որ աղջիկների միջեւ բոլոր սոցիալական փոխհարաբերությունները հիմնված են խմբակայնության վրա: Երբեք ոչ մի լավ բան չի պատահել երամից հեռու թռչող մոլորված սագի հետ:

Նրա հետաքրքրասիրությունն ու անհանգստությունը տարեցտարի ավելի էին մեծանում:

Գրադարանից եւ համացանցից բազմաթիվ տեղեկություններ հավաքեց սեռական ֆիզիոլոգիայի մասին, բայց դա նրան ավելի շատ հուսահատեցրեց: Հասկացավ, որ երբեւիցե հեշտանք զգալու իր հնարավորությունները գրեթե զրոյական են, քանի դեռ գիտությունը հսկայական առաջընթաց չի ունեցել: Բայց իր կյանքի առաջին տասնվեց տարիների ընթացքում գիտնականներն ամբողջովին զբաղված էին տղամարդկանց՝ դեռ չբավարարված սեռական մի քանի ցանկությունները բավարարելու ուղի-

ներ փնտրելով եւ անընդհատ պնդելով, թե զբաղված են տղամարդկանց «կյանքի որակը» բարելավելու ազնվագույն խնդիրներով:

Երբ գրեթե տասնյոթ տարեկան էր, հանդիպեց մի տղայի: Գրառումներ փոխանակեցին, հեռախոսով զանգեցին իրար, միասին կինոֆիլմեր դիտեցին, մասնակցեցին տարբեր միջոցառումների, համբուրվեցին: Արեցին այն ամենը, ինչ անում են տղաներն ու աղջիկները, երբ սիրահարված են, եւ օրիորդ Գ-ն արդեն կարծում էր, թե այսպես կոչված «բնականոն կյանքի» շեմին է: Մինչեւ որ մի օր տղան ձեռքերը տարավ նրա վարտիքից ներս, իսկ հետո հեռու փախավ նրանից, ասես փախչելով իր կյանքն էր փրկում:

-Լսե՞լ եք օրալ սեքսի մասին,- ամենայն լրջությամբ հարցրեց նրան բժիշկը:- Ըստ ուսումնասիրությունների՝ մարդկանց 67 տոկոսն զբաղվում է օրալ սեքսով, իսկ 34.8 տոկոսի կարծիքով օրալ սեքսը սեռական հարաբերության ամենագոհացուցիչ ձեւն է:

Օրիորդ Գ-ն նայեց բժշկի ճաղատ գլխին՝ զսպելով իրեն եւ չհարցնելով, թե այդտեղ քանի տոկոս են կազմում տղամարդիկ եւ քանի տոկոս՝ կանայք:

- Մենք կատարում ենք վերականգնողական վիրահատություն՝ վերցնելով բերանի լորձաթաղանթը եւ տեղափոխելով հեշտոց: Սկզբում վերականգնելու ենք հեշտոցային ուղին, ապա բերանի լորձաթաղանթից հյուսվածք ենք վերցնելու եւ տեղադրելու հեշտոցում: Երկու շաբաթ կպահանջվի, որպեսզի հյուսվածքն ամրանա, իսկ երեսուն օր հետո կկարողանաք սեքսով զբաղվել: Այդ նրբամաշկ թաղանթները ոչ մի հոտ չունեն, շատ չեն արյունահոսում եւ հարթ են ու ոչ կպչուն: Բերանի եւ հեշտոցի թաղանթներն իզոգենիկ են: Դրանք նման են իրենց կառուցվածքով: Ես Ձեզ երաշխավորում եմ, որ փոխարինողը կդառնա իրականի նման: Դա նման կլինի այն բանին, որ լրացուցիչ բերան ունենաք ներքեւում:

-Ես կկարողանա՞մ նորմալ հեշտանք՝ օրգազմ ունենալ:

-Մենք մատուցում ենք ստոմատոլոգիական եւ ատամնաբուժական ամեն տեսակի ծառայություն, ապահովում ենք ատամների խնամք՝ դրանք սպիտակեցնելուց մինչեւ լիցք դնելն ու նորերով փոխարինելը:- Բժիշկը կարծես չէր լսել նրան: - Իսկ վիրահատությունից հետո, վերականգնման ժամանակահատվածում, առանց լրացուցիչ ծախսերի, օգտագործելու համար տրամադրում ենք թրթռիչ սարք եւ տամպոններ, որպեսզի Ձեր նոր հեշտոցը վարժեցնեք սեքսին:

-Ես կկարողանա՞մ նորմալ հեշտանք ունենալ, բժիշկ:

-Կանանց ութսունհինգ տոկոսն ամբողջ կյանքում հեշտանք չի ունենում: Այդ հարցում չեմ կարող օգնել Ձեզ,- բժիշկն ուսերը թոթվեց:

Օրիորդ Գ-ն չէր պատրաստվում ինչ-որ մեկի սեքս տիկնիկը լինել, նույնիսկ եթե այդ մեկը սիրահարվեր իր խելքին՝ չիմանալով ոչինչ իր մարմնի մասին եւ սխալմամբ կարծելով, թե դա բավական է՝ իրեն հաճելի լինելու համար: Դա այն չէր, ինչը նշանակում է կին լինել:

Օրիորդ Գ-ն մնաս բարով ասաց ավագ դպրոցի մելամաղձոտ տարիներին եւ իր կարճ կտրած մազերով ու անդրոգին ոճի՝ տղամարդու եւ կնոջ հագուստով գնաց համալսարան: Առաջին իսկ օրից լեսբիական մի քանի կազմակերպության թիրախ դարձավ, որ մրցակցում էին նրան իրենց շարքերում ընդգրկելու համար: Նա անգամ դասընկերուհիներից մի քանիսի հետ շատ գեղեցիկ ու մտերմական հարաբերություններ ունենալու փորձեր արեց, բայց զանազան բնույթի այն բաները, որ անում էին միասին, չէին կարող բավարարել իր ցանկությունները:

-Համալսարանում անցկացրած ժամանակը կարեւոր է բնավորության հղկման եւ արժեքների ձեւավորման համար: Հուսով եմ, որ ձեզնից ամեն մեկը քաջություն ունի նոր բաներ փորձելու եւ գտնելու կյանքի սեփական ուղին,- այսպես ասաց դասախոսը:

Օրիորդ Գ-ն այն ուսանողն էր, որ արեց այնպես, ինչպես ասել էին իրեն: Խորացավ ազգային մի քանի տարբեր ավանդույթների պոռնոգրաֆիկ կինոֆիլմերի մեջ: Սկսեց մարիխուանա ծխել եւ LSD ընդունել: Փորձեց սադոմազոխիզմը, փորձեց անգամ էրոտիկ շնչարգելությունը եւ քիչ էր մնում շնչահեղձ լինելով մահանա: Բայց ինչքան ավելի շատ բաներ էր փորձում, այնքան ավելի չբավարարված էր մնում: Դա նման էր մի խճանկարային խաղ-գլուխկոտրուկի, որտեղ մասերից մեկը պակասում էր: Որքան շատ եք փորձում ուշադրություն դարձնել ձեր ունեցած՝ բեկորներից բաղկացած գեղեցիկ պատկերի վրա, այնքան ավելի եք զգում, որ հետաքրքրությունից մեռնում եք՝ իմանալու համար, թե ինչպիսի տեսք կունենար գլուխկոտրուկի այդ պատկերը, եթե բացակայող մասը գտնվեր: Դա ձեզ կարող է խենթացնել:

Պահանջմունքն է բոլոր գործողությունների շարժիչ ուժը: Ֆրոյդն այդ մի բանը ճիշտ է հասկացել:

Օրիորդ Գ-ն ուշադրությունն արտաքին աշխարհից շրջեց դեպի ներքին աշխարհ: Դադարեցրեց ավելի ու ավելի մեծ գրգռումներ ունենալու

հետագա փորձերը, որովհետեւ հասկացավ՝ դա միայն առավել կդժվարեցնի իր ցանկությունների բավարարումը: Նա փիլիսոփայություն էր ուսանում եւ հույս ուներ խաղ-գլուխկոտրուկի բացակայող մասը գտնել մետաֆիզիկայի միջոցով: Ցավոք, երբ անցնում էր Պլատոնից Օգոստինոսին, Կանտին, Լականին, Ժիժեկին, Դեսի Սանգյե Գյացոյին, իր կառուցած իդեալական աշխարհներից յուրաքանչյուրը հերթով ոչնչանում էր եւ փոխարինվում նոր մի բանով, մինչեւ որ վերջապես իրեն գտավ նիհիլիստական անապատում թափառելիս: Ուժասպառ էր արդեն եղել իր ճանապարհորդությունից եւ ոչ մի աղբյուր չէր գտնում, որպեսզի խմեր եւ ծարավը հագեցներ:

Կիրակնօրյա պայծառ մի առավոտ լսեց քամու բերած՝ եկեղեցու զանգերի ձայնը, եւ սիրտն սկսեց արագ բաբախել:

Հավատի կարողությունն ի ծնե է: Այսպիսի եզրահանգման եկավ օրիորդ Գ-ն այն բանից հետո, երբ խորապես հետաքրքրվեց համալսարանական քաղաքի կրոնական մի քանի խոշոր կազմակերպություններով՝ հավատացյալներից մի քանիսի հետ գիշերային երկար զրույցներ ունենալով: Որոշ մարդիկ, ըստ նրա, ծնվել են մյուսներից ավելի ընդունակ, որպեսզի խաղաղություն եւ անդրանցիկ գերբնականություն գտնեն կրոնի մեջ: Դա, թերեւս, արդյունք է հնարամիտ մի խուսանավման՝ պատկերների ճանաչման նրանց ուղեղների գործընթացում: Երբ հավատացյալներն առերեսվում էին կենսական դժվարին երկընտրանքների հետ, կարողանում էին աղոթքի ծեսի միջոցով իրենց ներսում առաջացնել քիմիական ռեակցիա՝ ընկալելով դա որպես ոգի, որն իր զորությունը ճանաչելի է դարձնում նրանց համար: Այդ կերպ կարողանում էին որոշումներ կայացնել՝ համարելով, որ դրանք աստծո կողմից են իրենց թելադրված:

Ծանոթացավ բազմաթիվ հետազոտությունների հետ եւ պարզեց, որ կարող է հոգեբանական նմանատիպ ազդեցություն ստեղծվել՝ էլեկտրական ցնցումների ներգործությունը կիրառելով գլխուղեղի քունքային հատվածի ծալքերի վրա՝ էնդորֆինների բարձր չափաբաժնի հետ համատեղ:

Դա նշանակում էր, որ կյանքը տարատեսակ ուտեստներով լի մի սեղան է, եւ ինքը կարող է ընտրել այն, ինչ ուզում է: Նա նույնպես կարող էր հավատացյալ դառնալ:

Օրիորդ Գ-ն օգտվեց բժշկականի ուսանողուհիներից մեկի բարեհաճությունից, որն իրեն համակրում էր, եւ մի քանի անհաջող փորձից հետո կարողացավ ձեռք բերել իրեն անհրաժեշտ սարքավորումներն ու դեղերը:

Երկուսով համածայնագիր ստորագրեցին, որն, իհարկե, իրավական հիմք չուներ, եւ իրենց գործարքը կնքեցին երկարատեւ մի համբույրով՝ մեկմեկու խոստում տալով:

Մթության մեջ օրիորդ Գ-ն կարող էր լսել, թե ինչպես է իր սրտի բաբախյունը դառնում ավելի ծանր ու արագ, վայրենի բնիկների թմբուկի զարկի նման: Այն բռնկվում էր խարույկի նման եւ գալարվում էր օձի պես:

-Մոտենում է:

Այսպես խոսեց կեղծ քահանան:

Օրիորդ Գ-ի մարմինը ցնցվեց, երբ փայլատակող կայծակն անցավ նրա մշուշված գիտակցության միջով: Այն իջավ ճակատին, ինչպես աղավնի, թափանցեց գանգի մեջ, հասավ ծոծրակին, ապա սահեց ողնաշարն ի վար եւ տարածվեց ամբողջ մարմնով: Ծնոտներն իրարից թեթեւակի հեռացան, բերանը բացվեց, եւ դեմքի մկանները թրթռացին: Աչքերն արցունքոտվեցին, երբ հրճվանքի անհաղթահարելի զգացողությունը հասավ մարմնի բոլոր նյարդային վերջավորություններին՝ ցած քաշելով դրանք, ինչպես հասուն խնձորներն են կռացնում ծառի ճյուղերը:

Այնպիսի հանգիստ եւ խաղաղություն զգաց, որպիսին երբեւէ չէր զգացել: Մի դուռ էր բացվել նրա ներսում, որը տանում էր դեպի տարածաժամանակային անսահման թագավորության ոլորտը, որտեղ ջերմ էր ու պայծառ, եւ կյանքի ողջ տեւողությունը սոսկ ավազ էր Գանգեսի մեջ, որ փայլփլում էր ու մեղմորեն հոսում հեռու:

Նա ճչաց եւ աղոթք հղեց արարչին.

-Խնդրում եմ, ինձ հեշտանքներ պարգեւիր: Հեշտանքներ, որ հեշտոցի կամ տղամարդու կամ թրթռիչ սարքի կարիքը չունեն: Իսկական, ազատ հեշտանքներ:

Նա գիտակցությունը կորցրեց:

Երբ արթնացավ, մենակ էր լաբորատորիայում, եւ երկար ժամանակ պահանջվեց, մինչեւ որ հիշեց, թե որտեղ է:

Դուրս սահեց շենքից՝ անբացատրելի տոթ եւ անհանգստություն զգալով: Համալսարանական քաղաքը գիշերով ամբողջովին դատարկ էր: Կենդանի ոչ մի շունչ չկար, բացի կտղանքից մոլեգնած կատվից, որ անցնում էր փողոցը: Դանդաղ քայլեց դեպի լճափ: Ծառերի ստվերները պարում էին շուրջբոլորը: Լուսնի լույսը նման էր ջրի: Հագուստի տակ մաշկն ասես պրկվել էր, դարձել տաք ու կպչուն: Ինչ-որ բան էր փոխվել շոշափելիքի զգայարաններում: Հանեց շորերն ու զննեց մարմինը: Թեթեւ մի քամի սոսա-

փեց: Լուսնի լույսի տակ կարող էր տեսնել, թե մաշկն ինչպես է ծփում լճի մակերեւույթի նման: Այն միշտ թավշե եւ հարթ էր եղել, բայց հիմա ծածկված էր փոքրիկ ծալքերով, որ դուրս էին ելնում մաշկի մակերեւույթից:

Վախը կամաց հաղթահարելով՝ եղունգով շոշափեց մաշկի ծալքը, եւ հաճույքի հզոր մի զգացում, որպիսին երբեք չէր ճաշակել, էլեկտրական հոսանքի պես տարածվեց ամբողջ մարմնով: Հազիվ կարողացավ զսպել իրեն, որ չճչա: Թեթեւ քամին նորից սոսափեց, եւ մարմնով մեկ՝ ամբողջ մաշկն սկսեց ծփալ ցորենի արտի պես: Մաշկի ամեն մի ծալքի ներքո բուռն հաճույք էր տրոփում, ինչպես մի հանք, որ մեկ հպումից պատրաստ է պայթել:

Դա այն էր, ինչ ինքն էր ցանկացել:

Անձրեւ սկսեց կաթկթել:

Ուժեղ եւ առատ անձրեւ էր: Փայլկտում էր լուսնի ճերմակ լույսի տակ եւ ընկնում մաշկի փոքրիկ բլրակներին: Ուրիշ տեսակի հաճույք էր այժմ դա՝ հոծ եւ սրընթաց: Առանձին ուժգին պոռթկումները միանում էին, բազմապատկվում ու սփռվում: Կորցրել էր ժամանակի զգացողությունը, անձրեւի բոլոր կաթիլները կարծես ընկնում էին միաժամանակ եւ միաժամանակ էլ հոսում: Դրանք նման էին հրազենի գնդակների, որ խփում էին իր վերջույթներին: Ցավ զգաց, ապա ուշաթափվեց: Մաշկից ծորացող հեղուկը խառնվում էր անձրեւաջրի հետ՝ պարուրելով ամբողջ մարմինը, այն դարձնելով օձաձկան մաշկի պես փափուկ, ողորկ ու սայթաքուն: Ուզում էր օգնություն կանչել, բայց չէր կարողանում: Մտածեց, որ հիմա կմահանա:

Անձրեւը դադարեց:

Անցորդները գտան օրիորդ Գ-ին եւ տարան հիվանդանոց: Քանի որ ակնհայտ վնասվածքներ չուներ, նրան տեղափոխեցին բաժանմունքից բաժանմունք, մինչեւ որ ի վերջո հայտնվեց հոգեբուժական հիվանդասենյակում՝ բժիշկ Ս-ի ձեռքերում: Օրիորդ Գ-ին մի քանի հարց տալուց եւ նրա մարմինն արագ զննելուց հետո բժիշկ Ս-ն այնպիսի հուզված ու ոգեւորված տեսք ընդունեց, ասես հենց նոր շահել էր վիճակախաղում: Նա չեղյալ հայտարարեց իր մնացած պայմանավորվածությունները, դուռը ներսից փակեց եւ սկսեց հետազոտությունը: Էլեկտրասրտագրությունը, համակարգչային տոմոգրաֆիկ սկանավորումը եւ մագնիսական ռեզոնանսային ֆունկցիոնալ պատկերը ոչ մի անսովոր բան չհայտնաբերեցին: Բժիշկ Ս-ն հագավ լատեքսային ձեռնոցները եւ դրանք հեղուկով թրջելով՝ մի քանի անգամ շոշափեց օրիորդ Գ-ի մաշկի վրա առաջացած ուռուցիկ ծալքե-

ը, մինչեւ որ օրիորդ Գ-ն սարսռաց եւ ուշաթափվեց: Հետո այդ նույնը կրկնեց արդեն չոր ձեռնոցներով: Բժիշկն իրեն պահում էր սառն ու անտարբեր, ինչպես ներքինին:

Նա առաջին տղամարդն էր, որ Գ-ին հեշտանքի հասցրեց, եւ մի պահ թվաց, թե երբեք չի դադարեցնի:

Օրիորդ Գ-ն չէր կարողանում ազատվել այն տարօրինակ զգացողությունից, որ այս տղամարդն ինչ-որ պահի որոշակիորեն տարբերվել է մյուս չորս միլիարդ արարածներից, որոնք տեստոստերոն արտազատող ամորձիներ ունեին: Չէր կարող հստակ ասել, թե որն էր տարբերությունը, բայց հենց որ նա դիպչում էր իրեն, իր տիեզերքը ձեւախեղվում էր եւ նմանվում Կլայնի շշի: Համենայն դեպս, քանի դեռ նա նշտարը չէր վերցրել:

-Գիտեի՞ք արդյոք,- ասաց Ս-ն,- որ մենք երբեք չենք գտել նյարդային վերջավորությունների ավելի բարձր խտացում, քան Ճ կետում է:

Օրիորդ Գ-ն այլեւս չէր ձգտում աստվածուհի դառնալ, ինչպես ժողովրդին առաջնորդող «Ազատությունը բարիկադների վրա» *(Էժեն Դելակրուայի գեղանկարը- Ծ. Թ.),* ի տարբերություն Ս-ի, որը գիտության անխոնջ որոնող էր, ծարավի էր սիրո եւ սեքսի: Այնքան հեղուկ դուրս հոսեց Գ-ի մաշկից, որ կարողացավ սահելով դուրս պրծնել Ս-ի ձեռքերից: Մեծ ջանքերի գնով փորձում էր մաքրել գիտակցությունը հեշտանքի հարուցած խառնաշփոթից, երբ դռնից դուրս էր փախչում:

Փախչում էր մերկ, մաշկից գոլորշի էր բարձրանում: Այն օրերին դա արտասովոր չէր համարվում: Միակ մարդիկ, որ հետաքրքրված էին դրանով, երթեւեկության վերահսկման բաժնի աշխատակիցներն էին: Դա մարդկային ուղեղի բնական սահմանափակում է, որ ուղեղը միաժամանակ չի կարողանում կենտրոնանալ ճանապարհի եւ վազող մերկ կնոջ վրա:

Ճանապարհային ոստիկանության պարեկային ծառայությունն իր օդագնացով օրիորդ Գ-ին բռնեց ճամփեզրին: Տասնհինգ կիլոմետր հեռավորության վրա, երթեւեկության վերահսկման կենտրոնում, նրա մերկ մարմինը մոնիտորի դիտարկող էկրանին ցուցադրվում էր տարբեր անկյուններից: Ռոբոտային մի ձայն պարեկային մեքենայից պահանջում էր, որ օրիորդ Գ-ն ներկայացնի ինքնությունը հաստատող փաստաթուղթ: Նա շրջվեց եւ նայեց զառիթափի կողմը, որ տանում էր ճանապարհից դեպի վեր եւ հեռու: Նրա շարժումներն էկրանի վրա դանդաղեցված էին, ցուցադրվում էին ավելի խոշոր չափերով եւ մեկնաբանվում որպես փախչելու մտադրության նշան: Էլետրաշոկային ատրճանակը կրակեց պարեկային

մեքենայից, լույսի բռնկուն մի աղեղ երեւաց, ճայթյուն լսվեց, եւ օրիորդ Գ-ն ընկավ գետնին:

Պատի վրայի էկրանը բաժանվեց վաթսունչորս քառակուսիների: Յուրաքանչյուր քառակուսին ցուցադրում էր նույն մարմինը՝ տարբեր անկյուններից, տարբեր չափերով եւ տարբեր մասերի բաժանված: Բոլոր պատկերներում մարմնեղեն ալիքների ծփանքը վերուվարում էր արտառոց եւ սարսռուն շարժումներով: Երթեւեկության վերահսկման պատասխանատու տղամարդը ոտքի կանգնեց, նրա տակի աթոռը շրխկոցով ընկավ հատակին: Վերցրեց հեռախոսը եւ ինչ-որ համար հավաքելով զանգեց:

Երբ օրիորդ Գ-ն ուշքի եկավ, տեսավ, որ կապված է հիվանդանոցային մահճակալին: Մահճակալի մոտ ամեն տեսակի սարքավորումներ էին դրված, իսկ սենյակի պատերը ճերմակ էին: Սենյակում երեք տղամարդ կային: Մեկը, որ երեւի բժիշկն էր, էլեկտրոդներն էր հեռացնում նրա մարմնից: Մյուս տղամարդը նստած էր՝ կիսադեմով դեպի օրիորդ Գ-ն: Մատներով շոշափում էր ձեռքի սիգարը, որը չէր վառվում: Աչքի պոչով զննում էր օրիորդ Գ-ին, հայացքն անթափանց էր: Երրորդը, բավականին հաստափոր մի տղամարդ, կռացած նստած էր բազմոցին եւ երբ տեսավ, որ աղջիկն արթնացել է, դեմքը մտահոգություն արտահայտեց:

Նա ասաց.

- Կազմակերպության անունից ես խոստանում եմ, որ մենք Ձեզ կբուժենք:

Օրիորդ Գ-ն իրեն թույլ էր զգում: Դժվարությամբ կարողացավ ասել.

-Դուք պարտավոր չեք դա անել:

Տղամարդիկ իրար նայեցին եւ ծիծաղեցին:

Գ-ն մեծ ջանքերով փորձում էր նստել: Կողքով դեպի իրեն նստած տղամարդը ձեռքով նշան արեց, եւ բժիշկը թուլացրեց աղջկան զսպող կապերը: Գ-ն տեսավ, որ հագին հիվանդանոցային երկնագույն զգեստ է: Այն բավականին լայն էր եւ ազատ, բայց մի քանի տեղ այնուամենայնիվ կպչում էր մաշկին, եւ դա նրան ստիպում էր տնքալ հաճույքից: Տղամարդիկ անհանգիստ շարժումներ արեցին:

Ամբողջ զգեստի վրա խոնավ բծեր հայտնվեցին՝ պատկերելով նրա մարմնի ուրվագծերը:

-Ինչպես երեւում է՝ Ձեզ ուրիշ հագուստ պետք է տանք,- ասաց սիգարը ձեռքին տղամարդը՝ խզելով լռությունը:

Նրան նոր հանդերձանքներ տվեցին երեք օր հետո: Դրանք խանութի էժան շորեր չէին, բայց նաեւ վերջին նորաձեւության բարձրորակ հագուստ չէին: Պատրաստված էին հատուկ եւ միմիայն օրիորդ Գ-ի համար: Առաջին հայացքից սովորական էին թվում, մարմինը կիպ գրկող, բայց շոշափելիս այն զգացողությունն էր, թե պատրաստված են ինչ-որ կոլոիդային նյութից: Դրանք պատրաստված էին հատուկ մանրաթելերից, որ պարունակում էին օդով լցված փոքրիկ բջիջներ, որոնք, երբ դիպչում էիր, փոխում էին իրենց ձեւը: Այդպիսով՝ ցանկացած մեկ կետի վրա գործադրված ճնշման ուժն անմիջապես տարածվում ու ցրվում էր հարակից մասերում՝ մեծապես նվազեցնելով այն գրգռիչ ազդակները, որ զգում էր օրիորդ Գ-ն:

Նրանք բավականին հոգատար ու նրբանկատ էին, որպեսզի օրիորդ Գ-ին հնարավորություն տային ընտրելու հագուստի գույներն ու նախշերը:

Գ-ն հայելու մեջ նայեց արծաթե շերտագծերին, եւ հանկարծ մտաբերեց: Ուղեղում առկայծեց Ս-ի ձեռքի նշտարը: Ամեն ինչ այնքան արագ էր տեղի ունեցել եւ այնպիսի արագ հաջորդականությամբ, որ հնարավորություն չէր ունեցել մտածել իր փորձի մասին, անդրադառնալ դրան: Հեշտանքները, որ այդքան անհագորեն տենչում էր, վերածվել էին սպառնալիքի, որը ցանկացած պահի կարող էր իր կյանքն արժենալ:

Զգում էր, որ արագ ծերանում է, եւ չնայած այն բանին, որ յուրաքանչյուր հեշտանք նրան առողջ մի փայլ էր թողել, ինչ-որ բան փոխվում էր, բայց չէր կարող ասել, թե ինչ էր դա:

Ծատ կուզեր իմանալ, թե արդյոք Ս-ն սեռականապես անկարող կդառնա՞ր, եթե նրա հետ էլ պատահեր նմանատիպ մի բան, ինչ իր հետ պատահեց:

Մեկ շաբաթ անց պարոն Ս-ն եւ հրամանատար Պ-ն կրկին երեւացին՝ իրենց հետ մի պայմանագիր բերելով, որպեսզի նա ստորագրի: Օրիորդ Գ-ն աղոտ կերպով զգում էր, որ այս երկու տղամարդիկ վախենում են իրենից, բայց թաքցնում են իրենց վախը՝ փորձելով արժանապատիվ երեւալ: Նա մտքում փաղաքշում էր իր մարմինը, այնպես որ կարող էր հետեւել նրանց շփոթված արձագանքին: Ժպտաց՝ մտածելով, որ իր ողջ կյանքում սա այն դեպքն է, երբ ամենաշատն է մոտեցել իսկական կնոջ փորձառությանը:

Պայմանագիրը նման էր համաձայնության, որ տաղանդավոր գործակալությունը կարող էր կազմել իր հաճախորդի համար, բայց նաեւ ծանծ-

ռալիորեն երկար էր եւ լի աննշան տափակ մանրուքներով: Օրիորդ Գ-ն մի քանի անգամ կարդաց, բայց չկարողացավ հասկանալ, թե որոնք են դրա հիմնական կետերը: Պարոն Մ-ն վերցրեց պայմանագիրը եւ շպրտեց սենյակի մեջ: Նա նայեց օրիորդ Գ-ին՝ դեռ խառն ու անորոշ արտահայտությունն աչքերի մեջ, եւ ասաց.

-Միակ բանը, որ պետք է անեք, հեշտանքներից հաճույք ստանալն է: Մենք հոգ կտանենք մնացած ամեն ինչի մասին:

Օրիորդ Գ-ն մի պահ մտածեց եւ եկավ այն եզրակացության, որ այլընտրանք չունի: Համենայն դեպս՝ այդ փակված սենյակում այլընտրանք չկար:

-Ինձ բեմական անուն է պետք:

Նրանք բարձր եւ երկար ծիծաղեցին ու ասացին.

-Արդեն ունեք:

Օրիորդ Գ-ի անունն սկսեց գաղտնի շրջանառվել բարձր դասի հասարակության մեջ: Նրա ներկայացումները միայն հրավերով էին: Տոմսի գինը չափազանց բարձր էր, բայց թե ճշգրիտ որքան էր՝ խստորեն վերահսկվող գաղտնիք էր: Հրավիրատոմսեր ստացած շատ կարեւոր հյուրերին ուղեկցում էին դեպի մասնավոր սենյակներ, որտեղից նրանք պատուհանով դիտում էին ներկայացումը: Օրիորդ Գ-ի հետ ֆիզիկական շփումն ու բառերի փոխանակումն արգելված էին: Փորձերից հետո օրիորդ Գ-ի ղեկավարները նախագծեցին եւ կառուցեցին մի դահլիճ, այնպես, որ նման լինի դասական օպերային թատրոնի, բայց ավելի փոքր չափերի: Բեմը երեք կողմից եզրապատված էր մասնավոր սենյակներով: Առավելագույնը վաթսունչորս մարդ կարող էր միանգամից տեղավորվել: Հյուրերի գաղտնիությունը երաշխավորվում էր: Նրանք կարող էին ցանկով ընտրել այն տարբերակները, որ ուզում էին դիտել, ներառյալ օրիորդ Գ-ի մարմնի արտապատկերումը՝ պրոեկցիան, որ երեսուն ոտնաչափ բարձր էր եւ ցուցադրում էր ամենափոքր մանրամասները, այնպես որ՝ յուրաքանչյուրն իրեն զգում էր ասես մարմնագույն ծովում լողալիս, երբ նայում էր, թե ինչպես են ալիքները բարձրանում եւ իջնում: Նրանք նույնիսկ հնարավորություն տվեցին հյուրերին՝ մրցակցության հրավիրել միմյանց կամ նվիրաբերություններ կատարել օրիորդ Գ-ին՝ մուտքի վճարի սահմաններից դուրս, ինչը բավարարում էր հանդիսատեսի ցանկությունը՝ դառնալ գործողության մասնակից, ինչպես նաեւ առավելագույն շահույթ էր բերում:

Օրիորդ Գ-ն զգում էր, որ մի տեսակ փոփոխություն է կրում:

Սկզբում նա ստիպված էր մուգ ակնոց ու ականջակալներ դնել, մինչեւ որ կարողանար համապատասխան տրամադրության գալ:

Նա միայնակ էր բեմի վրա, եւ լուսարձակներից անդին սեւ-թանաքագույն մթություն էր, ինչպես նախասկզբնական սեւ մի խոռոչ: Հարուստ եւ հզոր մարդիկ թաքնված էին խավարում եւ իրենց հաճույքն էին ստանում նրա հեշտանքներից: Դա կաշկանդում էր նրան, եւ չէր կարողանում հետեւել խորհրդին, որ պարզապես վայելի հեշտանքները: Ականջակալներով լսելով՝ անում էր այն ամենը, ինչ իրեն խնդրում էին անել: Բայց դա ավելի ու ավելի քիչ էր հաճույքի նմանվում: Ի վերջո, միշտ ինչ-որ սարքի կարիք էր զգում, մինչեւ որ կարողանում էր հեշտանքի հասնել: Ապա խոնարհվում էր եւ հեռանում բեմից՝ խոնավ ու լպրծուն մարմնով:

Նրանք մշտապես փոխում էին բեմի իրերն ու պարագաները: Օրիորդ Գ-ն հանդես էր գալիս անձրեւի տակ, անտառում եւ անապատում: Օվկիանոսի հատակին մարտնչում էր հսկա ութոտնուկի դեմ: Տառապում էր պալատական թավշապատ սենյակում: Կպչուն ու խորտակիչ ջրապտույտում իր կյանքի համար պայքարում էր օտար մոլորակի վրա: Դրանք կարող էին պարզապես լինել անցյալ դարի 70-80-ական թվականների ցածրորակ պոռնոգրաֆիկ ֆիլմերից տեսարաններ, որ ավարտվում էին այնպիսի հեշտանքներով, որոնք էժանագին էին բառի բոլոր իմաստներով:

Օրիորդ Գ-ն իրեն այնպես էր զգում, ասես այլոց խաղալիքը լիներ, բայց երբեք չէր մոռանում այն առաջին փորձը համալսարական քաղաքում: Դա նրա համար մեծ նշանակություն ուներ: Քամին փաղաքշել էր նրան, իսկ անձրեւը գրգռել: Ոչ մի հոգեբանական ուղղություն չէր կարող բացատրել նրա հետ կատարվածը: Եվ հանկարծ եկավ այն գիտակցման, որ ընդհանրապես տղամարդու կարիք չի զգում: Քամին էր նրա տղամարդը: Անձրեւն էր նրա տղամարդը: Լույսն էր նրա տղամարդը: Աշխարհն էր նրա տղամարդը:

Այդ պահից սկսած՝ դա դարձավ նրա սեռական փիլիսոփայության առաջին սկզբունքը:

Ինչ վերաբերում է միս ու արյունից բաղկացած իրական տղամարդկանց, այն մագնատներին, որ կառավարում էին աշխարհը, օրիորդ Գ-ն հանեց մուգ ակնոցը եւ ուղիղ նայեց իր շուրջը գտնվող սեւ ու դատարկ անէությանը, ասես փնտրում, հայտնաբերում եւ զննում էր այն տեսակների արուներին, որ մակաբույծների պես թաքնվում էին այդտեղ:

-Դուք բոլորդ,- ասաց:- Ապա նրա ականջակալները լցվեցին շփոթված

ու վրդովված բողոքների աղմուկ-ժխորով:- Դուք բոլորդ ոչ այլ ինչ եք, քան մակաբույծներ՝ ձեր ցցանդամին կպած:

Անմիջապես անջատեցին նրա ձայնը տարածող ալիքը: Ամբողջ աշխարհից եկած շատ կարեւոր անձանց չէր հետաքրքրում, թե ինչ է ասում իրենց մասին մի սեքս տիկնիկ, հատկապես որ նրա ասելիքն այնքան էլ լավ բան չէր:

Բայց հիմա ամեն ինչ փոխվել էր:

Օրիորդ Գ-ն բռնել էր ժամանակի զարկերակը:

Փորձագետներն ասացին, որ սկսվել է մարդու սեռական երրորդ ճգնաժամը:

Եթե ընդունեին, որ առաջին երկու ճգնաժամերն առնչվում էին անվտանգ սեքսին ու սեռական ինքնությանը եւ տեխնոլոգիական առաջընթացների հետեւանքով լուծվել էին արագ ու սահուն կերպով, ապա կարող էին ենթադրել, որ այս երրորդ ճգնաժամը կապված էր սեքսի հիմնական բնույթի հետ: Մարդկային սեռական ձգտման հետ կապված՝ ինչ-որ սխալ բան էր կատարվել: Սեռական ցանկությունը նվազում էր, ծնելիության մակարդակն անկում էր ապրել, բնակչությունը ծերանում էր, եւ անդրոգինությունը՝ սեռերի միջեւ սահմանի վերացումը, ավելի ու ավելի սովորական ու համընդհանուր մի բան էր: Դրանք, սակայն, միայն արտաքին, մակերեսային երեւույթներ էին: Գոյաբանական խնդիրն այն էր, որ մարդ արարածներն, իբրեւ տեսակ, կորցրել էին զարգանալու ցանկությունը: Մարդկությունը նման էր ծերացած, թույլ ու անկարող առնանդամի: Դա վախ էր ներշնչում:

Այն ժամանակ, երբ թմրամիջոցներն ու զանազան սարք-առարկաներներն այլեւս չէին կարողանում թեթեւացնել նրանց, մարդիկ հայտնաբերել էին օրիորդ Գ-ին, որը նրանց մոտ եկավ որպես երկնից իջած պարգեւ:

Օրիորդ Գ-ի դիրքը հասարակության մեջ էլ ավելի բարձրացավ: Նա գիտեր այդ մասին եւ օգտվեց դրանից:

Գ-ն սկսեց ձեւավորել բեմական առակներն ըստ իր ճաշակի: Այդտեղ նա անցնում էր բազմամարդ ավտոբուսի միջով, հանդիպում էր ուսենում արագ սննդի ռեստորանում եւ մարզվում սպորտային սարքավորումներով: Բեմական այս նոր իրավիճակում բացակայում էր պատումի կոնֆլիկտը, եւ ոչ մի ցնցող տեսարան չէր ներկայացվում, դրա համար էլ խիստ քննադատության ենթարկվեց, սակայն հետագայում այն գիտնականների համար դարձավ հետազոտման սիրված առարկա: Միահամուռ կարծիքն

այն էր, որ այդ առտնին տեսարանները հիմնված էին օրիորդ Գ-ի պատանեկության սեռական երեւակայության վրա:

Մասնագիտության վաղեմի ավանդույթի համաձայն, նա պահանջեց, որ տեսնի իր հանդիսատեսին: Բոլորը պետք է լույսի տակ լինեին, չպետք է լինեին ո՛չ դիմակներ, ո՛չ միակողմանի թափանցող ապակի:

Այդ պահանջն իրարանցում առաջացրեց: Հանդիսատեսներից շատերը դա համարեցին ներխուժում իրենց անձնական կյանք: Նրանք զայրացած ուզեցին հեռանալ, բայց շրջվեցին՝ հարցնելու, թե լրացուցիչ վճարի դիմաց արդյո՞ք իրենց թույլ կտային դիմակներ կրել:

-Ո՛չ մի բարեհաճություն, ո՛չ մի բացառություն:

Այսպես խոսեց օրիորդ Գ-ն:

Պարոն Մ-ն եւ հրամանատար Պ-ն սկսեցին հասկանալ, որ հեռակառավարումն այլեւս իրենց ձեռքում չէ:

Որպեսզի իր հաճախորդների հետ հաշտության եզրեր գտնի, օրիորդ Գ-ն նախատեսեց ձեռնոցներ, որոնք ապահովում էին հետադարձ անլար կապը: Ներկայացման որոշակի մի հատվածում հանդիսատեսները կարող էին հագնել ձեռնոցները եւ ըստ էության փաղաքշել օրիորդ Գ-ի մարմինը: Ձեռնոցները նրանց այնպիսի զգացողություն էին տալիս, ասես դիպչում էին Գ-ի մարմնին: Նույնիսկ կարող էին զգալ խոնավությունը: Մատուցվող ծառայության այս բարեփոխում նորույթն ընդունվեց խանդավառությամբ:

Հետո օրիորդ Գ-ն պահանջեց, որ շատ կարեւոր այցելուներից ամեն մեկի սենյակի լուսամուտից դուրս լույս դրվի: Երբ հյուրի վիճակը ծանրանում էր, լույսը կանաչ գույնի էր լինում, իսկ երբ սերմնաժայթքում էր տեղի ունենում, լույսը վառվում էր կարմիր գույնով: Դրանից հետո ֆերոմոններով հագեցած օծանելիք էր սփռվում սենյակում:

Եվ այսպես, օրիորդ Գ-ն փոխեց իր ներկայացումների կանոնները:

Այժմ նա վերահսկում է իրավիճակը:

Երբ նա բեմում ներկայացնում էր տեսարաններ սովորական, առօրյա կյանքից եւ սկսում էր խոնավանալ գրգռվելուց, կարող էր ըստ ցանկության առաջացնել իր հանդիսատեսների կերպարների արտապատկերումը՝ խոշոր պլանով, կրծքավանդակով, մերկ: Միայն աչքերի շարժումով կարող էր խոշորացնել կամ փոքրացնել պատկերները, կամ դրանք ձեւախեղել ու երկարածգել: Նա տնքում էր ու հառաչում, գալարվում ու սարսռում, մաշկը ցնցվում էր եւ վերուվարում, ինչպես ալիքները թայֆունի ժամանակ: Տեսնում էր ինչպես են վառվում կանաչ լույսերը, դառնում ավե-

լի պայծառ, ապա փոխվում են՝ դառնում կարմիր, հետո մարում: Նա կարողանում էր ընկալել որպեսական տարբերություններն ու փոփոխությունները տղամարդկանց արձագանքներում: Կարողանում էր զգալ ծգողականության ու ծանրության ուժը եւ ժամանակի ընթացքը: Ի վերջո փլվում էր, շնչահեղձ լինում եւ սուզվում անէության մեջ:

Այնպես էր զգում, ասես կենդանիներ վարժեցնող է, բայց նաեւ գիտնական: Նա հետազոտում էր սեփական մարմինը, հետազոտում էր այն արարածներին, որ գոյություն ունեին որպես մակաբույծներ՝ կպած սեփական առնանդամներին, եւ հետազոտում էր իր եւ նրանց մարմինների միջեւ եղած բարդ կապը: Այդ ամենը նրա համար անսահման գրավիչ էր:

Քանի դեռ **նա** չէր հայտնվել:

Նրա լույսը կանաչ գույն դարձավ՝ հենց որ մտավ իր սենյակ: Եվ դեռ կանաչ էր մնում, երբ մթան մեջ փարոսների պես շողացող մյուս լույսերը կանաչից կարմիր էին դարձել ու մարել:

Օրիորդ Գ-ն լուսանկարեց նրան եւ նկարը մեծացրեց: Սովորական տեսք ուներ, բայց հագել էր հատուկ տաբատ, որ չափազանց լայն էր, պարկանման, որպեսզի թաքցներ նրան շատ անհանգստացնող գաղտնիքը: Գ-ն փորձեց իր իմացած բոլոր հնարքները, բայց չկարողացավ այնպես անել, որ նրա լույսը կանաչից կարմիր դառնա: Հուսահատված նայեց, թե նա ինչպես է դուրս գալիս: Կյանքում առաջին անգամ մի տղամարդ հայտնվեց, որի մասին ինքն ուզում էր իմանալ ամեն բան:

-Շատ եմ ցավում, բայց դա պայմանագրի կանոնների խախտում կլինի,- ասաց պարոն Մ-ն անդրդվելի տոնով:- Սա հավանաբար նաեւ մեր վերջին ներկայացումն է այստեղ: Մենք կասեցնում ենք մեր համաձայնությունը:

- Արդյո՞ք մտածում են, թե մեր արածն անօրինական է:- Օրիորդ Գ-ն այլ բացատրություն չէր կարող մտածել:

-Ոչ,- պարոն Մ-ն ծիծաղեց, բայց, ինչպես միշտ, նրա աչքերից չերեւաց, թե ինչ է մտածում:- Հանգամանքները փոխվել են: Կարծում են, որ Դուք պետք է պատկանեք ամբողջ մարդկությանը, ոչ թե միայն հարուստներին եւ հզորներին: Բայց Ձեզ այնուամենայնիվ գործակալ է պետք, այնպես չէ՞:

Օրիորդ Գ-ն համոզված էր, որ սա ինչ-որ կապ ունի կանաչ լույսով տղամարդու հետ: Նա վախեցավ, քանի որ մի բան էր այն, ինչ անում էր բեմի վրա, լուսարձակի ներքո, եւ բոլորովին այլ բան էր՝ դա անել օրը ցերեկով, բնական լույսի տակ: Բայց դարձյալ զգաց, որ այլընտրանք չունի:

Հանրային հրապարակում իր առաջին ելույթն աղետալի վախճան ու-

նեցավ: Որպես խիստ ցնցումից դեռ ուշքի չեկածի՝ օրիորդ Գ-ին արագ հեռացրին ռազմական ուղղաթիռով: Նա ցած նայեց դեպի բյուրավոր մարդկանց փոթորկուն զանգվածը: Նրանք բռնաբարում էին, կողոպտում, ոտնատակ տալիս միմյանց, կռվում ու հրդեհում: Սեռական գրգիռը բորբոքվելով վերածվել էր վայրենի, հրեշավոր մի բռնության, որ վարակի պես տարածվում էր ամբոխի մեջ: Նա տեսավ գետնաքարշ, արյան հետքեր թողնող մեռած մարմիններ: Սարսափած՝ փակեց աչքերը:

- Դա Ձեր մեղքը չէ,- պարոն Մ-ն սփոփեց դողացող օրիորդ Գ-ին:- Ներկայացումը պետք է լիներ միայն լրատվամիջոցներով:

Իրականում՝ լրատվամիջոց ասվածը բավականին որոշակի մի լրատվամիջոց էր: Նրանք արտոնագրեցին շարժական հոլոգրաֆիկ մի սարքի արտադրության իրավունքը՝ նախապես ներբեռնելով օրիորդ Գ-ի լավագույն ներկայացումներից քսանչորսը: Մարդիկ այդ հարմարանքն անվանեցին «Սրբապատկեր»: Սեւ շուկայում առեւտուր ծավալողները ծրագրային համակարգով մեծ գումարներ ներդրեցին, որպեսզի ջարդեն այդ սարքը, բայց նրանց իրական խնդիրը տեխնոլոգիական մարտահրավերների լուծումը չէր: Իրական խնդիրն այն էր, որ նրանք, ովքեր հավատում էին օրիորդ Գ-ին այնպիսի նվիրվածությամբ, ինչպես շամաններին են երկրպագում, այդպիսի հանդիսատեսին փոխանցված սեռական ուժն ամենազորեղն էր օրիորդ Գ-ի կենդանի կատարումների, ապա Սրբապատկերի հոլոգրաֆիայի, եւ երրորդ՝ ավանդական լրատվամիջոցների դեպքում: Սրբապատկերի արտապատկերման՝ հեղինակային իրավունքը խախտող կրկնօրինակները նվազագույն ներգործությունն ունեին, որովհետեւ սրբապիղծ էին:

Հրապարակում հարյուր քսանչորս մարդ մահացավ, եւ մի քանի հազար մարդ էլ վիրավորվեց: Այդ դրվագը ներկայացվեց որպես զանգվածային անկարգության դրսեւորում:

Օրիորդ Գ-ն հրաժարվեց ներկայացում տալու բոլոր հրավերներից: Նա ամեն բան ծանրութեթեւ էր անում: Նրա հեշտանքներն իրեն բուռն հաճույք էին պարգեւում եւ գրգռում էին այլոց՝ ազատագրելով նրանց թաքնված սեռական էներգիան: Բայց Գ-ի հեշտանքները կործանիչ մեծ ուժ ունեին. դրանք չէին կարող վերահսկվել կամ ուղղորդվել: Դա այնպիսի մի սեքս էր, որի կարիքն աշխարհը չուներ: Հաշվի առնելով, որ աշխարհը փրկելու նրա երազանքն արդեն խորտակվել էր, սեռական լրացուցիչ ներկայացումների անհրաժեշտությունը չկար:

-Այդ դեպքում ո՞րն է իմ գոյության իմաստը:

Եվս մեկ անգամ նա հայտնվեց ինքնության ճգնաժամի մեջ, որը կասկածի տակ դրեց այն ամենն, ինչին հավատում էր: Փորձեց «դատարկություն» գտնել Ձենի մտահայեցման միջոցով: Հաշվում էր իր շնչառությունը, մի կողմ էր վանում բոլոր կանխակալ պատկերացումները, անկիրք ու ինքնամփոփ հետեւում էր, թե ինչպես են մտքերը գալիս ու գնում իր գիտակցության մեջ, բայց երբեք չէր կարողանում հասնել Բուդդայի տիրույթին եւ խաղաղություն գտնել: Օրիորդ Գ-ն ցնցված էր՝ գիտակցելով, որ իր միտքը կապված էր ոչ միայն այն տղամարդու հետ, որի կանաչ լույսը երբեք չէր փոխվում, այլ նաեւ նշտարակիր բժիշկ Ս-ի հետ:

Այդ երկուսն ընդհանուր մի բան ունեին: Նրանք անընկալունակ էին օրիորդ Գ-ի հանդեպ:

Ներկայացումն աննախադեպ մեծ չափեր էր ընդգրկում, եւ հեռարձակման իրավունքները վաճառվեցին նույնքան բարձր գներով, որքան աշխարհի գավաթի առաջնության բացման արարողությունների հեռարձակման իրավունքները: Հանդիսականներին թույլատրում էին ներկայանալ միայն անվտանգության մանրակրկիտ ստուգումից հետո: Հատուկ հրավիրված հյուրերն ապահովեցին բացման հրաշալի արարողությունների անցկացումը: Հնդկաստանի «Կամա Սուտրա» ակրոբատիկայի թատերախմբի ելույթը եւ էլեկտրոնային երաժշտության գրգռիչ ազդեցությունը՝ դիջեյ Ֆոյի կատարմամբ՝ ամբոխին հասցրեց եռման կետին: Իսկ հետո սկսվեց հիմնական գործողության դրամատիկական մուտքը:

Մի ուղղաթիռ հայտնվեց եւ մի մեծ գնդաձեւ առարկա իջեցրեց գետնից երկու հարյուր ոտնաչափ բարձրության վրա, որտեղ այն անվտանգ տեղադրվեց մարզադաշտի տանիքին ամրացված եւ դաշտի վերեւում կախված հենակառույցի կենտրոնում: Գունդը խոշոր պլանով հայտնվեց մարզադաշտի շուրջ տեղադրված բոլոր էկրաններին, նրա թափանցիկ մակերեւույթը ապակու նման փայլում էր լուսարձակների ճառագայթների տակ: Օրիորդ Գ-ի հագին թափանցիկ արտահագուստ էր, նա կուչ էր եկել եւ լողում էր գնդի ներսում, ինչպես սաղմ:

Ամբոխը երջանիկ մի մռնչյուն արձակեց, լույսերը մարեցին, եւ մարզադաշտի վրա լռություն իջավ, ասես թագադրման կամ մկրտության արարողություն էր:

Ներքեւից լույսի շողշողուն մի սյուն վեր խոյացավ դեպի գունդը՝ ասես պահելով այն: Գունդը բեկեց լույսը՝ այն շատրվանի պես սփռելով բոլոր

ուղղություններով: Լույսի գույնը համաչափորեն փոխվում էր էլեկտրական թմբուկների զարկերի հետ: Ամբոխը թմրամիջոցներ չէր ընդունել, բայց այդ ամենը նրանց թվում էր դարակազմիկ գոյափոխության երեկույթ: Լույսն առկայծեց, եւ գույներն ալեկոծվեցին հավատացյալների աչքերի ցանցաթաղանթներում՝ նրանց նյարդային համակարգերը ճոճելով խելքամաղ եւ անզուսպ գրգիռների ազդեցության ներքո: Բժշկական անձնակազմն շտապեց հետեւելու գրգիռներից տապալված մարմիններին:

Դանդաղ, նրբագեղորեն՝ օրիորդ Ա-ն ծալ-ծալ բացում, մերկացնում էր իր մարմինը, ինչպես կյանքն էր սկսում էվոլյուցիայի գործընթացը հարյուր միլիոնավոր տարիներ առաջ: Նա հայացքը սեւեռեց իր ներքեւում գտնվող զանգվածներին՝ լոգանք ընդունելով լույսի ծիածանի մեջ: Սուրբ Մարիամի պես լայն բացեց բազուկները, եւ ժպիտ խաղաց շուրթերի վրա:

Էկրանների վրա, մարզադաշտի շուրջբոլորը հսկայական պայծառ տառերով բառեր սկսեցին առկայծել, վառվել ու մարել, եւ ամբոխն սկսեց միահամուռ ու միաձայն երգել.

ԹՈՂ ՈՐ ԳԱ:

ԹՈՂ ԹԱՓԵՄ:

ԹՈԹԱՓՎԵՄ:

Նստատեղերից կանաչ լույսի ճառագայթներ էին շողարձակում, հատելով անցնում մարզադաշտի բաց օդի միջով եւ թափանցում գնդից ներս: Էկրաններին խոշոր պլանով ցուցադրվում էր, թե ինչպես են ճառագայթներն անցնում գնդի պատիճի միջով եւ հասնում օրիորդ Գ-ի կրծքերին: Նրա լուսազգայուն արտահագուստն սկսեց առկայծել էլեկտրականության փոքրիկ, կապտաճերմակ թրթռոցներով: Երբ էներգիան հասավ Գ-ի մարմնին, մաշկը փշաքաղվեց, շուրթերը թեթեւակի բացվեցին, եւ դոլբի ձայնային համակարգը մարզադաշտը լցրեց նրա տնքոց-հառաչանքի սարսռազդու ձայնով: Գրեթե միաժամանակ գրգիռը թոթափելու պատրաստ ամբոխն սկսեց ալեկոծվել: Էկրանների վրա օրիորդ Գ-ի մաշկն էր սարսռում եւ ծփում:

Միայն հիմա ամբոխին պարզ դարձավ նստատեղերի տակ դրված լազերային գրիչների նպատակը:

Մարզադաշտի կենտրոնում անկանոն մի կոնի ծայրից արձակված լույսի անթիվ ճառագայթներ հոսեցին դեպի գունդը: Մակընթացության հորդուն ալիքի նման՝ դրանք տեղացին գնդի վրա՝ հեղեղելով այն, օրիորդ Գ-ի արտահագուստը ողողելով էլեկտրական լույսի աղեղների բռնկուն,

պայծառ բոցերով, ինչպես փոթորիկը Խաղաղ օվկիանոսի հարավում: Լույսը փայլատակեց նրա կրծքերի վրա, թեւատակերին, ցայլքին ու աճուկներին, ականջաբլթակներին, փորին, դաստակներին: Նա ասես իր դանդաղ պտտվող ֆրակտալ պատկերը լիներ. նրա մսի եւ մկանների շարժումը պարուրածեւ ելնում էր եւ բազուկների պես փաթաթվում մարմնի շուրջը: Նա մի շրջան-մանդալա էր՝ օժտված այնպիսի զորությամբ, որ ի վիճակի է հորդաբուխ հեղուկներ եւ զանգվածային հաճույք առաջացնել:

Այդ ամենը ներկայացվում էր հոլոգրաֆիկ ծավալապատկերներով, որ հորդաբուխ ներխուժում էին հանդիսատեսի տեսադաշտ: Ամբոխը մոլեգնած էր:

Անվտանգության ուժերը պատրաստվեցին: Իրավիճակը շատ վտանգավոր էր եւ կարող էր դուրս գալ վերահսկողությունից:

Ամբողջ այդ քաոսի մեջ օրիորդ Գ-ն այնպես էր զգում, ասես իրեն ետ էին տարել այն առաջին անծրեւոտ երեկոյի գիրկը: Վեր նայելով լույսերի միջով, որ անծրեւի պես թափվում էին իր շուրջը, նա հայացքը հառեց աստղալից երկնքին: Ոչինչ չէր փոխվել: Հեշտանքի մեջ անգամ մարդիկ դեռ կաշկանդված էին տարածության ու ժամանակի օրենքներով եւ նախկինի պես իրենց զգայությունների գերին էին: Հանկարծ նա մի աննախադեպ պարզություն եւ խաղաղություն զգաց, երբ ամեն ինչ միավորվեց այդ պահին, ամեն ինչ՝ նրա մարմնի վրայի փայլուն, խաղացկուն հեղուկը, օդում փայլփլող փոշին, լույսի անհամար կետերը, ամբողջ աշխարհը:

-Կա՛նգ առեք,- ասաց նա:

Ամեն բան կանգ առավ:

Լույսի ճառագայթները հեռացան գնդից, երաժշտությունը դադարեց, իսկ եռման կետին հասած ամբոխը սառեց: Տարակուսած՝ բոլորն ուշադրությամբ նայեցին էկրաններին, որ մտածում էին նրանց փոխարեն: Ինչպես տեսնում եք, այնպես էլ կստանաք: Օրիորդ Գ-ն մնում էր հանգիստ ու անվրդով: Նա դեմքից սրբեց հեղուկը եւ նայեց լիբիդոյի հարյուր հազար աշակերտներին: Որոշել էր թուլացնել նրանց լարվածությունը:

-Ոչ մի հեշտանք էլ չկար,- ասաց նա:- Ես կեղծում էի:

-Ամեն ինչ պատրանք է, ամբողջ պատրանքն սկսվում է սեփական անձից, ամեն ինչ վերադառնում է դեպի անիրականություն:

Ամբոխը ճգնում էր հասկանալ այս հայքուանման խոսքի խոր իմաստը: Մարդիկ իրենց դատարկ ու լքված էին զգում: Ոմանք սկսեցին լաց լինել, մյուսները զայրացած փորձեցին ճեղքել-անցնել անվտանգության ցան-

կապատը, բայց նրանց մեծ մասը նստած տեղից հանգիստ վեր կացավ եւ դուրս եկավ մարգադաշտից, ասես բոլոր տարփալից պատկերացումներն ու սեռական զգացումն ամբողջովին պարպվել, դուրս էր մղվել նրանց էությունից: Վաղ թե ուշ դա պետք է տեղի ունենար: Հոգեմաշ այդ պատկերները արբանյակային հեռահաղորդմամբ տարածվում էին եւ հասնում մոլորակի բնակչության ութսունհինգ տոկոսին: Ամբողջ աշխարհն ուժասպառ էր, տանջահար եւ վերականգնվելու համար ժամանակի կարիք ուներ:

Օրիորդ Գ-ն նայեց մարգադաշտի իրարանցմանը: Մարմինը թուլացավ, եւ նա ուշաթափվեց: Ստելուց բացի նա այլընտրանք չուներ: Չէր կարող կատարել մարդկության փրկչի դերը: Կեղծ հույսերը նրան, բոլոր մյուսների հետ միասին, կործանման կտանեին: Միակ բանը, որ կարող էր անել, այն էր, որ մարդիկ վերադառնան իրենց սեռական զգացողությունները վերահսկելուն:

Բայց մտքով երբեք չէր անցել հաշվի առնել սեփական դժվարին կացությունը:

Froid E՛quateur *(Ֆրանսերեն՝ Ցուրտ հասարակած - Ծ.Թ.)* անունով արմատական կրոնական մի կազմակերպություն հայտարարեց, որ օրիորդ Գ-ն խարդախ է եւ Աստծուն հայհոյող, հետեւաբար այդ կազմակերպության յուրաքանչյուր անդամ պարտավոր է հետապնդել նրան եւ սպանել: Գուցե ճակատագրի հեգնանքով՝ օրիորդ Գ-ն դատապարտվեց հեշտանքից մեռնելու:

Նա այնպիսի եզակի ֆիզիոլոգիա ուներ, որ չէր կարողանա կոսմետիկ վիրաբուժությունից հետո կենդանի մնալ, դրա համար էլ ստիպված էր երկրից փախչել ուրիշի անունով: Փորձեց իր նախկին հաճախորդներից ոմանց խնդրել, որ պաշտպանեն իրեն, բայց այդ հզոր տղամարդիկ սառնորեն մերժեցին նրան: Եվ նույն պատճառաբանությամբ, ինչ պատճառաբանություն բերում էին այն մարդիկ, ովքեր ուզում էին սպանել նրան. նա խաբել, մոլորության մեջ էր գցել իրենց: Լրացուցիչ մի հեգնանք էլ այն էր, որ այն պահից, ինչ իմացել էին օրիորդ Գ-ի մասին ճշմարտությունը, նրա ելույթներն ընդհանրապես կորցրել էին այդ մարդկանց մեջ որեւէ սեռական ցանկություն առաջացնելու կարողությունը:

-Ինչը նշանակում է, որ գոնե մեկ հարցում ոչ ոքի չեմ մոլորեցնում,- մտածեց օրիորդ Գ-ն:

Բարեբախտաբար, պարոն Մ-ն հավատարիմ մնաց իրենց պայմանա-

գրին եւ նրան մի մեծ գումար տվեց՝ որպես իր աշխատանքի փոխհատուցում եւ իրենց համաձայնությունը խախտելու համար: Նա լայն բացեց իր ձեռքերը, բայց հետո ցած իջեցրեց եւ մեղմ ասաց.

-Հոգա քո մասին:

Ապա իր կադիլլակով անհետացավ գիշերվա մեջ:

Կյանքը փախուստի մեջ դժվար է, հատկապես օրիորդ Գ-ի նման հայտնի մարդկանց համար:

Հսկայական գումարներ ծախսելով՝ կարողացավ թաքնվել հեռավոր վայրերում եւ էլ ավելի շատ գումար ծախսեց՝ գնելով իրեն օգնած մարդկանց լռությունը: Քանի որ նրա չափազանց զգայուն մարմինը պահանջում էր, որ հատուկ պատրաստած սարքավորում ունենա, նրա համար անհնար էր իր կյանքը գաղտնի պահել, եւ երկար տարիներ ստիպված էր չվող թռչնի պես տեղից տեղ շարժվել: Ալպյան նախալեռներից ուղեւորվեց դեպի Խուբսուգուլ լիճ եւ նույնիսկ փորձեց Տոնգայի Հանրապետությունում ամբողջությամբ վարձակալել անմարդաբնակ մի կղզի, բայց նրա գտած հանգիստը միշտ ժամանակավոր էր եւ անցողիկ: Չկար այնպիսի մի վայր, որ Froid Équateur-ի համար հասանելի չլիներ: Այդ կազմակերպությունը բարձրացրեց օրիորդ Գ-ի գլխագինը եւ ավելի մեծ պարգեւներ խոստացավ նրան սպանողի համար:

Վերջին անգամ նա վտանգից մազապուրծ եղավ Նոր Զելանդիայի Միլֆորդ Սաունդում: Մի բարյացակամ տուրիստական ուղեվար նրան ասաց, որ տեսել էին կոպիտ տեսք ունեցող մի խումբ օտարերկրացիների, որոնք Տե-Անաու տանող ճանապարհին կանգնեցնում էին ավտոմեքենաները եւ մարդկանց ցույց էին տալիս օրիորդ Գ-ի լուսանկարը: Միլֆորդ Սաունդից դեպի դուրս երկաթուղային կամ ջրային տրանսպորտի ծառայություն չկար, իսկ շուրջբոլորը ժայռեր էին եւ սառցադաշտեր: Օրիորդ Գ-ն անօգնական նայեց թուլակազմ երիտասարդ ուղեվարին, բայց վերջինս խուսափեց նրա հայացքից՝ շրջվելով, որպեսզի ցած նայի ջրին եւ Միտր Պիկ լեռան անդրադարձին, որ երեւում էր շրջված՝ գագաթը դեպի ներքեւ:

Նրանք նավակ նստեցին:

Հասկանալի է, որ տուրիստական օպերատորին պետք էր գնել, եւ այդպես էլ արվեց:

Մի քանի ամրակազմ տղամարդ, որ ինքնությունը հաստատող ոչ մի փաստաթուղթ ցույց չտվեցին, սկսեցին խուզարկել նավակը:

-Ի՞նչ է այնտեղ,- հարցրեց խմբի պատասխանատու տղամարդը՝ մատ-

նացույց անելով տախտակամածի փոքրիկ մուտքի դռնակը:

-Ձուկ:

Երիտասարդ ուղեվարը բացեց այն, եւ ձկան հոտը խփեց նրանց դեմքին: Ապա ավելացրեց.

-Սատկած ձուկ:

Խմբի ղեկավարը կնճռոտեց դեմքը եւ խոժոռված՝ մի քանի քայլ ետ գնաց: Նա ձեռքով նշան արեց իր ենթականերից մեկին, որ ստուգի ամեն ինչ: Վերջինս մոտեցավ, կռացավ մուտքի վրա, ներս նայեց, հայհոյեց, խոր շունչ քաշեց, թեւքերը քշտեց եւ ձեռքերը մտցրեց ձկների մեջ:

Օրիորդ Գ-ն, որի ամբողջ մաշկը կերպասի պես հարթ էր ու սայթաքուն, քիչ էր մնում գիտակցությունը կորցներ ձկների գարշահոտությունից: Սատկած ձկները տակնուվրա եղան, խառնշտվեցին նրա շուրջբոլորը, եւ մանր թեփուկները քսվեցին մաշկին: Սեղմեց ատամներն ու մեծագույն ճիգ գործադրեց, որպեսզի չտնքա: Մի ձեռք դիպավ նրա ոտնակոճին, հաճույքի ուժգին մի ալիք պարուրեց նրան, եւ նա չկարողացավ զսպել իրեն, որպեսզի մարմինը չցնցվի ու չջղաձգվի:

Ենթակա պաշտոնյայի դեմքը քարացավ: Նա ձեռքը ետ քաշեց եւ ցասումնալից հայացքով նայեց այժմ արդեն գունատ դեմքով տուրիստական ուղեվարին, ապա հենվեց նավակի կողին եւ սկսեց որձկալ:

-Քու մերը... Բոլորը չեն սատկած,- ասաց հազալով:

Օրիորդ Գ-ն արդեն կուշտ էր այս կյանքից: Որոշեց, որ ինքն իրեն կսպանի եւ կույս կմեռնի, նախքան կկարողանան խոշտանգելով մահվան հասցնել իրեն:

Նա վերադարձավ իր ծննդավայր՝ վարդագույն հինաճաղիկների քաղաք: Իր մանկության տնից մեկ թաղամաս այն կողմ՝ հյուրանոցում մի սենյակ վերցրեց եւ հեռվից հետեւում էր տարեց ծնողներին: Աչքերի առջեւ հառնում էին մանկության տեսարաններ, եւ զգաց, որ ժամանակից շուտ ծերացել է: Ուզում էր իրենից ինչ-որ բան թողնել, բայց մի քիչ գումարից բացի, թողնելու արժանի ոչինչ չուներ, հատկապես իր հուշերը:

Թվում էր՝ երբեք ոչ ոքի իսկապես չէր սիրել, բացառությամբ իր ծնողների: Ամբողջ կյանքն անցկացրել էր անընդհատ հեշտանքների ձգտելով եւ հիմա պետք է մեռներ իր հեշտանքների համար: Եթե կյանքը ոչ այլ ինչ էր, քան առավելագույն լարվածություն, ապա մեռնելը նույնը չէ՞ր արդյոք, ինչ լարվածությունից զուրկ կյանքը: Չէր կարողանում պարզել, թե որտեղ է սխալվել: Փորձել էր տարբեր լինել բոլորից, բայց ի վերջո կորցրել էր

այն, ինչն իրեն դարձնում էր առանձնահատուկ, կամ գուցե հակառակն էր: Նրա սխալը, հավանաբար, անսահմանի իշխանության որոնումն էր մարմնի սահմանափակ մեքենայի մեջ: Ամբողջ կյանքն էր սահմանափակ ու վերջավոր, ամեն ինչ, ամեն ինչ՝ տիեզերքը, ազատությունը, սերը:

Հեշտանքը բացառություն չէր:

Նա դարձել էր իր իսկ աշակերտը եւ պարզեց, որ պետք է ի՛ր զոհը մատուցի:

Մտքերը խառնվեցին իրար, նա իր սենյակում միացրեց ջրային շիթերով ջրավազանը՝ ջակուզին: Այն տասնվեց ծորակ ուներ, հինգ կարգավորվող արագություն եւ կարգավորիչ բազմաթիվ հարմարանքներ: Գ-ն պատրաստվում էր մեռնել ջրազրկումից՝ փրփրուն ու ալեկոծ ջրի ավազանում:

Օրիորդ Գ-ն խոր շունչ քաշեց ու սահեց ջակուզիի մեջ: Հաճույքը պարուրեց նրան, հաճույքի անվերջանալի ալիքները, եւ նա սկսեց կուչ գալ, գալարվել ավելի կրքոտ ու կատաղի, քան ջակուզիի ջրերը: Ուշաթափվեց եւ շնչասպառ եղավ՝ քիչ մնալով խեղդվեր մի կում ջրից: Հեշտանքի ալիքները մտրակում էին նրա մարմնի յուրաքանչյուր հատված եւ թափանցում բոլոր ծակոտիներից ներս՝ ցավ պատճառելով: Սկսեց զղջալ իր որոշման համար եւ ձեռքը մեկնեց, որ ջակուզին անջատի, բայց չհասցնելով՝ սուզվեց: Անկարող էր նստել, հզոր մի ուժ շարունակում էր նրան ետ քաշել դեպի ջրի խորքը, իսկ մարմնի վրայի սայթաքուն հեղուկն ասես ալեբախության ետհոսք լիներ: Հայացքը մշուշվեց: Նա շատ լավ գիտեր այդ պահի կամկար, խառնաշփոթ, ուղեղը մթագնող զգացողությունը: Նման էր սաթի մեջ թակարդված միջատի:

- Ամեն ինչ պատրանք է, ամբողջ պատրանքն սկսվում է սեփական անձից, ամեն ինչ վերադառնում է դեպի անիրականություն:

-Ամեն ինչ վերադառնում է դեպի անիրականություն:

-Անիրականություն:

Մի մեծ ձեռք հանեց նրան ջրից, ջակուզիից դուրս քաշելով՝ դրեց հատակին, շրջեց որովայնի վրա եւ այնքան սեղմեց մեջքին, մինչեւ որ օրիորդ Գ-ն սկսեց ուժեղ հազալ եւ դուրս թքել փրփրալից արյան հետ խառնված ջուրը:

Գ-ն լավ չէր նայել այդ մարդուն, բայց դեմքի աղոտ ուրվագիծը հառնեց նրա մշուշված գիտակցության մեջ եւ դուրս լողալով՝ աստիճանաբար հստակ ձեւ ստացավ:

Դա այն տղամարդն էր, որի լույսը միշտ կանաչ գույնով էր վառվում:

Դա **նա** էր: **Նրա** աչքերում խոր մտահոգություն էր, ոչ թե բուռն ցանկություն: Գ-ի տիեզերքը նորից ոլորվեց՝ Կլայնի շշի ձեւն ստանալով:

-Դուք փրկեցիք ինձ:

Օրիորդ Գ-ն երբեք չէր ակնկալել, որ իր շուրթերը կարող են այդպիսի թատերական արտահայտություն հնչեցնել:

-Ոչ: Դու՛ք ինձ փրկեցիք:

Նա բռնեց օրիորդ Գ-ի ձեռքը եւ այն տարավ դեպի իր ոտքերի արանքը: Օրիորդ Գ-ն ինչ-որ կոշտ բան զգաց: Բայց դա առնանդամ չէր: Դա մի տեսակ պաշտպանիչ անոթ էր: Ինչ-որ լույս իջավ նրա վրա, եւ նա մի նոր ցանկություն ունեցավ՝ լրջորեն հավատալու:

-Չեք կարող պատկերացնել, թե ինչի միջով եմ ես անցել,- կամացուկ ասաց տղամարդը:- Եթե Դուք չլինեիք, չէի կարողանա ապրել:

Նայելով նրան՝ օրիորդ Գ-ն զգաց, որ իր էությունից բոլորովին նոր մի մաս է ի հայտ գալիս՝ ասես կայծակի հարվածից երկփեղկված:

-Ոչ ոք չէր կարող Ձեզ հասկանալ ավելի լավ, քան ես, - ասաց նա:

Օրիորդ Գ-ն եւ պարոն Ֆ-ն կանգնած էին կողք կողքի, առանց միմյանց դիպչելու, դեմքերը դեպի օվկիանոսը:

Ծովային մեղմ քամին շոյում էր նրանց: Չէին խոսում, չէին շարժվում, պարզապես կանգնել էին՝ փակ աչքերով: Ալիքներն ընկնում էին ավազին եւ ետ քաշվում՝ թողնելով հետք ու նշաններ, ոչինչ չթողնելով:

Նրանք մոռացել էին ժամանակը, մոռացել էին տարածությունը, մոռացել էին անցողիկ ու մոռացվող ամեն բան:

Այդպես երկար կանգնեցին, ասես դա հանգստի պահ էր վերին ոլորտների երաժշտության մեջ:

Հետո նրանք հասան այնտեղ՝ դանդաղ, վճռականորեն, հորձանքի հետ, միաժամանակ, հասան տեղ:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՉԺԱՆ ՅՈՒԵԺԱՆ *- Կին արձակագիր, ծնվել է 1982 թվականին: Նրա գործերը տպագրվել են աշխարհի տարբեր լեզուներով: Հեղինակ է «Արեւածաղիկներն անհետացան 1890-ին», «Տասը սեր» պատմվածքների ժողովածուների, «Հեռավորությունը բալենուց», «Նարցիսը հեռացել է ծաձանի հետ», «Խոստացող թռչունը» վեպերի:*

ԴԻ ԱՆ *- Կին արձակագիր, ծնվել է 1983 թվականին: Տպագրվել է 2003 թվականից: Հեղինակ է «Հրաժեշտ երկնքին», «Հիբիսկուսը նման է դեմքի», «Ուռենու տերեւները հոնքերի են նման»,«Արեւմտյան մենամարտ», «Արեւելյան նեոն», «Հարավային հնչյուն» վեպերի: Նրա «Լիլի» նովելը 2007 թվականին արժանացել է Նոր Չինական «Արեւմտյան Լիճ» գրական առաջին մրցանակին, ինչպես նաեւ ընդգրկվել է Չինական գրական ընկերակցության «Լավագույն պատմվածքներ» ժողովածուում:*

ՅԱՆ ԳԵ *- Կին արձակագիր, ծնվել է 1984 թվականին: Իսկական անունն է՝ Դայ Յուեսին: Տպագրվել է 1994-ից: «Նոր կոնցեպտուալ գրականություն» մրցույթի չորրորդ փուլում արժանացել է առաջին մրցանակի: Նրա ստեղծագործություններից են՝ «Գուան գետը», «Լավ ժամանակներ», «Տարօրինակ կենդանիների գրանցումը», «Գարունը Տաոլե քաղաքում», «Մայիսյան թագուհին», «Հնչյունների նվագախումբը» եւ այլն:*

ՖՈՒ ՅՈՒԵՀՈՒՅ *- Արձակագիր, ծնվել է 1984 թվականին: Նրա նովելներն ու պատմվածքները տպագրվել են Շանհայի, Հոնկոնգի եւ Թայվանի հեղինակավոր թերթերում ու գրական հանդեսներում:*

ՉԺՈՈՒ ՅԶՅԱՆԻՆ *- Կին արձակագիր, ծնվել է 1982 թվականին: 1999 -ին «Նոր կոնցեպտուալ գրականություն» մրցույթի առաջին փուլում արժանացել է երկրորդ մրցանակի, իսկ մեկ տարի անց՝ առաջին մրցանակի: Հիմնական գրքերն են՝ «Թափառաշրջիկ երգչի սիրուհին», «Ստախոսի ժամանակի գանձատուփը», «Վերջին անգամ, երբ մոռանամ քեզ», «Երկինքը պարզ է» պատմվածքների ժողովածուները, «Զինվոր Սիսին խեցեգործական քաղաքում», «Կախարդուհու աչքերը», «Ամառը սուզվում է», «Հարավային դարաշրջանի ուղղությամբ» վեպերը եւ այլն:*

ՄԱ ՍՅԱՈՏԱՈ *- Կին արձակագիր, ծնվել է 1982 թվականին: Իսկական անունն է՝ Մա Տյանմու: Չին գրողների ընկերակցության անդամ է եւ «Ժողովրդի գրականություն» հանդեսի խմբագիր: 2001-ին «Նոր կոնցեպտուալ գրականություն» մրցույթում արժանացել է առաջին մրցանակի: Նրա պատմվածքները տպագրվել են հեղինակավոր թերթերում ու գրական հանդեսներում: 17 տարեկանում տպագրել է ակնարկների «Կապույտ ժապավեն» ժողովածուն: Նրա ստեղծագործություններից են՝«Ծառաճանճերը», «Թռչնահանգիստ» վեպերը եւ «Մարսեցի աղջկա երկրային ժամանակը» պատմվածքների ժողովածուն:*

ՍՈՒ ՅԻՅԻ *- Կին արձակագիր, ծնվել է 1982 թվականին: 1998-ին ավարտել է բժշկական ինստիտուտը եւ 17 տարեկանից, որպես բուժքույր, աշխատել է հոգեբուժական հիվանդանոցում՝ հինգ տարի: Ապա կատարել է տարբեր աշխատանքներ՝ դիսկո պարողի, հյուրանոցի սպասավորի, թերթի խմբագրի: 2003-ից սկսել է գրել բանաստեղծություններ, իսկ 2005-ից՝ գեղավեստական արձակ: Նրա ստեղծագործություններից են՝ «Վնգո զեբրը», «Իններորդ գիշերը», «Թանկագին եղբայր»:*

ՇՈՈՒ ՉԺԻ *- Արձակագիր, ծնվել է 1981 թվականին: Իսկական անունն է՝ Լյան Սյուեմին: Տպագրվել է 2004-ից՝ հեղինակավոր գրական հանդեսներում: Խմբագրել եւ հրատարակել է «Զվարճանք ճանապարհին» գրական երիտասարդական հանդեսը:*

ՍՈՒ ԴԵ *- Կին արձակագիր, ծնվել է 1981 թվականին: Իսկական անունն է՝ Վան Ի: 16 տարեկանում ավարտել է Լու Սինի անվան գրականության ինստիտուտի կազմակերպած՝ պատանի գրողների առաջին դասընթացը: Գեղարվեստական արձակ գործեր սկսել է գրել 2001 թվականից, 2007-ին դարձել է Չին գրողների ընկերակցության անդամ: Համագործակցում է Շանհայի գրողների ընկերակցության հետ: Նրա ստեղծագործություններից են՝ «Ամայի ճակատիս երկայնքով», «Սերն անմոռանալի է», «Ուզում եմ ճամփին պատմություններ պատմել», «Սիրո պատմությունը՝ ռելսերի վրա»:*

ՉԺԱՆ ԻՎԵՅ *- Կին արձակագիր, ծնվել է 1987 թվականին: Շանհայի գրողների ընկերակցության անդամ է: 2004-ին «Նոր կոնցեպտուալ գրականություն» մրցույթում արժանացել է առաջին մրցանակի: Նրա գրքերից են՝ «Մելամաղձոտ տարիներ» (արձակ գործերի ժողովածու), «Երիտասարդության արգելված խաղերը» (պատմվածքների ժողովածու) եւ «Արթնացում երազներից», «Հաջորդ կանգառը», «Սիդան», «Գիշերները, որոնց մասին չգիտեք», «Ժամանակը», «Սպասիր, խնդրում եմ», «Հինավուրց լաբիրինթոսը» վեպերը:*

ՎԱՆ ՎԵՅԼՅԱՆ *- Արձակագիր, ծնվել է 1982 թվականին: Հիմնական ստեղծագործություններից են՝ «Փրկվածը» վեպը, «Օրենքի եռերգություն», «Ներքին երեսը», «Մարդն առանց մատնահետքերի», «Երկրորդ անձը» վիպակները, «Կյանքը՝ գլխիվայր», «Պաշտոնաթողություն» պատմվածքները եւ այլն:*

ՉԺԵՆ ՍՅԱՈԼՅՈՒՅ *- Արձակագիր, ծնվել է 1986 թվականին: Իսկական անունն է՝ Չժեն Պեն: Չին գրողների ընկերակցության անդամ է: Համագործակցում է Պեկինի գրողների ընկերակցության հետ: Ավարտել է Լու Սինի անվան գրականության ինստիտուտի կազմակերպած՝ երիտասարդ գրողների դասընթացը: Հիմնական ստեղծագործություններից են՝ «Մանկական ժողովրդական ոտանավորները 1921 թվականին», «Քորը», «Երեխաներին հարմար չէ», «Սիչժոուի բալլադը»:*

ՖԵՅ ԴԱՈ *- Արձակագիր, ծնվել է 1983 թվականին: Իսկական անունն է՝ Ցզյա Լիյուան: Մագիստրոսի կոչում է ստացել Պեկինի մանկավարժական համալսարանում, իսկ Ցինհուայի համալսարանում՝ գիտությունների թեկնածուի կոչում: «Պատմություն աշխարհի վերջի մասին» գիտաֆանտաստիկ պատմվածքը թարգմանվել է իտալերեն եւ ընդգրկվել գիտաֆանտաստիկ գեղարվեստական գրականության միջազգային հատորներում: Այդ պատմվածքի հիման վրա նկարահանված կինոնկարի սցենարն արժանացել է «Երիտասարդ գրողների ներկայացրած կինոսցենարներ» մրցույթի երկրորդ մրցանակին:*

ՇՈՒ ՑՅԱՈ *- Կին արձակագիր, ծնվել է 1980 թվականին: Ֆուդանի համալսարանում ստացել է բժշկության պատմության մագիստրոսի եւ մտավոր պատմության բակալավրի աստիճան: Տպագրել է «Գաոլի նավարկող նավակը» վեպը, «Մարդն ու կերակուրը հավասար են», «Խոհարար տանտիկնոջ օրագիրը», «Կերեք», «Կերեք, որ ժպտաք» էսսեները, այլ գործեր: Նրա «Մահացու համեղ» պատմվածքի հիման վրա ֆիլմ է նկարահանվել:*

ՀԱՈ ՑԶԻՆՖԱՆ *- Կին արձակագիր, ծնվել է 1984 թվականին: 2002-ին «Նոր կոնցեպտուալ գրականություն» մրցույթում արժանացել է առաջին մրցանակի: Հիմնական ստեղծագործություններից են՝ «Մարսեցի թափառականը», «Վերադառնալ Կարոն» վեպերը, «Աստղային ուղեւորներ» պատմվածքների ժողովածուն, «Եվրոպան ժամանակի մեջ», «Կորսված», «Ընբռնում», «Ամառը տատիկի մոտ», «Հացահատիկի աստծո թռիչքը» վիպակները:*

ՉԵՆ ՑՅՈՒՖԱՆ *- Արձակագիր, ծնվել է 1981 թվականին: Ավարտել է Պեկինի համալսարանը՝ մասնագիտանալով չինարենի եւ չինական գրականության, նաեւ՝ կինոյի եւ հեռուստաարվեստի ոլորտում: Հիմնականում ստեղծագործում է գիտական ֆանտաստիկայի բնագավառում: Նրա ստեղծագործություններից են՝ «Գերեզմանը», «Ձուկը Լի գետում», «Նին գետի քարանձավը», «Մկան տարին», «Խորամանկ աշակերտները»:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ՉԺԱՆ ՅՈՒԵԺԱՆ. ՏՈՒՆԸ 9

ԴԻ ԱՆ. ՍԵՆ ԳԵՏԸ ՉԻ ՍԱՌՉՈՒՄ 32

ՅԱՆ ԳԵ. ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ԹԱՏՐՈՆԸ 47

ՖՈՒ ՅՈՒԵՀՈՒՅ. ՀՍԿԱ ՓԻՂԸ 71

ՉԺՈՈՒ ՅՁՅԱՆԻՆ. ՊԱՐՈՆ ՊԱՈԼՈՆ 100

ՄԱ ՍՅԱՈՏԱՈ. ԱՆԱՎԱՐՏ ՁՈՒՅԳԸ 109

ՍՈՒ ՅԻՅԻ. ՎԱՁԻՐ, ԼԻ ԼԻՆԻ, ՎԱՁԻՐ 159

ՇՈՈՒ ՉԺԻ. ԵԿԵՔ ՄԻ ԲԱՆ ԱՆԵՆՔ 182

ՍՈՒ ԴԵ. ՄԱՏԱՆԻՆԵՐԻ ԵՎ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ 193

ՉԺԱՆ ԻՎԵՅ. ԴԺԿԱՄ ԱՆԴՐԱԴԱՐՁ 203

ՎԱՆ ՎԵՅԼՅԱՆ. ԱՂԻ ՁԱՅՆԸ 218

ՉԺԵՆ ՍՅԱՈԼՅՈՒՅ. «ՖԻԼԻՊՍ» ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱԾԵԼԻՆ 242

ՖԵՅ ԴԱՈ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐՋԻ ՄԱՍԻՆ 285

ՇՈՒ ՅՅԱՈ. ՓԱՓՈՒԿ ԵՎ ՀԱՄԵՂ ՁՎԱԾԵՂ 291

ՀԱՈ ՅՁԻՆՖԱՆ. ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ՄՈԼՈՐԱԿՆԵՐ 299

ՉԵՆ ՅՅՈՒՖԱՆ. Գ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ԳԵՐԲՆԱԿԱՆ 319

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 343

ԱՂԻ ՁԱՅՆԸ

20-րդ դարի հետութսունական թվականների սերնդի
չին գրողների պատմվածքներ

Անգլերենից թարգմանությունը՝
Խորեն ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

Գիրքը չինարենից անգլերեն են թարգմանել՝
ՔԱՅԼ ԱՆԴԵՐՍՈՆԸ, ԷՎԱ ՇԱՆ ՉՈՈՒՆ, ԷԴՐՅՈՒ ՉԱԲԲԸ,
ՍԹԻՎԸՆ ԴԵՅԸ, ԴԱՐՐԵԼ ԴՈՐՐԻՆԳԹՈՆԸ, ԼԻԼԻԱՆ ԳԱԹԸ,
ԴԵՅՎԻԴ Ն. Ս. ՀԱԼԸ, ՓԱՄԵԼԱ ՀԱՆԹԸ, ՆԱԹԱՆԱՅԵԼ ԱՅՁԵՔՍՈՆԸ,
ՊԵՅ ԻՆ ԼԻՆԸ, ԲՐԻՋԻԹ ԼԻՆԴԲԲԸ, ԹՈՄԱՍ ՍՈՐԱՆԸ, ԳԵՆ ՍՈՒՆԸ

Ստեփանակերտ 2018

Խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Ա. Գրիգորյան
Էջադրումը՝ Թ. Հարությունյանի
Կազմի ձեւավորումը՝ Մ. Սայիյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 22 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 1000:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան

«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով,
Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,
Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապգիր. «Զուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը.
մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուբը.
Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբռ (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդոլազկին. «Լավր» - 2015
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 1) - 2016

Յու Ջիան. «Անձրեւից պատսպարվող թռչունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.
Փախուստ դրախտից» - 2016
Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016

Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո
պատմությունը» - 2016
Լյուդմիլա Պետրուշեւսկայա. «Սեր. երջանկություն.
ռեքվիեմ» - 2016
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»
(անթոլոգիա) - 2016
Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016
Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, ուդդայականությունը,
դաոսիզմը, քրիստոնեությունը եւ չինական
մշակույթը» - 2016
Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016
Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017
Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017
Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 4) - 2017
Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուդ» - 2017
Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017
Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017
Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017
Սյաո Ցյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ
նախագծերի» - 2017

Ուան Ցուոլիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017
Ֆյոդոր Սոլոգուբ. «Ձնչադեւը» - 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 5) - 2018
Ու Չուն. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018
Մարտիրոս Ոբն. «Մոմերն իզուր են այրվել
մեղքերիս համար» - 2018
Ուեյսին Սյուրն, Սյուն Ճու. «Չինաստանի յուրահատկու-
թյունները: Չինաստանի համաշխարհային
ժառանգությունը»- 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 6) - 2018

Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
հեռ.: +37497252323